891.54
Հ-39

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ



891.54
Զ-39

ԿՈՍՏԱՆ · ԶԱՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1985

ԳՄԴ 84Հ Ս
Զ 390

Կազմող՝ Ռ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Առաջաբանը՝ Ա. Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆԻ

227972

ՀՊՄՀ Գրադարան

Զարյան Կ.
Զ 390 Երկեր /Կազմ.՝ Ռ. Մ. Մուրադյան; Առաջաբանը Ա. Ա. Կոստանյանի.— Եր.: Սովետ. գրող, 1985. 576 էջ։

Սույն ժողովածուում զետեղված է նշանավոր բանաստեղծի և արձակագրի երեք՝ «Տատրագոմի հարսը», «Արա աստված» և «Վահագն» պոեմները, ինչպես նաև «Նավը լեռան վրա» վեպը։ (Վերահրատարակություն։)

4703000000 (187)
Զ ——————— 85 «Տ»
705 (01) 85

ԳՄԴ 84Հ Ս

ԵՊՀ Սարգիս և Մարիա Մուրադյանների անվան գրադարան
Sarkis and Maria Muradyans Library
Библиотека ЕГУ им.Саркиса и Марии Мурадяновых

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի
մշակման համար, 1985.

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

Երբ Կոստան Զարյանը վերջնականապես ընտրեց հայրենադարձության ուղին՝ յոթանասունյոթ տարեկան էր, վախճանվեց Երևանում՝ ութսունչորս տարեկանում, այժմ բոլորում է հարյուրամյակը:

Հազմանշանակ այն կյանքը, որ ապրեց Կոստան Զարյանը, բազմիցս նրան դարձրել է գրական ու ազգային շարժման կենտրոն, և հանախ՝ այնքան նշանակալից, որ համընդհանուր վերաբերմունքը տարուբերվել է ծափահարությունից ու դրվատանքից մինչև սուլոց ու պարսավանք. մի տեղ հայհոյել են, մի այլ տեղ՝ պաշտպանել, իսկ մի երրորդ տեղ՝ ընդմիջման պահին, անտարբերներ չեն գտնվել:

Այսօր արդեն Կոստան Զարյանի գրական ժառանգությունը համարվում է ազգային մշակույթի անբաժանելի մասը, Սփյուռքը հպարտ է, որ այդպիսի մի անհատականություն ձևավորվեց ճգնաժամի ու մաքառման տարիներին, իսկ օտարերկրյա մշակութային շարժումներին բերած նրա նպաստը, որ այնքան խրոխտությամբ ու գորովանքով էր նա հիշում, ուսանելի են ճակատագրի առումով:

* * *

Ծննդավայրը Շամախին է, պատմական Հաբանդը, բայց ոչ Սյունյաց Հաբանդը Գորիսով, ոչ էլ Արցախի Հաբանդը Ամարասով, այլ Աղվանից նույնանուն գավառը, որը Հայոց Արևելից Կողմանց հետ ներգրավվել էր ռուսաց հովանավորության տակ, նախապես հրաժեշտ տալով աշխարհիկ իշխանության վերջին մնացուկներին: Ծայրագավառի ազնվականության շառավիղները համալրեցին ռուսական բանակի բարձրաստիճան սպայակույտի շարքերը, ցուցաբերելով արիության, կորովի ու հավատարմության օրինակ:

Տասնամյակներ հետո, խոր ծերության հասակում, մտաբերելով վաղ մանկության ու ծննդավայրի դրվագները և հետադարձ ընտրովի վերաիմաստավորման ենթարկելով դրանք, Կոստան Զարյանը «Տեղի, ժամանակի և գրողի մասին» շատ հակիրճ նկարագրական էջերում անողոք ու պատրանազերծ վրձնումներ է անում, որոնք ոչ մի կերպ չեն տեղավորվում այլոց ուրվագծած անպայման երանելի ու ըստ ամենայնի երջանիկ մանկության շրջանակի մեջ: Մտային գրգիռը, որ ինտելեկտուալ խոչընդոտներ է հարուցում, միշտ ներկա է, և վանում է իրենից ամենայն հուզականը, որ, այնուամենայնիվ, տեքստ է սողոսկում ու իրեն զգացնել է տալիս, վերածվելով էմոցիոնալ լիցքի:

Հիշում է հորը, որ «մի օր պառկեց, խոլտաց ու մեռավ», նրա սենյակի պատից կախված «մեծ ու կոր թուրը», հիշում է մորը՝ «երիտասարդ, թրթռուն ու վախեցած տեսքով», որ աղոթում էր ու «Հայր մեր» էր սովորեցնում, հիշում է քաղաքը, նրա պարտեզները՝ «շքեղ ու մսոտ ծաղիկներով լեցուն», «բողոքականների ժողովատեղին», որտեղից հնչող «երգեցողության ձայները թվում էին ճերմակ...» ու մահավանդ դարերի ընթացքում արևելյան դրոշմ ստացած միջավայրը, որը այժմ էլ փորձում էր պահվել «փայլփլուն, անհրապույր ու նույնպես եկվոր» եվրոպական հանդերձանքով, և վերջապես՝ ինքնիրեն, որ կարծես «լուռ, անմասնակից ու անհաղորդ» հանդիսատեսն էր մի ժամանակ, բայց այժմ պարզվում է, որ նույնիսկ այդպիսի հուշը ապրեցնող զորություն ունի, որ ոչ այլ ինչ է, քան կյանքի խորհուրդը: Լսենք նրան. «Թե՛ բակերը, թե՛ քանդված տները, թե՛ ծված, վայր թափվող պատուհանները և դռները դեռ երկար տարիներ իմ մտքի մեջ արթնանում էին իբրև երևակայության մի տարօրինակ թատրոն, որի անկյուններում ես զետեղում էի մտքումս ստեղծած տեսարանները: Այստեղ տարիներով մարդիկ և կանայք ապրել էին բարդ և ուրախ կյանքով: Երազել էին, սիրել էին, տանջվել էին, մեռել էին: Հիմա նրանք չկան: Բայց արդյոք իրա՞վ է, որ նրանք այլևս չկան»:

Մտորելու այս կենսունակ ջիղը, որով օժտված է եղել, երբեք չի լրել նրան, հնարավոր դարձնելով գեղարվեստական իրականության պատրանքը, որ գոյանում է ոչ այնքան իրական եղելություն արձանագրելով, որքան բիրտ ու շոշափելի իրականությունից վանելիս, երբ ապավինում է երևակայության հավելյալ նստվածքին:

Այս առանձնահատկության դրսևորմանն ու զարգացմանը դեռ առիթ կունենանք հետևելու երկից երկ, իսկ առայժմ գանք կենսագրության հաջորդ էական դրվագին: Դա այն ուղին է, որ Բաքվի ու Թիֆլիսի վրայով, եվրոպական մայրաքաղաքներում հանգրվանելուց հետո, նրան հասցնելու է Կ. Պոլիս, այսինքն՝ տարուբերվելու է մինչերևանյան հայոց կենտրոնների ու արևմտյան մայրաքաղաքների հույսի ու տվայտանքի, ձգտումների ու տեղատվության, պայքարի ու ալեկոծության միջև:

Ուրեմն, Կասպիականի ափից Բոսֆորի ափին հանգրվանելու համար անցել ու դարձել է Սև ու Միջերկրական ծովերով: «Ես տեսել էի Կասպից ծովը՝ փակ, մտերիմ, նավթի հոտին խառնված, շքեղությունից զուրկ, գերազան-

ցապես աներազ: Նա անցել էր իմ երևակայության մոտից, արևին ու փոշիներին խառնված, առանց հմայքի և առանց հրավերի:

Այս ծովը տարբեր էր: Նա փովեց իմ մեջ, տարածեց մարմնիս ամեն մասերում իր ամպերը, իր քամիները և իր փոթորիկները: Նա շտապեցրեց իմ աճման շրջանը և արագացրեց իմ անհատական այլափոխումը»:

Կարևոր խոստովանություն է, որ հետագայում է մտածված, թեև վերագրված է Սև ծովի երկայնքով առաջին անցմանը: Եվ սակայն նա դեռ պետք է Բաքվում ստացած նախնական ռուսական կրթությանը գումարի Փարիզում ստացած միջնակարգ ֆրանսիական կրթությունը, ապա և ավարտի Բրյուսելի Նոր կոչված համալսարանը փիլիսոփայության մագիստրոսի տիտղոսով: Բրյուսելյան տարիները հատկանշական են նրանով, որ գրական ասպարեզ իջնող երիտասարդ մտավորականի առջև ծառանում է լեզվի խնդիրը. նա, որ արդեն հասցրել էր լեզվափոխության երեք շրջան անցնել, ըստ որում արդեն իսկ ռուսերեն, ապա և ֆրանսերեն բանաստեղծություններ էր հորինել, ու այդ լեզուները հաջորդաբար իրենն էր համարել, այժմ այստեղ նկատում է, որ ձևավորվում ու ուռճանում է մտածողության ազգային կերպը:

1914 թվականի Կ. Պոլիսը դեռ լիովին չէր «ապականել կյանքի գեղեցկությունը» ու դեռ չէր մխրճվել ոճիրի մեջ, երբ նոր-նոր ծամանած Կոստան Զարյանը հիմնում է «Մեհյանը»: Հանդեսի առանցքն էր նա՝ ոչ միայն նյութական պատասխանատվության բերումով, այլև եռանդուն գրական գործիչի նոր ու թարմ գաղափարներով: Անշուշտ, հանդեսին հմայք էր տալիս Դանիել Վարուժանի ներկայությունը, և՝ իհարկե, «Մեհյանի» քուրմը Հակոբ Օշականն էր, ու մանավանդ հանդեսը արևմտահայ գրական առաջնթացի հերթական ու շողշողուն մի փուլն էր, և այնուամենայնիվ, նրա հիմնադիր անդամները իրենց համախմբված էին զգում Կոստան Զարյանի շուրջը, ու նրան էր պատկանում համահայկական, համազգային գրականության քարոզը, որ հետևյալ ձևակերպումն էր ստացել. «Մեր գրականությունը մեկ է... Բոլոր հայերուն ժառանգությունն է ան»:

Ազգային ինքնորոշման ձգտող հայության գաղափարախոսական դրսևորումը իր պատշաճ արձագանքն էր գտել «հայաստանյայց գրականության» բացառապես գրական-գեղագիտական այս գաղափարի մեջ, որ մեհենականների դավանած հավատո հանգանակի հիմքն էր կազմում:

Ավաղ, ճակատագիրը այլ կերպ տնօրինեց խնդիրը. հայկական հորջորջված «Պոլիսը դժբախտ նավի նման խորասուզվեց ջրերի մեջ»: Իտալիա ապաստանած Կոստան Զարյանը նորից նետվում է մի անգամ արդեն փորձած օտար գրական ասպարեզ, և սակայն նրա հայացքն այլևս գամված է մնալու հայրենիքին, իսկ խոսքը՝ հայրենիքի գաղափարին. ոչ հոգևոր ու երևակայական, այլ իրական ու երկրային: Այս ոգով, այսինքն՝ հանուն Հայոց անկախության ու պետական ինքնորոշման, նա բանախոսել է իտալական քաղաքներում, ապա և՝ պատերազմից հետո, մոտիկից հետևել է մնացյալ հայոց քաղաքական անցուդարձերին, մասնավորապես 1919 թվականին՝ որպես իտալական թերթի մերձավորարևելյան թղթակից եղել է ոչ միայն Երևանում, այլև Թիֆլիսում, իսկ Հայաստանում խորհրդային կարգերի ստեղծումից հետո Կոստան Զարյանն ընտանիքով տեղափոխվեց Երևան:

Նա գալիս էր Կ. Պոլսից, այս անգամ «հանրապետական տանիկի» ներ-

կայությունից հալածական։ Իսկ այն երկրորդ գրական ճիգը, որ փորձեց իրագործել այդ քաղաքում 1922 թվականին, նախորդի ընդմիջված շարունակությունն էր, որ սակայն այլափոխվել էր և՛ անունով («Մեհյանից» «Բարձրավանք» բառի ու իմաստի խաղ չորոնեք), և՛ մասնակիցներով. Վահան Թեքեյանն էր այժմ սերնդի տիրական բանաստեղծը (Վարուժանն այլևս չկար), և Շահան Պերպերյանն էր հայտնվել քննադատական մտքի հորիզոնում (Օշականը նույնն էր ու թերևս առավել ամեհի)։ Կոստան Զարյանի նոր առաջնորդությամբ «Բարձրավանքը» հիմնադրած խումբը այն միտքն էր փայփայում, թե շարունակելու է արևմտահայ գրական առաջընթացը, բայց սթափ գիտակցությունը շուտ վրա հասավ և հասկանալի դարձավ, որ այլևս արևմտահայ մտավորականությունը կանգնած է սփյուռքի անստուգության առջև։

Երևանյան առաջին շփումներն ու ծանոթությունը ևս երկար չտևեցին. մի քանի տարի հետո, արդեն որերորդ անգամ, Կոստան Զարյանը տրվում է իր «երկրորդ նախասիրությանը». քառասունը բոլորել էր, երբ Փարիզում ձեռնարկում է «Բաբելոնի աշտարակ» ֆրանսերեն հանդեսը։

Անհամեմատ ավելի էական ու կայուն էր վերջին պատերազմից անմիջապես հետո Նյու-Յորքում ձեռնարկած անգլերեն «Հայոց հանդեսը», որը հայագիտական բնույթ ուներ և սերտորեն առնչվում էր իր գործունեության հիմնական զբաղմունքներից մեկին, քանի որ նա տարիներ շարունակ մասնագիտական բերումով գրականություն ու արվեստ է դասավանդել նախ՝ ամերիկյան համալսարաններում, ապա և Բեյրութում. դրանից հետո է, որ թե՛ հայկական Բեյրութը, թե՛ Երուսաղեմը այլևս անտարբեր չմնացին նրա հանդեպ, մի հանգամանք, որի վկայություններից են ոչ միայն շարունակված առողջ բանավեճն ու ջերմեռանդ վիճաբանությունը նրա ստեղծագործության շուրջը, այլև նրա երկերի բեյրության ու երուսաղեմյան հրատարակությունները ծնընդյան ինքնուսամյակի առթիվ։

Կոստան Զարյանը իր որդու՝ Արմեն Զարյանի ու նրա ընտանիքի հետ վերջնականապես հայրենադարձվեց Հռոմից, որ իր բնակության ամենահաճախակի վայրն է եղել։ Իր իսկ բանավոր խոստովանության համաձայն, նա այդ վճռական քայլին արդեն պատրաստ էր 1956 թվականին։ Վերադարձից հետո նրա երկերը հրատարակվել ու վերահրատարակվել են Երևանում և Մոսկվայում։

«Օրերի պսակը» ժողովածուն (Կ. Պոլիս, 1922) Կոստան Զարյանի առաջին հայերեն գիրքն է, որի առիթով ամենից առաջ պետք է ցրել մի արմատացած թյուրիմացություն. բանն այն է, որ նա ի սկզբանե բանաստեղծ էր, և այդօրինակ ինքնագիտակցումը նրան երբեք չի լքել հետագայում՝ ինչ ժանրով էլ ստեղծագործելիս լիներ, իսկ փորձել է, ինչպես հայտնի է, գրեթե բոլոր ժանրերը։ Ապա և լեզվի հարցը, որի շուրջը ստեղծված առասպելին թերևս նպաստել է նաև ինքը բանաստեղծը. կրթության լեզվի հաջորդական փոփոխությանը համապատասխան, նա անցել է բանաստեղծություն գրելու ռուսերեն նախափորձերից մինչև ֆրանսերեն վարժ դրսևորումները։ Ըստ երևույթին, լեզուները հեշտ են տրվել, դատելով այն պարագայից, որ արդեն իտալերենի

անցած հեղինակը ընդունելության ու ճանաչման է արժանացել հենց Իտալիայում: Բանաստեղծական նկարագիրը կայունացել է այնպիսի մի ժամանակ, երբ ֆրանսիական պատնասում դեռևս տիրական էին Պոլ Վեռլենը, Արթուր Ռեմբոն ու Ստեֆան Մալարմեն: Իսկ երբ արևելահայերենի կրող բանաստեղծը արևմտահայ գրական միջավայրում անցնում է հայերեն ինքնադրսևորման, նա արդեն քաջ տեղյակ է երևում ժամանակակից հայ պոեզիային, նրա շատ որոշակի ու կոնկրետ ներկայացուցիչներին, ապա և դարասկզբի ազգային բանաստեղծության բուն ակունքին, որ Գրիգոր Նարեկացի հսկա բանաստեղծն է:

Եվ Գրիգոր Նարեկացին, բանաստեղծական մի տիեզերք՝ անչափելի, անսահման ու անընդգրկելի, իր բազմալար ճյուղավորումներից յուրաքանչյուրով ներշնչման աղբյուր ու վարպետության առաջնորդ հանդիսացավ մեր նորագույն ամենազանազան բանաստեղծների համար, թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ իրականության մեջ, իսկ Կոստան Զարյանը, որը սկզբնավորվել էր ֆրանսիական բանաստեղծության նրբակերտման տարիներին, առանց այլևայլության, նույնպես դիմելով ամենահայր հսկային, իր խառնվածքին ու նկարագրին համապատասխան մի լար ընտրեց, որ դարձավ «մրմունջ, տրրտունջ Նարեկացվո խոսքերի շուրջ», այսինքն՝ գտավ և՛ ձև, և՛ ասելիք, այո՛, և՛ խոսք, և՛ իմաստություն, որովհետև թվացող միապաղաղությամբ հանդերձ, որ հատուկ է ինքնաբավ քրիստոնեական ժամանակաշրջանի բանաստեղծական իրագործմանը, մեր ազգային հանճարը օժտված է այնպիսի անեզրությամբ, որ բոլոր հնարավոր ու կարելի ձևերի կաղապարված գանձարան է ու նրանից հետո այլևս զարմանալին միմիայն ինքն է՝ հսկա, խորհրդավոր ու աստվածային:

Այնպես որ, մեր պոեզիայի տարեգրության մեջ 1922 թվականը նշանավորվում է նաև «Օրերի պսակը» ժողովածուի հայտնությամբ, և նրա իշխող եղանակը մաքուր ու նվիրական հայկականությունն է և ոչ թե կարծեցյալ եվրոպական դեկադենտությունը: Եվ արդեն ժողովածուի թեմատիկ լոթ բաժանումներից միայն մեկն է հիշեցնում նախորդ տարիների եվրոպական, այս դեպքում մասնավորապես իտալական դիտարկումների արձագանքը, որը ոգեկոչում է ասենք Բենվենուտո Չելինիի, Լեոնարդո դա Վինչիի ու Ալիգիերի Դանտեի հիշատակը կամ մեծ մշակույթի հավերժական քաղաքների փառքը: Ու այդ անդրադարձի մեջ, դատեցեք ինքներդ, հայկականությանն անհերդաշնակ միակ տարրը դավանաբանական բնույթի է. դա «խաչված մարդու» և «լուռ աստծո» հակադրությունն է, բայց այս բանաստեղծությունը՝ «Ահա խոհերիս մայր եկեղեցին» տողով սկսվողը, որ այլ բաժնի նյութերից է, ծնընդավայրի տխուր հուշն է ավելի, որ նստվածք է տվել օտարության մեջ կամ դավանափոխ եղած հայրենակիցների շրջանում:

Խորհրդապաշտ բանաստեղծը հյուսում է սակայն իր «օրերի պսակը», որ անխառն քնարականության նշանակն է, երգում է «մեր հայրենիքը»՝ «վըշտի անհամար ձայներով լեցված», բայց և՝ «ապագա կրոնի հրաշքով հղի», Մասիսը, որ «ցուցանում է աշխարհներին ապոկալիպս Հայաստանի սիրտը ցցված», Սարդարապատի դաշտը, որով փորձեց մի անգամ ևս անցնել «գայլը վեհերոտ»: Բանաստեղծը առայժմ ապավինում է իր հույսին և կապույտ երազին.

Ասում են ինձ,
պետք է հուսալ, պետք է լինել աստվածների
թևերի պես մետաքսաձալ
ու դարիդուս ու դարիվար
ծաղկափթիթ ճաճանչներում արևների՝
խոլ պար դառնալ։

Ու դարիդուս ու դարիվար
ճախրե՞լ, թևե՞լ
և հույսի մեծ տաղերգերով ջահել աշխարհ·
Պետք է լինել մեղու հարբած ու այսպի՞ր՝
որ աստղերի սրտիցը հիր
մեղր է հանում ու ամբարում՝
ամարասուն ծաղիկների բաժակներում։

Կոստան Զարյանի բանաստեղծական ուրույնությունը պայմանավորված է արվեստագետի տաղանդով, որ երբեմն ուղղակի շքեղ ու շռայլ դրսևորումների է հասնում, ապա և՝ աշխարհայացքով, որ յուրովի հասկացված ազատության ըմբռնումն է՝ անկախ ու ինքնուրույն կեցվածքի տեղ-տեղ շեշտադրումներով։ Արվեստի ինքնաբավության գաղափարը, ինչպես դա բխեցվել է Բենեդետտո Կրոչեի գեղագիտությունից, խարսխված է այն ըմբռնմանը, թե գեղարվեստական ստեղծագործությունը իրականության արտացոլքը, առավել ևս պատճենավորումը չէ, այլ դրսևորման միանգամայն ինքնավար ոլորտ է, ըստ որում ինքնավարությունը ստեղծագործական անսահմանափակ, ոչընչով չկաշկանդված ազատությունն է։

Իհարկե, հնարավոր է պատկերացնել մեր դարի առաջին քառորդի եվրոպական որևէ հասարակություն, որ մխիթարում է ինքնիրեն, թե լուծել է իր երկրի սոցիալական ու քաղաքական խնդիրները և կարողանում է իրեն շռայլորեն թույլ տալ գրական-գեղարվեստական այդպիսի մի ըմբռնում։

Եվ սակայն սփյուռքը, որ ազգային լինելիության մի աննախադեպ գոյավիճակ է՝ 1915—1920 թվականների իրադարձություններով սկիզբ առած, պարտավորեցնում է ճիշտ չափի բերել այլոց սահմանած ապրելակերպի բարոյականությունը, պատմության դասերը և գեղարվեստական մտքի դրվածքը, այլապես անհող տարածությունից հետո անխուսափելի կդառնա աՀՀոդ տարածության մեջ հայտնվելը։

Հայրենիք կորցրած անհատը ազատության ձգտումով մխիթարվել հազիվ թե կարողանա. անհատապես ազատ լինելը խաբուսիկ է, երբ հասարակականորեն անազատ ես։ Մանավանդ որ, ետեղեռնյան առաջին տասնամյակի սփյուռքահայը՝ իր թշվառությունն ու ամոթը աշխարհին ցուցադրող մի զանգված էր, որը հանուն հայրենիքի պայքարով պետք է վերագտներ իր արժանապատվությունը։

Ազգային պարտության ճիշտ իմաստավորումն էր հանգեցնելու հայրենիքի վերստին գյուտին, որ ոչ այլ ինչ էր, քան գիտակցված ազատություն և հենվում էր երեկվա մաքառող ոգու փառավոր դրսևորումներին։ Հիրավի, մեր արևմտյան հատվածի ազգային-ազատագրական շարժումը, որ սկսվեց վրի-

ժառու լեռնականների կամքով, արիությամբ ու ֆիդայական պատվախնդրությանն անհողդողդ պարտադրանքով, աստիճանաբար ձեռք բերեց մի կազմակերպված տարերքի բնույթ, և՝ մի առողջ մտայնություն, որին ապավինելու էր աշխատավոր ժողովուրդը:

«Տատրագոմի հարսը» (Բոստոն, 1930) չափածո լայնաշունչ ստեղծագործությամբ Կոստան Զարյանն ահա, ձայնակից էր դառնում արևմտահայ մնացորդաց սերնդի ու սփյուռքահայ առաջին սերնդի ազգային տվայտանքին ու գեղարվեստական որոնումներին:

Երկի հիմքում ընկած դրվագը հայտնի է ժամանակակցի հիշողությամբ, որ կենցաղային միջադեպին տալիս է այնքան կարևորություն, որքան այն կարող է պարունակել. քաջ լեռնականների մի խումբ կենաց ու մահու կռիվների արանքում ընկած դադարի ժամանակ իջնում է գյուղ և պատժում նրանցից մեկի անհավատարիմ գտնված կնոջն ու նրա պատիվն արատավորողին:

Բանաստեղծ ասացողի երևակայությունը ներկայացնում է մի համայնապատկեր, որ բազմապլան է, ամփոփ ու ընդհանրացված և ենթակա է խորհուրդի իմաստությանը, այլապես պատումը ինքնուրույն տրամաբանություն չունի, որովհետև թե՛ ասվող, ասացվող նյութը, թե՛ երևութական բախումը, թե այսպես կոչված հանգուցալուծումը կանխորոշված են. ներքևում գյուղն է, վերևում՝ լեռները, երկնքում՝ աստվածները. Հովանը պետք է վրիժառու լեռնական դառնա, Սանան պետք է տրվի կանացի թուլությանը, Հովանը պետք է սպանի Սանային: Այսքան. մենք ականատես ենք լինում շարունակվող կյանքի մի հատվածին, գրականություն դարձած դյուցազներգական մեկ դրվագին: Հնարավոր է, որ շարունակվող գոյության մեջ Հովանը ևս Մակար ծերունու նման, իր կյանքը փառքով պսակած, տրեխները մաքրելով երկինք բարձրանա, հնարավոր է, որ երևակայվող գոյացության մեջ Սանան արժանանա Աստվածամոր բարեհաճ հովանավորությանը, երբ աղոթքով դիմի նրան, և վերջապես, հնարավոր է, որ աստվածները՝ միշտ հոգնակիորեն հանդես եկող, զսպեն իրենց բարկությունը և այլ վճիռ սահմանեն Հայոց տան համար:

Գեղեցկապաշտ բանաստեղծը՝ արվեստային ինքնաբավությանը հավատարիմ, արարում է, վերապրում ու նկարագրում: Նա արարում է մի ժամանակահատված, որը մեզ պատգամում է ժողովրդական արդար ընդվզումից ծնված քաջերի հիշատակը: Նա վերապրում է անցյալի մի կյանք, որը ի հեճուկս պատմական ճակատագրով դատապարտված զրկանքների ու բռնության, եղել է միս ու արյունով, սիրով ու պատվախնդրությամբ լեցուն մի ապրելակերպ: Եվ վերջապես, նա հնարաւորում է՝ մերձեցնելով անցյալի կյանքն ու ժամանակահատվածը, ցուցաբերելով հմտություն, ճաշակ, խելք, իմաստություն, բայց նաև՝ ընդգծված անփութություն լեզվական տարերքի ու մտքի հորձանքի հանդեպ, և մանավանդ հաղորդակցվելով՝ որ չլինի թե անմասն մնա հարատևող կյանքի ոգուց, ժողովրդի երազանքից, իրականացման սպասող ձգտումներից. և փոխանցելով մեզ, որ այսուհետև ևս մերը համարենք այն, ինչ մեզ է պատկանում մեր ապրելու կամքով ու պատմության արդար իրավունքով:

* * *

Կոստան Զարյանի արձակը բանաստեղծի ինքնադրսևորման շարունակությունն է, և քանի որ բանաստեղծը նրա մեջ հախուռն է, թեև կազմակերպ, իսկ արտահայտվելու պահանջը անկաշկանդելի, հորդ ու տիրական, ինչպես տեղատարափը, ուրեմն և ծնվում է չափածոյի կանոնիկությունից դուրս մի պայմանականություն, որ կոչված է հաղորդ տալու սևեռուն գաղափարից սկիզբ առնող ու նրա շուրջը վխտացող զգայության հոսքին:

Սևեռուն գաղափարը հայրենիքն է, իսկ զգայության հոսքը սնունդ է ստանում կյանքից, որ ամեն ինչով հանդերձ տրոփող լինելությունն է, և՛ ընթերցած լավագույն գրքերից, որոնց ազդեցությունը վճռական է եղել ու անանցանելի:

Կոստան Զարյանի մշակութաբանական նախասիրությունները լիովին կարող էին բավարարել անցյալի մեծ մշակույթներից յուրաքանչյուրի հմուտ ու գերազանց լուսաբանումը, իսկ մշակույթի ու քաղաքակրթության հակադրումը՝ որպես կենսունակության ու ամլության զուգահեռական, ելակետ էր դառնալու նրա արձակ ողջ գրականության բանուկ երակը հանդիսացող նկարագրական էջերի ու դատողական անցումների:

Այնուամենայնիվ վերնագրերով ու շարքերով հայտնի այդ բազմաբանակ ու բազմապիսի գրառումները տպագրվել են երևանյան տարիներից ի վեր, ապա և՝ մնացյալ քաղաքական ու երեսնական թվականներին, սփյուռքի մամուլում:

Հեղինակի խորհրդածությունները պտտվում են միևնույն մտքի շուրջը, իսկ միտքը հանգում է մխիթարական մի հեռանության, թե սրբազան լեռան խորհրդանշանը որպես հայրենիքի գաղափար իր հոգու մեջ կրող ժողովուրդը ազգային լինելության կրող է, որ ապրող ու ապրեցնող մշակույթ է ստեղծում և ընդունակ է դիմագրավելու աշխարհին համակած քաղաքակրթական շփոթ մոլուցքը:

Մտածող արձակագիրը իր գրառումները համայնավեպ է անվանել անշուշտ ամեն ինչի մասին վիպելու իմաստով, իսկ նրա վիպասանելու ձիրքը, այս անգամ ժանրային ընդունված նշանակությամբ, ուր որ է իր դրսևորումն էր ստանալու:

«Նավը լեռան վրա» վեպը Կոստան Զարյանի արձակ գրականության ողջ տարերքի մի ընդարձակ մասն է միայն ու որպես այդպիսին նրա անանջատելի շարունակությունը՝ թե՛ իր նյութով, թե՛ ոճով ու գրելակերպով: Բացառապես վիպականը, որ, այնուամենայնիվ, զգալի է, մի խումբ խորհրդանշանների բազմիմաստությունն է, որ ներկայացված է շատ որոշակի կառույցի սահմաններում:

Վերնագիրը հուշում է. նավի ու լեռան սիմվոլիկան մարդկության չափ հին է և հատկապես մեր աշխարհի հետ է առնչվում և ուղեկցել է մարդկային ստեղծագործ երևակայությանը դարաշրջանից դարաշրջան:

Հնագույն առասպելաբանական պատկերացման համաձայն ջրհեղեղը աստվածների բարկությունից սկիզբ առավ և որպես արդյունք հանգեց աշխարհի ու մարդկանց նորոգման, իսկ երբ տապանը հանգրվանեց լեռան վրա, փրկված նահապետը՝ Քսիսութրոսը, իր ընտանիքի հետ որպես վաստակած

վիճակ ու հավերժական բնակավայր աստվածներից առացավ Մասսի շուրջբոլորը։

Ի դեպ սեպագիր լեզուներով հիշատակվող լեռան անունը եզակի գործածություն ունի, որ մեզանում հնները հոգնակիաբար՝ Մասիք, Մասեաց էին անվանում ու հոլովում, իսկ նորերը՝ ուղիղ գրության հիմք ընդունեցին հոգնակի հայցական հոլովաձևը։ Քրիստոնեական պատկերացման համաձայն, Նոյ Նահապետի տապանը Արարատին հասնելով ազատվեց, և ետջրհեղեղյան նորոգ մարդկությունը Մասյաց փեշերից սփռվեց աշխարհով մեկ, կամ ինչպես հանճարեղ բանաստեղծն է ասում՝

Ի Մասեաց յաջ կողմանէն
Սալիկն ի գիլ գայր, ի գիլ,
Եւ ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ։

Իհարկե, ժամանակակից գրողի առաջարկած իմաստավորումն այլ է, և միայն սիմվոլիկայի բնձեռած մակարդակով են համեմատելի ջրհեղեղն ու հեղափոխությունը, բայց սա ինքնաբերաբար արվող զուգահեռ է, որ վեպի շրջանակներում շատ ստույգ հասցեագրում ունի. Հայոց պետականության վերականգնման ժամանակաշրջանն է, նավը՝ այդ պետականության շարժիչ մեքենան, իսկ լեռը՝ մեր հինավուրց երկիրը։

Հեռավոր ճանապարհորդությունների նավապետ Արա Հերյանը մեկն է մեր երկրի սահմաններից դուրս սփռված այն մարդկանցից՝ կորովի, ձեռներեց ու տոկուն, ովքեր հանրապետության հոչակումից ի վեր, այլևս թողած ամեն ինչ, մղվում են մայր-երկիր։

Այս մեկի որոշումը, որ և իրագործում է, հետևյալն է. մի նավ է գնում Բաթումի նավահանգստում վխտացող ցարական Ռուսաստանի նավային մի մեծ ընկերության նախկին կառավարիչից, ապա և՝ Թիֆլիսի վրայով, արկածներ ու փորձություններ հաղթահարած, հասցնում Երևան, որից հետո նոր զրկանքներով ու տաժանակրությամբ՝ մինչև Սևանա ջրերը։

Մյուսները ևս հայրենիքին նվիրված մարդիկ են, ճառում են, վիճում, տեսություններ քարոզում, բայց նա՝ շատ կոնկրետ գործով զբաղվում, իսկ մարտի դաշտերում՝ անձնուրացության դիմում։

Շատ են այս մարդիկ՝ մեծ ու փոքր, վարևոր ու անկարևոր դիրքերի վրա ու կենսական զանազան պայմաններում, իսկ նրանց միացնողը հեղինակային տանող խոսքն է կամ այն հանդիսարանը, որտեղ նրանք բերվել են հեղինակային երևակայությունից և մնում են ընթերցողի ուշադրության ծիրում միայն այնքան ժամանակ, որքան նրանց առիթ է տրվում շփվելու գլխավոր դերակատարի հետ. որովհետև ինքնուրույնապես նրանք գոյություն չունեն։

Վեպի երկրորդ հրատարակությունը (Երևան, 1963) զգալիորեն ու տրամագծորեն վերափոխված է։ Հեղինակը հայրենադարձ լինելով, վերաշեշտադրել ու ընդգծել է այս՝ իր բնույթով քաղաքական վեպի գաղափարական ուղղվածությունը, որի կրողը Զվարթն է՝ երբեմնի «տաք, մտերիմ, հուզական այդ էակը», որը նախ հարում է բոլշևիկներին, ապա ակտիվ կոմունիստ է դառ-

նում և ի վերջո նավապետ Արա Հերյանի հովանավորյալը լինելուց վերածվում է հովանավորողի:

Իսկ վեպի կառուցվածքային գծի մեջ հատկանշական տեղ զբաղեցնող Ֆեոդոր Պանտելեևիչը՝ ցարական ժամանակվա նախկին մեծ ընկերության երբեմնի կառավարիչը, որը անհայրենիք ու վտարանդի դառնալով և իր վաճառած նավի հետքը բռնած ու նավի նոր տիրոջ բարեհոգությամբ ապաստանել էր Քանաքեռ հասած նավի ետնամասը՝ այժմ՝ բոլշևիկների գալով, «կարմիր» ձևանալու զավեշտական փորձ է անում և վնասազերծվում որպես դասակարգային թշնամու մնացուկ:

Մնացյալ նյութը, որ պատկերում է երկու-երեք տարվա մի ժամանակաշրջան՝ ճակատագրական իրադարձություններով, մասնավորապես Սարդարապատի հերոսամարտով և թուրքի կրկին սողոսկումով ու գրեթե միաժամանակ, մի քանի ամիս հետո, բոլշևիկների մուտքով, երբ արդեն մի անգամ ևս կիսված էր հայրենի հողակտորը, ինչպես նաև պատկերում է ներքին կյանքի մի ժամանակահատված՝ ալեկոծվող հոգիների տվայտանքով, աշխատանքային տաժանակրությամբ ու հանուն գաղափարի մղված պայքարով, որ մատնանշում են օրվա գրգիռները, մանրամասների իմացությունն ու անմոռանալի հիշողության պարտադրանքը, այս ամենն, այո, ներկայացնում են վեպի ընդարձակածավալ ու երկարաշունչ համայնապատկերը՝ միտումնավորությունը բազմաձայնությամբ և բարդությունը հակասականությամբ:

Հասկանալի է այն խռովիչ կիրքը, որ տածում էր հեղինակը այս գործի հանդեպ, որ իր համոզմամբ պատմա-փիլիսոփայական ուղղվածություն ուներ: Հիրավի, ժամանակի հեռավորությունը այս դեպքում վճռական է, մանավանդ մի մարդու համար, որ միշտ արտահայտվել է և օրվա գաղափարին տվել այնքան նշանակություն, որքան այն պարունակել է: Եվ սակայն հեղափոխիչ ու ճակատագրական մի ժամանակաշրջանի ազգային գոյության պատկերը շրջանակելու համար հստակ, աներկմիտ ու ոչ-փոփոխական դիրքորոշում է անհրաժեշտ, որ ձեռք է բերվում՝ վիպական անձերից մեկի խոստովանությամբ, թռչունի թռիչքի բարձրությունից երևույթը դիտելիս, իսկ իրականում այդպիսի բարձունքը, ինչպես գիտենք մեր մեծերի օրինակով, «աստծո հայացքն» է, որ ամենքին տրված չէ, առավել ևս գործողության բուն մասնակցին կամ հարևանցի ականատեսին. և ահա հեղինակային հնարավորությունների ծանրությունը կրող նավապետ Արա Հերյանը, որը իրական ու ապրող մի մարդ է, թեև զորեղ ու կամային, իր նպատակասլաց կյանքի ընթացքում, հավատի, դեգերումների ու հուսախաբության պահերին, ծառանում է հենց այդպիսի թռչունի, այդպիսի թռիչքի ու այդպիսի բարձրության դեմ, մտորում իր հնարավորության ներածի չափով, անկեղծության վարկյանին փնովելով իր իսկ պակասավորությունը, Հռիփսիմեի հրաշքը տեսնելիս հիշում է Բախի երաժշտությունը:

Եվ այսպես, հայեցողական այս շերտը ևս ուղեկցում է վեպի ողջ ընթացքին, սկզբից մինչև վերջ, երբ ցամաքով անցած ու լեռ հասած նավը՝ չարչրկված, հյուծված ու վերանորոգված, «հին ներկը քերած, ծակերը գոցած, կարմիր անցրած» իջել էր ջուրը, «հանդիսավորապես» ազդարարելով «նոր ու հրաշալի կյանքի» մասին:

***

Կոստան Զարյանի կյանքի ուղին բարդ, հակասական և ուսանելի մի ճանապարհ է որ սկսվել է անցյալ հարյուրամյակի վերջին, անցել է ներկա դարի առաջին տասնամյակների ազգային ճակատագրի վերիվայրումներով ու միջազգային կյանքի խառնարանով և ավարտվել է հայրենիքում, որ շարունակ եղել է նրա ներշնչանքի ակունքն ու ապավենը:

Կ. Զարյանի գրական ստեղծագործությունը քսաներորդ դարի հայ գրականության ակնհայտ նվաճումներից է, որ այսուհետև ևս ապրելու և ապրեցնելու կարողությամբ է օժտված:

Ինքնատիպ բանաստեղծի ուրույնությունը նրան պատվավոր տեղ է ապահովում մեր ժամանակի հայոց հարուստ պոեզիայի անդաստանում, որտեղ նա բերում է ճշմարիտ ներշնչանքի, գեղեցիկ նրբերանգի և չուսավոր բովանդակության դրսևորումներ:

Հմուտ արձակագրի երկերը տոգորված են կենսահաստատ լավատեսությամբ, հայրենիքի ճակատագրի ըմբռնումով ու աշխարհի բախտի մտահոգությամբ, և ի հայտ են բերում մտքի շատություն, հուզական անսպառ պաշար և նոր ու թարմ գրելաձևերպ:

Կոստան Զարյանի երկերի հրատարակությունը, որ իրագործվել է և դեռ անտարակույս իրագործվելու է, ավելի կնպաստի նրա ստեղծագործության դերի ու արժեքի ճանաչմանը, որին նա միանգամայն արժանի է:

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՏԱՏՐԱԳՈՄԻ ՀԱՐՍԸ

1

ԳՅՈՒԼՈՒՄ ՀԱՐՍԱՆԻՔ Է

Ցասնա լեռը հսկա իր տաքը սեղմած է գիշերվա մեջ կանգնած գյուղի եկեղեցու տուչու ավետարանը դանդաղորեն թափառում է ծանր սյուների շուրջը՝ ծերունի պատարագիչի գողդոզացող մորուքի վրա լույսեր կուտակելով։

Լեռների սարկավագները հովերին խուլորեն ժամերգում են և խավարի մեջ լուսավոր ձեռքեր կարկառում...

Մեր բագվորն էր խաչ,
Խաչվառ, խաչ ու մազ...

Հովանը վզին
Կապել է մի լայն, կարմիր թաշկինակ։
Գուլպան նախշուն է։ Բեղը ծռվել է։
Սեղանի վրայից շարականները շարժում են մութը։
Մոմերը մրսկան ծռել են բոցը,
քահանայի ձեռքը դողում է։
Ձայնը քսվում է խոպոտ գրաբարի մաշկա՛ խոսքերին՝
շինականների պլզած աչքերին։

Շալվարն էր կապույտ,
Արևն էր կանաչ...

Լռիկ կանգնել են
մազոտ ձեռքերով, դժգույն ու նիհար,
երկնքից իջած սրբերը բոլոր,

ու բաց են արել սրտերի գրքի էջերը սարսռուն՝
ուր մեծ տառերով գծված է ճամփան
խոնարհ կյանքերի և անհունի մեջ՝ բռնկած թևերով
խելագարորեն սուրող աստղերի։
Դրսում, լեռների քարավանների՝ հովը կատաղած
փոթորկամրրիկ պատվեր է բերում։ Ծայրը տնքում է,
ուր բուրվառի հետ երգում է կրակը, ծխում է խունկը։
Ականջին ոսկի, կրծքին ջուխտ մարջան,
այտերը դժգույն, աչքերը քուրա,—
կանգնել է Սանան
և սրտի վրա սեղմել վիրավոր, դժբախտ մի սոխակ։
Պիշ-պիշ նայում է.—
կազմը արծաթ է ավետարանի, խաչը ոսկեզօծ
և խնկի առատ ամպերի միջից,
անհանգիստ ու վառ՝ իրիկնամուտի բարդիների պես՝
նրա ճակատին շողեր են ընկնում
և իր գունաթափ բարակ շրթերին՝ կոճկում հնացող
մի խիտ լռություն։
Սիրտը կծկվել է։ Թուլիկ իր ձեռքը Հովանի ձեռքում
ձգել է մեռնող տատրակի նման
և իր մանկական գլուխը կախել։

Երբ երգը կանգնած, ծեր քահանայի աչքերը կապույտ
հարցաքննում են Սանայի սիրտը.—
նա մութ սենյակում դուռը փնտրող երեխայի նման
նայում է վախցած՝
Աղջի՛, ասա հա, աղջի՛, ասա հա—
ծռում է գլուխը, մինչ մեջը ըմբոստ մի ձայն է լալիս՝
— չեմ ուզի, դադո՛ չեմ ուզի, բաբո՛—...
— Աղջի՛, ասա հա...
Հա, հա, հա... սնքում է քամին կողերից բռնած,
քսվում է պատերին, բարձրանում վերն
և աղմկալից գոռում գոչումով պտույտ է գալիս
պարապը գրկած գմբեթի գլխին։

Հյուրերը կանգնած՝
գոմից դուրս նայող տավարի պես մունջ՝
իրենց մտքի մեջ կամաց շոյում են ոսկեզօծ գարին

շարականների։ Տրեխների ծայրին ձյունը հալվել է։
Պառավ մամերը, ոսկրուտ մատներով,
խորտակված ու մութ կրծքերի վրա աղոթք են սեղմել.
մինչ խաչը փայլում,
թագվոր, թագուհուն նշան է անում. ուրախ ձայնում է
զնգուն խշշոցը —

Մեր թագվորն էր խաչ,
Խաչվառ, խաչ ու մազ...

Փեթակի նման բզզում է ժամը, գյուղացիների
ոլոր բեղերից ժպիտ է կախվում, ու ծիծաղում են
հարսները թրթռուն։ Ապրե՛ք, ծերանա՛ք...
Սանայի այտին խնձոր է ծաղկել։
Հովանը գլխին դրել է մի մեծ, տոնական գդակ։
Ապրե՛ք, ծերանա՛ք... Ծիծաղ ու կատակ։

Ոչ ոք չի տեսնում, թե ինչպես հանկարծ,
մեծ որոտումով, բացվում է դուռը մութ երկիրքների
և սավառնելով՝ ոսկեթել, մեծդի՝ անհետանում են
անտես հյուրերը անդրաշխարհի։

Միայն կապուտաչ,
աղքատ մի հրեշտակ թռչ՛չ... ատեն թևը զարկում է
ժամի սուր խաչին և կսկծալով մնում շվարած։
Գյուղը կախվել է Սասնա փեշերից, աչքերը նետել
խորխորատի մեջ ու միտք է անում, դարավոր մի միտք։
Գլուխը ձյան տակ ցրտից դողում է։ Կապտած ձեռքերը
ամուր բռնել են ուռկանը հողմի՝ որսում են լեռան ամեհի ստվերը
և խոր ձորերից եկած ձայների
մռունչը և խուլ արձագանքները։

Իսկ գյուղի մարդիկ հրացան են պարպում։
Երգը պատռում է հողմի կոկորդը
և շուռ է գալիս — մեր թագավորի, մեր թագավորի՝
առջև շարելով մի մահուդ չուխա, մի քաթան շապիկ,
մի ջուխտ լավ գուլպա —
և շուռ է գալիս՝
ծռած բերանը ձյունին կարկառած։

Իսկ գյուղի մարդիկ հողմը հրելով —
ա՜հ, ի՜մ հայրենիք·
շուրթերդ սառած կպցրու ճակատիս
և գիշերներիդ խորհուրդը խորին
տուր իմ պանդխտի կարոտ աչքերին —
Իսկ գյուղի մարդիկ
ուժեղ ոտքերը զարնում են գետնին,
աքացի տալիս անհուն լռության
և ցատկոտելով՝ խումբ խմբի դիմաց՝
ալեկոծ ծովի նավի պես շարժվում։

Սանան գնում է՝
փոքրիկ քայլերը ձյունին քսելով,
և կրծքին սեղմում հովի հառաչը։
Սանան գնում է ու ներաշխարհի երազանքների
լուսով քանդակված կածան է տեսնում,
ուր բյուր ոգիներ, անհասկանալի,
լեռան կողերին, թռչկոտող, ուրախ,
մի պար են պարում։
Սանան նայում է, ժպտում է երկար
ու ձեռքը տանում ուժգին բաբախող փոքրիկ իր սրտին։

Մշուշի միջից —
Խորանի վերև խորհուրդը վառող բոցերի նման —
նայում են նրան
լայն բացված ու վառ, ծովի գույն աչքեր։
Թևը քարշ տալով, փաթիլների տակ գլուխը վար առած,
սահում է լուսե մենակ հրեշտակը։
Սանան նայում է՝
— Աստված, իմ աստված, դա ի՞նչ նշան է —
և չի հասկանում։

Իսկ ժայռի կրծքին կպած խրճիթում
դհոլի վրա կարկուտ է տեղում,
և Տատրագոմը, բեղերը սրած,
հարայ-հուրայով պտույտ է գալիս և համազարկով
գնդակահարում ամպերի ետև աստղերը թաքնված։

Հետո հյուրերը մտնում են սենյակ։
Սփոռց մի կապույտ և աղոտ ճրագ։ Ջիր, չամիչ, խնձոր
և նաբաթ-շաքար։— Շնորհավոր լինի,—
օդին վազում է ծեր քահանայի մորուքի վրայից,
և կովը գոմում զարկում է ոտքը հարևան պատին։

Երգը գինու հետ առատ հոսում է
մորթված աքլորի տաքուկ արյան պես,
և ջահելների դեմքերի վրա բոցեր է նետում։
Նետում է նրանց ուսերի վրա նազպարի թևեր,
մատներին չխկոց
և հուժկու զարկվող ձեռքի ափերին ալիքի սուրսուր։

Ի՜նչ լավ է, եղբա՛յր, Հայոց աշխարհի
տոնը միամիտ,—
մոլեգին դափը բախում է ուժով սրտերին ուրախ
և ձայնը գլխին, վիզը երկարած՝
դհոլ ու զուռնա
— տմբլա, հա տմբլա —
պտույտ են ածում խենթացած յայլին,
դոփում ու ցատկում՝ մրրկահուզված անտառի նման
սարսռող ու գիժ պապական պարը։

Դրսում էլ բուքը, փեշերը քաշած,
սառած ձեռքերում բռնել է մթին մի լայն թաշկինակ.
զարնում է գլուխը հարսնիքի դռան,
վազում է հարբած, գլորվում ձորի մեջ,
լեռների կրծքին մրճահարում է բռունցքները հնչուն,
հետո ժողովում իր կատուների անոթի խումբը,
մլավում է երկար,
խզված կոկորդը ամպերին քսում
և խուլ հառաչում։

Ժամը զարկվում է անհանգիստ ժամին։
Երդիկների վրա հաղթանդամ մեկը ծանր քայլում է։
Այն ո՞վ է շալկել բուք ու բորանը,
երկաթե քայլով այն ո՞վ է գալիս,
ո՞վ է սարսափով թմբկահարում։

Գյուղի հարսները ծամում են մտածկոտ նաբաթեն շաքար։
Սանան վախում է, և տղամարդիկ՝
գինով աչքերով նայում են հեռուն,
մի վայրկյան լռում։

Այն ո՞վ է շալկել բուք ու բորանը։

Բայց հայը վաղուց սովոր է ապրել մութ ոգիների
վտանգալից ծոցում.
անիծվի հերը գեշ մտածողի։—
Մաքուր սրտերին թող պաշտպան կանգնի Սասնա Մհերը։
Ու ահա զվարթ, արախչին տնկած գլխի կատարին,
թևերը պարզած թիերի նման,
կուրծքը շարժելով,
պարում է նազով թագվոր Հովանը։

Փչում է զուռնան
— տմբլա, հա տմբլա,
մինչ քամին դրսում շարունակում է խփել իր դափը
ու ծափ է տալիս,
և հոհոալով վայում, ծիծաղում...
Եվ ծափ են տալիս բոլոր հյուրերը։
Երգը գինու հետ առատ հոսում է՝
մորթված աքլորի տաքուկ արյան պես,
և Տատրագոմը,
ձյունի տակ նստած, քսում է գլուխը
թանձր խավարին։

Լուսաբացի մոտ,
երբ լեռան գլխին օրը բացում է իր թարթիչները
և կամաց-կամաց գլորվում դեպի գյուղ,
Երբ արծաթ ձայնով բարձր երգում է աքլորը հանկարծ՝
Սանան պարում է։

Կես մութ անկյունում, անտեսանելի հրեշտակը կանգնած,
նայում է նրան և իր դալկահար ճակատի վրայից
Ներս մտնող լույսի շողերն է պոկում։
Սանան դառնում է երազանման՝

Երեխայական բարակ թևերը թափահարելով
Անհայտ և գաղտնի առջևը բախտի։
Իր նշանման աչքերի միջից կայծեր են ընկնում,
և եբենոսե վարսերը առատ
սև նավարկության առագաստի պես
տատան են գալիս, թափվում և սահում։

Սանան պարում է.
պարում է այնպես, ինչպես ամպի մոտ իջնող մի բազե
ըղգալով շունչը փոթորիկների
պտույտ է գալիս, ծալում թևերը
և արագ նետվում ժայռերի գլխին։

Նա պարզ լսում է, թե ինչպես դրսում քամին կատաղի
մրճահարում է թիթեղի վրա,
պատռում աքլորի երգը խոնփած
ու ոտքը դոփում՝ գյուղի տանիքը սարսելու համար։

Ծափահարում են երկար։ Սանահայրիրը կատակ են անում,
հարսներին նայում խորամանկ աչքով
և թևը թևին դառնում են դարձպար,
թոչկոտում, ցատկում գնդակի նման։

Ոչ ոք չի տեսնում, ինչպես մտահոգ կանգնած հրեշտակը
կոտրած իր թևը թեքում է պատին
ու գունաթափվում։ Սանան կծկում է ձեռքերը կրծքին,
հառում աչքերը դեպի հեռավոր տեսիլքի վրա
և մնում անշարժ։

Մի հյուրի ձեռքից ընկնում է կուժը,
և կարմիր գինին տրեխների վրա ժայթքում է ուժով,
աղմուկով պայթած երակի նման։
«Ախպե՛ր, ինչ է որ... ձեզ դուրբան լինի...
գինին առատ է, և Տատրագոմը խաղողով հարուստ»...
Ծափում են երկար։ Հետո լռում են։
Ամեն մի հյուրի ճակատից ընկած՝ կախվում է մի սև,
ծանր մի գիշեր։

Խրճիթի առջև մի ձի է կանգնել, իր սմբակները
զարկում է քարին։
«Բա՛ց արեք դուռը»... Բացում են դուռը՝
քամին մտնում է ու թավալ գալիս հարսների կրծքին։
«Խեր լինի, ախպե՛ր... Այս անգամ խեր չէ, թուրքերը եկել
հարևան գյուղից աղջիկ են տանում, տավար ու նախիր.
դիրքեր բռնեցեք»...
Եվ լրաբերը ձին մտրակում է ու ճեղքում հովը։

Կաղացող ահը, տնեստուն ընկած,
լուռ կարկառում է իր թույլ ձեռքերը,
և ամեն մի տուն նետում է սիրտը՝
ինչպես մաշ եկած մի հին դահեկան։
Հովանը կատղած, հրացանը ձեռքին, խրճիթի առջև
դողում է, սպասում, կրծում շուրթերը։
Սանան գունաթափ, գետին է փռվել, աղոթք է անում
կանաչ աչքերով, անտես իր հյուրին։
Մռայլ է Սասունը։

2

ՀՈՎԱՆԸ ԳՆՈՒՄ Է ԶԻՆՎՈՐ

Հողերի սիրտը զարնվել է խոփին։ Դաշտը՝ ձեռքում ոսկե մի պնակ, տեն-դահար ման է գալիս։

Լեռան կողից վար թավալվող այգի-ներում խնձորենիների ճյուղերը ծանրա-ցել են։ Աքլորը տանիքի վրա բարձրա-ցել և, ամբողջ իր ուժով, թևերից թափ է տալիս արշալույսի ճարճատող կրակը։

Լեռան կատարին ոսկի ճրագ է բռնել լուսաստղը։
Առավոտը —
Խշշոցը ձեռքին կարմիր սարկավագ —
ձայնը դեմ է տվել ամպերին —

Հոռովել հո՜...

երգում է։

Երդիկներից ծուխ է ելնում։
Կչկչում են հավերը.
արտույտը լքել է բույնը,
և Սանան, ոտաբոբիկ՝
լեռան զմրուխտը կրծքին՝
մրսկան ու փխրուն, կովի առջև չոքել է՝
թուլիկ մատներով կաթ է կթում։

Այնտեղ վարը
տենդագին արտը շարժում է ուժգին. ուսերը իր լայն
և տավարը
ոտքերը ծռում, քաշում է լուծը
բյուրեղով լցված ակոսների մեջ.
այնտեղ վարը, Սանան տեսնում է,
Հովանը թափով հերկում է արտը։
Գլխին սրածայր ճերմակ մի թաղիք,
մեջքին հաստ գոտի,
կուրծքը լայն բացված —

Օրհնյալ է աստված,
Հիշյալ է աստված,
Մաճկալ ջան, վարե՛ :

Բռնել է մաճը՝ խոփը չշեղի,
դարսվեն ու պառկեն
շարքով դուրս եկած գուղձերը հողի։

Արևը ընկել թավալ է գալիս ակոսներում խոր։
Եզը զարկում է ոտքը քարերին,
ծռում է գլուխը
և ուժգին թափով ճեղքում է հողը։

Արտը շատ քար է։

Ի՜նչ փույթ, թե քար է, աղքատ, տկար է
արտը տոթահար —

Վարեմ շատանա,
Տերն ուրախանա:

Սեղմում է գլխին թաղիքը ուժով, քայլում է արագ
Հովանը ահա,
բռռում է, կանչում, շվվալով զարնում ձեռքի ճիպոտը
լեռներից ընկնող հորիզոնին վառ.
ուժ տալիս խոփին ամբողջ իր մարմնով,
որպեսզի ճեղքի երկիրը Հայոց՝
դար դարի ետքից դուրս հանի պառկած շերտերը համառ,
շերտերը ծալված
լուռ ոգիների խորհուրդների տակ.—

Օրհնյալ է աստված,
Օրհնյալ է աստված...

Ոմանք հնձում են, ոմանք հեսանում կռացած գեբանդին,
ոմանք երգելով խուրձեր են կապում,
խոտը ոլորում, շալկում ծաղիկը
և դանդաղ քայլով բարձրանում լեռը՝
բուրումներ սփռում Տատրագոմի շուրջ։

Իսկ վերը, գյուղը
դրել է ճակտին իր ծանր ձեռքը.
խաղաղ նայում է փայլուն աչքերով
արտում եռացող կյանքին քրտնաթոր,
հեռվում փուլ եկող ադամանդածայր լեռներին հսկա,
աղմուկով թափվող աղբյուրներին մեծ.
հետո, կամացուկ, սեղմում է մեջքը բարձր քարերին
և մտածում է,
իմաստուն ու լուռ,
վազվա օրերին։

Սանան վազում է մի երիտասարդ այծի ետևից, որ հիր նշենու
կարմիր հրդեհը բերանին առած,
փախչում է զվարթ
և ծիծաղում է՝ սրածայր մորուքը արագ շարժելով։
Մինչ ճամփի ծայրին
հարբած մի սոխակ բերանը բացել, լցրել է լույսով,
խելառ բաներ է ասում վարդերին։

Մի դեղին ճուտիկ ընկել է ջուրը,
մայրը սարսափած կանչում է ափից։ Կովեր ու եզներ,
դանդաղ շարժելով լեռներում հնձված ծաղիկի խուրձեր,
իջնում են կամաց, կանգնում, բառաչում։
Արտը պարպվում է։
Խրճիթի առջև, փեշը ճակատին, հոգնած Հովանը
քրտինքն է սրբում և լայն ժպիտով նայում Սանային։

Վերջալույսի հետ գյուղը պառկում է, մաշված դնդերը
սեղմում է գետնին,
գրկում գիշերը և վերը ցանված աստղերի դաշտը։

Գիշեր է գյուղում։
Մարդ ու կենդանի քնել են հանգիստ՝
Արգանդից բերած սովոր ձևերով
կծկված։

Սանան փռել է վարսերը իր սև
Հովանի ամուր բազուկների մեջ՝
ինչպես հեռավոր, անհայտ մի երկրում։
Ամեն ինչ լուռ է։

Տատրագոմի վրա խորհուրդը իջել
սեղմել է ուժգին իր ոտքը խավար
նրա մտահոգ, այրված ճակատին։

Գիծ-գիծ պատռված արտերի կրծքից,
մռայլ ժայռերի մթին ճեղքերից
գալիս են շարքով մեր հեքիաթները
և երդիկների գլխին շուռ գալով
շարժում են կամաց
իրենց մատների
վառված մոմերը
և ճամփա ընկնում՝
դեպի սրտերի պղնձե քաղաքը։

Թոնիրների շուրջ թափոր է նստել։
Պառկած տավարի կոպերի վրայից երազ է սահում։

Գոմը տաքուկ է, և եկեղեցու գմբեթի վրա
թառել է կանաչ բոցավետ մի լույս։
Պառավ մամերի շուրթերից ընկած խոսքերը գաղտնի
քայլում են աշխույժ և հոգիների կիսաբաց դռան
Ուժգին զարնվում են ոսկե մուրճերով։
Հայ երազների խորունկ իմաստը
նստել է լուսե մեծանիվ մի կառք
և ճռճռալով
պտույտ է գալիս ոսկե մարգերում
նոր աշխարհների։
Ոմանք նետել են իրենց ուսերին
Սասնա լեռների փեշերը երկայն,
դրել են իրենց տենդոտ ճակատին Սիփանա թագը պսպղուն ու
վառ
և մեջքին կապել ադամանդազարդ սուրը Եփրատի։

Ոմանք էլ գարնան
ծաղկած ծառերով ծփող պատմուճանն,
փղոսկրե կոշիկներ և կապույտ մի զրահ՝
Տավրոսի վրայից հաղթանդամ ձեռքով պոկած մի երկինք։

Հետո, խստադեմ ուրիշ ոգիներ,
սև ամպ վարսերով,
Վանա ալեկոծ ծովից դուրս թռած
բարկացած հողմեր
և բուք-բորանով լեցուն նայվածքներ,
արյունած աչքեր, խիստ էությունների՝
երկայն բեղերով, ածիլված գլխով,—
դուրս եկած մթին խորխորատներից։

Սանան նայում է և իր կիսաբաց շուրթերի միջից
պայթած նռան պես հառաչ է ընկնում։
Հովանի բռունցքը սեղմում է ուժգին սանձերը մութի,
և հրեղեն իր ձին բախում է թևը
հարավից սահող աստղերի խմբին։
Երկնքից կախված
մեծ աշտարակը
հանկարծ աղմուկով ընկնում է անդունդ։

Մշո մեծ դաշտից
մի զիլ աղաղակ՝
մինչև ամպերը երկարած ձեռքով՝
ուժով նետում է
արյունով լեցված հսկա մի բաժակ։ Մասիսի գլխին
կանգնում է մի սկիհ, և ոսկեալիք փիլոնի տակից
լսվում է ձայնը սարսափով լեցված կաթողիկոսի։

Մաղկած ծառերը,
մտրակված ձայնի ահաբեկումից,
պտույտ են գալիս մեկ ոտքի վրա,
և նոր սերմերը, ակոսներում խոր,
աղաղակելով ժայթքում են հողի վառված արգանդից
և փոշիանում...

Այդ կիշերներին
աշխարհը ամբողջ գյուղացիների կոպերի տակից
տատան ծովի պես ծփում է, քայլում.
Տավրոսի շղթան, իր քարավանի պարանը ձեռքին,
առաջ է ընկնում, մտնում է անհուն,
և անապատի հանգիստ երկնքում
ուղտերը դանդաղ աստղեր են պոկում։
Լուսաբացի մոտ քարավանները
լոքում են շարքով
և արշալույսի զմրուխտը ծամում՝
իրենց սրածայր, արյունաթաթախ մեծ ատամներով։
Գյուղը զարթնել է։
Շեմերի առջև
եզներ են կանգնել.
հավերի համար ցանվել է կուտը,
և եկեղեցու զանգը հնչում է։
Տանիքի վրայից աքլորը կանգնել կանչում է բակի
կանաչ ծառերին.—
Ո՞ւր են, ձեզ մատաղ,
Ո՞ւր են բոցկլտող ձեր ծաղիկները.
Սանան կանգնել է, աչքերը ճմռում, նայում է հիացած։

Ամառը հրաշուրթ՝
պսպղուն մի բեռ իր ուսին առած՝

Հարբած
ճառագայթավառ կապելաներում
արևի,
կախել է վզին բյուրեղե վզնոց,
ատամների տակ սեղմել է մի վարդ՝
թավալ է գալիս գյուղի փողոցում։

Ծղների ճակտին հրդեհ է քայլում։
Կովը քաշում է պարանը կատղած՝
շռում ոտքերը։ Քամին շոյում է
հասկերի ոսկին,
և միջատները բզզում են ուժգին։

Ռունգները թրթռուն, երեսը կարմիր, ձեռքերը կրակ՝
Հովանը քաշում, սեղմում Սանային
արևով լցված իր թևերի մեջ.
տրորում է, շոյում,
կծում այտերը։

Ձեռքում պինդ սեղմած ծիծեռնակի պես
Սանան, սփրթնած,
տանում է սերը տանջանքի նման
և իր մանկական մարմինը փակում
անուշ վերքի շուրջ։

Դրսում
դաշտերը հրակեզ թավալ են գալիս,
կանչում է կռունկը,
և թփերի մեջ
հովը բռնում է ճյուղերի բոցը,
այրում մատները
և կաղկանձելով վազում ժայռերից թափվող աղբյուրի
ղովագին ափը։
Ինչպես հինավուրց գեղեցիկ արձան,
մեծ մի կուժ ուսին,
ոտքերին նախշուն կանաչ չմուշկներ,
գլխին դեղձի գույն երկայն մի լաչակ,
երերուն քայլով Սանան կրում է օրերի բյուրեղ,

պաղպաջուն ջուրը
ու հացը թխում՝
ամառվա հրավառ թոնիրի առջև։
Նա խոնարհաբար մտել է գյուղի տնքացող կյանքի
ծոցը փոշիոտ և ուրախ սրտով, ժայռերի դիմաց,
հառում է հույսին աչքերը վառված։

Տոթահար քայլով՝ օր-օրի ետքից՝ ամառը դանդաղ
անցնում է գնում։—
Ճռռում է սայլը, կովը բառաչում,
և Տատրագոմը թափահարում է իր ծեր գլուխը։
Սանայի կրծքին մի հով է գգվում։
Բացում է դուռը և այգիների ոսկե հրդեհի ծառուղիներից
տեսնում է ինչպես աշունն է գալիս։

Ողջո՛ւյն քեզ, աշո՛ւն, բարի ես եկել.
գլխիդ ոսկեվառ լաչակ ես գցել,
ոտքերիդ դեղին հինա ես դրել.—
ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն։
Աշնան հեռացող ողկույզների հետ
գյուղը պարպում է իր երակների
զմրուխտե թասը։
Ժամերով կռացած շինականները
լուռ հաղորդում են
հողերի տակից եկած բերկրանքին
իրենց թևերի պողպատե ճիգը։
Արտ ու արոտը
դարսում է սողուն սայլերի վրա
լեռան կողերի ոսկեհուր բերքը։
Հարսների գլխից շալը ընկնում է,
Թրթռում են նրանց լեցուն կրծքերը,
և ալիք-ալիք պառկած հասկերը
լաչակի գլխին ջահեր են վառում։

Գյուղը տնքում է։
Դաշտը տենդագին շարժվում է արագ։
Կալերի գլխից ոսկե ամպեր են ընկնում ու սողում։
Մարդիկ բռում են։ Ձեռքերը մեջքին,

փորը շարժելով, երգում են կանայք։
Ու երբ գալիս է երեկոն դանդաղ,
վառվում է լեռը,
և մեծ մի լուսին հանկարծ ցցում է ամպերի միջից
պղնձե մի պնակ՝
կալերի մոտը գյուղը պարում է։

Օրվա այդ պահին
ժայռերի գլխին ծերերն են նստում,
վառում են երկար հողե չիբուխը,
հաստ բթամատով սեղմում կրակը
և վարագուրված իրենց աչքերով դիտում են արտում
ոլոր գծերով շրջող դարձպարը։

Երեր են գալիս, հասկերի նման, նազով, երազով,
հարսները ուրախ —
դոփում ոտքը աջ, դոփում ոտքը ձախ
և հոհոալով սահում ծփծփող ալիքի նման։
Աշունն էլ գինով՝
նետվում է դիզված ցորենի վրայից,
ցատկում դաշտեդաշտ և պտույտ ածում լուսնո ջաղացը։
Մինչ տղամարդիկ,
իրենց թևերի հուրը դուրս նետած՝
առույգ շարժումով
հարսների շուրջը ոստնում են զվարթ՝
զնգուն ու չիկուն։
Ժայռերի գլխին նստած ծերերը,
մտահոգ ու լուռ, հոնքերի տակից դիտում են հեռուն։
Դիմացի լեռան
ճամփան շարժվում է։ Զիավորների խմբեր են գալիս։
Նայում են երկար, մտահոգ ու խիստ,
քաշում են ծուխը, աղմուկով թքում՝
լռում։

Աշունը անհոգ՝
մի վարդ է ճզմել, քսել շուրթերին,
արագ ցատկում է դաշտերի վրա
և հոհոալով թավալ է գալիս կալերի հրավառ

և տենդոտ ծոցում։
Սանան ընկել է երգերի լիճը։
Վայրենի բադի հեզասահ ճախրով նա ման է ածում
ուսերի վրա լուսնո վայր ընկած ոսկե պատրանքը։
Դեմքը վառվում է։ Թափված վարսերը
արտի խենթացած ալիքի ծայրին երազ են շոյում։
Ոտքերի տակից կարծես վազում են աղբյուրներ բյուրեղ,
մատների վրա ճառագայթները
պսպղուն ու վառ ակունք են շարում
և զսպված մի տենդ
բարակ, սլացիկ մարմնի վրա ծփում է, նազում։

Ո՞ւր է Հովսնը, ո՞ւր է Հովանը...
«Կաքավդ ահա թևերը բացել
մեջտեղ է ընկել, իսկ դու կանգնել ես, ինչի՞ ես սպասում»...
Եվ ձեռքից բռնած նետում են նրան շուրջպարի ծոցը։
Մատղաշ եզան պես երկայն տրոբում է ու ետև նետում
ուժեղ իր բաշը։
Ժողվում է ի մի դնդերը լարված,
և ոլոր գծով
ոտքի մատների ծայրերին ցցված,
արագ ու կայտառ, նա կոխկռտում է
անտեսանելի հազար օձերի գլուխները կատղած։
Ապա, տաքացած, դանակը ձեռքին,
երգերի շեշտը սրտին մխրճված,
առաջ է նետվում, հարված է տալիս
ուրվականներին վայրենի և բիրտ,
ցատկում է ետև, պտտում արագ,
նետում ոտքերը՝
երդիկի վրա ընկած հողմի պես,
դոփում ու թռչում։
Դոփում է, ցատկում խմբապարն ամբողջ։
Ձայների ծովում թավալ է գալիս մի մեծ փոթորիկ։
Թմբուկի վրա լուսինը տենդոտ
փշրում է դեղին սաղափ հայելի։
Լեռների ծոցում հովը հարբում է,
և Տատրագումը
շարժում է զվարթ, ալևոր գլուխը։

Բայց մեկ էլ, պարի էն տաք ժամանակ,
գյուղի ճամփի մոտ աղմուկ է լսվում.
փոշու ամպերից ձիավորների մի խումբ է ցցվում։
Մերերը հանկարծ,
մեջքները ծռած,
չիբուխի ծայրը օդում շարժելով,
գլորվում են ներքև
և խալխի առջև մտահոգ սեղմում
իրենց հոնքերի թանձր գիշերը։

«— Թշնամին եկել,
եկել կանգնել է գյուղի մեյդանում»։

Պարը շշմում է։ Դհոլի ձայնը
մորթված եզան պես իր վարագուրված աչքը տնկում է
և սարսռալով երկարում ոտքը։ Կանայք փախչում են։
Շինականները,
պաղած քրտինքը, ճակատնին կպած,
բեղերի ծայրին կեղծավոր ժպիտ,
ոխը սրտներում՝
գնում են վերև և շարքով կանգնում,
գայլի նայվածքով, զինված քրդերի «հմակի առջև։

— Մեր շեյխը ձեզ շատ բարև է ղրկել...
— Բարի եք եկել, աչքներիս վրա տեղ ունիք պատվո։
— Ալլահը օգնի։ Բերքը ժողվել եք՝ պարում եք ուրախ։
Մեր շեյխն էլ հիմա իր մասն է ուզում։ Ինչպես հերու էր՝
էդպես էլ այսօր։ Թող չահելները սայլերը դիզեն
և վաղը մեզ հետ բարձրանան լեռը։

Հովանը հուզված ուզում է խոսել։ «Ինչպե՞ս թե դիզել
և բերքը տանել... ի՞նչ իրավունքով»...
Մերերը ուժգին քաշում են փեշը,—
«տո, տղա՛, լռե»,—
չեն թողնում խոսի և կմկմալով
առաջնորդում են վայրագ այս մարդկանց հյուրերի խրճիթ։
Արցունքը զսպած,
ատամների տակ զայրույթ ծամելով,

Հովանը արագ քաշվում է սենյակ, ցասումով նետում
գդակը գետին
և արյունալի խոսքերի վիհում՝ խեղդում է, գլորում
վեզիր և սուլթան։
«Մինչև ե՞րբ պիտի ծռենք մեր վիզը տավարի նման...
Բա նամուս չունի՞նք... Բա մեր ծերերը ամոթ իսկ չունի՞ն...
Մինչև ե՞րբ պիտի»...

Սարի ետևից,
երկար կրկնվող արձագանքի պես,
այս միտքը ուժեղ
խուլ դղրդում է բոլոր վայրերում,
հրավեր է նետում գյուղերի գլխին
և սուր դանակով կրծքերի վրա խայտում մի նշան։

Ամբողջ գիշերը, մինչ շեյխի մարդիկ խմում են, պարում,
Հովանը նստած՝ շուրթերը կրծում ու մտածում է։
Կսկծող սրտով երկար նայում է Սանայի դեմքին։
Նայում է երկար նրա կիսաբաց կրծքի վրայից
սարսուռով սահող շողերին լուսնո,
Նրա գեղեցիկ վարսերին առաս,
մանկության պայծառ ճակատին հոգնած,
շուրթերին կարմիր։
Նայում է երկար ու տառապում է։ Ուզում է փաթթվել,
սիրել, գուրգուրել։
Դարձնում է գլուխը, փակում աչքերը։
Արծաթե զանգի զողանջի նման, հեռավոր մի ձայն,
համառ ու հնչուն, կանչում է նրան։
«Մինչև ե՞րբ պիտի... Բա նամուս չունի՞նք»...

Երբ լուսնշաղի կես մութի ժամին՝
տխուր ճռռալով գնացին սայլերը,
երբ Բշնամիները տարան տավարը,
և Տատրագոմը
դողացող ձեռքով սրբեց ճակատի թանձր արյունը
և տրտում նայեց պարապ արտերին՝
Հովանը կանգնած իր շեմի առջև, վագրի աչքերով
դիտեց լեռները և վճիռ առած ներս մտավ խրճիթ։

Տխուր ու լռիկ նայեց Սանային։ Ուզեց բան ասել՝
կծեց շրթունքը։

— Գիշեր քուն չեղար... Հովա՛ն, բա՞ն մը կա...
— Ի՞նչ պիտի լինի... բան չկա,— ասաց և մեծ աղմուկով
հազաց ու կարմրեց։

Հետո թռավ դուրս
և վիրավորված որսի շան նման երկար կաղկանձեց։
Խենթի պես շրջեց տների շուրջը, նայեց ամեն ինչ,
ժամ մտավ, կանչեց ծեր քահանային

և խոնարհելով
պատմեց մեղքերը և հաղորդ առավ։
— Ձե՛զ մատաղ, տեսեք, մեզ շուտ ազատեք...
— Սանան չմոռնաք... ինձ համար ընդմիշտ աշխարհ
վերջացավ...

Հայդուկն իր կնոջ հոգալ չի կարող, թող ժողովուրդը

հսկե, մտածե...

Քահանան շոյեց ճերմակ մորուքը, պլզեց աչքերը
և ուզեց հուզված մի քարոզ ասել։ Թուքը կուլ տվեց՝
լռեց։

Հովանը չոքեց՝ համբուրեց հողը, Տիրամոր առջև խոնարհեց

գլուխը
և արագ քայլով առավ կամրջանը մոտակա լեռան
և անհետացավ։

Սանան փռել է կապույտ սփռոցը։
Դարսել է հացը և շեմի առջև մտահոգ կանգնած
նայում է, սպասում։

3

ՖԵԴԱՅԻՆԵՐԸ

Արևը կոճկում է ձյունե իր ձեռնոցները լեռների կատարին։ Լռությունը՝ ուսը սեղմած մոսխի կոթին՝ փռվել է խորխորատների եզրին։ Երբ կրակում է՝ Հայաստանի նշենիներից արյուն է ժայթքում։

Ո՞վ չի անցել Քսենոֆոնի հետ Հայոց երկրով.

Ճամփաների աղեղը ճաթել է.
նետը խրվել է լեռան գագաթին՝
դողում է։

Սառը
սրել է սուրը.
և անդունդի եզրի մկանունքները
պողպատե ճիպոտներով զարնում են հսկա լռությունը
Սասնա և ուրիշ վայրերի,
որոնց անունը սոսկում եմ հիշել։
Ով չգիտե, որ Հայոց երկրում
լեռները ման են գալիս խմբով։
Երկինքը թափ է տվել
իր մերկ ծառը։ Հողը փոթորկվել է,
և հիմա՝
անկամուրջ տարածությունների միջից՝ սրել է ատամները
և կծում է անարյուն ամպը։
Ո՞ւր է վազում հողմը,
ինչո՞ւ է բացխփում կապտած շրթունքները, խառնում աղիքները
սարերի
և թիթեղե թմբուկի վրա խփում մատները
սառած։

Ո՞ր հայը չի իմանում, որ Հայաստանում
աշխարհագրական քարտեզը զոդիակոսի վրա
դրել է կատաղի ցուլը,

որպեսզի սրածայր եղջյուրներով պատռե անհունը,
գետերի հունը, բյուրեղե քարերով շինված
երկնային տունը։

Արտերը կուլ են եկել։ Արոտների վրա պառկել է ձյունը,
և անծայր պսպղությունը
սառած ծովի տակ փակել է գյուղը։
Ուրիշ տեղեր,
ջրվեժների գլխին լալիս է անապատը։ Ջորը ոռնում է,
և խորխորատը
դունչը քսում է սառույցին՝ խուլ մռնչում է։

Հեռագրաթելերի սյուները ծռվել են։ Ձյունը քայլում է,
և գայլը՝
ֆոսֆորե մի պոեմ է ոռնում ժայռերի հետ կանգնած
և աչքերի սարսափած փայլը նետում է վիհ։
Իսկ վիհերի մոտ, մութ խորշերի մեջ,
փակվել են հայեր։
Հիմարնե՞ր, հիմարնե՞ր...
Մոսին, դանակ, սուր և խաչաձևված պատրոնդաշները
կրծքերին կապված։ Դիագոնալ շալվար՝
պատռտված.
չերքեզի փափախ և նայվածքներ՝ կրակ ու բոց քուրա։

Այդքան էլ հի՞ն է այդ պատմությունը։ Եվ սակայն, կարծես
կարդում ես վեպ մի հրաշուրթ և ահեղ, որի էջերից
ընկնում են վառված ածուխե խոսքեր և տողը տողին
հարված է տալիս
ուժգին։

Ահա կանգնել է խիզախ Ռուբենը։ Տեսեք, շան տղան,
աղեղի նման ձգվել է, լարվել,
այրված իր դեմքը տվել է լեռան,
մի թուրթ է կարդում և հրաման տալիս.—
Կտրել լեռների
Բարձրաբերձ շղթան, անցնել հովիտներ, մագլցել սարեր,
հասնել Մշո դաշտ։

— Մեռելի ճրժեր՝
ձեր ոտքին մատաղ, թև առեք տեսնեմ։

Եվ խումբը ահա ճամփա է ընկնում։

Լռիկ, խստադեմ, ընդմիշտ ուխտ արած պատերազմիկներ,
Վայրի կատուի ցատկոտող քայլով,
մագլցում էին Սասնա լեռները, շուք էին դառնում ավանների
մոտ,
կախվում ժայռերից, անցնում վիհերը
և հոգնած շնչով մի երգ մռմռում՝
կոխելու համար նոր զառիվերը։

Հայոց պատմության
սրտառուչ ու խոշ բառը արյունոուշտ
գրված մի դաժան դարի ճակատին։
Ամայի լեռանց կույր Հոմերոսը,
թափված աչքերը
հառել է երկրին և բուք-բորանի շեշտը ահավոր
զարկում է զորեղ իր հնգամետրի երկաթե երդին

Գիշերը գալիս լեռների լանջքին նետում էր իր սև
և լայն վերարկուն։
Գազանները մունջ խորշերում պառկած մութ էին ծամում։
Թաթը ոերանին
արջը որջի մեջ,
երկար լիզում էր երկնքից ընկած ծանր գաղտնիքը։
Վայրի այծերը իրենց թրթռող, սուր եղջյուրները
մխրճում էին լռության սրտին,
և սարսափահար,
լսում ձորի մեջ դոփող զրնգող մարդկանց քայլերը.

Եվ խումբը թափով ճամփա էր գնում։

Մակար ծերունին,—
թիկնավետ լայնքով, բեղերը սրած, հեռավոր գյուղից
դուրս եկած ասպետ, երազկուն ու վեհ
մի խիստ Դոն-Քիշոտ՝

կովան խոյի պես առաջ է ընկել
ու առել կրծքին ճամփի ոլորուն, անհայտ գիշերը։
Նրա ետևից,
կայծկլտող աչքով անտառի ոգի՝ ոտքերը կամաց
ձյունին է տալիս մոլեռանդ Սեյտոն։
Հետո, սեղմ շարքով,
դյուցազներգական աստվածների պես՝ գալիս են ահա,
չերքեզ փափախի վարսերը երկայն գլխին թափ տալով՝
ռետինե մարմին և կապույտ աչքեր՝ եռուն Ռուբենը,
նորման իշխանի խարտյաշ մազերով՝ Մանուկ Շենրկին.
գունաթափ Զոլոն, եզան պես ուժեղ, բիբերի շուրջը
կարմիր երակներ՝ կովազան Ախոն.
ըմբիշի նման ցատկռտող Հարոն, կարշնեղ Զավենը.
Հոնքերը կախած, աչքերը քուրա՝ Հովան ֆեդային։

Զյունը տնքում է նրանց քայլերի համառ թափի տակ։

Ոչ ոք չի խոսում։
Այս հերոսները, զվարթ ձեռքերով, նետել են ընդմիշտ
անհայտին բախտի
իրենց սրտերի կատաղի բազեն։

Նորածիլ լուսնի բարակ մանգաղը լեռան ետևից
փորձում է հնձել խավար երկնքի տատան հասկերը,
և ամեն մեկը, իր վտանգալից կյանքի սահմանում,
նստում է մի ձի, հրեղեն թևերով բոցավետ մի ձի՝
գնում հեռավոր հուշերի աշխարհ։
Ոչ ոք չի խոսում։

Հովան ֆեդային, արյուն տեսած մարդ, իր ժողովրդի
մոլեռանդ սիրո քաղցը բերանին,
զոհվելու պատրաստ ահեղ խաչակիր՝
քայլում է լռիկ, տրեխների ծայրով տրորում է մութը
թանձր գիշերվա։

Երբեմն միտքը —
ամեն մի վայրկյան սպառնացող մահի արծաթ աչքերը
դեմքին առնելով — պտույտ է գալիս վաղուց հեռացած
իր Տատրագոմի երազի վրա։

Երերող մոմի դալուկ բոցի պես
ուրվականացած և ճառագայթուն՝ հանկարծ ցցվում է
Սանայի դեմքը՝ ձորը եզերող Հովանի առջև։
Լքումի վայրկյան։ Սառը կախվում է բեղերի ծայրին,
և նա, բարկացած, ձյունին է զարնում իր ձեռքի մոսին,
թափահարում է իր ծանր բաշը։ Ցեղային պետք չէ
իր ուխտը դրժի հուշով իսկ աղոտ։ Որպեսզի մոռնա՝
քթի տակ կամաց երգ է մռմռում։ Վերքը բացվում է,
և ահա նորից, ժայռի ետևից, լուսնո սուր ծայրը
կպչում է քարին, կայծեր արձակում և նոր մի տեսիլք.—
Սանան լուսավետ ամպի մեջ փաթթված, դժբախտ ու նիհար,
իր մեծ աչքերով նայում է նրան։
Հովանի սիրտը ընկնում է վանդակ, սեղմում թևերի կաթող
արյունք,
կտուցը տնկում, փակում աչքերը։ Ի՞նչ գեղեցիկ է, ծաղկած
ծառի պես
հովի տակ թրթռուն։
Սանան, հեզ Սանան...
տաք հացի նման, բերանի մեջը սիրո և վշտի
բառեր է ծամում։ Կրծքի տակ բացված դալար արտի մոտ
մի հիմար սոխակ
գայլայլ է ասում։ Փափախք ուժով սեղմում է գլխին։ Սնառը
քսում է
թևերում սեղմած հրացանի ծայրին՝ ինչպես հովիվը
գառնուկին մատաղաշ։ Զորքած կոկորդը ուզեզի խորքում
արսում է մի հին սրտմաշ մեղեդի՝
ուր սեր է ասված, լքման տառապանք և ճակատագիր։

Բայց մեկ էլ ահա, առաջի շարքից,
Գարոնը կատղած նայում է ետև և խստիվ ձայնով,
«Ճրժեր, շան տղաք. ի՞նչ է՝ քնել եք. քամին մեզանից
առաջ է անցնում»։

Եվ խոր ձյունի մեջ
խումբը դոփում է և ցատկռտելով ճեղքում գիշերը,
անցնում օխտը սար, հասնում Շուշնամերկ,
և խուզարկելով երկնքի ճամփում դժգույն մի աստղի
ուղեկորույս լույսը՝

լուսաբացի հետ գլորվում է հովիտ,
գրկում արևի կարմիր փունջերը
և նոր ուժ առած՝ ուսերի վրա սառած քրտինքը թափահարելով,
հսկա Կուռտիկի կողն է մագլցում,
ճանկռտում ժայռեր
և թավալվելով նետվում զառ ի վար,
որպեսզի շուտով, Միրնկատարի ահեղ բարձունքից,
համարձակորեն, հալածե ներքև ժողված թշնամուն։

Զյունը տնքում է նրանց քայլերի համառ թափի տակ։

Հայոց լեռները, արևով լցված երկնքի գրքում,
կարդում են դարի ահեղ հեքիաթը
և ամեն էջի երերող կողքին՝ կպցնում են վշտի
արյունած մի աստղ։ Հետո շարժվում են,
իրենց բերանը լեցնում են հովի խուլ հառաչանքով
և մտնում են գալիս՝ շվարած խմբերով,
հալածված, դժբախտ փղերի նման։

Մի լեռան գլխին կանգնել են հայեր։
Այրված դեմքերով, ցեխի մեջ կորած, հոգնած, շնչասպառ,
բայց վառ
ցասումով հսկա և կատաղությամբ.—
սպասում են նրանք։
Պարոնը պառկած, հեռադիտակով,
կարմրած աչքերը նետել է ներքև և սիրտը կպցրել
ամեն մի քարին։ Այնտեղ, դաշտի մեջ, տաճիկ զորքերի
ուժեղ վաշտերը գյուղերի շուրջը օղակ են կապել։

Խաչերի կրծքին գնդակ է մտել, և երդիկները
պառկել են մեռած։
Խարույկների շուրջ՝ խմբված են զորքեր
և մարդիկ զինված։

Մի քանի շներ։ Անցնում է մի սպա,
ոտից քարշ տալիս պսպղուն մի սուր։ «Ո՞ւր են հայերը»։
Հսկա լռություն։ Զյունը թաղել է ձևերը մարդկանց.
ձորը կլլել է բոլոր ձայները։

Սակայն, ականջը եթե կպցնեք
սառած ու լռիկ հայոց հողերին —
Սիփանա լողմից
մինչև Սասնա մոտ,
մինչև Խարբերդի,
մինչև Տավրոսի հեռավոր ծայրը,
լեռների հսկա թոքերի մեջը, կշարժի փնթակը
ահեղ ձայների։ Պատմության պատռած
շրթերից կելնեն սուր աղաղակներ.
և հողերի տակ բազմահազարանոց գերեզմանները
մեծ դղրդոցով կիջնեն անդունդներ։
Կոտրած ձեռքերով, դողահար ծերեր դարձյալ կճչան.
և մայրեր, սպանված՝ ճեղքված արգանդը,
արյունաթաթախ դրոշակի նման, կցցեն նորից անհունի գլխին։

Խումբը սպասում է։
Մի քարի վրա, առանձին կծկված, զինվոր Մակարը,
հրավառ աչքերով, դողում է, դիտում՝ կարծես մեծ տոնում
նա պիտի պարի։ Մյուսները չոքած, ժայռերի ետև,
շոյում են մոսին ու գայլերի պես նայում են դաշտում
այրվող ֆեսերի խմբերին ցրված։
Ամեն մի փամփուշտ իր զոհը ունի։ Ամեն մի վայրկյան
մի ժամ է երկար։
«Ձեզ տեսնեմ, քաջե՛ր»,— և խմբապետը հրաման է տալիս
Լեռան կատարից համազարկերը,
թիթեղին կպչող կարկուտի նման, տեղում են ներքև,
և խոր ձորերի արձագանքները
թմբուկ են զարկում։ Լճի երեսին, որսի ժամանակ
նստած բադերի երամների պես, թշնամին շվարած
վազում է չորս կողմ՝ պատերի ետև ապաստան փնտրում։
Ոմանք փռվել են երեսի վրա և դեմքը տվել
արյունած ձյունին։ Հստակ է սակայն, թե ինչպես շփոթված
թուրք սպաները հրաման են բոռում,
վազում, աղմկում,
հետո խումբ առ խումբ, գալիս են առաջ
և համազարկին նոր համազարկով պատասխան տալիս։
Վաշտը օձի պես սողում է դանդաղ, հետո նետվում է
ժայռերի ետև, ցրվում, ետ վազում,

ու համառ շարքով,
քարերի գլխին օղակ է կապում՝ մագլցում վերև։

Ֆեդայիները, վայրի այծերի ճկուն շարժումով,
փոխում են դիրքը, կրակում, վեր ցատկում և կատաղորեն
հնձում թշնամու սեղմած շարքերը։

Միայն Մակարը,
ծերացած խոյը, կովում է մենակ անդնդի եզրին,
արյունաթաթախ. թուլցած ձեռքերով, և էլ ուժ չունի
տեղից շարժվելու։ «Մակա ր, վեր արի», «Դուք գացեք, տղաք,
դեռ փամփուշտ ունեմ»։— Եվ վերջին թափով,
ասլանի նման. ահավոր ու մեծ, նա հարվածում է
մոտեցող զորքին, իր վիրավորված բերանը ծռում,
դուրս թքում արյուն, հայհոյանք ու ոխ, կանգնում ուժասպառ
ոտքերի վրա՝
քաջասրտորեն վայր նետվում անդունդ։

Թող այլ երկերում հնչե ոսկեձայն Ռոլանի փողը։
Զեն ու զարդերով, սրերով փողփող և կորդակներով
Թող առաջանան ասպետները ժիր Կարլոս Մեծի.
և դղյակներում,
նուրբ պրինցեսները թող երգ հառաչեն,
լուսե ձայներով, հերոսի համար։
Հայոց լեռների դաժան վայրերում, միայն ձորերի
ոգին է դժգույն.
որ իր գլուխը զարնում է քարին և կաղկանձելով
թավալ է գալիս։
Արևամուտի վառված հողմերը նետվում են չորս կողմ,
արագ թպրտում՝ պեղում ձյունի մեջ խոր գերեզմաններ։
Մերուկ Մակարի փշրված մարմնից արյուն է հորդում,
և մահը նստած, մոմե ձեռքերով, մարում է կամաց
նրա աչքերի երկրային լույսը։

Հեռվից Սասունը
իր բաղուկները բախում է հուժկու
իջնող երկնքին և, ծանր ձեռքով,
պատռում ամպերի բոցավետ ճամփան։

Գիշերը
խարազանում է լեռը։ Որջերում թաքնված,
ֆեդայիները մաքրում են մոսին և գրկախառնվում
աստղերի հետ։
Այնտեղ, դաշտերում, թշնամիները,
իրենց հաղթության ամոթը սեղմած գունատ երեսներին,
վերադառնում են քանդված գյուղերը և քաշկռտելով
Մակար հերոսի խոշտանգված դիակը,
տանում նետում են բաց հրապարակը։

Նրանք չեն տեսնում,
թե ինչպես Վանա ծովում ընկղմած
սրբերը բոլոր
ալիքների հետ նետվում են ափը
և ոռնում քամու սանձերը բռնած՝ սուրում են արագ
Հայոց աշխարհում
ու աղոթքների մի դարձպար դառնում դժբախտ հերոսի
շիրիմի առջև։

Լեռների հսկա մագաղաթներում գծված ու ներկված
նահապետները, ոգիները քաջ, թագավորները,
վանքերից ելած դալկահար ու խեղճ
հայ Մարիամները՝
ծունկի են գալիս։

Հովիտների մեջ, երկաթե քայլով՝
կայծկլտող ու վառ սաղավարտներով՝
ահա անցնում են լեգենդաները,
ու հայ պատմության
թափորը հսկա, գուրս եկած մթին
դարերի խորքից,
անցնում է լռիկ ու նորից մտնում
մեծ խորհուրդների աշխարհը պայծառ։

Ցուրտ մի գիշեր է։ Հեռագրաթելերի ծռված սյուները
խուլ հառաչում են։ Արջը իր թաթը ուժով խփում է
հրավառ աստղերի շարժվող փեթակին
և ցավից ոռնում։

Զորը կրկնում է
այդ ձայնը ահեղ, և երեք անգամ քամին զարնվում է
երկնքի դռան։
Մակար ծերունին, տրեխները մաքրում, մտնում է երկինք։

4

ՍԱՆԱՆ

Խնձորենու ծանր ճյուղը զարնվում է խրճիթի դռանը։ Ամառվա ձեռքերը տաց են։ Երբեմն հովը հարբում է և՝ կարմիր ատամները բաց արած, վազում։
Միրգը աղմուկով վայր է ընկնում։

Լքված իր տան առջև կանգնած՝ տխուր, տրտում՝
այրվող պղնձի ժայռերին է նայում Սանան,
ճեղքված լեռան միջից սահող լերկ ճամփին է նայում Սանան,
դալար դաշտին, կապույտ ու խոր երկնքին է նայում Սանան,—
ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս եղավ,—
չի հասկանում ոչինչ։
Բնից ընկած թշվառ ճնճղուկ՝ երեխա է այրի։
Թևերի վրա վիշտ է ծալվել,
աչքերի մեջ վիհ է ընկել,
մինչ խրճիթի շեմի առջև,
թպրտալով,
սողում է մեծ մի հառաչանք։

Տատրագոմի ճաղատ գլխից բոց է թափվում։
Ճամփի ծայրին,
ծանր փոշու ամպերի մեջ, ճոռան մի սայլ վեր է քաշում
աղմկալից մի ձանձրույթի դիզված բեռը։
Լեռը մերկ է։
Մեծ շները պառկել են լուռ, և հավերը կտցում են
ստվերը։

Իսկ Սանայի սրտում տխուր փորել են խոր
մի գերեզման և թևերի շուրջն են անցրել մի ժանգոտած
ծանր շղթա։

Ի՞նչ է Սանան,— ֆիդայու կին, ընդմիշտ մենկնած
ողջ մի մարդու դժբախտ այրի, գյուղի ճնշիչ նայվածքի տակ
քայլող մի շուք՝ մենակություն և հիշատակ։

Տարիների թշվառ գամփռը, կոտրած ոտքով,
ցատկոտում է իր մթագին երազների հոտի առջև,
նայում սարի խորշերի մեջ անձայն քայլող ողբերգության.
ականջ դնում ձորերի մոտ ոռնող ձայնին և սպասում։

Շալը գլխին, աչքը տնկած ճամփաների օձաոլոր և խաբուսիկ
սահող շուքին,
շուրթերի մեջ ճիչ մի դժգույն ուժով սեղմած՝ Սանան սիրող
ման է ածում խոր լռության խոպան դաշտում,
դնում ձեռքը գոց ճակատին, նայում հեռուները.
— Ամա՜ն, անցո՛ղդ, լեռան գլխից երբ կանցնեիր՝
հայդուկների խումբ չտեսա՞ր։ Մարդիկ ասին, քրդի սարի
գյուղերի մոտ կռիվ եղավ և իմ էրիկ զինվոր Հովան
հոն էր անշուշտ, արդյո՞ք զարկին, արդյո՞ք մեռավ...

Եթե ողջ է,
գոնե խաբրիկ չուզե՞ց ղրկել Տատրագոմի հարս Սանային։
— Քույրի՛կ, վալլա՜հ, բան չիմացա։ Հովիվները բան չգիտեն։
Ղղորդ է որ կռիվ եղավ՝ համա, ովքե՞ր ընկան, մեռան
և ո՞ւր գացին մեր կտրիճներ՝ ոչ ոք գիտի։

Օրը օրվա փեշը բռնեց։
Գյուղի մարդիկ, պաղած ու հեզ աչքերով,
իրենց ծռած ուսերի վրա քուրջի կտոր շարժելով,
ամենօրյա աշխատանքի բեռը տարան և կապարե հոգսը դաժան։
Սանան տրտում,
տաշտի առջև լվացք արավ. մացառ ժողվեց անտառի մեջ
և դոնեղուռ մուրաց հացը—
ու կոտ մի ոսպ, փեղ մի ձավար։

. Օրը օրվա փեշը բռնեց։
Զմռան անվերջ գիշերներին, երբ մուրացիկ, խեղճ աստղերը
սրսրփալով մտնում էին փլած ամպի խրճիթից ներս,
և սարերը իջնում էին գյուղի փողոց և ման գալիս
աղմկելով,—
Սանան կծկված օջախի մոտ, իր դալկահար, լուռ հրեշտակի
ձեռքն էր բռնում բոցակլզված
և դողալով մտիկ անում՝
երդիկներից գաղտնի իջնող հյուրերին։

Այնտեղ ներսը, իր մսերի մեջը նստած աշխարհում՝
վառ աչքերով մեկն էր քայլում, բախում դուռը լուսե մի տան,
ցցում մուչը
և վեր ելնում
երակների սանդղքներով։
Բակում, չորցած թփերի մեջ, քամիները վառում էին մի խարույկ
ու սողկտում։ Լեռը դանդաղ
երերում էր, և մրրիկը ուժեղ բռունցքով
հարվածում էր ժամի զանգը՝
մղկտալով գլորվում մի ձոր։
Հետո, լսված հեքիաթներից, դուրս էր ցցվում հանկարծ մի կին՝
մկան աչքեր, սրածայր ծնոտ, ձեռքին ավել
և առջևից մի բոցավետ երկայն գոգնոց։
Մտնում էր ներս,
փափուկ քայլերով, հոհոալով պտույտ գալիս
և դժոխքի թոնիրներից ժողված կրակով
քաշում մի գիծ,
ցանում խոսքեր բլմբոցիկ
և կուզ եկած՝
պարում մի պար գեհենական։

Սարսափահար, փաթաթվում էր իր հրեշտակին
Սանան
և երազի բարձի վրա առատ նետում խոր գիշերը
վարսերի և լայն բացված իր աչքերի
լույսը տրտում։

Հաճախ նաև,
քնած ժամին, երբ իր մարմնի սարսռագին
լուսանցքների առջև կանգնած թուխաչ մի ստվեր
սրինգ էր ածում, և արծաթե զանգակները
հնչում էին մեղմատատան,
ու իր ուռած կրծքերի մեջ
ոսկեկատար հասկ էր ծաղկում,—
մեկ էլ քամին, հուժկու զարկով, իր խրճիթի
ծռած դուռն էր թափահարում, ճռնչալով վար էր նետում
կողպեքը թույլ
և բարկացած մտնում էր ներս։
Սանան վախցած,
ցատկում էր վեր, կանչում շուքը սրբերի.
և դողահար ձեռքերով
հրում, փախցնում ձյունաթաթախ լեռան հյուրին։
Ապա չոքած, նա քսում էր իր ճակատը դալկահար
գոց երկնքի պատերին
և ժամերով աղոթում։
Ջինվոր Հովան էլ գյուղ չեկավ։ Լուր չխաբրեց, փող չղրկեց։
— Ամա՜ն, ախպե՛ր, լեռնեն անդին,
մարդս տեսա՞ք։ Տատրագոմի հարս Սանային մի բան չասի՞ն։
— Դե քեզ ասինք՝ մարդ չտեսանք։ Տեղդ նստիր, սպասիր
հանգիստ։

Տարին տարու փեշը բռնեց։
Հույսը կտրած, էլ հարց չտվավ, էլ աչքերից հովիվների
գաղտնիք քաղել չաշխատեց.
Սանան լռեց։

Անցան գնացին քանի ամառ, քանի ձմեռ։

Հիմա,
թզուկ թփերի վրա, նորից ահա, պարս են տալիս
գյուղի նիհար ճնճղուկները։
Կովը գոմի բացված ճեղքից,
իր թրթռուն ռունգներով, ներս է քաշում բույրը գարնան։
Հովը վառ է։
Մինչ տանիքի վրա կանգնած՝ արյունթաթախ լույսերի

ծովն է սուզում իր գագաթը և կանչ կանչում աքլորը։
Միծաղում է Տատրագոմը։

Կուժը ուսին,
թավշե սալոր աչքերով,
հոնքերը սև ոլոր կամուրջ, կուրծքը ուռած առագաստ՝
Սանան աղվոր՝ լիճը ընկած արևի պես
պսպղալով և մեղմաճեմ,
չինար քոյի սուլերն է նետում
տղամարդկանց աչքերին և մրգերով ծանրաբեռնված ծառի նման
նազ երազով երերում։
Իր զիստերի թրթռացող հմայքի համար, իր հոլանի
բազուկների և դուրս ցցված ստինքների
անրջային պերճության հետ
հաղորդվելու համար ընդմիշտ՝
շատեր պիտի ցանկանային զոհել կյանքը իրենց ջահել։
Բայց ֆեղայու կնոջ հանդեպ ո՞վ կարող էր
նայվածքով իսկ մեղանչել։ Ո՞վ կարող էր հետը խոսել
կամ աչքերի միջից քաղել բոց մի դալուկ...
Ֆեղայու կին՝
գյուղի պատիվ և հիշատակ շատ սրբազին։

Միակ ծերուկ քահանան, հաճախ կանգնած շեմի առջև,
խորհրդավոր ձևերով, լեռների մութ ուղբերդության
լուրն էր բերում և պատոտած փափուչները
տրտմորեն քաշքշելով՝
հեռանում։

Ոչ մի ուրիշ այր չէր գալիս Սանայի մոտ։ Չլինի թե գեշ
մի բան մտածեն...

Իսկ գարունը աճում է։ Հողմը զարնում է կալը,
և վայում է աղավնին վայրենի։
Ցեխը, ձյունը,
պիծակը դեղին, բայդիների ջերմը արծաթ
և հացը սև՝ հողի ոսկե դրթունջներից պոկած խմորով
թխված —

Սանայի երակներում՝ հուր, ու գինով սողունների երամներն են նրանք դիզում։

Ամեն գարուն՝ մի բուռ ծաղկած բոց է տալիս.
ամեն ամառ՝ խորքում մարմնի տառապագին,
պտուղների եռուն ու խոլ հյութն է շարժում.
ամեն աշուն՝ նրա սլտի մեջ պայթող նռան ճիչն է նետում.
ամեն ձմեռ՝ ոսկեհեքիաթ երազների թաքուն ու լուռ
բույնն է բացում։
Զեփյուռի տակ սրսփացող վարդենու պես,
այնպես, ինչպես կարմիր գինով մինչև ծայրը լեցված բաժակ,
լուսաճաճանչ քչքչանքով եռող հրաշուխ.
ինչպես գարնան
բուրումնավետ պարտեզի մեջ թաղված մի հով.—
Սանան, հմայված, անտառի մեջ
մտան է գալիս
հաղիվ ոտքը գետին տալով՝
սահելով։

Կանգ է առնում ու թրթռուն ռունգերով շունչ է քաշում։

Ինչքա՜ն քաղցր է
ամառային տոսախների բույրը ուժեղ.
Արևի բոցկլտացող ձեռքերից երամ-երամ հուր է թափվում,
և օդի մեջ շիկագանգուր՝ արծաթաձայն
բզեզներ են աղմկում։
Ի՜նչ լավ օր է։ Կարծես կրծքին
մի նոնենու ճյուղ է ընկել։
Ոտքերի տակ ծով է տատան, ամեն մի քայլ
վայր է նետում մի խենթ կոհակ, և թանկագին ակունքներով
ծածկված օձեր՝ իր իրանի շուրջն են պլլվում և թափ տալիս
բազուկների ծառը հասուն։

Ինչքա՜ն քաղցր է
ամառային տոսախների բույրը ուժեղ։ Կարծես մեկը
իր ոտքերին, կրակով հյուսված,
գուլպաներ է հագցնել և ուսերին նետել մի շալ
բոցակիզված։

Կարծես մեկը իր կրծքերի պարտեզից
վարդ է քաղում և շրթերի աղբյուրից սեր է առնում։
Սիրե՜լ, սիրե՜լ...
Ծառերի տակ, դալար խոտի գիրկը ընկած,
թավալվում է և կես նվաղած, այտը քսում թավշյա գետնին
և ձեռքերի տենդը նետում դալար եկող խոտերին։
Ապա հանկարծ, ինքն իրենից վախենալով, ցատկում է վեր,
վազում գյուղի եկեղեցին
և քարերի վրա փռված, կարմիր ու վառ շրթերով,
փսփսում է Աստվածամոր ականջին
մի աղոթք.—

Աստվածամե՜ր, լուսիդ մատաղ, սրտիդ ղուրբան։
Դու, որ մայրն ես վիրավորված զավակների,
գրկիդ մեջը արյունթաթախ թավալ եկող վշտերի.
ինչպե՞ս ասեմ, որ հասկանաս, ներես, ուժ տաս...
Դու, որ մայր ես տխուր, լռիկ և վշտավոր հարսների.
դու, որ մայր ես լքված, հորթուկ աղջկանց.—
աչքիդ ղուրբան, գթա՜, գթա՜ արգանդիս վառ.
գթա՜ սրտիս, գթա՜ քաղցր երակներիս...

Կիսախավար եկեղեցու պատի վրայից,
շալի մեջը փաթաթված, պառավ մի կին,
սուր նայվածքով, Սանայի վառ աչքերից
հուր է քաշում,
և շուքերը ման են գալիս անհանգիստ։
Սանան չոքած՝
համբուրում է քարը ժամի
և անորոշ փոշու մի համ բերանին,
երերալով դուրս է գնում։
Գյուղի մարդիկ՝ ֆեդայու կնոջ
նայում են խոր, գաղտնիք պեղող նայվածքներով,
աչք են անում մեկը մյուսին,
հազում, թքում
և չիբուխից երկայն շունչով
ծուխ քաշում։

Երբ աքլորի առավոտյան կանչը կարմիր
լեռան գլխից արագ անցնող բոցակիզված նավերին

ցույց էր տալիս Տատրագոմի փարոսը հիր,
և ծառերի ճյուղերից՝ աղմկալից երգ էր հոսում,—
Սանան վաղուց ճամփա ընկած, հուշիկ քայլով,
մագլցում էր կողը լեռան, իջնում էր ձոր,
և անտառում փայտ էր դիզում։

Թփերի մեջ արշալույսը կրակ է մաղել արնագաթոր։
Թռչունների այրվող, մետաղ ձայներից
և լայն փռված ամպերից՝
մի ալ-վալա, կարմիր լալա,
քող է ընկել սարերի վրա։
Սանան մենակ, կաղնիների պսպղացող կանաչի տակ,
լցված սրտից բաժակ-բաժակ
հույզ է բաժնում
և երգ երգում, մելամաղձոտ և թավ ձայնով։

— Ո՜վ բախտ, ո՜վ բախտ, մաշեցի աչքերս իմ
ճամփաները նայելով.
վիզս ծռվեց ուրիշների դռան մոտ.
սիրտս մնաց ինչպես կաքավ վիրավոր,
ինչպես մորթված մի խեղճ ճնճղուկ,
ինչպես այրի մնացած լորիկ։

Քանդվի գահը սուլթանի —
յարս գցեց սար ու ձոր.
լույսս առավ դուշմանը,
հոգիս տարավ ասլանը։
Քանդվի գահը սուլթանի...

Ու Սանայի ձայնը տխուր հեծկլտում էր անտառի մեջ
ու թևարկում լալաթրթիռ, ինչպես զարնված,
իր երամին հասնել փորձող, կուրծքը պատռած, վայրի մի թռչ։
Տերևների շշնջոցը վայր է թափվում
և հովի հետ՝
նրա գույնզգույն շրջազգեստի ծալքերի մեջ
և եռացող
փեթակի մեջ կրծքերի՝
կամաց խաղում։

Սանան լռում, կանգ էր առնում հմայված,—
դա ի՞նչ բան է.
կանաչ ձայնը անտառի
և ոտքի տակ՝ խոտը բոց է,
քարը՝ կրակ։

Ո՞վ կարող է հասկանալ անտառների մեջը ապրող
գաղտագողի ոգիների խորհուրդները։ Ծառերի
ձայնը ծպտյալ ո՞ր սրտի մեջ ջահ չի վառել,
ո՞ր երկնքից ամպ չի քաղել, ո՞ր գանգի տակ
երազների լույս չի թաղել։

Սանան լռում, կանգ է առնում հմայված։
Հետո կծկվում —
գույնը նետած և գողալով —
կարծես ուրիշ մի աշխարհի արձագանքի
կոհակներ են փշրվում։

— Ո՞վ լե, լե, լե, հայու աղջիկ.
ո՞վ է քաշել պատը սրտի,
ո՞վ է սիրո սահման դրել։

Ձիս արագ է հովի նման,
ձեռքս վարժ է կռիվների —
քուրդ եմ թիկնեղ և ականջիս
բարակ ոսկե մի օղ ունեմ։

Ո՞վ լե, լե, լե, հայու աղջիկ,
դեմքիդ վրա լույս է ընկել։
Ես քեզ համար առնեմ գոտի
հարուստ ու մեծ ակունքներով.
Շիրազի լայն խալիներով
շինեմ մի թախտ
և մեր շեյխի կնոջ նման —
Ո՞վ լե, լե, լե, հայու աղջիկ,
քեզ տամ պատիվ, անուշ շերբեթ

ու վառ սրտիս նուրը քամեմ
Ստամբոլի բաժակի մեջ,
Քամեմ ու տամ խմես, հուզվես,
ո՜վ լե, լե, լե, հայու աղջիկ։

Սանան վախցած ուզում է շուտ գնալ, փախչել։
Այդ ձայնը թավ՝

տերևների միջից սահող
դողդողացող լույսի պես՝
երազների հմայք է սփռում աչքերում։
Կարծես հնչուն անտառի
ամեն կողմից ոգիներ են դուրս գալիս
ու ոսկեզօծ շղթաներով
կապում սիրտը ու կաշկանդում քայլը տատան։
Այտերի վրա վարդ է կախվում,
և կրծքի տակ, ալիք-ալիք, հուզումներ են փոթորկում։

Երբ ծառերին կպչելով, խրխնջացող ձիու վրա՝
թամբած նախշուն կարպետներով՝ դուրս է գալիս
քրդի տղան և իր թավշյա, սալորագույն աչքերով
նայում է նրան, Սանան նվաղած,
վայր է ընկնում։

Անտառի մեջ ոգիների
աղմկալից և հոհոուն մրրիկներ են բարձրանում։
Ամեն կողմից
բոց է ելնում։
Լեռների նեղ կածաններով ձին թռչում է։
Քուրդը ուժեղ բազուկների մեջ է սեղմել
Սանային։

Մտրակում է ձին.
լեռը փախչում է։
Իսկ ետևից, թևը տնկած, վազում է
հրեշտակը վիրավորված։

5

ՄԱՀԸ

Կապարը զարնվել է տատրակին։ Վերքը մտել է երգի մսերի մեջ, և երկինքը վայր է գլորվել՝ թևը ծռած։

Որսորդը վազում է, թռչունի թպրտացող մարմինը ձեռքերի մեջ է առնում և արագ շարժումով վիզը քաշում։

Գինեմոլի տղու հիվանդ ձեռքերի պես,
սարսռում է օդը աշնան.
երերալով քայլում, ցատկում —
պղնձե գլուխը զարնելով
լեռան կողին
և մատների զրնգացող բոժոժները՝
դաշտերին։
Կովերի թեժ շրթունքներից
կրակ է կաթում։
Սեպտեմբերը ձորը լքել,
դուրս է եկել —
հագել բրոնզե չարուխներ,
երկար շուխա
և գուլպաներ բոցակիզված՝
ման է գալիս բարկացած
և մտրակով հյուսված դեղին բոցերով՝
մտրակում է պարտեզները
հրավառ։
Լեռը լեռան հոնքերի տակ լույս է փորում։

Ճամփան.
տմուզն երկինքների քողը առած,
ժայռի կարծր կողից ի վար՝
սահում է,
և դաշտի շուրջ ոլոր գալով
թափ է տալիս կրծքի փոշին
և մագլցում
դեղին մի բլուր։
Բլրի վրա՝ ճերմակ մի տուն և բարձրաբերձ

մի կաղամախ։ Զորս ոտք բաղչա և քարե մեծ
մի նստարան։
Մի վարդենու
դժգույն թփի առջև նստած,
թախծոտ դեմքը հառած հեռուն,
Սանան՝ գլխին կարմիր լաչակ
և ձեռքերին հինցած ոսկու գույնի հինա.—
Նայում է լուռ
և մղկտող իր աչքերում
սեղմում
տխրալալուկ հովը աշնան։
Նայում է լուռ, բլրին, լեռան,
հորիզոնի ծայրին ընկած Տատրագոմին
և իր սրտի վիհում պառկած անասելի
վշտի խաչին՝
վերքի նման արյունած։

— Ցավրում, աշո՛ւն, ասիր, ախպար,
կարասներիդ գինով հրավառ
ինչպե՞ս եղավ, որ վառեցիր, գինովցուցիր
սիրտս տկար։

— Ցավրում, քույրի՛կ, ես խոմ չէի, այլ իմ ախպար,
իմ մեծ ախպար Պարոն ամառ —
տվեց սրտիդ հրակեզ մի ջահ
և շուրթերիդ բոցե բաժակ։

— Ցավրում, աշո՛ւն, ասիր, ախպար,
ինչո՞ւ բախիր զանգին հրաշեկ և հոգեթով՝
ընկար գիրկս թավալվելով։ Աման, ինչո՞ւ
մսերիս մեջ թրթռացիր և թևերիդ
խայտող հուրը զարկիր կրծքիս՝
արյունեցիր։

— Քույրի՛կ, աման, ես խոմ չէի, այլ իմ ախպար,
իմ մեծ ախպար Պարոն ամառ, արևավառ։
Սպասիր վաղեմ, լեռան ետև, ճաճանչների կարավանի
առջև ընկած իմ մեծ ախպոր հասնեմ, հաթցնեմ...

Եվ աշունը բաց է անում թևերը հիր և շնչասպառ՝
աղմկելով, մղկտալով՝ սուրում արագ
և ոսկեմուգ իր ձեռքերը քսում սարին, պարտեզներին
և գյուղերի տանիքներին մերկ ու տափակ։

Տատրագոմում, այգեկութի եղանակին, իբրև սուգի
և ցասումի մեծ մի նշան՝ երգ չեն երգում, պար չեն պարում։
Ցվիքների եզերքին կծկտում են ճնճղուկներ։
Փողոցներում՝ փոշի և թրիք, ոտաբոբիկ երեխաներ,
քամու միտինգ։
Սանտրի լքված, փակված խրճիթի մոտ գամփռ է նստել
և երկարած ոտքերի վրա սեղմել գլուխը մտահոգ։
Հարևան շինականի պառավ կինը -- Բուիկ Դեղեն —
լվացք է անում տաշտի մեջ և փրփրացող օճառի հետ
շարժվում դես-դեն, ջղայնացած թևը ծալում՝ փրփրում։
Շուրջը՝
կանանց պառլամենտ և հավերի կչկչոց։
Գոգնոցների տակ խաչկապած ոսկրոտ ձեռքեր
և շուրթերի շուրջը փորված ատելության և նախանձի
երկայն գծեր։
Կարծր խոսքեր՝
կարասի տակ քացախ դարձած գինու նման՝ կծու, լեղի։
— Հո՛ղը գլխին։ Լույս չտեսնի՝ պաղի, մեռնի։ Աղիքները չո-
րանան։
Արգանդի մեջ օձ բուսնի։
— Վա՜յ մեզ, վա՜յ մեզ... Հայու կնիկ՝ քրդի լանի հետ փախչի...
— Իի՜, իի՜... Վա՜յ, վա՜յ...
— Ա՜յ անհավատ, ա՜յ անամոթ, ա՜յ աննամուս...
Եվ զայրացած, խաչ են անում, սուրբ Սարգսի փեշը բռնում,
Բեղը քաշում և վհուկի ձևերով,
քարը ճեղքված ջաղացի պես, աղմկում։
Մի քիչ հեռվում, մեյդանի մեջ, տղամարդիկ —
ծեր ու ջահել, կատաղորեն,
իրենց ծալված բռունցքների կոճղը տալով լեռներին,
չիբուխների ճպոտներով օդն են ջարնում
և վառվռուն աչքերով ժայռը փորում։

— Թող մեծավորներ, թող քահանան, վարդապետը, ով որ ուզի՝
Տատրագոմի անբիծ դեմքեն մուրը հանե...

— Բա մեր պատիվ կրնա՞ տանիլ, բա մեր սարի կտրիճները
կրնա՞ն տանիլ... բա Հովանը տղամարդու աբուռ չունի՞...

— Է՛ն, է՛ն բոզը... է՛ն, է՛ն դևե ելած ձագը... էն, էն, էն, էն....

Եվ ձորեձոր, և սարեսար, և գյուղից գյուղ՝
սրտերի մեջ դիակ է ցկնում մի կանաչ իժ—
սողում, սուլում, ջղայնացած պոչը զարնում
ու թունավոր, երկայն լեզուն քսում թափած արյունին։

Լեռներից վար, լեռներից վեր, դաշտի ծայրում,
խորխորատի ստվերից կախված, բլրի ծոցին լռիկ թաղված,
գյուղերում՝
ամառային միջօրեի ճպուռների ճռռոցի պես՝
սմքած խալիսը սարերի
մրթմրթում է, խոպում, դավում,
պատռած տրեխը զարնում գետնին և թուքի հետ
լեղի ու սև բառեր թքում, և սրտերի փոթորկահույզ
պղտոր լճից
ափին հանձնում փտած կոճղը և քարը լերկ
ատելության։

— Է՛ն, է՛ն բոզը... է՛ն, է՛ն, դևե ելած ձագը...

Այդ սեպ ու սև բարձունքների մարդիկ համառ,
որոնք հաճախ բիրտ թշնամու առջև կծկված,
իրենց վախկոտ և կեղծավոր ժպիտներով
և ոչխարի հեզ աչքերով
նայում են հլու՝
հանկարծ մի-մի գայլ են դարձել.
— բա մեր պատիվը կրնա՞ տանիլ.—
մի-մի առյուծ.
— բա մեր սարի կտրիճները կրնա՞ն տանիլ.—
և արյունոտ նայվածքներով՝ հանուն խաչի, հանուն ազգի,
ուզում են զոհ, պատիժ և մահ։
— Տո, սա՞ պես բան... Տափը ճղվի մեջը մտնի...
— Տատրագոմի հարս Սանային պետք է մորթել...

— Պետք է խաչել ժայռի գլխին...
— Պետք է նետել խորխորատը...

Ու ձայների մոլտացող, խժժուն ու խուլ արձագանքը,
թափառական ղողանջի պես ման է գալիս սողոսկելով,
ցատկում, կաղում,
լեռներին է խփում գանգը,
երկայն ու սուր մագիլներով ճանկռում հողը,
ագռավների երամ կազմում և դողալով՝
գնում թառում
հայդուկների խորշի առջև։
— Տնաշեննե՛ր, ի՞նչ եք լռել... ազգի սրտում մութ է թառել...
Տատրագոմի ծերուկ գլխին սուգ է ընկել... Մեր քաջ զինվոր
Հովանու կին փախել գացել, քրդի տղու հետն է նստել։
— Բա... Թա... Սանա՞ն... Քրդի տղա՞...
Կարծես մի ռումբ
Պայթեց հանկարծ։
«Սանա՞ն... Սանա՞ն»...
Հովանը լուռ խածեց ձեռքը,
հետո նայեց ինչպես կատղած ցուլը մուժին
և արյունած աչքերով
քամված դեմքը հառեց լույսին։
Սանան, Սանան... Մի կաղկանձող, վնճող մի ձայն
քերեց սիրտը՝ դողաց թոշնած տերևի պես,
ու շուրթերը ծերացան,
և բերանի ճիչը սարսռուն՝
խզվեց, կակազ։

Սանան... Սանան... Խմբապետը կախեց գլուխը,
սեղմեց բռունցքը և հեռավոր մի նայվածքով չափեց սարը։
Զինվորների շարքերի մեջ մրրկահար դիզվեցին
մեծ դայրույթի
աղմկալից ալիքները։
Հրացանների կոթերի տակ
թնդաց հողը։

«Բա... Թա... Սանա՞ն... Քրդի տղա՞»... Եվ հաղթանդամ
կրծքների վրա,
հովից ծեծվող կաղնու նման,

մի ահավոր ծիծաղ շարժվեց,
և բոցկլտող վառվեց մի կրակ։

Մութ էր։
Իսկ Սանան նստել է խրճիթում
Շիրազի կարպետով զարդարված,
ձեռքերին դրել է հինա,—
ճակատին իմպերիալ ոսկի
և վզին կախել է մարջան։

Ճակատին իմպերիալ ոսկի,—
ծալապատիկ նստել է հայուհին՝
զազրելի աչքերով քրդի
առջևը նստել է Սանան
և լսում է երգը հրաձայն։

Նա դրել է ձեռքը այտին,
զազրելի աչքերը փակել —
երերում է իրանը կամաց,
տառապում դեմքը սփրթնած,
հառաչում է ձայնը քրդի։

— Այս գիշեր լուսինը արծաթ
քարայծի ոտքերից բարակ
բոժոծներ է կախել զնգուն,
և լեռան կատարին լուսե
նստել է մի ստվեր ոսկեթաղ։

Ես երբեք իմ կյանքում չեմ տեսել
այդպիսի մի գիշեր զգլխիչ,—
իմ հոգին, լեցուն բաժակով,
չէ ըմպել երբեք իմ կյանքում
այդպիսի մի հրավառ երազ։

Ո՜վ, լե, լե, անուշ սիրեկան,
լինեի լուսնո ճառագայթ
և կրծքիդ պարտեզում դողդող
թաղվեի մահով հավիտյան,—
ո՜վ, լե, լե, անուշ սիրեկան։

Ճակատին իմպերիալ ոսկի.—
նստել է ծալապատիկ Սանան.
ինչպես մի դալուկ թագուհի։
Իր սրտում բացվել է մի վիհ,
մի զգացում անորոշ և սև։

Նայում է գազել աչքերով
սիրածի երազկուն երեսին
ու սեղմում մարջանը վզի,
կոտրտում մատները նրբին,
հառաչում հառաչանք մի խոր։

— Սարերի կատարին այս գիշեր
ձայներ են սողում պղնձե.
երևի քարայրում մի խավար
ճգնավոր է մեռել մենակյաց,
և լուսինը տնքում է կամաց։

Չե՞ս լսում, ամպեր են անցնում
և տանում մարմինը սրբի.
լուսաթոր նրա ձեռքը կախված
բախվում է լույսին անհունի
և փշրում ապակին աստղի։

— Ինչե՞ր ես ասում, ո՞վ, լե, լե,
դողում է մեծ ոսկին ճակատիդ,
կախվել են հոնքերդ ներկված,
քամվել են շուրթերդ վարդե,
լեցվել են աչքերդ հրով։

Առ մորթված գառնուկը սրտիս,—
բառաչող գառնուկը մատաղ
և ասիր ինձ սերդ հրաշուրթ,
ամոքիր հոգիս իմ ծարավ.—
առ մորթված գառնուկը սրտիս։

Իսկ Սանան լռում է, լսում,
նայում է տենդոտ աչքերով

լեռների կածանին սողուն.—
իր սրտում բացվել է մի վիհ,
մի զգացում անորոշ և սև։

— Սիրական, դուրս նայիր, մի տես,
չլինի՞ թե քո ձին մատղաշ
սմբակով վարդերին զարնե
և դեղին արյունով աշնան
պարտեզի ծառուղին ներկե։

— Ինչե՞ր ես ասում, ով լե, լե,
ես կապել եմ գոմում իմ ձին.—
այդ լուսնո վարսերն են ոսկե,
որ ընկած նոնենու գլխին
խաղում են զվարթ քամու հետ։

— Չգիտեմ, չգիտեմ ինչո՞ւ,—
դողալով կրկնում է Սանան,—
այս գիշեր լսում եմ ձայներ,
գաղտնագող մոտեցող ձայներ՝
լեռներից, պարտեզից, դաշտից։

— Մի վախիր, անուշ սիրական,
ես ունեմ զարդարուն հրացան,
Բեյրութի պողպատե դանակ
և ունեմ կռացած մի սուր՝
Ստամբոլի փաշայից նվիրված։

Ես ոչինչ չեմ տեսնում դրսում։
Թող կանչե աղավնին վայրի,
շշնջա աշունը տխուր՝
Թող վայելե հավերը լալկան —
մի՛ վախիր, տուր սերդ բոցե։

Բայց Սանան լսում է հստակ՝
պարտեզում քայլում են կամաց
և խոսում են մարդիկ թաքնված։
Լսում է հստակ ու որոշ՝
պարտեզում քայլում են կամաց։

Սարսափով նայում է քրդին
և մարված ձայնով փսփսում.
— Լսում եմ ձայներ պարտեզում,
եկել են մարդիկ վրիժառու,
թաքնվել են, խոսում են ծածուկ։

— Եկե՞լ են մարդիկ վրիժառու...
Թող տեսնեմ ովքե՞ր են փորձում
իմ տունս, պատիվս պղծել։
Տուր պատից իմ սուրը կռացած՝
թող տեսնեմ ովքե՞ր են եկել։

Բայց հազիվ դուրս եկավ դռնից՝
շարժվեցին ստվերները արագ,
փայլեցին սրերը մութում,
և քրդի կոկորդից մի ճիչ՝
խռլտաց և ընկավ գետին։

Կանգնեցին ահեղ նայվածքով
լեռների խստադեմ մարդիկ,
բռնեցին ձեռքից Սանայի՝
դուրս տարան խրճիթից քրդի
և տարան ոլորուն ճամփով։

Ու քայլեց կես մարած Սանան՝
ճակատին իմպերիալ ոսկի
և վզին արյունած մարջան։

Հագել էր զարդարուն գուլպաներ,
և ընկել էր գլխին մի շող։
Երերող լեռների կածանով
զարնում էր ոտքերը քարերին,
քսվում մացառին խայտող
ու քայլում՝
թևահատ տատրակի քայլերով։

Ոսկեմուգ և երկայն մատերից,—
Սանայի ձեռքերից պսպղող,—

Թառամած մի լույս էր վար թափվում,
մղկտում էր ճառագայթը լուսնո.
այտերից արցունք էր վազում։

Ետևից գալիս են մարդիկ,
զայրացած և խոժոռ աչքերով
նայում են ետևից մարդիկ։
Մինչ ժայռը ղրկել է մի հով —
խփում է կրծքին Սանայի,
քաշում է վարսերը թափված,
ծեծում է նրա դեմքը գունատ։

Ետևից գալիս են մարդիկ
զայրացած և խոժոռ աչքերով.
իսկ վերը, երկնքի կամարից
լուսինը՝ պղնձե սկավառակ,
շարժում է շուրթերը արծաթ,
նայում է հարսին հուսահատ։

Նայում են աստղերը հրակեզ,
խածնում են նրա սիրտը վշտոտ,
լալիս է երկինքը ամբողջ,
լալիս են սարերը դժբախտ։

— Ախպե՛ր ջան, ինձ ո՞ւր եք տանում,
զուրբան ձեզ, ինձ ո՞ւր եք տանում,—
հեծում է, պաղատում Սանան,
զարնում է ձեռքերը կրծքին,
քաշում է վարսերը իր սև։

— Քայլիր շուտ ու լռե, պոռնի՛կ,—
բռռում են ետևից մարդիկ
և նայում խոժոռ աչքերով,
երկաթե ուսերով մարդիկ։
— Ա՜հ, ո՞ւր է հրեշտակը պաշտպան,—
հեծում է, կանչում է Սանան,—
ա՜հ, ո՞ւր է հրեշտակը լուսե։

— Այստեղ եմ, ասում է մի ձայն,
ցավում է աջ թևս կոտրած,
կաղում է ոտքս արյունած,
վաղուց է վազում եմ քեզ հետ՝
կաղում է ոտքս արյունած։

Բռնում է ձեռքից Սանայի,
կաղում է, հևում ու տնքում՝
հրեշտակը խոնարհ երկնքի,
հրեշտակը դժբախտ սրտերի։

Իսկ ճամփում հեռու երկնքի
ճռռում են սայլերը՝ լեցված
պսպղուն աստղերով լուսե
և ճերմակ ձայներով լուսե։

— Ինձ ո՞ւր են տանում, հրեշտա՛կ,
ա՛հ, ասիր, ինձ ո՞ւր են տանում,—
հեծում է, լալիս է Սանան,
հառում է աչքերը իր լայն,
նայում ճամփին երկնքի։

Հրեշտակը քայլում է անտես,
ասում է ձայնով իր ծածուկ.
— Քույրի՛կ իմ, լռենք և սպասենք.
տես, ճամփում հեռու երկնքի
ճռռում են սայլերը՝ լեցված
պսպղուն աստղերով լուսե։

Եվ աշնան սրսփող գիշերը
վազում է սարի կատարին,
գգվում է կրծքին Սանայի,
քաշում է վարսերը առատ,
ծեծում է նրա դեմքը գունատ,
դափում է տենդոտ մատներով
ճակատի իմպերիալ ոսկին,
արյունած մարջանը կրծքին։

Այն առավոտ բուք էր դրսում, և լեռների
աստվածները ծանրաքայլ
անցնում էին բարկացած և կատաղի,
ոռնում էին ու բռռում այն առավոտ։

Կիսախավար խորշում կսկծված զինվորների դեմքերի վրա
մրրիկը սուր ակոսել էր կնճիռներ,
և մի ծանր լռություն
քարե ոտքը զետեղել էր սրտերում։
Տատրագոմի հարսը, դժգույն, խելագարված և դողահար,
կանգ էր առել պատռված գուլպաներով,
թշվառ ու խեղճ —
կանգ էր առել թշվառ ու խեղճ
և շրթների սրսփացող
ծայրից կախել պաղատագին խոսքերի
բոցը պլպլան։
— Ես սիրեցի... մե՞ղք է սիրել... Ես ոչ ոքի երդում չտվի
մնալ այրի, մնալ մենակ, ընդմիշտ մենակ... Ես սիրեցի,
մե՞ղք է սիրել...
Մինչ Սանայի ձայնը հնչում, արծաթ թևով, վիրավորված
թռչունի պես թպրտում էր, զարնվում քարին
կիսախավար խորշում սմքած լռության՝
մունջ հրեշտակը բուքի միջից սուրող գնացող
աստվածների փեշն էր բռնում
և աղերսող բառերով
օգնություն էր խնդրում։

Հովանը լուռ, ատամների տակն էր առել բեղի ծայրը,
սեղմել բռունցքը։
Կարծես սիրտը՝ կրծքից զարնված
մի երեխա՝ վայր էր ընկել և արյունած շուրթերով
մայրն էր կանչում։
Սանան... Սանան... Նրա նշաձև,
երկայն ու կուռ թարթիչների տակը վառված աչքերում
երազանք էր կայծկլտում։ Նրա կրծքերի տենդը դյութիչ,
բազուկների հուրը ոլոր և գեղեցիկ ձայնը արծաթ
և սփրթնած դեմքը հրավառ... Սանան... Սանան...
Հովանը լուռ, ատամների տակն էր առել բեղի ծայրը,
սեղմել բռունցքը։

— Ես սիրեցի... մե՞ղք է սիրել... Ես իմ գյուղից դեռ երեխա
Հովանի մոտ նոր հարս եկա... Թողեց գնաց և վեց տարի
էլ գյուղ չեկավ, լուր չխաբրեց, չհարցրեց...
Լեռան մարդիկ, շարքով կանգնած, նայում են վար՝
սայլը քաշող եզան նման նայում են վար.—
Խոժոռ, համառ։

Այն առավոտ բուք էր դրսում, և սարերի
աստվածները ծանրաքայլ
անցնում էին բարկացած։
Եվ շատ չանցած, հրաման տվին՝ կանգնել դրսում և սպասել
դատաստանին։

Բուք էր դրսում, ցուրտ էր սաստիկ,
և Սանայի դողդողացող ուսերին վայր էր ընկել
իր վարսերի գիշերը սև։
Կանգնել դրսում և սպասել դատաստանին —
Հրաման տվին։
— Յավրում, հրեշտակ, ես ի՞նչ արի, ես սիրեցի, մե՞ղք է սիրել...

Թևը ծռած, քաշքշելով, հրեշտակը
դանդաղորեն կաղաց.
— Ոչ մի աստված չի հասկանում,— ասաց,—
նորից դանդաղորեն կաղաց։

Այն առավոտ բուք էր դրսում, և ժայռերի կրծքին ընկած
մի թիթեղե ամպ էր շարժվում և մղկտում։
Այն առավոտ երեք հոգի, Հովանի հետ երեք հոգի,
մռայլ, քանդված դեմքերով,
խորշից ելան
և Սանային ասին՝ գնանք։
Ասին՝ գնանք, և վառվռուն ու կայծկլտող նայվածքներով,
խիստ նայեցին։
Մի քիչ հետո, երբ պատռված գուլպաները գետնին տալով
և իմպերիալ

ճակտի ոսկին դողացնելով, Սանան հասավ
լեռան ետև և կանգ առավ գունաթափած.—
այն առավոտ երեք հոգի, Հովանի հետ երեք հոգի

եկած մարդիկ,
դուրս քաշեցին կռացած սրեր
և բռնացին.

— Դե, աննամուս, կինդ խփիր...
— Էրիկ... Հովան...
Եվ Սանայի մազերի մեջ լացավ մի հով,
և կրծքերը սրսփացին ու կուչ եկան։

Հովանի մութ աչքերի վրա մի ֆոսֆորե լույս էր քայլում,
ձեռքը բոցե տենդ էր սեղմել։ Ուզում էր լալ,
բռնալ, կանչել,
գլուխը ժայռին խփել ուժգին,
զարնել սուրը իր մղկտող, դժբախտ կրծքին, մեռնե՞լ, մեռնե՞լ...

«Էրիկ Հովան, դու որ... դու որ»...
— Տո, անարուն,
ի՞նչ ես սպասում... խփիր՝ կնիկ...

Լեռների մեջ աղիողորմ մի ճիչ ընկավ
ու սողկտաց թպրտալով։
Հովանը շուտ
արյունթաթախ սուրը նետեց,
նայեց չորս կողմ և կաղկանձեց։
Հետո, վազեց խելագարված քարայծի պես,
խզված ձայնով երկայն բռնաց երկնքի դեմ
և արյունած ձեռքերով զարկավ դուռը սարերի...

Բուք էր դրսում։
Հայոց դաժան լեռների վրա
աստվածները քայլում էին բարկացած։

Ա Ր Ա Ա Ս Տ Վ Ա Ծ

Եաղ գուսանական

ԱՍՔ ԱՌԱՋԻՆ

1

Մեներգողը

Մայր Անահիտը, երկու ձեռքերով, սեղմեց իր մարմնին
Նշենու ծառի ճյուղը սրբազան
Եվ ծնավ Արան։

Արան՝ արևի հրաթափ լույսի
Հրեղեն թիավար,
Արան՝ աստղերի հոտը պահպանող սրնգահար հավիտ,
Արշալույսների նուռան գինիով հարբած տեսանող,
Արան՝ թևավոր ցուլի եղջյուրներ հագած խոլ ոգի,
Արան՝ գարունը ոսկե շողերով պեղող և հերկող
Բյուրեղյա արոր,
Արան՝ բողբոջի աճը պաշտպանող ցողաթույտ վահան,
Կախարդանք ցանող բույրասփյուռ ռեհան,
Արան՝ վառ ոգի և աստվածություն։

Մայր Անահիտը, երկու ձեռքերով, սեղմեց իր մարմնին
Նշենու ծառի ճյուղը սրբազան
Եվ ծնավ Արան։

Ողջունենք նրան, ողջունենք նրան։

•

Վիպասանը

Երբ արևելքի սահմանի ծայրին թափվող մշուշում
Բացվեց երկնքի լուսաշող դուռը,
Եվ ծովի մի կարմիր
Սահեց սարերի սարսռող կատարին—

Ամպերի միջից դուրս թռավ մի գունդ,
Շրջեց, ոլորվեց,
Տարածվեց անծայր, կանաչ մի հրդեհ՝
Երկիրը հայող մագլցեց լուսե աստիճաններով
Եվ այլափոխվեց։

Հանկարծ հովերը

Վեր թռան խմբով,
Ջարկին ամպերին վարդե թևերը,
Շաչեցին կամաց
Եվ, Արարատյան դաշտի վրայով,
Ճախրեցին, թռան փայլատակելով։

Գունդը վայր իջավ, որոտաց, ճեղքվեց
Եվ հրավառվեց։
Բոցերի միջից դուրս եկավ Արան։
Նրա հետ միասին
Դուրս եկան նաև
Ոսկե թևերով չորս շուն հրածին։

Արան գեղադեմ
Աստված էր վսեմ,
Այր էր վեհաշուք, խորունկ աչքերով՝
Լվացված երազի խոր ծովով կապույտ։
Ճկուն, ներդաշնակ, ձիգ սոճի մարմնով—
Գանգրահեր և շեկ։

Արևածագի լճում թաթախված

Իր քայլերի տակ
Փթթող լույսերի շառայլ էր շաղվում,
Եվ իր իրանը
Վեր էր սլանում
Ավյունով լեցուն բարդու ծառի պես։

Նա իր աջ ձեռքում բռնել էր ծաղկած մեծղի՞մի աղեղ
Եվ ակունքներով զարդարված գոտուց
Կախել էր բոցեղ, ոսկենախշ մի սուր։

Երբ Արան իջավ՝ բացվեց գարունը։

Խիստ անտառներում սոսի և նոճի
Խուլ հառաչանքով խոսեցին կամաց։

Հակինթ և արծաթ ապարանշաններ
Կախած հովերը՝
Դաշտերի վրայով սուրացին արագ,
Եվ պարտեզներում նշենիները բարձրացան ոտքի,
Ե՛վ տատանվեցին, և՛ սարսռացին։

Արտը արթնացավ։ Ամեն մի արմատ մի կանթեղ վառեց։
Բուրաստաններում ոսկեթափ մի վազք ճիչեր արձակեց։
Փթթող տնկերի ծիլերի վրայից բոց արյուն կաթեց,
Եվ մեղուները՝ զմրուխտ մանգաղով,
Հնձեցին բացվող վարդերի թույրը։
Հարբած գարունը
Ներս մտավ, կանգնեց ծաղկած ձեռքերով։
Կանաչ արտերը շողուն մետաքսներ փռեցին չորս կողմ
Եվ խշխշացին։
Գառան բառաչը խառնվեց շուշանի հեծկլտանքներին։
Մնվեց սմբուլը, և լալազարը,
Քրմապետ և մոգ,
Նայեց բախտավոր, ծիծաղուն, անհոգ։

Երբ Արան քայլեց՝ երկիրը ցնցվեց։
Մասիսի գլխից մինչև Հրազդանի շառաչող ափը,
Ջորեղ ոգիներ, հողերի տակը, մուրճերը զարկին
Թնդող, շառաչող սալերի վրա,
Եվ մեր գետերը
Սուրացին արագ և վայր թափվեցին գոռում-գոչումով։
Արտույտը երգեց, կաքավը կանչեց,
Եվ արագիլը՝ լայնաթև թափով,
Վեր ելավ կախվեց։

Արան աղեղը բարձրացրեց, լարեց։
Կանչեց շներին և մտավ անտառ։
Երբ մտավ անտառ՝ խիտ սաղարթներում
Ոսկեշարժ և խուլ փոթորիկ քայլեց։
Ձայներ թնդացին։ Կարծես երջանիկ
Եվ հարբած մի հով
Տրորեց ու շարժեց ծաղկման կանաչ ծով։
Լսվում է անտառի խարշափը, շների ճաչոցը,
հեռվից ճնշող շեփորների կանչերը։

Վիպասանը

Արայի մասին, շարեցին երգեր,
Նվիրեցին զոհեր,
Եվ բագիններին առջևը մալմար
Առասպելեցին ձայներով հրավառ։

Երբ զոհ մատուցող դանակը քրմի
Մխրճվում էր եղջրավոր այծի
Խլրտող բկին՝ ժայթքող արյունը
Բոսոր գետակ էր կաղմում դաշտերում
Եվ կակաչների թագը հրկիզում։

Երբ աղոթքների խոսքերը կախարդ
Վեր էին ելնում և հորիզոնի
Վրայից սավառնող ամպերին բախվում,
Որթատունկերը արթնանում էին
Եվ կանաչ ծիլեր նետում արևին։

Մի գուսան

Արան ներկա էր բոլոր վայրերում։
Լեռների ծաղկած լանջերի ծոցում
Նա արնգահար և աստղահմա
Հովիվ էր պարթև և մոգ երաշի,
Արտերի միջում ակոսներ բացող,
Խոփի ատամով հողերը հերկող,
Եզների գլխին հարայ-հե՛յ կանչող
Նա վեհ վարող էր—
Լայնաբուռ ձեռքի արագ շարժումով
Հունդերը նետող մեծդի ցանող էր։

Եզների մայոց։

Նրա լույսը ցնցող ներկա էր նռան
Կարմիր շրթերով բացվող ծաղիկում,
Ոչենու թրթռուն ճյուղերի վրա,

Սիրանի լեցվող, հյութեղ ծսերում
Եվ խնձորենու ճերմակ բոցերում։

Արան ներկա էր բոլոր սրահներում։

Գլգլացող աղբյուր։ Կուժերն
իրենց ուսերի վրա կրող հայ աղջիկներ։

Երբ լուսաբացի շողերի տակին
Թաքնված աղբյուրի զուլալ ջրերը
Մեծ սափորներով տուն էին տանում
Հայ աղջիկները,
Նրանց կրծքերի, նրանց այտերի,
Թավշե աչքերի սարսռուն տենչանքում
Արան ներկա էր։

Նա էր վեր հանում քողը հարսների
Եվ նրանց տանջող, շփոթ երազից
Նա էր կառուցում բյուրեղյա դղյակ,
Արյունով սիրտ ողողում նրանց։

Նա էր, որ ջահել ազնվավորի
Ժիր բազուկներում տաք պողպատ հալում.
Նրա աչքերը լեռների շնչով,
Պայքարի համար, մաքրում, լվանում։

Ցուրիշ մի գուսան

Երբեմն հրեղեն ձիան վրա նստած,
Նա նետի նման վազում էր, սլանում
Լեռան լանջերի զառիվերներով։
Թռչող այդ ձիու վառ սմբակները
Որոտի նման թմբկում էին,
Ժամ տալիս լեռան անհարթ կողերը
Եվ արձագանքվում ժայռերի գլխին,
Ու կիրճերի մեջ, խորխորատներում։

Արան բնության բեղմնավոր թափի,
Ծաղկածլումի լույսը չէր միայն—
Նա խորախորհուրդ, գերագույն ուժ էր։
Ոգու կշեռք էր, ներդաշնակություն—
Հիմնական պարի սկզբնասկիզբ շեշտով
Տոգորված շքեղ մի աստվածություն։

Պարի եղանակներ:

Երբ ցանքերից հետո, արևամուտին,
Շինական, հովիվ, աղջիկներ, կանայք
Շողերի գծով շուրջպարում էին—
Արան այնտեղ էր։

Նրա գեղակարկառ
Սոսու պես ճկուն, սլացիկ մարմինը
Սարսռուն ոստումի ալիք էր դառնում,
Աջ ու ձախ նետվում։

Եվ վերջալույսի
Լայն պատմուճանը ուսերին գցած՝
Նա միանում էր ոսկե նվագին։

Այդ վայրկյաններին ամեն ինչ լռում՝
Լսում էր նրա ոտքի դոփյունին
Եվ շարժումների թևավոր ճախրին։

Տավղահարների բարձր նվագը
Հոսում էր կանաչ դաշտերի վրայով
Եվ ծաղիկների թարմ բաժակները
Լցնում ճաճանչող գինիով հույզի։

Արան պարում էր:

Լույսերի թոսոր ոտքերը կամաց
Վեր էին սլանում լեռների վրայով
Եվ ոգիները՝ երազով հարբած,
Սավառնում էին

Իրիկնամուտի ատաղերի միջով։
Ամեն մի կույսի սիրատենչ սրտում
Նա թագավոր էր։

Նա, որ պիտի գա,
Հրավառ շրթերը տա իր շրթերին—
Նա, որ իր ծաղկուն, պայծառ գրկումով
Պիտի իրանը սեղմի ստինքներին
Եվ գորովալի, կրակոտ շոյանքով
Պիտի իր ծարավ վարդը արյունի։

Արան պարում էր։

Սև հողերի տակ արթնանում էին
Ծաղկող ուժերի շռինդ վազքերը։
Դաշտերի վրա ծով էր տառապում,
Ե՛վ այգիներում, և՛ պարտեզներում
Անձայն ձայներով բարախում էին
Նոր ծաղկումների կանաչ սրտերը։
Արան պարում էր։
Ոսկե այդ պարը
Ցնցում էր ամբողջ Հայոց աշխարհը։

ԱՍՔ ԵՐԿՐՈՐԴ

1

Մեներգողը

Գարուն արածող վիթի աչքերը
Լեցվում են կանաչ երազանքներով—
Հարբած մի քամու թեթև ոտքերը
Ծածկվում են ոսկե, կայծկլտող ցողով։

Արևի հրատապ ճառագայթներում
Սրվում է սրտի սուրը մոգության,
Եվ լեռը տանող արահետներում
Քայլում է փառքը նոր աստվածության։

Ա՛հ, թող կամարը եղանակների
Բանա ամպերում իր լայն աղեղը,
Եվ ձեռքը ուժգին անմահ հերոսի
Վառի իր նետով սիրո կանթեղը։

Շրթերին տարած բաժակը գինու
Լցվել է բոցեղ մթբեկի համով—
Ակոսում թաղված ոսկրերը հլու
Պայթում են խեղդված, խռիլ աղաղակով։

Աստղը փոխում է տեղը իր լույսի
Եվ սլանում է երկնքի վրայով,
Որպեսզի բախտի կենտրոնը փոխվի—
Բևեռը բևեռ դրանք հայտով։

Ես բաց եմ անում թևերը իմ լայն
Եվ ընդունում եմ հեղեղը գարնան,
Որ փոթորկել է տիեզերքը համայն—
Սիրո բոցերով կիզել Արային։

Չ

Մեջլիս է։ Մես։

Առաջին գուսանը

Կեսօրվա պահին, երբ Արան հեծած
Իր երիվարը, կայծակի նման
Անցնում էր լանջով Արագած լեռան
Արոտատեղու արծաթե շերտով
Վազող աղբյուրի հառաչող ափին—
Նա հանկարծ տեսավ արևը ոսկուն
Խառնած մի տեսիլք։
Գեղանի, նրբին,
Վազող աղբյուրի հոսանքում նստած,
Շիկահեր և մերկ մի աստվածուհի
Լվացվում էր հանգիստ։

Արան իր ձիան սանձերը քաշեց՝
Նայեց, հիացավ։

Նոր արեգակի

Հրալույս ծովից իջած տեսիլքը
Պսակված էր բոսոր, դեղին շողերով,
Ե՛վ իր թևերից, և՛ ստինքներից
Ճրագ էր սահում, ծփծփում օդում։

Նոր ծլած վարդի բարակ շրթերը
Սարսռում էին, և իր վարսերը
Այրվող հարդի պես ծածկում ուսերը։

Վինի մի ճառաչ։ Թմբուկի մի զարկ։

Երբ հանդիպեցին նրանց աչքերը՝
Աղբյուրը լեցվեց գուլգուլանքներով,
Արտի մեջ խաղաց արծաթե մի հով,
Ցողերով ծածկված ծաղկաթփերը
Իրար մոտեցան, դողացին կամաց,
Եվ անտառները բողբոջող ձայնով
Մեղմ հառաչեցին։

Արան վայր իջավ՝
Ուզեց մոտենալ։ Աղջիկը ջրից
Դուրս նետվեց արագ, նետեց ուսերին
Մի շղարշ կապույտ։ Նրա աչքերից
Կայծեր վայր ընկան և պլպլացին։

— Հեռացիր, գնա, մի՛ համարձակվիր,—
Գոռաց նա հուզված և ցասկոտ ձայնով
Եվ ջրի ափից թեթև ոստյունով,
Հեռացավ, վազեց։
Թեթևատոն Արան դուրս նետվեց,
Առաջը առավ այդ հրաշք աղջկա—
Նրան իր լույսում բռնեց, բանտարկեց։

— Հե՞յ, աղջիկ հրատես, մի՛ փախչիր այդպես։
Ես քո արևիդ աղբյուրը գիտեմ,

Կրծքերիդ վառված աստղերը գիտեմ,
Ինչ դու ես՝ ես եմ։
Անահիտ իմ մոր գուրգուրանքները,
Կախարդանքները և քո վարսերը
Ներկա են իմ մեջ ծննդյան օրից։

Ահա փթթել է, ծաղկել ու բացվել
Մեր զույգ սերմերի պայթած արյունը
Բոլոր վայրերում։ Պետք է մեր ծառը
Դալար ճյուղերը նետի երկնքին,
Անի, զարգանա, իրականանա։

Նա այդպես ասաց,
Աղջիկը կամաց
Գրկեց, վեր առավ,
Ջետեղեց նրան իր թամբի առաջ—
Մտրակեց իր ձին։

Ամեն կողմից լսվում է վազող
Ձիան սմբակների ձայնը։ Վարը կանգնած
Ծիսակատարները շուրջպար են բռնում
և խմբերգում։

Ամբողջ այդ օրը երկիրը լեցվեց
Լեռից լեռ թռչող Արայի ձիու
Վրնջյուններով։
Գարունը ցնցվեց։
Ոսկե մատներով տրորեց ծառերը,
Բույսերի ծոցում հակինթ զետեղեց
Եվ ծաղիկների բուրումով հարբեց։

Մեներգող

Տե՛ր Արա,
Իմ շրթերիս արմատները
Հասնում են քո սրտիդ տենդին
Եվ աճում են լույսերով։

Արտ և սար խորասուզվում են քո մեջ
Եվ երգիդ աղբյուրից
Խմում զովությունը առավոտվա։

Աշխարհը հնչում է ինչպես շրջող մի գիսավոր։
Ջմրուխտը խառնվում է հրին,
Եվ տարածությունք այլափոխվում է։

3

Վիպասան

Թագվոր-Թագուհի իշան պալատը՝
Շինված արևի լուսե քարերով
Եվ ցցված բլրի ծառազարդ գլխին։
Շենքը այրվում էր բյուրեղի նման—
Փղոսկրե դուռ ուներ, մարմարե պատեր,
Աշտարակ ուներ վերամբարձ, սլացիկ.
Առյուծ և վիշապ քանդակներ ուներ,
Ուներ որթենու և նոան զարդեր։

Երբ լուր տարածվեց Թագուհու մասին,
Նրա հուր-հրաշք աչքերի մասին,
Նրա գեղ այտերի կրակի մասին,
Բացված կակաչի շրթերի մասին—
Յոթ օր յոթ գիշեր հարսանիք արին։

Խրախճության ձայներ։

Կարասներ բացին հոտավետ գինու,
Ծառերի տակին սփռոց փռեցին—
Կերան, խմեցին, զարկին փանդիռը
Եվ երգ շարելով՝ պարեր պարեցին։

Լեռների կողմից հովիվներ իշան՝
Աստղերով լեցված վառվռուն աչքերով,
Իշան քրմերը, մոգերը հայոց,
Գառներ և եզներ զոհեցին բազում,
Կերան. խմեցին։

Առաջին ժայթքող

Եղան արյունի վառ հոսանքի մեջ
Նրանք թաթխեցին երկայն կարմիր թել՝
Թագվոր-թագուհուն վկա կանչելով,
Կոչեցին ոգին արգասավորման։
Ժիր ջահելներից,
Թագվորի համար,
Թիկնապահ խմբեր ընտրեցին շուտով,
Ընտրեցին նաև գեղանի քավոր,
Որպեսզի կտրի իր ձեռքի սրով
Խնձորը՝ ծածկված մեխակ ու մեղրով։

Տաք ձիեր հեծած երիտասարդներ
Խաղեր խաղացին դաշտերի վրայով
Եվ դեպի երկինք ուղղած աղեղով
Սրածայր նետի տարափ թափեցին։

Ասին, կանչեցին։ Ասին, թե Արան,
Անահիտ տիկնոջ ոսկեծին տղան,
Ուժն է սրբազան,
Որով արևը հասկերի սրտում
Ամման բոցեր է զետեղում, վառում։
Թե տերևները իր պատմուճանի
Ալմազ են փթթում, և թե վարդերի
Բույրը և թույրը դալիս է նրանից։

Ասին, թե Արան ոգին է այն մեծ,
Որ հասած նռան արյունի բոցով
Կիզում է կույսի ծոցը հրաթով
Եվ իր առեղծյամբ՝ ծագի լույսերում
Կյանքեր է ստեղծում և բեղմնավորում։

Ասին, թե Արան բոլոր մայրերի
Կրծքերից հոսող շերմ է բերկրալի,
Վազքերի մեջից վազող կրակ է,
Սիրո սիրատուր, անուշ դանակ է։

Գարունը թնդաց, երգեց, բզավեց։

Երկնքի հրատապ լույսով համբուրված
Ճոխ այգիները առատ ծաղկեցին,
Ակոս առ ակոս ճեղքված արտերում
Բարձրացան կանաչ հասկերի ծիլեր,
Եվ ծաղիկները, դաշտերի գրկում,
Վառեցին խնկի բուրող ածուխներ։

Շինականները
Զորս կողմ հառեցին իրենց աչքերը
Եվ ուրախացան։ Եկել էր ահա,
Ծաղկել և աճել արտերի վրա
Բերքը այս տարվա։

Գոմերից ելած
Անթիվ տավարը՝ ամպի պես աճած՝
Լեռն էր մագլցում, մայում, բառաչում։
Եվ գյուղի մարդիկ իրենց բեղերը
Երկայն շոյեցին,
Ե՛վ ուրախացան, և՛ կատակեցին։

Ի՜նչ մեծ էր, հսկա բերքը այս տարվա։

Թմբուկի, վինի ուրախ ձայներ։

ԱՍՔ ԵՐԲՈՐԴ

I

Առաջին գուսան

Ասեմ՝ լսեցեք։
Բարև տանք հրավառ աստղադաշտերը
Հերկող սայլերին,
Թռչող արևի բոսոր թևերին,
Իրիկունների բլուրներից իջնող
Քրտնած ձիերին։
Ասեմ՝ լսեցեք։

Օշախի առջև նստած ժամանակ
Ձեր զույգ աչքերը տվեք երազին—
Խմեցեք կում-կում դեպքերի քամած
Ուժեղ և լեղի
Օշարակները։

Ասեմ՝ լսեցեք։
Արա աստծո աճած համբավը,
Նրա դեմքի լույսը, գնդեցկությունը։
Թև առավ, անցավ երկրի սահմանը,
Օտար ցեղերի ականջին հասավ։
Քայլեց դաշտերով, լեռներ մագլցեց—
Դյուցազնավիպեց, ասքի վերածվեց։
Ալան և պարթև, մոսկեր և հատեր,
Ստեպանների ազատ սկյութացիները,
Արևածագի բազում տոհմերը,
Տոթ Միջագետքի սևամորթները—
Երազ ներշնչող ոսկե բառերով
Պատմեցին քաջի մեծության մասին,
Պատմեցին նրան, փառաբանեցին—
Զոհեր զոհեցին։

Երկրորդ գուսան

Ասեմ՝ լսեցեք։
Ասորիների անապատ երկրում
Կար-չկար հզոր, սևավարս և թուխ,
Ամեհի, կախարդ մի աստվածուհի։
Այդ աստվածուհին՝ ամեհի, կախարդ,
Օձի աղավնու զուգումից ծնված,
Իշտարի կրակե կաթով մեծացած—
Ինքնակալ և բիրտ մի տիրուհի էր,
Մթին աշխարհի հույզերի վիհ էր,
Սրտերի՝ քարայր, սիրո՝ խորխորատ։
Չկար սիրահար,
Որ նրա հրատապ կրքին դիմանար։
Վավաշոտ և նենգ, սրբազան պոռնիկ—
Անապատ երկրի այս Շամիրամը,
Սերը քաղում էր հասած մրգի պես,

Խածում, վայելում բոցավառ համը,
Ապա, այլայլված, կատաղած, հրակեզ,
Սրասույր դաշույնը խփում էր սրտին,
Արյունում, սպանում իր սիրահարին։

Օձ էր թունավոր, ճերմակ աղավնի։
Նրա երակներում հոսող արյունը,
Նրա հաստ շրթերի տարփագին դողը,
Նրա մութ կրծքերի բոցե ալիքը,
Նրա պորտը տանջող հուրը, մրրիկը
Խարույկի նման բոցկլտում էին,
Փոթորկում, կիզում իր գիշերները,
Դաշունահարում իր գրգիռները։

Շատ մեղմ արևելյան երաժշտություն:
Մեղր, բրտինճ և սեռ արտահայտող մի մեղեդիացում՝ ներքին ճեծկլտանքով և տարափներով լցված:

Երրորդ գուսան

Ուշ երեկո էր։
Իր դարատափի
Փարթամ բույսերով զարդարված այգում
Նա լուռ պառկել էր, դիտում էր լուսնին։
Մեծ անապատի կլանիչ տոթ շունչը՝
Տարփով մոլեգնած ծալքերում մարմնի՝
Երազանքների գրգիռ էր հյուսում
Եվ իր աչքերի վառված անդունդը
Հույզերով պեղում։
Երաժիշտները,
Նուրբ շոյանքներով,
Գրգռում էին վինի նրբին լարերը—
Լեցնում պարտեզը զսպված հառաչով։

Կես մերկ թագուհին,
Ոսկե իր թասը սեղմած շրթերին,
Արմավից շինված գինի էր խմում
Եվ լուսնի հրեղեն թևերից ընկած
Հակինթ բոցերի մեջը տառապում։

Հեռվից տարածվող
Մթագնած և լերկ ավազի ծովից
Շոգու և տոթի ամպ էր մագլցում։
Լուռ էր աշխարհը։
Գինին և երգը,
Հրավառ վարդերի, նուշաֆարների
Թույնը և բույրը,
Հովահարների թեթև գգվելուը
Իր երակներում ջերմ էին թափում
Եվ թմրամիտը ցնցում ու լեցնում
Անուշ և փարթամ ցանկություններով։

Սարսուռով լեցված իր մեծ աչքերը
Թագուհին կամաց հառեց երկնքին
Եվ հանկարծ ցնցվեց։
Կամար հոնքերը
Կիտեց և նայեց։
Վանդակի միջում փակված մի թռչուն
Երկայն դայլայլեց։
Երաժիշտները
Խուլորեն զարկին դողուն թմբուկին։

Թագուհին արագ պարպեց իր թասը,
Ծծեց շրթերը և նորից նայեց,
Նայեց զարմանքով հեռավոր լուսնին։
Ի՞նչ էր այդ, երա՞զ։

Թառամած ոսկե ճառագայթներում
Նախ լայն և պայծառ մի արատ կազմվեց—
Մի արատ կազմվեց, կամաց ոլորվեց,
Ապա, ջահի պես, ուժով բռնկեց։
Ի՞նչ էր այդ, երա՞զ, խորհուրդ մի նշա՞ն,
Դևերի նետած գաղտնի մի ուռկա՞ն։

Թագուհու ցնցված մարմինը դողաց։
Ստվերների միջում — նա պարզ տեսնում էր —
Վեր էր սլանում մի աստվածություն։
Ի՞նչ դեղեցիկ էր։

Նրա ձիգ մարմինը,
Ուսերին թափվող գեղին վարսերը,
Կապույտ ջաքայլով լեցված աչքերը,
Ճկուն իրանը, ոտք թևերը,
Բարձր ճակատը, շրթերը երբին
Խենթացնող էին, աննման, հրաձին։

Կրակի պես վառվեց սիրտը թագուհու։
Մարմնի ծալքերում խուլաշեբմ գինու
Մի ալիք վազեց
Եվ պորտը տրաբեց։
«Թող գան մոգերը, շուտ գան մոգերը»։

Եվ երբ մոգերը
Եկան, կանգնեցին, երկրպագեցին—
Նա վեր բարձրացրեց տյրվող աչքերը
Եվ մատը ցցեց, ցույց տվավ լուսնին։

Նայեցին երկայն և պրպտեցին
Լուսնո երեսը, նրա ցից լեռները։
Մեծ քրմապետը աստղերը չափեց,
Փսփսաց գաղտնի մոգական բառեր,
Կոչեց ոգիներ, թևավոր դևեր,
Ապա, աչքերը կես խփած, ասաց.

— Ծ՜, մեծ Շամիրամ,
Երկրի երկնքի անհագթ տիրուհի,
Այն, որ տեսնում ես, արևի թևից
Ընկած պատկեր է։ Շրջանը լույսի
Արտացոլում է, ինչպես հայելի,
Ճակատագրական տեսիլք մի վսեմ,
Մի աստվածություն, գեղեցիկ, հրաղեմ։
Գարո՞ւնն է ապրյոր Եթե գարունն է,
Պոռթկող սերմերի ծլման ավյունն է—
Պատկերն է Արա կոչված դյուցազնի,
Հարևան տերը Հայոց աշխարհի։

Նայիր, երկնքի մեջտեղը անցնող
Արծաթե լույսի բարակ այն շերտը
Ճամփա է հրատապ, որի բոցերով
Կյանքը անցնում է մահվան սահմանը,
Գնում միանում աստղերի խմբին։
Զոդիակոսի մոտ, Մեծ Արջը, ցնցված,
Գրեթե կպչում է Վիշապի պոչին։
Թռչող Ձիան մոտ կրակներ են դիզված,
Ինչ որ նշան է, որ խեցգետինը՝
Երկիրը Հայոց, պիտի ետ սողա
Եվ քո զինքերի տակը բոցկլտա։

Օ՜, Մեծ Թագուհի, ամեն ինչ պարզ է։
Ճակատագիրը
Իր անիվները տանում շրջում է
Կախարդված լուսնի շավիղի միջից,
Փնտրում է Բայը, դարբնում Մակդիրը։
Ապա նա պատմեց, ոգևորվելով,
Արայի մասին, որ արթնացնում է
Գարնան ուժերը, բողբոջների մեջ
Այլուն է դիզում և ինքն էլ՝ հրաշեջ,
Սառկում, փրթում է, կյանք առնում անվերջ։

Մեծ քրմապետ

Ասեմ, հայերը
Ըմբոստ մարդիկ են, հոգիով կառչած
Իրենց մեծ հրկրին։ Եվ ի՜նչ երկիր է...
Փարթամ, զովաշունչ, լեցված լուսավոր
Այգ ու պարտեզով և ձյունագագաթ
Հսկա լեռներով։

Գուսան

Թագուհու սիրտը բաբախեց ուժգին,
Եվ մեծ աչքերից կայծեր վայր ընկան։
Նա գինու թասը տարավ շրթերին
Եվ կամաց ծծեց։

Եթե այդպես է ձեր պատմած Արան—
Ուզում եմ նրան։
Ղրկեցեք նրա մոտ մեծ դեսպաններին,
Հետևորդներով, բազում ուղտերով
Եվ նվերներով թանկարժեք ու նուրբ։
Թող գա բաժանի իմ անկողինը։
Լինի տերը իմ, իմ ամուսինը։

Եթե այդպես է ձեր պատմած Արան—
Ուզում եմ նրան։

ԱՍՔ ՉՈՐՐՈՐԴ

1

Վիպասան

Եվ ճամփա ընկավ մոգ և քրմերի
Եվ դեսպանների մի մեծ շքախումբ։
Զարդ ու մետաքսով ծածկված ուղտերի
Շարանը անցավ անապատները,
Անցավ փոսերը, անցավ ցից և թումբ
Եվ, երերալով ու զրնգալով,
Մագլցեց դանդաղ մեծ բարձունքները —
Հասավ Հայաստան։

Երբ, բլրի վրայից,
Ասորիները տեսան ծաղկազարդ
Եվ ոսկեգիսակ հսկա արտերը—
Շոյեցին իրենց ճոխ մորուքները,
Մնացին հափշտակված։

Հունիս էր բոցված։
Հրաբորբ արևը
Իր ադամանդե լուսե թևերը

Վայր էր երկարել,
Ճառագայթների տարածել գետեր,
Բոցով, ոսկիով լվացել արտեր,
Ընկղմել փարթամ բուրաստաններում։
Ի՜նչ տեսարան էր... Հսկա լեռներում
Ձյուն էր և բյուրեղ,
Իսկ վարը, գաշտում՝ կանաչ ջրհեղեղ։

Հասան Արայի լուսավոր պալատ։
Փողեր փչեցին—
Ներս հրավիրվեցին։
Երկայն շապիկներ
Հագած մոգերի շարքի ետևից
Խմբով ներս մտան բազում ծառաներ,
Վայր դրին նվերներն իրենց ուսերից—
Երկրպագեցին։
Հետո ներս եկան,
Արծաթե փարթամ զենքերով զինված,
Կոնաձև, հարուստ գլխարկներ հագած,
Հաղթանդամ և ժիր նետահարները։
Ապա քայլեցին՝ խունճուճ մազերով,
Ծանր գանգուրներ հյուսված մորուքով,
Բարդ օղեր կախած և իրանները
Ոսկեզարդ ու ճոխ գոտիով սեղմած՝
Մեծ դեսպանները։

Արան՝ զարմացած,
Նայեց այդ մարդկանց, նայեց գանձերին
Եվ համբերությամբ լսեց ճառերը։

Մեծ դեսպան

Մեր աստվածուհին,
Վեհ Շամիրամը, նա, որ իր կամքի
Հարվածով ահեղ սարսափ է ցանում
Ամբողջ աշխարհում, հրաման է տալիս
Հով և մրրիկին, տարվա չորս կողմի
Իրար հաջորդող եղանակներին,

Մարդկանց գործերին, կանանց հղիության,
Լուսնի փրկարար մակընթացության,
Աստղերի շարժման, թագավորներին—
Իր մեծ աչքերի ճրագը պայծառ
Նետել է վրադ և ցանկանում է,
Որ շուտ գաս մոտը, բաժանես իր բարձը,
Իշխանությունը, անհամար գանձը,
Իր երկրների հարստությունը։

Վիպասան

Ասաց, բարևեց ու գետին փռվեց։
Արան, զվարճացած, կամաց ծիծաղեց
Եվ այսպես խոսեց.

Արա

Իշտարի հաջորդ, աղավնուց ծնված,
Շամիրամ կոչվող թագուհու մասին
Լսել եմ հաճախ։
Նրան բարև տարեք
Եվ ասեք, որ չեմ կարող երբեք
Լքել երկիրս։
Ես այս հողերի
Ամեն մի ծլող բույսին և ծառին
Կապված եմ մարմնով՝ մարմնով, հոգով։
Իմ երակներում շրջող արյունը
Նրա արյունն է,
Իմ արև լույսս՝ նրա սրտից ժայթքող
Հուզման մեծ թևն է, և սուրս լուսեղ՝
Նրա զորության թափն է մշտահեղեղ։
Իմացեք նաև, ամուսնացած եմ
Հոգուս օղակված այն վեհ Դիցուհուն,
Որի աչքերը մի-մի ճրագ են՝
Իջած աստղերի ջահերից անմար։
Ձեր մեծ թագուհու երկրի շուկայում
Արմավի ծառը բեղմնավորում են
Գնած վարսանդով։ Ես ծախու վարսանդ
Չեմ կարող լինել, չեմ լինի երբեք։
Շուտ վերադարձեք երկիրը ձեր տոթ,

Լուսնով կախարդված անապատները—
Թե չէ լեռների և անտառների
Մեր ոգիները կարթնանան հանկարծ
Եվ ձեզ կհալածեն։

2

Շամիրամի շքեղ պալատում: Մոգեր, զինված մարդիկ, սպասավորներ, պահապաններ, ծառաներ: Դռան առջև շղթայված վագրեր և ստրուկներ:

Վիպասան

Մինչ Բաբելոնում, քաղաք պալատում,
Պատրաստվում էին ընդունել Արան,
Եվ Շամիրամը՝ յուղերով օծված,
Թափանցիկ և նուրբ շղարշներում կորած,

Հոնքերը նախշված, վարսերը ներկված՝
Այրվում էր տենդում անհամբեր սպասման—
Եկան սարսափած իր դեսպանները
Եվ հաղորդեցին սև լուրը մերժման։

Թագուհին շարժեց իր բոց աչքերը,
Կուրծքը վեր թռավ, շունչը ծանրացավ—
Կատաղեց, գոռաց։

Շամիրամ

Թող նոր դեսպաններ,
Ավելի ճարտար պատգամավորներ
Վազեն նրա մոտ և ամեն գնով,
Ամեն խոստումով համոզեն նրան։

Վիպասան

Այս անգամ հեծան Հայոց սահմանում
Գնած նժույգներ։ Թամբեցին նրանց
Հրափայլ զարդերով և մետաքսներով
Պճնած թամբերով և, գիշեր-ցերեկ,

Արագ սուրացին, հասան Արային
Եվ նորից ստացան նույն պատասխանը։

Շամիրամ

Հրաման եմ տալիս դաշունահարել
Այդ դեսպաններին։ Սյուներից կախել
Հետևորդներին։
Հրաման եմ տալիս
Առնել գանձերի հսկա մի քանակ,
Արձաններ ոսկե, փղոսկրե սեղաններ,
Որ ինձ ղրկած էր Մեծ Փարավոնը—
Առնել հյուսվածքներ, բյուրեղյա սկիհներ,
Ակունքով այրվող հարուստ վզնոցներ,
Հազվագյուտ օղեր, արծաթ վահաններ,
Եվ, Եգիպտոսի մոգերի շինած,
Գաղտնի և կախարդ հմայող բուրումներ։

Վիպասան

Բեռնեցին գանձեր, հարստություններ,
Հեծան նժույգներ ավելի արագ
Եվ, անապատի ամպեր բարձրացնող
Ավազի միջով, տոթահար քամու
Դեղին վայոցի մշուշի միջով,
Ասպատակեցին, հասան Արային։
Ջոքեցին հլու
Եվ հաղորդեցին կամքը թագուհու։

Արա

Իզուր եք բերել ձեր ճոխ գանձերը,
Իմ երկրում ունեմ այնպիսի գանձեր,
Որոնց նմանը ոչ մի տեղ չկա։
Իմ լուսաբացի
Ջեռքերով կախված ամեն մի ցողը
Ավելի արժե, քան ձեր թանկագին
Քարերով ծածկված երկայն օղերը։
Արտում տատանվող հակինթ հասկերը,

Լեռան կատարի ձնծաղիկները,
Անտառում քայլող արծաթ հովերը,
Իրիկնամուտի ծովի պես փովող
Բոց ու կրակը ավելի արժեն,
Քան ձեր քրերի տեսքը ասկեշահ։

Վիպասան

Երբ Շամիրամը
Այդ կարուկ մեքժման վառ լույրը առավ՝
Պալատում մի խուլ փոթորիկ քաշեց։
Խենթացած և կույր, թագուհին վազեց
Դահլիճից դահլիճ,
Դաշունահարեց
Իր նաժիշտներին, սիբահարներին
Եվ գոռաց, կանչեց,
Քարշ գալով գետնին։

Մի մութ գիշեր էր։
Աքլորի ժամին,
Նա՝ այլափոխված, վեր թռավ հանկարծ
Եվ, գալարվելով ու փրփրելով,
Իր մուրը կանչեց զորավարներին
Եվ հրաման տվավ—
Կազմել մեծ բանակ,
Ջիեր ժողովել արագասմբակ,
Աֆրիկյան փղեր և մեծաքանակ
Աղեղնավորներ ու ոտավորներ—
Դառնալ վառ կրակ,
Արագ,
Ինչպես քամի, ինչպես մրրիկ,
Ինչպես անզուսպ, փրփրող ալիք,
Ինչպես աշնան խուլ փոթորիկ,
Վազել, զարնել,
Փշրել, քանդել
Եվ Արային բռնել, բերել։
Փողերի ձայներ։ Կանչ և աղմուկ։
Հովերի ռոնց։

ԱՍՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Վիպասան

Արարատ լեռան առջևը փռված
Ոսկեզօծ դաշտում մեծ այգեքաղ էր։
Բերքը առատ էր։

Զրնգում էին գերանդիները

Եվ մանգաղները—
Խոտ ու հատ հնձում, հասկերը կտրում,
Բլուրներ դիզում, կալսում, ամբարում։

Աշնան այտերը հրավառվում էին,
Նրա հուր ձեռքերը սարսռում էին,
Կրծքերը նրա երերում էին։
Ամեն մի ողկույզ
Արև էր և հույզ. ամեն մի ծիրան՝
Հակինթե մի շողք, ամեն մի սալոր՝
Թավշագույն ակունք և ամեն մի նուռ՝
Արյունով լցված բոցավառ մի հուր։

Հասուն դեղձերից լույս էր վաք թորում,
Խնձորի թուշը ամաչկոտ վարդ էր,
Տանձի սրածայր, հյութեղ սափորը
Լեցված էր համի, համի և բույրի
Անուշ նեկտարով։

Եվ թուզի մեջը
Եռում էր մեղրը՝ ճաքած շրթերը
Կարկտոռում հարբած, շլացած մեղվին։

Առաջին գուսան

Արարատ լեռան առջևը փռված
Ոսկեզօծ դաշտում մեծ այգեքաղ էր։

Արայի ոգին՝ թևավոր, հրածին,
Խորասուզվում էր հյութի գետերում,
Ծլման և ծաղկման արծաթ աղբյուրում,
Լվացվում հասնումի ճառագայթներում,
Ճախրում տեղից տեղ և՝ բոցաաղեղ,
Նիրհում ավյունի հրե աշխարհում
Եվ նոր ձևերով փթթումին հասնում։

Այս հար ծովացման հեղեղի վրայով,
Շրջուն մետաքսներ շոյող ոտքերով,
Իր փերիների հետը միասին,
Անցնում էր երգով Հայոց թագուհին։

Իրիկունները,
Երբ աղջիկների ոտքերի տակը
Ճզզանը տնքում, լեցվում էր հոսող
Խաղողի հյութով—

Պարի և երգի ձայներ։

Շինականները, հին մի կարասի շուրջը բոլորված,
Եղջյուրաթասը երկնքին ցցած,
Քեֆ էին անում՝
Ուրախ և տմբլան երգեր հառաչում.

Երբ վերջալույսը
Իր բոսոր նավի առագաստները
Քաշում էր, ծալում և, գունատվելով,
Իջնում վիհերը՝ արթնանում էին
Լեռ ու անտառի, արտ ու պարտեզի
Մեծ ոգիները։

Ջրերի միջից դուրս էին գալիս
Հրեղեն ձիեր, վիշապ-ձկները,
Հուր գոմեշները և փերիները
Եվ, լուսաշողշող պսպղանքներով,
Սավառնում էին արտերի վրայով։

Գիշերվա պահին,
Երբ որ լուսինը ոսկե վահանը
Կախում էր հմայված երկնքի ծայրին
Եվ վայր էր թափում իր շեկ լույսերի
Թառամած ոսկին—
Բոլոր բույսերը՝
Ծառը ծառի հետ, ծաղիկը ծաղկին
Գրկախառնվելով՝ տատանվում էին
Եվ վառ ձայներով իրար հետ խոսում։

Ջրերը հանկարծ կանգ էին առնում,
Եվ ջահելները, բաբախուն սրտով,
Սպասում էին, որ գետ և լճին
Նետած իրերը
Ջուտ ոսկի դառնան կամ ակունք հրաշող։

Ժայռերի միջից, ապառաժների
Պատռած ճեղքերից,
Դուրս էին գալիս ուրվականները,
Ծանր ոտքերով չափում դաշտերը,
Վազվզում, սահում և այգիների
Կանաչի վրայով ցատկում ծառեծառ,
Թթվահամ հոնի արյունը ծծում,
Միրանի անուշ մսերը ծամում,
Ապա, լուսնո շեկ ճառագայթներով,
Մագլցում անհայտ, կորչում ամպերում։

Ա՛հ, ուրախ եղեք—
Լեցրեք փարչերը։
Թող փանդիռները
Զարնեն և երգեն
Աշնան տաղերը։

Վիպասան

Արան այնտեղ էր։ Նա ամեն տեղ էր։
Քարերի ծոցում նա հոսուն ջուր էր,
Ծառերի գլխին թեթև սարսուռ էր,
Բլրի կատարին հարսնուկի հուր էր
Եվ աղջիկների կրծքերի վրա
Նա մի ալ-վալա
Բոց սիրո թև էր։

Առաջին զուսան

Լեցրեք փարչերը,
Թող փանդիռները
Զարնեն և երգեն
Աշնան տաղերը։

Խումբը

Լեցրե՛ք փարչերը, թող փանդիռները
Զարնեն և երգեն աշնան տաղերը։
Գրլեջան։

Ահա շրջել են վերի աստղերը՝
Վար թափել իրենց հրե վարսերը։
Մրրալե։

Աղջի, մի՞ ծածկիր սրտիդ աղերսը —
Կաքավիր նազով շուրջպարի ներսը։
Գրլեջան։

Եկ, քո աչքերիդ շուշանը քաղենք —
Եկ, քո շրթերիդ համերը խմենք։
Մրրալե։

Տղա, բարձրացուր սուրը քո սրտիդ—
Փոխիր ամառը քո սև աչքերիդ։

Գլլեջան։

Ա՛հ, թող պայտերը անսանձ քո ձիուդ
Դոփեն, կայծակեն ճամփեքում հոգուդ։

Մբբալե։

Թող հասկը հասկին նետի իր ոսկին,
Գնա, միանա Արայի սրտին։

Գլլեջան։

Լեցրեք փարչերը, թող փանդիռները
Զարնեն և երգեն աշնան տաղերը։

Մբբալե։

Պտորը գնալով աշխուժանում է: Սալի, ծնծղա, թմբուկ:

Մենեղգողի ձայն

Մարդը հող է և ժամանակ։ Մարդը հող է և ծիլ։ Մարդը հող է և մահ։

Փոթորկվում և փոխվում են եղանակները։ Լույսերը շրջվում են, և չափերը փոխում են իրենց եռանկյունին։

Առյուծը՝ անվախ և կանաչ, ոռնում է ոստանի չորս դռների առջև։ Քամիները ման են գալիս պողպատե սմբակներ հագած։ Լեռան թևերով ձիերը խրխնջում են, պատռում ամպերը, կայծակում։

Ահա հնչում են փողերը։
Փոթորիկը պատռում է իր թմբուկները։

Հայր Արամազդ, Մայր Անահիտ—
Արա, Արա, Արա։

ԱՍՔ ՎԵՑԵՐՈՐԴ

1

Վիպասան

Աշունը փշրեց ճյուղերը իր բոց,
Լճերի վրայից ամպեր վազեցին,
Բախվեցին իրար և, որոտալով,
Թռան, ժողվեցին Մասիսի գլխին։

Հովը պատռեց կրծքերը իր սև,
Հասկերը քանդեց, ծառերը կոտրեց,
Վայեց, հառաչեց։
Անձրև և կարկուտ
Մրճահարեցին դաշտերը դեղնած
Եվ, գետակ-գետակ, հոսեցին կատղած
Բլուրների վրայից, ժայռերի միջով։
Հրաբորբ արևը իր վառ ուղտերի
Սանձերը քաշեց՝ ներս մտավ կամաց
Աղեղնավորը։

Կարճացավ օրը,
Եվ նոյեմբերը հեծկլտաց, սողաց։

Հայոց աշխարհը ժաժ եկավ, ցնցվեց։
Կատաղի թափով մի մեծ փոթորիկ
Իր սև դևերին ազատ արձակեց
Եվ առաջացավ, դարձավ գոռ մրրիկ։
Կորդվաց լեռների փեշերով մթնած
Վեր մագլցեցին Ասորեստանի
Թյուր բանակները։

Յոթ անգամ հազար
Ոտքով քայլողներ, երեսուն հազար
Հեծելազորքեր, հարյուր հիսուն փիղ,
Վեց հարյուր ուղտեր, զրահավոր կառքեր,
Չորս կողմից ժողված հաստաշուրթ ցեղեր

Ճեղքեցին քարոտ կիրճեր, ճամփաներ
Եվ, բղավելով, թմբկահարելով,
Եկան կանգնեցին Հայոց աշխարհի
Սրբազան դաշտում,

Որպեսզի նվաճեն
Եվ գերի տանեն
Արև Արային։

Տեղ հասան թե չէ՝ զորապետները
Հրամաններ տվին։ Զորքը բաժնեցին
Աջ ու ձախ թևի, պատսպարեցին
Գնդերի ետև, որոնց պաշտոնն էր՝
Օգնել կատաղի ձիավորներին,
Առաջը առնել կողմերից եկող
Հարձակումների։
Այդ դասավորման
Մեջտեղում դրին ոտավորներին,
Ժիր փաղանգներին և նրանց առջև
Դրին աֆրիկյան հսկայամարմին
Անհաղթ փղերին։
«Թող գան հայերը, չափվեն թող մեզ հետ,—
Կատաղած գոռաց մի ծեր քրմապետ,—
Թող գան հայերը, չափվեն թող մեզ հետ»։

Առաջին գուսան

Աշնան մեծաղջ, զնգող ձայները
Ծնծղայի նման կպան ժայռերին։
Թափվեցին մեռած, չոր տերևները,
Եվ Արարատի գլխի բերդերից
Ոլորուն կրակով շանթեր վայր ընկան,
Ե՛վ դղրդացին, և՛ փայլատակեցին։

Երկրորդ գուսան

Արան այդ տեսավ՝ ձայն տվավ մարդկանց։
Հունձի և քաղի աշխատանքները

Լքած մարդիկը արագ զինվեցին,
Կազմեցին գնդեր ձիավորների
Եվ, մի-մի ազեղ, մի-մի թուր բռնած,
Կանգնեցին սեղմված շուրջը Դյուցազնի։

Հայոց աստվածը՝ գեղադեմ և վեհ,
Ճերմակ ձի հեծած, աղեղը ձեռքին,
Մի մեծ թուր կախած,
Ասես ամպերի
Միջից գուրս եկած հրաբորբ լույս լիներ՝
Շոայլող տեսիլք։
Նրա զույգ աչքերը
Պարզ էին, ինչպես երկինք մի լազուր,
Եվ իր վարսերը՝ արևագանգուր,
Բոցկլտում էին ուսերի վրա։

Ամպերի դղրդոց։ Թմբուկների
հարվածներ։ Նետերի շվոց։

Առաջին գուսան

Հայոց աստվածը իր թուրը հանեց,
Իր կտրիճների առջևը ընկավ,
Թափով խոյացավ
Եվ, Բաբելոնի զորքերի մեջը,
Վիթխարի ուժով գրոհեց և կռվեց։

Թշնամու նետած
Վահան-նիզակով զինված շարքերը,
Բքից տրորված ծառերի նման,
Աջ ու ձախ ընկան և, սասանվելով,
Դաշտը ծածկեցին հազար դիակով
Եվ ետ քաշվեցին։

Երբ Շամիրամը
Իր ոսկեզօծված կառքի վրայից
Այդ գուժը տեսավ՝ դողաց, կատաղեց։
Հրամաններ տվավ, գոռաց, հայհոյեց։

Զորականները ասին.— Թագուհի,
Դա հով է և բուք։
Լեռներից իջած դա հով է անմահ,
Դա հով է և բուք։

— Կտրեք այդ հովի թևերը խսկույն,—
Խենթացած ձայնով բղավեց թագուհին։
— Կտրել այդ հովի թևերը խսկույն,—
Կրկնեցին խմբով բոլոր ձայները։
Եվ նոր գնդերը՝
Բռնած երկաթե հսկա վահաններ,
Առաջ նետվեցին, վազեցին, զարկին,
Զարկին, վազեցին։

Արան իր թուրը բարձր կարկառեց,
Մտրակեց իր ձին, ամենի ուժով,
Թշնամիների շարքերը հնձեց։
Իր քաջ հայերը՝ փոթորկամրրկ
Հոսանքներ կազմած, պայքարում էին
Ջտեսնված մի ոգով։

Հայ երկրների
Բոլոր վայրերից՝ Սյունիքից, Տայքից,
Վասպուրականից, գիշեր և ցերեկ
Ճամփա կտրելով, նոր մարտիկների
Փալանգներ էին շտապում հասնում,
Արային միանում։

Հանձնել Ալաշին
Ասորեստանի պատանիկ թագուհո՞ւ,
Նրա ամպ խավարից ելած ուժերի՞ն,
Դժոխքում սնված ուրվականների՞ն,
Ոչ՝, այդ չէ՝, այդ չէ՝։

Չէ, այդ չէ, այդ չէ... գնդերը հրե՝
Նիզակ նիզակին, արեր սրերին
Շանթահար զարկով՝ անշաւաչ գրոհով
Հարձակվում էին, կռվում բոց թափով։

Վախցած փղերը ետ էին փախչում։
Տեգի, Նիզակի շաչյունը ահեղ
Արձագանքվում էր ամբողջ երկնքում
Եվ, հեղեղ դարձած, վայր էր գլորվում։
Թագուհին նայեց՝ իր գույնը նետեց։
Իր բոց բիբերից կայծակներ ընկան։
Նա այսահարված՝ իր բազուկները
Դողալով ցցեց դեպի երկինքը
Եվ Ուդուֆ, Ասագ, Ալա և Գալլա
Անվերջ գոռալով, կանչեց Դևերին։

Վազելով եկան քրմեր և մոգեր։
Ասին.— Թագուհի, Թշնամի մի ամպ,
Երկնքից կախված սպառնում է զորքին։

— Ամպի սրտի մեջ մխրճել նիզակ,
Արյունել նրան, տապալել արագ։

— Ամպի սրտի մեջ մխրճել նիզակ,
Արյունել նրան, տապալել արագ,—
Շարքերով զորքի գոռացին կրկնակ։

Այդ կանչը անդադար կրկնվում է
և արձագանվում։

Թշնամին բերավ զորավոր խմբեր։
Օդը ցնցեցին ծնծղա և շեփոր։
Կատաղի ռազմը սկսվեց նորից։
Թավալվող ամպի այդ ուժի առջև
Հայ մարտիկները տատամսեցին
Եվ ետ քաշվեցին։

Բայց երբ որ տեսան
Արայի գլխի շուրջը պտտվող
Հրավառ լույսերը,
Եվ երբ որ տեսան իր հսկա սրի
Ջարկի տակ ընկնող Թշնամիներին՝
Առաջ նետվեցին, կռվեցին գինով։

Իրիկնամուտին, երբ ամեն կողմից
Առվակ առ առվակ արյուն էր հոսում,
Եվ մարտիկները մեծ հոգնությունից
Կուրացած էին՝ մեկ էլ հովերեր
Անտառի միջից մի խարշափ վազեց,
Ապա դղրդող մի որոտ ժայթքեց։
Ալքերի խմբեր, մի էգ ուլ բռնած,
Նրան խեղդեցին, զոհեցին նրան։
Ուլը թպրտաց։ Ալքերը լացին։

Ուլը թպրտաց, ալքերը լացին,
Եվ այդ վայրկյանին
Որոտող ամպից վայր իջավ մի նետ,
Մտավ Արայի նժույգի կողին՝
Վայր գլորեց նրան։

Օ՜, մեծ Շամիրամ,

Արայի հուր ձին սև արյուն փսխեց,
Ընկավ, տապալվեց։
— Չլինի որ դիպչեք,
Արյունեք, սպանեք Արա Դյուցազնին,
Նրան ողջ բռնեք և մոտս բերեք։

Եվ Շամիրամը, հուզումից ցնցված,
Իր վեցձիանի կառքը վեր քշեց
Եվ բլրի գլխին անհամբեր սպասեց։

Փանդիոի ողբ։ Վիների լաց։

Երբ հորիզոնի սարսռատատան,
Թոշնած վարդերը կամաց վայր ընկան,
Մենակյաց մի հով, պղնձե թևերը
Արագ շարժելով, ճեղքեց ամպերը,
Սուրալով իջավ և, հառաչելով,
Դեգերից, անցավ դաշտի վրայով։

Խուլ մի հեծկլտանք

Տրորեց աշխարհը։
Արան՝ թագավոր ծաղկավետ գարնան,
Նետը մխրճված սրբազան կրծքին,
Նշենու կոտրած բսսոր ճյուղի պես,
Հոգին հանձնել էր աստղերին հրակեզ։

ԱՍՔ ՅՈԹԵՐՈՐԴ

1

Մեներգող

Օ՜, ցավ, օ՜, ցավ, օ՜, ցավ.
Աստված մի մեռավ։
Սփրթնեցին շրթերն արևի,
Լույսը բեկվեց,
Եվ աստղը առավոտյան մորմոքելով
Պսպղաց։

Օ՜, ցավ, օ՜, ցավ, օ՜, ցավ.
Աստված մի մեռավ։
Գարունը փշրեց իր անիվները,
Շվարեցին սերմերը,
Եվ ծառերը աղքատացան։

Մեռավ Արան, մեռավ Արան՝
Սրբազան սիրտը ծաղկող գարնան։

Գուսան

Ամբողջ երկիրը սասանած լռեց։
Սարերի վրայով, գաշտերի վրայով
Սառնաշունչ և մերկ մի ձմեռ քայլեց։
Լեռները իրենց բարձր գագաթը
Ծածկեցին ահռնկած ամպերի ծոցում,
Եվ առանձնացավ վեհ Արարատը։
Սուր վշտով պեղված հողերի տակից

Որոտներ անցան։ Երկնքի ծայրից
Շանթահար ընկան պատռված լույսեր
Եվ Տայքից մինչև Գուգարք ու Ծովքը,
Մինչև Սասունը, Փայտակարանը
Սուգի դառնաողբ ձայներ բարձրացան
Եվ աղաղակներ բողոքի ցասման։

Ողբասան կանայք, քրմերին խառնված,
Քայլեցին պարով, վայելով լացին—
Զոհաբերեցին իրենց վարսերը
Եվ պատռեցին իրենց կրծքերը։

Ողբասանքներ

Արա Գեղեցիկ, Արա Գեղեցիկ...
Երբ նա վայր ընկավ,
Մեռավ—
Զեռքերը սառած կպան հողերին՝
Հողերը դժբախտ լուռ մորմոքեցին։

Երբ նա վայր ընկավ,
Մեռավ—
Անահիտ իր մոր սրտիցը կաթեց,
Երկու մեծ կաթիլ վառ արյուն կաթեց՝
Լեռ ու ձոր ցնցեց։
Օ՜, բողբոջների լուսատու աստված,
Օ՜, գարուն քանդված...
Սոսյաց անտառի մերկացած ու չոր սաղարթների տակ,
Հիվանդ արտերում, դաշտերում դատարկ
Ողբ ասին, լացին լորի և տատրակ։

Լացին, ողբացին, ինչպես ողբում են,
Ինչպես ողբում են, կրծքին ծեծելով,
Հարազատ մի հոր դիակի առաջ,
Գետում խեղդված զավակի առաջ,
Փերթաթափ եղած խեղճ վարդի առջև,
Տանիքը փլված խրճիթի առջև,
Կույր ծնված աղայի խավարի առջև—

Լացին, ողբացին, սրինգները վշտի
Հեծկլտանքներով լացին, ողբացին,
Եվ լացավ, ողբաց քարի տակ սեղմված ռեհանը թոշնած—
Անցորեն արտը քամիով ծեծված,
Չորցած աղբյուրի ափը մենակյաց,
Ծաղիկից զրկված բլրի կատարը,
Արևը կորցրած խաբված ամառը։

Գուսան

Մինչ բիրտ ասորիք ամեն ինչ քանդում,
Ավերում էին—
Ամենավսեմ,
Գոռոզ, քաջարի Հայոց այրերը
Վեր էին ցցում իրենց սրերը,
Գոռում, բողոքում
Եվ ետ պահանջում իրենց Արային։
Տարոնի դաշտից, Աղձնիքից, Մոկքից,
Հայկական Պարի հպարտ լեռներից
Նոր մարդիկ էին գալիս անդադար
Եվ բարկությունից ցնցված, դողահար,
Պատրաստվում էին նոր պատերազմի։

— Մենք ետ ենք ուզում մեր վեհ Արային։
Քաջեր, ժողվեցեք մեր մարտիկներին
Եվ հուր ու կրակով նետվենք կռվի դաշտ՝
Տապալենք, հաղթենք թշնամուն անհաշտ։
Մենք ետ ենք ուզում մեր վեհ Արային։
Եվ այդ ձայների արձագանքները
Լեռնելեռ անցան, ընկան դաշտերը
Եվ որոտացին։
Երբ Շամիրամը այդ կոչը լսեց՝
Վախեցավ, հուզվեց։
Կանչեց քրմերին, կախարդողներին
Եվ հայտնեց նրանց, որ աստվածները
Հրաման են ուտացել լքել ամպերը,
Շուտափույթ իջնել
Եվ Արա քաջին նոր կյանք պարգևել։

Դիակապուտների խմբեր գնացին
Եվ հազարավոր դիակների մեջ,
Գտան Արային։

Հայեր

— Մենք եկ ենք ուզում մեր վեհ Արային։

Գուսան

Գտան Արային և տարան պալատ։
Նրա գորովալի և գեղ մարմինը
Պառկած էր անշունչ, ինչպես մի արձան։
Ճակատի վրա մի վերք էր բացվել՝
Սուտակի նման պսպղուն վառվել։
Գունատվել էին իր շրթունքները,
Բայց իր գանգրավոր, վեհաշուք գլխի
Շուրջը հրավառ մի լույս էր վառվում
Եվ ճառագայթում։

Շամիրամ

Ես չէի ուզում նրան մեռած տեսնել,
Գեղանի դեմքը սփրթնած տեսնել,
Եվ իր շրթերը անարյուն տեսնել,
Թո՛ղ նրա ճրագը աստղերից իջնի
Եվ սիրտը նրա կյանքով բաբախի։

Լսվում է շուրջ շնիկների
մղկտոցը։

Գուսան

Օրերը անցան։ Իզուր մոգերը,
Գաղտնի բառերի կախարդող շեշտով,
Վերակոչեցին մութ ոգիներին՝
Իշտար, Մարդուկին, գև և ալքերին—
Արան չարթնացավ։

Տասներկու ցերեկ,
Տասներկու գիշեր նրա շուրջը գարձան։
Տասներեքերորդ օրվա լուսաշող ծագին
Ամպերը հանկարծ խուլ որոտացին
Եվ ճարճատելով, կայծակներ ընկան,
Կպան պալատի առջևի դռան—
Բոցակիզվեցին։

Մոգերը վախցան։
Իրենց թագուհուն շուտ խորհուրդ տվին
Տանել Արային գիշերվա մութով—
Անշշուկ, անձայն, մի բլրի վրա
Այրել գեղապանծ մարմինը նրա։

Ընտրեցին մի բլուր։ Գերաններ դրին,
Հատակ կազմեցին։ Շուրջը շարեցին
Թանկարժեք իրեր, տեգեր, նիզակներ,
Իր սուրը ոսկե, իր մեծ վահանը,
Իր արքունազարդ լայն պատմուճանը։

Պառկեցրին Դիցին։ Հատակի տակը
Դրին անհամար վառելիք և ցախ։
Հեռացան կամաց և սպասեցին
Գիշերվա կեսի խորացած մութին։
Երբ Լուծն շարժեց երկնակամարում
Իր վառ արորը, և Հայկը ուղղեց
Աղեղնավորը Մեծ Շան սահմանին—
Հանկարծ վայր իջան լուսե թևերով,
Կրակ աչքերով այն չորս շները,
Որ կապված էին Արայի լույսին
Գաղտնի կապերով։
Նրանք բոլորվեցին
Արայի շուրջը, բոց լեզուներով
Երկար լիզեցին նրա վերքերը։

Երբ մարդիկ եկան՝ ապշած մնացին։
Երկնքի միջից ցոլացող մի լույս,

Մի լույս կապուտակ,
Հերարձակ իջավ—
Վառեց Արայի երկու աչքերը։

Վառեց Արայի երկու աչքերը,
Ոսկիով լվաց նրա վարսերը։
Արան բարձրացավ և հանգիստ նստեց։
Նստեց և խոսեց։

Արա

Անտես աշխարհը
Տեսանելի է։ Նա մեծ հայելի է,
Որ լի է կյանքի թաքնված ձևերով՝
Աշխարհաշինման նախակերպերով։

Երբ սանդուղքներով ոլորապտույտ
Մտա հողերի մթնած մեծ վիհը՝
Ինձ բոլորեցին բարդ այն կերպերը,
Որոնց առջևը ո՛չ մի դուռ կամ պատ,
Ո՛չ մի բերդ ամուր
Չեն կարող ցցել անանց մի արգելք։
Նրանց արմատները,
Սպասող սերմերի հուր մագիլները
Պատռում են ներքին լույսի ամպերը։
Հերկված ճամփեքում արյուն է հոսում՝
Կանաչ զորություն և համառություն։
Ցոթը կրակ են
Ցոթ անգամ բացված,
Ցոթը ուժերով անողոք ճեղքված
Եվ յոթ կյանքերի ձևերը առած։

Հասկացա, որ դրանք այն հոսանքներն են,
Հյուլեն իր սաղմում խեղդող ուժերը,
Որոնց սահմանից անցնելու համար
Պետք է այրի սիրտ և պայքար համառ։

Ասի, ես պետք է անցնեմ այս խավար
Լաբիրինթոսը,
Ոսկեծին իմ մոր
Փեշերին հասնեմ և Անահիտի
Արգանդի լույսը երկու ձեռքերով
Ժողվեմ և խմեմ։
Եվ երբ այս արի՝
Իմ ձեռքը զինվեց բոցավառ սրով—
Ես ճամփա բացի խավարի միջով։

Ընկա ուրիշ վայր։
Կարծես լեռան մեջ
Բացված մի կիրճ էր, լեցված սրածայր
Հսկա ժայռերով։
Երբ առաջացա՝
Ծառերը հանկարծ շարժվեցին կամաց—
Վիշապի դեմքով շարժվեցին իմ դեմ։
— Ես հասկանում եմ,— ասի ես նրանց,—
Մթին աշխարհի
Քաղաքի վրա իշխող արքայի
Դուք պահակներն եք։
Դուք ոգիներն եք
Մեռնող իղձերի՝
Հագված պարապով գերեզմանների։

Վեր առա ձեռքս և կարկառեցի
Մեջս բոցկլտող ջահը իմ սրտի,
Այդ ոգիները սողացին մի կողմ—
Ես առաջացա։

Առջևս բացվեց մի կամար հսկա,
Որտեղից լույսի հեղեղ էր թափվում։
— Դու վերադարձար, դու վերադարձար,—
Փսփսաց մի ձայն, և սեր մի հրատապ
Ինձ գիրկը առավ։
Կյանքը ծնվում է արգանդում հրավառ
Եվ նորից իջնում արգանդը հրավառ։

Ինչքա՞ն ժամանակ այնտեղ մնացի,
Ես լավ չեմ հիշում։ Հիշում եմ, որ լույս
Կամարի պարզած նեղ ոլորտներով
Ես վեր բարձրացա և աշտարակի
Բարձրաբերձ գլխին կանգնած նայեցի։

Ամբողջ տիեզերքը փռվեց առջևս։
Պետք է իմանալ. աստվածները իսկ
Իրենց սահմանած երկնքի մասից,
Իրենց մեջ ապրող հույզի աշխարհից,
Իրենց աստղերի ոլոր շրջանից
Շատ չեն հեռանում։

Այն որ հեռու է—
Թվերի ծովը, բարդ հավելումի
Խաչաձև կարգը, անծայրածիրը՝
Մնում է թաքնված։

Այնտեղից տեսա Ամբողջությունը։
Աստղադաշտերի հսկողությունը,
Արևելք շրջող ոսկեթափ բացը,
Արևամուտքի բոսոր շրջանը,
Մոլորակներում պառկած ծովերը,
Բյուր արևների լուսե գետերը։

Մնացի սասանած։

Աջից և ձախից,
Կոնաձև ցցված Մեջտեղի կողմից,
Մեկմեկի խառնված, մեծ ալիքների
Եվ հոսանքների ջրվեժ է թափվում։
Անթիվ աստղերը՝ ոսկե դաշտ կազմած,
Փայլփլում էին, երերում էին։
Գիսավորները՝ հրաբոց և արագ,
Մագլցում էին դեպի անհունը,
Ապա ոլորվում, վայր էին սահում
Երկնակամարի զառիվայրներով։

Այդքան մեծության բեռը մղկտաց
Իմ կոպերի տակ։ Սիրտս ի՞նչ կերպով

Կարող էր գտնել բաբախման ձևը
Եվ անծայրածիր անվերջությունը։
Ինչպե՞ս կարող էր հոգուս մեջ գտնել
Հիմնական շեշտը իր արարչության։

Նորից վայր իջա։
Կանգնեցի առջև մի վերջալույսի։
Հազիվ թե նիրհող արևից մեկը
Սուզվել էր ծովում իր հորիզոնի—
Ագամամութը, արևածագը, ապա գիշերը
Ճախարակի պես աջ ու ձախ դարձան,
Երկնակամարը լեցրին փոփոխվող
Լույսի, խավարի զորագնդերով։

Հանգիստ դիտեցին։
Մտքիս մեջ դանդաղ, ալիքանման շրջաններ անցան,
Եվ ժամանակը,
Լողացող տղայի կայտառ շարժումով,
Թափառեց մեջս, ճեղքեց ջրերը։

Ուզեցի թափով նետվել ետևից
Ոլորապտույտ շարժվող արևի,
Հագնել ճրագը, ճախրել նրա հետ։
Այդ պահին, սակայն, հոգնություն զգացի,
Կոպերիս վրա ծանր թև նստեց,
Լեցվեցի քնով։

Լեցվեցի քնով,
Եվ քնի պահին իմ ներքին, գաղտնի
Աչքերիս առջև տարածվեց մի ծով՝
Անհուն և անծայր, անափ և անվերջ։

Լուռ հայելի էր զմրուխտե ծովը
Առերես միայն։
Պարզ էր ու հանգիստ,
Անծայր ջրերի թաքնված խորքերում
Կատաղի, ծածուկ պայքար էր մղվում։

Խաղաղությունը ծնվում է ներսի
Մաքառող ուժից։ Երբ իր դևերին
Հաղթահարում է կուլող ալիքը՝
Գալիս պառկում է հայելու կրծքին։

Ներսում աչքերս պարզ տեսնում էին
Ծովերի խորքում, մթնած աշխարհում,
Զորությունների մղած պայքարը։
Ինձ ակներև էր.
Ամեն ինչ, որ կա,
Ես կամ նրա մեջ։
Ու վայր սուզվեցին, միացան նրանց։
Պեղեցի ջուրը, նրա հաստ մետաղը,
Բերդերը նրա
Եվ թավալ եկա այդ բուքի գրկում։

Ես անհետացա։ Քնեցի կարծես։
Ինձ թվաց, որ բյուր դարեր եմ քնել —
Կամ թե քնել եմ մի քանի վայրկյան։
Չափել գաղտնիքը՝ անկարելի է։
Հայտնի էր միայն, որ ծովի մթին,
Անվերջ պայքարը մեջս առնելով՝
Ես դարձա նոր ձև, լինելու նոր կերպ,
Կյանքի նոր ճախրանք, միություն մի նոր։

Ուսերիս վրայից անցած կյանքերի
Քողերը ընկան։ Մարմինս հագավ
Լույսերի մի լիճ։ Սրտիս սահմանը
Լայնացավ, շարժվեց, և ես նիրհեցի,
Միացա ընդմիշտ կյանքի ճրագին։

Հասկացա, որ երբ երկու ենք ասում՝
Չկա երկուսը. երեք ենք ասում՝
Չկա երեքը, չկա հազարը,
Այլ կա միաձույլ Մեկություն մի վառ։

Հասնելու համար Մեկությանն այդ վառ՝
Պետք է վիշապի աչքերը հանել,
Բաժանումների թշնամուն հաղթել
Եվ այլափոխվել։

Ահա կանգնած եմ բաժանումների
Կենտրոնում ոսկե։
Ես միություն եմ։
Երկու բևեռով շղթայված խորհուրդ,
Հավիտենական ներկայություն եմ,
Գարնան պոռթկումով ժայթքող նոր ալիշ.
Հաց եմ և գինի՝ զոհաբերություն,
Հերկող և ցանող անմեռ զորություն։

Խոր երկնքում
Անծայր մի ծով
Մրրկահույզ թավալ եկավ,
Աղաղակեց հազար ձայնով, մռնչաց, գոռաց—
Իր երկաթե սև թևերը
Խփեց մութի ոլոր եկող եզերքներին
Եվ, փլվելով,
Թափվեց անդունդ։

Հյուսիսային կողմում փռված սահմաններից
Մերկ խավարի ահագնաձայն խմբեր իջան,
Շառաչեցին, փշրվեցին
Եվ արևը խավարեցին։

Երկրի վրա անտառները գանգատվելով
Երերացին,
Իրենց չորացած բազուկները գալարեցին—
Լացին խեղդող հովի գրկում։

Մորուտներում, պղնձին պղինձ բախվեց ուժով,
Եվ մի եղեգ ցնցված շարժվեց,
Իր ոտքերը գետին խփեց —
Ճչաց բոսոր աղաղակով։
Որոտացին երկիր, երկինք։
Սասանվեցին լեռներն հսկա։
Մութը սողաց,
Փշուր եկան փոթորիկի ոսկորները,
Եվ մի ամպրոպ
Բոցակիզվեց ճարճատելով,
Կարմիր կրակով ճեղքեց մութը,
Նիրհեց երկիր —
Հրրավառվեց։

Երբ ամպրոպը՝ զինված հրդեհ դաշույններով,
Փայլատակեց, ճայթեց, վայեց —
Ձիգ եղեգնի միջից ելավ
Արյուն ոսկի խառնած մի լույս,
Կայծակնացայտ ճառագայթեց
Եվ դուրս նետեց
Հուր մազերով, բոց մորուքով,
Արևի պես երկու փայլող մեծ աչքերով
Մի պատանյակ։

Ծնավ թե չէ՝ նայեց վերի կարմիր ծովին
Եվ, հով հագած իր ոտքերով,
Վազեց, թռավ։

2

Իր անհամբեր, մեծ աչքերում կայծեր ծնան,
Իր ոտքերը չմշկեցին և սլացան,
Կրծքի վրայից սողաց մի բուք,
Եվ մազերից կրակ թափվեց։
Արագ ճախրեց անծայրածիր ծովում կարմիր,
Ինչպես հրատես խորհուրդների մի ջահակիր։
Սուրաց, ցատկեց ալիքների վրայից մութի,
Գորովալի իր ձեռքերով ճամփա ճեղքեց,
Մտավ փռված չոր ամպերի լաբիրինթոս,
Խորասուզվեց, վեր բարձրացավ,
Նիրհեց, լողաց, առաջացավ։

Մրրիկ պայթեց։
Դղրդալով փշուր եկան խոր վիհերը,
Եվ Վահագնի առջև ցցվեց ահեղնատես,
Կես-ձուկ, կես-ուղտ և կես-թռչուն
Մի մեծ վիշապ։

Այդ վիշապի խորը փորված գորշ աչքերից
Թույն էր ժայթքում, ծուխ և կրակ։
Փետուրները սրածայր՝ դիզված մետաղ էին,
Դունչը երկայն, պոչը ոլոր,
Կուրծքը ծածկված քարից հղկված վահաններով։

Կոիվ ընկավ երկուսի մեջ։ Դղրդացին երկինք, երդրը։
Հրեշը սրաբոց
Մագիլները իր երկարեց,
Ոլոր ածեց դեղին լեզուն
Եվ, ոռնալով,
Գրոհ տվավ Վահագնի վրա։

Վահագն արագ
Հանեց թուրը իր վիթխարի, նետվեց առաջ,
Ահագնազարկ հարվածներով զարկեց հրեշին,
Վիզը կտրեց, փորը ճեղքեց։
Կտոր-կտոր վայր գլորեց նրա պոչի օղակները։
Մոնչացին սև ամպերը —
Երկինքն ամբողջ աղաղակեց։
Հաղթեց, իշավ։
Ո՞րն էր ճամփան Սովինարի։ Նա չհասավ։
Ա՜հ, չհասավ վերի շերտին երկինքների։
Նա չհասավ
Խավարի խիտ պարիսպների ետև թաքնված
Իր երազած աստվածուհու ապարանքին,
Պայծառաշող նրա դեմքին,
Նրա հարդագույն գանգուրներին,
Նրա՝ վարդ բացված, լույս շրթերին։

Կանգնեց, նայեց։ Մի ձայն թնդաց։
— Հե՜յ, պատանի,— բոռաց ձայնը,— որպեսզի դու
Հասնես բյուրեղ դղյակներին Սովինարի,
Պետք է հաղթես յոթ շերտերի յոթ դևերին,
Անցնես հոգու կողպեք հագած մեծ դռներից,
Ահով կոփված արգելքներից,
Այլափոխման, վերածնման շրջաններից։

Նայեց շուրջը՝ փոշին հոտեց։
Տարավ էին հողերն ամեն։ Ջոր, ամայի։
Կմախք դարձած բույս և ծաղիկ
Կանգնել էին հիվանդ և լերկ
Ավեր սփռած անապատում։

Անձրև, անձրև....

Եվ Վահագնը
Այդքան թշվառ տեսքից հուզված,
Ձայն արձակեց,
Կանչեց հրաթև, խարտյաշ իր ձին,
Ցատկեց վրան —
Նետվեց երկինք։

Զրնգացին մութ ամպերում
Երիվարի արծաթաձայն սմբակները,
Եվ շաչեցին այրվող պղնձե լայն թևերը։
Հասան մի բաց,
Մաղլցեցին հսկայական բարձրություններ,
Իջան վիհեր, վեր սահեցին —
Կորան ծխում։

Հանկարծ, ձորը տրորող, քանդող մրրիկի պես,
Մի ահավոր ձայն պատռվեց, շաչեց, պայթեց,
Եվ, ոռնալով,
Հսկա մի հրեշ
Գոչը խփեց քամիներին,
Կայծեր հանեց
Եվ Վահագնի գլխին կախվեց։

Ուռած մարմնով, վագրի գլխով և կրիայի
Տափակ ու լայն ոտքերով՝
Այդ սև ոգին
Վայր գլորվեց, նիզակները իր կարկառեց,
Գրոհ տվավ
Եվ Վահագնին իր թևերով պաշարեց։
Վահագնը քաջ
Արագ շարժվեց ետ ու առաջ,
Թռավ մի կողմ,
Իր նիզակը խրեց դևի մեկ աչքի մեջ,
Ճառնեց, հասավ իր ուղեղին —
Ուժով պեղեց։

Մի աղաղակ թնդաց ահեղ,
Որոտ պայթեց և անջրդի, չոր ամպերի
Դատարկ կավե սափորները փշրվեցին,
Զրնգալով վայր թափվեցին։

Վահագնը փորձեց վեր բարձրանալ,
Հասնել երազ Ծովինարին,
Բայց երկնքի ո՛չ մի կողմում ո՛չ մի նշույլ
Չնշմարեց,
Այլ լոկ խավար, որոտացող ամայություն։
Սանձերն ձիան կատղած քաշեց,
Իջավ երկիր։
Իջավ թե չէ, նայեց նորից՝
Արյուն կաթեց իր վեհ սրտից։
Փտած փայտի, թանձր ծխի,
Ածուխացած անտառների, չոր ծծմբի
Գոլորշիներ սողկրտացին երկրի վրայից։

Նայեց նորից—
Քար էր, փոշի։
Ծարավ էին աղբյուրները։
Քայլերի տակ խշխշացին
Բույսերի չոր դիակները և խոտերից
Դեղին հառաչ վեր բարձրացավ։
Թոշնել էին
Ծառերն ամեն,
Ուժասպառ էր հողը փխրուն։

Հեռվում տեսավ մի մեծ թափոր։
Կանայք, մարդիկ, մոգեր, քրմեր,
Դաշտից ի դաշտ թափառելով,
Բարձր ձայնով
Լալիս էին,
Եվ, Վահագնին պաղատելով,
Ջուր աղերսում, ա՜հ, ջո՛ւր, ա՜հ, ջո՛ւր։

Երբ այդ լսեց՝
Իր ուսերի վրայից քայլեց
Հույզի մի հուր,
Եվ աչքերը կայծկլտացին։
Ցնցեց նրան
Մի մեծ զայրույթ, տնկվեց համառ իր ճակատը։

4

Եվ Վահագնը դարձավ հրավազ, զորեղ մի ցուլ։
Գլխի վրա քուսան երկու սուր եղջյուրներ,
Եվ ռունգներից կրակ ժայթքեց։
Իր աչքերում
Արյուն և հուր չահեր դրին։
Հսկա բաշը
Կատաղորեն թափահարեց, կանչեց, մայեց—
Պարզեց բոսոր իր թևերը,
Մրրիկ շնչեց,
Բառաչելով վեր բարձրացավ,
Ժիր ճակատը տնկեց առաջ՝
Ճախրեց։

Հասավ երկինք։ Մտավ շաչող չոր հովերի
Խաչաձևվող հոսանքների ոլորտի մեջ։
Տեսավ լույսով ճեղքված մի վայր,
Նետվեց այն կողմ—
Փորձեց անցնել։ Իր առջևը
Մի պատ ցցվեց թանձր մութի։
Ցուլը զարկեց բաշը պատին՝ փլուզումով
Խավար թափվեց և, խավարի միջից ահեղ,
Իր դեմ կանգնեց հրդեհ ծամող, ահագնատես
Մի մեծ վիշապ,
Որ ոլորվեց, ճամփան փակեց։

Վայրի փղի երկայն գլուխ
Եվ գիշատիչ, մեծ անգղի աչքեր ուներ այդ վիշապը։
Նա պողպատե տախտակներով ծածկված
Հսկա
Իր ոտքերը

Վեր գալարեց, իր վիթխարի դունչը բացեց,
Բացեց, նետվեց Յուլի վրա։
Յուլ-Վահագնը
Ծղջյուրները առաջ նետեց,
Արագաշարժ զարկավ, խփեց—
Արյուն հոսեց։
Կայծակները ահադղորդ ճարճատեցին,
Եվ ամպերի ծնծղաները
Ամպերի դեմ փշրվեցին։
Հսկայաթափ կռիվ ընկավ։ Շանթ և ամպրոպ
Բղավեցին։ Զրնգացին Յուլի ամուր եղջյուրները,
Եվ նա մայեց ահագնականչ, ահեղնագոռ։
Նետվեց առաջ՝
Թափեց հրեշի պողպատակուռ ակռաները,
Զարկավ փորին, զարկավ կրծքին, զարկավ գլխին
Եվ, որոտող մի հարվածով,
Գլորեց նրան
Վարի անդունդ։

Յուլ-Վահագնը խլավ երկիր։

Կսկիծ մի մեծ խայթեց նրան։ Դեռ չհասավ,
Ա՜հ, չհասավ Սովինարին։
Պառկեց բարձր բլրի վրա,
Եվ երբ պառկեց՝ մեր քաջերի բարձր սարից
Մի ձայն ելավ, նրան խոսեց։

— Ամեն մի նոր, շահել աստված,—
Ձայնը ասաց,—
Պետք է անցնի ծննդի, մահվան շրջաններից՝
Վերածնի, նորից մեռնի, նորից ծնի։
Օ՜, Վահագն, դու աղեղի լար ես և նետ,
Արմատ և ծառ,
Որոտ և լույս։
Որպեսզի դու
Ընդմիշտ հասնես
Քեզ մեջ թաղված վիթխարի, վեհ,
Հրով կերտված զորության—

Պետք է աղգով վերածնվես,
Աճես նրանով, վերափոխվես։

— Ես ուզում եմ,— պատասխանեց Վահագնը քաջ,—
Հասնել երկրիս պայծառ լույսին՝
Սովատեսիլ, ծովահրավառ Սովինարին։
Ես ուզում եմ լվացվել նրա կրակներում,
Հագնել թագը նրա ջերմության՝
Նվաճել լույսը հսկայության։

— Պետք է հաղթես,— ասաց Նորից ձայնը լեռան,—
Ճամփաղ կտրող ոգիներին։
Հերայից չեն միայն ծնվում,
Այլ խավարի համատարած դիզվածքներից,
Այլ գետերի չորցած հունից,
Այլ հողերի ճեղքվածքներից,
Այլ ժայռաքանդ անդունդներից
Եվ նաև չոր, չոր, ամայի
Մարդկանց սրտից։

Եվ նաև չոր,
Նենգ, խորամանկ, հոգով սնանկ
Մարդկանց վարքից։
Երբեմն գայլ, երբեմն գառ,
Օձ թունավոր, կարիճ ոխի։
Նրանք գալիս են ամեն կողմից։
Խմում լույսը մարդկանց սրտից,
Որը աղջկա ցավը ծծում,
Մաղիկների բույրը պղծում,
Կյանքի թագը ցեխը նետում՝
Կեղծում, խաբում և բամբասում։
Նայիր և տես՝ ամեն մի տեղ թաքնված սուվերներ,
Աղտ և փոշի, հոգու ավեր։

5

Եվ Վահագնը դարձավ հրատես մի Արագիլ։
Վեր բարձրացավ, հասավ ձյունոտ գագաթներին,
Կախվեց օդում և, աչքերով զորատեսիլ,
Նայեց Հայոց մեծ դաշտերին։

Խոր խավարը՝ սեգամուկի, սև մոլեսի,
Արմատ ուտող միջատների
Ձևեր առած՝
Սողոսկում էր, դավում, սպառնում,
Մեռելների ոգին տանջում—
Արանց, կանանց քենով լեցված
Մութ աչքերում
Մաղձ սրսկում, նախանձ և ոխ,
Ատելություն։

Արագիլը իր կտուցը երկարեց,
Վայր սլացավ և կատաղի կռիվ մղեց։
Նա հարվածեց սուտ քրմերին,
Կեղծ ու ծախու մարտիկներին,
Շինականին շահագործող
Եվ իմաստուն իրենց կոչող
Ջարդիներին։

Երբ տեսնում էր մի տան բակում
Կամ արջառի շուրջը թաքուն շարժվելով
Անցնող շուքին —
Շանթի նման վայր էր գլորվում,
Մագիլները մխրճում էր դեմքին, վզին,
Խեղդում նրան, ծակում կուրծքը։
Ապա նորից վեր էր սլանում,
Օդում կախվում՝ լեգենդական նավի նման,
Հայաստանը խուզարկում։
Այդպես կռվեց տարիներով։
Հողը ծածկեց հրեշների դիակներով։
Երբ երկնային դիտարանից նա վայր իջավ՝
Իր առջև ցցվեց տձև մի Աժդահակ։
Հսկա մարմին,
Ոուխ և կրակ փսխող բերան,
Վառված ածուխ կարմիր աչքեր,
Դեղին թևեր։

Արագիլը, մագիլները երկարելով,
Շարժեց արագ, թռավ վրան։

Բայց Վիշապը՝ քամուց մղված ծխի նման
Վեր սլացավ, մտավ անտառ, անհետացավ։
Վահագնը շուտ իր բոցաշունչ ձին ետ քաշեց,
Նստավ վրան, մտավ անտառ։

Երբ առաջին
Սոսիների շարքը անցավ՝ մի հով շաչեց,
Օձապտույտ վեր մագլցեց
Եվ, ճյուղերում կանչ գոռալով, երեր եկավ
Եվ ճարճատեց։

Հեռվից տեսնվեց
Պարզ, հասարակ մի ձիավոր։
Ասես որսորդ։ Ուսին կախած քրջի մի կտոր,
Գլխին մորթից կլոր փափախ,
Ձեռքին աղեղ։
Նա նայում էր ամեն մի կողմ
Եվ որոնում որսի մի զոհ։

Վահագնը նրան տեսավ թե չէ՝
Կասկած ծագեց նրա մտքում։
— Օտարակա՞ն,— բոռաց նրան,— որս ես փնտրում
Իզուր տեղը։ Չե՞ս իմանում,
Որ այծ և ցուլ, եղնիկ, ոչխար
Լեռ են մեկնել շուր փնտրելու,
Այս մեր երկրի չորությունից ազատվելու։
Ձիավորը նայեց նրան և երբ նայեց՝
Իր աչքերի միջից կարծես սրեր ընկան։
Անտառն ամբողջ խարշափելով տատանվեցավ։
Ապա, մեկ էլ,
Կայծակի պես, մարդը ձիուց վայր գլորվեց՝
Առաջ խուժեց։

Բայց երկու քայլ չառաջացած՝
Վրան ընկավ Վահագնը քաջ,
Իր բոցավառ, պինդ ձեռքերով վիզը սեղմեց՝
Ոլոր տվավ։

Զիավորի մեջքին գցած քրջի տակից
Դուրս եկավ մեծ և հրեշ տիտան։
Ծուռմուռ դեմքով այդ էակից ծուխ բարձրացավ,
Եվ բերանից թափվեց առատ դեղին մի մաղձ։
Երբ նա շարժվեց՝
Անտառի չոր սաղարթները կոտրտվեցին,
Վայր թափվեցին հառաչելով։

Կռիվ ընկավ։ Տապալվեցին գետնի վրա,
Ահաղորդող հարվածներով ըմբշեցին։
Օտարական այդ հրեշին,
Նրա իսկ ձեռքից խլած սրով,
Վահագնը քաջ խփեց, սպանեց։
Մի հով լացավ կաղկանձելով,
Տրորվեցավ
Եվ գիշերը՝ թանձր և խոր, անտառ մտավ։

6

Հազարներով վիշապ քաղեց Վահագնը մեծ։
Անձրև չեկավ։
Դաշտ ու արտում,
Ջոր և անուժ բույսերի շուրջ,
Կրակ էր մաղվում։
Տնքում էին խեղճ հողերը։
Գյուղի մարդիկ, սարսափ գրկած,
Նայում էին մութ ամպերին
Եվ անիծում վիշապներին։

Բագինների առջև քարոտ
Ջոհում էին ոչխարների ամբողջ մի հոտ
Եվ վեհերոտ ձայնով երգում.

— Օ՜, Վահագն,
Ամպրոպ կայտառ, արագաշարժ,
Ամպերի դեմ կռվող վարազ,
Արծիվ անհաղթ, վագր մեծդի—
Օ՜, հրաթև որսորդ դևի,

Հասիր, օգնիր այս տառապող չոր հողերին,
Թոշնած ու լերկ ողկույզներին,
Երբեք չհասնող պտուղներին
Եվ արտերի ծարավ լացող ծաղիկներին։

7

Եվ Վահագնը դարձավ գոմեշ մի հրացայտ։
Դարձավ գոմեշ,
Սուրաց ինչպես անզուսպ մրրիկ,
Ինչպես կարմիր ձայնով մնչող մի փոթորիկ,
Ինչպես հրե դանակներով կռվող մի շանթ։

Երբ նա վազեց՝
Մութը ցնցվեց,
Ահազնագոռ թավալ եկավ
Եվ, թևերը փշրվելով, գլորվեց վիհեր
Եվ բղավեց։
Երեք գլխով, վեցը պոչով մի Դև ելավ
Եվ, հրդեհի մեծ քուլաներ դուրս հանելով,
Թռավ, նետվեց
Գոմեշ դարձած աստծո վրա
Եվ հարվածեց։

Քաջ Վահագնը հովի նման պտույտ եկավ,
Ոլոր ու վառ եղջյուրները վեր կարկառեց՝
Ջարկավ Դևին։
Երկինքներում որոտ վազեց։
Ամպը դիպավ ուրիշ ամպին՝ շաչեց, ձայնեց։

Այդ կռիվը տևեց երկար։ Տևեց մինչև
Այն լույս ժամը,
Երբ արևը, դուրս թափելով ճաճանչների բոց երամը,
Հանկարծ ցցվեց հորիզոնի խառն ծովում,
Բացավ շողշող, ակունքակերտ առագաստը
Եվ նավարկեց դեպի հեռուն։
Հալվեց ամպը։

Հրեշի երեք գլուխներից ծուխ բարձրացավ։
Իր աչքերի կրակը մարվեց, ձայնը մեռավ։

Շփոթ ընկավ երկինքներում։ Վազվզեցին
Դղրդալով կայծակները,
Մեկմեկի դեմ թուր հանեցին
Եվ շաչելով առաջացան։

Մի շանթ պայթեց
Եվ ժաժ տվավ լույսը ծածկող սև կամարը։
Երբ Վահագնը այդ նկատեց՝
Ամբողջ ուժով գրոհ տվավ,
Եղջյուրները խորասուզեց մի մութ ամպի հղի փորին,
Պատռեց նրան, անցավ մյուս կողմ,
Մտավ լույսի ծաղիկներով բուսած կածան,
Վեր մագլցեց և կանգ առավ
Գեղափթիթ, վարդակրակ Ծովինարի լույսի առջև։
Վայր գլորվող կաթիլները մուրճեր զարկին
Հողի չորցած գնդակներին,
Եվ բաղերի շրթերն ծարավ
Թրջվեցին։

Երբ արտ, արոտ, երբ լեռ և դաշտ,
Վերածնված, թարմ թոքերով
Խոր շունչ առան,
Եվ խաղողի ողկույզները
Ծովինարի լույս կրծքերից
Արևաքամ կաթ ծծեցին,
Բոցկլտացին —
Վահագնը հուր, քաջ պատանին,
Վազեց, թռավ
Եվ եղեգնի աճող բոցում սարսռագին
Անհետացավ։

ԱՅՍ ՎԵՊԸ

Այս վեպը սովորական առումով պատմական վեպ չէ, այլ պատմությունը մի քանի հայ հոգիների, որոնց վիճակվեց ապրել մեր ազգային կյանքի ամենաբախտորոշ ժամանակաշրջաններից մեկում: Նկարագրված անձերը երևակայական են, որովհետև զուտ ստեղծագործական աշխատություններում երևակայությունը ավելի իրական է, քան իրականությունը: Պատմության գիրք չէ, այլ ոգու պատմություն:

Այնուամենայնիվ, կարելի չէր բոլորովին անտեսել պատմական իրադարձությունների մոտավոր ճշմարտությունը: Արտասահմանյան պայմաններում, հեռու երկրից և ականատեսների վկայություններից, դժվար էր հարազատ պատկերը տալ բոլոր անցուդարձերի, և ակամա վեպում տեղ էին գտել որոշ անճշտություններ, որոնք և աշխատել եմ ուղղել երկրորդ հրատարակության առիթով:

Հայաստանում պահպանված մի շարք փաստաթղթերի լույսի ներքո, ես հանգեցի այն եզրակացության, որ Սարդարապատի ճակատամարտը հանդիսացել է ճշմարիտ համաժողովրդական պայքար բռնակալների դեմ, կազմակերպվել և առաջնորդվել է ոչ թե մի կուսակցության խմբապետներով, այլ հայ ժողովրդի միահամուռ և հերոսական ջանքերով: Տեսա նաև, որ սխալ եմ մեկնաբանել Մայիսյան բանվորագյուղացիական ապստամբության նշանակությունը և ուրիշ մի շարք դեպքեր, որոնք ճակատագրական նշանակություն են ունեցած հայ ժողովրդի կյանքում:

Ժամանակին, իտալացի մեծ վիպասան Ալեքսանդր Մանցոնին Ֆլորանս ժամանելիս հայտարարում էր, որ եկել էր իտալական արդի մշակույթի այդ օրրանը Առնո գետի ջրերում մաքրաջրելու իր «Promessi Sposi» վեպի ինչ-ինչ թերությունները: Հայրենական Հրազդանի ափերում, որտեղ ամեն ինչ հրաշալիորեն վերածնվում է, որտեղ հայ երգը հնչում է զորեղ և հմայիչ, և հայ ժողովուրդը իր ճիգը խառնելով եղբայրական մյուս ժողովրդների ճիգերին, ստեղծում է պատմության մեջ չտեսնված մի նոր կյանք, ես ևս մաքրաջրեցի իմ վեպի որոշ տեղերը:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Երբ պատից կախված ալպյան տնակի ձևով ժամացույցի դուռը հանկարծակի բացվեց և դեղին սարյակը դուրս նետվելով մեքենական կոկորդով կու-կու կանչեց, հեռավոր ճամփորդությունների նավապետ Արա Հերյանը աչքերը բաց արեց, նստեց անկողնի վրա և աղմուկով հորանջեց։ Կարելի՞ բան էր, որ այդքան ուշ լիներ... Մի քանի վայրկյան այս ու այն կողմ շարժվեց, մեջքի վրա շրջած մեծ բզեզի նման ոտքերը և ձեռքերը վեր հանեց, ապա, վճռական որոշումով վերմակը մի կողմ նետեց, մահճակալից վայր ցատկեց և պատուհանի փեղկերը բանալով քիթը կպցրեց ապակուն և երկար մնաց այդ վիճակում. մտահոգությունների մի փեթակ բզզալով խուժեց իր ներսը։

— Սատանան տանի,— մռմռաց նա։ Արագ շարժումով մերկացավ և սկսեց մարզանք անել։ Մարմինը երկարեց գետնի վրա, միացրած ոտքերը բերեց մինչև գլուխը. դարձավ երեսի վրա, մարմնի մկանները մղակի նման խաղացնելով վեր վար շարժեց, ոտքի կանգնեց, մեջքը անիվի ձևով պտույտ տվեց և երբ մարմինը սկսեց քիչ հոգնել՝ վազեց լվացարանի առաջ և փոշտալով, սուլելով և մռնչալով լվացվեց։

Նավապետ Հերյանը, թեպետ երեսունը վաղուց անց, դեռ երիտասարդ մարդ էր։ Միջահասակ, բարեկազմ, ճկուն, բացօթյա ճամփորդությունների և ծովային աղերի վարժ, արևից եփված և խիստ հովերից ծեծված երեսով։

Մոխրագույն, երբեմն կապույտին տվող թավշյա աչքեր ուներ, որ հեռավոր նավահանգիստների կանայք գտնում էին հմայիչ՝ երբ հանգիստ էին, և սարսուռ ազդող՝ երբ բարկանում էին և սկսում կայծկլտալ։ Ընդհանրապես, հավասարակշռված, կամքի տեր, բարի բնավորությամբ

մարդ էր։ Սակայն, բռունցքները ծանր էին և բարկությունը կատաղի։ Նա գիտակցում էր այդ և իր ուժը կրում էր վայելչությամբ։

Հագնվեց, պայուսակը բաց արեց և վարժ ձեռքով բոլոր անկյունները լավ օգտագործելով զետեղեց իր հետ տանելիք անհրաժեշտ իրերը, ցատկեց վրան, սեղմեց, կողպեց և դրեց անկյունը։

Միջանցքում, գլխարկը դնելու ժամանակ, կանգ առավ և երազուն աչքերով նայեց, մտածեց Դաշենկայի մասին։ Ինչպե՞ս պիտի նրան տար իր մեկնումի լուրը... Մխամորճը վառեց, նորից մտավ սենյակ, նայեց թե բան չի մոռացել և շատ շտապ դուրս եկավ։

Երբ ծովափ հասավ, հոնքերը կիտեց և աչքերը կամաց պտտեցրեց ծովի և երկնքի վրա։ Օդը ուժով ներս քաշեց։ Երևի պիտի անձրևեր։

Խոր լռությունը պեղում էր հորիզոնը։

Ոչ մի շարժում չկար։ Մի քանի մարդիկ իրենց կիսադատարկ խանութների առաջ նստած կամ քարափի պատվարի մոտը կանգնած ծուլորեն նայում էին հեռուները։

Տխուր տեսարան էր պարզում նավամատույցը։ Պարապության մեջ խարսխված մի քանի ժանգոտ նավեր աննպատակ սպասում էին իրենց բարձր կայմերի կատարները կամացուկ ճոճելով։ Երկու շաբաթը մի անգամ իտալական մի նավ էր գալիս, և հեռվից հնչող նրա սուլոցը բոլոր սրտերում արձագանքում էր հույսով լցված երգի նման։ Երբ մեկնում էր՝ քաղաքը դատարկվում էր տոպրակի նման և մրափում։

Երբեմն պատահում էր, որ պատերազմից մնացած, ծովի մի անկյունում թափառող պայթուցիկներից մեկը զարնվում էր մի անորոշ առարկայի, գոռում գոչումով վեր թռչում, քաղաքը շարժում և մի կտոր պատռած հորիզոն գրկելով վերադառնում էր ջրերի անդունդը։ Այդ վայրկյաններին սարսափած դեմքերով մարդիկ շտապ վերցնում էին իրենց հեռադիտակները, դողալով նայում կամ աննպատակ վազվզում քարափի երկայնքով։ Չլինի՞ թե ռումբը կպավ փախստականների նավակին...

Այդ փախստականները՝ պատահական նավակների մեջ սեղմված, գալիս էին Օդեսայի կամ թուրքական ափերի կողմից։ Ռուսաստանից խույս տված անորոշ տարրեր էին կամ դահիճների դեմ երկար ժամանակ կռիվ մղելուց հետո ազատված հայեր։

Երբ, օրեր և գիշերներ փոթորկալից ծովի և անոթության դեմ մաքառելուց հետո ոդիսևսները հրաշքով հասնում էին տեղ, ափ էին դուրս գալիս ուրիշ աշխարհներից եկած ուրվականների տեսքով։ Ապշած աչքերով նայում էին իրենց շրջապատող բազմության, հիմարորեն ժպտում,

կակազում։ Սրտաճմլիկ բան էր նրանց նայելը։ Ոսկրացած դեմքով, արյունոտ աչքերով, կմախքի վերածված, ոջլոտած և քայքայված այդ դժբախտները, ամբողջ մարմնով դողում էին, ոսկրոտ ձեռքերը սեղմում իրենց խորտակված կրծքերին, անհասկանալի բաներ մռմռում, ապա, էլ չկարողանալով դիմանալ այդքան հոգնության, ծովափի մոտ կուչ էին գալիս և քնում։

Երբ արթնանում էին նրանք, սրտացավ մարդիկ նրանց հաց էին տալիս և օղի։ Այդ վայրկյաններին նրանք վերակենդանանում էին, արագ-արագ հաց ծամում և խոսում։

Հերյանի համար այս ամբողջը այլևս ծածկված էր ծանր մշուշի հետև։ Այդ ամենքի հետ նա գործ չուներ։ Նա որոշել էր մեկնել, բավական է ինչքան համբերել էր, սպասել։ Դժնդակ, անուրախ, անվստահ այդքան օրեր համբերել էր և սպասել։

Բաթումը՝ կանաչ բլուրներով շրջապատված գեղեցիկ այդ նավահանգիստը, այլևս դարձել էր անտանելիորեն ձանձրալի մի վայր։

Մշուշ, արյուն, աղտ։

Պատերազմից ի վեր, ֆուտբոլի գնդակի նման քաղաքը ձեռքից ձեռք էր անցել։ Ռուսներ, թուրքեր, վրացիներ, անգլիացիներ։ Զանազան տեսակի դրոշակներ, զանազան տեսակի դրամանիշներ և միշտ նույն թշվառությունը։

Ծովը փակել էր իր ճանապարհները և քաղաքը գնալով աղքատացել։ Փողոցների սալահատակները փշացել էին, ջրի և աղբի խողովակները պայթել, լամպարները փշրվել։

Տները խոնավությունից մգլոտում էին, հոտում։ Բնակիչները՝ վախից, անոթությունից և ցրտից հյուծված, քայլում էին ստվերների նման և խոսում հառաչելով և կսկծալով։

Տեղական նավերը չէին մեկնում։ Նավթը, ճերմակ այդ արյունը, որ Բաթումը տալիս էր աշխարհին, Կասպյան ծովից մինչև Սև ծով անցնող պողպատե երակներով, այլևս չէր վազում։ Բաքվի հսկայական մեքենաները վայր էին թափվել օդը ելած գործարանների փլատակների տակ։ Նավթահորերը արևադարձային անտառների նման դեռ շարունակում էին այրվել։

Կովկասը՝ հրավառ լույսերով թաթախված իր վեհաշուք լեռների բարձունքներից մինչև Հայկական բարձրավանդակի անհանգիստ սահմանները՝ զորակոչի էր հրավիրել իր վիթխարի ուրվականներին և մտել քաոս։

— Այո, քաոս,— ասաց Հերյանը՝ ծուխը ուժով ներս քաշելով։

Երկնքի մեծ մասը թաքնված էր վայր իջած ամպերի հետև։ Ցովը, ափերի մոտ կանաչ, կապարե տեսք էր ընդունել դեպի բացը երկարող նեղլիկ քարափի ծայրին, որի մեծ քարերով շրջապատված հստակ գիծը երկարում էր բավականին հեռու։

Փոթորիկ էր սպասվում։

Հերյանը մտահոգ աչքերով նայեց չորս կողմը, խուզարկեց հեռուները, ուր տարածվում էին անվերջ շարաններով կայմեր, լաստեր, պարաններ, և իր հառաչը խեղդեց։

Իսկական գերեզմանատուն էր։

Մեծ և պզտիկ նավերի, նավաձիգների, առագաստանավերի խմբեր անշարժ կանգնած էին։ Ավելի հեռուն, բացին խարսխած՝ քիթը վեր, փորը չափազանց ուռած, վրայի ներկը տեղ-տեղ թափված՝ բանտարկված կանգնել էր այն նավթատարը, որի վրա Հերյանը նավապետի պաշտոնով տարիներով ճամփորդել էր։

Ամեն անգամ, որ նայում էր «Հյուսիսային աստղին», տրտմության սարսուռ էր զգում իր ամբողջ մարմնի վրա։ Գլխի մեջ հազար ու մի հիշատակներ էին արթնանում, վերհիշում էր անցյալը և հեռավոր նավահանգիստները։

Մնա՞ք բարով ամեն բան, մնա՞ք բարով...

Վարը, ամբարները վաղուց փակել էին իրենց կանաչ դարպասները։ Ապրանք բարձրացնող մեքենաները մեկ բազուկը վեր տնկած անշարժ կանգնել էին։ Ափի շղթաները թաղվել էին լպրծուն ավազի մեջ։ Մեծ պահանոցների շուրջը սունկի նման բուսել էին ամեն կողմից եկած թըշվառ մարդիկ։ Պատահական տնակներ, թիթեղե կտորներով ծածկված տձև շինություններ, ցեխ, աղբ, ժանտ։

Ու դեղնած դեմքով, ծռված վզով, դուրս ընկած աչքերով մի մարդկություն էր վխտում, որի գոյությունը թվում էր անհավատալի։

Մնա՞ք բարով...

Ի՞նչ տարօրինակ բան է կյանքը։ Մարդ ապրում է այնպես, կարծես ամեն ինչ անվերջ է, հավիտենական։ Ապրում է առանց հավատալու մահվան։ Առանց հավատալու այն ուժերին, որոնք աշխարհի չորս կողմից եկած քամիների նման երկնքի մի որոշ ծայրում համախմբվում են, հսկայական հոսանքներ կազմում և կուրորեն հարձակվում խաղաղ պառկած երկրամասերի վրա։ Մարդ այդ չի տեսնում։ Սահում է նախօրոք դասված երկաթգծերի վրայից, թաշկինակը հանում բարև է տալիս լինելության տեսարաններին, մինչ ահա տեսարանները տակնու-

վրա են եղել, երկիրները ցնցվել են, պատռվել, բաց արել խորխորատներ։

Ահա ծովը. մռայլ, պարապ։ Ահա որբացած նավերը և ահա նավապետ Հերյանը, որ այդ վայրկյանին, հրամանատարական կամրջակի վրա գտնվելու տեղ, գտնվում է սատանան գիտի ո՞ւր...

Ամբողջ մի անցյալ, որին տվել ես լավագույն տարիներդ, սև մի գիծ է քաշում, փակում իր շրջանը։ Երեկի դուռը դղրդալով կողպվում է, կյանքը հրում է քեզ և առաջ վազում։ Այն որ ներկա էր՝ ուրախություններով ու մտահոգություններով լցված ճամփորդությունները, Արևմուտքի և Արևելքի հեռավոր նավահանգիստների զվարճությունները, կանայք, մեկնումի նախօրյակին պատահած անսպասելի արկածները, այդ ամենը հանկարծ մտնում է խավարի մեջ և անվերադարձ անհետանում...

Նույնիսկ ծովը։

Ծովը։ Անվերջ տարածվող շրերի վտանգավոր այդ օրորանը, փոթորիկների խենթ խաղը, հողմերի վայող գանգատները... Մանուկ հասակից նա վարժվել էր երկար այդ ճամփորդություններին, անակնկալներին, դժվարություններին։

Ծովը։ Կանաչ, պղտոր աչքերով այդ քույրը։

Անտանելի էր եղել ամիսների այդ սպասումը, այդ անորոշը, մլուկի շարժումով այդ ձանձրույթը։ Եկել հասել էին դեպքեր, որոնց հետ անկարելի էր շափվել։ Կյանքը թաքցրել էր իր երեսը, փոփոխական դիմակներ էր հագել, ապա, խենթացած դարբնի նման մուրճը աջ ու ձախ շարժել և ամեն ինչ փշրել, կոտրտել, վայր թափել։

Պատերազմ, հեղափոխություն, փլուզում։

Ի՞նչ կարող էր անել ինքը։ Նա կյանքից երբեք չէր վախեցել։ Միշտ էլ վստահ քայլերով ճեղքել էր ճանապարհը դժվարությունների միջից, ընդունել էր դժբախտությունները առանց ընկճվելու, դիմադրել էր ճակատագրի հարվածներին, մարդկանց չարությանը և խորամանկությանը։ Ճակատը բաց, բռունցքները պատրաստ, սիրտը տեղը։

...Հիմա ուրախ էր։

Իսկական մարդը պետք է հնարի իր ուժերին համապատասխան դեպքեր։ Ներքին իմաստով լուսավորի իր օրերը։ Մշտապես ծարավ լինի իր ուժերով և ծարավ լինի իր հոգու խորքում երգող կյանքով։ Լինի իր էության ամբողջ զորությունով...

Ձեռքերը գրպանները դրած, քիչ երերող դանդաղ քայլերով նա առաջացավ քարափի երկայնքին և քթի տակ սուլեց։

Այլևս որոշել էր. պետք էր լքել ծովը, պետք էր լքել Դաշենկային։

Դաշենկան... Ճղմված խաղողի գույն վարսերով, քմահաճ, կապույտ աչքերով Դաշենկան։

Հայաստանը, ուր որոշել էր գնալ, մանուկ հասակից չէր տեսել։ Հոր մահից հետո, այլևս բոլորովին որբ, եկել էր Թաթում մի ինչ-որ հեռավոր ազգականի մոտ, որը մի քանի ամիս նրան շարչարելուց հետո, վռնդել էր դուրս։ Դժվարին և չարքաշ կյանքի ընթացքում հեռավոր հայրենիքը հաճախ այցելել էր նրան երազի պես շքեղացած և քաղցր։

Իր ծննդավայրը, լեռները, դաշտերը... Լուսաբացի առաջին սարսուռը՝ հանկարծակի դուրս թափվող ոսկեջրված ճառագայթների հոսանքը, որ թարմ և պայծառ, սահում է երկրի արթնացած մակերեսի վրայից... Ու գյուղը՝ լեռան լանջին կպած, ու տնակը՝ ծեփով ծածկված, և գետակը, որ վշշալով նրա մոտից վազում էր... Նա մանավանդ սիրում էր վերհիշել գետակը, որը բարձունքներից աղմկելով վայր էր թափվում, մասնատված մտնում խոնարհած տանիքների տակ պատսպարված տնակների բակերը, այնտեղ երկար ժամանակ կորչում, ապա, անսպասելի մի տեղից դուրս թափվում, մտնում խախուտ կամրջակի տակ, տարածվում լճակի ձևով և մեկ էլ ուժ առնում, ձայնը գլխին տալիս և վազելով փառաբանում անսահման երեկոն, որը իջնում էր մոտակա լեռներից և օրորվում բլրի վրա կանգնած եկեղեցու հնչող զանգակի հետ...

Այս պատկերները նրա հետ ապրել էին տարիներով, արյուն և մարմին դարձել, իր էության մաս կազմել։

Այն աստիճան, որ նրանց առաջ ուրիշ տպավորությունները նսեմանում էին, մակերեսանում։ Հաճախ, կյանքի դժվարին վայրկյաններին, երբ պետք ուներ վերագտնելու իր իսկությունը, ետ քաշվել դեպի այն հոգեկան բերդը, ուր պիտի զգար պաշտպանված, նա բնազդորեն վերադառնում էր իր մանկության հուշերին և ամուր կանգ առնում լեռներով և գետերով բնակված այդ վայրերում։

— Հայի սրտում երկիրը, հայրենիքը,— ասել էր նրան արտասահմանում հանդիպած մի գաղթական,— միայն անուշ հիշատակ չէ, այլև արյունի հետ շրջող հոգեկանություն, առանց որի աշխատանք, հարստություն, դիրք և փառք դառնում են անիմաստ։ Ամեն անգամ, որ այս հեռուներում մի քիչ կյանք եմ վայելում,— ավելացրել էր նա,— մի հաջողություն եմ ձեռք բերում, ինչպե՞ս ասեմ, ինձ այնպես է թվում, որ մի բանով զրկում եմ, վիրավորում իմ սրտում ապրող երկրի ոգին...

Տարիների ընթացքում այդ պարզ խոսքերը մեծացել էին, խորացել, բարդացել։ Առիթ էին տվել ամեն տեսակ անհանգիստ, երբեմն էլ տանջող երկվության։ Մի անբացատրելի անբավականություն ծարավի նման նրան տանջել էր, տեղից տեղ նետել, մշտական անհանգստության մատ-

նել։ Չէր կարողացել ըմբռնել իսկական պատճառը։ Երկար ճամփորդությունների ընթացքին կարդացել էր շատ գրքեր, հետաքրքրվել էր գիտական և իմաստասիրական հարցերով, աշխատել էր, զվարճացել էր, կյանքի հրապույրը քաղել լեցուն ձեռքերով և, չնայած դրան, ամեն անգամ, որ մնացել էր ինքն իրեն հետ, նրան պատել էր մի խոր պարապություն։ Ամեն ինչ քողարկվել էր, մտել անորոշության մեջ, փոքրացել։ Անխարիսխ նավի նման հոգին թափառել էր լռությունների անափ ծովում։

Այո, պետք էր գտնել սեփական անհատականության միությունը և դիմավորել եկող դեպքերին սրտի և մտքի լարված ուժերով։

Ուրախ էր, որ պետք է մեկնի։

Վերջին այն գիշերը նա անցկացրեց Դաշենկայի հետ։

Ընթրեցին դուրսը։ Այցելեցին պարի և երաժշտության վայրեր։ Նա աշխատեց ուրախ երևալ, երգեց, պարեց։

Դաշենկան հագել էր բաց վարդագույն այն զգեստը, որն այնքան դուր էր գալիս Հերյանին։ Կրծքին կպցրել էր լայն թերթերով ոսկե մի ծաղիկ։ Հարդի գույն մազերը ճակատի վրա ընկնող գանգուրներով լուսավորված էին այնպես, որ կարծես նրանց տակը մի ճրագ լիներ զետեղված։

Հերյանը իր աչքերը նրա վրայից չէր կարողանում պոկել։ Դաշենկան մի քիչ գինի էր խմել և տխրել։ Նրա արդեն երկար թերթերունքները կարծես ավելի էին երկարել, բիբերը լցվել էին անհանգիստ կայծերով և թրջված գեղեցիկ շրթները մնացել էին կես բացված։

— Ի՞նչ պիտի լինի,— ասում էր նա մելամաղձոտ ձայնով,— ի՞նչ պիտի լինի, Արա...

Հերյանը նրա նուրբ, ոլոր ձեռքերը առնում էր իր ափերի մեջ և կամաց սեղմում.

— Սպասի՛ր, մի օր ես քեզ համար կբերեմ քո զգեստին հարմարող վարդագույն կոշիկներ, կբերեմ նուրբ և արբեցուցիչ անուշահոտություններ, որոնք պատրաստվում են Ֆրանսիայում... Սպասիր... Դաշենկա, դեռ կգան լավ օրեր...

Եվ Դաշենկան ժպտում էր բախտավոր ժպիտով։

Նա սիրում էր գնչուական մեղեդիները, որ երաժշտախումբը պատվեր էր ստացել նվագելու։ Նա ցածր ձայնով ընկերակցում էր երգերին և նրա աչքերը լցվում էին արցունքով։ Հերյանը համբուրում էր նրա ձեռքերը և խոստանում հաճելի բաներ։

— Տոն էր, Արա, և մարդիկ եկան, սրտերի լույսերը մարեցին... Շքեղ գինիներ թափվեցին գետին, ծաղիկներ ստնակոխ եղան և ծիծաղի տեղ խուլ աղաղակ բարձրացավ... Գիտե՞ս, երկու եղբայրներից ոչ մի լուր չկա...

— Լուր չկա, որովհետև հաղորդակցություն չկա... Համի՛ր։

Համում էին։ Պարում։ Եվ նա վախենում էր լուսաբացից, որն ահա պիտ գար և փչեր կապույտ այն բոցի վրա, որ վառվել էր իր սրտում։ Պարում էին, նորից և նորից։ Դագարի միջոցին նայում էին և նայում մեկ մեկի աչքերի մեջ։ Դաշենկան գնալով ավելի էր տխրում։

— Ինչո՞ւ... Ես էլ չգիտեմ ինչու... էնպես... ես էլ չգիտեմ...

— Օրերը կանցնեն և կգան ուրիշ օրեր, Դաշենկա... Կտեսնես, երբ ամեն բան անցնի և մարդկանց սրտերում բարձրացած փոթորիկները հանգստանան, ես նորից իմ նավը կտանեմ դեպի արևելք... Դու կգաս, փոքրիկ մի թաշկինակ ձեռքիդ սեղմած, կկանգնես քարափի վրա և տխուր աչքերով կնայես ինձ և փոքրիկ թաշկինակը շարժելով, մնաս բարև կասես... Եվ նավը իր հաստ ձայնով կսուլի, պարանները կքաշվեն, և ես կմեկնեմ, ու ամբողջ ճամփորդության ժամանակ կմտածեմ քո մասին և տխրելով կցանկանամ քեզ... Վերադարձիս, Դաշենկա, կբերեմ քեզ համար մետաքսե և թավշե փարթամ կտորեղեններ, որոնց վրա մեծ ծաղիկներ և տարօրինակ թռչուններ են հյուսված...

Բայց ժամերը անցան, լուսաբացը ճերմակ աչքերը կպցրեց պատուհաններին, լրտեսեց նրանց, և պետք եղավ մեկնել։

Նրանք քայլեցին թև թևի։ Եվ ամբողջ ճանապարհին առանց պատճառի ծիծաղեցին միամիտ, երեխայական ծիծաղով։

Երբ հասան Դաշենկայի տան մոտերը, Հերյանը հանկարծ լռեցավ և կանգ առնելով ասաց՝

— Դաշենկա, սիրտ իմ... Ահ, Դաշենկա-դուշենկա... մինչև հիմա քեզ չէի ասել, կասեմ, բայց չտխրես... Մի քանի ժամից ես կմեկնեմ...

Դաշենկան քարացած կանգնեց և լայն աչքերը հառեց նրա վրա։

— Ճիշտ չէ... Ճիշտ չէ... Ուզում ես ինձ վախեցնել...

— Չէ, չեմ ուզում քեզ վախեցնել... Մեկնելու եմ...

Բացատրեց։

Դաշենկան բողոքեց և սկսեց հեկեկալ։ Արցունքները նրա այտերից վայր գլորվեցին, մի քիչ շպար տանելով, և նրա դեմքը ավելի գժգունեց և ավելի խեղճացավ։

Գլուխը դրեց Հերյանի ուսին և շարունակեց լալ։

— Պիտի վերադառնամ... Դաշենկա, պիտի վերադառնամ...

Այն առավոտ, մի փոքրիկ պայուսակ ձեռքին, նավորդի հնացած գլխարկը մինչև հոնքերը քաշած, վերարկուի օձիքը բարձրացրած՝ Հերյանը մեկնեց Հայաստան։

2

Լեփլեցուն մի գնացք։

Խոնարհ դաշտանկարների ծայրին կանգնած մենակյաց կայարաններ։ Բլուրներ, կովեր, այծեր, գյուղացիներ։

Գնացքի ներսում՝ մեկը մյուսի վրա ընկած մարմիններ, պայուսակներ, արկղեր, տոպրակներ։ Գետինը պառկած կանայք, դիզված իրեղենների կատարին քնած՝ մոմի գույն երեխաներ, կկզած ծերունիներ՝ մազոտ ձեռքերը կրծքների վրա սեղմած, աչքերը լայն բաց արած և դեղնած ատամները դուրս ցցած։

Երբ գնացքը կանգ էր առնում, խառն այդ բազմությունը սկսում էր աղաղակելով շարժվել։ Ամեն մարդ հրմշտակելով և գոռալով ձեռքի կուլան թափահարում էր ուրիշների գլխին և աշխատում իշնել մի քիչ ջուր բերելու համար։ Շոգեմեքենան անդադար սուլում էր, կանայք ճչում էին և երեխաները բարձրաձայն լաց լինում։

Երկու տոպրակների միջև սեղմված, քրտինքը ճակտին, լեղուն չորացած, ուժասպառ Հերյանը հասավ Թիֆլիսի կայարանը և առանց ուրիշ բանի մասին մտածելու հարցուփորձ արեց Հայաստան տանող գնացքի մասին։

— Արմեանսկի պոեզդը պատրաստ կանգնած է, բայց մինչև մեկնելը դեռ ժամանակ կա,— ասաց մի պաշտոնյա։

Երբ նա ոտք դրեց հայկական գնացքի աստիճանների վրա, չափազանց հուզվեց։ Մտավ ներս և տեսնելով, որ դեռ ոչ ոք չկա, մարմինը մեկնեց նստարանի վրա։

Նա պինդ քնած էր, երբ գնացքը շարժվեց։

— Հե՜յ, պարոն, վեր կացեք... Այստեղ ամենքը իջնում են...

— Ինչպե՞ս թե, արդե՞ն...

Աչքերը ճմռեց և նայեց դուրս։

Մութ, ամայություն, անձրև։

— Գնացեք երկաթգծերի ուղղությունով,— ասաց վրացի կոնդուկտորը,— և կգտնեք Երևանի պոեզդը... Այստեղ Սանահինի կայարանն է... սահմանը։

Զարմացավ։ Պայուսակը ձեռքում սեղմած, ուսերը ցրտից տրորելով, նա քայլեց մութի մեջ, ոտքերը գերաններին զարնելով։ Երթևեները թեթևորեն գողում էին։

— Սանահի՞ն,— մտածեց նա,— կարծում էի վանք է... հռչակավոր, հինավուրց մի վանք... Եվ, վերջապես, ո՞ւր է այդ Սանահինը...

Մութ, անձրև։

— Լավ,— ասաց նա ինքն իրեն ուժ տալու համար,— լավ... Ահավասիկ հայրենի երկիրը...

Բայց բավական քայլելուց հետո նա սկսեց մտահոգվել։ Ոչ մի կայարան չէր երևում, չէր երևում և ոչ մի անկյուն, ուր կարելի լիներ անձրևից պատսպարվել։ Իսկ, ըստ վրացու ասածի, պետք էր մի քանի ժամ սպասել։ Մի քանի ժամ սպասել... ո՞ւր...

Հայրենի երկիրը...

Մի քանի անգամ նա ոտքերը մխրճեց թանձր ցեխերի մեջ. քայլեց գետինը զննելով, ուշադրությունով՝ լճացած ջրերի վրայից ցատկելով։ Նրա ոտները բոլորովին թրջվել էին. մրսում էր։ Սիրտը սեղմեց խոր մի հուսահատություն։ Ցուրտ էր, դատարկ, խավար։

Դաշենկան...

Չէ, ավելի լավ էր վերադառնալ։ Ետ վազեց և ապշած կանգ առավ։ Վրացական գնացքը՝ փայլուն, լուսավորված, մաքուր սուլեց ամայության դեմ և արագ հեռացավ։

— Այ քեզ...

Պայուսակը դրավ գետին և վրան նստեց։

— Հէ՛-է-է՛,— գոռաց նա ձայնը քիմքին ուղղելով։

Խոնավ լռություն էր. ոչ մի պատասխան։ Ծխամորճը գրպանից հանեց, լցրեց, վառեց։ Ձեռքերը բոլորեց նրա շուրջը և տաքացրեց։ Չէր հասկանում մի բան. Թիֆլիսի գնացքից ուրիշ մարդիկ էլ էին իջել, ո՞ւր անհետացան։

Աչքերը սկսեցին սովորել մթին։ Հիմա տեսնում էր, որ առաջը բարձր մի բլուր էր ուրվագծվում։ Բարձր, սև, խիստ։ Կարծես ահա պիտի շարժվեր և ամբողջ մեծությունով քայլեր վրադ։ Երևի վերը, կատարին գտնվում էր վանքը։ Մեջտեղը բակ, իսկ բակի շուրջը հաստ պատերով՝ նեղ, կիսամութ խուցեր։ Խցերում աղոտ ճրագների մոտ երկար մորուքներով՝ իրենց քթի ծայրին ծռված ակնոց դրած վանականներ։ Նրանք կարդում էին իրենց դեմքերի գույնն առած մագաղաթե ձեռագիրներ կամ գրում բոցե գրերով խավար պատմություններ։

...Իսկ ո՞ւր է կայարանը։

Ներկա են. ինքը, անձրևը, գիշերով պատած բլուրները և այնտեղ, անորոշ մի տեղում նստած վանականները։ Իսկ կայարանը չկա, Երևան տանող գնացքը բացակա է։

Նորից պայուսակը վերցրեց և քայլեց։ Բավական գնալուց հետո մի լույս նշմարեց։ Վազեց դեպի այդ լույսը։ Երկաթգծերի վրա մենակյաց կանգնած մի վագոն էր։ Ուրախացավ։ Բարձրացավ աստիճանների վրա և դուռը ուժով ծեծեց։ Մի զինվորական պատուհանը վայր իջեցրեց և գլուխը դուրս հանեց։

— Ներողություն, եղբայր, ուզում եմ իմանալ...

Բացատրեց իր դրությունը։

— Դե, այս վագոնը վայենների է, մտնելը արգելվում է,— պատասխանեց զինվորականը։— Եթե այդ կողմից գնաք, մրգավաճառի խանութ կա, ուր կարող եք և սպասել... Եթե նոր եք եկել ուրեմն, պետք է ներողամիտ լինեք... այսպես է, պատերազմի պատճառով կայարանմայարան քանդվել է, և ի՞նչ արած... ուրեմն այսպես...

Հերյանը պարկեշտ և լուրջ այդ զինվորականի դեմքը շատ սիրեց։ Ուզեց ջերմ շնորհակալություններ հայտնել, բայց լեզուն շփոթվեց և անորոշ ինչ-որ բան կմկմալով հեռացավ։

Քայլեց ցույց տված տեղով և կանգ առավ կես քանդված պատերի առաջ։ Փլատակներ, վայր ընկած քարեր, գերաններ, ավերված պատուհաններ, դուրս ընկած դռներ։ Երևի նախկին կայարանն էր։ Մատները դրեց շուրթերին և ուժով սուլեց։ Մի շուն հաչեց։ Մթում մի անորոշ ստվեր շարժվեց։

— Ո՞վ է...

— Մրգավաճառը ո՞ւր է, մրգավաճառը...

Արագ քայլերով մոտեցավ ստվերին։

— Այստեղ է, այստեղ։

Կիսաքանդ պատերի անկանոն ընկած քարերի մեջտեղ նա նշմարեց մի փոս, որը տանում էր գետնահարկի նմանող մի տեղ։ Մեջքը ծռեց և ոտքերով գետինը շոշափելով մտավ ներս։ Խոնավ և կծու հոտ փչեց երեսին։ Կոնաձև թղթի մեջ զետեղված մի կտոր մոմի լույսը նրա աչքերի առաջ պարզեց ամբողջ տեսարանը։ Սև ստեպղինով և խնձորով լցված մի քանի զամբյուղներ։ Նրանց շուրջը պպզած նստած մի քանի ստվերներ։

— Բարի երեկո ձեզ,— բամբ և աշխույժ ձայնով ողջունեց Հերյանը և պայուսակը գետին դնելով, նստեց վրան։

Ստվերները աչքի տակից նայեցին նոր եկողին, լռեցին և հառաչեցին։

— Սա ի՞նչ է, կայարանի սպասարա՞նն է,— կատակեց Հերյանը։

— Երևի պոեզդին եք սպասում,— հարցրեց նրանցից մեկը։

— Հա...

— Պոեզդը վաղուց կանգ է առել, համա դռները չեն բաց անում, չեն ուզում մարդ ներս մտնի...

— Կանգ է առել... Այդ ի՞նչ կարգադրություն է...

— Ի՞նչ իմանամ... Ասում են ամեն ինչ գողանում տանում են...

— Տնաշեն,— անհանգստացավ մի ուրիշ ստվեր,— էլ ինչ մնա՞ց որ տանեն... ամեն ինչ թալանել տարել են...

— Էդ եմ ասում էլի,— շարունակեց առաջինը,— աշխարհը էնպես է փոխվել, էնպես է փոխվել... Թշնամիս չտեսնի... Ձեր հրամանքը ո՞ր կողմերից է գալիս...

— Բաթումից,— պատասխանեց Հերյանը։

— Հը... Լավ քաղաք է...

Ու մի քիչ լռելուց հետո՝

— Հա... Դե որ գալիս եք Բաթումից... կարող եք իմանալ... էդ զահրմարը գալի՞ս է թե...

— Ո՞վ...

— Էն, էլի... Եվրոպան...

— Ո՞վ է իմանում,— ասաց Հերյանը,— ո՞վ է իմանում։ Գլուխը առայժմ խառն է... Չեմ հասկանում մի բան. ինչո՞ւ այս երանելի գնացքը Թիֆլիսից ուղղակի Երևան չի գնում,— հարցրեց նա դառն շեշտով։

— Չի գնում...

Հերյանը մի ստեպղին վերցրեց զամբյուղից և շրխկացնելով կերավ։

Ստվերներից մեկը սկսեց կամացուկ խոմփալ։ Մարդը մոմի վրա փչեց։

— Մոմ չի ճարվում,— բացատրեց նա։

Իր պայուսակի վրա երկար ժամանակ օրորվելուց հետո Հերյանը լսեց շոգեմեքենայի սուլոցը և դուրս վազեց։

Ջարմանքով տեսավ, որ գնացքի առաջ հոծ բազմություն էր հավաքված։ Գյուղացի կանայք, փափախավոր շինականներ, զինվորականներ, երեխաներ։ Որտեղի՞ց էր եկել այդ բազմությունը։ Գրոհ էին տվել դռների վրա և աղաղակելով և կռվելով աշխատում էին ներս մտնել։ Հերյանը հասկացավ, որ եթե չշտապի, կարող է դուրս մնալ։ Պայուսակը ձեռքին նետվեց, ճեղքեց բազմությունը, ետ մղվեց, ծնկների վրա վայր ընկավ, ոտքի ելավ, նորից առաջ նետվեց, հրեց, հրմշտակեց և, ինքն էլ չիմացավ ինչպիսի հրաշքով, իրեն գտավ վագոնի ներսում։

Վագոնի ներսում թանձր խավար էր։

Նետվել էր մի նստարանի վրա, բայց ո՞ւր և ո՞ւմ մոտ, ինքն էլ չգիտեր։

— Եղբայր, այդ ի՞նչ է... լույսերը ե՞րբ պիտի վառվեն,— բողոքեց նա։

— Ի՞նչ է, Չինաստանից եք գալի՞ս... լույս կա, որ վառեն,— հեգնող ձայնով պատասխանեց մեկը։

Հառաչեց։

Նոր եկող ճամփորդները ներս էին մտնում, կույրերի նման պատերը շոշափում, սրան նրան զարնվում, բողոքում, անիծում և անհետանում։ Երևի լեռնցիներ էին։ Զորացած խոտի, այծի կաթով շինված պանրի, ոչխարի հոտ էր գալիս նրանցից։

Գնացքը շարժվելուց հետո Հերյանի հարևաններից մեկն աշխատեց մոմի մի կտոր վառել։ Անկարելի եղավ։ Փշրված պատուհաններից և դռներից քամին ներս էր մտնում և հարյուր բերնով մոմի վրա փչում։ Բայց վառված լուցկիների վայրկենական լույսն էլ բավական էր վագոնների թշվառ վիճակը ցույց տալու համար։ Նստարանների կտավները հանված էին, երկաթե մասերը կմախքի վերածված, վարագույրները դանակի հարվածներով կտոր-կտոր եղած։

Հերյանի աչքերը լայնացան։

Դրսում, գիշերը՝ նա ևս ավերված և դատարկ՝ վազում էր գնացքի ետևից և ոտքերը ուժգին դոփում հողերին։

Դեբեղը շառաչելով խենթանում էր ժայռերի մոտ։ Քամին վայում էր Լոռվա ծառերը թափահարելով։

Հերյանը վառեց ծխամորճը և փայտացած ձեռքերը ոլորեց նրա շուրջը։ Կամաց-կամաց մարմինը ծանրացավ, քաշվեց և քնի ու հոգնածության չդիմանալով, հանձնվեց ցրտին և օրորվող գնացքին։

Սակայն քնել անկարելի էր։ Ընկավ խոր թմրության մեջ։ Ինչ-որ ծանրություն սեղմեց նրա կոպերը, ճնշեց ուսերը և քողարկեց գիտակցությունը։

...Ահավասիկ մի տարածություն՝ դատարկ, անծայր, կանաչ։

Դա՞շտ էր, թե ծով։

Պլլված աստղերով երկնքի տակ ալեկոծվող մի գիշեր։ Բարկացած քամիները վայրագ սուլոցով զարնվում են նրա երեսին, հրում, ուզում նրան վայր նետել։ Մարմինը ձգել է, բռունցքները սեղմել, ոտքերը լայն բացել, որպեսզի կարողանա հավասարակշռությունը պահել՝ ալիքներ ման ածող այդ տարածության վրա։

Ահա նաև մութ կապույտ հորիզոնը, որի ծայրում ճեղքված ամպերի միջից առատ լույսեր են ժայթքում։ Կողմնացույցի սլաքը խենթացած աջ ու ձախ է դառնում։ Ինչ տարօրինակ բան. կարծում էր ալիքների

փրփրող գագաթներ են, մինչ անհամար հոտեր են անցնում։ Տավարի և այծերի վզերից կախված զանգակները զնգզնգում են, շները հաչելով դեսուդեն են վազում և հովիվներն իրենց ցուպերը օդի մեջ խաղացնելով աջ ու ձախ են գնում ոչխարներին առաջ քշելու համար։

Իսկ ի՞նչ է այդ սուլոցը։ Խոպոտ, անդնդային մի սուլոց։ Նավի սուլոց։

— Շուտ, պարանները քաշեցեք...

Պարանները քաշում են, նավը շարժվում է։ Սակայն չի կարողանում առաջանալ, որովհետև առաջը լեռներ են ցցվել։ Ահա հոտերը երերալով հեռանում են։ Ուզում է նրանց ետևից գնալ, տեղից չի կարողանում պոկվել։ Ուզում է կանչել, գոռալ։ Ձայնը խեղդվում է կոկորդում։ Մրրսում է...

Սատանան տանի։ Գլուխը թափահարեց, ուսերը տրորեց։ Երա՞զ է, ի՞նչ է։ Հորանջեց և նորից թմրեց։

Թակ-թակ, թակ-թակ, երգում էր գնացքը։

...Եվ անցնում է հայրենի գյուղի նեղլիկ փողոցով։ Նայում է ու զարմանում։ Ադա, Բերբիվզա գեղը անճանաչելի է դարձել։ Սա ի՞նչ է, քե մատաղ։ Ամեն ինչ շրջվել է, թափվել։ Անկարելի է քայլել։ Խոր ցեխ, այս ու այն կողմ ընկած քարեր, գերաններ։ Ոտքերը թուլանում են, ընկնում ցեխի մեջ, զարնվում քարերին։ Վեր է կենում և ամբողջ մարմնով սարսռում։ Չգիտե ո՞ր կողմը գնալ, չգիտե ի՞նչ անել։ Մի վիշտ փորում է նրա ներսը։ Դողում է։

Նորից նայում է։ Խավար, մի ծանր երկինք կուրծքը դեմ է տվել այս ավերված տեսարանին և ծածկել դիակների նման պառկած տնակները։ Կոպերը ծանրանում են և ցավում։ Քանի նրա քայլերը առաջանում են, այնքան մութը թանձրանում է։ Սկսում է վախ զգալ։ Թեպետ ոտքերը շարունակում են քայլել, սակայն մարմինը այլևս չի զգում։ Ինքը չկա։ Կան միայն աչքերը։ Կան՝ և իրենը չեն...

Նույն այդ վայրկյանին աչքերը գնում կանգ են առնում բոլորովին մի ուրիշ վայրում։ Բիզերտի արաբական սրճարանում հանդիպել է կապիտան Մելնիկովին և նրան պատմել իր գյուղի մասին։

— Պանիմաետե, սիրելի բարեկամ, իբրև թե գնացել էի մեր գյուղը...

Սրճարանի անկյունում արևելյան ինչ-որ սրտաճմլիկ երաժշտություն է համենում։ Այդ երաժշտությունից զզված՝ նա փախչում և վերադառնում է գյուղ։ Ահավասիկ հեռուն, գյուղի գլխավոր ճանապարհի ծայրին, փոքրիկ մի լույս է երերում։ Երևի մեկը նավային փոքրիկ լամպարի լույսով խուզարկում է գիշերը և այս քանդվածությունը։ Հերյանը

ամբողջ ուժերը հավաքելով նետվում է այդ լույսի ուղղությամբ։ Ցատկում է փոսերի վրայից, զարնվում քարերի կույտերին և ընկնում ծընկների վրա։

Դեմը ցցվել է անհավատալի բարձրությամբ մի էակ։ Ուսերը նեղ և անկյունավոր, դեմքը քանդված, մորուքը հերարձակ, աչքերը երկու կտոր վառված ածուխ, շրթները չոր և նեղ։ Ոսկրոտ, կծկված ձեռքում բռնել է երերող լամպարը, որի դողդողուն բոցը դեղին լույս է տարածում և ամեն կողմ ստվերների ամբոխները վեր հանում։ Նրա ձեռքերը լայնանում են և մեծանում։

Հերյանի աչքերը լայն բացվում են և սառչում։ Տարօրինակն այն է, որ դեմը կանգնած մարդը,— այո, տարակույս չկա, մարդը— անծանոթ չէ, նրան տեսել է մի տեղ։ Ո՞ւր է տեսել նրան, ո՞ւր...

Թակ-թակ, թակ-թակ, թակ-թակ...

...Հիշեց, այո, հիշեց։ Կիրակի առավոտները, երբ մորը ձեռքից բռնած գնում էր եկեղեցի, մայրը չոքում էր առաջին սյան մոտ, ճակատը հողին քսում և այդպես մնում։ Ինքն էլ չոքում էր, բայց որովհետև մոր աղոթքը շատ երկար էր տևում և ծնկները սկսում էին ցավել, զգուշորեն նստում էր գետնին, կամաց-կամաց այս ու այն կողմ քաշքշվում, բերանը բաց՝ սրան-նրան նայում, ապա, բոլորովին ձանձրացած պպզուզ էր անում և աչքերը ման ածում պատերից կախված պատկերների վրա։ Մրոտած, աղավաղված ձևերով և տարօրինակ կեցվածքներով մարդիկ և հրեշտակներ էին կանգնած։ Հիմա հիշում էր, ահա այս մարդուն այնտեղ էր տեսել։

Կանգնել է ճիշտ այնպես, ինչպես կանգնած էր պատկերում և աչքերը վառվում են երկու կտոր ածուխի նման։

Ծտևից մրոտած, սևացած ամպեր են իջնում։

— Ի՞նչ ես ուզում ինձանից,— հուզված ձայնով փսփսում է Հերյանը։

— Ոչինչ,— պատասխանում է մարդը,— ոչինչ... Ի՞նչ կարող եմ ուզել... եկել եմ բարի գալուստ ասելու... Գնացիր, կորար, քեզ հանձնեցիր ծովերին և մեր գեղը մոռացար...

Թակ-թակ, թակ-թակ...

Հերյանը ուզում էր պատասխանել, բայց չկարողացավ։ Հուզումի մի մեծ ալիք խեղդում է կոկորդը։ Շրթունքները ձայներից պարպված շարժվում են մեքենաբար, բայց խոսքերը չեն գոյանում։ Մի սուր ցավ ցնցում է նրա ամբողջ մարմինը։ Պատկերի ներքնախոր ամպերը, բո-

լորովին սևացած, քուլա-քուլա իջնում են և գիշերը խորանալով կուլ է տալիս ամեն ինչ։

Երբ արթնացավ, գնացքը կանգնած էր։

Նայեց դուրս. մի կայարան, նավթի լամպարի աղոտ մի լույս։

Վեր թռավ տեղից և գլուխը պատուհանից դուրս հանեց։

Ստվերներ։ Խեղդված ձայներ։ Մոտակա բարձրությունից իջնող ցուրտ քամի։

Նիհար, ահագին բեղերով և կլոր աչքերով մի շինական հսկա տոպրակի ծայրից բռնած քաշում էր և, բռունցքով փափախին զարնելով՝ բողոքում էր։

— Եկել ինձ ասում է... Տո, հերն օրհնած, հալա սպասիր, տե՛ս, թե ինչ կասեմ... Չէ, եկել ի՞նձ է ասում...

— Քեզ եմ ասում, հա, քեզ եմ ասում... Ասում եմ, շուտ արա... պոեզդը խոմ ժամերով այստեղ քեզ չի սպասի,— գոռում էր մեկը կայարանի մյուս ծայրից։

Գյուղացին կանգնեց և աչքերը ուղղելով Հեքյանին՝

— Ախպեր, էս ա երեք ժամ է սպասում եմ... Եթե ձեր պոեզդը ժամանակին չի գալիս, բա ես ինչո՞վ եմ մեղավոր... Էսի՞նց էլ բան. ախպեր ջան, էսենց էլ բան...

— Պոեզդը կգա կամ ոչ, քո գործը չի... դա պետական գործ է... ինչ ասում եմ, դու էդ արա...

— Սա՛ արա, դա՛ արա... Նաղարա...

Գյուղացին բողոքելով և տնքալով վերջապես տոպրակը քաշեց և մտավ վագոն։

Իսկ գնացքը չէր մեկնում։

Անցավ կես ժամ։ Անցավ մի ժամ։ Գնացքը դեռ կանգնած էր։

— Դա ի՞նչ կարգ ու կանոն է... Մինչև ե՞րբ պիտի մնանք այստեղ,— ստենտորյան ձայնով բողոքեց մի ուրիշը։

— Ի՞նչ ասեմ, ես էլ չեմ իմանում,— վշտացած պատասխանեց գյուղացուն հրամաններ տվող պաշտոնյան։— Էդ շան որդի մեքենավարը գնացել է կնոջ մոտ և չի գալիս, էլի...

— Մեքենավարը գնացել է կնոջ մոտ,— ձայնը դեռ ավելի բարձրացնելով բղավեց մյուսը,— գնացել է կնոջը տեսնելու... Եվ սրան էլ ասում են հանրապետություն... Բա, քի մատաղ, սրան էլ ասում են հանրապետություն։

Հայհոյեց։

— Խնդրվում է քաղաքականությունով չզբաղվել... Անում ենք այն, ինչ կարելի է անել ներկա պայմաններում...

Ամոթ է...

Մինչ դրսում շարունակում էին վիճել, Հերյանի վերևում պառկած մարդը երկու բռունցքներով աչքերը ճմռեց, հորանջեց և կես քնոտ ձայնով խորհրդածություններ արեց։

— Մեր երանելի երկրում,— ասաց նա,— կան մարդիկ, որ անպատճառ ուզում են ամեն բանի դեմ բողոքել... կարծես թե դրանով կարող են մի բան փոխել... Հայերը անուղղելի ժողովուրդ են, ապաքանում են ոչինչի համար...

Մի երեխա ճվալով լաց եղավ։ Ամեն ինչ լռեց։ Խշշալով վայր թափվող առվակի ձայն լսվեց։ Այդ ձայնին միացավ ծառերի խուլ խարշափը։ Կայարանապետը թղթերի մի կապոց թևի տակ սեղմած, վեր վար քայլեց, կանգնեց, ուսերը ջղայնորեն տրաբեց, աջ ու ձախ նայեց, ապա նորից քայլեց...

— Ներեցեք,— դիմեց նրան Հերյանը,— արդյոք կարելի չէ՞ մի բաժակ թեյ ստանալ բուֆետում...

— Էս ժամին թե՞յ... Այն էլ էապիսի ժամանակներո՞ւմ... Այսօրվա օրս Ռուսաստանում խնձորի կճեպով են թեյ խմում, թթի ճարվի... Ժամանակնե՛ր...

Քիչ հետո մեքենավարը վազելով ներս եկավ։

— Զանգը տուր... ախպեր, կնիկմարդ հավի խելք ունի... Զանգը տուր... Ասել էի մի քանի ֆունտ մոթալի պանիր ճարի, չէր ճարել... Զանգը տուր։

Ներսից երկար ճերմակ մորուքով, Նոյ նահապետի գեմքով մի մարդ դուրս եկավ և սկսեց զանգը տալ։

— Երրորդ զանգը Երևանի համա-ա-ար...

Այդ զանգահարության պատասխանեց նոր արթնացած երեխաների աղմկալից լացը։

— Գանգատվում են,— ասաց նորից վերևի մարդը,— գանգատվում են, որ գնացքն ուշանում է... Մենք ուղղակի ոչ մի բանից չգոհացող ազգ ենք... Մոռանում ենք, որ մի քանի ամիս առաջ հարյուր վերստ գնալու համար տասը օր էր հարկավոր...

— Նու, էդ մեկը, ներեցեք, իսկի պատճառաբանություն չէ,— բողոքեց դիմացի անկյունում նստած մեկը,— իսկի էլ չէ... Ցարի ժամանակ գնացքները մեկ կամ երկու ժամից ավելի չէին ուշանում... Ա՜խ, աստված իմ, ա՜խ...

— Դա, ուրիշ հարց է...

Գնացքը վազեց։

Դրսում կաթնանման մի լույս արթնացավ։ Ավելի ցրտեց։

Քիչ հետո երկնքի փռած վարդագույն կտավը պատռվեց և հորիզոնը օրոր եկավ ամեն կողմից խուժող լույսերի ծոցում։

Պատուհանի առաջ կանգնած Հերյանը անհագ աչքերով նայեց այդ տեսարանին։ Նայեց տարերքին վարժ, ծովային մարդու աչքերով, հուզված ուշադրությամբ, լարված մտքով։ Ամեն ինչ մեծացավ, դրոշմվեց նրա ուղեղի վրա, նրա ջղերի վրա։

Ահավասիկ պղնձե մի աշխարհ։

Ահավասիկ քարացած մի հսկայություն, որի վրայից կրակ էր վազում, որի վրա լռությունների դիզվածքներ էին բարձրանում, կպչում երկնքին, անհետանում։ Ահավասիկ ցցված գագաթներ, վայր գլորվող անդունդներ, պատռվածքներ։

Այս մեծդիությանմեջ գնացքը թվում էր երեխայական խաղալիք։

Հերյանը բնազդորեն սպասեց շարժման։ Սպասեց, որ ոտքերը երեր գան, երևակայական նավի առաջակայմը աջ ու ձախ ճոճվի, հորիզոնը դուրս հանի իր ցատկատախտակը։ Բայց, չէ, ծով չէր, այլ քար կտրած հսկայական ալիքներ էին, կանգ առած մի շարժում, որի անտես մղանակները թաքնված են հողերի տակ։

Նայեց ապշած և երջանիկ։

— Դա էլ ծովի մյուս երեսն է,— մտածեց նա։— Ուրիշ ավելի գաղտնի արկածներով լցված ծովացում։ Իր սովորած իրականության տարբեր մի ձևը։ Լինելու և նավարկելու ուրիշ մի կերպ։

Ամեն ինչ ձգվում էր դեպի վեր, ամեն ինչ բարձրանում էր։ Եվ Հերյանը վերանալու այդ ձգտումը զգում էր խորապես։ Ոչինչ չէր ճնշում, ոչինչ չէր խեղդում։ Ընդհակառակը, նա պարզ զգում էր այնտեղ, իր էության անբացատրելի խորքում, ինչ-որ զգացում, ինչ-որ ապրում գնալով լայնանում էր, նոր ծնված թևեր պարզում, նոր վառված ճրագի ինչ-որ լույսով լուսավորվում։

Այո, ահավասիկ պղնձե մի աշխարհ։

Հերյանը, ըստ իր սովորության, ուզում էր այդ տպավորությունները ձևավորել, պարզ մտքով ամեն ինչ հասկանալ, պարզ աչքերով տեսնել մտածումները։ Անկարելի բան։ Միտքը խուժում էր ներսը, առանց որ իր գիտակցությունը մասնակցի նրա մշակման։ Միտքը դառնում էր մարմին, էություն։ Նա գալիս էր առանց որոնումի, առանց ճիգի, ձևավորված և պատրաստ, տիրական և լուսավոր, հիմնական և անհրաժեշտ, ինչպես երկիրը, որի առաջից ահա անցնում էր։

Երկիրը կանգնած էր մի և անբաժանելի։ Ընդմիշտ միացած իր տարերքների հետ, հսկայական լռությունով հագված, վսեմ և մերկ։

Կասկած չկար, այդ հողերը սպասում են։ Սպասում են մարդու։

Այդ հողերը ծարավի են մարդու։ Դարերե ի վեր, անհիշատակ ժամանակներից ի վեր նրանք սպասում են ուժեղ, համառ, բազուկները զորեղ մարդու։

Մարդու։ Մարդկանց, մարդկանց...

•

Հափշտակված նայում էր։

Երբեմն-երբեմն գնացքը կանգ էր առնում ամայության մեջ կորած մի կայարանում։ Գալիս էին պարզ, լուրջ, մտածկոտ մարդիկ։ Նրանք քայլում էին դանդաղ և խոսում հանգիստ ձայնով, չուզելով խանգարել առավոտյան խաղաղությունը։

Հերյանին թվում էր, որ ամենքն էլ իր մտերիմներն են։ Կարծես ամենքին ճանաչում էր, ամենքի հետ կապված էր խոր կապերով։

Ժպտում էր. պատասխանում էին ժպիտով։

Ներսը, վագոնում ամեն ոք արթնացել էր։ Ուտում էին։ Յուղոտ ոչխարի մսի, պանրի, ուժեղ գինու բուրումը խառնվում էր լեղի խոսակցություններին։

— Եվ մենք,— լսում էր նա,— միայն կանանց տեսանք... Շան որդիները փախել էին և կանանց թողել այնտեղ։

— Դե հայտնի է...

— Պետք էր տեսնել այդ աղջիկներին... Եղնգի նման դողում էին... Փաթաթվում էին մեր ձիերի վզին, մեր ձեռքերը համբուրում, խնդրում, որ իրենց վնաս չհասցնենք... Մի իսկական թամաշա...

— Իսկ հետո ի՞նչ եղավ...

— Ի՞նչ պիտի լիներ, ոչինչ։ Կանանց ձեռք չտվեցինք։

Պատմում էին, ուտում։

Մոտի պատուհանի առաջ կանգնած, շարժուն և գունաթափ դեմքով մի երիտասարդ աղջիկ նայում էր դուրս և ինքն իրեն համար երգում։ Երբեմն երեսը դարձնում էր ներսի մարդկանց, հոնքերը զարմացած վեր առնում, բերանը ծռում և անտանելի կերպով ծիծաղում։ Ծիծաղում էր անբնական, շինծու ծիծաղով։ Վիզը երկարում էր բարկացած բադի նման, և աչքերը հրավառվում էին արևի տակ ընկած ապակու կտորի պես։

Հերյանը զարմացած նայում էր։

— Պոեզդը թրռռ... պոեզդը թրռռ...

Բազուկները թափահարում էր, ճիգ անում թռչելու։

Տարիքավոր մի մարդ, վշտացած դեմքը երերալով, աղջկան նշաններ էր անում, որ հանգիստ մնա։ Հաղթանդամ դեմքով, տեղ-տեղ դեղնին տվող ճերմակ մազերով մի ծերունի էր։ Առատ և հաստ հոնքերը ծանրորեն վայր էին ընկնում մոխրագույն աչքերի վրա։ Քանդված, ակոսված երեսի մեջտեղից էր առաջանում մեծ, մսոտ մի քիթ, որի շուրջը անկանոն բուսած մազեր էին ոլորվում, խորդուբորդ ընկած այտերը ծածկելով։ Շրթները կրծոտում էր և գլուխը անհամբեր երերում։

— Աղջի, հանգիստ կաց... Աղջի...

Աղջիկը նրան չէր տեսնում։ Անդադար շարժվում էր, ինքն իրեն հետ խոսում, ծիծաղում։

Ծերունին հուզված նայում էր Հերյանին, ձեռքերը բարձրացնում վեր, կծկված մատերը տանում ճակտին, խփում, հառաչում։

— Դեպքերի ժամանակ... էն, մարդասպանները,— փսփսաց նա։

Ապա շարունակեց խոսել հարևանների հետ։

— Պոեզդը թրոռ... պոեզդը թրոռ...

Աղջիկը հուզվում էր, անհանգստանում։ Ո՞վ է իմանում, մտածեց Հերյանը, ինչեր են կատարվում նրա ներսում։ Ահա մի հոգի, որ գտել է իր ուրույն աշխարհը և հեռացել մեր իրականությունից։ Նա այլևս պատկանում է երեսը շրջած հոգեկան մի տիեզերքի, որ մեզ անծանոթ է։ Մի տիեզերք նույնքան իրական, ինչքան մերը և կարող է պատահել, ավելի ճշմարտության մոտ, քան մերը։ Բավական է նայել նրա սեղմած շրթունքներին, նրա փայլփլող աչքերին, նրա նեղլիկ ուսերի վրա գիշերվա նման թափվող վարսերին և ձեռքերին՝ նեղլիկ ու թափանցիկ, նրա ապրումների խորությունը ըմբռնելու համար։

Գնացքը կանգնեց մի նոր կայարանում։ Ծերունին տեղից վեր թռավ, աղջկա ձեռքից բռնեց և քաշեց դուրս։

Ահավասիկ Գյումրին։

Կայարանը լցված էր աղմկալից ամբոխով։ Զինվորներ, ոստիկաններ, տղաներ և աղջիկներ, գյուղացիներ, քաղաքից եկած մարդիկ և կանայք։ Վեր վար էին գնում, ինչպես մի զբոսավայրում։

Բուֆետից, ուր Հերյանը նստել էր, ճարպի, կաշվի և խոհանոցի կծու հոտ էր գալիս։ Բոլոր սեղանները գրավված էին։ Այդ բազմությունը ուտում էր ահավոր ախորժակով։ Գինին և կոնյակը խմում էին թեյի բաժակներով։ Անդադար խորոված ի շշեր էին բերում։ Ծամում էին, ծիծաղում, գոռում։

— Ինչ կայտառ թշվառություն,— մտածեց Հերյանը։

Հետո լսվեցին անդադրում զանգահարումներ։ Շարքով սեղմված զինվորներ անցան գետինը մրճահարելով։ Կտրուկ հրամաններ հնչեցին։

Նրանց ետևից եկան որբերի խմբերը։ Երգում էին։ Չգիտես ում ուղղված կեցցեներ հնչեցին։ Ծափահարեցին։ Օդը լցվեց բացականչություններով, ողջույններով, մնաս բարևներով։

Վերջապես նոր զանգահարումներից, սուլոցներից, կանչերից հետո վագոնները մի վայրկյան ետ մղվեցին, զրնգալով բախվեցին մեկը մյուսին, շոգեմեքենան ահագին քանակությամբ շոգի դուրս նետեց, և մինչ ամբոխը ոգևորված աղմկում էր, օդում հարյուրավոր թաշկինակներ էին երերում և անհամար պառավ կանայք իրենց ավերված աչքերի արցունքները սրբում էին, գնացքը տնքալով առաջ շարժվեց և կուրծքը տվեց մի նոր անապատի։

Այդ եռուզեռին հաջորդեց թխաթույր պարապություն։

Առաջին վագոնից երգի ձայներ լսվեցին։ Բոլոր պատուհանները լցվեցին դուրս նայողներով։

Գնացքը անցնում էր մեծ, քառակուսի, զորանոցների տեսք ունեցող շենքերի կողքով։ Մռայլ, ծանր, խիստ շենքեր։

— Որբերի քաղաքը,— ասաց Հերյանի մոտ կանգնած մի երիտասարդ։— Քանի-քանի հազարներ... Էս շենքերում ռուս կոզակներ էին ապրում... Հիմա լցրել են տղա և աղջիկ որբերով... Ամերիկյան օգնության գործ... Առավոտները աղոթք են անում և մարմնամարզություն, հետո աղոթք են անում և ուտում, հետո նորից աղոթք են անում և էլ չեմ իմանում ինչ... այդպես, ամբողջ օրը...

— Շա՞տ շատ են,— հարցրեց Հերյանը։

— Ո՞վ կարող է նրանց թիվը իմանալ։ Անհամար։ Ամեն տեղ միայն որբ ենք տեսնում։ Էստեղ, քաղաքի փողոցներում, գյուղերում, մասնավոր տներում, ճանապարհների վրա... Մորեխի նման... մի ահավոր բան...

Պարզ երևում էր բակերում խաղացող երեխաների բազմությունը։ Ամեն ոք այն կողմն էր նայում։

— Ի՜նչ օրի հասանք, ի՜նչ օրի հասանք,— բացականչեց մորուքավոր մի մարդ, ձեռքերը երկինք բարձրացնելով։

Մի պառավ կին բոունցքը խփեց կրծքին և անհանգստացավ։ Առաջին վագոնից այլևս երգի ձայներ չէին լսվում։

Եվ ահա եկավ անապատը։ Պատուհանները դատարկվեցին։

Հերյանը մնաց կանգնած։

Հեռվում, թառամած արծաթի արտացոլումներով մի գետ, մի մռայլ բլուր հրմշտկելով վիզը վեր բարձրացրեց, հիվանդ կատվի նման սողոսկեց, ապա անհետացավ կույտ-կույտ ցցված ավերակների ետևում։

— Անին, Անին,— գոռում էին ներսից։

Այդ նվիրական անունը Հերյանի գլխի մեջ մի վայրկյան երգեց։ Պատմության մագաղաթե էջը սարսռալով բացվեց և խոսեց նրա սրտին։ Անին, հայոց փառքերի հեքիաթային վայրը, հարյուրավոր եկեղեցիների, փարթամ պալատների և անառիկ ամրոցների մայրաքաղաքը։

Հիմա դարերի ատամների տակ կրծոտված դժբախտ մի աստվածություն։

Դեղնած, մոխրացած, մեռած մի երկիր։ Հրավառ արևի եղունգները ճանկոտում էին այդ տարածությունը։ Ոչ մի խրճիթ, ոչ մի ծառ, ոչ մի կենդանի մարդ։

Հերյանը տխրած աչքերը շրջեց չորս կողմը. նայեց անապատին, նայեց մարդկանց։ Ի՞նչ ավերածություն...

— Ջուր, ջուր,— ասաց մեկը ներսից։

— Ջուր, ջուր,— կրկնեցին ուրիշները։

Հերյանը ետ նայեց։

— Բանը նրանումն է,— ասաց մեկը նրան մոտենալով,— բանը նրանումն է, որ երկիրը ծարավ է... Ամբողջ հարցը հենց դրանում է. երկիրը ծարավ է... այս հողերը ջրել, կյանք տալ նրանց, թաքնված անսպառ հարստությունները դուրս հրավիրել, այդ է մեզ պետք, այդ... Եթե լավ մտածենք, այդ դժբախտ հողերը ճիշտ ու ճիշտ նման են մեր ազգին... Կարծես բնությունը իր հուշատետրում ամեն ինչ արձանագրել է... Նույն ճակատագիրը, նույն բախտը... Մի լավ նայեք. այդ հողերը, ինչպես նաև մեր ազգը տառապում են նույն բանի համար, տառապում են, որ չեն կարողանում տալ այն՝ ինչ կարող են տալ...

— Այո՛,— ջերմ շեշտով համաձայնվեց Հերյանը,— այո՛, այդպես է...

— Ահա քանի-քանի դարեր այս երկիրը սպասում է, ահա քանի-քանի դարեր այս ժողովուրդը սպասում է... Երբ ես դար եմ ասում, դուք հասկացեք տառապանք, թշվառություն, մարտիրոսություն... այնպես չէ՞...

— Այնպես է։

— Հիմա չեմ հասկանում մի բան. չեմ հասկանում թե ինչո՞ւ մեզ հանգիստ չեն թողնում. չեմ հասկանում ի՞նչ են ուզում մեզանից... Ագահությո՞ւն. բայց ագահություն ինչի՞ համար... Մեր երկրում նավթ չկա, ոսկի չկա, արծաթի հանքեր չկան։ Քաղաքները քարուքանդ են, գեղերը կես ավերված... Եթե մեզ հարց տան, ի՞նչ է Հայաստանը, կպատասխանեինք՝ քար։ Ճշմարտությունը դա է, Հայաստանը քար է։ Որտեղ ոտք դնես՝ քար է զրնգում։ Ամեն կողմ, ամեն տեղ։ Լեռներ, ժայռեր,

լեռներ, ժայռեր։ Այծերը երկու հարյուր արշին վեր պետք է բարձրանան, քարերի միջից երկու խամրած խոտ պոկելու համար։ Եվ եթե մարդ համառություն չունի և չունի այն, որ անվանում ենք հայրենիքի սեր, այստեղ չի կարող ապրել։ Այստեղ ապրելու համար սեր պետք է, կրակ պետք է, եզան ճակատով խնություն պետք է... Քար է, չէ՞, պետք է մաքառել, պետք է բազուկների, ոտքերի, ամբողջ լարված մարմնի դնդերները դեմ տալ և պետք է ճակատից քրտինք վար թափելով տքնել և չարչարվել։ Վերջապես... եղբայր, այս քարերը մենք սիրում ենք, դարեր կապվել ենք նրանց հետ և չենք ուզում բաժանվել... պետք ունենք նրանց և նրանք էլ պետք ունեն մեզ... այնպես չէ՞... Լավ։ Եթե այդպես է, ախր, ինչո՞ւ մեզ հանգիստ չեն թողնում, ինչո՞ւ ուզում են մեր ձեռքից այդ քարերը խլել... Ուղղակի չեմ հասկանում...

Գլուխը խոնարհեց, լռեց։ Ապա հուզված Հերյանի վրա հառելով.

— Դուք հասկանո՞ւմ եք...

— Չէ, ես էլ չեմ հասկանում։

— Ասում են Հայաստան և անցնում գնում... Երգում են, ոտանավորով խոսում, Վենետիկի կղզու կեղծ գրաբարը խառնում աշխարհաբարին... Չեն մտածում, որ այդ անունը, Հայաստան անունը շատ ծանր բեռ է... շատ, շատ... Իսկ հայ լինե՞լը՝ չարքաշ, քարտաշ, դժվարին մի վիճակ... Հայ լինելը, պարոն ջան, նշանակում է գործ ունենալ ժայռերի, քամիների, ցրտի, ձյունի հետ, նաև մետաղի նման հալվող արևի հետ... Զարմանալի է, մինչ ուրիշ երկիրներ կերակրում են իրենց վրա ապրող ժողովուրդներին, այստեղ հայ ժողովուրդը պետք է կերակրի իր երկրին... Գլուխ ծռել և բարձր բուսած խոտը քաղել, ձեռքը վեր բարձրացնել և պատրաստ խնձորը պոկել, այդպիսի բան չկա Հայաստանում... Մինչև ծառը ծաղկի, պետք է տքնել, քրտնել, չարչարվել, և երբ ծաղկեց մեծացավ, նորից պետք է նրան խնամել, ամառվա չորությունից և ձմեռվա ցրտից պաշտպանել... Այդ պայմաններում, ի՞նչ են ուզում մեզանից, ուղղակի չեմ հասկանում...

Ձեռքը արագ-արագ քսեց հուզումից կարմրած ճակատին։

— Ոչինչ, շուտով չարչարանքները կվերջանան,— միջամտեց խնամված բեղերով և միամիտ աչքերով մի երիտասարդ սպա։— Մեծ պետությունները կորոշեն և մեր բարգավաճ հողերը ետ կստանանք... Մշո դաշտի, Վասպուրականի ազատագրումից շատ բան է կախված...

— Հը՞, տեսնենք,— հոռետես շեշտով միջամտեց մի ուրիշը։— Քանի դեռ մեր արյան պետք ունեին, խոստանում էին... Առաջին անգամ չէ, որ մեծ պետությունները խաբում են մեզ...

Ներկանները միաձայն բողոքեցին։ Հայերը մեկ միլիոն զոհ էին տվել, կռվել էին բոլոր ճակատների վրա, Վիլսոնը խոստացել էր... Այլևս պատվի հարց էր Ֆրանսիայի և Անգլիայի համար։

— Թող այդպես լինի,— հանգստացավ հոռևաեսը,— թող այդպես լինի... Այնքան բան ենք տեսել և այնքան անճշմարտություն, դավաճանություն...

Լռեցին։ Գնացքը հանկարծ խելահույզ արագությամբ նետվեց առաջ, թեքվեց աջ, անվերջանալի մի սուլոց արձակեց և մտավ Սարդարաբադ։ Շատ չանցած կանգ առավ։

— Մեքենան փոխում են,— հայտարարեց մի պաշտոնյա։

Հերյանը վայր իջավ, երկաթգծերի մոտից քայլեց, մի անորոշ շենքի շուրջ պտույտ եկավ, բարձրացավ մի հողակույտի վրա և մնաց հափշտակված։ Քրքմագույն լայն տարածություն, որը ծանր թմրության տակ ճնշված նմանվում էր հինայով ներկված, լուսավորությունով այրվող մի բևեռի։ Օդը թրթռում էր, բյուրեղե կայծերի վրա ցատկռտելով։ Այդ տեսարանը լվացված էր ճերմակ խաղողի հյութով և լռությունը այնքան խոր էր, որ կարծես հնչում էր։

Եվ ահա, խորությունով լցված և դեղին մանգաղներով հնձված այդ լուսավորության ծայրին՝ բորոգանների նվագախմբի նման պայթող մի տեսիլք՝ Արարատը։ Տիրական և վսեմ այդ մեծությունը իշխում էր ամբողջ դաշտի, ամբողջ երկրի, ամբողջ երկնքի վրա։

Հերյանը երկար ժամանակ մնաց անշարժ, ենթարկվեց այդ տեսիլքին, ինչպես մարդ ենթարկվում է մեծ հոգևկան ուժերին, որոնք լույսի և հավատի ակոսներ են բաց անում մեր ներաշխարհում։

Գնացքը շմեկնեց։ Սարդարաբադից քիչ հեռու երկաթուղագծերը պայթեցրել էին...

— Ինչքան ժամանակ կմնանք այստեղ,— հարցրեց Հերյանը։

— Ո՞վ է իմանում...— պատասխանեց երկաթուղագծի պաշտոնյան։— Գուցե մի օր... գուցեև երկու...

Ուղևորները գիշերեցին կայարանում։

Մութը ցրվում էր, երբ սև ամպեր կուտակվեցին Հայաստանի վրա...

Կայարանում, քամու արագությամբ, լուր էր շրջում թուրքական բանակի շարժումների մասին...

Երրորդ օրն էր... և գնացքը մնում էր տեղում։ Ոչ ոք ոչինչ չէր իմանում...

Ուղևորներից շատերը ճանապարհը շարունակեցին սայլերով...

Հերյանը որոշեց ամեն գնով հասնել Երևան...

Հինգերորդ օրը լուսաբացին խումբ ընկավ կայարանում սպասող ուղևորների մեջ։

Հեռվից թնդանոթի խուլ ձայներ լսվեցին։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Հերյանը։

— Բա, չեք իմանում, կռիվ է... Թուրքերը փորձում են նվաճել Արարատյան դաշտը...

Մի խումբ զինված մարդիկ մոտեցան կայարանին։

— Շատերը պնդում էին, որ վճռական ճակատամարտը մղվի Սևանում,— միջամտեց մի ուրիշը,— սակայն ժողովուրդը չուզեց, չուզեց, որ մեր սուրբ դաշտը պղծվի, և ահա երեք ժամ է կռվում ենք...

— Ինչ եք ասում,— զարմացավ Հերյանը,— մենք ոչինչ չենք իմանում։

— Դե, պարոն ջան, չգիտեք, իմացեք, Հայաստան երկիրը լիքն է անակնկալներով։

— Ինչ եք կանգնել այստեղ,— ասաց Հերյանը,— գնանք, մենք էլ մի բանով օգնենք կռվողներին։

Եվ Հերյանը խմբի հետ առաջացավ դեպի ճակատ։

3

Հերյանը անհամբեր շարժումով ծխամորճը փնտրեց և չգտավ։ Նորից քայլեց։ Երբ բավականին առաջացավ, տեսավ, որ փոքրիկ թմբի հետև ձիեր և կառքեր էին կանգնած։ Մի քանի զինվորներ զբաղված էին ինչ-որ աշխատանքով։

— Բարև, տղերք ջան,— ասաց նա։

Զինվորները ուշադրություն չդարձրեցին նրան։

Հերյանը մոտեցավ սպային, որը միջահասակ, թուխ, պնդակազմ մի տղա էր։ Չգիտես ինչու հանկարծ հուզվեց և չիմացավ ինչ ասել։ Սպայի մոտ գետնի վրա երկարած մի զինվորական հեռախոսի լսողակները ականջներին, մատիտը և տետրակը ձեռքին՝ լսում էր։

— Այստեղ եմ,— ասում էր նա,— այստեղ եմ... Հա, արդը պատրաստ է... Ի՞նչ է... Հը... Շատ լավ, շատ լավ...

Հերյանը մնաց կանգնած։ Նա միանգամայն զգաց, որ ինքն այստեղ ավելորդ է... և չիմացավ ինչ անել։ Սպան, երևի, զգաց նույն բանը. մի քանի անգամ զարմացած աչքերը հառեց նրա վրա, ապա, զբաղված ուրիշ բանով, այլևս ոչ մի ուշադրություն չդարձրեց նրան։

Հերյանը ուզել էր մոսենալ կովի դաշտին, որովհետև, հազիվ լսել էր հեռվից որոտացող թնդանոթների ձայնը, մի մեծ անհանգստություն բռնել էր նրան և մտածել, որ ինքն էլ մի բանով կարող է օգտակար լինել։

Մինչ ահա՝ մնացել էր շվարած և անհարմար դրության մեջ։

— Ասացեք, խնդրեմ,— դիմեց նա սպային,— ո՞ր կողմն են Կարմիր Խաչի խմբերը...

Այդ միտքը հանկարծակի եկավ։

Սպան մատով ցույց տվեց բլրան աջ կողմը։

— Առաջին խմբերը այնտեղ պետք է լինեն,— ասաց նա,— մյուսները թիկունքում են, գյուղում։ Ի՞նչ է, ուզում եք գնա՞լ...

— Հա, առաջին խմբի մոտ...

— Վտանգավոր է... եթե հատուկ գործ չունեք...

Հերյանը քայլեց դեպի ցույց տված կողմը։

Այդ գաղափարը լուսավորեց նրան և նա իրեն զգաց բոլորովին հանգստացած։ Քայլերը վստահ էին և սիրտը անտարբեր։ Սպան հիշեցրել էր նրան վտանգի մասին։ Անշուշտ, ամեն վայրկյան կարող էր մի կույր ռումբի զոհ գնալ։ Մարմնի կտորներ և հող։ Այդ մտածումը չհուզեց նրան։ Ընդհակառակը, շուրջը կատարվող դրաման թվում էր հեռավոր պատմություն, լսված մի բան, որին ինքը անձամբ մասնակից չէր։

Ինչ որ իրական էր, դա էլ ցուրտն էր։ Ոտքերի մատները սառել էին։ Կանգնեց և սկսեց ոտքերը ուժով խփել գետնին։ Բազուկները ճոճեց։ Քայլեց։

Հարյուր քայլ չանցած, ականջների մոտից շվալով գնդակներ անցան։ Գլուխը բնազդաբար վար առավ։

Նորից ոտքերը ուժով խփեց գետնին և ճանապարհը շարունակեց։ Ինչ հիմար բան էր, որ մոռացել էր ծխամորճը...

Դիմացի բլրակի կողմը, երկու հարյուր քայլ հեռու մի ռումբ պայթեց։ Հողի, ացետիլենի և քացախի հոտ տարածվեց։ Ինքն էլ գնում էր այդ ուղղությամբ։ Հիմա ի՞նչ աներ՝ շարունակե՞ր։ Անորոշության մեջ ընկավ։ Կանգ առավ։ Նայեց ետ, կառքերը և ձիերը տեղափոխվում էին ուրիշ տեղ։

Այդ վայրկյանին, մինչ նա նայում էր ետ, աղաղակելով պայթեց մի ուրիշ ռումբ։ Ու մեկը մյուսի հետևից մի քանի ուրիշներ։ Պառկեց գետնի վրա, գլուխն առավ ձեռքերի մեջ և այդպես մնաց։

Երբ գլուխը բարձրացրեց, տեսավ որ ձիերից երկուսը տոպրակը իրենց վզից կախ ամբողջ ուժով վազում էին։ Հասկացավ, որ այն կողմը

մի բան է պատահել։ Շրջվեց, ուշադրությամբ նայեց. զինվորներից մի քանի հոգի վազելով հեռանում էին։ Իսկ ո՞ւր էին մյուսները։ Ուզեց բարձրանալ, չկարողացավ։ Ի՞նչ է, ինքն էլ վիրավորվա՞ծ էր։ Ձեռքերը շարժեց, ոտքերով աքացի տվեց. չէ, ո՛չ մի ցավ չէր զգում։ Ուժ արեց, կանգնեց։

Ջիմացավ, ո՛ր կողմը ուղղի քայլերը։

Երբ քայլեց, գետինը նորից ցնցվեց։ Ամեն ինչ սկսեց ոռնալ և պատռվել։ Նորից պառկեց։ Կարծես, հսկայական մի երկրաշարժ աշխարհը տակնուվրա էր անում։ Օդը լցվել էր գոռում գոչյունով։ Հողերը, քարերը վեր էին ցատկում։ Գետինը ծխում էր։

Կուչ եկավ և այդպես մնաց։

Այդ վայրկյանին, ինքն էլ լավ չէր իմանում, թե ինչ է զգում։ Աշխատում էր ինչքան կարելի է տափականալ, միանալ հողին, աներևութանալ։

Պառկած տեղից մի քանի քայլ հեռու, փոքրիկ մենակյաց մի տունկ՝ մերկ ճյուղերը վեր տնկած, ամբողջ մարմնով դողում էր։ Ուշքը կենտրոնացրեց այդ թշվառ տնկի վրա։ Իրեն զգաց նրա հետ բախտակից. ինքը ևս, նրա նման կպել էր հողին և տեղից չէր կարողանում շարժվել։ Ամբողջ բույսի անել վիճակը և սարսռալով վշտացավ նրա ճյուղերի հետ։ Ահավոր այդ մենակությունը, վտանգից այդ փախչել չկարողանալը... Զգաց տնկի մեջ մահ եկող սարսափի ներուժությունը, նրա արմատների ողբը, նրա երակների մեջ սառած վախը։

Վերը, երկինքը հանգիստ էր, անտարբեր, խաղաղ։

Ինչքա՞ն ժամանակ մնաց այդպես, չէր հիշում։ Նկատեց, որ այլևս չէին զարնում բլրի այն կողմը. ռումբերը պայթում էին ավելի հեռուն, դաշտի հյուսիսային ուղղությամբ։ Այս մասում հողերը՝ տեղ-տեղ քանդված, հանկարծ մրափել էին։ Կարծես ոչինչ չէր պատահել։ Միայն սուր՝ ամառվա տոթին բացված աղբանոցի հոտ էր գալիս։

Ուրախացավ։ Ուրախացավ տնկի համար և իրեն համար։ Ինչ հիմարություն էր, գալ այստեղ ընկնել։ Ասել էին, զգուշացրել էին։ Ինչևէ, հիմա պետք է այդ դրությունից մի կերպ դուրս գալ։

Վեր կացավ և արագ, գրեթե վազելով, քայլեց։

Առաջին խրամատները։

Հայկական հրետանին հանգիստ չէր առնում։ Գնդացիրները անդադար կրակում էին։

— Դուք ի՞նչ եք անում այստեղ... Հեռացեք, անմիջապես հեռացեք...

— Կարմիր Խաչը...

— Այն կողմը...

...Ջենքի բեկորներ, զգեստների պատռված կտորներ, թիթեղե արկղներ, կողմը թեքված հրետանու անանիվ կառքեր, ռումբեր, դատարկված փամփուշտներ, ձիերի դիակներ...

Հերյանի ոտքը կպավ մի դիակի և նա ետ քաշվեց։ Մեծ, հաղթանդամ մի տղա էր՝ բազուկները լայն բացված, սառած աչքերը դեպի երկինք տնկած։

Մի պատգարակ բռնած երկու զինվոր գալիս էին այս կողմ։ Հերյանը վազեց նրանց կողմը։

— Մենք էլ ենք այնտեղ գնում... Առաջին պունկտը այնտեղ է...

Քանդված եկեղեցու դեռ կանգնած հաստ պատերի ետև, նա, վերջապես գտավ բժշկական առաջին կենտրոնը։

Վիրավորվածները, շարքով պառկած ուղղակի գետնի վրա, սպասում էին իրենց հերթին։ Հերյանը ուշադրությամբ նայեց։ Ոմանք լուռ և անշարժ էին, ինչպես մեռելներ։ Ուրիշներ խոր տնքոցներ էին արձակում և իրենց շրթները խածում։ Շատերը գանգատվում էին, մղկտում, բայց այնպիսի հեռավոր ձայնով, որ կարծես այդ ձայները իրենց չէին պատկանում, այլ գալիս էին մեքենաբար, անկյանք մարմինների ներսից։ Նրանց վրա ոչ ոք առանձին ուշադրություն չէր դարձնում. ամենքը ասստիկ զբաղված էին։

Եկեղեցու նախկին խորանի վրա բժշկական գործողությունների սեղան էր սարքված։ Վարը, պատահական բարձրությունների վրա, հարմարեցրել էին երկու ուրիշ սեղաններ։

Դիակի, փչացած մսի և դեղորայքի անտանելի հոտ էր տիրում։ Հերյանի գլուխը պտույտ եկավ և նա ստիպված եղավ ուժ անել, այդ մթնոլորտին դիմանալու համար։

Իր վրա ոչ ոք չնայեց։ Ժամանակ չունեին։ Սեղանների վրա անդադրում գործողություն էին կատարում։ Հազիվ մեկի գործը վերջացրած, պատգարակների վրայից անմիջապես բարձրացնում էին մի ուրիշ վիրավոր։

Այդ ամենը կատարվում էր խոր, մեքենական լռության մեջ։ Հոգնած, սփրթնած երեսներով բժիշկների արյունած ձեռքերի վրա մի դույլից ջուր էին թափում և նրանց բերանների մեջ վառված ծխախոտ դնում։ Նրանք մի քանի անգամ քաշում էին, նետում և արագ վերադառնում գործի։

Ամենից շատ զբաղվածները ճերմակ հագած մի քանի կանայք էին։ Անդադար պտույտ էին գալիս բժիշկների շուրջը, գործիքները եփում,

վերքերը կապում, շտապ-շտապ՝ կեր որոնող թռչունների նման, աջ ու ձախ վազում և նորից գնում իրենց տեղը։

Հերյանը զարմացած նայեց։ Մի վայրկյան նրան այնպես թվաց, որ դժնդակ երազ է տեսնում։ Դժգույն դեմքով, ճերմակ հագած մայրապետներ արյունալի պատարագներ էին մատուցանում շար և ոխերիմ աստվածներին։ (Հինավուրց խորանի վրա երկարած մարդկային շարշարված այդ մարմինները արդյոք ահավոր զոհաբերություններ չէի՞ն և նրանց շուրջը պտույտ եկող լուսակյաց այդ մարդկանց և, կանանց շարժումները մաս չէի՞ն կազմում խորհրդավոր այն արարողության, որի գաղտնիքը անըմբռնելի էր)...

Նոր վիրավորներ էին բերում։

Ամեն կողմ յոդոֆորմ էին սրսկում։ Պատերի ետև, խուլ ռանոցով ռումբեր էին պայթում։ Գետնին պառկած վիրավորները մղկտում էին։

— Ջո՜ւր, ջո՜ւր,— չորացած շրթները շարժելով խնդրում էին շատերը։

Ոմանք տնքում էին, ոմանք խլրտում։

Լավ, հիմա ի՞նչ պետք էր անել... Այդ բոպեին Հերյանի մոտից շտապ քայլերով մեկը անցավ։ Հերյանը վազեց նրա հետևից։

— Ներողություն,— ասաց,— ես բոլորովին պատահմամբ ընկել եմ այստեղ... Պիտի ուզեի մի բանով...

Մարդը, որ երևի բժիշկ էր, կարճատես աչքերը հառեց նրա վրա և ձեռքերը վեր բարձրացրեց։

— Ուզում եք օգտակար լինե՞լ... Գործ շատ։ Տեսնում եք, չէ...

— Ասացեք, ի՞նչ պետք է անեմ։

— Ամենից լավը կովի դաշտերից վիրավորներ բերելն է... Եթե չեք վախենում, գնացեք մյուսների հետ և լծվեցեք այդ գործին... Միայն թե մեռել չբերեք... Ժամանակի կորուստ է. պետք է փրկել նրանց, որոնց դեռ կարելի է փրկել...

— Շատ լավ. պատրաստ եմ...

— Ավետիս,— կանչեց նա փոքրահասակ, կլոր դեմքով մի զինվորի,— այս պարոնը ուզում է աշխատել... Ուղարկիր դաշտ մյուսների հետ վիրավորներ բերելու։

— Շատ լավ, բժիշկ... Եկեք ինձ հետ...

Զինվորը, որի հետ Հերյանը գնում էր, լեցուն թուշերով, մազոտ և կայտառ մի տղա էր։ Ձախ ձեռքի երկու մատները կտրված էին և այդ պատճառով էլ հատկացված էր Կարմիր Խաչին։

— Այնտեղից ի՞նչ լուր,— հարցրեց Հերյանը, ցույց տալով կռվի գաշտը։

— Մերոնք խփում են և, առավոտից ի վեր, թուրքերը բավականին ետ քաշվեցին...— պատասխանեց զինվորը։— Միայն թե, մեռած և վիրավորված շատ կա...

— Բժիշկները քիչ են,— ասաց Հերյանը, քիչ լռելուց հետո։

— Հա... Միայն մեր պունկտը չի, ուրիշ պունկտեր էլ կան... Ղասաբի նման աշխատում են. թև, ոտք, ձեռք... կտրում են, հա կտրում... Ես նրանց ինչ ասեմ...

Եվ զինվորը բարկացած՝ աչքերը հառեց թշնամու ուղղությամբ։

— Գալու ժամանակ,— ասաց Հերյանը,— ռումբեր էին ընկնում... Ինձ այնպես թվաց, որ մեկը ընկավ գումակի վրա. գուցե վիրավորներ կան... Գնանք նայենք...

— Ո՞ր կողմը...

— Ահա այնտեղ...

— Գնանք։

Երբ հասան Հերյանի ցույց տված վայրը, փշրված կառքեր տեսան և ձիերի դիակ։ Ամեն կողմ ուշադրությամբ նայեցին։

— Մեռած է,— ասաց զինվորը մի մարմին շուռ տալով։

Հեռախոսող տղան էր. լսողակները դեռ ականջի վրա...

— Կառքերի տակը պետք է նայել...

Մի կառքի տակ երկարած պառկած էր երիտասարդ սպան։ Ձեռքերը և ճակատը արյունով ծածկված էին. երեսը մեղրամոմի գույն էր առել. աչքերը բաց էին և անշարժ։

Հերյանը չոքեց և ձեռքը կպցրեց նրա ձեռքին։

— Տաք է երևում,— ուրախացած ասաց նա։

— Ուշաթափված է... Հա, այնպես է երևում... ապրում է...

Մարմինը կամաց բարձրացրին և դրին պատգարակի վրա։ Հազիվ մի քանի քայլ առաջացան, սպայի աչքերը շարժվեցին և կրծքից խուլ մի տնքոց դուրս եկավ։

— Կանգնիր,— ասաց զինվորը,— շունչը տվեց...

Պատգարակը վայր դրեցին և նա երկու մատով շոշափեց սպայի քիթը։

Ձարկերակը քննեց. մարմինը կամաց թոթվեց։

— Հա, էլի... ավելորդ է...

Սպայի դիակը վար դրին։

— Մի քանի ժամ սրանից առաջ,— մտածեց Հերյանը,— այստեղ

կանգնած էր նա, լուրջ, մտազբաղ, ինքը իր անձի տերը... Հիմա՝ թե վար դիր, ավելորդ է...

Խոր մի ընդվզում ցնցեց նրան։

— Բա մեռելները այսպես պիտի մնա՞ն... այսպես բաց, անտե՞ր...

Ձայնը դող եկավ և ձեռքը դանակի նման կտրեց օդը։ Զինվորը հանգիստ նայեց նրա աչքերի մեջ և ոչինչ չասաց։

— Բա այդպես պիտի մնա՞ն,— կրկնեց Հերյանը ավելի մեղմ ձայնով, կարծես ուզում էր մյուսի առաջ արդարանալ։

— Հարցը պարզ է,— պատասխանեց զինվորը սառը ձայնով։— Մեռելները կարող են սպասել, իսկ մյուսները չեն կարող... Պարզ է, չէ՞...

— Ճիշտ է։

— Գնանք։

...Այն օրը Սարդարաբադը գոռաց և վայեց։

Հայ ժողովրդի բոլոր խավերը վիթխարի և վճռական թափով որոշել էին թշնամուն ետ մղել։

Մտան խրամատների մեջ։ Պատռած, եռացող վերքերով մարմիններ կրեցին։ Աշխատանքը այնքան շատ էր, որ Հերյանը ուժասպառ էր եղել, ծնկները դողում էին, շրթները չորացել էին։

Խոլտող կոկորդներ, խուլ վայոցներ, ծանր տնքոցներ։

Արյունի, յոդոֆորմի, ացետիլենի և թթվածնի հոտը լցրել էր ճակատամարտի վայրը։ Արարատը՝ մի կողմ քաշված, անտարբեր նայում էր։ Երկնքի վրա կապարե ամպեր էին կախվել։ Թեթև քամի էր փչում։

Դրսից դիտված՝ կռիվը շարունակում էր անողոք, անանուն, մեքենական։ Հրամանները հնչում էին չոր, կտրուկ և մարդիկ կատարում էին այդ հրամանները վարժ, արագ շարժումներով, առանց հուզումի, սառնասիրտ, համառ։

Խրամատներից դուրս էին վազում, առաջ նետվում, պառկում։

— Կրա՛կ...

Կրակում էին։

Գնդացիրները ջղայնացած տրաքտրաքում էին, թնդանոթները վայելով աղմկում։ Անապատի կարծր հողերը վեր էին թռչում, հառաչելով պտույտ գալիս, թափվում։

Ծուխ, կրակ, երկաթ։

— Հարձակման պատրաստ...

Թողնել թուրքերին, որ մտնեն Արարատյան դաշտ։— Այդ երբե՛ք։ Մի եպիսկոպոս, խաչը ձեռքին, գնդակների տարափի տակ, խրամատից

խրամատ էր անցնում և վառ ու պարզ խոսքերով այդ հիշեցնում հայերին։

Հայերը կռվում էին կատաղի կերպով։

— Հարձակման պատրա՞ստ...

Հերյանը տեսավ, ինչպես երկաթգծի հողաթմբի պատնեշի հետևից գնդերը դուրս նետվեցին և, դիմացի բլուրների վրա ամրացած թշնամու գնդակների հեղեղը արհամարհելով, համարձակ առաջ անցան և գրավեցին նոր դիրքեր։ Ետևի հրետանին արագ տեղափոխվեց և կրակը ապատկացավ։

Այնպես թվաց, կարծես ամբողջ դաշտը հանկարծ կատաղած տեղից շարժվել էր և ցասումով լցված՝ նետվել առաջ։

Թուրքերը այդպիսի դիմադրության չէին սպասում։

...Ծնկները դողում էին, շրթները չորացել էին։

Երեկոն մոտենում էր, իսկ Հերյանը մի վայրկյան հանգիստ չէր առել։ Քայլում էր ոտքերը քաշքշելով, միտքը հեռացած։ Այլևս ոչ մի բան նրան չի տպավորում. նոր այս իրականությունը մտել էր իր մեջ. ինչպես սովոր և բնական մի երևույթ։ Երբեմն պարզ ինքնապաշտպանման բնազդը նրան ստիպում էր կանգ առնել, ետ քաշվել կամ պառկել, խուսափելու համար շուրջը պայթող ռումբի հարվածներից։ Այդ տեսում էր մի րոպե. անմիջապես վեր էր ցատկում, պատգարակի ծայրերը բռնում, քայլում։

Հուզվում էր միայն, երբ հասնում էր բուժման վայրը։ Անհավատալի մի քաոս էր։ Ճիչեր, խեղդված աղաղակներ, արյուն, մարդկային մարմնի կտորներ։ Բժիշկները ուժասպառ էին։ Գթության քույրերը՝ սփրթնած, նիհարած, հազիվ կարողանում էին կանգնել իրենց ոտքերի վրա։

Հերյանը վիրավորին վայր դնելուց հետո անմիջապես հեռանում էր այդ տեսարանից խուսափելու համար։

Նախընտրում էր գնդակների տարափը։

— Պարոն գնդապետ, գործերը ո՞նց են գնում...

— Լավ։ Թուրքերը ետ են քաշվում...

Ահ, աստված, թուրքերը ետ են քաշվում...

Հիմա բավականին պետք էր քայլել հասնելու համար նոր բռնած դիրքերին։ Ահա հեռուն գնդերը շարժվում էին։ Հրետանու մասերը անդադար տեղափոխվում էին։ Թուրքերը հեռացել էին դիմացի բլուրներից։

Հայ գյուղացի տղաները՝ ծանրաշարժ, պնդակազմ, պատահական փոսերում շարքով պառկած անդադար կրակում էին։ Ապա, հազիվ հրա-

մանները հնչում էին, նրանք վեր էին ցատկում և ծանր կոշիկները գետնին խփելով վազում էին առաջ, մագլցում թմբերը, ծածկվում քարերի ետև և շարունակում կրակել։

Դաշտը դղրդալով սոնում էր։

Թնդանոթները, որոնց առաջ մբոտած դեմքով մարդիկ քուրմերի նման միօրինակ շարժումներ էին անում, կրակում էին, աղաղակելով ետ քաշվում, նորից կրակում։

Երբեմն, նրանցից մեկը հանկարծ գամվում էր իր տեղը, սղոցված ծառի նման երերում և փռվում գետին։

Հերյանը վազում էր նրա կողմը։

Պատահում էր, որ ռումբը ընկնում էր ամբողջ մի խմբի մեջ. ձյունամրրիկի նման պտույտ էր գալիս, ամեն ինչ կոտրտում, ծամում և օդը հանելով աղմուկով վայր թափվում։ Մեկ էլ տեսնում էիր ինչպես պեղված հողի և ձյունի միջից մեկը վեր էր ցատկում, բաղուկները ճոճելով, խենթացած վազում և տասը քայլ հեռու երեսի վրա երկարում։

Կամ այնտեղ, ուր քիչ առաջ քրմական շարժուձևերով լցնում էին թնդանոթը, հողերը մխում էին և մի կտոր ծանր լռություն սփռում թիթեղե արկղերի, կոտրատված անիվների, մարդկային մարմնի կտորների և անասելի տակնուվրայության վրա։

Ինչ փույթ, թուրքերը ետ են քաշվում։

Ահ, աստված, թուրքերը ետ են քաշվում...

...Գնդակները շարունակում էին սուլել։

— Սպասիր,— ասաց Հերյանը հանկարծ գույնը նետելով,— սպասիր... ուսս...

Պատգարակը վայր դրեցին։ Վրան պառկած արյունաթաթախ սպան բերանը բացեց, շրթունքները ծռեց, խուլտաց։

— Չլինի՞ զարկվեցիր,— հարցրեց ընկերը։

— Չգիտեմ։ Ուժս հանկարծ պակասեց...

Աջ ձեռքը բաճկոնի տակից շոշափեց ուսը։ Ցավից խեղդված մի օհ քաշեց։ Ձեռքը դուրս բերեց արյունված։

— Հա,— ասաց,— վիրավորված եմ։

— Այ քեզ բան... Հը, հիմա այս մեկը ի՞նչ անենք,— հարցրեց ընկերը, ցույց տալով սպային։— Շատ արյուն է կորցնում, եթե շուտ չտաննենք...

— Տեսնեմ աջ ձեռքով կարո՞ղ եմ...

Աջ ձեռքով փորձեց պատգարակը բարձրացնել։ Քիչ մնաց սպան վայր գլորվեր։

— Անկարելի է...

— Դե այդպես է...— որոշեց մյուսը,— գնա պունկտը, ուսդ ցույց տուր,— թող ուրիշին ուղարկեն... Ես էստեղ կսպասեմ... Միևնույն է,— ավելացրեց վիրավորվածին ուշադրությամբ նայելուց հետո,— մեծ հույս չկա... Լավ, ես կսպասեմ...

— Ոչինչ,— ասաց բժիշկը,— մի մեծ բան չի, ուսի կողմն է... Վերքը ժամանակավոր կերպով կմաքրենք, ապա կարող եք գնալ Երևան, որտեղ կբուժեն...

Հերյանը, չնայած սուր ցավին, ժպտում էր։

Լվալու ժամանակ վերքը մղկտաց և նրա գույնը ճերմակեց։

— Նու, նու,— քթի տակ մրթմրթաց բժիշկը,— ձեզ նման մի տղամարդ... Բարեբախտաբար, ոսկորին չի կպել և երկու շաբաթից ամեն ինչ կանցնի... Էս է, կարող եք գնալ...

Գիշերը Էջմիածնի զանգակները ղողանջում էին։

Հայերը մեծ հաղթություն էին տարել։ Ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի էր կանգնել, նետվել մարտի դաշտ և հերոսաբար թշնամուն վտարել Արարատյան դաշտից դուրս։ Այդ հաղթությունը հայ աշխատավոր ժողովրդի հաղթանակն էր։

4

Երևան։

Հերյանը մտավ մայրաքաղաք, նա քայլում էր մտածկոտ և դանդաղ, աչքերը ուշադիր և հետաքրքրված։

Վեր մագլցող մի կենտրոնական փողոց։

Հաստ փոշի, տակնուվրա եղած մայթեր, կիսափուլ տներ։ Երկար պատերազմի և աղքատության մոխիրների տակ ընկած այս վայրը նմանվում էր դեղնած, մաշած, պատռված նամակադրոշմի։

Կիսով պարապ մռայլ խանութներ։ «Հայ վաճառականության բերնից անոթություն է հոտում»— մտածեց Հերյանը։ Թրիքի կույտեր, նռագույն դրոշակներ, տների բոլոր անկյուններում պառկած՝ փլած դեմքերով և մարմիններով գաղթականներ։

Այդ թշվառության հակապատկեր, փառավոր ծառեր և անթիվ զինվորականներ։

Կաղամախիները և բարդիները շշնջում էին։ Բակերում զինավարժության ձայներ էին լսվում։ Փողոցներում հեծելազորքի գումարտակների փողերը հնչում էին՝ մեռելներ արթնացնող վերջին դատաստանի

կանչի նման։ Հրետանին, ծանրածանր և աղմկալից, անցնում էր քարերի վրայից ցատկոտելով։ Նրան հաջորդում էր օդը պատռող զինվորական երաժշտախումբը, որի հետևից գալիս էին քառյակ շարքերով ուրիշ զորամասեր։ Վերջում փոշու ամպեր և ոտաբոբիկ երեխաների ոգևորված խմբեր։

Գեղեցիկ էին վերասլաց բարդիները։

Ծառերի, այգիների և փողոցների այդ շարքերը զետեղված էին բարձր պատշգամբի կատարին, որտեղից մարդ իշխում էր՝ լուսագագաթ լեռների ստորոտին մետաղե պնակի նման երկարած դաշտի վրա։ Այդ դաշտից և այդ լեռներից գալիս էր հանգիստ և կորովալի մի պայծառություն, որը արտացոլվում էր քաղաքի բնակիչների երեսների վրա։

Կաղամախիների թրթռուն գագաթները հրավիրում էին մարդկանց նայվածքները դեպի վեր։ Օդը զրնգում էր արձագանքելով լույսերի անտեսանելի ծնծղաներին և լեռները վսեմ ու խաղաղ ծանր լություն էին տարածում։

Երևի այդ պատճառով էր, որ մարդիկ պարզ էին, կայտառ և մտածկոտ։

Հերյանը քայլում էր կես երազի մեջ։ Առաջին անգամ էր այցելում այդ վայրերը, բայց ամեն ինչ արդեն տեսածի տպավորություն էր թողնում նրա վրա։ Կարծես ամեն ինչ նախապես գրված էր նրա ուղեղի մեջ։ Ամեն ինչ նախատեսված էր, ծանոթ և մտերիմ։ Ու նրա հուզումը սեղմում էր բոլոր մարդկանց ձեռքերը, միանում ամենքին, ընդունում ամեն ինչ, բնականորեն, առանց ճիգի, առանց շատ մտածելու։

— Բարև՛, բարև՛ ամենքին...

Այո, սեղմում էր բոլոր մարդկանց ձեռքերը։

Երբեմն արթնանում էր, աշխատում տրամաբանել։ Այդ վայրկյաններին, ամբողջ այս աշխարհը փլչում էր տարրական առաջին քննադատության առջև։ Ամեն ինչ դառնում էր անհավատալի, անհասկանալի։ Կարելի՞ բան էր, օրինակի համար, մոռանալ այն մղձավանջային գիշերը, որը նա անցկացրել էր Երևանի կայարանում...

Հազիվ գնացքից իջած նա զարմացած կանգ առավ մի անհավատալի տեսարանի առջև։ Վատ լուսավորված մի սրահ։ Կեղտով, աղմուկով, գարշահոտությունով լցված։ Լցված՝ ցնցոտիներով ծածկված, գորշ, գռեհիկ բազմությունով։ Մարդկանց, կանանց, երեխաների՝ մեկը մյուսի վրա դիզված կույտեր, ամեն տեղ՝ գետնի վրա, նստարանների և սեղանների վրա։

Աղբ, յոդոֆորմ, քլորինք։ Կարծես սև թշվառության անկյունից վայր թափված այդ մարդկության վրայից ծանր ոտքերով մի հսկա էր անցել ամեն ինչ ճզմելով։ Բոլոր անկյուններից՝ հողի գույն առած, մոմ կտրած դեմքեր էին դուրս ցցվում։ Կմախքացած փոքրիկ երեխաներ։ Խորտակված կրծքերով, դեղնած ձեռքերով, ջերմից չորացած կանայք։ Կուչ եկած, կծկված, գալարված տղամարդիկ։

Մի քանի ոստիկաններ այս ու այն կողմ էին վազում և հրացանի կոթը գետնին խփելով բղավում։ Նրանց պատասխանում էին դեռ ավելի ուժեղ բղավոցներ։ Այդ վիճաբանություններին և կռիվներին կանայք մասնակցում էին վայերով և երեխաները՝ լացուկոծով։ Օդը լցված էր լկտի հայհոյանքներով։

Հերյանը կանգ առավ շվարած։

Պետք էր այդ տեղից շուտ ազատվել։ Ահագին գժվարություններով նա կարողացավ հասնել մինչև ելքի դուռը։ Նայեց դուրս։ Խավար։ Ո՞չ կառք, ո՞չ մարդ։ Ո՞ւր էր քաղաքը։ Վերադարձավ ներս և դիմեց մի պաշտոնյայի։

— Ներեցեք, քաղաքը...

Պաշտոնյան քթի ծայրի ակնոցները բարձրացրեց ճակատի վրա, կույր և զարմանքով լցված աչքերով նայեց և ծիծաղեց։

— Դուք, ի՞նչ է, նո՞ր եք եկել...

— Այո, նոր... հենց վերջին գնացքով...

— Պետք էր իմաց տալ ձեր բարեկամներին, որ գային ձեզ դիմավորելու... Ուրիշ կերպ անկարելի է և վտանգավոր... այդպես, մենակ, խորհուրդ չեմ տալիս... Ի՞նչ թաքցնեմ... վտանգավոր է...

Անկյունում նստած մի ծերունի նրան բացատրություններ տվեց։ Քաղաքը կայարանից բավական հեռու էր և ամայի ճանապարհը լցված էր զինված մարդկանցով, որոնք ավազակությունով էին զբաղվում։ Պատերազմի նախկին կամավորներ, մութ անցյալ ունեցող մարդիկ, մաուզերիստներ։

— Ասում են,— ավելացրեց ծերունին ձայնը իջեցնելով,— վերևում կանգնած պաշտպաններ ունեն։ Ո՞վ է իմանում, ճիշտ է, ճիշտ չէ... Դրությունը այս է։ Դահիճների ձեռքից ազատվեցինք, եկանք ընկանք ավազակների ձեռքը...

Մարդը հառաչը զսպելով մորուքը շոյեց և էլ չխոսեց։

Հերյանը չէր ուզում հավատալ, որ քաղաք չի կարող մտնել։ «Միջնադա՞ր է, ի՞նչ է», մտածեց նա։ Բայց սրան նրան հարցափորձ անելով, նա համոզվեց... ուրիշ ելք չկար և պայուսակը գետին դնելով, նստեց և սպասեց։

Սպասեց մինչև լուսաբաց։
Ինչպես կարելի էր մոռանալ մղձավանջային այդ գիշերը...

Առավոտյան մոտերը կայարանում գիշերող ուրիշ ճամփորդների հետ եկավ քաղաք։ Երկար ժամանակ փնտրելուց հետո նա կարողացավ մի ընտանիքի մոտ սենյակ վարձել։ Համեստ, պատերը մաքուր գաճով քսված, փողոցի վրա նայող պատուհանով մի սենյակ։ Պարզ մարդիկ էին երևում սենյակ տվողները։ Բակը լցված էր երեխաների աղմուկով։ Ներսը, տանտիկինը՝ գեր ու աշխույժ, անդադրում շարժման մեջ էր։ Առավոտները, երբ տղաները դպրոց էին գնում, սենյակները դատարկվում էին և լռում, կեսօրին լցվում էին անհամբեր ձայներով, պնակների զրնգոցով, ծիծաղով, ապա նորից դատարկվում էին մինչև երեկո։

Չէ, հակառակ դրսի փոթորիկներին, կյանքը տներից ներս պահում էր միապաղաղ գոյությունը։ Բավական էր ականջ դնել հարևան սենյակներից եկած ձայներին միանգամայն հանգստանալու համար։ Այդպես, երբեմն, մի խումբ ծառերի մեջտեղ սոսափը կամ մանկության օրերը հիշեցնող վտիտ մի ազբյուրի երգը մեզ լցնում է տեսականության զգացումով։

Քանի օրերը անցնում էին, այնքան ավելի Հերյանը հաշտվում էր այդ միջավայրի հետ։ Մանկության հիշատակները գալիս խառնվում էին ներկային և ամենահասարակ երևույթները բարդ խորհրդանշանների կարևորության բարձրանում։ Լեռնային ուժեղ այս օդը, ժայռերի բրոնզե մռայլությունը, միջավայրի պարզությունը, երկինքը, մարդիկ, ծառերը, անցյալը և ներկան իրար խառնվելով զորեղ հուզումների հոսանքներ էին ստեղծել, ճրագ և լույս դարձել նրա ներաշխարհում։

Ամեն ինչ այնքան հին էր և ամեն ինչ այնքան նոր։ Նման էր կարդացված այն գրքերին, որ մի կողմ ենք դնում, ապա մի օր նորից բաց անում և զարմանքով նորանոր իմաստների հանդիպում։

Հերյանը ժամերով մաս եկավ և միամիտ հետաքրքրությունով ամեն ինչ վերադիտեց։

Տխուր ժպիտը երեսին նա կանգ առավ դեռ բաց մնացած խանութների առաջ և նայեց ցուցափեղկերում շարված պատահական ապրանքներին։ Չորացած ձկնեղեն, մի զույգ կոշիկ, մի քիչ լոբի, հնացած ամերիկյան ածելի, հին ակնոցներ, մի սաթ, լեռան պանիր և միամիտ նկարներ, որոնց վրա ամբողջ հասակով կանգնած էին տարօրինակ թեերով հրեշտակներ և անկարելի մորուքով աստվածներ։ Ապա գնաց փողոցի անկյունի փոքրիկ կրպակների առաջ, օրվա հարցերի շուրջը վի-

ճաբանության բռնված բեղավոր մարդկանց խմբերի մոտ, կամ ծեծ կերած երեխաների պատճառով տաք և անվերջանալի կռիվներ սարքող պառավ կանանց մոտ։

Դիտեց, ժպտաց, ներեց։

Բայց, առօրյա կյանքին մտերմանալով, նա այս կես գյուղ, կես քաղաքի արտաքին հանգստության տակ սկսեց նշմարել աներևույթ վազող լավաների հոսանքներ։ Անցնող փոթորիկները ոչ միայն տակնուվրա էին արել կյանքի մակերեսը, այլ պեղել նրա խորքը, թողել ավերածություն։ Օդը դեռ լցված էր անձկությամբ։

Այո՛, բուռն կերպով արտահայտված հույսերի ետև արյունոտված դրոշակներ էին կախված։ Ամենքը գիտեին։ Թշնամին, վիզը երկարած, հսկում էր սահմանների շուրջը։

Հայաստանը դաժանորեն մենակ էր։

Լցված մի քանի հարյուր հազար արևմտահայ փախստականներով և անհամար որբերով։

Արևմտահայաստանը՝ փոթորկված ծովից դուրս նետված ավազի նման ահագին բազմություններ էր կուտակել Արարատյան դաշտում։

Քանդված և այրված իրենց քաղաքներից և գյուղերից փախած այդ ամբոխները անվերջանալի խմբերով անցել էին սահմանը և քայլել՝ սպառնանք և անեծք որոճալով։

Մեծ մասամբ ծերերից, կանանցից և երեխաներից կազմված, նրանք ստիպված էին անցնել դժվարին ճանապարհներով, ենթարկվել բևեռային ցրտերի և իրենց մարմինները հալածող համաճարակներին։ Նրանք ամեն քայլափոխի կանգ էին առել մեռել թաղելու համար։ Հուսահատ, հիվանդ, կատաղած՝ այրվող անտառներից փախչող գազանների նման. այդ բազմությունները առաջացել էին իրենց ցասումը ոռնալով, բռունցքները սեղմած և աչքերը խանձված։

Տարածվել էին երկրի բոլոր մասերում։ Փռել էին իրենց թշվառությունը երկրի բոլոր անկյուններում, սև դրոշակների նման դուրս ցցելով իրենց ցնցոտիները, իրենց այրող վերքերը, ոսկրի վերածված իրենց թշվառ մարմինները։

Ուրիշ խմբեր դեռ շարունակել էին քայլել։ Այդքան ցավերից կուրացած, նրանք անխնա կերպով ոտնահարել էին դժվարությամբ մշակված հողերը, կոտորել ու պլոկել էին մրգաստանները, տաքանալու համար այրել էին անտառները։

Արարատյան դաշտի գյուղացիները հյուրընկալ ձեռքով բաժանել էին իրենց հացը, մթերքը և ողորմությունը, բայց այդ ծով անոթությունը կշտացնել չկարողանալով, փակվել էին իրենց տներում և վեհերոտ աչքերով նայում էին աղմկող ամբոխներին։

Փախստականները, գյուղերի փողոցներում և ճանապարհներում երդիկների տակ մտած քամիների պես մլավելուց և ոռնալուց հետո այլևս հասած հուսահատության գագաթնակետին, մտաբերել էին էջմիածինը և սեղմված շարքերով, խզված ձայներով աղոթքներ երգելով նետվել էին դեպի Լուսավորչի գահը, ամենայն Հայոց կաթողիկոսից մխիթարանք և իրավունք պահանջելու համար։

Հին ավետարանների մանրանկարներից դուրս պրծած տեսքով, խորտակված դեմքով, բոցավառ աչքերով քահանաներ քայլել էին նրանց առաջից, գալարված ու մազոտ իրենց բազուկները վեր կարկառած և իրենց կապտած շրթների դառն ու կրակոտ խոսքերը երկնքի անտարբերության ուղղելով։

Ամեն տեղ մի նոր գերեզման էր բացվել։ Ջուլումից մտրակված բազմությունները մի վայրկյան կանգ էին առել, հեկեկալով աղոթել և նորից քայլել լալով, գանգատվելով, մոնչալով։

Էջմիածնի մոտերը, հազիվ, հեռվից նշմարել էին մայր տաճարի գմբեթը, կրոնական բուռն զգացումով ոգևորված, արագացրել էին իրենց քայլերը և լացուկոծով հարձակվել եկեղեցու դռների, քարերի, կաթողիկոսների գերեզմանների վրա և համբուրելով գանգատվել։

Խաղաղ վանքի բակը լցվել էր աղաղակներով։

Կաթողիկո՜սը, կաթողիկո՜սը, պահանջել էին ամեն կողմից։

Եվ երբ բակի խորքից քահանայապետը իջել էր արարողական ոսկեձույլ զգեստների մեջ հանդիսավոր մորուքով, սփրթնած դեմքով, վշտով լցված աչքերով և դողդողացող ձեռքերով, ամբոխը շարժվել էր ափը վազող ալիքների նման, հուզումով և հառաչանքներով մտրակված։ Մարդիկ և կանայք վայր էին ընկել և գալարվելով ճչացել և հեկեկացել էին։ Կաթողիկոսին շրջապատող եպիսկոպոսները՝ բարձրահասակ, պնդակազմ, հաստ հոնքերի և երկար մորուքների մեջ սեղմված դեմքերով մարդիկ՝ բռնել էին նրա թևերից, որպեսզի վայր չընկնի, մինչ նա, իր մոմի գույն առած հայրապետական դեմքը վեր բարձրացրած, աղոթել էր արցունքներ կուլ տալով։

Այդ տեսնելով ամբոխը ավելի տակնուվրա էր եղել։ Հազարավոր բազուկներ վեր կարկառած նա մոնչացել էր խեղդված քամու նման, կանչել, աղաղակել, ապա, գրոհ տալով ծերունու վրա, համբուրել էր

նրա զգեստների ծայրերը և կապույտ երակներով ծածկված նրա հուսահատ ձեռքերը։

Հազիվ կարողացել էին նրան ներս տանել եկեղեցի։

Հայրապետը պատարագել էր։ Էջմիածնի, Հռիփսիմեի, Գայանեի զանգակները բամբ ու դանդաղ զողանջով ընկերացել էին տխուր և հանդիսավոր արարողություններին։

Հետո այդ ամբոխը զետեղվել էր վանքի աղատ խուցերում, բացօթյա շրջապատում և որոշել այնտեղ ձմեռել։

Հա՛ց, հա՛ց, պահանջել էին նրանք։

Դուրս էին հանել եղած հացը, ալյուրը, մթերքները։

Այդ բավել էր մի քանի օր։

Հա՛ց, հա՛ց...

Ամեն կողմից բողոքի ձայներ էին լսվել։ Հաց չկար։ Հաց չկա՞ր...։ Այդ մարդիկ և կանայք բոլորվել էին վանքի շուրջը և բռունցքները թափահարելով կրոնականների դեմ բողոքել և սպառնացել։

Հա՛ց, հա՛ց...

Կաթողիկոսի պատուհանների տակ համախմբված նրանք անիծել էին և՛ նրան, և՛ սրբերին, և՛ երկնային զորություններին։

Կատաղած և հուսահատ կոտրտել և այրել էին լիճը շրջապատող գեղեցիկ ծառերը։ Ավերել էին այգիները, դատարկել դարանները, ապականել եկեղեցիները, ամեն ինչ անապատի վերածելուց հետո խումբ-խումբ նետվել էին դեպի քաղաքը և մայթերի վրա փռել իրենց ցնցոտիները, վերքերը և տենդը։

Կովկասը վայր ընկած հախճապակիի նման բաժանվել էր տասը մասերի։ Թիֆլիսի, Բաքվի և Երևանի համեստ քաղաքապետության շենքերի կատարին չտեսնված և չերևակայված անկախության դրոշակներ էին ծածանվում։

Հայաստանը մրրիկներից թափահարված ծառի նման մնացել էր պլոկված և մենակ։

Բաց սահմանների կողմից վտանգված և էժան չթի եռագույն դրոշակներով զարդարված։

Մի օր, աննպատակ թափառելուց հոգնած, Հերյանը ուղղվեց քաղաքի կենտրոնում գտնվող փոքրիկ պարտեզը, որին տեղացիները Բուլվար էին անվանում։

Բարձր կաղամախիների և բարդիների տակ դրված նստարանները բռնված էին ամբողջովին։ Անգործ, մտահոգ, մռայլ մի հասարակություն էր։ Շատ ուրիշներ թափառում էին ծառուղիների մեջ կամ խումբ-

խումբ կանգնած խոսում օրվա քաղաքական դեպքերի մասին։ Ամեն տեղ երևում էին նաև զինվորականներ։ Նրանք հագած էին ռուսական բանակի զգեստներ, բայց օձիքի և ուսագիրների վրա կրում էին հայկական վերտառություններ։

Բուլվարում լցված այդ մարդիկ խոսում էին ցածր, լրջացած ձայնով, ինչպես ծառերի վրա խոսում էր աշունը տերևների մեջ մեղմ քամի ման ածելով։

Նա պտույտ եկավ պարտեզում հետաքրքրված աչքերը չորս կողմ պտտեցնելով, դիտելով և մտածելով, երբ արդեն պատրաստվում էր վերադառնալ տուն, նկատեց ծառուղու ծայրի տաղավարի շուրջը հավաքված բազմությունը։ Քայլեց դեպի տաղավարը և հարցուփորձ արեց։ Ասացին, որ այնտեղ զետեղված է ժամանակավոր գրասենյակ, արձանագրելու համար արտասահմանից եկած այն անձնավորություններին, որոնք ուզում են իբրև կամավոր ծառայել բանակում։ Քիչ չէր աշխարհի չորս կողմից եկողների թիվը։ Ծեր, երիտասարդ, զարգացած կամ պարզ մարդիկ։ Ուրիշ ազգերի բանակներից դուրս եկած սպաներ, ճարտարագետներ, բժիշկներ։ Գալիս էին հայրենիքին ծառայելու համար։

Հերյանը ուրախացավ. ինքն էլ նրանցից մեկը չէ՞ր։ Առանց շատ մտածելու կանգնեց հերթի և համբերությամբ սպասեց։ Նրա շուրջը Ֆրանսիայից, Ամերիկայից, Ռուսաստանի խորքերից և ուրիշ երկրներից եկած հայեր։

— Ահա, սրանք ևս,— մտածեց Հերյանը,— վազել եկել են իրենց տանջող երազի ետևից, վերագտել են իրենց մենակության հետ խոսող աշխարհը...

Ի՞նչ գաղափար ունեին Հայաստանի մասին դրսում ծնված և մեծացած այս հայերը... Երազի աչքերը միշտ էլ մեծ են և չափազանցված... Հայերը, ինչպես բոլոր իրապաշտ մարդիկ, դյուրին կերպով տարվում են բանաստեղծական պատկերներով։ Այն, ինչից զրկված են, միշտ էլ դրախտի մի կտոր է։ Դալար դաշտեր, կարկաչուն աղբյուրներ, մեծդի պարտեզներով հնչող մի երկիր... Մինչ իրականությունը բոլորովին տարբեր էր։ Մերկացված մի արքայություն։ Մերկ լեռներ, անապատներ, վշտի և թշվառության թթվածինով այրված մի դաշտանկար։

Բայց երազը միշտ նորանոր պատճառներ է գտնում տեսնելու համար։ Դա է, Հայաստա՞նը... Չէ՛, չէ՛, իսկական Հայաստանը գեռ նվաճված չէր, նա գտնվում էր անորոշ հեռուներում և սպասում էր, որ գան, գերությունից նրան ազատեն...

Եվ եկել էին շարքով կանգնել։

Հերյանը ամենքի հետ խոսում էր, կատակ անում։ Գիտեր նրանց երկրները, ծանոթ էր այն քաղաքներին, որտեղից նրանք եկել էին։

Երբ հերթը հասավ իրեն, մտավ և բացատրեց։

— Նավապե՞տ, ասում եք նավապե՞տ...

— Այո, տասը տարվա ծովային ծառայություն... նավարկել եմ բոլոր ծովերում...

Մի պոլսեցի անձնավորություն իր խուլ ականջը երկարեց դեպի նրան և հարցուփորձ արեց։ Չէ, ինքը արևմտահայ չէր, ծնվել էր Ղարաքիլիսայի մոտի գյուղերից մեկում։ Անձնավորությունը ձեռքի մատիտի ծայրը բերանը դրեց, լռեց։

— Բայց առայժմ ծով չունենք,— վերջապես պատասխանեցին նրան։— Ավելի ուշ, երբ Դաշնակիցները վերջնական որոշում տան Հայաստանի սահմանների մասին և իրագործեն Միացյալ Հայաստանի ծրագիրը, մենք կունենանք մի նավահանգիստ Սև ծովի վրա։

Հերյանը բողոքեց։

— Ախր, ի՞նչ որոշում, ի՞նչ բան. ես եկել եմ անմիջապես գործի լծվելու համար... երկրին օգնելու համար։

— Ծո, վայրկյան մը,— բացականչեց մի ուրիշ անձնավորություն, ակնոցների տակ փոքրիկ աչքերը ոլորելով։— Հիմա հիշեցի... երիտասարդ ծովային սպա մը կա, որ Սևանա լճի ափին բան մը կշինե... նավ մը ըլլալու է... Պոլսո թերթերը այդ մասին երկար բարակ գրեցին...

Հերյանի աչքերը լայն բացվեցին։

— Հետաքրքիր է... շատ հետաքրքիր է...

— Դիմեցեք Նախարարության։ Կամ ավելի լավ է Սևան գնալ և այնտեղ տեսնել, թե ինչ կարող եք անել... Առայժմ, Սևանը մեր միակ ծովն է...

Հերյանը տաղավարից հեռացավ ուրախացած։ Պետք էր գնալ տեսնել լիճը։ Պետք էր ծրագիր մշակել և փորձել իրագործել այն։ Իսկապես, Սևանը... Ինչպե՞ս այդ մասին չէր մտածել...

Հերյանը նստեց կենտրոնական փողոցի սրճարանում։

Երեկոյան շինականները իրենց դատարկ սայլերի հետևից ընկած վերադառնում էին գյուղ։ Արագ քայլերով՝ մտածկոտ, գլուխը վայր գցած մարդիկ էին անցնում։ Փողոցի գաղթական տղաները՝ գեղնած երեսներով, ներս ընկած այտերով, վազում էին անցնողների հետևից և լալկան ձայնով մուրում։ Ուրիշներ՝ ջերմից և թոքախտից ավերված, պառկել էին աղտոտ փողոցում լճացած ջրերի մոտ։ Տնքում էին։

Հերյանը ժամանակ չուներ նրանց մասին մտածելու։ Հազիվ նստեց, զինվորական երաժշտության մոտեցող ձայներ լսվեցին։ Անցորդները կանգնեցին և անձկությամբ լցված աչքերով նայեցին։ Նվագախմբի հետևից զինվորների մի գումարտակ անցավ գետինը մրճահարելով և փոշի բարձրացնելով։

Ապա ամեն ինչ վայրկենապես լռեց։ Աղմկալից քայլերգը կլլեց, հետը տարավ փողոցի բոլոր ձայները։

— Ինչպիսի՜ հակապատկերներ,— մտածեց Հերյանը։— Երաժշտություն, մարտական քայլերով անցնող, առողջ կարմրաթուշ զինվորներ և մայթերի վրա ուժասպառ փռված այս անասելի խեղճությունը... Հայ կյանքը միշտ էլ չափազանցություններով է սնվել... Եթե մարդ լավ նայի շուրջը, ամեն ինչ զետեղված է անիրական, վերացական հատակագծի վրա... Մութ, անըմբռնելի, բանականության չենթարկվող մի աշխարհ, ուր պատահականը և անսպասելին գալիս պատվաստվում են խստադեմ լեռների նման կայուն և անխորտակելի երևույթներին... Ամեն ինչ հուսահատիչ է, դժբախտ վերին աստիճանի և միևնույն ժամանակ ամեն ինչ այնքան պայծառ է, բարձր և լուսավոր...

— Համեցեք... սուրճը տաք-տաք բերի, որպեսզի վայելեք...

Բաժակը դրեց սեղանի վրա և գոգնոցի ծայրը ճմլելով մնաց կանգնած։ Թարթիչներից զրկված փոքրիկ աչքերով, ցած ճակատով, քթի շուրջը երկարող խորամանկ գծերով, փոքրահասակ, շարժուն մի մարդ էր սրճարանի տերը։ Կանգնեց և հարցաքննող ժպիտով նայեց Հերյանին։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց Հերյանը ձանձրացած շեշտով։

Նայել և մի ակնարկով հասկացել էր տիպարը։

Մարդու փշրված շրթունքները ռետինի նման ձգվեցին և աչքերը դեռ ավելի փոքրացան։

— Սանկ, կուզեի իմանալ, թե նոր եկվո՞ր եք...

— Այո, նոր եմ եկել։

— Եթե բանով մը կրնամ օգտակար բլլալ... ծախելու բան ման չե՞ք բերած...

— Չէ, ոչինչ չեմ բերել։ Վաճառական չեմ։

Սուրճի բաժակը վերցրեց հասկացնելու համար, որ խոսակցությունը վերջացած է, բայց մարդը չհասկանալ ձևացրեց և մնաց տեղում։

— Կտեսնեք կոր,— հառաչելով շարունակեց նա,— մոխիրներու վրա կապրինք... Վալլահ, մարդ չի գիտեր վաղը ինչ կրնա պատահել... մենք որ դժոխքը սա մեր աչքերով տեսանք... Ինչ օրեր տեսանք, ի՜նչ օրեր տեսանք...

Անբնական և ցավագին այդ շեշտը Հերյանի ջղերին տվեց։

— Վերջին վայրկյանին, տուն-տեղ, հարստություն թողուցինք և քանի մը խալիներ ուսերնուս զարկած եկանք... Եթե ձեր հրամանքը խալիի պետք ունի...

— Ասացի վաճառական չեմ,— խիստ ձայնով նրա խոսքը կտրեց Հերյանը և երեսը մի կողմ դարձրեց։

Մարդը վերջապես հեռացավ։

— Այդպես են,— ասաց ինժենների գլխարկով, թուխ, լայնուս մի պարոն,— նոր մարդ է տեսել, ուզում է վռազ նրանից մի բան պոկել...

— Անմիջապես հասկացա...

— Սրանք առանձին տարր են... հարդի նման միշտ ջրի երեսն են դուրս գալիս...— շարունակեց ինժենները։— Ասում է դժոխքից է գալիս, իսկ տեսնք, արդեն սրճարանի տեր է... Սրանք մեր գլխին ուղղակի պատուհաս են... մորեխի ախորժակով նետվում են ամեն բանի վրա... Ես նրանց հանդիպել եմ շատ տեղերում... Մարդ ուղղակի ամաչում է... Օտարականները նրանցով են մեզ դատում...

— Հա՛, ճիշտ է,— համաձայնվեց Հերյանը,— մանավանդ արտասահմանում... Եվրոպայում, Ամերիկայում... Սրանց պատճառով, օտարականների համար մենք խալի և աղամանդ վաճառող խարդախ ժողովուրդ ենք... Զզվելի է...

— Սրիկաները... վարկաբեկում են հայ ժողովրդի անունը...

Հետո, ուրիշ նյութի անցնելով, ինժենները շարունակեց.

— Մի ամիս է, որ եկել եմ։ Ռուսական ածուխի հանքերում էի աշխատում և երբ դեպքերը վրա եկան, այստեղից վատ լուրեր ստացանք, որոշեցի գալ և մի բանով օգտակար լինել... Տեսնում եմ, ամեն օր նոր-նոր մարդիկ են գալիս, ինչ որ լավ է... Երևի դուք էլ...

— Այո, ես էլ... նավապետ եմ, այժմ ծով չունենք... Հոռետես չեմ, մի բան կանենք...

Ինժենները բացատրեց, որ ինքն էլ դեռ չի աշխատում։ Ինքը, հանքային մասնագետ է և անշուշտ այս երկրի հողերի տակ ո՞վ է իմանում ինչպիսի հարստություններ են թաքնված... Պետք է զննել, փնտրել։ Սոսկալին այն էր, որ խազաղություն չկար։ Հինգ տարի կռվելուց հետո երկիրը գտնվում էր նոր վտանգների առաջ։ Ամենքը մտահոգված էին զենք ճարելու հարցով, նոր քանակ կազմակերպելու հարցով և դա՝ ծով թշվառության մեջ...

Եվ մատով ցույց տվեց գաղթականներին։

— Անհավատալի դրություն է,— շարունակեց նա։— Այսօր, գարերով տարած մեր աշխատանքների արդյունքից իսկ մենք չենք կարողա-

նում օգտվել... Քամին եկավ, մի վայրկյանում ամեն ինչ մաքրեց, տարավ... Ի՞նչ եղան հարյուրավոր սերունդների ճիգերը... Կռվել ենք, արյուն թափել, քրտինք թափել... Վարել ու ցանել ենք մեր դաշտերը, զարգացրել և շքեղացրել ենք քաղաքները, մշակույթ... և տեսնք, մնացել ենք անապատում...

— Մեղքը մերն է,— պատասխանեց Հերյանը։

— Ինչևէ. անցածը անցած է... Թող խաղաղություն տան մեզ, և մենք ամեն ինչ կվերաշինենք։ Ես վստահ եմ, տասը տարում մեր երկիրը կդառնա անճանաչելի... Այդ մասին ոչ մի կասկած չի կարող լինել...

— Ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ,— ոգևորված շեշտով պատասխանեց Հերյանը։— Մենք մեր հայրերի զավակներն ենք, չէ՞... Երբ մարդ մտածում է ինչեր են շինել նրանք... Ստեղծել են հրաշալի ճարտարապետական մեր ոճը։ Բյուզանդիային հսկաներ են տվել, Թուրքերին՝ լավագույն մզկիթներ, Վոսփորի ամենագեղեցիկ պալատները և քանի-քանի ուրիշ բաներ... Այդպես, մինչև Եվրոպա...

— Մենք՝ հայերս միշտ էլ մեր թերությունների մասին ենք խոսում, կապիտան։ Բայց նայեցեք մի բոպե ձեր շուրջը. ի՞նչ է դա՝ երկրի և երկնքի ակուաների տակ ծամված, պատառ-պատառ եղած մի սոսկալի իրականություն, այնպես չէ՞... Այս վիճակում որևէ ուրիշ ժողովուրդ պիտի վհատեր, ընկճվեր, գլուխն առած փախչեր... Սակայն, տեսնք, ապրելու և պայքարելու ինչպիսի կորով... Խոսում և գործում են այնպես, որ կարծես կյանքը հենց այսօր է սկսվում... Եվ մտածել թե այդքան անարդարություն մեր դեմ... Կգա մի օր, աշխարհը կտհանի և խիղճը կշարժվի... Այսօր, աշխարհը դեռ կույր է չափազանց շատ դիակներով սնած բորենու նման։ Բարոյական զգացումը մրափում է, արդարության վրա ծիծաղում են... Օրը կգա, կարթնանան և սոսկումով կհասկանան...

— Դա, միանգամայն ավելորդ հոռետեսություն է,— միջամտեց մի ձայն ետևի սեղանից։— Օրենքներ կան, որ չի կարելի անպատիժ խախտել...

Փոքրիկ ճերմակ մորուքով, ակնոցների ետեր փայլփլող մոխրագույն աչքերով այդ մարդը,— այդ իմացվեց հետո,— նոր եկած իրավագիտության պրոֆեսոր էր։

— Անտանտի պետությունները,— միամտորեն շարունակեց նա,— քանի անգամ պաշտոնապես հայտարարել են, որ մեր պահանջները պիտի հարգվեն... Չեմ խոսում Անգլիայի մասին, բայց Ֆրանսիան, Ամերիկան... Մտածեցեք... Այդպիսի բարոյական մահ նրանք չեն կարող ընդունել և եթե ընդունեն, այդ նրանց կտանի դեռ ավելի սոսկալի պա-

տերազմների... Վաշինգտոնի, Լենգոլնի, Վիլսոնի ոգին... դեմոկրատիան...

Սրճարանը թողնելուց հետո Հերյանի ականջներում դեռ երկար ժամանակ անուշ երգի նման հնչում էին պրոֆեսորի ասածները։ Այնքան լավ էր, այնքան անհրաժեշտ այդպես հավատալ։

Հավատալ, հուսալ։ Պարզ երևում էր, որ շատ գիտնական մարդ էր պրոֆեսորը։ Խոր համոզումների մարդ։ Կայուն օրենքների անխախտելիության վրա կանգնած մարդ, որի ձայնը խոր էր և շեշտը վճռական։ Եվ այդ այն օրերին, երբ հողը փախչում է մարդկանց ոտքերի տակից, երբ ամեն ինչ երերում է նոր և նոր բացվող անդունդների եզերքին։

Թող ուրիշները ուրախանան։ Կարևորը այն ճրագն է, որ անհատը կրում է իր մեջ, այն լույսը, այն ուժը, որ տարածում է իր շուրջը։

Կյանքը ցուլ է, որին պետք է հաղթել։ Կյանքը պատրաստ նվեր չէ, այլ բիրտ նյութ, որին պետք է նվաճել և կառուցել։

Մտածել, որ այդքան ամիսներ ժանգոտված մնացել էր Բաթումի փողոցներում։ Ի՞նչ էր սպասում, ինքն էլ չգիտեր... Մինչ այստեղ այնքան գործ կար, այնքան գործ...

Երկար քայլելուց հետո Հերյանը հիշեց, որ անոթի է և ուղղվեց դեպի այն համեստ ճաշարանը, որտեղ սովորաբար ընթրում էր։

— Այս կողմը համեցեք... այստեղ մի լավ տեղ կա...

Այն սեղանի դիմացը, ուր նրան առաջնորդեցին, արդեն նստած ուտում էր մի ուրիշ հաճախորդ։ Պատուհանից շեղակի ընկնող լույսի պատճառով նրա դեմքը լավ չէր երևում։ Հերյանը շատ էլ ուշադրություն չդարձրեց։ Ներողություն խնդրեց, նստեց, ճաշը ապսպրեց և գլուխը վայր գցած, կերավ և շարունակեց մտածել։

Ճաշարանը, ինչպես միշտ, լցված էր խառն բազմությունով։ Պարզ, կայտառ, շատ ուտող և շատ խմող մարդիկ էին։ Խոսում էին բարձրաձայն և ծամում աղմուկով։

Հերյանը մի վայրկյան գլուխը վեր բարձրացրեց և նայեց շուրջը։

— Պնդակազմ, ժայռի նման մարդիկ են,— մտածեց նա։— Խոնարհ, համառ, տխրություն տեսած դեմքեր։ Նմանում են հայ հողին՝ առանց կեղծիքի, կարծր, պինդ, անմիջական։ Նմանում են հայկական բնակավայրերին՝ լերկ, լեցուն, խոր։

Իսկ հարևանի վրա չնայեց անգամ։ Ճաշը վերջացնելու մոտ էր, երբ աչքերը հանդիպեցին նրա աչքերին։ Նա ժպտաց, ինքն էլ պատասխանեց անորոշ ժպիտով։ Այլևս հետաքրքրված նայեց։ Որոշ էր, որ այդ մարդը տեղացի չէ։ Այտերի ոսկորները քիչ դուրս ցցված, թուխ, թափան-

ցիկ մի դեմք։ Շատ սև, շատ մեծ, շեղակի ճեղքված, փայլփլուն, գրեթե անբնական աչքեր։ Բարակ, կանոնավոր քիթ, ծայրերը վայր ուղղված, նուրբ բեղեր։ Ավելի հնդկացու էր նմանվում, քան հայի...

Հերյանը սրված հետաքրքրությունով նայեց նրան։ Մարդը, նկատելով այդ հետաքրքրությունը, նորից ժպտաց և խոր, ֆոսֆորե իր աչքերը Հերյանի վրա հառելով ասաց՝

— Տեսնում եմ, տեսնում եմ... դուք էլ ինձ նման եկվոր եք...

— Դուք հա՞յ եք,— հարցրեց Հերյանը շվարած շեշտով։

— Հայ եմ. ինչպես չէ, հայ եմ...

— Ներեցեք... չեմ ուզում ձեզ վիրավորել, բայց ես կարծում էի...

— Ոչինչ։ Դուք կարծեցիք, որ ես հնդիկ եմ, ինչպես առհասարակ շատերը կարծում են...

— Հա էլի...

— Երեխա հասակից ապրել եմ Կալկաթայում և ուրիշ վայրերում... Հասկանալի է, օդը, ջուրը, արևը և տարբեր բնույթով սնած հոգիների մոտիկությունը մարդկային դեմքերի վրա դրոշմվում են։ Այդ հայտնի բան է... Բուն նորջուղայեցի եմ, իսկ ինչպես գիտեք, Ջուղայի արմատները մխրճված մնացել են այստեղ, Շահ Արասի օրերից ի վեր...

— Լսել եմ, ինչպե՞ս չէ... մեր պատմության սև օրերից մեկը...

— Ես կամեցա վերադառնալ այն ճանապարհով, ինչ ճանապարհով մեր նախահայրերը այստեղից գաղթել էին։ Հնդկաստանից Պարսկաստան, Պարսկաստանից Հայաստան... Մեր հոգեկան քարտեզի վրայից անցնող հնչող մի գիծ...

Այդ ասելով նա ջրի բաժակը բարձրացրեց և Հերյանը տեսավ նրա ձեռքերը։ Նրա դեմքի նման թուխ, շատ երկար մատներով և նուրբ մազոտ ձեռքեր։ Արտահայտիչ, կամավոր, բարդ հոգեբանություն հատկանշող ձեռքեր...

— Պատկերացնում եմ,— ասաց Հերյանը ավելի ու ավելի հետաքրքրված,— պատկերացնում եմ, ինչքան մեր երկիրը տարբեր է ձեր ապրած վայրերից։ Ո՞վ է իմանում, ինչ էիք սպասում և ինչ գտաք...

Մարդը գլուխը վայր գցեց և ոչինչ չպատասխանեց։ Անհարմար լություն տիրեց։ Ապա, հանկարծակի վճռական շարժումով մարդը երկարեց իր ձեռքը և ներկայացավ։

— Իմ անունը Պետրոս Մարկ է։

— Իմ անունը,— պատասխանեց Հերյանը նրա ձեռքը սեղմելով,— Արա Հերյան է, նավապետ...

— Նավապե՞տ... Քյապտե՞ն...

— Այո։

— Ո՞ր ծովի։

— Սև ծովի և բոլոր ծովերի...

— Այդ պատասխանը շատ սիրեցի... Սև ծովի և բոլոր ծովերի... Շատ լավ, շատ և շատ լավ...— ծիծաղեց նա, սպիտակ ատամների կատարյալ շարքը բաց անելով։— Ծովերը շատ ավելի են, քան հողերը,— ավելացրեց նա լրջանալով,— բայց տեսեք, մեր Հայաստանը ծով չունի։

— Ինչպե՞ս չէ,— բողոքեց Հերյանը,— Հայաստանն էլ ծով ունի. նախ Սևանը, ապա հույս ունենք...

— Լսել եմ... կարդացել եմ...

Ու մի վայրկյան մտածելուց հետո՝

— Ծովը... Մեր պատմության մեջ ծովը գրեթե դեր չէ խաղում և անգամ եթե խաղում է, աներևույթ է, ծածկված... Ծովը թաքնված է դեպքերի հետևում...

Նայեց Հերյանի աչքերին և սպասեց պատասխանի։

— Չհասկացա...

— Ամեն բան գալիս է ծովից և ամեն բան գնում է դեպի ծով։

Մարկի աչքերը հեռվից պսպղուն էին։ Ձայնն էլ կարծես հնչում էր հեռվից։

— Ծովը կար,— շարունակեց նա,— բայց այդ ծովը միանալով երկընքին և երկրին բոց դարձավ և այդ բոցից ծնվեց խարտյաշ այն պատանին, որ կրակոտ մազեր ուներ, բոցավառ մորուք և արեգակի լույսը փոխ առած աչքեր... Ծով, երկիր, երկինք, բուսականություն, տարերք միացան, խառնվեցին մեկ մեկի, դղրդալից քաոսի վերածվեցին, տարածությունը մրրիկներով և երկրաշարժերով ցնցեցին, կրակ ու քար փրսխեցին և ստեղծեցին այն աշխարհը, որին անվանեցին Հայաստան, որի անունը մեծ զգուշությունով պետք է արտասանել, որովհետև նա ծփում է կրակով և վտանգով...

Հերյանը մնաց շշմած։ Չէր իմանում ինչ ասի։

— Դե, անշուշտ,— կմկմաց նա,— դա մի տեսակ երազ է...

Իսկ Պետրոս Մարկը արդեն ոտքի էր կանգնել և խորհրդավոր ու անիրական մի ժպիտ երեսին՝ անհետացել։

— Ո՞վ էր այդ մարդը,— հարցրեց Հերյանը ճաշարանատիրոջ։

— Առաջին անգամն է, որ տեսնում եմ,— պատասխանեց նա։— Երևի եկվոր է...

Տուն վերադարձի ժամանակ Հերյանը չգիտեր ինչ պատճառով անհանգստացած մտածում էր այդ տարօրինակ հանդիպումի մասին։ Ո՞վ կարող էր լինել այդ մարդը։ Նրա խուլ և խոր ձայնը դեռ շարունակում

էր հնչել նրա ականջներում։ Նրա տարօրինակ, ֆոսֆորե փայլով կլանիչ աչքերը կարծես գալիս էին իր ետևից։ Նա այդ զգում էր այնքան ուժեղ կերպով, որ մի քանի անգամ ետ նայեց, մի քանի անգամ կանգնեց, պրպտեց չորս կողմը, բայց ոչինչ չտեսավ։

Երեկոյան այդ ժամին մեծդի մի վերջալույս հրդեհել էր հորիզոնը։ Բարդիների վրայից սրսփալով դեղին բոցեր էին թափվում։

Հերյանը վերհիշեց անծանոթի խոսքերը. «Երկինք և երկիր և ծով միացան... և բոց դարձան...»։ Ամեն կողմից լավայի նման վառ հեղուկներ էին վազում։ Ամեն ինչ հրաշալիորեն այրվում էր։

Հազիվ տուն մտավ՝ մթնեց, կարծես մեկը մարեց երկնքի ճրագը։ Ու նույն այդ վայրկյանին, ամեն կողմից զենքի սրսրոցներ լսվեցին։ Պատուհանը բաց արեց և մտահոգված ականջ դրեց։ Տարակույս չկար, հրացանի ձայներ էին։

Շտապ դուրս եկավ փողոց։

Դռան առաջ նստած մի մարդ հանգիստ ծխում էր։

— Ի՞նչ է, կռի՞վ է,— հարցրեց Հերյանը։

— Ինչ կռիվ, ինչ բան,— պատասխանեց մարդը։— Այնպես, կրակում են վախից, կրակում են վախեցնելու համար... Սով է, թշվառություն է... պետք է վախենալ։ Մթության աչքերը մեծ են...

Այն գիշեր Հերյանը մի քանի անգամ արթնացավ և ականջ դրեց։ Քաղաքը պատերազմում էր սեփական ստվերների հետ։

5

Մի քանի օր հետո, դեռ լույսը չբացված, Հերյանը պատահական մի սայլի նստած, մեկնեց Սևան։

Թևերը կրծքին ծալած և ոտքերը վայր կախած հետաքրքրությամբ նա դիտում էր շուրջը...

— Լավ էր։

Զառիվերներ բարձրանալիս սայլը մղկտալով ճռռում էր։ Եզները իրենց եղջյուրները վերջացող գիշերվա մեջ մխրճած տնքում էին, մերթընդմերթ ետևի ոտքերը բաց արած կանգ էին առնում, որպեսզի առավոտյան զով քամին մտրակի իրենց երեսը և ապա նորից քայլում։

Երիտասարդ սայլապանը ճիպոտը ձեռքին խաղացնելով քայլում էր սայլի կողքից և անորոշ բացականչություններով խթանում եզներին։

Մանկության օրերից ի վեր այդպիսի ճամփորդություն չէր արել։ Զվարճալի էր։

Փորձեց գյուղացու հետ խոսքի բռնվել։ Անկարելի եղավ։ Գյուղացին, կասկածոտ՝ հարցերին պատասխանում էր անորոշ մռմռոցներով։

— Ասա՛ տեսնեմ, անունդ ի՞նչ է...

— Շմավոն։

— Լավ անուն է... Շմավոն... Գյուղում գործերը ո՞նց են գնում... այսքան դեպքերից հետո...

— Հը՞... Ո՞վ գիտե...

Ճիպոտը բարձրացնում էր և օդում ման ածում։

— Քանի՞ հոգուց է ձեր ընտանիքը...

— Ինը։

— Դու, ամենից ջահելն ես... կարծում եմ...

— Չէ... Հրոռա, հրոռա, հրոռա...

Եվ եզներին խփում էր իզուր...

Քանաքեռ բարձրանալիս օրը բացվեց։ Վերևում ցցված ժայռի մի կտոր պսպղալով սկսեց այրվել և գյուղացու բարձր բռնած ճիպոտի կատարին սարսռուն բոց կայծկլտաց։

Երբ բարձրացան վեր, նոր և հրաշալի մի աշխարհ ծնվեց։

Հերյանը վայր ցատկեց և կանգնեց ներքևում տարածվող քաղաքի դիմաց։ Պարտեզներով շրջապատված տափակ տանիքների այդ կուտակումները թաղված էին խոր լռության մեջ. կարծես ուշադրությամբ ականջ էին դնում երկնքի չորս կողմերից իջնող լույսերին։ Ավելի արթուն էին ծառերը։ Ամենքն էլ լարված նայում էին դեպի այն կողմը, որտեղից գալիս էր աշունը։

Իսկ աշունը գալիս էր Արարատյան դաշտի կողմից, ուր այդ վայրկյանին քայլում էր գույների և լույսերի խառն մի հեղեղ։ Երբեմն լույսերը դառնում էին ծով, որի վրա նավարկում էին թրթռացող կաղամախիների բարձր կատարները։ Երբեմն էլ սփռվում էին ինչպես ճաճանչներով հյուսված մի սավան, որի տակ թաքնված էր անիրական մի երկիր։

Հերյանը նայում էր հիացած։

Ահա բռնկված այդ հորիզոնի առջև կանգնել էին լեռները։ Դեպի աջ՝ Արագածի ճեղքված գագաթից նռան հյութի գույն լավաներ էին վայր թափվում, լվանում լեռան կողերը և ոլորուն գետակների միջով վազում դեպի դաշտ։ Դեպի ձախ՝ երկնքի առաջ լռած հսկայական աղաղակի նման ցցվում էր Արարատը։

Այդ աղաղակը ամբողջովին լույս էր։

Ավելի ետև, խորքից շեղակի իջնող այրվող ամպերի մի ամբոխ խուժել էր Գեղամա լեռների կատարների վրա և այնտեղ լճացել։ Վարը՝

շղթայի կողերի երկայնքին, կապտավուն լույսեր էին թափառում և ամբողջ այդ տեսարանը վեր ցցելով տանում զետեղում երկնքի անորոշության մեջ։

Թռչունի մի սուր կկվոց օդը ճեղքեց և Հերյանին սթափեցրեց։ Սայլը բավականին հեռացել էր։ Հերյանը գլխարկը հանեց և երեսը զովին քսելով շտապեց նրա ետևից։

Նեղ ճանապարհը թեթևորեն ոլորվում էր, մխրճվում բարձրությունների կողերի մեջ, տեղ-տեղ մեջքը վեր հանում, թեքվում աջ, թեքվում ձախ, ապա երկարելով վազում առաջ, ժայռերի ստորոտի մոտ ճերմակ մի գիծ քաշում և անհետանում։

Թռչունների երգ էր լսվում։ Հեռվում, վայրի տատրակները կկկվում էին, մի վայրկյան լռում և սպասում պատասխանի։ Կապույտ քամին թևերը բախում էր ժայռերին, ընկնում գետնի վրա և քիչ փոշի բարձրացնելով թպրտում։

Հերյանը վազեց սայլին հասնելու համար։

Ամեն ինչ թվում էր նոր։ Եվ ամեն ինչ տարբեր էր տեսած տեղերից։ Ոչ թե ավելի գեղեցիկ, ոչ թե ավելի տարօրինակ, այլ՝ ուրիշ։ Տարբեր էր նրանց լցնող հուզումը։ Կարծես դրսի ձայները գալիս էին իր սրտից։ Ինքը և այս աշխարհը նույնացել էին, մի սիրտ, մի մարմին դարձել։

Եվ այդ զգացումը տևում էր չնայած այն բանին, որ, քանի գնում էին, այնքան ամեն ինչ ամայանում էր և վայրենանում։

Սառը և մերկ բարձրություններ, բրոնզե ժայռեր, քամիներից մաքրված և փոթորիկներից հրմշտկված։ Քար, երկինք և մենակություն։

Երկար քայլելուց հետո, վերջապես, հանդիպեցին մի գյուղի և նա էլ մեծ մասամբ բնակված մալականներով։ Գյուղի մեկ կողմում կանգնել էին ստեպներից եկած փայտաշեն տնակները, իսկ մյուս կողմում՝ ավազակների և ցրտերի պատճառով, գետնի մեջ կես փորված թմբանման՝ նախապատմական լեգեոնականների գերեզմաններ հիշեցնող հայ շինականների խրճիթները, որոնք կայուն էին և տխուր, ինչպես շրջապատող ժայռերը։

Սայլը անցավ առանց կանգ առնելու։

Ավելի հեռուն, ճանապարհի ձախ կողմի վրա գետինը դլորվում էր վար, քանդվում։ Ջանգուն անհամբեր և աղմկալից, քարերի վրայից ցատկոտելով՝ վազում էր դեպի դաշտ։ Նա աղբյուր էր առնում Սևանի սրտից և այդ պատճառով էլ նրա կոկորդը լեցուն էր լճից փոխ առած հնչուն և դղրդալից ձայներով։

— Ջանգուն, հին ժամանակների Հրազդանը,— մտածեց Հերյանը,—

վազում է, ազնվում, որպեսզի լռությունը չկլանի այս աշխարհը, որպեսզի կյանքը տևի... Ժամանակին, ահավոր մի հրաբխային զորություն կրակ էր փսխել, այս երկիրը տակնուվրա արել, պեղել, քանդել, ամեն ինչ տրորել և ցնցել և մի նոր դաշնակություն ստեղծելով լռել։ Կազմվել էր նոր մի աշխարհագրություն։ Եվ թեպետ երկրի տակից քայլող կրակների ճարճատյունը մրափել էր, և քաշվել էին երկրաշարժային ուժերի սանձերը, անցած քաոսի ավերակները դեռ ներկա էին։ Երևի այդ պատճառով էլ Հրազդանի անունը հուր էր հնչում և վիշապ։ Երևի այդ պատճառով էլ նա վազում էր զրնգուն թևերը կողերին զարնելով, մետաղի և ճարճատող բոցերի ձայն հանելով։

Հայաստանը բազմահազար ոտքերի վրա ցցված մտահոգ նայում է բարձրությունների ճեղքվածքների միջից սահող երկնային հոսանքներին և սպասում։ Ամեն ինչ սպասում է։ Սպասում է երկնքի և երկրի միջև սառած հսկայական այս լռությունը։ Սպասում է վիթխարի Բարձրավանդակը, մեծդի լեռների թափառուն խմբերով, մենակյաց կապույտ լճերով, ոտքերը ուժգին գետին զարնող, աղմկալից գետերով, փոթորիկներից տաշված սրածայր և խստադեմ ժայռերով, լեռների մեջ պառկած դալար դաշտերով։ Սպասում են մարդիկ, կենդանիները և բույսերը։

Ահեղ, խորհրդավոր մի զորություն այդ ամենը նետել է երկրագնդի բարձրանիստ մի բեմի վրա, ներկայացնելու համար բարդ և ճակատագրական մի ողբերգություն։ Գործողությունները բաժանված են դարերի։ Հերոսները հաջորդում են ուրիշ հերոսների, թշնամիները հաջորդում են ուրիշ թշնամիների։

Հայաստանը մնում է։

Տանջվում, կռվում, սպասում։

— Ահ, կարելի՞ բան է, կարելի՞ բան է,— մտածում էր Հերյանը— որ այդ ողբերգությունը թաքնված և լուսավոր մի իմաստ չունենա։ Պարզապես դեռ չի հնչել հայտնությունների ժամը։ Ջեն արթնացած թաքնված աստվածները։

...Եղները գնում էին դանդաղ երերալով։ Առանց ճիգի, մտածկոտ։ Կարծես լայնատարած այդ խաղաղությունը խոհի էր վերածվում նրանց աչքերի մեջ։ Միայն սայլի անիվներն էին ճռռում և երբեմն էլ լսվում էին գյուղացու բացականչությունները։

— Դե, դե... Մոռ, Մոռ...

Նոր ղառիվերների մոտենալու ժամանակ Հերյանը սայլից վայր ցատկեց և քայլեց գյուղացու հետ։ Գյուղացին մի քանի անգամ նրա կողմը նայեց և, լռությունից երևի այլևս հոգնած, սկսեց խոսել։

— Ճանապարհը քիչ երկար է,— ասաց նա։— Դե, մենք սովոր ենք, իսկ դուք սովոր չեք, դժար է...

— Ի՞նչ դժվար...— պատասխանեց Հերյանը,— ճանապարհը գեղեցիկ է և մեր բախտից եղանակն էլ լավ...

— Էդ մեկը, դե, իհարկե...

Մի քանի տասնյակ քայլ լռեց։

— Աշխարհում ամեն ինչ դժար է,— ասաց նա նորից։— Մարդ երբ մեծանում է, երբ մտածում է...

Հերյանը հասկացավ, որ Շմավոնը ուզում էր խոսել...

— Ի՞նչ, գյուղում գործերը այնքան էլ լավ չե՞ն...

— Լավ չեն։ Ի՞նչ եք ուզում, գեղը դատարկվեց։ Ջահելներին տարան նեմեցների դեմ կռվի։ Գնացին։ Ի՞նչ արին, ինչ չարին... Ողջ են թե մեռած, խաբար չկա... Ճիշտ է, Ռուսաստանում նոր բաներ են պատահել... Ասում են շատ խառն է... Կարող է... էդ հեչ. բանը նրանում է, որ կինարմատը մնացել է մեջտեղ և նեղվում է... Սպասում են... Օր ու գիշեր սպասում են... Ժամում մոմ են վառում և ասում են՝ սաղսալամաթ տուն կդառնան։ Բայց չեն գալիս... Ո՞վ է իմանում, մի օր էլ տեսար... Ամեն ինչ կարող է պատահել...

Մի քանի տասնյակ քայլ լռեց։

— Ասում եմ դժվար է,— շարունակեց նա։— Մարդիկ գնացել են նեմեցների դեմ կռվի, իսկ օղլուշաղը մնացել է անճարակ... Հարևանները նրանց հողերը մշակում են, նրանց համար աշխատում, ինչ արած... սոված չմնան... Համա, արի տես, հիմա էլ հայն է կանչում... Ջորք են հավաքում, ասում են անիրավ թուրքը նորից կռիվ է ուզում... Հրռռռ, հա-ա, հրռռռ...

Նա խոսում էր առանց մեծ հուզումի, գրեթե չեզոք ձայնով։

Բարեկազմ, քայլը թեթև, աչքերը պարզ, եղջերուի շարժումներով երիտասարդ էր Շմավոնը։

— Իսկ դու զինվոր չե՞ս գնալու,— հարցրեց Հերյանը։

— Ասում են տանելու են... Էհ, կտանեն, թող տանեն... Ասացի չգնացած վանքի տոնին ներկա լինեմ...

— Վանքը որտե՞ղ է...

— Ո՞նց թե... կարծում էի վանք ես գնում։

— Գնում եմ Սևան... գործերի համար...

— Կղզու վանքը թամաշա է... շատ մարդ է գալիս... սրբերի պատճառով...

Դիմացի բարձրությունների լանջերի վրա սկսեցին կանաչ տարածություններ երևալ։ Սաղարթախիտ անտառներ էին և լայն արոտատեղիներ։ Վերի ճանապարհից բեռնավորված էշերի խմբեր էին իջնում և նրանց ետևից քայլող գյուղացիներ։ Բարևեցին, հեռացան։

— Քաղաք ձուկ են տանում,— բացատրեց երիտասարդը։— Իշխան ձուկ... Շատ համեղ է... ասում են, մինչև Թագավորի սեղանն է գնում...

Հերյանը ծիծաղեց։

— Այդպես են ասում... որ ձուկը համեղ է, ըղորդ է...

— Գիտեմ, շատ լավ ձուկ է...

Հետո, ճանապարհը աջ ու ձախ նետվեց, ժայռերի շուրջը հանգույց կապեց և սկսեց մագլցել դժվար մի բարձրություն։ Եզները ահագին ուժ էին վատնում սայլը քաշելու համար։

— Անիրավ այս ճանապարհը... տավարը չարչարվում է... էս է շուտով տեղ կհասնենք...

Քիչ անցած, բազմաթիվ ձիերի սմբակների ձայն լսվեց։ Հերյանը հետաքրքրված ետ նայեց։ Նախ՝ զառիվերի կողմից մի խումբ գլուխներ երևացին, ապա ձիավորներ։ Գեղեցիկ ձիերի վրա նստած, փափախավոր, յափունջին ուսերին նետած, ոտքից մինչև գլուխ զինված այդ մարդիկ անցան շտապ, հազիվ բարևելով։

Ժանգոտած երկաթի գույնով բնակավայրում, առույգ երիտասարդների հեծյալ այս խումբը՝ Հերյանի աչքերի առաջ, հին մագաղաթների վրա նկարված առասպելական մի տեսարան պարզվեց։ Նրանք նմանվում էին արկածի դուրս եկած հինավուրց այն ասպետներին, որոնց կյանքի և մահի հետ մեկտեղ խաղերը ներշնչում էին աշուղներին և բարդ երգերի վերածվում։

Հերյանը նայեց զարմանքով։

— Ջահելներն են...— ասաց գյուղացին ծիծաղելով։— Երդում են տվել կռվել և մեռնել ազգի համար։ Բայց գնում են վանքի մատաղները ուտելու։

Ահա լեռների կողերին, անտառներով շրջապատված գյուղեր։ Մեկը մյուսի վրա կուտակված շենքերը վայրի թռչունների բույների էին նմանվում։

Ժայռերի գլխին արագիլներ և արծիվներ են սավառնում։

Երբ բարձրացան զառիվերը, երկինքը հանկարծ վայր իջավ և կապույտ մի քամի կպավ Հերյանի աչքերին։

Հերյանը մնաց անշարժ։ Լիճը։

— Ահա ծովը...

Հուզվեց։ Անտեսանելի հոսանքներից և հալված մետաղի նման հո-

սող լույսերից կազմված այդ վերամբարձ աշխարհը կամաց-կամաց խուժեց նրա ներսը և նվաճեց նրան։

Այնպես թվաց, որ կորցրել էր իր մարմնի ծանրությունը և կայունությունը։ Իրեն զգաց թափանցիկ։ Օդը և լույսը անցնում էին իր միջից, ինչպես անցնում էր ամպերի միջից։

Այդպես երևի շատ երկար պիտի մնար, եթե հանկարծ չնկատեր իրեն նայող զարմացած գյուղացուն։ Երբ նրան նկատեց՝ շփոթվեց և սկսեց շտապ-շտապ պրչտել գրպանները։

— Դե, ասա ի՞նչ պետք է տամ...

— Ոչինչ,— բողոքեց գյուղացին։— Սրբատեղի գնացողից փող չեն վերցնում... Սաղ ըլնիք...

Քարերի վրայից ցատկոտելով և ճռռալով սայլը մեկնեց։

Հերյանը, այլևս մենակ, կամաց քայլեց և նայեց։

Աչի ձախ կողմում ցցված էին մրրիկներից և ջրերից կերված, անմատչելի ժայռեր։ Հեռվից նրանք նմանվում էին մեկնող հսկայական փղերի մի խմբի։

Աջ ափի կողմը ամայի անապատ էր։ Տեղ-տեղ ալեկոծված, փոթորիկներից կրծոտված տարածություն։ Ոչ մի տուն, ոչ մի բուսականություն։ Ջաֆրանով ծածկված մոխրի գույն մի դատարկություն, որ երկար թափառելուց հետո գլուխը կպցրել էր հորիզոնին և սարսռալով կանգ առել։

Երկու այդ ափերի մեջ՝ լիճը։

Պսպղուն, լազուր մի հայելիացում։

Քիչ հեռուն, ջրերի միջից կանաչ բլուրի նման վեր ցցվող մի կղզի։ Եկեղեցի՝ մոխրագույն և երաժշտական։

Սևանը։

Դարերի ստվերներով և լույսերով կառուցված Սևանը։ Հանգիստ, խաղաղ, ճառագայթուն։

Հերյանը իր ճակատը տվեց լույսերին և երկար ժամանակ մնաց կանգնած։ Այն, ինչ տեսնում էր, բոլորովին նոր էր իրեն համար։ Նոր, պարզ և գեղեցիկ։ Սակայն նա զգում էր, որ խաղաղությունով լցված այս աշխարհը թաքցնում էր բարդ եղելություններով հղի մի անցյալ։ Այս ժայռերի լռությունը, այս ջրերի ծփուն հանգստությունը, այս երկնքի անշարժ խորությունը միայն երևութական էին։ Այնտեղ, ներսը ուժասպառ ծալված ալիքների մեջ, քարերի կուտակումների տակ, հողերի շերտերում, ամեն տեղ ծածկված էին անիմանալի զորություններ։

Նրանց ներկայությունը նա զգում էր իր ամբողջ էությամբ։

Զորությունները։

«Ընդունել նրանց,— մտածեց նա,— նշանակում է չափվել նրանց հետ։ Մարդկային ուժը կարո՞ղ էր դրան հասնել...»։

Քայլեց դեպի գյուղը։ Ելենովկա։ Անցավ ափը եզերող ճանապարհի վրայից այն հույսով, որ գյուղացիներից կարող է տեղեկություններ ստանալ այն երիտասարդ ծովային սպայի մասին, որին տեսնելու համար եկել էր Սևան։

Հանդիպեց մի ռուս մուժիկի։ Բարձրահասակ, երկայն մորուքով այդ ռուսը անցնում էր մորուք շոյելով և աչքերը հեռուներին սևված։

Պրպտող աչքերով նայեց Հերյանին, նրա նավապետի գլխարկին և բարևեց նրան։

— Բարի երեկո,— ասաց նա հայերեն։

— Բարի երեկո,— պատասխանեց Հերյանը։

Ինչ տաքրինակ էր հնչում այդ հայերենը ռուս մուժիկի երկար կաֆտանն և բարձր կոշիկներ հագած այդ մարդու բերանում։

Ռուսը կանգ առավ և, խուզարկու աչքերը մեն ածելով Հերյանի երեսի վրա, սպասեց։

— Ասացեք, խնդրեմ, գործերը ո՞նց են...— հարցրեց Հերյանը, խոսակցությունը սկսելու նպատակով։

— Ի՞նչ գործեր,— գանգատվեց մուժիկը նեղացած ձայնով,— գործ չկա։

Ձեռքերը խոթեց կաֆտանի գրպանները և նայեց երկնքին։

— Իսկ Ռուսաստանից լուր ստանո՞ւմ եք...

— Ի՞նչ իմանամ... Մեկը էսպես է ասում, մի ուրիշը էնպես... Չի հասկացվում... Մերոնցից մի քանիսը գնացին, էնտեղ հողեր են բաժանում... մալականների դեմ հալածանք չկա, բայց նամակ չենք ստանում...

— Եթե հաստատ իմանայիր, որ իսկապես հող են բաժանում, երևի դու էլ կվերադառնայիր...

— Ո՞վ է իմանում...

Ասաց և ոտքի ծայրով զարկեց մի քարի, որը գլորվեց հեռուն։

— Իսկ դուք, ի՞նչ է, գործո՞վ եք եկել,— հարցրեց նա։

— Այնպես եկել եմ... ծովային մարդ եմ...

— Տեսնում եմ գլխարկից...

Իր լայն ձեռքով մորուքը վերից վար շոյեց և ծիծաղեց։

— Էստեղ,— ասաց նա,— ձերոնցից մեկը... Փայտի կտորներ է հավաքել, ասում է նավ է շինում... Առավոտից մինչև երեկո աշխատում

է, շարշարվում, բոլորովին իզուր... Ինչպե՞ս կարելի է նավ շինել, երբ ոչինչ չկա... Չեմ ասում... շատ լավ տղա է, Ռուսաստանում ծովային ոպա է եղել և եղել է պատերազմում... Հիմա, ինչպե՞ս նա կարող է նավ շինել, չեմ հասկանում...

— Ես էլ ճիշտ նրան եմ փնտրում...

— Եթե նրանք եք փնտրում, շատ հեշտ է... Այդ կողմից իջեք ափը, էնտեղ կգտնեք նրան էլ, լոդկան էլ...

Հերյանը ցույց տրված ճանապարհով իջավ ափ և այնտեղ՝ մի մեծ նավակի կմախքի շուրջը, հանդիպեց մի քանի բանվորների։ Նրանք մի կտոր տախտակ բռնած, ինչ-որ հաշիվներ էին անում և վիճում։

Հերյանը նախ նայեց ցցված կմախքին։ Կասկած չկար, հիմքը լավ էր դասավորված։ Տաշված փայտի, ջրի և փայծղանի հոտը նրան մեծ հաճույք պատճառեց։

— Բարև ձեզ, տղերք ջան,— ողջունեց նա ուրախ ձայնով, կարծես հին բարեկամների էր հանդիպում։

Բանվորները զարմացած նայեցին նրա գլխարկին և պատասխանեցին բարևին։

— Բարով, հազար բարով...

Հերյանը նավի ցոուկի առաջ կանգնեց և մեկ աչքը փակելով դիմեց.

— Փորի տակից անցնող փայտերը,— ասաց նա,— պիտի ավելի հաստ լինեին, ինչպես ցոուկի և հետնամասի գերանները։

— Ինքն էլ մտածել է,— ասաց եղջյուրների պես սրված հաստ բեզերով մեկը,— համա չճարվեց... Միջից երկաթ պիտի անցկացնենք...

— Իսկ ինքը ո՞ւր է։

— Հիմա կգա... գնացել է գործիքներ բերելու...

— Լավ գործ է, իմ արև,— նորից բացականչեց Հերյանը,— թեպետ պիտի խոստովանել, որ մի քիչ փոքր է պատերազմական նավի համար...

— Ի՞նչ եք ուզում որ լինի. եղածը գա է... Այստեղ ձկնորսի նավակ սարքողներ կային... Ուստա Մարտիրոսը կար և բայազետցի Խոսրովը... կռվի գնացին, էլ չդարձան... Իսկ մենք, մեր կյանքում նավ չենք շինել և շինելու համար էլ պետք եղած ապրանքը չկա... Մեջի փայտերը, օրինակ, տանձենի է, որ պինդ լինի, իսկ տանձենին քիչ է ճարվում, նրա համար, որ ծառը չեն կտրում պտուղի պատճառով...

— Հասկանում եմ։

— Մենք դյուրգար մարդ ենք,— բացատրեց մի ուրիշը,— եթե սեղան, աթոռ, գուռ-մուռ լինի կարանք սարքել, ամա նավ շինելը դժվար

է... Անում ենք ինչ ինքը հրամայում է և վասսալամ... էն է գալիս է... ինքը ձեզ ամեն բան կբացատրի...

Հերյանը հետաքրքրված նայեց ափի կողմը։ Ծովային սպայի մինչև ոտքերը ընկնող սև վերարկու հագած, ձեռքում երկաթե եռանկյունի, նիհար, բարձրահասակ մի երիտասարդ էր եկողը։

Նա Հերյանին նկատեց և քայլերը արագացրեց։ Երբ մոտեցավ, Հերյանը ներկայացավ, ձեռքը պինդ սեղմեց և ուշադրությամբ դիտեց նրան։

Տպավորիչ էին նրա հստակ, կանաչի տվող, միամիտ և մեծ աչքերը։ Երեխաների և վանքից դուրս չեկած ծեր վանականներին հատուկ մի նայվածք ուներ. ներս ուղղված, կենտրոնացած և հավատավոր։ Բաց շագանակագույն՝ թրջված հարդի երանգով մազեր, ներս ընկած այտերով քիչ սփրթնած երկար դեմք, բարակ քիթ և գունատ շրթունքներ։ Վերարկուի զարդերը թառամած էին, թևերի և գրպանների ծայրերը մաշված, սև գույնն էլ, հնության պատճառով, սկսել էր կանաչին տալ։

Առաջին հայացքով, նա ավելի նմանվում էր գավառացի աղքատ գիմնազիստի, քան սպայի։

Ոտքերը միացրած, իրանը շիտակ, աչքերը Հերյանի աչքերին հառած, նա կանգնած սպասում էր։

— Ես նույնպես ծովի մարդ եմ,— ասաց Հերյանը։— Հեռավոր ճամփորդությունների նավապետ... Պատիվ ունեմ ներկայանալու...

— Բախտավոր եմ, պարոն նավապետ... Սպա Նորին Կայսրության տորմիղի...

Ու մեկ մեկի զինվորական բարև տվին։

Այժմ Հերյանի հարցերին նա պատասխանում էր առանց վարանելու, պարզ և կարճ նախադասություններով։ Թեթևորեն գեղեցիկ ձայն ուներ, որ երբեմն իջնում էր կուրծքը և բամբ հնչյունների վրա կանգ առնում, ինչ որ նրա ասածներին տալիս էր հուզիչ բնույթ, մանավանդ որ հայերենը խոսում էր դժվարությամբ, օտար շեշտով և ռուսերեն բառեր խառնելով։

Ասաց եկել է Բեսարաբիայից իր հոր հետ, որ դատական պաշտոնյա էր այնտեղ և որ այժմ գտնվում է Երևանում։ Բեսարաբիայի հայությունը նրա հորը ղրկել էր Հայաստան՝ այդ գաղութը երկիր տեղափոխելու հարցի շուրջը կառավարության հետ բանակցելու համար։ Ահա քանի ամիս է այստեղ էին, բայց բանակցությունները երկարում էին, առանց որևէ դրական արդյունք տալու։ Ինքը, անգործ չմնալու համար, որոշել էր իր կարողությունները ի սպաս դնել հայրենիքին։ Որոշել էր շինել այս նավը։ Անշուշտ, բնականոն ժամանակներում այդ ձեռնարկը կլիներ ավելորդ, բայց այժմ, երբ բանակը ղրկված է ամենա-

տարրական միջոցներից, այդպիսի անկատար նավն էլ կարող էր որոշ ծառայություն մատուցել։

— Ահա, նայեցեք այս կողմը,— շարունակեց նա, ձեռքը երկարելով դեպի լճի աջ կողմի ժայռերին,— այնտեղից թշնամիները կարող են մեզ կրակի տակ առնել։ Լճի եզերքները ամրացված չեն... Թնդանոթով զինված մի նավակ, որ կարողանա փոքրիկ մեքենայի միջոցով արագ շարժվել, նրանց բավականին մեծ վնաս կարող է պատճառել... Դա, անշուշտ, մի մեծ բան չի, կապիտան, սակայն արհամարհելի էլ չի...

— Շատ ճիշտ է... հասկանում եմ...

— Դժբախտաբար, անհրաժեշտ միջոցները պակասում են... Պետք է աշխատել Ռոբինզոնյան սիստեմով, ամեն ինչ հնարել, բավականանալ փոքրով...

— Տեսնում եմ...

Վեր վայր քայլեցին, խոսեցին։

— Վաղը տոն է,— ասաց ծովային երիտասարդ սպան,— բանվորները չեն աշխատում։ Օգտվելով այդ հանգամանքից պիտի գնամ Երևան՝ հորս մոտ։ Ցավում եմ, որ ստիպված եմ ձեզ թողնել... Հայրս մենակ է։

— Լավ է, կարողանո՞ւմ եք կառք ճարել։

Երիտասարդը տխուր ժպտաց։

— Ի՞նչ կառք, ի՞նչ բան... Գնում եմ ոտով։ Եթե հիմա մեկնեմ, առավոտյան միայն կհասնեմ քաղաք...

Հերյանը զարմացավ և բնազդաբար նայվածքը ուղղեց նրա կոշիկներին։ Մաշած, կարկատած, խեղճ կոշիկներ էին։ Տաբատի ծայրերն էլ ծակ։

Նրա ձեռքը առավ իր ափերի մեջ և երկար սեղմեց։ Ուզեց նրան հայտնել իր խոր համակրանքը, բայց լեզուն կապվեց հուզումից։ Կարմրեց։ Նորից ձեռքը սեղմեց։

— Դեռ կխոսենք...

Երիտասարդը կրունկները մեկը մեկին զարկեց և զինվորական բարև տվեց։

— Հա՛, մոռացա,— վազեց նրա հետևից Հերյանը,— ուզում էի հարցնել, ո՞ւր կարելի է գիշերել...

— Համեցեք ինձ մոտ,— հրավիրեց սպան։— Ես ոստիկանի տանն եմ ապրում... մի շատ համեստ սենյակ է... Այս գիշեր տանը չեմ, եթե ուզում եք օգտվել... ուրախությամբ...

— Շատ շնորհակալ եմ...

Եվ միասին գնացին սենյակը տեսնելու։

Հենց որ դուրս եկավ վանքը տանող առագաստանավից, որոշեց բարձրանալ բլրան կատարը։ Այնտեղից ավելի լավ կարող էր դիտել լիճը։

Կես ճանապարհին նա հանդիպեց քամու, որը խուժեց նրա վրա, տրորեց մազերը և կրծքի վրա թավալ գալով նրան հրեց ետ։ Հերյանը այդ սիրեց։ Ճակատը դեմ տվեց քամուն և ուրախացած՝ քայլերը արագացրեց։

Չնայած առաջացած աշնան, խոտը ամեն տեղ թարմ կանաչ էր։ Վայրի ծաղիկները, տեղ-տեղ, բոցերի նման այրվող կարպետներ էին փռել։ Արբեցուցիչ մի բուրում էր բարձրանում։

Վարի վանքի զանգակները հանդիսավոր հնչում էին։ Ղողանջները ընկնում էին ժայռերի մեջ և կրկնվելով զրնգում։

Երբ հասավ վեր, բարձրացավ ժայռի վրա և նայեց լճին։ Ծարավ աչքերը լայն բացվեցին, և սիրտը սկսեց ուժով թնդալ։

Սևանը։

Լազվարթ այդ տարածությունը, որ քամին տեղ-տեղ ավլում էր, թվում էր անվերջանալի։ Երկու կողմի ափերը գնալով լայնանում էին և կորչում։ Շատ հեռուն ամպերին խառնված բարձրամերձ լեռների ստվերներ էին երևում և հորիզոնի ետև խոժոռ և եղերավոր մի աշխարհ ուրվագծում։ Լճի մեծդի այդ տարածությունը կպչում էր Հերյանի թոքերին և նրա շնչառությունը խորացնում։

Ծով էր։

Ժայռի կտորը, որի վրա նա նստել էր, մեկ կողմից սահում էր դեպի լիճը և մյուս կողմից այն աստիճան թեքվում բլուրի լանջերին, որ նա մի րոպե կարծեց թե գտնվում է ուղղությունը որոշելու համար կես ճանապարհին կանգ առած նավի հրամանատարական կամրջակի վրա։ Սիրտը սեղմվեց և աչքերը ծովային թռչունի աչքերի նման կլորացան։

Խուզարկեց բոլոր ուղղությունները, չափեց հեռավորությունները և ոտքերը լայն բաց արած օդը ուժով շնչեց ներս։ Պակասում էր աղը։ Ձեռքը դրեց ճակատին և նորից նայեց։ Ոչ մի կյանքի նշան, ոչ մի շարժում, ոչ մի նավ։ Շատ հեռուն, աջ ափի ուղղությամբ ահա երևում էր տափակ խրճիթների մի խումբ։ Դեռ ավելի հեռու, մի բարձրության լանջերի վրա նա գուշակեց բնակության մի ուրիշ վայր։ Հետո՝ ոչինչ։

Ջուր, ամպեր, ամայություն։

— Հայերը,— մտածեց նա,— վայրի թռչունների նման կառչում են ժայռերին։ Երևի այնտեղ, Նոր Բայազետի կողմերում, լեռների կողերին

կպած խորխորատների ծայրերին կամ սարերի մեջ սեղմված թառել են բազմաթիվ ուրիշ գյուղեր։ Մտածել, որ կան բնակության տեղեր, որոնք, ձյունների մեջ թաղված և փոթորիկներով ծեծված, ամիսներով մնում են արտաքին աշխարհից կտրված։

Մնում են երկնքի և երկրի մեջ գերեզմանացած։

Լուռ, մենակ։

Չկան գյուղեր, որովհետև չկան հաղորդակցության միջոցներ։ Այստեղ պետք են նավեր։

Մտածեց և տակնուվրա եղավ։ Այո՞, այո՞, այստեղ պետք են նավեր։ Ուրախությունից բազուկները շարժեց այնքան, որ քիչ մնաց հավասարակշռությունը կորցներ և ընկներ ջուրը։ Հիմա գիտեր, հիմա իմանում էր ինչ անել։

Այստեղ պետք են նավեր։

Իր հուզումը ծածկելու համար ուզեց երգել։ Ձայն չհնչեց։ Վայր իջավ և սկսեց ուրախացած երեխայի նման ցատկոտել։

Վարը, վանքի գլխավոր եկեղեցում մեծ պատարագ էր։

Վանքը լցված էր բազմությամբ։ Քաղաքից և մոտակա գյուղերից եկած ընտանիքները նախօրոք բռնել էին ամեն մի անկյուն։ Գետնի վրա կարպետներ էին փռել և բացված սփռոցների վրա շարել ուտելիքներ, ինքնաեռներ, գինու և օղու բազմաթիվ շշեր։ Սպասում էին, որ պատարագը վերջանա։

Բազմության մեծ մասը խճողված էր եկեղեցու ներսը և մուտքի դռան առաջ։ Նոր եկողները, որպեսզի կարողանան իրենց մոմը տանել և սուրբ սեղանի առաջ վառել, ստիպված էին հրել, հրմշտկել, ուրիշների ոտքերի վրա քայլել և հազար ու մի դժվարություններ հաղթահարել։

Ներսից թարմ և սուր դիսկանտների խմբերգության ձայներ էին լսվում։ Ջանգակները անդադար զողանջում էին։ Հարյուրավոր մոմեր բոցկլտում էին խունկի ամպերի մեջ, որոնց ուժեղ բուրումը խառնվում էր կանեփի և ոչխարների ծանր հոտին։ Այդ վերջինները այս ու այն կողմ վազելով մայում էին։ Հինայի արատը իրենց ճակտի վրա և տարօրինակ կերպով փայլփլող աչքերով նրանք խառնվում էին ամբոխին։

Դիմացի ափում, խառն և անհամբեր մի բազմություն աղմկելով սպասում էր վանքի միակ առագաստանավին։

Ամեն կողմից եկողների նոր խմբեր էին երևում։ Ուրախ, զվարթ, խաղալով, երգելով։ Հերյանը նկատեց, որ այդ զվարթությունը մի տեսակ հանդիսավոր բնույթ էր կրում։ Մարդկային այդ տարրական զգա-

ցումը ավելի խոր էր, ավելի լուսավոր։ Այդ լուսավորությունը կարելի էր նշմարել բոլոր դեմքերի վրա։ Պարզ, հավատավոր աչքեր ունեին այդ մարդիկ, և՛ պայծառ ժպիտ։

Երկար նայելուց հետո Հերյանը որոշեց եկեղեցի մտնել։

Հեշտ բան չէր։ Դժվարությամբ հասավ մինչև դուռը, գանձանակի մեջ փող գցեց, մի քանի մոմեր գնեց և մի քիչ արմկահարելով, մի քիչ ուրիշների բարյացակամությունից օգտվելով, նա, մոմերը գլուխների վրա բարձր բռնած, առաջացավ մինչև սեղանի մոտերը։ Այնտեղ նա մի քանի վայրկյան մնաց երեխաների խմբի մեջ սեղմված։ Ազատվեց և կանգնեց երգեցիկ խմբի ետևը։

Քանի տարիներ էր պատարագի ներկա չէր գտնվել։ Խոր հուզումը սեղմեց նրա կոկորդը։ Այդ հուզումի առաջքը առնելու համար նա իր գլուխը թափահարեց և բռնի հազաց։ Հանկարծակի կերպով խուժող այդ զգացումը զարմանք պատճառեց իրեն։ Չգիտեր, որ իր ներսում մրափող հիշատակի նման հուզական այդպիսի աշխարհ էր թաքնված։

Մոմերը մոմակալների վրա տնկեց, վառեց։ Այդ վայրկյանին ծնկի չոքեց խումբը և մեղմ ու խորհրդավոր հնչեց «Սուրբ-սուրբը»։ Հուզիչ և հանդիսավոր այդ տեսարանը Հերյանի սիրտը սեղմեց և լույսի նման տարածվեց նրա ամբողջ էության մեջ։— «Տեր աստված,— փսփսացին նրա շրթունքները,— տեր աստված, ինձ ուժ տուր իրագործելու համար այսօրվա հղացած գաղափարս... Ոչ անձնական շահի համար, ոչ փառասիրության համար, այլ այս ժողովրդի համար, որ ահա քո առաջ չոքած, սպասում է քո լույսին... Դու, որ ապրում ես այս կղզում, դու, որ ստեղծել ես այս լիճը, տուր ինձ ուժ և եռանդ և հարատևություն, բերելու համար երազած նավը... նավը հավատքի և լույսի...»։

Մի ժամ հետո վանքի բակը սպանդանոցի էր նմանվում։

Ծառերից, պատշգամբի կամարներից, սյուների վրայի գամերից կախված էին ոչխարների արյունած մարմինները։ Մաշկում էին, պարզում էին նրանց ներսը, կտրտում։ Պատրաստում էին մատաղի բաժանումը։

Ամեն տեղ կրակ էին վառել ավանդական խորոված՝ համար։

Մի քանի վանականներ՝ հանդիսավոր և մորուքավոր, ժողովրդի մեջ շրջում էին, բարևում մանող անող հյուրերին, աշխատում ուրախ և հյուրասեր ձևանալ։ Երբեմն, շատ խնդրանքներից հետո, համաձայնում էին մի բան խմել։ Բաժակը երկու մատների մեջ սեղմած՝ աչքերը վեր բարձրացնում, մաղթանքներ անում, օղին կլլում և բեղերը ծծելով հեռանում։

Ուրիշներ հավաքում էին մատաղի մորթերը, գլուխները, ոտքերը, որոնք իրավունքով պատկանում էին վանքին։

Բակը լցվել էր աղմուկով, կրակով, ծխով։

Եփվող մսի կտորները ճզզում էին, յուղերը կաթկթում ածուխի վրա և բռնկվում։ Խորովածի ախորժելի հոտը բռնել էր ամբողջ կղզին։

Անցնող գնացողին հյուրասեր հրավերներ էին ուղղում։

— Չէ, խնդրում եմ, մի մերժեք... Սրբին պատվելու համար հալա այս բաժակ գինին... պատվական մատաղի կտորը վերցրեք...

— Շնորհակալ եմ, ձեր ուխտը ընդունելի լինի...

— Ախպեր ջան, նստեք, է, նստեք... Այս օրը չէ չեն ասում... ամենքս հայ քրիստոնյա ենք, այնպես չէ՞...

Հերյանը բոլոր այդ հրավերները մերժել էր և նույնիսկ ուզում էր կղզին թողնել հեռանալ, երբ լսեց իր անունը և զարմացած ետ նայեց։

— Պարո՛ն Հերյան, պարո՛ն Հերյան... Ո՞վ կարող էր մտածել, որ դուք էլ էստեղ եք... ինչ անսպասելի հանդիպում... Լսեք, հայրիկը անպայման ուզում է ձեզ տեսնել...

Հերյանը կանգնեց անակնկալի եկած և մի քիչ էլ ուրախացած։

Տանտիրոջ մեծ աղջիկն էր։ Սենյակը վարձելուց ի վեր Հերյանը նրան տեսել էր երկու կամ երեք անգամ, այն էլ շատ անցողակի կերպով։ Օրիորդը երբեք տանը չէր, և եթե տանն էր՝ փակվում էր սենյակում և դասերը պարապում։ Գիմնազիոնի վերջին դասարանումն էր, ասել էր նրա մայրը, և այս տարի շատ էր աշխատելու ավարտական քննությունները հանձնելու համար։

Հերյանը հետաքրքրությամբ նայեց նրան և երեսը լուսավորվեց լայն ժպիտով։

Ինչ որ թարմ, միամիտ, անմիջական բան կար նրա մեջ, դյուրալի և նույնիսկ հմայիչ։ Արդյոք նրա սև, ընդարձակ, թավիշե աչքե՞րն էին այդ տպավորության պատճառը, թե նրա քաղցր ու սարսռուն ձայնը։ Դպրոցական շագանակագույն համազգեստը, քիչ վրան նեղ, նրան ավելի էր երիտասարդացնում, և թեպետ կարելի չէր բառի բուն նշանակությամբ ասել, որ գեղեցիկ զգեստ էր, սակայն նրան տալիս էր առանձին հմայք, անմեղության շեշտ, որ կանայք այնքան լավ գիտեն օգտագործել։

Տաք, մտերիմ, հուզական մի էակ էր։

Հերյանի աչքերը փայլփլեցին։ Օրիորդը զգաց նրա նայվածքի ծանրությունը և շփոթվեց։ Երկու ձեռքերը տարավ մազերին, ուժեղ շարժումով ետ քաշվեց և շիտակ նայեց Հերյանի աչքերի մեջ։

Մեկ մեկի հասկացան։ Ժպտացին։

— Դե, եկեք,— ասաց օրիորդը այլևս գրեթե հրամայական ձայնով,— դե, շուտ եկեք...

Հերյանը հպատակվեց։

— Մենք չգիտենք, որ այսօր վանք էինք գալու,— շարունակեց նա առաջ ընկնելով,— հայրիկը չէր ուզում... Այս տարին սրբատեղի գնալու տարի չէ,— ասում էր նա...— Վերջին րոպեին բարեկամներ եկան և հայրիկին համոզեցին... Իսկ ձեզ այստեղ տեսնել իսկի չէինք սպասում...

— Ես, ճիշտն ասած, տեղյակ չէի, որ այստեղ այդպիսի տոնակատարություն կա... Եկել էի գործով, լճի վերաբերյալ հարցեր ուսումնասիրելու համար և հանկարծ...

Նրան ընդունեցին ուրախ և սիրալիր բացականչություններով։ Տեղ տվին, պնակը և բաժակը անմիջապես լցրին։

— Պաժալստա, էս կտորը իբրև օղու զակուսկա... տաք-տաք կերեք... Աղջի, հաց չտա՞ս, կանաչեղեն չտա՞ս... Դա, մեր պատրաստած օղին է, կապիտա՛ն, խմե՛ք, դա ուրիշ բան է...

— Ձեր կենացը...

— Շեն կենաք... Մի հատ էլ, մի հատ էլ... Ասում եմ ձեզ, դա մեր քաշած օղին է...

Հերյանը ստիպվեց մի քանի բաժակ մեկը մյուսի հետևից պարպել։

Մոտը նստած մարդը, որին քիչ առաջ ներկայացրել էին, հաստ, մազոտ և կնճռոտ դեմքը երկարեց, թարթիչները բացխփեց և սկսեց խոսել.

— Դուք ուսումնական մարդ եք,— դիմեց նա Հերյանին,— ես ձեզ բան ասեմ լսեք... էնպես է, նաուչնի տեսակետից... էս ամառ իմ աղջիկը, որին տեսնում եք... Աղջի, Սրբուհի,— դիմեց աղջկան,— կապիտանին բարև ասա՛...

Մեծ հոնքերով և լայն շրթներով աղջիկը վախեցած նայեց հորը և մինչև ականջները կարմրեց։

— Ինչպե՞ս չէ, ծանոթացանք,— միջամտեց Հերյանը։

— Հա, ուրեմն, ինչ էի ասում... Աղջիկս էս ամառը մեկ էլ հիվանդացավ... Հիվանդացավ պիտի ասել շատ լուրջ... բոլոր հույսերը կտրել էինք... Մայրը անդադար լաց էր լինում, բժիշկները... գիտեք էլի ոնց են լինում... Գնում գալիս էին կոնսուլտացիա անում, փողերը վերցնում և թե՝ վաղը նորից կգանք, կտեսնենք։ Իսկ փոփոխություն չկար։ Ինչ փոփոխություն... քանի գնում վատանում էր։ Մտածեցի, մտածեցի և, մտքով աղոթելուց հետո, մի ուխտ արի։ Սրբին ասացի, երեխիս կյանքը դնում եմ քո ձեռքերի մեջ, տրա ինչ ուզում ես, ես էլ կանեմ ինչ պարտական եմ անելու...

Մի կարմիր բողկ վերցրեց, չխկրտացնելով կծեց և ծամելով շարունակեց.

— Հիմա դուք, որպես ուսումնական մարդ, պիտի ասեք... սա ինչ տգետ մարդ է, որ ծոտի-մոտի բաների է հավատում... Ախպեր, ինչ ուզում եք մտածեք, փաստ է, որ էն օրվանից իմ աղջիկը սկսեց լավանալ... ուղղակի հրաշք... էս օրվա լուսի նման ճշմարտություն... մի, մի, մի... Դե ասացի՝ հասկացաք...

Հերյանը լսում էր և դիտում շուրջը։ Ամենուրեք կերուխում էր։ Բաժակները բարձրացրած կենացներ էին խմում, ճառեր էին արտասանում։ Տեղ-տեղ երգում էին։ Ամենից շատ շարժվողները կանայք էին, սպասարկում էին, բաժակները լցնում, ուտելիքների պնակները շրջում, ծիծաղում, տրամադրությունները վառ պահում։ Ըստ ավանդության, ինչքան տոնը զվարթ անցներ, սրբերն այնքան կուրախանային։

Հերյանի խմբում տանտիրոջ աղջիկն էր սպասարկում։ Անունը Զվարթ էր և ձեռքերը գեղեցիկ էին՝ դալկահար, սրածայր, ոզորկ մատներով։ Հերյանը նայում էր նրա ամեն մի շարժումին։ Նստելու ժամանակ սրունքները երկար էին և ներդաշնակ. նեղ՝ ոտքերի մոտ և փափկորեն լեցուն և հեշտական՝ ծնկների տակ։ Արթնացող կանացիությունը արդեն եռում էր նրա մեջ կարասի նոր գինու նման և այդ պատճառով էլ նրա շարժումները հանկարծակի էին և քիչ անկյունավոր։

Ծիծաղելիս կրծքերը դող էին գալիս և ձայնը մետաղի նման հնչում էր։

— Ահ, պարոն Հերյան, դուք իսկի բան չկերաք,— բացականչում էր նա,— իսկի բան չխմեցիք... Ձեզ նման տղամարդը պետք է ուրիշներին օրինակ լինի... Դուք, ծովի մարդ...

Այդ վայրկյաններին բառերը կլկլում էին նրա կոկորդի մեջ, աչքերը վառվում և այտերը կարմրում։

— Դուք միայն պահանջում եք,— պատասխանեց Հերյանը կես լուրջ, կես կատակելով,— ոչինչ չեք տալիս... Տեսե՛ք, ուրիշ սեղաններ մոտ կանայք երգում են, իսկ դուք, որ անկասկած լավ ձայն ունեք, ոչինչ չեք երգում...

Հերյանը խոսում էր՝ նրա աչքերը իր աչքերի մեջ առնելով։ Զվարթը այդ նայվածքը զգում էր և անհանգստանում։ Շարժումները շփոթվում էին և ձեռքերը այս ու այն կողմ ընկնում։

— Ե՞ս, երգե՞մ... Ահ, պարոն Հերյան, դուք իմ վրա ծիծաղում եք...

— Այդպես է, ամաչում է,— միջամտում էր հայրը,— եթե ուզենա...

Զվարթը լայն բացված աչքերով նայում էր հորը և բողոքում։ Հայտ-

նի է, ծնողները իրենց զավակների կարողությունները միշտ էլ չափազանցված աչքերով են տեսնում։

Հայր և աղջիկ վիճաբանում էին։

Բակի ետևի մասից խմբական երգի ձայներ լսվեցին, շփոթ, բայց կայտառ մի երգեցողություն։

Ամենքը նայեցին դեպի այն կողմը։

— Ջահելներ են,— բացատրեց Զվարթը,— եկել են քեֆ անելու...

— Հասկացա,— ասաց Հերյանը, նրանց կողմը նայելով,— դրանք այն ձիավորներն են, որոնց տեսա ճանապարհին։

— Սպասեք թող մի քիչ խմեն, ինչ բաներ կանեն... Ես նրանց լավ գիտեմ...

— Մի՛ վախենաք, ես այստեղ եմ, ձեզ մոտ...

Թեպետ նա այդ ասում էր կատակելով, սակայն, վերջին բառերը արտասանելիս, նրա ձայնը քիչ դողում էր։ Զվարթը կարմրեց և աչքերը ցած իջեցրեց։ Երկուսն էլ լռեցին։

— Հայրենակիցներ,— գոռում էր ակնոցավոր մի երիտասարդ, աթոռի վրա բարձրանալով,— հայրենակիցներ, թույլ տվեք երկու խոսք ասել...

— Ահա սկսվեց,— նկատեց Զվարթը։

— Ասացեք, ասացեք,— խնդրեցին ամեն կողմից։

Աթոռի վրա կանգնած երիտասարդը, մեկ ձեռքով ակնոցները բռնելով և մյուս ձեռքը դեպի երգողների կողմը ուղղելով, սուր, բղավող ձայնով խոսեց հայրենիքի մասին, ազգի կրած տառապանքների, անցած ահավոր օրերի և հայ քաջերի մասին, որոնք,— ասաց նա,— արհամարհելով իրենց կյանքը, պաշտպանել են և պիտի պաշտպանեն հայրենի հողերի արյունաթաթախ ամեն մի փշրանքը...

Առաջարկեց լեցուն բաժակները բարձրացնել և մեկ կումով պարպել նրանց կենացը։

Ուռուները թնդացին։

Շատերը ոտքի կանգնեցին և լեցուն բաժակները վեր բռնելով աղաղակեցին։ Ջահելներն իրենց գլուխները համեստաբար ծռած բարևեցին։

Մեր, երիտասարդ, կին, երեխա մեկը մյուսի վրա քայլող ձայներով երգեցին։ Ընդհանուր ոգևորությունը մենակյաց այդ կղզու մեջ տպավորիչ էր և հուզիչ։ Հերյանի մարմնի վրայից պազ սարսուռ անցավ։ Երգողների դեմքերը կարծես լուսավորված էին։ Նայվածքները ուղղված դեպի հեռավոր մի երկինք, այդ բազմությունը ջերմություն և հավատք էր աղերսում։ Տխուր այդ մեղեդին աղոթքի էր նմանվում։

— Ինչ լավ է, որ այստեղ եմ,— մտածեց նա,— ինչ լավ է...

Ետ դարձավ։ Զվարթն էլ էր երգում։ Կրծքից եկող կոնտրալտոյի գեղեցիկ ձայն ուներ։ Դեմքը ներշնչված էր, աչքերը վառված էին։ Հերյանը հափշտակված ականջ դրեց միայն այդ ձայնին։ Կարծես նրա ամբողջ մարմինը երգում էր։ Տաք, սարսռալի, միամիտ մի երգ։

Մի րոպե նույնիսկ մնաց շփոթված։ Ապա, ուշքի գալով՝— «դե, դե, հիմար, հիմար, չթուլանանք»,— ասաց ինքն իրեն։ Եվ որպեսզի թույլ չտա, որ խուժող այդ զգացումը նվաճի իր կամքը, առանց շատ և երկար մտածելու ինքն էլ միացավ խմբերգության։ Սակայն հենց որ բերանը բաց արեց, կոկորդից այնպիսի բղավոց և անճիշտ ձայներ դուրս եկան, որ Զվարթը անակնկալի եկած, գրեթե վախեցած նայեց... ապա ծիծաղը չկարողանալով զսպել շրթները ծռեց, ուժ արեց անտարբերություն ցույց տալ, բայց չկարողացավ և, դեմքը ձեռքերի մեջ թաքցնելով, սկսեց խենթի նման հռհռալ։ Մոտը կանգնողները նայեցին Զվարթին, նայեցին Հերյանին և իրենք էլ վարակված սկսեցին խեղդել իրենց ծիծաղը։ Մերերը խեթ-խեթ սրա նրա աչքերի մեջ նայեցին, բայց ոչ մի բան չօգնեց։ Ընդհակառակը, իրենց ձեռքերը ստամոքսին տարած, գլուխները ուրիշների կռնակի հետև թաքցնելով, ամենքը գալարվում էին։

Հերյանը ոչինչ չէր նկատում, գնալով դեռ ավելի էր ոգևորվել և աչքերը վեր, բերանը լայն բաց արած շարունակում էր երգել։ Երբ վերջապես նա ետ դարձավ, ծերերն էլ միացան մյուսներին։ Զսպված ծիծաղը թափահարում էր նրանց մարմինները։ Հերյանը անմիջապես հասկացավ, շփոթվեց, կարմրեց, մեղավոր ժպիտով չորս կողմը նայեց և լռեց։

Կարծես գլխին հարված էին տվել։ Ուզեց փախչել։ Մնաց տեղը կանգնած։ Վիզը երկարեց, իբր թե մի կարևոր բան է նկատել և լուրջ-լուրջ նայեց դեպի հեռուն։

Երբ երգեցողությունը վերջացավ, ամենքը ծափահարեցին։ Ինքն էլ՝ ձեռքերը ուժով մեկ մեկի խփելով ծափահարեց։

— Ահ, պարոն Հերյան, պետք է մեզ ներեք,— ասաց Զվարթը արցունքները զսպելով։— Գիտեք, երբեմն մարդ առանց պատճառի այդպես բռնկվում է...

— Միանգամայն ներված եք, օրիորդ ջան, միանգամայն ներված եք...

Ասաց և նորից կարմրեց։

Այդ կարմրելը Զվարթի սիրտը սեղմեց։ Հերյանի ձեռքը բռնեց և պինդ, բարեկամաբար սեղմեց։

— Գիտեմ, ձայն չունեմ, ոչ էլ՝ ականջ... Բնությունը չի օժտել ինձ,— ասաց Հերյանը։

Ասաց և վարի շրթունքը քիչ դողաց։

Զվարթը աչքերը վար առավ իր հուզումը ցույց չտալու համար։

— Ախպեր, սա ի՞նչ բան է,— միջամտեց հայրը,— քեզի՞ ենք եկել և խմող չկա... Դե, բաժակները լցրեք...

Հերյանը մեկը մյուսի հետևից մի քանի բաժակ խմեց և գլուխը քիչ պտտվեց։ Տրամադրությունը բարձրացավ և խոսելու մեծ ցանկություն ունեցավ։

Երկու ձեռքերով ծնկները գրկեց և երերալով խոսեց նավի մասին։

— Իսկական մի նավ, պարոն Արտեմ... նավ... Այն նավերից մեկը, որ ծովի վրա փրթփրթալով, փորը այս կողմ այն կողմ շարժելով, քիթը ալիքներին զարնելով, վազում է մարդ կամ ապրանք գիզած վրան... Բառի բուն նշանակությամբ նավ... Ասում եմ, եթե այդպիսի նավ գա այստեղ և մեր լճի վրա ձայնը գլխին գցած սկսի սուլել, թրխթրխկալ, աղմկել, այն ժամանակ կտեսնեք, որ այս հողերը, այս ժայռերը իրենց տեղերից կամաց վեր կկենան, զարմացած կնայեն և ուրախ-ուրախ կշարժվեն... Իմ արև... Չէ, մի քիչ մտածեք, պարոն Արտեմ, մի քիչ մտածեք, ինչ մեծ հետևանքներ կարող է ունենալ, ինչ նոր կյանք կարող է առաջ գալ... Ամբողջ ծրագիրը արդեն գլխումս կազմ պատրաստ է։ Ծովի հին գայլ եմ, հեշտ կերպով չեմ որոշում, իսկ եթե որոշեմ՝ ուրեմն գիտեմ ինչ եմ անում... Գիտեմ նաև, որ շատ դժվար գործ է։ Բայց ես, ինքնագովություն չէ, շատ համառ մարդ եմ... որ գործը սկսեցի՝ մահին էլ հանդիպեմ, վրայից կթռնեմ... Ինքնագովություն չէ, դրանում կարող եք արխային լինել...

— Մաշալա... ձեր կենացը...

— Այնպես եք խոսում, նավապետ ջան, որ մարդուս սիրտը ուղղակի ուրախանում է... Ձեր կենացը...

— Շնորհակալ եմ, դե որ այդպես է, խմենք այդ ձեռնարկի հաջողության համար... Ծովը մի շատ տաժանելի դպրոց է, երբ մարդ այնտեղից անցել է, ամեն տեղից էլ կարող է անցնել...

Նա խոսում էր առանց Զվարթին նայելու, բայց Զվարթը բնազդաբար զգում էր, որ նա խոսում է իրեն համար։ Իրեն համար էր նաև, որ նա սկսեց մտնել գիտական մանրամասնությունների մեջ, որոնք միանգամայն անհասկանալի բաներ էին լսողների համար։

Սկսեց բացատրել արդի մեքենագիտությունը, մանրամասն տեղեկություններ տվեց խուզարկիչ գերաձայնի, զիրոսկոպային ուղեցույցի և ուրիշ հրաշալի նորությունների մասին։

Ունկնդիրները լսում էին իրենց աչքերը բացխփելով։ Պարոն Արտեմը՝ Զվարթի հայրը, եթե մեն հարցեր էր տալիս։

— Նավաստի՞ ջան, ինչպե՞ս ասացիք... ռադիո ի՞նչ...

— Ռադիոգոնոմետրիկական...

— Ախպեր, մարդիկ զարմանալի բառեր են հնարում...

Զվարթը բաղմահարկանի այդ բառերի հետևից լսում էր ուրիշ, ավելի իրական մի ձայն։

— Տեսնո՞ւմ ես,— ասում էր այդ ձայնը,— տեսնո՞ւմ ես ով է հետդ խոսողը... Այո՛, այո՛, այո՛, նա վատ և անճիշտ է երգում... Ի՞նչ արած, սիրելի օրիորդ, նա այն տենորներից չէ, որոնց ձայնը կլկլում է և որոնց գլուխը խոռով է լցված... Նա ծուլի պարզ մարդ է, ալիքների նման համառ և շառաչուն, քամիներից ծեծված մարմնով, համարձակ սրտով, երկաթե կամքով...

Եվ այդ ձայնը նրան վախեցնում էր և հափշտակում։

Կեսօրը վաղուց անցել էր։

Կերուխումը դեռ շարունակվում էր։ Տղամարդիկ, այլևս տաքացած, անկապ ճառեր էին արտասանում և բղավելով երգում։ Ամեն կողմից երաժշտության ձայներ էին լսվում։ Տեղ-տեղ պարում էին։

Վանքի առագաստանավը հանգիստ չուներ։ Հազիվ թե բազմությունից դատարկվում էր, վերադառնում էր ափը և նորից լցված ետ էր գալիս։

Նոր եկողների համար կրակները նորոգվում էին և մսի շամփուրները շարվում։

Հերյանը, մի քիչ հոգնած, հետաքրքրությամբ դիտում էր։ Էլ չէր խոսում։ Մյուսներն էլ լռել էին։ Հիվանդ ազգկա հայրը մի քանի անգամ վերսկսած իր պատմությունը չէր կարողացել վերջացնել և գլուխը կրծքի վրա գցած կամաց խռմփում էր։ Պարոն Արտեմը, որ դժվար մարսողություն ուներ, ուժ էր անում աչքերը բաց պահելու և պիշ-պիշ սրանների էր նայում։ Զվարթը գնացել էր բարեկամուհիների մոտ։

Երբ Զվարթը վերադարձավ, արդեն երեկո էր։

— Տեսեք, է, տեսեք ի՞նչ հրաշալի վերջույթ է պատրաստվում,— բացականչեց նա։— Պետք է նայել թլուն վրայից... այնտեղից հոյակապ է...

— Գնանք նայենք,— առաջարկեց Հերյանը ոտքի կանգնելով։

— Գնա՛նք...— համաձայնվեց Զվարթը հոր դեմքին նայելով։

Հայրը գլխով համաձայնության նշան արեց։

Բազմության միջից դժվարությամբ ճանապարհ բանալով, սփոփոցների շուրջը պտույտ գալով և կրակների վրայից ցատկելով, նրանք կարողացան հասնել մինչև եկեղեցու մոտերը, ծովեցին և բարձրացան վեր։

Առավոտվա քամին դադարել էր։

Խորացած մի հանգստություն լճի վրա փռվել էր հալված մետաղի նման։ Հեռուն, լեռները թաքնվել էին մեկը մյուսի վրա քայլող հրդեհների ետև։ Ամեն կողմից բոցերի և լույսերի հսկայական հեղեղ էր թափվում։ Այրվող ժայռերի կատարները խառնվել էին այդ հրավառության և մեկ մեկի հրմշտկելով մագլցում էին անհայտը։

Աջ ափից, վայրի բադերի ահագին խմբեր էին վեր թռնում եռանկյուն կազմած, նետի նման մխրճվում էին և կորչում երկնքի անդադար փոխվող լուսավոր հոսանքներում։

Այդ լույսերը թափվել էին Զվարթի հափշտակված երեսի վրա և այտերը վառել։ Նա քայլում էր լուռ, խոր երազանքի մեջ ընկած։ Կես ճանապարհին, վերադարձող մի խումբ աղջիկներ հենց որ Զվարթին տեսան, բոլորվեցին նրա շուրջը և օդը լցրին աղմուկով և բացականչություններով։

Հերյանը շարունակեց քայլել։

Գնաց դեպի այն ժայռը, որտեղից այս առավոտ դիտել էր լիճը։ Դժգոհ չէր, որ մնացել էր մենակ։ Ընդհակառակը, այդ նոր գտած աշխարհի մեջ ծնվել էր մի գաղտնիք, որը նա ուզում էր պահել միայն իրեն համար։ Լավ չգիտեր, թե ինչումն է կայանում այդ գաղտնիքը, սակայն, իր սրտի ամբողջ ուժով, նա զգում էր, որ դա կարևոր է, անհրաժեշտ ինչպես ճակատագիրը։

Մի քանի վայրկյան սպասելուց հետո նա ցատկեց առաջին քարի վրա և երբ ուզում էր մագլցել ավելի վեր, լսեց իր անունը։

Վարը կանգնած էր Զվարթը։

Ճակատի վրա ընկած մազերի փոքրիկ գանգուրները անհանգիստ շարժվում էին, դեմքը ամբողջովին լուսավորված էր և աչքերը, որոնց մեջ վերջալույսը կրակ էր զետեղել, փայլփլելով հառել էին Հերյանի վրա և սպասում էին։

Հերյանը մի վայրկյան մնաց քարացած։ Հայ այդ աղջիկը նմանվում էր անիրական մի տեսիլքի։ Կարծես նա ևս եկել էր շատ հեռվից՝ լույսեր և երազ դառած։ Նրանց նայվածքները հանդիպեցին և խորացան մեկը մյուսի մեջ։

— Ահ, դո՞ւք եք, օրիորդ,— ասաց Հերյանը սթափվելով։

Ցատկեց վար և նրան օգնեց վեր բարձրանալ։

Նստեցին և առանց բառ արտասանելու նայեցին։

Արևի կարմիր գունդը, չափազանց մեծացած, դանդաղ իջնում էր ուրվացնոր սլաքներով ձգված լեռների կուտակումների ետև, ինչպես վայրենի աստվածության խորհրդավոր մի դիմակ, որը գործողությունը վերջացնելուց հետո լքում է բեմը, ոսկիներով և կրակներով հյուսված կախարդական մի վարագույրի հետևում անհետանալու համար։

Գրոհ տվող այդ գույները և պսպղացող ճաճանչները կարծես թաքնված երաժշտության ձայներ էին. ճառագայթների ծնծղաները, մեկը մյուսին էին բախվում, սրինգները հալված ապակի՝ արտացոլվող լույսեր էին դաշնակում, և բոցակիզված մետաղները դղրդալով վայր էին թափվում օդի լարված թմբուկների վրա։

Լիճը, ոսկի այդ հեղեղով լցված, երփներանգ քամիներից ծեծվող հսկայական խարույկի էր նմանվում։

— Ի՞նչ գեղեցիկ է,— հառաչեց Զվարթը հազիվ լսելի ձայնով։

Աչքերը տվեց Հերյանի աչքերին և այդպես մնաց։ Այդ, վայրկյանին նա նմանվում էր գինով հավերժահարսի։

— Հանգիստ նստեք,— ասաց Հերյանը։— Տեսեք... վարը...

Զվարթը նայեց և, երբ տեսավ երկու ժայռերի մեջ մինչև լիճը բացվող վտանգավոր ճեղքվածքը, վախեցավ և բռնեց Հերյանի թևը։

Էլ բաց չթողեց։

— Ձեզ հետ չեմ վախենում,— փսփսաց նա։

Հերյանը իր թևը բոլորեց Զվարթի իրանի շուրջը և նրա ձեռքը առավ ափերի մեջ։

— Իրավունք ունեք, կարիք չկա վախենալու... ինչ որ էլ լինի...

Ու երկար ժամանակ լռեցին։

Հորիզոնը գնալով գունաթափվում էր, տեղ-տեղ ընկղմելով անվրդոհտ լուսավորությունների մեջ, տեղ-տեղ արյունի գետակների վրայից սահելով կամ ընկնելով բաց դեղին հեղուկների ծոցը, որոնց վրա մանիշակագույն քողեր էին իջնում։

Կղզին կամաց-կամաց շրջապատվում էր ստվերներով։

Հեռվի լեռները, անհանգիստ ամպերի հետ մաքառելով, քայլ առ քայլ ետ էին քաշվում։ Նրանց շուրջը թափառող լույսերի և շուքերի պատճառով երկնքի զանազան մասերում անսպասելի ճեղքվածքներ էին բացվում և բարձրաբերձ գագաթների սպառնացող շարքերը մի վայրկյան վեր ցցվելուց հետո անհետացնում էին նրանց։

— Ի՞նչ մեծ բեմադրող է երկինքը,— ասաց Զվարթը,— ինչ տարօրինակ բեմադրող... Արևը ամեն օր դուրս է գալիս և ներս է մտնում, ինչպես հսկայական դրամայի հերոս... Եթե մարդ կարողանար ճանաչել մյուս ծածկված դերակատարներին...

— Նրանք, անտարակույս, գոյություն ունեն... մենք չգիտենք... Այսինքն, գիտենք և չգիտենք... Գիտենք մեր մեծագույն խելքով, որ չի տրամաբանում... Կան բաներ, որ խոսքերով չես կարող հարցնել։ Նրանց չես կարող ասել. եթե ասես՝ քեզանից կփախչեն, կհեռանան...

— Առում են, լուսավորչից առաջ այս վայրերում մեծ և զորեղ աստվածներ էին տիրում...

— Նրանք դեռ կան, այստեղ են։

— Իսկ ես կարծում էի առասպելներ էին։

— Ճառասպելները ավելի իրական են, քան իրականությունը։ Ես հաստատ գիտեմ, նրանք կան, ներկա են ամեն տեղ... Լճի մեջ, ափերի մոտ, այստեղ...

— Այստե՞ղ...

Զվարթը ուսերը անհանգիստ շարժեց։

— Պատկերացրեք, ես նրանց ներկայությունը շատ պարզ կերպով զգացի այս առավոտ։

— Ո՞ւր։

— Եկեղեցում։ Շատ զարմանալի էր... Այդ տեսարանը մեխվել, մնացել է մտքիս մեջ։ Ինձ շատ տարօրինակ թվաց ոչխարներին օրհնող քահանան, իր թափթփված մորուքով, քիչ կռացած իր քթով, իր ճեղքված փոքրիկ աչքերով... Մի բոպե ինձ այնպես թվաց... ինչպե՞ս ասեմ... թվաց որ... եթե շուրջառը մի քիչ վեր բարձրացներ, տակից անպատճառ այծի ոտքեր պիտի երևային...

— Ահ, պարոն Հերյան, վառ երևակայություն ունեք...

— Հա, էլի... Ո՞վ է իմանում ինչու համար այդ բաները գալիս, տեղ են բռնում գլխումս... Այն էլ ասեմ, որ ծովի երկար ճամփորդությունների ժամանակվանից միտքս սովոր է արկածների... Մարդ երբ մենակ է, ուզում է շուրջը ամեն ինչ ապրի... Ամեն բանի հետ խոսում է և ամեն բան խոսում է նրա հետ...

Լռեցին։

— Ուշացա... Ծթենում է, և հայրս կարող է մտահոգվել... Ես գնում եմ...

Հերյանը իջավ, ձեռքերը կարկառեց և Զվարթին առավ իր թևերի մեջ։

— Թողեք...

Սեղմեց կրծքին և որոնեց նրա շրթունքները։ Գտավ։ Այդպես մնացին։

— Այդ պետք չէր,— ընկճված ձայնով բողոքեց Զվարթը։— Ա՜հ, այդ պետք չէր...

Գրկից ազատվեց, մազերը կարգի բերեց, վերջին բարձրությունից ցատկեց վար և մի քանի անորոշ քայլերից հետո ճամփան գտավ։ Ամբողջ ուժով վազեց վար։

Հերյանը աչքերը փակեց և երկար շնչով օդը ներս քաշեց։

Իջնելու ժամանակ կանգնեց վանքի վերի հինավուրց եկեղեցու առաջ։

Ի՞նչ հրաշք էր, որ այդ տաճարը դեռ մնացել էր կանգուն։ Շինված նախկին կռապաշտական մեհյանի հիմքերի վրա, քրիստոնեության առաջին դարերից ի վեր, նրա առաջից անցել էին դեպքերով բեռնավորված, խիստ ամեհի գարեր և արյուն ու երկաթով դարբնված ժամանակաշրջաններ։

Մեռել էին մեծգի պետությունները, անհետացել էին ժողովուրդներ և ցեղեր, իսկ նա մնացել էր կանգուն։

Անխնամ, որբ, թշվառ։

Տանիքը ծուված, քարերը շաղախից պարպված և եզանակներից կերված։ Կոտրատված պատուհանները լցված էին անկանոն շարված քարերով, դռները փլված, գերանները վայր ընկած։

Աղքատ մի ուրվական էր. հոգու մուրացկան։

Ներսը մի քանի մոմեր էին բոցկլտում։ Հերյանը, որի ուշքը միտքը վանքն էր, ուր գտնվում էր Զվարթը, ուզեց եկեղեցու առաջից շտապով անցնել, սակայն չանցավ, այլ կանգ առավ և առանց իրեն հաշիվ տալու, թե ինչ է անում, մտավ ներս։

Կարծես մեկը կանչում էր նրան։

Եկեղեցին պարապ էր։ Խոնավ, պաղ։ Մեղրամոմ և մգլոտություն։ Կանգնեց սեղանի առաջ. միակ լուսավորված տեղը։ Դեղնած էջերով մեծ մի ավետարան էր բացված։ Փոքրիկ մոմակալների վրա կաթկթող մոմեր էին կպցված։ Բոցերի աղոտ լույսերը անհանգստացնում էին շրջապատող մութը մեծ ստվերներ պտտցնելով։

Երբ նրա աչքերը սկսեցին սովորել մթին, սեղանի պատերի վրայից նկարները վար նայեցին։ Կամաց-կամաց արթնացան և մեծացան։ Պատը դուրս ցցեց երկայն մարմիններ, կրծոտված դեմքեր, խոր ընկած սև աչքեր, տակնուվրա եղած մորուքներ և սոկրատ, անբնական ձեռքեր, որոնք գալարվելով խորտակված այդ կրծքերի վրա մաշված գրքեր էին սեղմում։

Հերյանի աչքերը հանդիպեցին նրանց աչքերին։

Խիստ, ընդարձակ, ֆոսֆորե աչքեր։

Պատկերները պատը լքելով աննշմարելի կերպով առաջանում էին։

Հերյանը ետ քաշվեց։

Այդ վայրկյանին տանիքից կախված մի բան շարժվեց։ Երևի չղջիկ էր կամ... Վեր նայեց։ Ոչինչ չտեսավ։ Նայեց պատկերներին, նրանց լայնացած աչքերը տիրեցին նրա վրա։ Նրա նայվածքը քաշեցին ներս, նվաճեցին։

Այլևս չկարողացավ տեղից շարժվել։ Խուլ պայքար սկսվեց նրա ներսում, գիտակցությունը սքողվեց, կորցրեց իր հստակությունը։

Մոմերից երկու հատ ծուվեցին, բոցկլտալով մի քանի ստվերներ լվացին և մեռան։

Մութը դեռ ավելի խորացավ։ Ու, հանկարծ, եկեղեցու խորքից, ոտնաքայլերի ձայներ լսվեցին։ Հերյանը ետ դարձավ և մնաց ապշած։ Դեմը կանգնած էր Պետրոս Մարկը։

Մարկը՝ Հնդկաստանից եկած այն հայը, որին հանդիպել էր ճաշարանում։

— Բարև ձեզ, քեափթըն, բարև ձեզ...

Թուխ և մազոտ ձեռքը երկարեց և Հերյանին ջերմ կերպով ողջունեց։ Ձեռքը պաղ էր և բալուկը — այդ մասին Հերյանը հետո միայն հիշեց — տարօրինակ կերպով երկար։

— Տեսա, երբ ներս մտաք և սպասեցի, որ ձեր աղոթքը վերջացնեք... Հիրավի, սրանք նշանակալից վայրեր են, որոնց հետ հաղորդվելու համար արժե հազարավոր կիլոմետրեր ճեղքել անցնել, ինչպես անցել եմ ես... Նշանակալից, կարևորագույն վայրեր են...

— Ուրախ եմ, պարոն Մարկ... չէի սպասում...

— Իսկ ես մտածում եմ, որ պետք է միշտ-միշտ սպասել... Ես ձեզ սպասում էի, ինչպես ահա այս սուրբ և խեղճ պատկերները սպասում էին ինձ և ձեզ... դարերից ի վեր... Հոգու սահմանները, քեափթըն, ինչ ճանապարհ էլ քայլես հասնելու համար, անդադար ընդարձակվում և հեռանում են։

Քթի տակ կամաց ծիծաղեց և այդ վայրկյանին նրա դեմքը հնդկական որմնաքանդակներից դուրս եկած դիմակի կերպ ստացավ...

Պետրոս Մարկը հագել էր դեղին գծերով մոխրագույն զգեստ, անգլիական ճաշակով կարված։ Տաբատը չափազանց վեր էր քաշված և բաճկոնը, որի ուսերը նեղ էին, կպած էր մարմնին և թվում էր փոքր։ Վզի օձիքը բարձր էր և ձեռքին բռնել էր հարդե, շատ լայն ծայրերով մի գլխարկ։

Տարօրինակը այն էր, որ խոսած վերացական բաները բոլորովին չէին համապատասխանում նրա հագնվելու ձևին։ Կարծես այդ զգեստները իրենը չէին։ Սակայն, համոզիչ էր ձայնը, որ երբեմն սրվում էր և

երբեմն էլ խլանում, խորանում և մանավանդ, համոզիչ էին նրա շատ սև, շատ փայլփլուն աչքերը, որոնք — ինչո՞վ կարելի էր այդ բացատրել—հար և նման էին սեղանի առաջ կախված պատկերների աչքերին։

Ծարավ, կլանիչ, հափշտակող։

Խոսելու ժամանակ վիզը բադի նման երկարում էր։ Սեղանի վրա դեռ վառված մի քանի մոմերը նրա այտերի դուրս ընկած ոսկորների շուրջը շարժվող շուքեր էին կախում, աչքերի տակ փոսեր զետեղում, կզակը սրում և դուրս ընկած կոկորդը ավելի ևս ուռեցնում։

Հուզվելու ժամանակ շատ քիչ կակազում էր։

— Ասեմ ձեզ, քեափթրն, և դուք հասկացեք. աշխարհիս վրա ամեն ինչ շրջում է, պտույտ գալիս։ Արևը, աստղը, մարդը... Քիչ առաջ, այնտեղ խորքում կանգնած մտածում էի. մարդիկ անցնում են փոքր երիվույթների կողքով առանց նշանակություն տալու... չեն տեսնում, չեն նայում... Մինչ, տեսեք, այդպես կոչված դրական գիտությունն իսկ հյուլեներով և ծանրականության օրենքով է տիեզերքը կառուցում... Խնձորը ծառից պոկվում է և երկիրը նրան քաշում է իրեն և այդ նույն նյուտոնյան օրենքով լուսինը մնում է իր շավիղի վրա և պահվում են բոլոր մարմինները... Ուզում եմ ասել, գոյություն ունեցող բոլոր երևույթները շաղկապված են և, բոլոր երևույթները, փոքր թե մեծ, հավասարապես կարևոր են տիեզերքի համար...

Լռեց և Հերյանի աչքերի մեջ պրպտեց։ Գլուխը վար նետեց և բավական ժամանակ այդպես մնաց։ Այդ լռության վերջ տալու համար Հերյանը ուզեց մի բան ասել։ Նաև ուզեց ցույց տալ, որ Մարկի ասածները իրեն այնքան էլ հասկանալի չեն և քիչ համոզիչ...

— Դե... իհարկե...— սկսեց նա չափազանց բարձր ձայնով և առանց համոզումի,— դե, եթե մարդ լավ մտածի...

— Միտքս վերջացնեմ, հետո դուք ձեր ասելիքը կասեք,— շարունակեց Մարկը նրա խոսքը կտրելով։— Նախ, պետք է խոստովանեմ. մեր երկրում շատ անգամ ինձ օտար եմ զգում... Օտար՝ արտաքին, դրսի կյանքին... Այն չէ, որ սպասում էի, այն չէ... Կարծում եմ պատճառը այն է, որ երբ մարդը իր միջավայրից հեռու է ապրում, ամեն ինչ ուրիշ կերպ է տեսնում... Ցեմ ասում միշտ ճիշտ, բայց մեծ և խոր... Հեռվից նա նայում է իր երկրին, ինչպես սարի վրայից նայում են դաշտավայրերին՝ բազուկները լայն բաց արած հորիզոնով... Եվ նայում է ներքին աչքերով... հոգու մոտ բացված աչքերով... Ոչ իբրև անձնավորություն, այլ իբրև անձ։ Բայց, քեափթրն, կարող է այս ամենը ձեզ իսկի չի հետաքրքրում...

— Ի՞նչ եք ասում, խնդրում եմ... Բա, ինչպե՞ս չէ... շա՞տ...

— Շնորհակալ եմ... Ասում եմ իրոք անձ... Պետք է տարբերել, այնպես չէ՞, պետք է տարբերել... Անձը գերիմացական է և գերժամանակային... որված մի միություն է, ավելի լայն, ավելի ընդարձակ, քան մեր առօրյա գիտակցությունը։ Անձը մեր մեջ կանգնած անփոփոխ մի ներկայություն է, որի թելադրությունները վճռական են և որոշ չափով հավիտենական... Կարողացա՞ բացատրել...

— Շարունակեցեք տեսնենք...

— Շնորհակալ եմ... Համայնության մի անգամը, ազգի մի զավակը, ընկերային մարդը — և մեզանից ամեն մեկը ընկերային մարդ է — ներկայանում է նախ և առաջ իբրև նկարագիր... Մեկը այսպես, մյուսը այնպես... Այդ նկարագիրը կազմվում է զանազան ազդակներից... Ես ի՞նչ իմանամ, բնածին հատկությունները, կյանքի ընթացքին ձեռք բերած կարգադրությունները, ուժը, առաքինությունը և կամ, ընդհակառակը, թերությունները, պակասությունները, արտաքին պայմանների պարտադրած շեղումները... Ուզում եմ ասել նկարագիրը անձնավորությունն է. ենթագրյալ, փոփոխական, ժամանակավոր... Անձը տարբեր է։ Նա կանգնած է մեր փարձնական նսի շերտերի տակ։ Նկարագիր չէ, փոփոխական չէ, ենթագրյալ չէ, ժամանակավոր չէ, այլ մնայուն է, տևական, ինչպես անմար ճրագ։ Եվ ահա, հենց հարցը գրանում է, իսկական մարդկային էությունը պիտի հասնի այդ ճրագին, պետք է տարածի նրա լույսը, որովհետև այդ լույսը գալիս է ազգակի արևից, գալիս է ազգված հոգայն տիեզերքից... Ես մոռացա ձեր անունը, քեռափթքն...

— Արա Հերյան։

— Շնորհակալ եմ։ Շատ լավ անուն է, շատ լավ... Ուրեմն, Արա Հերյան, իմանանք. այդ լույսը ճանապարհ է։ Կան հեռավոր որևելքում հույժ մեծ մատծազներ և նրանց մեջ կա մեկը, որի իմաստության աղբյուրին ես միշտ մատենում եմ ծարավով, նրա անունն է Լաոզզե. Լաո՞լ ես... Արդ, ասել է Լաոզզեն,— երբ կորցնում են ճանապարհը՝ մնում է առաքինությունը. երբ կորցնում են առաքինությունը՝ մնում է բարոյականությունը. երբ կորցնում են բարոյականությունը՝ մնում է օրենքը. երբ կորցնում են օրենքը՝ մնում է սովորությունը։ Իսկ սովորությունը բարոյականի արտաքինն է միայն և նրանից սկսվում է ապականումը... Ասել է, նախ ճանապարհը։ ճանապարհը՝ անձը։ Շատ հետաքրքիր է, այնպես չէ՞...

— Զգիտեմ, ինձ համար գոնե անհասկանալի...

— Հիմա ասեմ. ես քայլեցի այս երկրի դաշտերից և լեռներից, մտա քաղաքներ ու գյուղեր, լսեցի մարդկանց ու կանանց և սիրտս

սեղմվեց... Հայոց ազգը, պարոն նավապետ, կորցրել է ճանապարհը, և պահել է միայն սովորությունները... Կորցրել է ոգին, պահել է ձևը... Մենք պարտված ենք։

Ձեռքերը ծալեց կրծքի վրա և թուխ դեմքը մոայլվեց։

— Ես այդ ասում եմ, որովհետև ձեզ հանդիպեցի այստեղ, նշանակալից այս վայրում, ուր մեզ վիճակված էր տեսնել, խոսել, մտածել։ Հասկացեք. ես եկել եմ հեռուներից, լցված սրտով, ծարավ և տանջված... ինքս իմ հետևից վազելով... Եվ ահա, կորցրել են ավանդությունները... ցիրուցան են եղել... Ախր, ասում են ազգ, ասում են երկիր... Ես առանց այստեղ գալու էլ ճանաչում էի իսկական մեր երկիրը այնպես ինչպես կա... Ոչ իբրև պարզ տարածություն, այլ իբրև լուսավոր և գաղտնի մի կենդանություն... Չգիտեմ, երբեք մտածե՞լ եք այդ մասին. արևմուտքի գիտնականները տարածությունը համարում են չեզոք մի վայր, որը պարունակում է մարմիններ և շարժումներ։ Նրանց համար տարածությունը նյութ է և դեպքը՝ դեպք։ Առանց փոխադարձության, որ ասել է առանց միության։ Եթե մենք էլ այդպես մտածենք, եկել է վերջը և ճանապարհը փակ է...

— Լավ,— ասաց Հերյանը հետաքրքրված,— իսկ մենք ինչպե՞ս պետք հասկանանք երկիրը...

— Ասեմ, քեսափթրն, ասեմ... Կան երկրներ, ինչպես, օրինակ՝ Ամերիկան, որոնք չեն պեղված, չեն մշակված ոգիով։ Նրանք պարզ նյութ են, ենթարկված բնության տարրական օրենքներին և մարդկանց քմահաճույքներին։ Սակայն գործունյա ու երիտասարդ են ոգով և կոչված են կառավարելու կյանքում... Իսկ կան նաև երկրներ, որոնք պատկանում են Սրբազան աշխարհագրության, ուր ամեն մի բնական երևույթ պատճառաբանված է հոգեկանով և ուր մարդկային ամեն մի շարժուձև մասնակցում է այդ հոգեկանին... Գա, կենդանի, մագնիսականությունով լցված, բախտագուշակ, բնազանցական տարածություններ են, որտեղ բոլոր նշանները գծված են, և որտեղ ամեն մի ժեստ, ամեն մի գործողություն, ամեն մի արտասանված բառ ստանում է գերագույն նշանակություն։ Իսկայն այդ երկրներն արդեն անզոր են, ծերացած, նրանք պետք ունեն մի այլ երկրի զորավոր ղեկավարության։ Տեսնք, մեր այս երկրում, մինչ անձը վերածվել է անձնավորության, կորցրել մարդ-աստվածային բնույթը, ենթարկվել գորշացած միջին տեղերին, մոռացել հոգեկան ավանդակները, երկրի և անհատի միջև առաջ է եկել երկվություն։ Աշխարհագրության համապատասխան միակ երևույթը, որ մնացել է, այն շենքերն են, որոնցից մեկի մեջ ահա կանգնած ենք...

— Իբրև կրոնի, քրիստոնեության արտահայտությո՞ւն...

— Չէ՛, չէ՛, ավելի քան այդ... Նրանք եկել են ավելի հեռվից և ավելի են, քան մեզ պարտադրված կրոնը... Նրանք հայոց ժայռերի և լեռների լույսերով են կառուցված, նրանք համադրում են անձը և երկիրը և ցույց տալիս այն ճանապարհը, որի մասին խոսում էինք... Ես ման եկա ամեն տեղ և ամեն տեղ ես որոնեցի նրանց... Տեղ-տեղ նրանք մնում են կանգնած, քարերով արտահայտված սառած երգի նման, տեղ-տեղ նրանք վիրավորված են դարերից, հողմերից և մարդկանցից, սակայն, ողջ կամ կիսաքանդ, նրանք վկայում են անդիմադրելի մի ձգտում, ներքին և ներուժ մի կեցվածք, հոգեկան մի նախատվյալ, առանց որի չկա և չի կարող լինել իսկական կյանք... Այնտեղ, նրանց մեջ, գծվել են սահմանները, գտնվել է միությունը, ծնվել է աստվածայինը։ Այդ գծերի միակ պայծառությունը, որ թռիչք է և ուժ, որ բացարձակ ձև է և ամբողջություն, առաջ է եկել երկար և տաժանելի այն պայքարներից հետո, որ մեր ժողովրդի ոգին մղել է քաոսային, գիշերով և կախարդանքով հագնված հոսանքների դեմ, ինչպես նրանցից առաջ, ողիմպիական լուսավոր սկզբունքը պայքարել էր օձ-աստվածների և աստված-օձերի, դևերի, կենդանու, գլուխներով էակների, ստորերկրյա մոգական կրակի և ուրիշ մութ, անարևային ազդեցությունների դեմ։ Այստեղ, նավապետ, հայը երկրորդ անգամ և ուրիշ ձևի տակ վառել է այն ճրագը, որ ժամանակին դորիացիները վառել էին իբրև հաղթության նշան կրետա-մինոյական աշխարհի դեմ։ Հայը գտել է իր հոգեկան միությունը, իր լույսը, որ տարածել էր աշխարհի չորս կողմը...

Կանգ առավ. մի վայրկյան մտածեց։

— Ամեն մի ժողովրդի գերագույն նպատակն է,— շարունակեց նա,— տարածել մարդկայինը, և տեսանելին՝ տիեզերքի և անտեսանելիի մեջ... Հայ տաճարը առաջին կարևորագույն քայլն էր այդ նպատակին հասնելու համար։ Ոգին համադրված էր, ոճը գտնված, սանդուղը վեր կարկառված, սակայն բարձրացող չեղավ... Եկավ նորից գիշերը և քաոսը, հայ ժողովուրդը կորցրեց իր ձեռք բերած ճրագը և մտավ երկրաշարժային մի շրջան...

— Մենք մեղավոր չենք... պատմությունը... արտաքին պայմանները,— բողոքեց Հերյանը։

— Գիտեմ, սովորություն է այդպես ասել։ Սխալ է։ Հոգեկան զորությունը և միությունը անհաղթելի են... Արտաքին դեպքերը մեզ այցելում են այն ժամանակ միայն, երբ մենք ներքնապես արդեն պատրաստ ենք ընդունելու նրանց... Ոգին է, որ ստեղծում է արտաքին դեպքերը, նա է հրավիրում նրանց... Չէ՛, չէ՛, համաձայն չեմ ձեզ հետ... Ասեմ պարզ, ահա նորից ժողովրդի առաջ ցցվել են վճռական օրեր, տա-

ժանելի, սոսկում ազդող օրեր... Դեպքերը գրոհ են տալիս մեր վրա անսպասելի կերպով, մեկը մյուսի հետևից... Նրանք գալիս են օրերի պողպատով զինված, հարվածում են մեզ և մենք՝ զարմացած և վշտացած, հարց ենք տալիս, թե ինչո՞ւ... ինչո՞ւ... ահա խնդիրը...

— Ինչո՞ւ,— փսփսաց Հերյանը։

— Ինչո՞ւ... Դուք քիչ առաջ հուզված նայում էիք այդ պատի վրայից ճառագայթող նայվածքներին... Ես հետևում էի ձեր ամեն մեկ շարժումին և եթե մոտեցա ձեզ պատճառը այն էր, որ ես ևս նույն պահին անցկացնում էի տագնապի մի վայրկյան... Ինչո՞ւ, ասում եք դուք, ինչո՞ւ... Նայեցեք նրանց, և նրանք ձեզ կասեն... Հարգանքներս, քեափիրն, հարգանքներս...

Եվ Պետրոս Մարկը անհետացավ։ Կորավ մութի մեջ։

Հերյանը իր ճակտի վրայից պաղ քրտինքի կաթիլները սրբեց և նետվեց դուրս։

Վանքի վարի բակից երաժշտության և ծափի ձայներ էին լսվում։ Ափի մոտ մեծ խարույկ էին վառել։ Թեթև քամուց տրորված, նրա բոցերը դժգույն և անհանգիստ լուսավորություններ էին սփռում պարողների և նրա շուրջը բոլորված բազմության վրա։

Վերևից այդ տեսարանը թվում էր անիրական, գրեթե երազային։

Իշավ ցած։ Ուզեց պարը տեսնել Պետրոս Մարկի տարօրինակ խոսակցության ծանրությունից ազատվելու համար։ Չնայած այն բանի, որ Հերյանը չէր համաձայնվել նրա արտառոց գաղափարների հետ, այնուամենայնիվ, դրանք ճնշել էին իր սրտի վրա, խախտել հոգու անդորրությունը։ Բնության ծոցում լվացվեցին նրա մտածումները։ Ամեն ինչ՝ գույն, լույս, ձայն՝ անմիջապես արձագանքում էր նրա հոգում, հնչում, լուսավորվում, ընդարձակվում։

Պարում էին։

Նվագախմբի ձայները նվաճել էին գիշերը։

Մեղմ, գրեթե մելամաղձոտ մի նվագ։ Զուռնայի սուր կանչը սավառնում էր աշխարհի վրայից դեղնելով և տրտմելով։ Թմբուկը ընկերակցում էր ընդհատ բախումով։ Մի զարկ, դադար, ապա նորից մի ուրիշ զարկ։ Մյուս գործիքները համաձայն ներդաշնակությամբ, անվերջանալի հառաչի նման, մի գանգատ էին կրկնում։

Մեղեդին օրոր էր գալիս, անորոշի մեջ։

Պարողները՝ իրենց չերքեզկաների՝ ծայրերը գոտիի մեջ խոթած, մերկ խանչալները ատամների տակ սեղմած, երբեմն խանչալները աջ ձեռքով խաղացնելով, գաղտագողի և խուզարկիչ շարժումներով գանդաղ

առաջանում էին, կարծես ահա, խավարի մեջ մոտենում են թշնամու բանակատեղին, անպասելի հարձակվելու համար։

Երբեմն կանգ էին առնում, բարձրանում իրենց ոտքի մատների վրա, նայում դեպի անորոշ հեռուն, պտույտ գալիս և խանչալով շրջաններ գծելուց հետո նորից սահում առաջ։

Բայց ահա, քիչ հետո, երաժշտական գործիքները սկսեցին անհանգիստ աշխուժանալ։ Դամ պահող զուռնան աքլորի նման կատարը վեր ցցեց և ձայների սանդուղների վրայով երկու աստիճան բարձրացավ։ Նայեց, ձայնեց և, հեռուն պատրաստվող մի վտանգ նախատեսելով, մտահոգվեց, թևերը թափ տվավ և օգնություն կանչեց։ Թմբուկը սիրտ բաբախելով միացավ նրանց։

Պարողները ականջ տվին, հասկացան։ Իրենց մեջքերը ծռելով ամբողջ մարմնով գոռացին, խանչալները վեր կարկառեցին և, ուրախ, որ վերջապես պիտի կարողանան ցույց տալ իրենց քաջությունը, ոտքերի փոքրիկ շարժումներով ծեծեցին գետինը։

Շուրջի բազմությունը ռիթմիկական ծափերով քաջալերեց նրանց։

Պարողները ոգևորվեցին։ Աշխույժ շարժումներով սահեցին, ետ և առաջ գնացին, որոշ տեղերում կանգնած նաղ եկան, ապա ցատկռտեցին, ոստոստեցին և գրոհ տալով հարձակվեցին երևակայական վագրերի ֆամ թշնամիների վրա։ Տաքացած, օդի մեջ պսպղացնելով խաղացրին իրենց խանչալները, աջ ու ձախ հարվածեցին և այլևս հաղթական պտույտ եկան իրենց զոհերի շուրջը և վայելուչ, և տոնական ձևերով պարեր հյուսեցին։

Հերյանը նայում էր հիացած։ Ո՞ւր էր Պետրոս Մարկը, այդ ցնցած փիլիսոփան, մտածում էր նա, թող գար տեսներ։ Պարը ևս ճարտարապետություն է և կառուցողական ոգի, ուժ է նա ու ջահելություն, թող գա Պետրոս Մարկը ու տեսնի ծերացա՞ծ է այս ժողովուրդը...

Ճկուն, կայտառ, աղատ հայություն էր այդ, որի գեղեցիկ շարժումների մեջ թաքնված էր և՛ վեհություն, և՛ ուժ, և՛ խոհություն։ Ա՜հ, Մարկը գար և տեսներ...

Մինչ պարը գնալով ավելի էր հուզվում և ավելի բարդանում։

Բոցկլտող խարույկի անհանգիստ լուսավառությունը տեսարանը պեղում էր և խորացնում։ Բռնկող բոցերը և նրանց հաջորդող ստվերները սահում էին թրերի, դանակների, երեսների վրայից և ամեն ինչ մեծացնում, լայնացնում, քանդակում։ Շարժումները կրկնապատկվում էին, ձևերը գալարվում, դես ու դեն նետվում, փշրվում...

— Տաշ-տաշի, տաշ-տաշի,— ծափերով կրկնում էր բազմությունը, տարվելով այդ պարի գեղեցկությունից։

Հափշտակված էին մանավանդ կանայք։ Նրանց կրծքերը սարսռում էին, նրանց մեծ նշանման աչքերը վառվում։ Ծափ էին զարնում ամբողջ ուժով, օդը բացականչություններով լցնում և աշխատում պարողների նայվածքները որսալ նրանց սեր և կորով ներշնչելու համար։

— Տաշ-տաշի, տաշ-տաշի...

Շուտով, պարողներից մեկը, երկայնահասակ շեկ մի տղա, խմբից առանձնացավ, մի քանի անգամ սահելով պտույտ եկավ, ետ առաջ գնաց և, թեթևորեն ոստոստելով եկավ մի օրիորդի առաջ և այնտեղ արագ-արագ ոտքերը գետին կոփկոփեց։ Կանգ առավ, երկու ձեռքերով բռնեց իր գոտուց կախված խանչալը, ոտքերը միացրեց, քարևեց և ձեռքի լայն շարժումով հրավիրեց նրան մտնել պարողների շրջանը։

Աղջիկը կարմրեց, ետ քաշվեց, գլխի շարժումով մերժեց։ Պարողը նոր պտույտներ արեց և նորից վերադարձավ։ Ստեի կանգնողները նրան քաջալերեցին և հրեցին ներս։ Աղջիկը նազով թևերը վեր առավ, մեջքը մի քիչ ծռեց և փոքրիկ, սահուն քայլերով, գլուխը մի կողմ թեքած առաջացավ, բաղուկները կամաց շարժեց և սարսռող արձանի նման մնաց մի կետի վրա։

Վայրկյանի այդ թագուհու ուշադրությունը իրենց վրա հրավիրելու համար պարողները աշխույժ և ջերմ մրցումի մեջ մտան։ Մեկը մյուսի հետևից նետվեցին նրա առաջ, շուրջը պտույտ եկան, գժվարին ձևերով գետինը կոփեցին, թռչկոտելով սահեցին և սպասեցին, որ նա հաճի իր ընտրությունը անել։ Երբ վերջին երիտասարդը հովի նման շրջեց, թռավ անցավ, աղջիկը՝ կարծես մի բանից սարսափած, դողացող թևերը լայն բացեց և ջրի վրայից հանկարծակի վեր բարձրացող վայրի բազի նման սահեց։

Երիտասարդները խմբով ընկան նրա հետևից և նույնպես սահեցին։

Հերյանը լույսի պակասության և առաջը կտրող բազմության պատճառով լավ չէր կարողացել տեսնել պարուհու դեմքը։ Սակայն, երբ նա նուրբ ճախրով մոտեցավ և աչքերը հանդիպեցին նրա աչքերին, զարմանքով տեսավ, որ պարող աղջիկը Զվարթն էր։

Ամբողջ մարմնով ցնցվեց։

Հիացավ, տխրեց։ Տխրեց նախանձից։ Կարծես որտի ամենամտերիմ բանը վտանգի տակ էր։

Բայց ինչ գեղեցիկ էր այդ վայրկյանին Զվարթը, ինչ գեղեցիկ էր...

Պարը նրան այլափոխել էր։ Ներսից լուսավորված նրա ճկուն մարմինը շարունակաբար կառուցվող մի երգ էր։

Նա, երբեմն հիշեցնում էր լեռների կատարներին սավառնող մենակյաց մի թռչուն, երբեմն էլ՝ ծովափին կանգնած, սարսռող մարմինը

լուսնի շողերով լվացող մի ծովանուշ։ Ահա, ոտքի մատների վրա բարձրացած, հանդիսավոր և լուրջ, ինչպես մի քրմուհի, նա սահում է, կարծես ոտքերը գետնին չեն կպչում։ Եվ ահա, մարմինը ամբողջովին մեղեդիանում է, նազ անում, երազանքով օրոր գալիս, դալկանում։

Հերյանը ծարավով փնտրեց նրա աչքերը։

Բայց, պարով տարված, Զվարթը անցնում էր առանց Հերյանին տեսնելու։ Իր մարմնի կշռույթով հարբած, ավելի մոտ օդին, քան երկրին, նա գրեթե թռչում էր, խույս տալով հետապնդող ոգիներից։ Երբ, մեծ շրջանների բոցերի վրայից ցատկոտելուց հետո, պարողներից մեկը վերջապես հաջողում էր նրա առաջը կտրել, նա հովի նման դառնում էր ետ, թեքվում էր աջ, թեքվում էր ձախ, կամ թևերը պարզած ճանապարհ էր բաց անում խմբի միջից և նորից ազատված, սահում, հեռանում։

— Ինձ ոչ ոք չի կարող բռնել... ոչ ոք,— կարծես ասում էին նրա շարժումները...

— Տաշ-տաշի, տաշ-տաշի,— ծափում էր ոգևորված ժողովուրդը։

— Ի՜նչ աղջիկ է, է՜-է՜,— բացականչում էին շատերը։

— Կրակ է, կրակ... Այդպես աղջկա համար մարդ կարող է հրաշք կատարել, իմ արև,— գոռում է Հերյանի մոտ կանգնած հափշտակված շինականը։

Պարը վերջացավ դղրդալից ծափահարությունների մեջ։

Անմիջապես կազմակերպվեցին ուրիշ պարեր։ Հերյանը, կարճ դադարից օգտվելով, բազմության միջից դուրս եկավ, առաջ նետվեց Զվարթին գտնելու համար։

Զվարթը արդեն նստած էր իրեն հետ պարող երիտասարդների սեղանի մոտ։ Հենց այդ վայրկյանին նրա կենացն էին խմում։ Բարձր, լայն ուսերով մի տղա, երեսը կարմիր բծերով ծածկված, աչքերը մոխրագույն և բեղերը շեկ, բաժակը վեր բռնած ճառում էր, խոսքը ուղղելով Զվարթին։ Երեսը վառված, աչքերը վար առած Զվարթը գոհունակության ժպիտը երեսին լսում էր։

Հերյանի սիրտը սեղմվեց։ Ուզեց այդ տեսարանից խուսափել։ Արագ անցավ, մտավ ծառերի ետև, իջավ ջրի ափը։ Նստեց քարերի վրա։ Անբացատրելի մի մելամաղձություն էր իջել նրա վրա։ Ահ, եթե կարելի լիներ, պիտի ուզեր կղզուց անմիջապես հեռանալ։ Հեռանալ և երիտասարդ ծովային սպայի նման, աստղերի հետևից ընկած, ոտքով քայլել մինչև քաղաք։

Քայլել անվերջ։ Գիշերվա հետ, մենակության հետ, ժայռերի խիստ և սպառնացող ստվերների հետ։

Սիրտը լցվել էր հակասական զգացումներով։

— Սատանան տանի,— մտածեց նա,— պետք է կենտրոնանալ, միայնանալ. պետք չէ աջ ու ձախ ցրվել...

Վերջին օրերի տպավորությունները և ապրումները խուժել էին նրա վրա ծովաբացում հանդիպած անսպասելի հողմերի նման։ Չէ, պետք չէր տարվել... Պետք էր ղեկը ուժեղ ձեռքերով բռնել, ուղեցույցը աչքից բաց չթողնել... Հողմերը նշան են կղզիների, նեղուցների, վտանգավոր անցքերի մոտության... Վերջ ի վերջո, ինքը եկել էր այստեղ միայն լճի համար։ Եվ ահա լիճը, ահա աչքերը նրա աչքերի մեջ, ահա սիրտը նրա սրտին կպած...

Ձեռքերը լցրեց փոքրիկ, ողորկ, գույնզգույն քարիկներով և շոյեց նրանց։ Այդ շոյանքից գրեթե ֆիզիկական հաճույք զգաց։ Լիճը փափկասուն էակի նման դեռ ավելի մոտեցավ իրեն, աչքերը լցվեցին գուրգուրանքով և սիրտը հուզվեց։

— Բարև, Սևան ջան,— փսփսացին նրա շրթները։

Ասաց և սիրտը լցվեց անասելի մի բերկրանքով։ Աչքերը վառվեցին։ Ինչ լավ էր, որ լիճը այդքան մեծ էր, այդքան լայն և խոր, և խիստ։ Իրավունք ուներ ժողովուրդը նրան ծով անվանելու։ Սևանը միայն լույս չէր, լեռների մեջ նետված հայելու կտոր չէր միայն, այլև լայն թոքերով մրրիկ և փոթորիկ շնչող, մեծ բազուկներով ալեկոծություններ խառնող հսկայական տարերք։

— Ծո՜վ։

Վտանգ, բարկություն, քաոս։

Անշուշտ, համեմատաբար փոքր էր, բայց ի՞նչ փույթ... անհունը, որին նա մասն էր կազմում, արդյոք անեզր և անվերջ չէ՞ր... Եվ այդ լեռները, այդ ժայռերը արդյոք այդ նույն անհունի ապրած դրամայի մի անբաժանելի մասը չէի՞ն... «Կան երկրներ, որոնք պատկանում են սրբազան աշխարհագրության, և կան երկրներ, որ երիտասարդ են ոգով», ասել էր տարօրինակ այդ Մարկը։ Հիմա հասկանում է, թե նա ինչ էր ուզում դրանով ասել։ Ասել էր նաև. «Բնազանցական տարածություն, ուր բոլոր նշանները գծված են...»։ Այդ ևս հիմա հասկանում էր։ Այո, Պետրոս Մարկ, այո, մեր երկիրը լեռ է, և ավելի է, քան լեռ. ծով է, և ավելի է, քան ծով։

Իսկ այդ ավելին մեր իսկ էության մեջն է։ Մեր ձգտելը դեպի ամբողջականը, բարին, գեղեցիկը, իսկ ժողովուրդը միշտ երիտասարդ է ոգով և ուժեղ, նա կարող է ինքն իրեն կառավարել, առանց օտարի օգնության, եթե համախմբված է ու հստակ է արտահայտված իր ազատության ձգտումը, եթե ճանաչել է իր պայքարի ճիշտ ուղին։

Տարակույս չկա։ Դեպքերը, որ մեզ այցելում են, երկար տարիներով պատրաստվում էին մեր մեջ։ Հիմա իր ամբողջ անցյալը, տարիներով ծովերի վրա թափառելը, շարշարանքները, ներքին անբավականությունը, անվերջանալի որոնումները, ներքնապես հիմնավորվելու, ապա, կարծես մոտ են իրենց լուծումին։

Այնպես չէ՞, Սևան ջան, այնպես չէ՞...

Հարցը նրանում է, որ մեր ամենօրյա տաղտկալի լինելիությունը, մեր վրա խուժող փոքրիկ դեպքերի շարանը, հազար ու մի աներևան մտազբաղումները, թաց սպունգի նման ջնջում են մեր կյանքի գլխավոր այն գիծը, որ գոյանում է ներսը, որ շաղկապում է օրերը և գիշերները, ձայները և լռությունները։ Մենք նրան չենք տեսնում։ Չենք կարդում բոցե տառերով մեր ներսը գրված մեծ գիրքը։

Համենայն դեպս, այդ պատահում է հազվագյուտ կերպով։ Երբեմն, խոր մենակությունով լցված օրերում, ներքին տրամաբանական այդ զարգացումը հանկարծ լուսավորում է մեր գիտակցությունը և անմիջապես անհետանում։ Կայծի նման։ Զգում ենք և չենք ըմբռնում։

Ահա եկել է այս լճի ափին։ Արտաքնապես թվում է պատահականություն, մինչ ներքնապես՝ լիճը սպասում էր նրան, և նա՝ Հերյանը, սպասում էր լճին։

Լիճը վաղուց էր մասնակցում նրա ներքին գոյացման մթնոլորտին։ Եվ եթե նա եկել էր, եկել էր հանդիպելու ինքն իրեն։ Եկել էր ամբողջապես իրականանալու համար։

...Դիմացի ափի կողմը, հորիզոնի վրա մի լույս դանդաղ ման եկավ։ Լուսինը։

Երկնքից կախվեց պսպղուն պղնձե մի սկավառակ։ Լիճը ծածկվեց մետաղե արտացոլումներով։ Ծառերը կայծկլտուն մկրատով լույսի մեջ արծաթե տերևներ կտրտեցին։

— Եվ,— շարունակեց մտածել Հերյանը,— անսպասելի այդ հանդիպումը... Նույն տանիքի տակ մի քանի օրեր և գիշերներ անցկացրել էր նրա հետ և ոչինչ չէր իմացել, ոչինչ չէր տեսել, և ահա որ... Ի՜նչ գեղեցիկ էր Զվարթը։

Աստղերը ետ քաշվեցին։ Ամեն ինչ քողարկվեց, ընկավ երազանքի մեջ։

Այդ վայրկյանին, ծառերի հետևից գետնին խփվող հարյուրավոր ոտքերի համատրոփ ձայներ լսվեցին։ Դոնգ-դոնգ, դոնգ-դոնգ, դոնգ-դոնգ... Կարծես ստորերկրյա ոգիներ լճի տակից մրճահարում էին կողին։

Մետաղե հնչյունով մի ձայն բարձրացավ և մեներգեց։ Խումբը

կրկնեց հանգերգը։ Ոտքերի դոփյունը գնալով մեծացավ։ Խուլ, ուժեղ, համառ։ Նորից հնչեց մենաերգը։

Այդ ձայնը իջավ Հերյանի սրտի մեջ և պեղեց։

Վեր կացավ, մտավ վանքի բակը և դիտեց։ Հայկական խմբպար էր։ Կին, տղամարդ, ծեր, երիտասարդ ձեռք ձեռքի տված ալիքանման շարժումով աջ ու ձախ, առաջ և ետ սահելով, ոտքերը գետինը խփելով, ցատկելով պարում էին և երգում։

— Այդպես շրջում են մոլորակները երկնքի հեռուներում,— մտածեց Հերյանը։

Զվարթը, շունչը կտրած վազեց դեպի նրան։

— Ահ, պարոն Հերյան, որտե՞ղ էիք... Ամեն տեղ ձեզ փնտրեցի... Դե, շուտ եկեք, միացեք մեզ...

— Ես պարել չգիտեմ,— բողոքեց Հերյանը ետ քաշվելով։

— Եկեք, խնդրում եմ... տեսե՞ք ինչքան հեշտ է...

Ձեռքից քաշեց և մտավ շուրջպարը։

— Նայեցեք... մի աջ, երկու ձախ... մի աջ...

Հերյանի ոտքերը մեքենաբար հետևեցին ընդհանուր շարժումին։ Մի քանի վայրկյան հետո նրա ամբողջ մարմինը թեթևացավ, կարծես քամին նրան առել էր բազուկների մեջ։ Մեծ, լայն, տարեբային մի շունչ գրկեց նրան և շենք, եկեղեցի, կզզի և լիճ միացած պտույտ եկան, երգեցին...

Զվարթի այտերը վառվել էին, աչքերը հափշտակված մեծացել։ Նրա մարմինը ճոճվում էր սարսռալով քամու թեթև շնչով թափթփված ուռենու նման։

...Եվ թափթփվել էին լուսինը և արծաթով ցանված երկինքը։

7

Գրեթե ամեն օր, ժամը երկուսի մոտերը, Հերյանը գնում սպասում էր փողոցի այն անկյունում, որ գտնվում էր գիմնազիոնի մեծ շենքը։ Գրպանները լցված ամեն տեսակ թղթերով — քարտեզներ, հաշիվներ, ծրագիրներ, գիտական տեղեկություններ — նա սպասում էր, անհամբեր աչքերը ուղղած դեպի դարբասը, որտեղից, սովորաբար, Զվարթը դուրս էր գալիս։

Տասը բոպե չէր անցնում բակյաց փողոցը հանկարծ սկսում էր թնդալ։ Դուրս թափվող աշակերտությունը վայրենի հորդայի կերպարանք էր առնում։ Վազում էին, խաղում, գոռում, կռվում։ Փողոցը քիչ հանգստանում էր, երբ դուրս էին գալիս բարձր դասարանների աշա-

կերտ-աշակերտուհիները։ Ընդհանրապես, ուսուցիչների շուրջը բոլորված, նրանք տաքացած վիճաբանում էին կամ կատակ անելով բարձր ծիծաղում։

Հերյանը հենց որ նրանց տեսնում էր, շրջվում էր և դանդաղ քայլերով հեռանում։ Չէր ուզում իմանան, որ սպասում է Զվարթին, Զվարթն էլ, իր կողմից, ոչ մի անհամբերություն ցույց չէր տալիս. շարունակում էր անտարբեր խոսակցել, առանց շտապելու։ Սակայն, երբ հասնում էր փողոցի անկյունը և տեսնում էր կամաց հեռացող և ուսի վրայից մերթ ընդ մերթ ետ նայող Հերյանին, սիրտը սկսում էր ուժեղ բաբախել և այլևս չէր կարողանում զսպել անհամբերությունը։ Դասագրքերը կրծքին սեղմած, այտերը վառված, արագ քայլերով հասնում էր նրան։

Հերյանը նրան գրկում էր իր նայվածքի մեջ։

— Դե, շուտ պատմիր, ի՞նչ նորություն,— հարցնում էր Զվարթը նրա թևից քաշելով։

— Տեսնենք... ուսումնասիրում են... Երկար խոսեցի քարտուղարի հետ։ Բանիմաց մարդ է երևում... Հարցը նրանում է, որ բանակը ամեն ինչ կլանում է։ Նեղության մեջ են... դրսից փող չի գալիս, իսկ ներսը սով է... Ես, անշուշտ, նրանց բացատրեցի ձեռնարկի կարևորությունը... Ապրանք տանել բերել, զորք տեղափոխել... պարզ է, չէ՞... Ներկայացրի մեր գրած մանրամասն հուշագիրը. ասացին կկարդանք... Ես ի՞նչ իմանամ...

— Ուրեմն լավ, շատ լավ...

Նորից հարցեր էր տալիս։ Ուզում էր ամեն ինչ իմանալ։

Հետո պատմում էր իր մասին։

— Գիտես, եռանկյունաչափության դասին բավականին խեղճ էի... ամենահիմար հարցերին չկարողացա պատասխանել... Ուսուցիչը կատաղել էր... «Կողմնակի բաներով զբաղվելու փոխարեն լավ կլիներ քիչ էլ դասերով զբաղվեիր»... Երբ այդ ասաց՝ ամբողջ դասարանը սկսեց ծիծաղել... Ինչ անպիտան են...

— Ոչինչ, թող ծիծաղեն... Մի օր կգա, կտեսնեն... Իսկ դասերը, անշուշտ, պետք է, որ պատրաստես... Այս գիշեր ժամանակ ունենք... միասին կպարապենք...

Փողոցում հանդիպած ծանոթները հետաքրքրված հարցուփորձ էին անում։

— Հը, ասացեք, ո՞նց է գնում գործը... Մի բան կարողացա՞ք անել...

— Լավ... Վստահ եմ մի բան դուրս կգա,— պատասխանում էր Հերյանը աշխույժ շեշտով։— Աշխատում եմ համոզել...

Քաղաքում արդեն խոսում էին Հերյանի ծրագրի մասին։ Ոմանք համակրում էին ձեռնարկին, իսկ ուրիշներ դեմ էին, ոմանք լավատեսներ էին և ուրիշները՝ հոռետես։

Հոռետեսները աչքերը կես փակում և խորամանկ ժպտում էին։

— Ախպեր, բան ասացիք... Մինչև Սևան նավ բարձրացնելը հաց ու պանիր չէ... Այդ Հերյան կոչված մարդը ո՞վ է, ո՞րտեղից է եկել... Այս օրվա օրս ամեն մարդ հայրենասիրություն է ծախում, մանավանդ եթե անգործ է...

Հերյանը, որ միամիտ և անկեղծ կերպով ամենքին պատմում էր իր ձեռնարկի մասին, սաստիկ հուզվում ու զայրանում էր, երբ լսում էր թերահավատների այդ քննադատությունները։

— Դա, ի՞նչ բան է... Եթե այդպես է, կթողնեմ, կհեռանամ...

Զվարթը իր մեծ, գեղեցիկ աչքերը հառում էր նրա վրա և հանգստացնում նրան։

— Սրանք այդպես են... Պետք չէ ուշադրություն դարձնել, փոքրիկ մարդիկ են, ինչ ուզում են թող ասեն...

Ձայնը թրթռում էր հուզումից։

Հերյանը լսում էր նրան և կրկնապատկում եռանդը։ Հիմնարկությունից հիմնարկություն էր անցնում, բացատրում էր, համոզում, վիճում։

Մանավանդ թող իմանան մի բան. ինքը շահագրգռված էր միայն բարոյապես։ Միծաղելի էր այդպիսի գործերից նյութական շահ սպասել։ Պարզապես ուզում էր մասնակցել երկրի վերաշինության։ Հայտնի է, որ երբ Ամերիկայում ուզում են ամայի տեղերում բնակչություն հաստատել՝ նախ հաղորդակցության միջոցներ են ստեղծում։

— Այդ մասին, պարոն Հերյան, ի՞նչ առարկություն կարող է լինել... Ամենքս էլ սկզբունքով համաձայն ենք... Բայց, ախր, աչք նետեք սահմանների վրա, նայեք ներքին մեր թշվառության...

Սակայն, Հերյանը անդրդվելի, համառ և մոլեռանդ նորից և նորից պնդում էր։ Գրպաններից թղթի կապոցներ էր հանում, փռում սեղանի վրա և մատիտը ձեռքին գծագրում էր, կոտորում, բաժանում, հավելում և ամեն տեսակ ապացույցներ մեջբերում։ Տեղեկություններ էր տալիս Միսսիսիպի գետի, Կոնգոյի ինչ-ինչ լճերի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, Վոլգայի, Բայկալ և Հնդկաչինի նավային հաղորդակցության կազմակերպությունների մասին։ Խոսում այնպիսի հավատով և ոգևորությունով, որ պաշտոնյաները ուժ չէին ունենում նրան ճանապարհ դնել կտրուկ մերժումով։

— Շատ լավ ասացիք, շատ լավ... Մի քանի օրից նորից անցեք... կտեսնենք ինչ կարելի է անել...

Գրասենյակներից դուրս էր գալիս ճակատի քրտինքը սրբելով։ Ջղային քայլերով փողոցից փողոց էր անցնում և ինքը իրեն հետ մենախոսում։ Այնքան որ, մոտից անցնողներից շատերը կարծում էին, որ եկվոր նավապետը քիչ խևացել է։

Կանգ էին առնում և տխրած աչքերով նայում նրա հետևից։

...Ծրեկոնները նա կլոր սեղանի վրա բաց էր անում իր քարտեզները և Զվարթի ամբողջ ընտանիքը շուրջը բոլորած խոսում էր, բացատրում, նոր հաշիվներ անում։

Ջեղունից կախված նավթե լամպարից անհանգիստ լույս էր տարածվում։ Պատերից նայում էին կեռ շուքի մեջ թաքնված Խրիմյան կաթողիկոսի, զորավար Լորիս-Մելիքովի և Լազարևի զարմացած աչքերը։ Անկյունում դրված հսկայական ժամացույցից, մերթ ընդ մերթ սայլի ճռռոցի նման, ձայներ էին դուրս գալիս։

Հերյանի մոտ կանգնած Զվարթը մանրամասն բացատրություններ էր ուզում, և երազկոտ աչքերը լճի քարտեզի վրա ման ածելուց հետո հանկարծ ուրախանում էր, ամբողջ մարմնով ցնցվում, սենյակը լցնում սուր բացականչություններով։ Հայրը՝ պարոն Արտեմը, ոսկիրոտ և հաստ ցուցամատը քարտեզի մի կետի վրա դրած, գործի հետ ոչ մի կապ չունեցող, երիտասարդական հիշողություններ էր պատմում և սաստիկ բարկանում, երբ խոսքը կտրում էին։

— Ախր, ասածս կարևոր է և մի օր կարող է պետք գա... Չեք հասկանում...

Մայրը՝ տիկին Արուսյակը, օրվա աշխատանքներից հոգնած, մեծ շալը ուսերին քաշած, ուժ էր անում աչքերը բաց պահել և հորանջը զսպել։

Հերյանը աջ ձեռքը մազերի մեջ խոթած, ճակատը ենճռոտած, աչքերը թղթերի վրա վազեցնելով, ենթադրյալ առարկությունների պատասխաններ էր տալիս և բարձրաձայն մտածում։

— Այդպես ուրեմն, ասենք նավը արդեն լճի վրա է. շոգիները ճնշման տակ են... Սլենոզիայի ափերից ահա սուլոցը երբ անգամ հընչում է։ Գալիս եմ, գալիս եմ... Պտուտակը շրջում է, ջուրը խառնում և ահա որ գնաց...

Նայվածքը ման էր ածում ներկաների դեմքերի վրա, բախտավոր ժպիտ բաժանում և ապա շարունակում։

— Մեկնում ենք... Ափի վրա բազմությունը հարա-հուռա է բարձրացնում, կեցցեներով ողջունում է մեզ և այլն... Անցնում ենք կղզու մոտից։ Վանականները թափվել են բլրան վրա, ապշած, հիացած նայում

են... Մոտից նայես՝ նրանց շրթունքները կամաց սարսռում են, սաղմոս և աղոթք են փսփսում, իսկ նրանց աչքերը մի-մի փարոս են դարձել... Իսկ նավը ուրախ, ուրախ գնում է, քթի սրված դանակով ճեղքում ջրերը, կտրում փոքրիկ ալիքները, ճանապարհ բաց անում... Եվ ահա... մտանք ծովը...

Զվարթը հուզումով դիտում էր Հերյանի ոգևորված դեմքը։ Նավապետի աչքերը կայծկլտում էին, համառ ճակատը դուրս էր տնկվում և ամբողջ նրա անձը համակվում էր խոր հավատով։

Զվարթի մարմինը սարսռում էր և թևերը թուլանում էին։ Եթե ծնողները ներկա չլինեին, նա կփաթաթվեր նրան, գլուխը կսեղմեր նրա լայն կրծքին, մազերը կխառներ նրա մազերին և այդպես կմնար, տաք, ջերմ ավազի վրա փռվող ալիքի նման։

— Եվ ահա մտնում ենք ծովը,— շարունակում էր Հերյանը։— Երկինք, ջրեր, հեռվում փոխշող ամայի ափեր... Բայց գեռ սպասենք, կարող են առարկություններ լինել։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ առարկություն կարող է լինել...

Սպասում էր։ Ամենքը սպասում էին։

— Կարող են հարց տալ... եթե նավը մոտենա ափին, ո՞ւր պետք է կանգ առնի։ Այնպես չէ՞. բնական և տրամաբանական հարց է, չէ՞... Մենք այդ մասին արդեն մտածել ենք և կպատասխանենք. ահա նայեցեք, այստեղ, ռազմագիտական այս քարտեզում ցույց է տրված մի առաջացող վայր... մի շատ փոքրիկ թերակղզի... Այստեղ, մենք կխփենք գերաններ, հողը տաք կքշենք, քարեր կգլորենք, կամրջակ կշինենք և նավը կկարողանա մոտենալ ափին... Հը՞...

— Դե, այդ բաները գոնե ավելի լավ եք իմանում,— հեգնոտ շեշտով պատասխանում էր պարոն Արտեմը,— մարակոյ բաներից մենք շատ չենք հասկանում...

— Ահ, եթե Մանուկս այստեղ լիներ,— հառաչում էր տիկին Արուսյակը,— նա կարող էր ձեզ շատ տեղեկություններ տալ... Ահա երկու տարի է հանգիստ չունի, մի ճակատից մի ուրիշն է անցնում...

— Մայրիկ ջան,— առարկում էր Զվարթը,— Մանուկը ցամաքային սպա է, ի՞նչ ես կարծում... նավային գործերից բան կհասկանա՞...

— Հասկանում է,— պնդում էր մայրը,— իմ գլուխը, մեռնեմ նրա գլխին, ամեն ինչ հասկանում է...

Հերյանը համբերությամբ սպասում էր, որ վերջացնեն, ապա շարունակում էր...

— Հարցը նրանում է, որ ջրի խորությունը ամեն տեղ չափված չէ... Այդ շատ կարևոր է, շատ... պատկերացրե՛ք, նավը կարող է բարձրա-

ցած հողերի և նույնիսկ քիթը դուրս նետած հիմար մի ժայռի բախվել և... արի, էշը ցեխից հանի, ինչպես ասում են... Վատ է, վատ։ Պետք է խորությունները որոշ տեղերում չափել, քարտեզի վրա անցկացնել, մանավանդ որ լիճ ասվածը ծովի նման չէ, սատանաներով է լցված...

— Բա, ասում են լիճը կին է, ծովը՝ տղամարդ... Իսկ կանայք, գիտեք էլի՛...— կատակում էր պարոն Արտեմը։

— Դա էլ նոր բան... Հիմա էլ լիճը կնամարդ դարձրին... էլ բան չի մնում, որ կանանց մասին չասեն,— կես մարած ձայնով բողոքում էր տիկին Արուսյակը։

— Մայրիկ ջան, հայրիկը կատակ է անում...

— Ես նրա կատակները շատ լավ գիտեմ... Ասում է լիճը սատանաներով է լցված, բա՜, ի՞նքը ինչով է լցված, այդ չի ասում...

— Սպասեք, սպասեք,— ձեռքը ճակատին կպցնելով և ձայնը ավելի բարձրացնելով միջամտում էր Հերյանը,— կա մի կարևոր, մի շատ կարևոր հարց...

Այդպես շարունակվում էր մինչև որ պարոն Արտեմի հոգնած աչքերը սկսում էին պիշ-պիշ նայել առանց բան հասկանալու և տիկին Արուսյակի անզսպելի հորանջումները մարում էին Հերյանի ողևորությունը։

— Դե, լավ, մնացածի մասին վաղը կխոսենք...

Ընտանիքը ցրվում էր։

Զվարթը մտնում էր սենյակը, նստում բացված դասագրքերի առաջ և գլուխը ձեռքերի մեջ սեղմած մտածում էր ուրիշ բաների մասին։

Գիշերը և սիրտը տրորող հուզումները խուժում էին նրա վրա քաղցր ջերմի նման։ Մարմինը ձգվում էր, սարսռում։ Աչքերը երազում էին։

Հերյանը քայլում էր սենյակի մեկ անկյունից մյուսը։

Ուշ էր, քնել չէր կարողանում։ Եթե մտներ անկողին, ժամերով կշարշարվեր։ Ատրճանակը գրպանն էր դնում և ոտքի մատների վրա քայլելով գնում էր դուրս։

Փողոցի խավարը նրան առնում էր իր բազուկների մեջ։

Մենակյաց քայլերը զնգում էին մայթի քարերի վրա։ Հեռուն, ինչպես միշտ, անհայտ մարդիկ շարունակաբար գնդակահարում էին գիշերը։

Երբեմն զենքի ձայները այնքան մոտից էին հնչում, որ նա կանգ էր առնում, ձեռքերը բնազդաբար տանում գրպանը, սպասում։

Տների տակը վայր ընկած գաղթականների ծանր շուքերը կամաց շարժվում էին։ Խուլ, խեղդված ճիչեր էին լսվում։ Կարծես գիշերը՝ շարշարանքների մեջ գալարվելով, խեղդվում էր։

Ջնայած դրան երկինքը վխտում էր աստղերով։

Քանի գնում էր, ջղերը սկսում էին լարվել։ Նրան թվում էր, որ նավարկում է անհայտ խավարում, աղաղակներով և գնդակներով լցված մի սև Աֆրիկայում։

Քայլերը արագացնում էր։ Կուրծքը ծանրանում էր և միտքը շփոթվում։

Նոր մտած փողոցի անկյունում տնկված գերանի կատարին աղոտ մի լամպար էր արտասվում։ Տներին կպած շուքերը սկսում էին շարժվել և սողոսկել։

— Աղա ջան, ողորմություն...

— Աղա ջան, մի թողեք, որ մեռնենք... օգնեք մեզ...

Ցնչին լույսի պատճառով բացված այդ գերեզմաններից գալարվող բազուկներ էին դուրս ցցվում, ոսկրոտ ձեռքեր երկարում և վար թափված աչքերով դեմքեր դուրս նայում։

Հերյանը շտապում էր անցնել, առանց նայելու։

Երբ համատարած չարիքը բնության կատաղի ալեբների նման դառնում է անանուն, այլևս տպավորություն չի թողնում։

Այն գիշերը նա ուղղվեց Քաղաքային ակումբ, ուր հույս ուներ հանդիպել մարդկանց, որոնք կարող էին օգտակար լինել իր ձեռնարկի համար։

Քաղաքի բարեկեցիկ դասակարգը ակումբի շենքը գիջել էր հանրապետության նորակազմ խորհրդարանին և տեղափոխվել պատահական այդ վայրը։

Առաջին անգամն էր, որ Հերյանը ոտք էր դնում այնտեղ։

Ակումբի մուտքի դռան առաջ մի մեծ լամպար էր վառված։ Մի ոստիկան հսկում էր ներս մտնողների վրա։ Հերյանը ներս մտավ, անցավ բավականին երկար և կես մութ նրբանցքից մի դուռ բացեց և կանգ առավ անորոշության մատնված։

Ծուխի, խորոված-ի, կաշվի և գինու ծանր հոտը նրան ետ մղեց։ Կարծես ներս էր մտել ստորերկրյա մի գինետուն։ Այնուամենայնիվ, իր ղղվանքը հաղթահարելով ներս քայլեց և աչքերը կես փակված նայեց։ Տիտարանը ամբողջովին քողարկված էր թանձր ծխի պատճառով։ Առաջ գնաց։ Աչքերը սկսեցին սովորել մթնոլորտին։ Դիտեց։

Բավականին մեծ սրահ էր. քիչ ախոռ, քիչ զորահիզ։ Սևացած պատերից մի քանի լամպարներ էին կախված և խաչաձևված եռագույն դրոշակներ։ Բազմաթիվ սեղանների շուրջը բոլորված մարդիկ թուղթ էին խաղում։ Վատ լուսավորության և ստվերների պատճառով ներկաների դեմքերը թվում էին ավելի երկարած և դժգունած։ Աղոտ

ճրագները թթվածնի նման խածել ու փորել էին դիմագծերը։ Հաստ շրթունքների ջուրջը խոր կնճիռներ էին ձևացրել, այտերը ներս քաշել, քթերը մեծացրել։

Վառ էին խաղացողների աչքերը։ Այս ու այն կողմ սլաքվող, անհագ, անլույս աչքեր։ Նկատեց նաև նրանց ձեռքերը՝ ճկուն, ջղային, դոզդողացող։

Լարված ուշադրությամբ խաղում էին։ Երբեմն աղմկելով վիճաբանում էին, երբեմն տաքանում։

— Քսան միլիոն...

— Հիսուն միլիոն...

Հանրապետության գրամանիշները գլորվում էին անգունդ։

Սրահի խորքում, շշերով և ստելիքներով լցված մեծ սեղանի շուրջը բազմաթիվ սպաներ էին նստած։ Ուտում-խմում էին առանց աղմուկի և առանց ոգևորության. գրեթե պարտադրված։

Երբեմն սպաներից մեկը ոտքի էր կանգնում և ռուսերեն լեզվով ճառ ասում։ Պաշտոնական ճառը արտասանելու ժամանակ ճառախոսը գործ էր ածում վառվռուն գովաբանական բառեր և ճիգ էր անում, առանց հաջողելու, անկեղծություն և ոգևորություն ցույց տալ։ Սեղանի շուրջը նստողները՝ լուրջ, գրեթե տխուր, իրենց պատասաքաղները վայր դրած ուշադրությամբ լսում էին։

Այդ ճառը և հաջորդող ճառերը ուղղված էին սեղանի գլխում նստած փոքրահասակ, սկսուկ, գոհունակությամբ լցված շնչին գեմքով մի անձնավորության։ Կես զինվորական և կես քաղաքացիական զգեստ հագած այդ մարդուն կոչում էին հրամանատար և հերոս։ Եվ ամեն անգամ, որ նրան կոչում էին հրամանատար և հերոս, նրա աչքերը փայլում էին, կուրծքը վեր էր անկվում և ժպտում էր։

Մոտը նստած, նշաձև մեծ աչքերով, մատ գեմքով և թրջված շրթունքներով մի կին աչքերը հառում էր նրա վրա և հրճվում։

«Հերոսը» մերթ ընդ մերթ, աչքի տակով նայում էր գահլիճում նստած խաղացողներին, կարծես ասում էր՝ «Տեսնո՞ւմ եք, լսո՞ւմ եք...»։

Երբ ճառը վերջանում էր, սպաները տաքի էին կանգնում և մեքենական շեշտով հուռա կանչում։

Հետո նստում էին և շարունակում ուտել։

— Տասը միլիոն, քսան միլիոն,— բացականչում էին խաղացողները։

— Հեծելազորի դիվիզիան աղջունում է քաջարի հրամանատարին, որ...

Հուռա՜, հուռա՜, հուռա՜...

«Հերոսը» տեղից վեր էր թռնում, ուսերը աջ ու ձախ դարձնում, բարևում։

Հերյանը մի վայրկյան դիտեց և ճնշված տպավորության տակ հեռացավ։ Սեղանների մոտից անցնելու ժամանակ զարմանքով նկատեց, որ խաղացողներից ոմանք նայում էին իրեն հետաքրքրված և զարմացած աչքերով։ Իրենց հարևանների ականջին ինչ-որ բան էին փսփսում և խորամանկ ժպտում։ Անտարակույս, բարեհամական ժպիտներ չէին։ Երբ այդ մի քանի անգամ կրկնվեց, նա ջղայնացավ, կանգ առավ, ձեռքերը գրպանների մեջ դրեց և խիստ նայվածքը ուղղեց փսփսացողների վրա։

Նկատեցին և իրենց պաղած նայվածքները կենտրոնացրին խաղաթղթերի վրա։

Հերյանը հանգիստ ման եկավ, ուշադրությամբ նայեց և ոչ մի ծանոթի չճանաչելով այլևս չասեց ոստոստել։

Հիվանդոտ, գիշատիչ դեմքերով և սնահոգ նայվածքներով մարդկանց այդ մթջավայրը խեղդիչ էր։

Դուրս գնաց։

Հազիվ դուրս եկավ՝ ամեն կողմից տասնյակ ձեռքեր երեսաբեցին ողորմություն խնդրելու համար։ Մուտքի լամպարը լուսավորեց երեսները։ Պատռված, կնճռոտած երեխաների երեսներ. նիհար, ասկոր կորած ձեռքեր։

Մի քանի թղթադրամ նետեց նրանց առաջ։

Հազիվ նետեց, անմիջապես կռիվ և աղմուկ բարձրացավ։ Տղաները սկսեցին մեկ մեկի ծեծել։ Երբ մեկին հաջողվում էր դրամը հափշտակել, մյուսները հարձակվում էին նրա վրա, ձեռքերը խածում, վայր գցում և միասին գլոր գալով շարունակում կռվել։ Ուրիշներ, իրենց ձեռքերը Հերյանին երկարելով, շարունակում էին լալկան ձայնով մուրալ։

Հերյանը հասկացավ, որ եթե շտապ կերպով չհեռանա՝ դժվար պիտի լինի նրանց ձեռքից ազատվել։ Ուստի հրեց առաջը կանգնած երեխաների խումբը, արագ քայլեց, ծռվեց առաջին հանդիպած փողոցի անկյունը և հետքը կորցնելու համար պատսպարվեց մի դարպասի հաստ պատի հետևում։ Գիտեր, որ տղաները պիտի հալածեն նրան և անկարելի պիտի լինի ամենքին գոհացնել։

Մի քանի վայրկյան հազիվ էր անցել և արդեն նրան փնտրում էին։

— Սպասեցեք,— ասաց տղաներից մեկը,— շուտ պահեք փողոցի անկյունը, որ չփախչի... Նոր մարդ է երևում... գրպանները լիքը...

Հերյանը զվարճացած նայեց պատի հետևից։ Այդ խոսքերը արտասանողը՝ թոքախտից դեղնած, խռպոտ ձայնով, կուրծքը նեղս ընկած մի երկայնահասակ տղա էր։ Նրա ընկերները, որոնց կարելի չէր լավ տեսնել, հրամանը անմիջապես կատարեցին. աջ և ձախ վազեցին և խաչաձևվող փողոցի անկյունները բռնեցին։ Ինքը՝ երկայնահասակ տղան, ուրիշների հետ միասին սկսեց խուզարկել գիշերը։

Հերյանը ամբողջ մարմնով կպավ պատին։

Սակայն, մի քանի վայրկյան հետո, ոլոր, ածիլված գլխով մի տղա՝ մուրացկանների, տեսլապաշտների և որսի շների հատուկ բնազդով՝ հոտ առավ, բոբիկ ոտքի մատերի վրա քայլելով մոտեցավ դարպասին և հենց որ Հերյանին տեսավ, սկսեց աղաղակել.

— Էս ա՜, պարոնը էստեղ է, էս ա՜, էստեղ է...

Ամենքը վազեցին նրա կողմը։

Հերյանը թաքստոցից դուրս եկավ և հանգիստ քայլեց։ Անտարբեր, իբր թե ոչինչ չի նկատում։ Գիտեր սակայն, որ փողոցի այդ տղաները կարող էին խաղ խաղալ գլխին։

Նրանք խմբով գալիս էին նրա հետևից։ Աղաչում էին, արտասվում և, միևնույն ժամանակ, աշխատում էին նրա շորս կողմը բոլորվել և ճանապարհը կտրել։

— Պարոն ջան, Հիսուսի խաթեր, մի բան տվեք...

— Աղա ջան, ողորմություն արեք...

— Մի միլիոն։ Պարոն, մի միլիոն...

— Էլ փող չունեմ,— բողոքեց Հերյանը։— Եղածը տվեցի... Դե, շուտ հեռացե՛ք... Հեռացեք, ասում եմ ձեզ... ամոթ է...

— Մենք բան չստացանք, աղա ջան, մյուսները վերցրին...

— Վաղը... հիմա փող չունեմ, հասկանո՞ւմ եք...

— Մենք բան չստացանք... Աստված վկա, մենք բան չստացանք...

— Պարոն, մեկ միլիոն ողորմություն արեք...

Արդեն բոլորվել էին նրա շուրջը. չէին թողնում, որ քայլի։

— Հեռացե՛ք, ասում եմ ձեզ... հեռացեք...

Հազիվ հագնված, ոտաբոբիկ, հիվանդ աչքերով, խռպոտ ձայներով, շուքի վերածված այդ երեխաները համառ կերպով կտրում էին նրա ճամփան, քաշում նրա բաճկոնի ծայրից և գնալով օղակ կապում նրա շուրջը։

Քանի գնում էին, այնքան նրանց թիվը ավելանում էր։ Մարդ չգիտեր ո՞րտեղից էին դուրս գալիս։

Երբ հասան փողոցի ծայրը և Հերյանը, մթից օգտվելով թեքվեց

և ուզեց անհետանալ, խուժանը սպառնական դիրք բռնեց։ Այլևս չին աղաչում, այլ պահանջում էին։

— Ավելի լավ է տաս, մեզանից չես կարող ազատվել...

Սկսեցին աղմկել, գոռալ, խուլ հայհոյանքներ արձակել։

Կես փլած մի տան առաջով անցնելիս նրանք աշխատեցին Հերյանին հրել ներս։ Պարզ էր, հարձակում էին պատրաստում։ Մի քանի հոգի բռնել էին նրա թևերից, մինչև ուրիշներ բռունցքները սեղմած նայում էին սպառնացող, զայրացած աչքերով։

— Մարդ ասածու, ասում ենք, մենք չստացանք...

Հերյանը իրեն զգաց թակարդի մեջ։ Ջզվանք զգաց, ինչ-որ լպրծուն բան կպել էր նրա մարմնին և կաշկանդել նրան։

— Հեռացեք, հեռացեք...

— Ավելի լավ է մի բան տաս, ավելի լավ է տաս...

Հերյանը հանկարծ կանգ առավ, ուժեղ շարժումով ձեռքերը ազատեց, մի քանի քայլ ետ ցատկեց և ատրճանակը գրպանից դուրս հանելով, գոռաց.

— Հեռացեք, թե չէ կկրակեմ...

Խուժանը անակնկալի եկած ետ քաշվեց, մի վայրկյան սպասեց և, տեսնելով, որ չի կրակում, նորից առաջ եկավ։

— Լավ, պարոն, լավ, դե որ ուզում եք մեզ սպանել, սպանիր,— կեղծ լալկան ձայնով ասաց բարձրահասակ այն տղան, որ թվում էր մյուսների պատգլուխը։— Սպանիր... Որբերին խփելը մի մեծ քաջություն չէ... Թուրքի յաթաղանից հետո հայ գնդակը մեզ կարող է միայն ազատել... Խփիր...

Մի քանի հոգի սկսեցին բարձրաձայն հեկեկալ։

Հերյանը ատրճանակը վար առավ։

— Ախր, ասում եմ մոտս փող չունեմ... Հավատացեք, վաղը նորից մի բան կտամ...

Խղճի խայթ ունեցավ։ Դա ի՞նչ որոշում էր, երեխաների վրա ատրճանակ պարզել։ Մոտեցավ տղաներին և պատրաստվեց ատրճանակը գրպանը դնել։ Հազիվ ուզեց այդ անել, սաստիկ մի ցավ այրեց նրա ձեռքը։ Երկու հոգի ատամները մխրճել էին նրա ձեռքի մեջ, մյուսները բռնել էին նրա բազուկը և աշխատում էին տիրանալ ատրճանակին։ Ոմանք քաշում էին նրա բաճկոնի ծայրերը, ոմանք էլ փաթաթվել էին ոտքերին և ճիգ էին անում նրան վայր գցել։

Տեղի ունեցավ մի խուլ խայտառ։

Հերյանը ազատված ձեռքով մի քանի հարված տվեց, աջ ու ձախ խփեց, աքացի զարկավ և երբ ձեռքերը վերջապես ազատեց, ետ քաշ-

վեց և սկսեց կրակել օդում։

Խուժանը վայրկենապես ցրվեց։

— Սրիկաներ, սրիկաներ...

Նրան պատասխանեցին քարերի հարվածներով։

Մոտակա տան ապակիները ջնջալով թափվեցին։ Մի քար դիպավ Հերյանի կրծքին։ Վազեց և թեքվեց ուրիշ մի փողոցի անկյունը։ Քարերը շարունակեցին վազել նրա ականջների մոտ։ Արագ ետ քաշվեց և մտավ խոր ընկած մի տեղ։ Քարկոծությունը գնալով ավելի ուժեղացավ։ Ատրճանակը վեր բռնեց և նորից սկսեց կրակել։ Նրան պատասխանեցին բարձր ծիծաղով։ Այդ ծիծաղը արձագանքեց փողոցի պարապության մեջ։

Հերյանը ամբողջ մարմնով դողաց։

Ու մի վայրկյան նրան այնպես թվաց, թե ամբողջ այդ քաղաքը, ամբողջ այդ դիշերը և ամբողջ այդ երկինքը, խավարի ծանրության տակ տափակացած այդ տները, ծռված և կուրացած այդ լամպարները, գերաններով գամված այդ դռները, խոնավությունից ուռած այդ պատուհանները, երկյուղոտ լռությունով լեցված այդ ճանապարհները, ամբողջ այդ աշխարհը, որ ահա նրան շրջապատում էր, վատ երազի նման հոհոալով գալարվում էր, հեգնում նրան, հեգնում բոլոր մարդկանց, հեգնում կյանքը...

— Այդպես է, պետք է ծիծաղել, պետք է ծիծաղել...

Մեկը այդ ասաց և ծիծաղեց։

Հերյանը զարմացած նայեց։ Կռնակը մինչև ծնկները ծալած, տձև, փոքրահասակ մի ծերունի էր։ Երկար բազուկները կողմ էին նետված թիերի նման, բարակ ոտքերը թռչունի ոտքերի էին նմանվում։ Գլուխը երկար էր, գագաթը տարօրինակ կերպով տափակած։ Երբեմն երեսը վեր էր բարձրացնում և ցույց տալիս վերքի նման ճեղքված աչքեր, վայր ընկած շրթունքներով լայն մի բերան, որ միշտ մնում էր բաց։

Հերյանը զարհուրանքով ետ քաշվեց։ Ծերունին վայր ընկնող բազուկները չոած ու գլուխը դժվարությամբ վեր բարձրացնելով՝ որսի ետևից վազող թռչունի քայլերով արագ առաջացավ, բոլոքովին մոտեցավ Հերյանին և շարունակեց ծիծաղել։

— Ո՞վ եք դուք... ի՞նչ եք ուզում,— ասաց Հերյանը և նորից ետ քաշվեց։

— Այնպես,— պատասխանեց էակը,— այնպես... մի քիչ ծիծաղում եմ... Ձե՞ք ճանաչում, փողոցում սրինգ ածող մարդն եմ... Ինձ ամեն մարդ ճանաչում է... Հանրապետության սրնգահարն եմ...

Դողդողացող ձեռքը տարավ կրծքին, պրկտեց և շապկի տակից դուրս հանեց մի փոքրիկ սրինգ։

— Այդպես նա ծնվել... նվագում եմ...

Դեմքը վեր ցցեց և նրա աչքերի մեջ երկու ճերմակ բոցեր փայլփլեցին։

— Նվագում եմ... Աշխարհի բաները, ցավը, վիշտը... նվագեմ լսեք...

— Չէ՛,— բողոքեց Հերյանը,— ի սեր աստծո, էս ժամին, ի՞նչ նվագելու ժամանակ է...

— Էս ժամի՞ն... Ժամ կա՞... էլ ժամ չկա, էլ գիշեր չկա, ցերեկ չկա... Կա մի մեծ լաց, մի մեծ ողբ, որ դարձել է գիշեր, որ դարձել է ցերեկ... Կա մի մեծ լաց, որ դարձել է երգ և մրսելով, հառաչելով ման է գալիս աշխարհի վրա և ասում է՝ ինձ նվագիր, ինձ նվագիր, ինձ նվագիր... Հալա լսե՛ք...

— Չէ՛, խնդրում եմ, չէ՛...

Եվ Հերյանը շուռ եկավ և արագ փախավ։

Նա քանի վազում էր, էակը միշտ նրա մոտն էր։ Խոսում էր, հրոհրում, գանգատվում։

Այդ տևեց, մինչև հասավ տուն։

8

Այն օրը, որ նա պիտի մեկներ Բաթում՝ քամի էր և անձրև։

Ցուրտ և խենթ քամին ավլում էր այդ անձրևը, նետում տների պատերի և տանիքների վրա, ծխնելույզների շուրջը մռմռում, ապա՝ փողոցների անկյուններում ալիք-ալիք ոլորվելով աղմկում էր և հեռանում։

Հերյանը ուրախ էր։

Թեպետ գնացքը պիտի մեկներ երեկոյան, բայց նա շատ շուտ ոտքի էր կանգնել։ Հին պայուսակը սեղանի վրա բացած մի քանի անգամ դարսել էր իրերը, նորից պարպել, նորից դարսել, ապա ման եկել սենյակի մի անկյունից մյուսը, հազար ու մի մտքերով տարված։

Ուրախ էր, անհամբեր, մտատանջ։

Ուրախ էր, որ վերջապես պիտի մեկնի, մտատանջ էր այն բոլոր դժվարությունների պատճառով, որոնք սպասում էին իրեն։ Համենայն դեպս, սեփական ձեռքերով ստեղծած դրամայի առաջին գործողությունը վերջանալու վրա էր։ Այլևս հոգնած էր անդադրում վազվզելուց պատահական վահկարտասիներով և պատահական մարդկանցով լցված գրասենյակից գրասենյակ։ Հոգնած էր պետական անկայուն պաշտոնների կոչված և գործիք անտեղյակ նախկին վարժապետներից, ուսա-

նողներից, գրագիրներից։ Ամեն տեղ հնացած սեղաններ՝ կանաչ կտավի կտորներով ծածկված, ճոճվող աթոռներ, կես փլած այլանդակ բազկաթոռներ, հազվագյուտ գրամեքենաների առաջ նստած շատախոս ու կոտրատվող աղջիկներ և մթնած հոնքերով, դանդաղ շարժումներով ու փակ նայվածքներով անձնավորություններ։

Խեղդիչ ծխով և բղավող ձայներով լցված այդ գրասենյակներից նա սկսել էր զզվել, երբ մի օր, կողմնակի փողոցից անցնելիս՝ ցածրիկ և աննշան մի շենքի առաջ, որի դռան մոտ կանգնած էին երկու վինված պահակներ, նա հանդիպեց մի հին ծանոթի։

— Տո, ո՞ւմ եմ տեսնում,— բացականչեց նա զարմացած։— Դու, Պերոնյան, այստե՞ղ... Ո՞նց է որ մինչև հիմա չեմ հանդիպել սիրելի դերասանին...

— Ինչ դերասան, ինչ բան,— պատասխանեց մյուսը տխուր ժպիտը երեսին։

Պերոնյանը քառասունին մոտեցող, լայնուս, երկայնահասակ, մեծ գլխով, մսոտ դեմքով և արջի քայլվածքով մի մարդ էր. կլոր քիթ ուներ, ուժգին փորված դիմագծեր և խուլ, անդնդային ձայն։ Բեմի վրա նա խաղում էր արքաների և ազնիվ հայրերի դերեր, կյանքում՝ նրա միակ առաքինությունն էր լավ ուտել և լավ խմել։

Բարի բնավորության մարդ էր և լավ ընկեր։

— Այս պայմաններում ինչ թատրոն,— շարունակեց նա։— Ողբերգությունները բեմի վրայից իջել են և բռնել կյանքի ասպարեզը... Մթնոլորտը լցված է վառոդով, համատարած թշվառությամբ և քաղաքական զարմանազան դեպքերով... Մեր համեստ թատերական դահլիճը վեր է ածվել պառլամենտի, ուր գավառներից եկած անհայտ մարդիկ շեքսպիրյան ճառեր են արտասանում, մինչ ես, ամեն ինչ մի կողմ եմ դրել և ծառայում եմ նորակազմ հանրապետության...

Հառաչեց։

— Ծառայում ես հանրապետությա՞ն... Ասա տեսնեմ, ի՞նչ ես անում,— հետաքրքրվեց Հերյանը։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես այդ շենքը, որտեղ կանգնած են զինվորները...

— Տեսնում եմ...

— Նրա կառավարիչն եմ։

— Իսկ ի՞նչ ես կառավարում...

— Եղբայր,— ասաց Պերոնյանը շփոթվելով,— ինչպե՞ս բացատրեմ... Այդ ողորմելի շենքում մի հին տպարան կար, ուր ժամանակին հայտարարություններ, փոքրիկ զավեշտներ և օրացույցներ էին տպ-

վում, իսկ հիմա... չվախես... հիմա պետությունը վերցրել է և տպում է հանրապետության փողերը...

Ասաց, կարմրեց և սկսեց հռհռալ։

— Եվ ողբալին այն է,— շարունակեց նա,— որ դրամանիշները տպելու համար թուղթ չկա... Պատկերացրու, այո՛, թուղթ չկա... Երկու օր է տանջվում եմ, մտածում, մտածում... Այդ անպիտան մեքենան... ուտում է... ուղղակի մի ածդահա... Չի բավում էլի։ Ֆինանսների նախարարությունը անդադար նոր սերիաներ է պահանջում. միլիոններ, միլիոններ, միլիոններ... Հիմա այն օրին ենք հասել, որ թուղթը ավելի է արժում, քան նրա վրա տպած գումարը... Երկու մարդ եմ ղրկել Թիֆլիս թուղթ ճարելու համար, բայց այնտեղ էլ... վրացական կառավարությունը արգելել է արտահանումը, ինքն էլ տպում է ու տպում... Ճարահատյալ անձամբ եմ գնում, ամեն կերպ կաշխատեմ ծածուկ ճարել...

Հերյանը չկարողացավ ծիծաղը զսպել։

Պերոնյանը նրան նայեց տխուր աչքերով, հազաց և ինքն էլ սկսեց ծիծաղել։

— Մարդ չգիտի՝ ծիծաղի, թե լաց լինի...

— Այնպիսի ժամանակներում ենք ապրում,— լրջանալով պատասխանեց Հերյանը,— որ եթե մարդ սկսի լաց լինել, էլ երբեք կանգ չի առնի... Ավելի լավ է գնանք մի տեղ և զրուցենք։

— Հարցը նրանում է, որ կառավարության նախագահի հետ ժամադրություն ունեմ։

— Նախագահի՞ հետ,— հետաքրքրվեց Հերյանը։— Եթե ես էլ կարողանայի նրան տեսնել... եղբայր, ուղղակի չարչարանք է...

Եվ Պերոնյանի թևը առնելով քայլեց։ Նա արագ-արագ նրան պատմեց իր ծրագրի և հանդիպած դժվարությունների մասին։

Կես ժամ հետո նախագահի մոտն էին։

Փոքրահասակ, ժիր, ճերմակ մորուքով և ծխախոտից դեղնած բեղերով մի մարդ էր։ Ուշադրությամբ լսեց և հարցուփորձ արավ։

Մտածեց, ծխեց, նորից մտածեց։ Եվ քարտուղարին՝ Բաթումի հյուպատոսին ուղղված մի հանձնարարական նամակ թելադրեց։

— Սրանից ավելին չեմ կարող անել,— ասաց նա ձեռքերը դեպի երկինք բարձրացնելով։— Հաջողություն եմ ցանկանում...

— Տեսա՞ր,— բացականչեց Պերոնյանը, երբ գրասենյակից դուրս եկան,— քեզ համար ավելի հեշտ պիտի լինի նավ ճարել, քան ինձ համար թուղթ... Վաղը ես մեկնում եմ Թիֆլիս...

— Ես էլ վաղը մեկնում եմ Բաթում։

— Լավ։ Ճանապարհի կեսը միասին կլինենք...

Հուզումից ամբողջ գիշեր չէր կարողացել քնել։

Պիտի վերադառնար Բաթում, պիտի վերատեսներ նավահանգիստը, հին ծանոթներին, հին բարեկամներին և իր նավթատարը...

Պիտի տեսներ Դաշենկային։

Դա՞շենկան... Իսկ Զվա՞րթը... Մեկը կապված էր ծովի հետ։ Լայնատարած բացը, շոգենավերի սուլոցը, մեքենաների աղմուկը, մեկնումի վայրկյանների ջերմը... Մյուսը լիճն էր։ Կապույտ աչքերով երկնքին նայող մենակությունը, լեռների մեջ փակված մտերիմ չքնաղությունը, երկու հազար ոտք վեր ցցված տեսիլքը...

Անկողնի վրա նստած սպասեց լուսաբացին։

Հիմա անհամբեր էր։

Պատուհանը բաց արեց և նայեց դուրս։ Պաղ քամին մտրակեց նրա երեսը։ Զյունի եղանակ էր։

Քայլեց։

Չէր սիրում սպասել։ Իսկ պետք էր սպասել մինչև երեկո։ Գնացքը մեկնում էր օրը մի քանի անգամ և դեռ պատահում էր, որ բնավ չէր մեկնում։ Երբեմն էլ մեկնում էր և տեղ չէր հասնում։

Ամեն ինչ պատահական էր։

Սուլեց, երգեց, քայլեց և վերջապես որոշեց գնալ Զվարթին դրպրոցից վերցնել։ Անձրևը դադարել էր։ Երկինքը փակ էր և մառայլ։ Քամի էր։ Երկայն շնչով քամի, գրկող, տրորող, խածնող։

Քաղաքի կենտրոնում գրեթե մարդ չկար։ Հազվագյուտ անցորդները՝ օձիքը և ուսերը վեր առած, շտապ անցնում էին պատերին քսվելով։

Գաղթականները կուտակվել էին տների դարպասների ներսը։ Մեկը մյուսի վրա ընկած նրանք նմանվում էին խոշորացույցի տակ դիտված, անչափ մեծացրած միջատների։ Փողոցների անկյուններում ոմանք խարույկներ էին վառել և շուրջը պպզել։

Ի՞նչ պիտի աներն այդ խեղճերը, երբ իսկական սառնամանիքը սկսվեր։ Հիմա իսկ, ամեն օր, շատերը մեռնում էին։ Ամեն առավոտ, լուսաբացի մոտ սայլեր էին գալիս և փողոցներում ընկած դիակները հավաքում։ Հերյանը մի քանի անգամ այդ սրտաճմլիկ տեսարաններին ներկա էր գտնվել։ Սայլ նետելուց առաջ դիակները մերկացնում էին։ Հաճախ, կռիվներ էին տեղի ունենում նրանց ցնցոտիներին տիրանալու համար։ Սայլը գնալով ծանրաբեռնվում էր. մեկը մյուսի վրա դիզված մերկ մարմիններ, դուրս ցցված դեղնած ոտքեր և ձեռքեր...

Հերյանը արագացրեց քայլերը և դեմքը քսեց քամուն։

Երբ հասավ դպրոցի շենքի մոտ, աշակերտների ձայները պայթե-

ցին ռումբի նման։ Անհամբեր աչքերով պրպտեց փողոցը։ Վարի դասարաններն էին։ Զվարթը չկար։

— Ութերորդ դասարանը դուրս եկե՞լ է,— հարցրեց նա մոտից անցնող դպրոցականին։

— Չէ,— պատասխանեց նա, քիթը վեր առնելով և աչքերը բացխըփելով,— դեռ դասի են... իմ քույրը Զվարթի դասարանում է...— Ասաց և փախավ։

Հերյանը պատրաստվում էր վերադառնալ, երբ տեսավ դեպի իրեն վազող Զվարթին։

— Ճղեցի, դասարանից ճղեցի,— գոռաց նա հեռվից։— Այսօր մեկնում եք... քիչ ժամանակ ունենք...

Ցրտից և հուզումից այտերը կարմրել էին։

Մատավ Հերյանի թևը և պինդ սեղմվեց։

— Չեմ կարող պատկերացնել, որ քեզ պիտի թողնեմ,— ասաց Հերյանը, նրա լայնացած և միամիտ աչքերի մեջ նայելով։— Դժվար է նույնիսկ ժամանակավոր կերպով քեզանից բաժանվելը...

Քայլեցին։

— Գնում եմ մեզ համար, մեր հաղթանակի համար... Ա՛հ, Զվարթ ջան, եթե հաջողեմ, եթե հաջողեմ...

Զվարթը երկու ձեռքերը ոլորեց նրա թևին և ամբողջ ուժով սեղմեց։

— Գարունը գա, վերջին քննությունները հանձնեմ... Մինչ այդ, դու էլ կվերադառնաս... Նրա հետ...

— Ո՞ւմ հետ։

— Ո՞ւմ հետ, նավի հետ։ Մեր նավի հետ։ Մինչև այն ժամանակ ես կլինեմ ազատ քաղաքացի։ Համալսարանի ուսանող... Միայն թե, տեր աստված, նոր դեպքեր չպատահեն...

— Ի՞նչ դեպքեր կարող են պատահել։

— Ո՞վ է իմանում։ Մեր երկիրը կրակով և մրրիկով է լցված։ Արյունով կախարդված ժամանակաշրջան է։ Այսօր դպրոցում խոսում էին պատերազմի մասին։ Կարծես քիչ պատերազմներ տեսանք... քանի տարի է կռվում ենք. ժողովուրդը ուղղակի ուժասպառ է եղել...

— Այդ մասին Պերոնյանին հարցուփորձ կանեմ. նա ամեն բանի տեղյակ է։ Երևկոյան գալու է ինձ մոտ երկու զինվորների ընկերակցությամբ... Չեմ կարծում բան պատահի, բայց եթե պատահի, լավ իմացիր, անմիջապես կվերադառնամ... Եկ խոսենք ուրիշ բաների մասին. ուզո՞ւմ ես։

— Լավ...

Բախտավոր էին և տխուր։

— Ո՞ւր ենք գնում,— հարցրեց Հերյանը։— Տո՞ն։

— Չէ, տուն չէ,— բողոքեց Զվարթը։— Գնանք բուլվար։

— Բուլվա՞ր, էս եղանակին...

— Գիտես, աշնան քամու գանգատը ծառերի մեջ, բարդիների հառաչող մենակությունը, և հետո այս եղանակին ոչ ոք չի լինի այնտեղ... այլ միայն քամի, ծառերի շվվոց և կլինենք մենք...

— Իսկական բանաստեղծուհի ես...

— Ես սիրում եմ մեր երկիրը։ Աղքատ, թշվառ, ողբերգական։ Չեմ դավաճանի ոչ այս թշվառությանը և ոչ այս գեղեցկությանը... Ահա, աշունը կանցնի և կսկսի ձյուն գալ. ձյունի տակ աշխարհը փոխվում է, կարծես երկինքը իջնում է վայր և ճերմակ թևերով ամեն ինչ գրկում...

— Բաթումում միշտ արև է, երբ անձրև չկա։ Իսկ երբ անձրևում է, վերջ չունի։ Այսպես կոչված բարեխառն վայրերը միշտ էլ փոփոխական են անառակ կանանց նման... չի կարելի վստահել... Չէ, ես նախընտրում եմ մեր խիստ, կայտառ և աղնիվ այս եղանակը...

— Դե, շուտ վերադարձիր և վայելենք մեր ձմեռը։

— Դա ինձանից չի կախված։ Նավ գտնել, գնել, բարձել վագոնների վրա, բերել Հայաստանի սահմաններից ներս և սպասել գարնան, վեր տանելու համար... Երբ մտածում եմ, վախը ինձ բռնում է...

— Վախ, այդ քեզանից չէի սպասում...

— Դե, պետք է վախենալ եռանդը սրելու համար։

Երբ հասան բուլվար, զարմանքով տեսան, որ պարտեզը պարապ չէր։ Խումբ-խումբ մարդիկ, ինչպես միշտ, խոսում, վիճում էին։

— Եթե այդպես է,— ասաց Զվարթը,— ավելի լավ է գնանք։

— Չէ, սպասիր, լսենք ինչ են ասում... Բուլվարը Երևանի ժողովրդի ջերմաչափն է...

Կանգնեցին. լսեցին։

— Չեմ հասկանում,— ասում էր տարիքավոր, կարճահասակ մի մարդ,— չեմ հասկանում, ի՞նչ կարիք կա ամեն բան սև տեսնել... Փարիզի մեր պատվիրակությունից նամակ է ստացվել. ասում է, Վիլսոնը հայտարարել է, որ հայկական նահանգների ազատագրումը օրերի հարց է և ինքը՝ Վիլսոնը սահմանների խնդիրը անձամբ կլուծի... Թուրք դահիճները կպատժվեն, կողոպտված հարստությունները կվերադարձվեն, և Ամերիկան իր հովանավորության տակ կառնի Հայաստանը։ Դաշնակից պետությունները խոստացել են... հանդիսավոր կերպով և իրենց խոստումը կկատարեն. այդ մասին կասկած չի կարող լինել։ Պատկերացրեք, Ամերիկայի նման մի երկիր...

— Դե այդքան արյունը զուր չի հոսել խում...

— Երբ պետությունները հայտարարում են՝ կատարում են...

Մարդիկ լսում էին և հավատում։ Այդքան սարսափներից և դառնություններից հետո նրանք պետք ունեին հավատի իրենց ապրելու կարողությունը պահելու համար։ Վառ քնարերգությունը ուռեցնում էր նրանց սրտերը և կրակե դրոշակներով զարդարում նրանց հույսերը։

— Չէ, այդքան արյուն, այդքան զոհաբերություն իզուր չի կարող կորչել...

Քամին ծառերի մեջ աղմկում էր...

Պառլամենտի շենքի վրա կախված եռագույնը անհանգիստ ծփում էր։

— Դե, գնանք,— առաջարկեց Զվարթը,— միշտ նույն բաների մասին են խոսում։

— Այն խմբին էլ լսենք, հետաքրքրական է...

Կենտրոնական ծառուղու ծայրին բազմաթիվ մի խումբ էր կանգնած։ Իմացվեց, որ վեճի էին բռնվել Հյուսիսային Կովկասից եկած մի քանի անձնավորություններ։ Նրանցից մեկը՝ երկայնահասակ, ներս ընկած աչքերով, նիհար, ջղային, ջերմ և համոզիչ ձայնով մի մարդ էր։ Նա օձիքը վեր բարձրացրած և ձեռքերը գրպանը դրած խոսում էր աչքերը երկնքին սևեռելով, համոզված շեշտով։

— Ախր, պատմությունը մեզ ոչինչ չի սովորեցրել, ոչինչ չի սովորեցրել... Մենք ծամում ենք այն հաշիշը, որ ուրիշները գցում են մեր առաջ... Ե՞րբ պիտի հասկանանք, որ այսպես կոչված մեծ պետությունները, չնայած իրենց գեղեցիկ հայտարարություններին, շնաբար խաբում են մեզ։ Նրանք մեզ դավաճանել են անցյալում և կշարունակեն դավաճանել... Տո, մոռացա՞ք Զեյթունը, մոռացա՞ք 95-ի կոտորածները, մոռացա՞ք Ադանան... Տեսե՛ք, ինչ է անցնում Կիլիկիայում. ֆրանսիացիները զենքերը ուղղում են մեր կամավորների վրա, որոնք կռվեցին իրենց հետ և նպաստեցին հաղթության... Ֆրանսիացի զրողներից շատերը սկսել են գովաբանել թուրքերին։ Նրանց հարեմները, սուլթանը, բռնությունը։ Եվ հայհոյում են մեզ, որովհետև տխմարություն ունեցանք իրենց սուտ սկզբունքների համար զոհել մեր ժողովրդի մեկ երրորդը... Եվ դա, այսօր, երբ հաշտությունը դեռ չէ կնքված, երբ պատերազմի դաշտերում դիակները դեռ պառկած են անթաղ, երբ վաված հրդեհները դեռ ծխում են... Կարո՞ղ եք պատկերացնել ինչ կկատարվի վաղը, երբ դեպքերը մոռացվեն և մարդիկ հոգնեն և ուզեն ամեն ինչ մոռանալ... Լավ իմացեք, մեզ կծախեն, կդավաճանեն և նույնիսկ կմոռանեն... Ինչ ուզում եք ասեք, մեր միակ փրկությունը Ռուսաստանն է...

— Սպասիր, սպասիր...

Հակաճառողը շարժուն, անհամբեր, զայրացած աչքերը դեսուդեն ոլորող մի անձնավորություն էր։ Խոսում էր խզված ձայնով, ամբողջ մարմինը ետ ու առաջ երերալով։

— Ռուսաստան... ո՞ր Ռուսաստանը... էն, որ Նիկոլայ Նիկոլաևվիչի օրով ուզում էր Հայաստանը կազակների գաղութներով լցնե՞լ, թե էն Ռուսաստանը, որ քեզ հետ տեսանք Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Եկատերինոդարում...

— Ոճրագործներին սպանելը և գողերին թալանելը ոճիր չէ, այլ սրբազան պարտականություն,— պատասխանում էր մյուսը։— Հեղափոխությունը պարտավոր է անողոք լինել, թշնամիների և պորտաբույծների նկատմամբ, թե չէ ի՞նչ հեղափոխություն... Երբ մարդիկը մոտենում է, մոնչալով անցնում, մարդ կոտրած կուժի մասին չի մտածում... Պետք է հասկանանք, աշխարհը փոխվում է. հինը քանդվում է, որպեսզի նորի համար հող պատրաստվի... Մենք մոռանում ենք մեր պատմությունը... Դարեր առաջ, հանուն մի նոր վարդապետության, վերի հրամանով, մեր իսկ զորքերը եկան և հենց այս վայրում, որտեղ կանգնած ենք, ամեն ինչ քանդեցին, այրեցին... Քանդեցին մեր մեհյանները, վայր նետեցին քուրմերին, սպանեցին մոգերին, տակնուվրա արին հինավուրց, հարուստ մեր մշակույթը և մեր ժողովրդին պարտադրեցին օտար լեզվով քարոզված մի վարդապետություն... Եվ հանուն այդ օտար վարդապետության մեր ազգը դարերով պայքարեց, անհամար զոհեր տվեց, արյուն թափեց և վտանգեց իր ֆիզիկական գոյությունը... Իսկ այդ քրիստոնեությունը, որի համար դարերով կռվեցինք, դուրս եկավ մի զավեշտ... Նայեցեք քրիստոնյա Եվրոպային. ինչ ողորմելի տեսարան... Չէ, մենք կմիանանք նրանց, ովքեր ուզում են այս կեղեքող աշխարհը փոխել... Տապալենք նրանց, ովքեր մեզ դավաճանեցին, շահագործեցին մեր լավագույն զգացմունքները, ծախեցին մեզ, խաբեցին և թափած արյունը առևտրական շահի վերածեցին...

Այդ բառերի դեմ ոչ ոք չառարկեց։

— Դե, ճիշտ է ասում էլի,— փսփսաց Զվարթը։— Եթե Ռուսաստանի հետ խզենք մեր հարաբերությունները, ո՞ւմ հետ պիտի միանանք... էնքան մենակ ենք...

— Կարելի՞ է մի խոսք ասել,— դիմեց Հերյանը ճառախոսին։

Եվ, հանկարծ, սաստիկ հուզվեց։ Արյունը գլխին խուժեց և մոռացավ այն, ինչ ուզում էր ասել։ Շփոթվեց այդքան մարդկանց և Զվարթի ներկայությունից։ Կարմրեց և բերանը բաց արած նայեց չորս կողմը։

— Ասում եմ...

Շապկան ուժով քաշեց հոնքերի վրա։ Ինքը իր դեմ զայրացավ, որ այդպես, երեխի նման կանգնել էր և ոչինչ չէր կարողանում ասել։

— Եվ նախ և առաջ,— հանկարծ գոռաց նա,— այդ բոլոր մեծ պետություններին էլ։

Հայհոյեց։

Երբ հայհոյեց, միտքը պարզվեց և հիշեց այն, ինչ ուզում էր ասել։

— Էլ բավական է,— շարունակեց նա։— Էլ բավական է ուրիշների վրա դնել մեր հույսերը... Դարերով մեզ քնացրել են... Դարերով մեզ ասել են, որ քրիստոնյա աշխարհը գալու է անհավատների ձեռքից մեզ ազատելու... Արևմուտքը գալու է, ֆրանկները գալու են թուրքերին պատժելու... Այդպես ասել են և հայ ժողովրդին օրորել, կուրացրել... Ուղղակի զարմանում եմ, որ այսօր էլ դեռ շարունակում ենք կրկնել նույն բաները... Կրկնում ենք նույն բաները չնայած դեպքերին, հուսախաբություններին, անհամար զոհերին... Սպասում ենք Ամերիկային, սպասում ենք Ֆրանսիային...

— Չսպասենք, ի՞նչ անենք,— հարցրեց մոտը կանգնած մեկը։

— Ես ասում եմ, որ եթե ուզում ենք ազատ հայրենիք՝ պետք է նրան ստեղծել մեր սեփական ձեռքերով։ Աշխարհը անողոք կռվի դաշտ է, փոթորկված ծով և պետք է մեր բոլոր ուժերը միացնենք և մեր իրավունքները պաշտպանենք... Ես ծովի մարդ եմ. երբ օվկիանոսի վրա քամիները ոռնում են, լեռան նման ալիքները վեր բարձրացնում և սպառնում, նավապետը և նրա մարդիկ ուրիշների օգնության խոմ չե՞ն սպասում, այլ ճիգ են անում նավը այնպես ղեկավարել, որ չընկղմվի... Մեր երկիրը նավ է. ուժ պետք է, խելք և կամք պետք է, մեր սեփական միջոցներով նավը տեղ հասցնել...

— Ասում եք կռվել,— միջամտեց Ռուսաստանից եկած մարդը,— մինչև հիմա չե՞նք կռվել, ի՞նչ ենք արել։ Ահա չորս տարի է արյուն ենք թափում, պատերազմի բոլոր դաշտերում կռվում, և հիմա, երբ հաղթանակի ժամը եկել է, մեր այսպես կոչված զինակից պետությունները՝ գայլ դարձած, երկիրները բաժանում են իրենց մեջ, իսկ մենք կանգնել ենք նոր վտանգների առաջ...

— Ուրեմն, նշանակում է, որ կռիվը դեռ չի վերջացել, շարունակվում է...

— Շարունակում ենք, բա, չե՞նք շարունակում...

— Առայժմ բավականանանք մեր ունեցածով...— շարունակեց Հերյանը։— Ամրապնդենք այն, ինչ ունենք... Ժողովրդի մեծությունը հո-

ղերի մեծությունից խոմ չի կախված, փոքրիկ հայրենիքները կարող են մեծ հրաշքներ կատարել...

Բազմության միջից բողոքի ձայներ լսվեցին։ Մի երիտասարդ առաջացավ և բարկացած ձայնով հակաճառեց։

— Այդ, կներեք, այդ չէ,— ասաց նա հուզված ձայնով։— Մենք չենք կարող թշնամիների ձեռքին թողնել այն հողերը, որտեղ թաղված են մեր նախնիները, մեր ծնողները, մեր մարտիրոսները... դրանով արդարացրած կլինենք մարդասպաններին... Չէ, այդ չէ... Դուք, կովկասահայերդ այդ չեք կարող հասկանալ, որովհետև դուք չեք տեսել, չեք ապրել այն, ինչ տեսել և ապրել ենք մենք... Իմ հայրս, մայրս, իմ եղբայրներս և ազգականներս ամենքն էլ այնտեղ անգերեզման փռված են և սպասում են արդարության...

Երիտասարդը քերում էր վերքը, որ բոլորի սրտի վրա էր։

— Անշուշտ, այդ այդպես է,— մտածկոտ ձայնով պատասխանեց Հերյանը։— Ես էլ կուզենայի ամբողջ երկրի ազատագրումը, բայց, բարեկամ, զգացումով հայրենիք և պետություն չի ստեղծվում...

— Եթե զգացումով հայրենիք չի ստեղծվում,— նորից բողոքեց երիտասարդը,— ապա ինչո՞վ է ստեղծվում... Եթե հայրենի հողերի ներշնչած սերը և լույսը հոգիները չի լուսավորում, ո՞ր հիմարն իր կյանքը կզոհի այդ հողերը պաշտպանելու կամ ազատագրելու համար...

Ռուսաստանից եկած մարդը համբերությամբ լսելուց հետո սկսեց խոսել տնտեսական ազդակների մասին։ Մեջ բերեց Մարքսին և Էնգելսին, տվեց Լենինի անունը և աշխատեց ասածները հիմնավորել, ինչպես նա ասում էր, գիտական տվյալներով։

— Այս վիճաբանությունը կարող է դեռ երկար շարունակվել, Զըվարթ ջան,— կամացուկ ասաց Հերյանը,— ավելի լավ է գնանք. շատ ժամանակ չկա...

— Այո, գնանք,— համաձայնվեց Զվարթը։— Գիտե՞ս, Ռուսաստանից եկած այդ մարդը բավականին պատրաստված և լուրջ մարդ է երևում...

— Կարող է... երևի պրոպագանդիստ է...

Հետո գնացին։ Ման եկան, խոսեցին առանց խոսելու։ Եվ քամին, որ խիստ էր և պաղ, նրանց թվաց հաճելի, և փողոցները, որ դատարկ էին և մռայլ, նրանց թվացին մտերիմ և բարեկամական։

Երկուսն էլ այնքան բաներ էին ուզում ասել, որ չէին ասում։ Գնում էին մեկ մեկի սեղմված, հնչուն և հառաչող սրտերով, երազկոտ և անուշ ցերմով լցված ձեռքերով։

— Այդ մարդիկը ցրտում կանգնած դեռ վիճում են,— ասաց Հեր-

յանը,— անհանգիստ, մտահոգ, իրենց երկրով անոթի... Գիտե՞ս, հիմա սիրում եմ այս մեր աղքատ երկրի ամեն քարը։

— Չար։

— Ինչո՞ւ։

Զվարթը գլուխը սեղմեց նրա ուսին և ոչինչ չպատասխանեց։

Փողոցը թեքվելու ժամանակ ուժեղ քամի փչեց և սուլելով փաթաթվեց նրանց։ Եվ երբ նրանց փաթաթեց հրող և կուրացնող իր ալիքի մեջ, Հերյանի բազուկները պինդ ոլորվեցին Զվարթի ուսերի շուրջը և նրա շրթները կպան Զվարթի շրթներին։

Ապա, թև թևի տված, սարսռող իրենց մարմիններով մաքառելով քամու դեմ, նրանք ուրախ, հարբած այրքան լիությունից, վերադարձան ետ և շարունակեցին աննպատակ քայլել։

— Սպասիր,— ասաց Հերյանը հանկարծ կանգ առնելով,— չմոռանամ... Մի քիչ բան վերցնենք ճամփորդության համար...

— Դե, գնանք։

Մտան խանութները և գնումներ կատարեցին։

— Զարմանալի երկիր է մեր այս երկիրը,— նկատեց Հերյանը,— հաց ասես չի ճարվում, բայց իշխան ձուկ, իկրա, շամպայն, կոնյակ, գինի ինչքան ուզես։ Թագավորական սեղանի նրբություններ և սև թշվառություն...

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, ձուկը գալիս է քո Սևանից,— կատակեց Զվարթը։

— Այդ մասին խնդրում եմ իսկի կատակ չանել...

Կանգնեց և երազկոտ աչքերով նայեց հեռուն։

— Դու պատկերացնում ես ինչ կլիներ ժայռերի այս աշխարհը, եթե Սևանը չլիներ... Մտածիր. երկու հազար մետր ծովից բարձր, լեռների կատարին թառած այդ լիճը լավագույն գանձն է, որ մեր երկիրն ունի... Ջուր կտրած երկնքի մի կտոր... Չնայած սիբիրյան ցրտին, երբեք ամբողջապես չի սառչում, որպեսզի մարդիկ նրա առատ սեղանից օգտվեն ողջ տարին։ Եվ ի՞նչ կլիներին վարի դաշտերը առանց նրան... Չէին բուսնի մեր վաթսուն տեսակ խաղողները, մեր հյութեղ դեղձերը, ոսկե հեղուկով լցված մեր ծիրանները, սալորը, խնձորը, նուշը... Նա է, չէ՞, Սևանն է, չէ՞, որ իր ափի մի ծայրը կամաց բաց է անում և զնգացող, ուրախ Զանգուին ուղարկում դեպի Արարատյան դաշտը... Նա շոգիանում է և անձրևների միջոցով տարածվում ամեն տեղ...

— Այնպես ես խոսում լճի մասին, որ սկսեցի նախանձել։

— Չե՞ս հասկանում, լիճը և դու ինձ համար ընդմիշտ կապված

ք... Ես ձեզ գտել եմ միասին, նույն օրը, և ձեզ սիրեցի։ Շատ։ Սրտիս խորքից, մարմնով, հոգով... Եվ եթե,— ավելացրեց նա, Զվարթի աչքերի մեջ լուրջ նայելով,— եթե մի օր մեկին կորցնեմ, մյուսին էլ կկորցնեմ։ Հասկանո՞ւմ ես...

— Մի քիչ բարդ է... Զգում եմ ավելի, քան հասկանում եմ։

— Մի օր կհասկանաս... Զարմանալի բան է մեր այս կյանքը... Միշտ անբավական, միշտ անհանգիստ, հազար ու մի գործ ենք սկսում, պայքարում, չարչարվում, երբեմն բոլորովին աննշան բաների համար տանջվում, վազում կրկներևույթների հետևից... զոհվում... Իսկ ինչո՞ւ... Ուզում ենք վերագտնել մենք մեզ... Վերագտնել մեր լիությունը, որ մերն էր և այլևս մերը չէ... Կյանքը այս է. կյանքի միջոցով վերաստեղծել մեր ամբողջությունը։ Մենակության ժամերին, ծովի վրա, այդ հարցերի մասին շատ եմ մտածել... Գիտես, մենակությունը լավ դպրոց է...

Ասաց և շփոթվեց։ Իր շփոթությունը ծածկելու համար բարձր ծիծաղեց։

Զվարթը իր գլուխը սեղմեց նրա ուսին։

— Շատ լավ բաներ գիտես,— ասաց նա,— որ ես չգիտեմ։ Սպասիր, մի օր ես էլ կիմանամ։

— Միասին կիմանանք։ Չէ՞։

— Դե, իհարկե, միասին...

* * *

Տան փողոցում հանդիպեցին Պերոնյանին։

— Տո, քեզ եմ փնտրում,— գոռաց նա հեռվից։

— Խեր լինի, ի՞նչ կա...

— Պարզապես ուզում եմ իմանալ, թե այս երեկո մեկնո՞ւմ ենք...

— Ինչպե՞ս թե մեկնում ենք...— զարմացավ Հերյանը։— Կազմ և պատրաստ սպասում եմ։

— Մի բան կա, որի մասին նախընտրում եմ խոսել ներսը։ Վատ տեղեկություններ ստացանք։

— Եթե վտանգ կա,— միջամտեց Զվարթը, աչքերը լայն բանալով,— պետք չէ մեկնել։

— Իսկի բան չկա, իսկի բան չկա,— հանգստացրեց նրան Հերյանը, տուն մտնելով։— Եթե մի բոպե թույլ տաս... Պետական գաղտնիք է...

— Գիտե՞ս որ, Ուլուխանլուից հետո, երկաթուղագծի երկայնքին թրքաբնակ որոշ վայրեր կան...

— Գիտեմ։

— Եղբայր, մերոնց կատարած կողոպուտները գրգռել են նրանց...

— Ի՞նչ է, ապստամբե՞լ են...

— Այդպես են ասում։ Հարձակվում են անցնող գնացքների վրա... Այս առավոտ հասած ճանապարհորդներից մի քանի հոգի վիրավորվել են և երկու սպանվածներ էլ կան... Հենց որ իմացա, ուզեցի քեզ հաղորդել...

— Կառավարությունը միջոցներ չի՞ առնում։

— Ինչպե՞ս չէ. զորք է ուղարկել։

— Եթե այդպես է, ինչո՞ւ վախենանք։ Դեպքերից խուսափել ուզողը տեղից չի շարժվի։ Այստեղ թուրքերը, Գորիի և Բաթումի մեջտեղ՝ ավազակները... Դու ի՞նչ ես որոշել։

— Ես, իբրև պաշտոնյա, ստիպված եմ մեկնել։ Առանց թղթի հանրապետությունը չի կարող ապրել,— ծիծաղելով ավելացրեց նա։

— Ես էլ գնում եմ հանրապետության համար նավ ճարելու։ Ուրեմն, մեկնում ենք։ Ձենք ունե՞ս։

Պերոնյանը բաճկոնի ծայրը բարձրացրեց և ցույց տվեց կախված մաուզեր ատրճանակը։ Հերյանը նույն շարժումով ցույց տվեց իրենը։

— Եվ,— ավելացրեց Հերյանը,— ... վերցնում եմ երեք շիշ հայկական կոնյակ։

— Ո՞ր տարվա։

— Չգիտեմ։

— Ուրեմն, լավը չի։ Ես վերցնում եմ Նոյի տապանից մնացած մի քանի աննման շշեր։

— Շատ լավ։ Մանավանդ որ, իբրև զակուսկա, վերցրել եմ ջրհեղեղի ջրերում որսած և փռում տապակված հոյակապ ձկներ։

— Ուստի, ավազակները միանգամայն հաղթված են։

— Այդ մասին ոչ մի կասկած չի կարող լինել։ Միայն թե, շմոռանաս, մի քանի զինվոր բերել... ավազակներից պաշտպանվելու համար։

— Այդ էլ մտածել եմ։

Մի ժամ հետո ամբողջ տունը լցվեց աղմուկով։ Ամենքը խոսում էին միասին։

Զվարթը, գույնը քիչ նետած, աշխատում էր հուզումը զսպել։ Անդադար ժպտում էր։

— Դե, շատ չուշանաս... Այնպես չէ՞, շատ չուշանաս...

— Հանգիստ եղիր, Զվարթ ջան... Ես ինքս էլ անհամբեր եմ, չէ՞...

Կառքը մեկնելու ժամանակ հետևից ջուր նետեցին։

Մթնում էր։ Ցուրտը մլավում էր անտեսանելի գերանից կախված սև կատվի նման։ Քաղաքը պարապ էր և լուռ։

— Ջուզեցի այնտեղ ասել,— փսփսաց Պերոնյանը,— դրությունը նորից լարված է նաև Վրաստանի սահմանների մոտ... Հուսանք գնացքը սահմանը կանցնի...

Վերջ առաջին մասի

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1

Երեկոյան մոտ էր, երբ Հերյանը ուղղվեց դեպի «Ուրախ նավազների» սրճարանը։ Նրա մեկնումից հետո Բաթումը չէր փոխվել։ Նույն մարդիկ, նույն անորոշությունը, նույն աղտը։ Անհամբերությամբ սպասել էր այդ վերադարձին։ Հիմա, որ այստեղ էր, ոչ մի առանձին հաճույք չէր զգում։ Իրեն զգում էր անտարբեր, օտար։ Ամեն ինչ հեռացել էր, անջատվել։ Ներքին հոգեբանական կապերը խզվել էին։ Սովը և հին նավթատարը այլևս չէին արթնացնում սարսռուն և գունավոր այն պատկերները, որոնց աշխարհում նա սիրում էր ապրել։ Այնպես էր, ինչպես պատահում է, երբ մարդ այցելում է տարիներե ի վեր լքած տունը։ Մի տուն, ուր հնչել է երիտասարդ տարիների ծիծաղը և բերկրանքը, ուր ապրել ես դևերով և անիմաստ վշտերով ծանրացած օրեր և գիշերներ։ Մոտեցել ես սրտատրոփ սպասումով, սակայն տանիքը փուլ է եկել, պարտեզը փչացել է, ամեն ինչ ծածկվել է գորշ փոշիով։ Այդ տան մեջ քեզանից հետո ապրել են ուրիշ, օտար մարդիկ։ Սոված այդ տանիքի տակ հնչել են ուրիշ ձայներ, իրագործվել են ուրիշ ճակատագրեր, գոյացել, զարգացել և սպառվել են ուրիշ ուրախություններով և վշտերով լցված կյանքեր։

Կապը խզված է։ Անցյալը թաղվել է անորոշի մեջ։

Դաշենկային դեռ չէր տեսել։ Չէր էլ փնտրել։

Քայլել էր քարափի երկայնքին և նախանձով ու կատաղությամբ նայել ծուլորեն տատանվող, անգործ մնացած մեծ ու փոքր նավերին։ Անգործ նավեր։ Իսկ այնտեղ, լեռների ծոցում մեջքի վրա պառկած խեղճ Սևանը, աչքերը երկնքին կպցրած, լայնածավալ և դատարկ՝ սպասում էր։

Սպասավորին կանչեց և խմելու մի բան պահանջեց։

— Եթե ինձ հարցնեն, ասա, որ այստեղ սպասում եմ,— պատվիրեց նա։

Խմեց և աթոռի ծայրին նստած, ոտքերը երկարած, ձեռքերը գրպաններում սպասեց։

Հոգնած էր։

Ահա երկու օր էր հասել էր. ժամանակ չէր կորցրել։ Ցերեկները վազվզել էր, գիշերները չէր քնել։ Ամեն ինչ մանրամասն ուսումնասիրել էր, ամեն տեղ հարցուփորձ արել։

Շատ դժվար գործ էր։ Ավելի դժվար, քան այն, ինչ ոգևորության վայրկյաններին մտածել էր։ Հյուպատոսը, որին ներկայացել էր նամակով, չնայած շատ սիրալիր ընդունելության, մեծ ոգևորություն ցույց չէր տվել։ Քաղաքավարի, բայց չափազանց դրական և մանրակրկիտ մի մարդ էր։— «Սիրելի նավապետ,— ասել էր նա,— այս բոպեիս մենք պետք ունենք ոչ թե նավի, այլ ցորենի, դեղորայքի, հագուստեղենի... Դուք ձեր աչքերովը տեսաք, թե ինչ է կատարվում այնտեղ...»։

Հին մտավորականներից մեկը։ Առանց թոիչքի, առանց համարձակության։

Ստիպվեց նորից, ինչպես Երևանում, ճառել, լուսաբանել, ապացույցներ բերել։ Եվ, վերջապես, Նախագահի նամակը կար, չէ՞։— «Այդպիսի նամակներ,— պատասխանել էր հյուպատոսը,— ամեն օր ստանում ենք։ Հրաման տալը հեշտ է, իսկ փող ճարելը՝ դժվար։ Համենայն դեպս, ավելորդ է վիճել. դուք աշխատեցեք, իսկ ես խոսք եմ տալիս, հնարավորության սահմաններում օգնել ձեզ...»։

Ահա այդքանը։

Մի բաժակ ևս խմեց։ Ձեռքերը դրեց սեղանի վրա և դիտեց իր կապտած երակները։ Աջ ոտքի ծայրով խփխփեց գետնին։ Նորից խմեց։

Պետք էր մի կերպ միջից դուրս գալ։

Միջոցներ հնարել, կոմբինացիաներ սարքել։ Պետք էր անպատճառ հաղթել բոլոր դժվարությունները։

Պերոնյանը խոստացել էր, անհրաժեշտ պարագային, նախագահին հանգիստ չթողնել։ Մանավանդ, եթե նա ժողովուրդը և բանակը ապրեցնելու համար դրամ տպելու անհրաժեշտ թուղթը գտներ։

Մտածեց, տխրեց, ժպտաց։

Ինչ խելագար աշխարհ է և ինչ տարօրինակ դրություն։ Թիֆլիսում հայկական գնացքը անվանում են «Միլիարդների գնացք»։

Այն գիշերը, ճամփորդության այն գիշերը...

Թուրքերի գնդակները բաց պատուհաններից ներս էին թափվում։

Ինքը և Պերոնյանը, և ամեն մարդ, պառկել էին գետնի վրա։ Լսվում էր գնդացիրների տրաքոցը և թնդանոթների ոռնոցը։ Խուլ աղաղակներ, վախեցած կենդանիների վայոց։ Հեռուն գյուղեր էին այրվում։ Անիմաստ կռիվ, անիմաստ զոհեր։

Վտանգի դոտին անցնելուց հետո ամեն մարդ գլուխը բարձրացրեց և ժպտալով նստեց։ Կարծես ոչինչ չէր պատահել։ Շշեր բացվեցին, կենաց խմեցին։ Մինչ հեռուն կռիվը շարունակվում էր։

Մարդիկ դարձել են մի տեսակ սալամանդր, սնվում են կրակով։

Ամեն ինչ շփոթվել է, մթնել։ Գիտակցությունը, բանականությունը։ Աշխարհը շրջվել է, մարդկությունը այլափոխվել է։ Կարծես խոր անտառներից դուրս պրծած վայրենի գազաններ լինեն՝ վախից կատաղած, արյունած աչքերը երևակայական թշնամու վրա հառած։ Երեկ թվում էին քաղաքակրթված մարդիկ, իսկ այսօր՝ կենդանացած դեմքեր, ոխով և կասկածանքով ուռած նայվածքներ և ատրճանակը դուրս հանելու միշտ պատրաստ՝ դողդողացող, դեղնած ձեռքեր։ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, ամեն տեղ։ Մի ոմն զվարճանում է աշխարհը խառնաշփոթության մատնելով. մի ոմն չարությամբ ծիծաղում է շրթները ծռմռած, կոկորդը խոփանքով և հռհռոցներով լցված։

— Սիրելի նավապետին խոնարհ ողջույններ։

— Ահ, Ֆեոդոր Պանտելեևիչ, ուրախ եմ... Ձեզ էի սպասում... Դե, նստեք, նստեք... Հե՜յ, խազեին, մի բաժակ...

Ֆեոդոր Պանտելեևիչը ձեռքերը մեկ մեկի քսեց, մոխրագույն փոքրիկ աչքերով ժպտաց, գլուխը ջղային շարժումով օրորեց, նստեց և Հերյանի ածած օղին արագ շարժումով կուլ տվեց։

— Տակ... էդպես...

Նա հազում էր անհանգիստ փոքրիկ հազով, կոկորդը անդադար քերելու ձևով։ Այդ վայրկյաններին նրա ականջների վերի մասերը և այտերը կարմրում, բոցավառվում էին և աչքերը դեռ ավելի փոքրանում։ Կարծես անդադար մրսում էր։ Թուքը կուլ տալու ժամանակ նրա կոկորդը չափազանց ուռչում էր և նրա դեմքը վախեցած, մտատանջ մարդու կերպարանք էր ստանում։

— Նու, մեկն էլ...— առաջարկեց Հերյանը և բաժակը լցրեց։

— Ողջ լինենք...

— Առողջություն։

Դեպքերից առաջ Ֆեոդոր Պանտելեևիչը բավականին կարևոր պաշտոնի տեր մարդ էր։ Նավային մի մեծ ընկերության կառավարիչն էր։ Շատ գործեր էր կատարել, շատ փող էր վաստակել և անխնա ծախսել։ Հեղափոխությունը և նրան հաջորդող կովկասյան դեպքերը բարդ վի-

ճակ էին ստեղծել նրա համար։ Մի օրից մյուսը նրա դրությունը փոխվել էր, և նա, ինչպես ասում էր ինքը, «մնացել էր օդում կախված»։ Ընկերության իսկական սեփականատերերը փախել էին մարդ չգիտեր ուր, ճանապարհները փակվել էին, տեղական փոփոխական իշխանությունները լավագույն նավերը սեփականացրել էին։ Իսկ պաշտոնյաներին ոչ ոք ոչինչ չէր վճարում։ Գործ չկար, դրամ չկար։ Մնացել էր անպաշտպան և ապշած։ Մնացել էր կառավարիչ առանց ընկերության։ Սպասում էր, ինչպես ամեն մարդ, որ դրությունը փոխվի։ Ապրելու համար ինչ-որ գործեր էր անում, որոնք շատ պարզ չէին։ Հերյանը այդ լավ գիտեր։

— Դե, մեկ էլ խմենք...

— Չէ, չէ, չէ...

— Ֆեոդոր Պանտելեևիչ, առանց օղու խոնավ եղանակին մարդ չի կարող դիմանալ...

— Այդ մեկը ճիշտ է։ Առանց օղու չի կարելի ապրել...

Հերյանը շարունակում էր բաժակը լցնել։

— Է՜, խենթություն խենթության վրա,— ասաց նա փիլիսոփայական շեշտով։— Երբ մարդ ուզում է աշխարհի դարերով ստեղծված սարքը և կարգը մի օրում փոխել, միայն գժություններ է անում... Բայց այդ տխուր հարցերը թողնենք։ Ֆեոդոր Պանտելեևիչ, ո՞նց են գործերը...

— Ի՞նչ գործ,— հառաչեց ռուսը։— Դրությունը ծանոթ է ձեզ... Ընկել ենք անորոշության մեջ։ Մի խավար շրջան...

— Շատ ճիշտ է,— համաձայնեց Հերյանը։

— Խավար։ Աշխատում եմ պաշտպանել նավային ընկերության շահերը. զոհողություններ եմ անում, պայքարում եմ... Տեսնենք ինչ դուրս կգա։ Դժվար է...

Ասաց և մի սարդինկա վերցրեց։

— Ի՞նչ եք ուզում,— ասաց Հերյանը,— մարդ խոմ գլխի հարվածով պատեր չի կարող քանդել... Իշխանություն չկա, օրենք չկա, ոչինչ չկա...

Բերանը մի բողկ դրեց և ձեռքերը վեր բարձրացրեց ի նշան հուսահատության։

— Ես չեմ հասկանում անտանելի այս դրությունը,— շարունակեց նա բաժակները նորից լցնելով։— Երբ մտածում եմ, ուղղակի կատաղությունը ինձ բռնում է... Ահ, ավելի լավ է, այդ մասին բնավ չխոսել... Լավ է համբերել և սպասել։ Բարեբախտաբար, դեռ մեզ նման մարդիկ կան աշխարհում. ազնիվ, գործ հասկացող... թույլ տվեք ասեմ,

Ֆեոդոր Պանտելեևիչ, այդ ձեր իրավունքն է... Դեռ վերջերս, նույն այս բառերով ձեր մասին խոսում էր Երևանում նախարարների խորհրդի նախագահի հետ...— ասաց նա։ Ինքն էլ չիմացավ ինչպես այդ սուտը բերնից դուրս բերեց։ Շիտակ նայեց մյուսի աչքերի մեջ իրեն չմատնելու համար։ Ռուսը շփոթվեց, աչքերը վայր առավ։

— Ուղղակի այդպես... Հիմա կասեմ, թե ինչ առիթով...

Աթոռը մոտեցրեց ռուսի աթոռին, գլուխը երկարեց դեպի նրան և խորհրդավոր շեշտով շարունակեց.

— Վերջերս, Հայաստանի կառավարությունը, հրավիրեց ինձ քննել և զեկուցում տալ Սևանա լճի կարելիությունների մասին։ Դե, գիտեք, մենք—ես, ինչպես և դուք—ծովային մարդիկ ենք. ուր մի քիչ ջուր ենք տեսնում, ուզում ենք նավարկել... Ասեմ անմիջապես, Ֆեոդոր Պանտելեևիչ, որ լայնատարած այդ լիճը իսկական գանձ է, ամեն տեսակ բարիքներով լցված և հսկայական կարելիություններով... Դուք, իբրև լայն ձեռնարկներ ղեկավարող մարդ, այդ լավ կարող եք հասկանալ...

— Հետաքրքրական է,— փսփսաց կառավարիչը։

— Վերին աստիճանի։ Կարծում եմ, առայժմ, նրանք այնտեղ կարիք ունեն մի քանի փոքր նավերի, որպեսզի կարողանան մարդ և ապրանք տեղափոխել։ Ասում եմ փոքր, աչքի առաջ ունենալով նավերի տեղափոխության դժվարությունները, բայց ոչ շատ փոքր։ Լիճը մեծ է, ճամփորդությունները կարող են տևել երկար ժամեր և քամիներն էլ խիստ են... Լսել եմ, ի միջի այլոց, որ մի խումբ ամերիկացի կապիտալիստներ որոշ հետաքրքրություն են ցույց տվել... Ինչո՞ւ թողնել ուրիշներին, ինչո՞ւ... Բայց խոսելով տարվեցի և բաժակները մոռացա...

Մինչ Հերյանը դանդաղ և մտածկոտ շարժումով բաժակները լցնում էր, մյուսը, ավելի խորամանկ, քան թվում էր, արդեն հասկացել էր, թե բանը ինչումն է և որոշել էր իրեն ծախել ինչքան կարելի է թանկ։ Անակնկալ այդ պատահականության առաջ բերած հուզումը ծածկելու համար, նա, պատառաքաղի և դանակի ծայրերը բռնած աշխատում էր ձուկի կտորը ուտել հանգիստ և անտարբեր շարժումով։ Սակայն, այդ չէր հաջողվում նրան։ Ձեռքերը կամաց դողում էին։

— Եվ այդպես է, որ...— շարունակեց Հերյանը, անմիջապես հասկանալով թե ինչ է անցնում ռուսի գլխով,— և այդպես է, որ նախարարների խորհրդի նախագահի հետ այդ հարցերի շուրջը երկար բարակ խոսելիս տվեցի նաև ձեր անունը... Անշուշտ, շատ դժվարություններ կան... Մեր հարևանները,— ավելացրեց նա շոշափելով քաղաքական լարը,— դժգոհ են մեզանից, մանավանդ Դենիկինի պատճառով... Գի-

տեք, որ նա մեզ պաշտպանում է և մեր բանակը համարում էր իր բանակի հետնապահը... Ուզում եմ ասել, որ վաղը, նոր ներկայացող դեպքերի շրջանում, այդ մեր ձեռնարկը կարող է նաև ընդհանուր օգտակարություն ունենալ...

Մտավ ռազմական պատճառաբանությունների մեջ։

— Հասկանում եմ,— ասաց կառավարիչը,— հասկանում եմ։ Ուրե՞մն...

— Ուրեմն... Դուք եք, որ ինձ խորհուրդ պետք է տաք... Ես, այդպես ասած, գնող եմ։ Ձեր ընկերությունը բազմաթիվ նավեր ունի, որոնք քարափին կապված փտում են... Վաղը իշխանությունը մի պարզ հրամանով կարող է խլել... Մտածո՞ւմ եք։

— Դուք ինձ դնում եք դժվար դրության մեջ,— պատասխանեց ռուսը բառերը արագ-արագ ծամելով։— Ես, ինչպես գիտեք, դեռ շարունակում եմ մնալ ընկերության պատասխանատու վարիչը, սակայն, ստեղծվել է տարօրինակ դրություն։ Նավերը ծախելու մասին երբեք հարց չի եղել, բայց՝ մյուս կողմից, մարդ չի իմանում ինչ կարող է պատահել... Մեծ պատասխանատվություն է... Ասեմ նաև, որ ես համակրում եմ ձեր երկրին և պիտի ուզենայի մի բան անել...

Ձեռքով անորոշության շարժումներ արեց, երկար հազաց, կարմրեց և աթոռի վրա փոքրանալով, լռեց։

Հերյանը աչքի տակով դիտեց նրան։ Այլևս վստահ էր հաջողությանը։ Այն, ինչ դիմացինը ասում էր, պարզ ձևականության համար էր, վաճառականական խորամանկություն։

— Ֆեոդոր Պանտելեևիչ,— ասաց նա քիչ մտածելուց հետո,— ես հասկանում եմ ձեր տատամսանքը։ Բայց, մյուս կողմից էլ, այսպիսի ժամանակներում, դուք պարտավոր եք որոշ պատասխանատվություն վերցնել ձեզ վրա և ընկերության սեփականությունը հնարավոր չափով փրկել... Մենք չգիտենք ինչ կարող է պատահել վաղը... Շատերը ասում են, որ եթե բոլշևիկները հաղթեն այնտեղ, անպայման կիջնեն նաև Կովկաս... թե նավերը կխլեն և թե ձեզ կհեռացնեն...

— Բայց կարող է պատահել, որ Դենիկինը...

— Ինչո՞ւ ծածկեմ, տարակուսում եմ... Վերջին ժամանակները նրանք անդադար ետ են քաշվում... Նույնիսկ եթե նրանք հաղթեն, դա երկար ժամանակի խնդիր է, այնքան երկար, որ խնամքից զուրկ ապրանքը կարող է փչանալ։ Մի քիչ էլ անցնի և դրանց արժեքը կվերածվի հնացած երկաթի արժեքի...

— Այդ, դժբախտաբար, ճիշտ է։ Ի՞նչ կարող եմ անել։

— Ես իրավունք չունեմ ձեզ խորհուրդ տալու, դուք ձեր գործերը ինձանից լավ եք հասկանում։ Սակայն թույլ եմ տալիս ինձ ասել, որ եթե ես լինեի, նավերից մեկը կզոհեի մյուսները փրկելու համար։

— Ինչպե՞ս։

— Շատ պարզ է։ Մեկից առած փողով հնարավորություն ձեռք կբերեք մարդիկ վարձելու, յուղ գնելու, մեքենաները սրբելու, ներկելու և առհասարակ տանելու անհրաժեշտ խնամքը։ Բայց դա, անշուշտ, ձեր գործն է... Ասեմ ձեզ ամենայն անկեղծությամբ, երկու ուրիշ առաջարկություններ ևս ունեմ... ահա...

Ձեռքը տարավ բաճկոնի կողքի գրպանը և... ոչինչ դուրս չբերեց։

— Դե, ի՞նչ արած,— ասաց նա, բռունցքները սեղանի վրա նետելով և ձայնին վերջնական որոշումի շեշտ տալով,— գործը չեղավ, ուրեմն չեղավ։ Կարևորը մեր բարեկամությունն է, որ մնում է անփոփոխ։ Մի բաժակ ևս...

Ֆեոդոր Պանտելեևիչը զարմացած նայեց։ Այդպիսի կտրուկ վերջավորության չէր սպասում։ Աչքերը վայր առավ, մտածեց, հաշվեց, ապա, սխալի մեջ բռնված մարդու նման, անվստահ ձայնով բողոքեց։

— Չէ, չէ, սիրելի նավապետ, այդպես չէ... Մենք խոսում ենք իբրև հին բարեկամներ, սիրտ սրտի, անկեղծորեն... Ես չասացի, որ ուզում եմ մերժել, ես պարզապես նկարագրեցի դրությունը... Ի՞նչ վալյուտայով եք վճարելու։

— Դա, երկրորդական հարց է... Համենայն դեպս, ոչ թե թղթե միլիոններով կամ կովկասյան հանրապետությունների դրամանիշներով... Ապրանքով, ոսկով...

— Նավը արդեն ընտրե՞լ եք։

— Այո։ «Ալբատրոսը»։

— Լավ եք ընտրել։ Մեր վերջին գնած նավերից մեկն է, բոլորովին նոր։

— Չափազանցում եք, երեք տարի առաջ...

— Երկուսևկես։ Շինված է Օդեսայում։ Դիզելի հրաշալի մեքենա ունի և, առհասարակ, նորագույնն է այստեղի հրապարակի վրա։

— Ինչքա՞ն եք ուզում։

— Այս բոպեիս չեմ կարող ասել. պետք է հարցը ուսումնասիրել։

— Լավ։ Այս գիշեր որտե՞ղ ենք ընթրելու։— Հրավիրված եք...

— Բարի։ Վերջացնենք շիշը։

— Պահանջենք մի ուրիշը։

— Դա կլինի իմ հաշվին։

— Այդ չէ, այդ երբեք։ Այսօր իմ հերթն է... Դուք այդ պիտի

թույլ տաք և, խնդրում եմ, այդպիսի բաների մասին չվիճենք... Ծովային մարդիկ ենք. ե՞նք, թե չենք...

Մի քանի շիշ խմելուց հետո նրանք քայլեցին փողոցների միջով, թև թևի գցած, երերալով, անիմաստ կերպով ծիծաղելով և բղկտալով։

Կանգ առան ծովի ափին և փորձեցին երգել։

Երգելուց հետո Ֆեոդոր Պանտելեևիչը հանկարծ տխրեց։ Մելամաղձոտ շեշտով հոռետես և փիլիսոփայական բաներ ասաց մարդկային ճակատագրի և Ռուսաստանի մասին։ Երեսի կնճիռները կուտակեց լալու համար, բայց արցունքներ չկան, և որովհետև արցունքներ չկան, նա բարկացավ աշխարհի դեմ։ Սկսեց բարձրաձայն հայհոյել և «կեցցե ցարը» գոռալ։

Ուշ երեկոյան ճաշարանում նստած կերան և նորից խմեցին։

Բալալայկաների նվագախումբը ճմլում էր սրտերը և էժան զգայնության հրավառություն բաժանում։

Պաժարսկի կոտլետ։ Մելանի գինի։ Կարմիր բողկ։

Երգ, աղմուկ, բազմություն։

Կղմինդրի գույն դեմքերով տարօրինակ տիպարներ։ Աներևակայելի բեղերով տղամարդիկ՝ ագահ, լրտես, վառվռուն աչքերով։ Կեղծ շքեղություն ծախող աղջիկներ՝ ներկած մազերով, հեղհեղուկ նայվածքներով, նուրբ և դալուկ ձեռքերով։ Նրանց զգեստների տակից աղքատություն էր հոտում և նրանց կրծքերից՝ մուշկ։

Փշուր եկած ցարական Ռուսաստանի այդ մնացուկը, մաշված երազներով բնակված՝ լափում էր վերջին ճաշը։

Ամեն մի պատառ ուտելիքը, ամեն մի բաժակ գինին լցված էր դառնությամբ։

Հեռվից, հսկայական հրդեհը ճարճատելով մոտենում էր։ Բոլորի սրտում վաղվա օրը անվստահությամբ և արյունով էր լցված։ Գիտեին, ձևացնում էին, որ չգիտեն։

Ու դահլիճը լցված էր բռնազբոսիկ ծիծաղներով, անհոգություն կեղծող բացականչություններով, հարբած աղաղակներով։

Թրջված ռետինե շրթներով մի կին՝ ձեռքերը իր լեցուն կրծքերի վրա սեղմած, գնչուի ողբ էր մլավում։ Բալալայկաները ընկերակցում էին նրան մղկտալով։

Ֆեոդոր Պանտելեևիչը պատառաքաղը ձեռքով պինդ սեղմած, աչքերը վարագուրված՝ լսում էր երգը և հառաչում։ Նրա բեղերից սալցայի կաթիլներ էին կախված։ Հուզումի ամենատաք վայրկյաններին նա իր վարի շրթունքը վեր էր քաշում և բեղերի ծայրերը աղմկով ծծում։

Նրա գլուխը դողդողում էր մեռած նապաստակի գլխի նման և վհատած ձայնը անդադար հառաչում։

— Ռուսաստանը... Բասեյա՞ն... մարտիրոս Բասեյա՞ն...

Ապա, պատառաքաղի ծայրով պրպտում էր պնակի մեջ։

Նվագախումբը մետաղե տերևների հեղեղ էր վայր թափում և արհեստական անտառի նման խարշափում։ Սրտերը վեր էին թռչում և նայվածքները բոցակիզվում։

Սոխով ծածկված սելյոդկա։ Խորոված գառնուկ։ Հայաստանի կոնյակ։

Ուռած երակներով կարմրած դեմքեր։

Ասպետական կեցվածքներ, չռած ոտքեր, ոսկեջրած խանչալների վրա սեղմված ձեռքեր։

— Կասիմ բեկ, ձեր թանկագին կենացը...

— Պարոնայք, Կասիմ բեկի կենացը։

Մարդիկ ոտքի էին կանգնում։ Նվագախումբը վայր թափված պնակների նման փշրվում էր։

Կասիմ բեկը—մի հին ավազակ, որ թուրքերի օրոք ամենքին կողոպտել էր—գլխի թեթև շարժումով գոհունակությունն էր հայտնում, ժպտում և հրաման տալիս հարևան սեղանի վրա մի քանի շիշ գինի դնելու։

Ֆեոդոր Պանտելեևիչը, որ, իբրև միապետական ռուս, սովոր էր տեղական ժողովուրդների վրա նայել բարձրից, իրեն զգում էր ճզմված, անհետացած։ Քթի տակ հայհոյանքներ էր մմռում, սփոցի ծայրը ջղային ձեռքով ճմլում, ապա շարունակում ուտել։

— Ահ, նավապետ,— ասում էր նա հեռավոր ձայնով,— երբ մերոնք վերադառնան, ամեն բան նորից կփոխվի։ Այս վայրենիները դողում էին մի գարադավոյի առաջ, հիմա համարձակվում են... Բասեյան, ահ, Բասեյան...

Ու մինչ բալալայկաները մեկնում էին Վոլգայի ափերի հառաչանքները ժողովելու, Ֆեոդոր Պանտելեևիչը երեսը ձեռքերի մեջն էր առնում և այդպես մնում։ Նրան տանջում էին խմած գինիները, կերած ճաշերը և վիրավորված մեծապետական զգացումը։

Հերյանը ևս նայում էր այդ տեսարանին տխրած աչքերով։

Ի՞նչ է կատարվում հիմա այնտեղ, երկրում...

Ձեռքը բնազդաբար մտցրեց բաճկոնի ներսի գրպանը, տեսնելու համար, թե Զվարթից ստացած նամակը այնտե՞ղ էր։ Այո, այնտեղ էր։ Օրվա ընթացքում քանի անգամ նա կարդացել էր այդ նամակը և լցվել նոր կորովով։

Ու սրտի վրայից սահեց տխրության հետ խառնված անհանգիստ մի

գորով։ Անշուշտ, հաճախ կյանքը չար է և անողոք։ Բայց նաև երբեմն մեր գլխի վրա կախված ծանր ամպերի միջից ճառագայթների փունջեր լուսավորում են մեր հոգնած ճակատները։

— Այո, Ֆեոդոր Պանտելեևիչ,— ասաց նա, հանկարծ պահանջ զգալով մի կերպով արտահայտել սիրտը լցնող զգացումը,— օրերը գալիս են, օրերը անցնում են, ինչպես ասված է իմ երկրի մի երգում, բայց մեր ճակատագիրը կապված է անհայտ ուժերի հետ։ Եթե մարդ մի բան ունի անելիք, ուրեմն նա պետք է այն անի, ինչքան էլ օրերը աղոտ գան և անցնեն...

— Այդ ճշմարտապես այդպես է,— բացականչեց ռուսը։— Ճիշտ մտածում... Ինչպե՞ս ասացիք... Օրերը... Ահ, թողնենք օրերը և խոսենք գիշերների մասին... Ասացեք, նավապետ, ասացեք ամենայն անկեղծությամբ, կարողանո՞ւմ եք գիշերները քնել...

Հարցրեց և սարսափով լցված աչքերը հառեց Հերյանի վրա։

— Ե՞ս, այո, հենց որ աչքերս փակում եմ, քնում եմ։

— Դուք բախտավոր մարդ եք...

Գլուխը գցեց կրծքի վրա, մտածեց և վախով, տանջանքով լցված աչքերը լայն բանալով շարունակեց։

— Ես չեմ կարողանում քնել... Հավատո՞ւմ եք. դա մի սոսկալի տանջանք է... մի սոսկալի տանջանք... Ոչինչ չի օգնում, ո՛չ դեղերը, ո՛չ խմիչքը։ Ժամերով երևակայական դաշտերից անցնող ճերմակ ոչխարներ եմ հաշվում, աղոթքներ փսփսում, Կռիլովի առակներ արտասանում... ոչինչ չի օգնում։ Հազիվ գլուխս ծանրանում է, հազիվ սկսում եմ հորանջել՝ անմիջապես ներս է մտնում նա։

— Ո՞վ։

— Չեմ իմանում... Նա... Դուք, նավապետ, պիտի ասեք, որ Ֆեոդոր Պանտելեևիչը այս գիշեր մի քիչ շատ է խմել. նա լիքուտում է, անհավատալի բաներ է պատմում... Չէ, նավապետ, չէ։ Ինչ պատմում եմ՝ ամենաճշմարիտ ճշմարտություն է և դուք առաջին մարդն եք, որին այդ մասին պատմում եմ։ Բնակարանում մենակ եմ։ Իմ ընտանիքը մնացել է Ռուսաստանում։ Կինս գնացել էր Մոսկվա զավակներին տեսնելու համար և դեպքերը վրա գալով նա մնաց այնտեղ փակված։ Բոլորովին մենակ եմ։ Քնում եմ մի սենյակում, որը պատշգամբ չունի փողոցի վրա։ Պառկելուց առաջ դռները կողպում եմ, պատուհանները և փեղկերը ծածկում, ապա մտնում եմ ննջասենյակ, կողպում եմ դռները և պատուհանները, բոլորովին ապահով լինելու համար դռան առաջ սեղան եմ քաշում, վրան աթոռներ դարսում... Երբեք ոչինչ չեմ լսում, այնուամենայնիվ, նա այնտեղ է։

— Ո՞վ է, ո՞վ է այնտեղ...

— Ես ձեզ ասացի, չեմ իմանում։ Տարօրինակ մի էակ, որին առաջ երբեք, ոչ մի տեղ չեմ հանդիպել։ Կարճ, լուռ, զբաղկոտ, բամբասող։ Մտնում է ներս, մեկ ձեռքով արագ և ճարպիկ շարժումով մի ծխախոտ է ոլորում, տանում կպցնում է վարի շրթունքին և թողնում այնտեղ առանց վառելու։ Ապա, փոքրիկ, շտապ-շտապ քայլերով շրջում է սենյակի չորս կողմը, դունչը ամեն տեղ խոթում, ուշադրությամբ ամեն ինչ զննում, քննում, մի առարկայից անցնում մյուսին, բաց անում գրքերը, առանց կարդալու փակում, կանգ առնում նկարների առաջ, թեթև մի նայվածք գցում և անցնում։ Վերադառնալով սենյակի մյուս ծայրը, նորից շտապ-շտապ, կարծես մի բան է մոռացել, շրջում է, նայում, զննում... Դուք չեք կարող պատկերացնել ինչպիսի սարսափ է ազդում իմ վրա... Ուրվական ասես, ուրվական չէ, սատանա ասես, Մեֆիստոֆել չէ և սակայն... Մի փոքրիկ մարդ է, կլոր, դեղին պզտիկ մորուքով... Ուռած փոր ունի, լեցուն այտեր... Ավելի շուտ, նստակյաց կյանք վարող չինովնիկի է նման։ Այո, լավ ասացի... չինովնիկի։ Ամենից ավելի դժնդակ տպավորություն են թողնում նրա ոտքերը... Կանացի, փոքրիկ ոտքեր. տձև, այլանդակ և սոսկալի թեթև ու արագ... Մի ուրիշ ահավոր բան. երբեք ինձ չի նայում... Մնում եմ պառկած անկողնիս մեջ, աչքերս լայն բացված, շունչս կտրված, շարժումներս կաթվածահար... Ինձանով չի հետաքրքրվում,— չէ, նրա համար ես գոյություն չունեմ... Չկամ, բոլորովին չկամ։ Բայց հասկացեք այդ... մինչ նա զննում է սեղանի վրա դրված փոքրիկ առարկաները՝ խոզանակ, հայելի, գրիչ, թանաքաման... մինչ նա, ձեռքերը մեջքի վրա կապած, չվառված ծխախոտը վարի շրթունքին կպցրած, գլուխը երկարած, մի վայրկյան կանգ է առնում և անցնում, ապա նորից կանգ առնում և նորից անցնում... երակներիս մեջ արյունը սառչում է, սիրտս բաբախում է այնքան ուժգին, որ լսում եմ նրա ձայնը, մազերս վեր են տնկվում և ճակտիս վրա սառն քրտինքի կաթիլներ են գոյանում, որովհետև... որովհետև ես զգում եմ, ես պարզ զգում եմ, որ նրա աչքերը թեև նայում են ուրիշ տեղ, իրականում խուզարկում են իմ հոգին... Ասում եմ ձեզ, դրանք ահավոր բաներ են, որ բառերով չի կարելի նկարագրել... Դրա համար էլ...չեմ ուզում տուն վերադառնալ, չեմ ուզում...

— Այ քեզ դաստուշչինա,— մտածեց Հերյանը։— Մարդը մարդ չի լինի, եթե սեփական սատանան չունի։

Ֆեոդոր Պանտելևիչը գլուխը կախած սպասում էր, թե ինչ կասի Հերյանը։

— Այն, ինչ պատմում եք, սիրելի բարեկամ, շատ տարօրինակ է,—

ասաց Հերյանը։— Ինձ էլ պատահել է երբեմն ուղղակի շշմեցուցիչ երազներ տեսնել (մտաբերեց Հայաստանի ճանապարհին տեսած երազը)։ Պետք չէ տպավորվել։ Մենք ամենքս, դեպքերի բերումով, հիվանդագին վիճակի ենք հասել... մեր ջղերը սարսռում են փոքրագույն գրգիռներից... Կարևորը, Ֆեոդոր Պանտելեևիչ, կյանքում մի ղեկավար գաղափար ունենալն է... Պետք չէ ապրել կրավորական կերպով, այլ գործել, իրագործել, կառուցել... Միայն այդ կարող է փրկել մեզ...

— Գործե՞լ, նավապետ, գործե՞լ, այսպիսի անիշխանական դրության մեջ... Կառուցե՞լ, ասում եք... Չե՞ք տեսնում, որ ամեն ինչ քանդվում է, ոչնչանում, փոշիի վերածվում... Ես ամբողջ կյանքս աշխատել եմ, տքնել, չարչարվել որոշ դիրքի հասնելու համար... Իսկ հիմա, տեսեք...

Բազուկները երկարեց դեպի դահլիճը։ Ապա, ամբողջ մարմնով դողալով, երեսը տակնուվրա եղած, աչքերը դուրս պրծած, նա բռունցքներով խփեց սեղանին, ոտքի կանգնեց և ջղային ու ծիծաղելի ձայնով գոռաց.— Կեցցե՛ Ռուսաստանը, կեցցե՛ ցարը...

Ամենքը նայեցին նրան։

— Այո, կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛...

— Լռությո՛ւն, լռությո՛ւն...

— Դո՛ւրս, դո՛ւրս...

Ահագին աղմուկ բարձրացավ։

Մոտի սեղանի շուրջը նստած աջարացիները արհամարհանքով ծիծաղում էին։ Երկու վրացիներ ոտքի կանգնեցին և իրենց չերքեզկայի թևերը ծալելով վազեցին կառավարչի վրա։ Հերյանը վեր թռավ, իր մարմնով ռուսին ծածկեց և բռունցքները սեղմած սպասեց։ Այդ վայրկյանին սրահի խորքից դուրս նետվեց սմոկինգ հագած, նիհար, չոր մի անձնավորություն և քաղաքավարական չափազանցված ձևերով խնդրեց միջադեպին վերջ տալ։ Ճաշարանի տերն էր։ Երաժշտախումբը մի աղմըկալից քայլերգ նվագեց և ամենքը վերադարձան իրենց տեղը։

Քիչ նստելուց հետո Հերյանը հաշիվը վճարեց և սեղանակցին առաջարկեց միասին դուրս գալ անախորժ դեպքերից խուսափելու համար։

Դուրս եկան։ Քայլեցին դանդաղ և մտածկոտ քայլերով, առանց խոսելու։

Ֆեոդոր Պանտելեևիչը քարշ էր գալիս ընկճված, կարծես ուսերի վրա մի ահագին բեռ էր կրում։

Կանգնում էր, ցուրտ առած ձիու նման հազում, քայլում, նորից հազում։

Երբ հասան փողոցի այն անկյունը, ուր գտնվում էր նրա բնա-

կարանը, նա սկսեց անհանգստանալ։ Անդադար շտկում էր փողկապը։ Ոսկրոտ և հաստ մատներով բաց էր անում մաշված ծայրերը, հանգույցի ձևով ոլորում, ջղային շարժումով վեր քաշում, նորից բաց անում, նորից կապում։

Այդ տևեց բավական երկար ժամանակ։

Երբ վերջացրեց, վճռական որոշում կայացնելու ձևով հանկարծ փայտացավ, զինվորական լարված դիրք ստացավ, ձեռքերը մեկնեց Հերյանին, մի քանի անգամ ուժեղ կերպով թոթվեց... ապա մոտեցավ տան մուտքի դռանը, կանգնեց և սկսեց բարձրաձայն հեկեկալ։

Հերյանը վազեց դեպի նրան։

— Նու, նու... Ֆեոդոր Պանտելեևիչ, ասացեք, ի՞նչ պատահեց... Ֆեոդոր Պանտելեևիչ, ախր, չի կարելի էդպես... Նու, նու...

Հասուն այդ մարդու լացը ճնշիչ էր և վհատեցուցիչ։

— Ֆեոդոր Պանտելեևիչ, խնդրում եմ... Ախր, էդպես, նու, նու...

Հեռվից լսվում էր ափին զարնվող ալիքների ձայն։ Ծխնելույզների ետև կապույտ աստղեր էին երևում։

Ֆեոդոր Պանտելեևիչը, վերջապես, հանգստացավ։ Կանգնեց պատի առաջ, միզեց և արագ քայլերով մտավ ներս։

Հերյանը քուն չուներ։

Օրվա ընթացքին այնքան բաներ էին պատահել։ Հիմա, նրա մտքի մեջ ամեն ինչ սկսել էր խառնվել։ Անշուշտ, ձեռք էր բերել որոշ հաջողություն, սակայն շատ կետեր մնացել էին մութ։

Դժբախտությունը նրանում էր, որ ստիպված էր գործ ունենալ անհավասարակշռված մի մարդու հետ։ Ի՞նչ էր անցնում այդ Ֆեոդոր Պանտելեևիչի սրտում։ Վիշտ, վհատություն, բնածին տկարություն՝ ծածկված խենթության քողերով։

Մի մարդ, որի հետևից բազմաթիվ ուրվականներ են քայլում։ Ինչպես մեր ամենքի հետևից։

Մտածելով քայլեց դեպի ծովափը։

Քամու մի լայն ալիք երեսին կպավ և իրեն զգաց թարմացած։ Շապկան քաշեց մինչև ականջները, կուրծքը դուրս հանեց և աշխույժ՝ քայլերն ուղղեց դեպի քարափ։

Վերջ ի վերջո, անհատական դրամաները, արցունքները, ջղագրգռությունները պետք էին նրան անտարբեր թողնել։ Ինքը խոմ հիվանդապահ չէ՞ր, ոչ էլ դյուրազգաց հոգեբան։ Եկել էր պարզ, որոշ, դրական գործով։ Պետք էր հաղթահարել բոլոր դժվարությունները և ձեռք բերել նավը։

Նավը, նավը։

Մարդը խմել էր և լաց էր լինում, գիշերները չէր քնում, վատ երազներ էր տեսնում։ Մեծ բան։ Մտածել, թե ի՞նչ է անցնում Երևանի փողոցներում, լեռների կողերին, տակնուվրա եղած դաշտերում։

Նույնիսկ այդ, նույնիսկ այդ սև ողբերգությունը պետք չէ թուլացնի նրա կամքը։ Թող ամեն մեկը անի այն, ինչ կարող է անել և լինի այն, ինչ լինելու է։

Եվ լինի, ինչ լինելու է...

Անհանգիստ կոհակները մտրակում էին գիշերը և շառաչելով ետ քաշվում։ Նրանց ետևից վազելով գալիս էին ուրիշ կոհակներ, ապա ուրիշներ... կարծես դատապարտված էին երբեք կանգ չառնող տաժանակիր աշխատանքի։

Իսկ ծովը, սարսռող անէության նման փռված, աստղերով լցված, մի փոքրիկ կտոր լուսին օրորող, մեծ և խավար շնչառություն էր, գիշերով լցված աշխարհի առաջ։

Ահ, լինի, ինչ լինելու է...

Կանգ առավ, նայեց։ Ձեռքը տարավ ճակատին և նորից ուշադրությամբ նայեց։

Հեռուն մի նավ էր կապված։

Քայլեց ծովի մեջ երկարող քարափով։ Գիտեր, անզգուշություն էր գիշերով այդ վայրերում քայլելը։ Գիշերները բնակված էին կասկածելի և հուսահատ անձնավորություններով։ Մարդ էին սպանում տասը կոպեկի համար։ Օր չէր անցնում, որ նավահանգստի տարբեր վայրերում դաշունահարված դիակներ չգտնեին։

Ատրճանակը հանեց և շարունակեց քայլել։

Նավը։

Որքան առաջանում էր, այնքան քամին սաստկանում էր։ Նրա դեմ կարկառած անտեսանելի ձեռքեր նրան հրում էին ետ։ Մեկ ուսը առաջ տնկեց, գլուխը վար ծռեց և խոյի նման եղջյուրելով շարունակեց ճանապարհը։

Ահա պինդ պարաններով կապված տասնյակ առագաստանավեր ծփծփալով օրորվում էին, մեկը մյուսին բախվում և կայմերի ծայրերով աջ ու ձախ ճոճելով մղկտում։

Ահա խարիսխ նետած ուրիշ նավեր։ Մեծ, պզտիկ։ Կորած, մենակ, տխուր։ Կարծես խոր վշտերով տանջվող էակներ էին։

Որքան մոտենում էր քարափի ծայրին, այնքան քամին սաստկանում էր։ Պետք էր մագլցել կոհակներով լվացվող կողմի քարերի վրա հեռուն օրորվող «Ալբատրոսը» տեսնելու համար։ Սահուն էին և վտանգավոր։ Մագլցեց, թրջվեց, նստեց։

«Ալբատրոսը»։ Պարզ տեսնում էր նավի դիմաստվերը։

Շատ բարձր չէր, բայց երկար էր և սլացիկ։ Քիթը՝ ճերմակ թռչունի երկու թևերի միացրած ծայրերի նման։ Գեղեցիկ, վայելուչ, քիչ կանացի։ Անգլիացի շեն այն աղջիկների նման, որոնք Լոնդոնի փողոցներում պտտեցնում են իրենց պարզ շքեղությունը և աննյութականությունը։

Այդ մտածեց և հեշտանքի մի ալիք անցավ նրա մարմնի միջից։ Նավի մոտությունը զգաց սիրո անուշ ցավի նման։

Հերյանի աչքերի առաջ «Ալբատրոսի» կողքին մարմնավորվեց Դաշենկայի սիրելի կերպարը, այն լավ ռուս աղջկա, որին նա անցյալում սիրել էր։ Մի քանի անգամ նա անցել էր Դաշենկայի տան մոտով, սակայն, նրա սրտում ծաղկող նոր սերը, Զվարթի սերը...

Հիմա, նորից Հերյանը ալեկոծվում էր նույն ներքին պայքարով։ «Ալբատրոսը» նրան քաշում էր դեպի Դաշենկան... իսկ Սևա՞նը, Զվա՞րթը...

Նա երկար նայեց...

Կայացրել էր արդեն վճիռը։ Պիտի ընդմիշտ մոռանալ Դաշենկային... Զվարթը սպասում էր...

«Ալբատրոսը» պիտի նավարկեր Սևանի ջրերում...

«Ալբատրոսը» Սևանի վրա։ Ահա Ելենովկայից հեռանում է, ահա անցնում է կղզու մոտից, ահա ճեղքում է ջրի կապույտ հայելին և ուրախ սուլում...

Խոսեց նավի հետ, փաղաքշական բառեր ասաց։

Վեր մագլցեց։ Մեջքը քամուն տվեց և սուլելով վերադարձավ։

Հեռուն, պարապի մեջ փարոսը անդադար բացխփում էր կապույտ աչքերը։

Լուսին էր։

2

Հերյանը ճանաչում էր Թիֆլիսը, Կովկասյան փոխարքայության վարչական կենտրոնը։ Հեռավոր ճամփորդությունից վերադարձին, մինչ նավը բեռնավորում էին, նա մի քանի ընկերների հետ գնում էր այնտեղ ավելորդ փողերը ծախսելու և զվարճանալու համար։

Այնքան էլ հեռու չէին այդ ժամանակները...

Լավ հիշում էր մինչև լույս անցկացրած գիշերները Քուռ գետի վրա կախված կապելաներում, խորովածի և գինիների հոտով լցված նկուղային պանդոկներում, ուր կես-խավար լուսավորության տակ կյանքը մագլցում էր ջերմաչափի բոլոր աստիճանները, թասը զրնգա-

լով կկլացնում էր մետաղե իր լեզուն, երգը հնչում էր ուրախ և փիլիսոփայաբար մելամաղձոտ։ Գինին հոսում էր, երիտասարդ աղջիկները պարում էին գեղեցիկ բազուկները օդում կախած և իրենց սև ու մեծ աչքերի բոցը սրտերին բաժանելով։

Այն օրերին, Թիֆլիսը կովկասյան ժողովուրդների մշտնջենական արձակուրդով ապրող խավի հավաքատեղին էր։ Զվարթ, պաշտոնական, անհոգ։

Սնգուրված, զարդարված, թեթև։

Մեծ պողոտայի վրա ցցված փոխարքայի պալատը, բազմաթիվ և բազմատեսակ զինվորականները, դղրդալից երաժշտության ընկերակցությունով տեղի ունեցող զորահանդեսները, շքեղ և կոտրատվող կանայք և անգործ մի հասարակություն, որ առավոտից մինչև ուշ գիշեր ման էր գալիս առանց նպատակի, առանց մտահոգության։

Լոքո ձկի, Կախետի գինու և ղոզինաղի Թիֆլիսը։

Սոլոլակ կոչված ամենագեղեցիկ քաղաքամասը լիքն էր լավ ցեղի ձիերով լծված փայլփլուն կառքերով, որոնց միջից շքեղ, նվաղուն մեծ աչքերով կանայք շանթահարող նայվածքներ էին տարածում և անցորդների սրտերի վրա մի քիչ երաղանք սփռելուց հետո սրընթաց անցնում։

Կյանքը թավալ էր գալիս անձայն սրինգների եղանակով կշռականացած։

Առատ, հեշտ։

Հաճախորդներով լցված անուշեղենների խանութները անկարելի մեծությունով կարկանդակներ և շաքարեղենի կույտեր էին ցուցադրում։ Խանութների առաջ՝ մայթերի վրա կտավեղենի և թավիշների բլրակներ էին դիզված։ Նրանց շուրջը բոլորված կանանց խմբեր նուրբ և գերզգայուն մատներով շոշափում էին մետաքսները և հեշտանքով նայում գույնզգույն կերպասները։ Ճմլվող հյուսվածեղենի այդ շրշյունը՝ միացած ամեն կողմից բուրող անուշահոտություններին՝ նման էր վարդենիների վրայից կախած գինով զեփյուռի։

Ահա գնում էր՝ գունավոր մետաքսե չադրայի մեջ փաթաթված, ոսկիներով բանված ծայրերով շրջազգեստի մեջ սարսռող, մի թուրք կին։ Կարծես մեղուների փեթակ էր անցնում։ Կամ, ահա կանգնագեղ և ճկուն մի չերքեզուհի վիթի աչքերով և այծի քայլերով, և կամ փոքրիկ գլուխը օրորելով սահող մի պարսկուհի, կոլոր և երաժշտական։

Քաղաքի ներքևի մասը հասնելու համար պետք էր անցնել նեղլիկ, ծուռումուռ փողոցներով։ Վաղը, հրապարակը՝ Մեյդանը, ինչպես ասում էին տեղացիները, աչքերի առաջ բաց էր անում միամիտ ձեռքով

նախշված պարսկական ձեռագրի մի էջ։ Ծույլ նստած, հաստ շրթունքներով, գլուխները վեր բարձրացրած ուղտեր։ Կաբձես արև էին որոճում։ Ջորացած ճյուղերի ծայրերը քաշքշող, բռժռժավոր այծեր։ Կկուզ արած, երազկոտ աչքերով և դանդաղ շարժումներով երկար շիբուխներ ծխող արևելցիներ։

Ծծմբի, չորացած խաղողի և աղբհարդի ուժգին հոտ։ Աղքատ և անտարբեր շներ։ Քանդված աչքերով ու դողդողուն ձեռքերով մուրացկաններ։ Ասիան էր։ Իսկ վերը՝ Եվրոպան։ Ծուռ հայելիների մեջ արտացոլված Եվրոպան։

Երևանյան հրապարակը կարմիր ներկված քաղաքապետության շենքով։ Քաղաքի կենտրոնական փողոցը, երկրի հպարտությունը՝ Գալավինսկի պրոսպեկտը։ Այս պողոտայի վրա, Կովկասի բոլոր ազգերը, ցեղերը, տոհմերը, կիրակնօրյա իրենց զգեստները հագած, մեկ մեկի էին հանդիպում։ Գալիս էին արձակուրդով, զվարճության, արկածի և ցուցամոլության համար։

Թիֆլիսը ապրում էր ի հաշիվ աշխատող, արտադրող գավառների։ Թանկ գնով ծախում էր իր անհոգությունը, իր պարը, իր գինիները, իր աղջիկները։

Գավառային խուլ ընկած քաղաքներում նրա մասին խոսում էին չափազանցված բառերով, թուքը կուլ տալով, գովքը հառաչող ձայնանիշների վրա թրթռացնելով։

Իրականության մեջ, Թիֆլիսը կես եվրոպական, կես ասիական համեստ քաղաք էր։ Կղմինդրավոր տանիքների կուտակումներ՝ փոքր բլուրների վրա պառկած, որոնց տեղացիները չափազանցելով լեռ էին անվանում։ Մի քանի շքեղ փողոցներ։ Կենտրոնում, ուր քաղաքի երակները ուռչում էին, խառն և անորոշ ոճերով շինված մի քանի մեծ շենքեր։ Թիֆլիսը համակրելի, քաշող և կերուխումի քաղաք էր։

Հերյանը քաղաք էր հասել նախընթաց օրը։ Վրացական իշխանություններին դիմել էր, որպեսզի նրանք վերջ տային պաշտոնյաների կամայականություններին և նավը տեղափոխելու գործում հարուցած ավելորդ դժվարություններին։ Այլևս ամեն ինչ տարբեր աչքերով էր տեսնում։

Դա էր Թիֆլիսը...

Նա հոգնած, մտահոգ, անհանգիստ քայլում էր դատարկ փողոցներում, սպասելով, որ նախարարությունների գրասենյակները բացվեն։ Առավոտվա ժամը ինն անցել էր, իսկ քաղաքը դեռ արթնացած չէր։ Խանութները և սրճարանները փակ էին։ Պարապ անկյուններում կանգնած կառքերի նիհար ձիերը սմբակները խփում էին քարերին և մեջքի

մորթը դողդողացնում։ Ոստիկանները մրսելով վեր վար էին գնում։

Ցուրտ էր։

— Կարծես,— մտածում էր Հերյանը,— ամբողջ գիշեր տևող դիմակահանդեսին հաջորդող դատարկված առավոտ լինի։

Ցավում էր, որ եկել է։ Ավելի լավ էր տեղական իշխանությունների հետ մի կերպ համաձայնության գալ։ Ամենադժվարը արված էր։ Նավը բարձված էր ապրանքատար վագոնների վրա և արդեն մեկնած կլիներ, եթե փոքրիկ, չար մարդիկ դժվարություններ չհանեին։ Ամեն կողմից կաշառք էին ուզում։ Ունեցած բոլոր դրամները բաժանել էր։ Ունեցած չունեցածը ծախել էր և այդ մարդկանց տվել։ Չէ, որքան տալիս էր, այնքան ավելի էին ուզում։

Քաղաքի կյանքը սկսվեց տարօրինակ կերպով։

Քաղաքապետության շենքից բազմաթիվ զինվորներ և ոստիկաններ դուրս գալով խմբերի բաժանվեցին և բռնեցին գլխավոր փողոցների անկյունները։

Հերյանը կանգնեց և զարմանքով նայեց։

Նախընթաց օրը, կայարանում նկատել էր նույն երևույթը։ Բոլոր դռների առաջ ոստիկանների հոծ խմբեր էին կանգնած։ Անցագիր էին հարցնում, ռուսներին և հայերին հարցաքննում, խուզարկում։

Ինչպես ամեն բան մոռացվում, փոխվում է,— մտածեց Հերյանը։ Երբ օրերի վրայից փոթորիկ է քայլում, ալեկոծված ծովի սպառնացող ալիքները դուրս են բերում աննշան և փոքրիկ մարդկանց։ Նրանցից ստեղծվում են այդպես անվանված ղեկավարներ։ Մոռացվում են բոլոր այն արժեքները, որոնց համար տարիներով պայքարել են և երգել։ Ու դիմում են նույն բռնապետական միջոցներին, որոնց լծի տակ իրենք իսկ ճնշվել են։ Խոսում են ընկերվարության, հավասարության, արդարության մասին։ Երբ նրանց քերթես, մորթի տակից դուրս կցցվի չարացած և նախանձոտ ազգայնամոլը։ Ոստիկանություն, լրտեսություն, խուզարկումներ, ձերբակալություններ, բանտ, աքսոր։

Այդ էր հիմա Թիֆլիսը...

Ահավասիկ, վերջապես մարդիկ։

Առանց շտապելու, մի քանի քնոտ խանութպաններ բաց են անում իրենց խանութների դռները։

Բացվում է նաև երկնքի մի կտորը։ Բացվում է, մի քանի սյատուհանների վրա շողշողում, ապա անմիջապես գոցվում և մտնում ամպերի ետև...

Գորշ է և ցուրտ։

Ո՞ւր էր այդ «Մի բաժակ թեյը», որտեղ պիտի հանդիպեր ծանոթներին։

Քայլեց, հարցրեց, գտավ...

Կանգնեց դռան առաջ և զարմացած նայեց։ Ոստիկանների մի խումբ շրջապատում էր անցորդներին և խուզարկում նրանց։ Մաքուր հագնված, տարիքավոր, ակնոցավոր մի մարդ զայրացած բողոքեց։ Ոստիկաններից մեկը՝ կծկված դեմքով և երկայն բազուկներով, մոտեցավ նրան, հայհոյեց, գոռաց և ապտակեց։ Ակնոցները փշրվեցին, կլոր գլխարկը վայր ընկավ և գունատված այտերից արյուն կաթեց։

Հերյանը զայրացավ։ Գույնը նետեց և սկսեց կրծոտել շրթունքները։

Մարդուն նախատելով տարան։

— Վայրենություն է,— ասաց Հերյանի մոտ կանգնած մարդը զզվանքով։

— Չեմ հասկանում, ի՞նչ են ուզում դրանից,— հետաքրքրվեց Հերյանը։

— Ի՞նչ են ուզում... Պատճառ են փնտրում նրա ինչքերը յուրացնելու համար։ Ուղարկում են զավառ իբրև թշնամի և նրա բացակայությամբ կկողոպտեն նրա ունեցած չունեցածը... Այդ է մենշևիկների կառավարելու ձևը։

Հերյանը մտավ ներս։

Գեղեցիկ և մաքուր մի սրճարան։ Սառայում էին լավ ընտանիքի աղջիկներ և տիկիններ բարեգործության նպատակով։ Շատ մարդ չկար։ Սակայն, մինչև որ ապսպրված թեյը և կարկանդակները բերեցին, սրճարանը լցվեց։ Կարծես նույն ժամին ամենքն էլ ժամադրություն էին տվել միմյանց։

Հետաքրքրված նայեց։

Անմիջապես հասկացավ, որ հաճախորդների մեծ մասը Ռուսաստանից փախստական մտավորականներ և արվեստագետներ էին։ Այդ երևում էր նրանց դիմագծերից և շարժուձևերից։ Դեղնած, նիհար դեմքեր, շվարած նայվածքներ։ Թափթփված երկար մազեր, բարձր ճակատներ, թուլացած ձայներ և ամենատարօրինակ զգեստներ։ Այդ մի քիչ երդիծաբանական և սակայն գութ ազդող տիպարները անդադար խոսում և վիճում էին։ Ամենքն էլ ծանոթներ էին։ Մենակ էր միայն Հերյանը։ Մենակ, տխուր, ընկճված։ Դռան առաջ պատահած վայրենությունը դեռ շարունակում էր ճնշել նրան։

— Կարելի՞ է, օրիորդ, մի բաժակ թեյ ևս խնդրել։

— Իհարկե...

Գեղեցիկ, հնչուն, կրծքից բարձրացող ձայն ուներ մատուցող աղջիկը։ Հերյանը այդ ձայնը սիրեց և քիչ հանգստացավ։

Հաճելի միջավայր էր։ Ավելի ընդունելության սալոնի էր նմանում, քան սրճարանի։ Կրակների միջից անցած, բզկտված փախստական այդ մտավորականները աշխատում էին պահել կյանքի արտաքին ձևականությունները, չափազանցված քաղաքավարական ձևերը, կանացի ձեռք համբուրելը, նրբագին անուշությունները, որոնք հատկանշական էին նախահեղափոխական շրջանի հասարակությանը։

Հիշեց դեպի գիլյոտին տանող կառքերի վրա բազմած ֆրանսիական ազնվականների քաղաքավարական ձևերը։— Թույլ տվեք, մարկիզուհի, ձեր ձեռքը համբուրել...— Ահ, սիրելի կոմս, թողեք որ հանեմ ձեռնոցս...

Նույնը մատուցող կանայք։ Կարծես, հատուկ հրավիրված հյուրեր էին ընդունում իրենց տան մեջ։ Սահում էին սրահի մի ծայրից մյուսը, ժպիտներ և անուշահոտություններ սփռելով, զգեստների շիշխացող մետաքսները, լայն բացված դողդողուն կրծքերը և խնամված ճերմակ ձեռքերը ցուցադրելով։

Նա բնազդաբար նայեց իր ձեռքերին և թաքցրեց։ Հետո, անմիջապես դուրս հանեց և դրեց սեղանի վրա։ Ինչո՞ւ ամոթ զգալ, աշխատած ձեռքեր էին։ Վերջին շաբաթները նա այդ ձեռքերով, այդ հաստ, ուժեղ ձեռքերով մաքրել, յուղել, փայլեցրել էր նավի մեքենաները, ներկել էր կամրջակները, սրբել, կատարյալ վիճակի էր հասցրել ամեն ինչ։ Ինչո՞ւ ամոթ զգա...

— Տո, ի՞նչ ես բռունցքներդ խաղացնում սեղանի վրա... Կռվի՞ ես պատրաստվում, ի՞նչ է...

Պերոնյանն էր։

— Քո արև, այնպես ես նայում, ասես պիտի հարձակվես այս խեղճ, փափկասուն աղջիկների վրա... դե լա՛վ, լա՛վ, ոչ մի բացատրություն, ծանոթացիր բարեկամներիս հետ... Հայկ Շուշան՝ փեշակով նկարիչ... Կարա՝ ֆուտուրիստ բանաստեղծ... Սուլթանյան՝ գրականագետ... Մի խոսքով, տեսնում ես... բոլոր մուսաները...

— Շատ, շատ ուրախ եմ... Տնաշեն, չէի սպասում քեզ այստեղ տեսնել... Նստեք, խնդրում եմ, նստեք...

— Քեզ ներկայացնելու կարիք չունեմ,— ասաց Պերոնյանը, երբ ամենքը նստեցին։— Քո մասին արդեն գիտեն, խոսել ենք... Սևանի ադմիրալը... հայտնի մարդ ես...

— Ինչպե՞ս չէ,— բացականչեց Կարան,— ձեր մասին շատ լավ

բաներ ենք լսել... ձեր ֆուտուրիստական ոգին, ձեր հանդուգն ձեռնարկը ներկա պայմաններում...

— Լավ, լավ, շատ մի՛ գովիր,— նրա խոսքը կտրեց Պերոնյանը։

— Շատ մի՛ գովիր, համեստ մարդ է, մեկ էլ տեսար վեր կացավ գնաց... Դու ինչպե՞ս ես ընկել այստեղ, քեզ Երևանում էինք սպասում...

— Երկար պատմություն է։ Էլ գլխիս ինչեր ասես չեն բերում...

— Այսինքն...

— Պարզապես դժվարությունների եմ հանդիպել։ Գիտե՞ս, որ նավը գնել եմ և նույնիսկ բարձել եմ վագոնների վրա։

— Այդ մասին խոսում էին Երևանում։

— Երևանո՞ւմ,— զարմացավ Հերյանը։— Ո՞նց են իմացել։

— Ամեն բան իմանում են։ Եվ ուրե՞մն...

— Ուրեմն, սկսեցին խոչընդոտներ հանել երկաթուղային պաշտոնյաները։ Ամեն բան անում են, որպեսզի նավը տեղից չշարժվի։ Եկել եմ դրա համար։ Մտադիր եմ դիմումներ անել։ Սակայն, արդեն հուսախաբվեցի...

Պատմեց այն, ինչ տեսել էր սրճարանի առաջ։

— Չեմ ուզում գործ ունենալ այդ կարգի մարդկանց հետ։

Ամենքը լռեցին։

— Սոսկալին այն է,— տխուր շեշտով ասաց Հայկ Շուշանը,— սոսկալին այն է, որ մարդիկ այդքան հեշտ կերպով հրաժարվում են իրենց մտքի պակներից։ Այն, ինչ, դեռ երեկ, ամենքի համար հոգիները լուսավորող անվիճելի իդեականություն էին, այսօր խավար են, չգոյություն։ Երկրաշարժային ցնցում, ընկերային տակնուվրայություն... աղետ, և ամեն ինչ թավալգլոր խորասուզվում է վայրենության մեջ։ Մարդը վերադառնում է կենդանական բնազդներին և դառնում է գայլ։

— Այդ ապացուցում է, որ,— միջամտեց միշտ հակաճառելու պատրաստ Կարան,— այն հին արժեքները, որոնց մասին խոսում ես, չեն համապատասխանում իրական կյանքի պահանջներին։

— Եվ այդպես ամեն ինչ կարող ենք արդարացնել...

— Չեմ արդարացնում, բայց տեղի ունեցող փոփոխություններից էլ չեմ վախենում։ Կյանքը փոփոխվելով նորանոր պահանջներ է դնում մեր առաջ և մենք պետք է ի վիճակի լինենք պատասխանել այդ պահանջներին։ Կարենալ փոխվել, կարենալ հնարել, կարենալ դարձնել նոր զենքեր... Ահա։

— Բայց, սիրելիս, դու բոլորովին ուրիշ բանի մասին ես խոսում...

Հայկ Շուշանը ակնոցների հետևից նայեց Կարային հեգնական ժպիտով։ Նա Կարային չէր կարողանում տանել։ Ո՞վ էր նա։ Նմանու-

թյան մի նմանությունը։ Եվրոպայում ծագել էր ֆուտուրիզմ անվանած գրական մի շարժում։ Որոշ ռուս արվեստագետներ այդ նմանությամբ ստեղծել էին մի նոր սեփական շարժում արտահայտելու համար իրենց անհանգստացած խենթությունը... Ներկում էին իրենց քթի ծայրերը, ստեպղինի պսակներ էին հագնում, կաղամբի շքանշաններ էին կախում։ Կատաղեցնում էին բուրժուաներին և հմայում հիստերիկ աղջիկներին։ Կարան երդվում էր նրանց անունով։ Երկար, զունավոր շապիկներ էր հագնում, աֆղան գլխարկ, բարձր կոշիկներ և իրեն համարում էր նոր կյանք հայտարարող առաքյալ։ Իսկ առաքյալները միշտ էլ մի քիչ ծիծաղելի են։

— Դու բոլորովին ուրիշ բանի մասին ես խոսում,— կրկնեց Շուշանը։— Այն, ինչ այսօր տեսնում և քննադատում եք՝ նորը չէ, այլ հին է, շատ հին դիմակների ծամածռություններ... Պատմության խորքից գուրս ցցվող խրտվիլակներ...

— Մոռանում ես, որ փոթորկի մեջ ենք։ Երբ երկիրը ցնցվում է, մարդիկ կորցնում են իրենց գլուխը։ Վազում են այնտեղ, ուր կարիք չկա վազելու, անում են այն, ինչ բնականոն ժամանակ ծիծաղելի պիտի թվար։

— Այդ անկասկած այդպես է...

Սրահը գնալով լցվում էր նոր բազմությունով։ Նոր եկածները սեղմվում էին խճողված սեղանների շուրջը, մեծ խմբեր կազմում, անցքերը փակում։

Ծուխ, աղմուկ։

Հերյանը ուշադրությամբ դիտում էր։

— Զարմանալի տեսարան է,— ասաց նա։— Երևում է, որ այս մարդկանց գլխից վտանգ է անցել։ Շվարած նայվածքներ, կծկված բերաններ։

— Ռուսաստանը անցնում է մի հսկայական մաղի միջից, ծանր հատիկները մնում են, մնացածը հանձնվում է քամուն...

— Փախստականներ...

— Եթե լավ մտածենք,— բացականչեց Սուլթանյանը,— փախչելը նվաստություն է։ Մարդ երբեք չպետք է լքի հայրենիքը, նույնիսկ եթե կյանքի վտանգ կա։ Գաղթականը, վերջ ի վերջո, կես մարդ է...

— Փախել են ճնշումներից, զրկանքներից, սովից։

— Ճիշտ այդ. վախենում են զրկանքից։ Սակայն, տեսեք, նրանք արդեն նմանվում են քամուց քշված մեռած տերևների։ Եվ չեմ հասկանում մի բան, եթե ժողովուրդը շարշարվում է, ինչո՞ւ արվեստագետները պիտի խուսափեն շարշարանքից։

— Միանգամայն համաձայն եմ,— ասաց Կարան,— միանգամայն համաձայն եմ, պիտի քաջություն ունենալ իրականությունն ընդունել այնպես, ինչպես գալիս է, և այդ իրականությունը ինչքան դժնդակ լինի... պետք է արվեստի վերածել։ Երգը ամեն ինչ կարող է հիմնավորել։

— Այդ անուրանալի է,— համաձայնվեց Հերյանը։— Պետք է մնալ, պնդել, հարատևել։ Մենք ամենքս էլ պատասխանատու ենք տեղի ունեցող դեպքերի համար... և քաջություն է պետք դրանց հետևանքները կրելու։

— Շատ հետաքրքիր տեսարան են պարզում այդ փախստականները,— քիչ լռելուց հետո նորից խոսեց Հայկ Շուշանը։— Քանի եկել են, նայում եմ նրանց։ Այդ խուժանը միայն արվեստագետներից և մտավորականներից կազմված չէ, ամեն տեսակ տարրեր կան նրանց մեջ... Երբ եկան, ողորմելի էին, խեղճ, նիհարած, հյուծված... Բայց ժամանակ չկորցրին, նրանցից շատերը՝ խուզարկիչ աչքերով, ցած և համառ ճակատներով անձնավորություններ՝ անմիջապես ուսումնասիրեցին տեղի պայմանները, հոտոտեցին միջավայրը և գործի անցան։ Բազմաթիվ խանութներ բացվեցին։ Ամեն ինչ ծախում և ամեն ինչ գնում են։ Փող են փոխում, և ոսկի, արծաթ, թանկագին քարեր հավաքում։ Կարճ ժամանակում մեկ էլ բազմաթիվ տիկիններ ասպարեզ իջան։ Հնչուն, ազնվական անուններով բարոնեսներ, կոմսուհիներ, իշխանուհիներ։ Մեծ-մեծ հավակնությամբ, սիրալիր ժպիտներով, նրանք սկսեցին հովանավորել արվեստագետներին և գրողներին...

— Ըստ ավանդության...

— Հա։ Այդ պատրվակի տակ նրանք բացեցին գիշերային ակումբներ, որտեղ ձեզ ընդունում են ազնվագույն ձևերով, հանդիսավոր մեծարանքներով, զիջանող ժպիտներով, և որտեղ դուք հանդիպում եք հռչակավոր ազնվական անունների, որոնց մասին ժամանակին կարդացել էիք Պետերբուրգի կամ Մոսկվայի թերթերում։ Ձեզ առաջարկում են անխուսափելի մի բաժակ թեյը։ Տիկիններից մեկը կես ձայնով երգում է։ Անուշեղեններ և կարկանդակներ են հրամցնում, արվեստի շուրջը խոսում և վիճում։

— Ի՞նչ կա որ... վատ բան չէ...

— Չէ։ Շատ լավ է։ Վատը այն է, որ հետո ձեզ հրավիրում են ռուլետի սենյակը... բարեգործության համար։ Դուք, բնականաբար, ամաչում եք, ընդունում, վերջին ձեր կոպեկները կորցնում և պաղած դեմքով, մեղավոր, որ ավելի փող չունեք, մի կերպ դուրս եք գալիս և փախչում...

— Ահա բանը ինչում է...

— Թիֆլիսը այժմ այդ կյանքով է ապրում։ Գիշերային ակումբներ, գեղեցիկ ռուս իշխանուհիներ, անվանի արվեստագետներ։ Զարմանալի է բարձր ազնվականության յուրովի շահագրգռվածությունը արվեստով... Ձեզ հրավիրում են երեկույթի, ուր իբր հայտնի մի բանաստեղծ պիտի կարդա իր վերջին գրվածքները։ Լեցուն բազմություն։ Դահլիճի խորքում փոքրիկ բեմ։ Դղրդալից ծափահարություններ։ Բանաստեղծը դուրս է գալիս բեմ։ Բուխարայի մետաքսից կարված երկար և տարօրինակ մի շապիկ հագած, քթի ծայրը ներկված, երեսը հոպիտի նման սնգուրված, երրորդական դերասանի ձևերով նա սկսում է արտասանել հեռավոր և խլացած ձայնով՝ եզակի և անհասկանալի բառեր։ Տիկինները հառաչում են և ծափահարում։ Շրջապատում են բանաստեղծին, սեղմում և համբուրում նրա ձեռքերը։ Հետո, անխուսափելի կերպով, ձեզ հրավիրում են անցնել մյուս սենյակը, ուր, պատահաբար, դուք նորից գտնում եք ծանոթ ռուլետը և աչքերով ձեզ ուտող փափկասուն տիկիններին...

— Ցեխ...

— Բարեբախտաբար,— ասաց Պերոնյանը,— մեր երկիրը դեռ հեռու է մնացել այդ կեղտից։ Աղքատ ենք և գոնե պատիվ ունենք մենակ լինելու մեր անիծյալ հարցերի և ողբերգությունների հետ։ Մենք ապրում ենք վտանգավոր մի կյանք։ Արտաքին թշնամիները, մալարիան, տիֆը, անոթությունը և մեր գաղթականները պրինցեսներ չեն... Նախընտրում եմ այդ։ Մի օր, մեր այդ դժբախտություններից կդարբնենք նոր գեղեցկություններ, մեր գեղեցկությունները՝ խոր և մեծդի։ Գեղեցկությունները ծնվում են տառապանքից...

Լռեցին։

Ամեն մեկը իրեն զգաց մի մեծ բեռան տակ ճնշված։ Մտքով վերադարձան Հայաստան։ Լռեցին։

— Նկատե՞լ եք ինչքան գեղեցիկ է բարձրահասակ այն օրիորդը, որը թեյ բերեց,— հարցրեց Շուշանը, կարծես երազից նոր արթնանալով։

— Իսկապես...

— Շատ լավ ընտանիքից է։ Կրթված, դաստիարակված, նուրբ ճաշակով։

— Առաջին վայրկյանից նա իմ ուշադրությունը գրավեց,— ոգեվորված ասաց Հերյանը։— Կատարյալ դասական գծեր ունի, ասես հունական արձան է...

— Եվ սակայն... Չէ, լավ է ձեր պատրանքը չփչացնեմ...

— Մեր պատրանքը... Ի՞նչ ես ուզում ասել... բարոյականությո՞ւնը...

— Չէ, չէ, այդ չեմ ուզում ասել։ Ամենքդ այդպես նրա կողմը մի՞ նայեք, թե չէ կհասկանա, որ իր մասին ենք խոսում։

— Դե, լավ, ասա տեսնենք բանը ինչո՞ւմ է։

— Նայեք, նրա ձախ ուսի վրա միշտ էլ մի բան կա գցված, ծածկելու համար բազուկը։

— Այո, իսկապես...

— Պատճառը այն է, որ այդ բազուկը շատ ավելի կարճ է, քան մյուսը...

— Այո... Ի՞նչ մեղք...

— Եղբայր, ի՞նչ կարիք կար այդ ասելու...

— Դուք կամեցաք... Նաև, ուզում եմ ասել... ամեն մի երջանկություն թաքցնում է մի վերք, որը մենք չենք նշմարում։ Խոսում էինք մեր երկրի և մեր թշվառության մասին... Մտածեցի, հաշմված գեղեցկությունից ոչինչ չի կարելի ստեղծել, իսկ հաշմված, փշրված, տանջանքով լցված կյանքը կարելի է բարձրագույն արժեքների վերածել...

— Նայած,— միջամտեց Սուլթանյանը,— նայած... Տևական ֆիզիկական տանջանքը բթացումի և անզգայության է հասցնում։ Տառապանքը գեղեցիկ է, երբ նա սնունդ է տալիս ստեղծագործական ուժերին, հոգեկան թռիչքներին, կյանքի լեցունության, որոնք որոնում են արտահայտության միջոցներ։ Դանթեն ցցվել է իր ժամանակների խավարի կատարին. նա արձագանքն է Իտալիայի ամենադաժան ժամանակաշրջաններից մեկի։ Արձագանք և դատավոր։

— Այո, որովհետև նրա անձնական, ուժգին հոգեկան միությունը անբաժանելի կերպով կապված է իր ժողովրդի միությանը։ Նա զայրացած դատավոր էր հանուն այդ ժողովրդի գերագույն ավանդությունների,— ավելացրեց Շուշանը։

Կարան տեղից վեր թռավ։ Բողոքեց։

— Ավանդություն, ավանդություն... Ի սեր աստվածների, թողնենք այդ հնացած, մաշված գաղափարները, վերջ տանք այդ ծեր, զառամած խոսքերին։ Նայեք ձեր շուրջը, կյանքը վազում է հրացանից դուրս պրծած գնդակի նման, իսկ դուք ճառում եք ավանդության մասին... Եղբայր, ժամանակն է հասկանալու, որ եթե այսօր ընկել ենք այս դրության մեջ, պատճառը այն է, որ մեզ կրթել են տխմար տերտերները և նրանցից ոչ նվազ տխմար վարժապետները։ Միշտ նույն խոսքերը՝ մեր փառավոր անցյալը, մեր առաքինությունները, մեր քրիստոնեությունը, Սահակ-Մեսրոպը, գրերի գյուտը, Լուսավորչի ճրագը, պապերի իմաստությունը, հայրենի գյուղի թզենու ծառերը և մամի պատրաստած մածունը... Արդյո՞ւնքը... Արդյունքը մեջտեղն է. մեր անկա-

բողությունը՝ ըմբռնելու ահավոր դեպքերը, որ մեզ ճզմում են, դարը, որ գրոհ է տվել մեր վրա, պատմությունը, որ մեզ համար անհասկանալի նոր ձևեր է դարբնում։ Ինչո՞ւ թաքցնեմ։ Մեր գրողները ավելի պատասխանատու են այդ անհասկացողության համար, քան որևէ ուրիշը...

Պատասխանեց Սուլթանյանը։

— Նորից տաքացար, Կարա։ Անշուշտ մասամբ իրավունք ունես քննադատելու մեզ՝ մտավորականներիս. դրանում կարծում եմ ամենքս էլ համաձայն ենք։ Խոսել ավանդությունների մասին, ինչպես խոսել են այդ պարոնները, նշան է մտքի քնածության, դանդաղության, միջակության, դյուրին իմաստականության և այլն...

— Հենց ճիշտ այդպես...

— Դրանք, ազգի անունից ու նրա անցյալից ճառողները, փոքրիկ մարդիկ էին, ոչ միշտ անկեղծ, որոնք իրենց միջակությունը աշխատում էին թաքցնել դարից դուրս կրկնված դատարկ ֆորմուլաների ետև։ Այդ գաղափարները ժամանակին անտարակույս կատարել են իրենց անհրաժեշտ դերը, կառուցել են բաներ, որոնց հիշատակը կորել է, բայց, այլևս նրանք ոչինչ չեն նշանակում և մտքերի մեջ էլ ոչ մի արձագանք չեն գտնում... Այդ պարզ է օրվա լույսի նման։

— Բռավո...

— Այդ այդպես է։ Սակայն, չմոռանանք մի ուրիշ կարևոր հանգամանք. ազգերի կյանքում առաջադիմությունը՝ պատմության և մտքի՝ ուրիշ բան չէ, եթե ոչ նոր վերադարձ դեպի բուն ժողովրդի իսկությունը։ Դեպի այն վտիտ և պարզ հոգեկան աղբյուրները, որտեղից առաջ են եկել նրա գլխավոր առաքինությունները և որոնց վրա հիմնվել է նրա լինելու կամքը։ Այն մաքրամաքուր նախակզբնական ուժերը, որոնք սնուցել են և արդարացրել նրա էությունը։ Այդ տեսակետից, ամեն մի իսկական հեղափոխություն, որքան առաջադիմություն է, միևնույն ժամանակ նաև ետ գնալ է, ոչ դեպի այն՝ ինչ անկատար կերպով անվանում են ավանդություն, այլ դեպի այն, ինչ կազմում է ժողովրդի հոգեկան բնույթը, նրա ծագման դրդապատճառը, այդ ձևով է միայն պահպանվում սերունդների հաջորդականությունը, միաժամանակ նաև առաջադիմությունը...

— Չգիտեմ, կարողանո՞ւմ եմ ինձ բացատրել... Իսկական հեղաշրջումը կատարվում է այն ժամանակ, երբ ժողովուրդը վերագտնում է իր պայծառ, անմեղությամբ լուսավորված աչքերը. այն աչքերը, որոնք կարողանում են տեսնել անհրաժեշտը հավիտենականության լույսի տակ և այդ անհրաժեշտը վերածում մարդկային, զուտ մարդկային ար-

ժեքների։ Իրականությունը շրջանական է. նա անցյալի և ներկայի համադրությունն է։ Նա կյանքի գերագույն այն միությունն է, որով մենք վերամշակում ենք, ինչպես արտը վերամշակվում է ցանողի մեծդի և հիմնական ժեստի մղումով։

Այդ խոսքերը Հերյանին հիշեցրին Հայաստանում հանդիպած Պետրոս Մարկին։

«Եթե այստեղ լիներ,— մտածեց Հերյանը,— նա էլ կասեր իր ասելիքը, ով գիտի ինչպիսի ոգևորությամբ ճառելու էր այս մարդկանց հետ, որոնք հայրենասիրական փքուն ճառեր են արտասանում, բայց գործնականում ոչինչ չեն անում...»։

Ծովային մարդու իր խառնվածքով, Հերյանը չէր կարողանում նրանց արտառոց մտքերի հետ հաշտվել... և մտածում էր— «բարձր կոչված այդ գաղափարներով ոչ թե հայրենիք, այլ անգամ խրճիթ չի կարելի կառուցել»։

Նա այդպես մտածեց և դառն ծիծաղեց...

— Գիտեք, Հայաստանում հանդիպեցի մի...— սկսեց խոսել Հերյանը, բայց չկարողացավ շարունակել։

Ամենքը իրենց գլուխը դարձրել էին դեպի հարևան սեղանը։

Փոքրահասակ մի երիտասարդ՝ ուռած աչքերը գորտի նման դուրս գցած և կարճ բազուկները ջաղացի նման շրջելով՝ բարձրաձայն, անհասկանալի լեզվով ինչ-որ բան էր արտասանում։

Բերանը տարօրինակ կերպով ծռում էր և կատվի նման մլավում։ Քամու նման վշշում էր, մռնչում, կամ արևադարձային անհայտ մի անտառի մեջ երգող թռչունների ձայներ էր հանում, ապա՝ կտկտում հավի նման կամ բառաչում, խմփում, ոռնում։

Սաստիկ ոգևորված էր։

Ձեռքերը կպցնում էր կրծքին, աչքերը ոլորում, մարմինը գալարում, շրթունքները ռետինի նման լայնացնում և սուլում, շվվում, ինչ-որ ներքին հուզում, ինչ-որ վիշտ նկարագրելով։

— Տո, ի՞նչ է կատարվում,— զարմացավ Հերյանը։— Հիվա՞նդ է, ի՞նչ է...

— Չէ,— լուրջ կերպով պատասխանեց Կարան,— պարզապես բանաստեղծ է, որ պատկանում է գրական այն խմբերին, որը կոչվում է «40 աստիճան»... Այդ տղան, իմ բարեկամս միջազգային ձայնական լեզվի հանճարեղ հնարողն է։ Նա արտասանում է մի պոեմ, որի անունն է «Մոր ողբը իր զավակի գերեզմանի վրա»։ Գեղեցիկ և շատ տպավորիչ բանաստեղծություն է։ Պիտի ասել, որ դա իսկական հեղափոխություն է ձևի և արտահայտության կերպարի մեջ։

— Այ քեզ բան,— բացականչեց Շուշանը Սուլթանյանին դառնալով։— Ճիշտ և ճիշտ քո քիչ առաջ քարոզած վերադարձը...

— Դեպի գազանային դարաշրջանը...

Ամենքը ծիծաղեցին։

— Այդ միայն ցույց է տալիս,— հանգիստ ձայնով պատասխանեց Սուլթանյանը,— որ ամեն մի ճշմարտություն կարելի է հասցնել տխմարության... Ես խոսում էի ժողովրդի սկզբնական հոգու, ծագման շրջանի հոգեկան թռիչքի մասին, և ոչ չորս թաթերի վրա քայլելու մասին...

— Նորից վիճաբանությունը չվերսկսենք,— միջամտեց Պերոնյանը,— ժամանակը անցնում է, հազար ու մի բան ունենք անելու և, հետո, մի բան ուտենք, չէ՞... Եկեք գնանք...

Փողոցում Հերյանը մտավ Պերոնյանի թևը, սպասեց, որ մյուսները անցնեն առաջ և սկսեց հարց ու փորձ անել։

— Ինչո՞ւ ես նորից Թիֆլիս եկել։

— Այդ էլ հա՞րց է. գիտես, չէ՞... Այս անգամ, ոչ միայն թուղթ չկա, այլև մելան և տպագրական ներկեր։

— Հասկացա։ Իսկ երկրում դրությունը ինչպե՞ս է։

— Վատ։ Քո մեկնելուց հետո դեռ ավելի բարդացավ։ Հենց որ վրացիների հետ տեղի ունեցած միջադեպը վերջացավ, մերոնք նոր բարդություններ ստեղծեցին։ Ղարաբաղի դեպքերը տեղի ունեցան...

— Բայց ո՞վ է այդ ամենքի պատասխանատուն,— հարցրեց Հերյանը։

— Անշուշտ մեր անճարակ ղեկավարները,— պատասխանեց Պերոնյանը։— Հանգիստ չունենք. սահմանների վրա անդադար միջադեպեր են ստեղծում, գրգռում։ Ավելացրու ահավոր ցուրտը և այն, որ մեր զինվորները ոչ հագուստ ունեն, ոչ կոշիկ...

— Լավ. իսկ դաշնակից մեծ պետություններ՞ը...

— Պատկերացրու, ոչ միայն մեզ չեն օգնում, այլ ընդհակառակը, օժանդակում են մեր թշնամիներին... Անշուշտ, պատմությունը կարձանագրի նրանց սրիկայական այդ վարմունքը... Հարցը նրանում է, որ թե՛ Եվրոպայում և թե՛ Ամերիկայում հասարակական կարծիքը, պատերազմից հոգնած, քնել է, և մեջտեղ են ընկել հին քաղաքական գայլերը՝ առանց խղճի, առանց պատվի, նյութապաշտ և ագահ... Դաշնակիցները, մոռանալով այն իդեալները, որոնց համար իբրև թե կռվում էին, այսօր, հաղթությունից հետո սկսել են մրցել մեկը մյուսի հետ, դավել և դավաճանել, սիրաշահել երեկվա թշնամիներին և զինել նրանց՝ երեկվա բարեկամներին տապալելու համար... Մենք փոքրիկ, արյունաքամ

եղած ժողովուրդ ենք և մեր երկիրն էլ ոչ նավթ, ոչ ոսկի ունի... ուստի մեզ խաբելուց հետո հիմա էլ զոհում են...

— Իսկ ձերո՞նք...— հարցրեց Հերյանը։

— Մերո՞նք...— կրկնեց Պերոնյանը,— մերոնք այնքան թշվառ են, որ նախարարական ողորմելի աթոռները պահելու համար կայել են նրանց պոչին... ո՞ւմ վեջն է, թե այդպես վարվելով ժողովուրդը հասցրնում են կործանման անդնդի եզրին...

Լուռ քայլեցին։

— Դրանից դուրս... ծանոթները, բարեկամները... առհասարակ։

Հերյանի ձայնը վարանում էր։ Պերոնյանը ժպտաց։

— Հասկացա ում մասին ես հարցնում։ Շատ չեմ տեսել նրան... Երևի քեզ գրում է, չէ՞...

— Երբեմն... Երկու ամիս առաջ պնդում էր շուտ վերադառնամ, գոնե մի երկու օրով, բայց անկարելի էր. գործի ամենատաք ժամանակն էր... Դրանից հետո երկու նամակ ևս ստացա, բայց կարծես ինչ-որ բան փոխվել է... Առաջվա նման չէ...

— Եթե չեմ սխալվում, քո բնակած սենյակը վարձել է մեկ ուրիշը։

— Ուրի՞շը... Ո՞վ...

Հերյանը գույնը նետեց։

— Անձամբ նրան չեմ ճանաչում,— շարունակեց Պերոնյանը։— Կարծեմ ուսանող է։ Զվարթի քննություններին օգնում է... Երբեմն նրանց տեսնում էի միասին... Ամեն անգամ ինձ հանդիպելիս, միշտ էլ քո մասին էր խոսում։ Հիշում եմ, ինչքան ուրախացավ, երբ նրան պատմեցի նավի մասին...

Այդ ժամին Թիֆլիսի կենտրոնական փողոցը լցվել էր զբոսանքի դուրս եկած տարբեր ազգության խառն բազմությամբ։ Մարդ էին գալիս անհոգ, աննպատակ, ուրիշների մոտից քսվելով անցնելու հաճույքի համար։

Աղմկալից էին երիտասարդական խմբերը։ Ամեն տեղ էին, ամեն անկյունում։

Բազմության մեկ հոսանքը գնում էր վեր, իսկ մյուսը՝ վար։

Առանց դադարի։

Անկարելի մազերով և անկարելի հագուստներով մտավորականներ։ Չերքեզկայի գոտին ուժեղ սեղմած, կուրծքը դուրս ցցած, պարի քայլով անցնող գավառացիներ և լեռնցիներ։ Ճարպերի մեջ երերող կանայք և փայտ կուլ տված իրաններով մարդիկ։

Մարդկային այդ սև գետը հոսում էր մինչև քաղաքապետության

շենքը, այնտեղ լայնանում էր, ապա սեղմվելով ուղղվում էր դեպի փոխարքայի նախկին պալատը և նորից ետ գնում։ Պարապություն որոճող այդ արարողությունը տևում էր մի քանի ժամ։

Ժամը երեքի մոտերը ամենքը վերադառնում էին իրենց բնակարանները, ուտում ինչ կարող էին ուտել, հառաչում, հորանջում, մրափում և սպասում երեկոյան ժամին, երբ նորից կարող էին դուրս գնալ և աշխատանքից հետո հանգստացող մարդու ձև առած քայլել փոխարքայի պալատից մինչև քաղաքապետություն և քաղաքապետությունից մինչև փոխարքայի պալատը։

— Չեմ կարողանում տանել այս մթնոլորտը,— ասաց Հերյանը։— Աշխարհը տակնուվրա է, իսկ այդ մարդիկ...

— Քայլում են և սպասում...

— Ի՞նչ են սպասում։

— Էնպես։ Գիտեն ամեն ինչ ժամանակավոր է, որ դռների ետև վտանգավոր ստվերներ են թաքնված, որ մի ոմն հեռվից երկաթե կոշիկներ հագած մոտենում է...

— Իսկ դեմքից նայես անհոգ են երևում...

— Միշտ էլ այդպես են եղել։ Այս մարդիկ չեն աշխատել, չեն տանջվել, սարսափների չեն ենթարկվել։ Ապրել են ուրիշի աշխատանքով, և վաղը ով էլ գա, կապրեն նրա աշխատանքով։ Դա բոլոր պորտաբույծների փիլիսոփայությունն է։

— Իսկ մեզ մոտ ամեն ինչ պետք է կառուցել անապատի վրա։ Գիտես, երբեմն էլ մտածում եմ ինչ լավ է, որ մեզ այդպես է վիճակված։ Դա էլ մեծ բան է, չէ՞, կարողանալ ամեն ինչ նորից շինել. նոր հղացում, նոր գաղափար... Սուլթանյանը իրավունք ունի, մենք՝ արարատյան մարդիկս, հեղեղից նոր ազատված, պետք է անցյալին «ոչ» ասենք և կառուցելով կառուցվենք... Այո, նա իրավունք ունի, պետք է վերադառնանք մանկական միամիտ մեր աչքերին և աշխարհը տեսնենք այնպես, իբրև թե առաջին անգամը լիներ...

— Մոռանալ երեսուն դարերի պատմությո՞ւնը...

— Չեմ ասում ուրանալ, բայց մոռանալ, այո։ Այլևս ետ չնայել, հասկանո՞ւմ ես, ետ չնայել։ Ստեղծել նոր հոգևկան նավարկություն... Հանգդնել, ցանկանալ և հանգդնել։

— Այդ մասին խոսիր քաղաքական գործիչների հետ...

— Դա է, էլի։ Կարելիությունների վաճառականներ... դեպքերի շահագործող վաշխառուներ...

— Նրանք էլ սոսկալի պատասխանատվություններ ունեն։

— Չեմ ասում։ Գիտեմ մի բան. փոքր են և սահմանափակ, և այդ պատճառով էլ աշխարհը անշնչելի է դարձել։

— Ի՞նչ է, եղբայր, սոված չե՞ք... Մի քիչ շուտ քայլեք...

Հերյանը և Պերոնյանը շտապեցին մյուսների հետևից։

Խումբը սանդուղներով իջավ մի տան ներքնամասում գտնվող ճաշարանը։

Գեր, կլոր, հաստ բեղերով տերը վազեց մոտ, նրանց ցույց տվեց շարված ձկնեղենները և ուտելիքները, ընդունեց պատվերը և նրանց առաջնորդեց ներս։

Հաստ կամարների տակ ճզմված սենյակները բավականին մութ էին։ Մայթի վրա նայող պատուհաններից ավելի աղմուկ էր ներս գալիս, քան լույս։

Մի միամիտ վրձին պատերի վրա նկարներ էր շարել։ Անկարելի դաշտանկարներ, հայ, վրացի, ռուս հայտնի գրողների պատկերներ։

Ամեն ինչ պարզ էր, նախնական։

Կոպիտ հախճապակե պնակներ։ Յուղոտ կերակուրներ։ Արյունի գույն թանձր գինիներ։ Սալորի և խաղողի ուժգին օղիներ։

Ժողովրդական տիպական Թիֆլիսը։

Ճաշարանը, ինչպես միշտ, լցված էր արվեստագետներով և դերասաններով։ Ուռած, դուրս նետված ճակատներ, դերվիշի և առաքյալի չհաջողված դեմքեր, ակոսված այտեր, սրածայր փոքրիկ մորուքներ և աչքեր՝ եբենոսե գնդակներ։

Ամենքն էլ մեծ ախորժակով ուտում էին։

Սենյակի խորքում ոլոր սեղանի շուրջ աղմուկով ուտողների մի խումբ էր նստած։ Հարթված գեմքեր, ձգված շրթունքներ, բոցկլտացող, գինովցած աչքեր։ Հայ դերասաններ էին։

Երբ Պերոնյանը ներս մտավ, այդ խմբում նստած մարդկանցից մեկը՝ հաղթանդամ, ըմբշի դանդաղ շարժումներով, աչքերը խմիչքից վարագուրված՝ վեր թռավ, մոտեցավ նրան, համբուրեց և դիմելով հասարակության դռռաց.

— Ահավասիկ, պարոններ, Հայաստանի հանրապետության շրջիկ գանձը... Ժամանակին, երբ ես Վենետիկի պալատում Թեթելո էի՝ նա իմ դոժս էր։ Հիմա, ավաղ, նա թղթի վրա տպված միլիարդների երևակայական հարստության ենթադրյալ պետն է...

Ամբողջ ճաշարանը աղմուկով ծիծաղեց։

— Դու հարբած ես, Տիգրան,— ասաց Պերոնյանը խիստ ձայնով։—

Չգիտես ինչ ես ասում։ Գնա... Խնդրում եմ, ինձ հանգիստ թող... բարեկամների հետ եմ...

— Գնում եմ, գնում եմ...

Եվ մարդը քթի տակ հռհռալով գնաց նստեց իր տեղը։

Այդ անտեղի կատակը վիրավորեց և տխրեցրեց ամենքին։ Պերոնյանը, գլուխը կախ արած լռեց, ապա, չկարողանալով զսպել իր զայրույթը, խոսեց։

— Ահա մարդիկ, ոչ միայն նախընտրում են վտանգի և թշվառության օրերին իրենց ամենօրյա գինին խմել հեռուներում, այլև քաջություն ունեն ծաղրելու նրանց, ովքեր անում են ինչ կարող են...

— Զզվելի է,— բացականչեց Հերյանը։

— Զզվելի ոչինչ չկա,— քիչ կակազելով պատասխանեց հարևան սեղանից մեկը։— Չի կարելի պահանջել, որ մարդիկ գագա-գան Երևվան և փողոցներում քնեն... Տները լեփ լեցուն են, անկարելի բան է պա-պա-պարզ սենյակ իսկ գտնել, էլ չեմ խոսում հիվանդությունների և անոթքթը-թութեան մասին... Կառավարությունը պարտավոր է մտածել արտիստների մասին...

Պերոնյանը չպատասխանեց։

— Ճիշտ է, էլի... Ինչ ասում է, ճիշտ է,— միջամտեց մի ուրիշը։

— Մի փոքրիկ թատրոն ունեին,— ավելացրեց սուր ձայնով, ջղագրգռված, գնդակի գլխով մի երրորդը,— նա էլ վերցրել պառլամենտի են վերածել... Այդ պայմաններում, ինչո՞ւ դերասանները այնտեղ պիտի գնան, չեմ հասկանում... Եթե այգեկութի ժամանակ լիներ, լավ, բայց ձմեռվա այս ցրտի՞ն...

Հերյանը ջանք էր անում չայոռթկալու համար։ Վերջ ի վերջո, չկարողացավ ցասումը զսպել։

— Լավ կանեք մնաք այնտեղ, որտեղ եք։ Ճիշտ է, Հայաստանում տեղ չկա... տեղ չկա մակաբույծների համար...

Սեղանների շուրջը աղմուկ բարձրացավ։ Ամենքը խոսեցին։

— Ո՞նց թե, ի՞նչ է ասում... մակաբո՞ւյծ... մե՞նք...

— Ես չեմ կարող թույլ տալ, որ մի պարոն վիրավորի այնպիսի մարդկանց, ովքեր իրենց ամբողջ կյանքը նվիրել են ազգային արվեստին...

— Մենք էլ զը-զավակներ ունենք...

— Ի՞նչ թատրոնի մասին խոսք կարող է լինել, երբ փողոցներում մեռնում են...

— Դերասանության ժամանակը չի, այլ զինվորության, կռվի... Առողջ մարդիկ միշտ էլ կարող են իրենց պարտքը կատարել...

Այդպես շարունակվեց բավականին երկար ժամանակ։

— Ասում են իբր Ռուսաստանում,— ասաց Հերյանը,— գնդակահարել են այսպես կոչված մտավորականներին... Չեմ ասում լավ են արել, բայց վաղը, երբ ամեն ինչ կարգի մտնի, այդ մարդկանց երկիր մուտքը կարգելեն... Դա, ի՞նչ զզվելի մտայնություն է... Քննադատում են, պահանջում, արհամարհում...

— Ցավում եմ, որ եկանք այստեղ,— հառաչեց Պերոնյանը։— Ճահիճ է, մտավոր և հոգեկան մալարիա...

Ճաշը վերջացրել էին։ Հաճախորդների մեծ մասը մեկնել էր, իսկ Հերյանը և նրա բարեկամները մնացել էին։

Մտածկոտ և լուռ։

— Ես դիտել եմ ճամփորդություններիս ընթացքում, երբ հայը լքում է լեռները՝ նսեմանում է, փոքրանում, բարոյալքվում... Դառնում է ուրիշ, դատարկվում է մի ինչ-որ գաղտնիքից, մի ինչ-որ խորհրդից։ Պետք է մի օր հստակ սահմաններ ճշտել։ զանազանել։ Թող թվով լինենք քիչ, այդ կարևորություն չունի, բայց լինենք ամբողջովին այն, ինչ իսկապես ենք... Թող գնան, օտարանան և չասեն, որ հայ են...

Հերյանը այդ ասաց բարկությամբ լցված աչքերով։

— Դժվար հարցեր են,— բարձր մտածեց Պերոնյանը։— Մի օր, կյանքը այդ հարցերը կլուծի... Անշուշտ, գոնե մենք, մեր բուն դաստիարակության համար պետք է այդ գիտակցենք և ինչպես ասում ես դու, հստակ սահմաններ ճշտենք։ Զանազանենք բուն հայը լեվանթինատիպ, աղավաղված այն տարրերից, որոնց հետ կապված ենք միայն լեզվով... Սակայն, չմոռանանք, եթե վաղը, մեզ հաջողվի կայուն պետություն ստեղծել, նրանք կարշավեն, ամենից շատ աղմկողները և իրավունք պահանջողները կլինեն...

— Այդ ոչինչ, թող գան, հայրենի օդը նրանց կլվա, կմաքրի,— ասաց Շուշանը։

— Վստա՞հ ես...

— Բարդ բանե՞ր,— բացականչեց Սուլթանյանը,— բարդ հարցեր... Մեր ժողովուրդը, ինչպես աշխարհիս վրա ապրող բոլոր ժողովուրդները, խառն է։ Դարերի ընթացքում հազար ու մի դեպքեր են տեղի ունեցել, հազար ու մի ժողովուրդներ են եկել և անցել և, բնական է, հետքեր են թողել նաև մեր արյունի մեջ։ Ստեղծվել է մի տեսակ քաոս։ Արյուն, ժառանգություններ, հեռավոր անցյալի խավար, ժողովուրդներ, ցեղեր... Այդ ամենի վրա մեծ խորհրդավորություն է տիրում...

— Այդ ճիշտ է,— համաձայնվեց Պերոնյանը,— նույնիսկ ֆիզիկապես մենք տարբեր ենք. վերցրեք, օրինակ, մեր տարբեր գավառները, էլ չեմ խոսում Պոլսի, Իզմիրի և այլ հեռավոր վայրերի մասին...

Սուլթանյանը ձեռքերը դրեց սեղանի վրա, գլուխը մի կողմ թեքեց և լռեց։ Երևում էր, որ նրա ներսը տեղի էր ունենում ներքին պայքար։ Շոշափած այդ հարցերը վաղուց տանջում էին նրան, ինչպես տանջել էին բոլոր գիտակից և մտքով հպարտ այն հայերին, որոնք չէին համակերպվել տիրող պայմաններին։

Ուզում էին պարզ և ազնիվ աչքերով նայել իրենց ներսը։ Գիտակցության լույսի տակ տեսնել իրականությունը։ Կրավորական կերպով չենթարկվել դեպքերին, այլ ամեն ինչ անողոք կերպով վերլուծել։

Մերժել, ուրանալ ազգային հավաքական թերությունները և այդ ճանապարհով վերագտնել ժողովրդի հոգեկան կենտրոնում վառված այն անմար ճրագը, որ պատմության ընթացքում քողարկվել էր թանձր գիշերով։ Վերագտնել այդ դրական ուժերը, որոնք կարող են թափ և թռիչք տալ վերածնվող նոր կյանքին։

— Բարդ հարցեր են,— ասաց Սուլթանյանը,— այնքան բարդ, որ մարդ երբեմն մնում է շվարած... Հաճախ, շատ փնտրելուց հետո, թվում է, որ ահա, վերջապես, գտել ես այն հիմնականը, ամենակարող այն բանալին, որ պիտի ամեն դռները բանա, լուսավորի քիզ, տանի քեզ ծածուկ նրբանցքներով դեպի բուն կենտրոնը... Քիչ հետո, լավ քննելուց հետո՝ գաղափարը կյանքի հասակի վրա չափելուց հետո, մեկ էլ տեսնում ես, որ այդ չէ, որ քո առաջ ցցվել են ուրիշ հաշվի չառած ուժեր, ուրիշ ազդակներ, գետնի տակից անցնող ուրիշ հոսանքներ... Ընկճվում ես, հուսահատվում։ Հարցը նրանում է, որ մենք վերցնում ենք անհատը իբրև բացարձակ միավոր և նրա վրա պահանջներ ենք դնում, մոռանում ենք առօրյա մարդը, այն, որ թիվ է, քանակ, մեծամասնություն, ուրիշ բան չէ, եթե ոչ բեկոր... Առօրյա մարդը կոտորակ է, մասնիկ, անկենտրոն մի էություն։ Նա ամբողջական անհատականություն չէ. ինքնաբավ, ինքնիշխան անհատականություն, որ ի վիճակի լինի ստեղծել և հաստատել սեփական փոխհարաբերություններ մահվան, սիրո, տիեզերքի հետ։ Ու կոտորակը ուզի չուզի կվերածվի հավաքականության, էկլեզիայի, ազգության...

— Կա նաև լեզուն...

— Այո, նաև լեզուն։ Սակայն, երբ կենտրոնաձիգ ուժը պակասում է, երբ այդ ուժը զորեղ, միշտ նորոգվող, միշտ ստեղծագործող քաշողականություն չէ, երկրից դուրս քշված բեկորները գնալով փոքրանում են, նսեմանում և, վերջ ի վերջո, փոշիանում... Կենտրոնախույս տար-

բերը այլափոխում են ամեն ինչ՝ լեզուն, ազգության և հայրենիքի ըմբռնումը։ Իրականությունը քողարկվում է սին բառերով։ Ստեղծվում են պայմանական պատկերներ՝ աճման կարողությունից և ծաղկաճման ավյունից զուրկ... Եվ պատահում է դեռ ավելին. այլևս կենտրոնաձիգ ուժը չէ, որ ղեկավարում է մասնիկներին, այլ մասնիկներն են, որ այդ ուժի հիմնական իդեականությունները հարմարեցնում են իրենց անմիջական, տեղական պայմաններին, այլափոխում նրանց, շեղում նրանց բնականոն ընթացքը, խափանում նրանց կենսական խորհուրդը։ Իսկական ողբերգությունը հենց դրանում է...

— Ստեղծվում է գաղութը...

— Այո։ Ազգը։ Ազգը դադարում է լինելուց և նրա տեղը բռնում է ինչ-որ ազգանմանություն։ Լեզուն վերածվում է լեզուների, ոճը կորչում է և բառերը բռնում են իմաստների տեղը։

— Գրում են դիակ բառերով,— ավելացրեց Հայկ Շուշանը։— Մտացածին, շինծու, անկենդան լեզուներ են ստեղծվում։

— Արհեստական, խաբեական։ Աբովյանի մեծությունը հենց դրանում է։ Երբ նա Գերմանիայից վերադարձավ իր ժողովրդի ծոցը՝ մերկացած մոտեցավ ժողովրդին և խոսեց նրան այդ ժողովրդի բերնից առած կոշտ և կոպիտ բառերով։ Ոչ մի կեղծիք, ոչ մի սուտ, ոչ մի ավելորդ զարդ։ Եվ ստեղծեց հրաշալի գրական գործեր՝ հիմնական և անհրաժեշտ... Աղքատ գյուղացին իր արտի վրա վարդենիներ չի տնկում. այլ ցորեն է ցանում... Մերոնք՝ Վենետիկյան Մխիթարյանները և Պոլսո և ուրիշ վայրերի պարոնները՝ արտ էլ չունեին, որպեսզի մի բան ցաներին, ուստի արհեստական վարդեր էին շինում. գունազարդ, դեղնցիկ և թղթե։ Հետևանքը այն եղավ, որ անհետացան հիմնաքարերը, քողարկվեց կենտրոնական այն ճրագը, որով ազգը լուսավորում էր իր լինելու խորհուրդը։

— Եղբայր, այդպես նստել ենք... գոնե մի բան խմենք,— առաջարկեց Հերյանը, մի շիշ գինի պատվիրելով։

Ուզում էր մի բանով ցույց տալ իր ոգևորությունը։

— Կենացդ, Սուլթանյան... Ինչ լավ ասացիր, արյունի ջահը...

Սուլթանյանը խմեց և մնաց մի վայրկյան լուռ, կարծես լսելու համար իր մեջ բարձրացող հակասական և վշտոտ ձայները։

— Մարդ երբեմն վախենում է մտածել,— շարունակեց նա,— վախենում է խոսքի վերածել այն, ինչ խուլ ալիքի նման կոփում է սիրտը... Ահա եկել են ահավոր դեպքեր, մտել ենք պատմության երկրաշարժային մի նոր շրջան, դուրս են նետվել ահավոր նոր ուժեր, բարձրացել են մասսաներ, շփոթվել են սահմանները, ծնվել են նոր ախոր-

ժակներ և նոր պահանջներ։ Աշխարհը ցնցվել է մրրիկով, իսկ հորիզոնի վրա կուտակված ծանր ուրիշ ամպերը մեզ ավետում են դեռ նոր, ավելի սոսկալի մրրիկներ... Մեզ անհրաժեշտ են բոլոր մեր ուժերը այդ փոթորիկի միջից անցնելու և դիմադրելու համար։ Իսկ դիմադրել կարելի է միայն կուռ և տիրական ոգեկան ուժով։ Ուզենք կամ չուզենք մեր արյունը թափվում է, բայց թափված արյունը զուրկ է նշանակությունից, եթե նա չի ճառագայթում։ Գերագույն գաղափարի համար ազատ կամքով ընդունած մահը կյանքը լուսավորող հոգեկան փարոս է, այլապես, հուսահատություն է և պարապ...

— Չես կարող ասել, որ մենք չենք պայքարել... Մեր ժողովրդի հրաշալի դիմադրությունը։

— Ես չեմ ուրանում այդ... Ես ասում եմ, աշխարհը տակնուվրա է եղել, մարդկությունը կորցրել է իր հավասարակշռությունը, վարից եկած նոր ուժեր գրոհ են տվել նվաճելու համար կյանքի նոր կարելիություններ, ընկերությունների մնայուն թվող հիմքերը ճարճատում են, պետությունները փոխվում են և ժողովուրդների նոր դասավորում է տեղի ունենում... Մեզ համար այդ նորություն չէ. մեր պատմությունը միշտ էլ եղել է ահավոր և մեծդի և մենք միշտ էլ ապրել ենք վտանգավոր կյանք։ Եթե չենք անհետացել... որովհետև վտանգի ժամերին մենք վերագտել ենք մեր իսկությունը, մեր միությունը, մեր հոգեկան դեմքը... Ահա այդ։ Այն ժողովուրդները, որոնք զուրկ են հոգեկան ուժեղ միությունից, որոնք ասելիք և բերելիք ոչինչ չունեն, որոնց ձեռքում ոչ մի ճրագ չկա լուսավորելու համար այդ ընդհանուր քաոսը, կոչված են անհետ կորչելու...

— Եղբայր, բան չեք խմում,— բողոքեց Հերյանը։

— Խմում ենք, ինչպե՞ս չենք խմում...

— Դե, բաժակները...

— Կենացդ...

Հարևան սենյակում մի խումբ մարդիկ նույնպես խմում էին։ Մեկը կես ձայնով երգում էր։

Տխուր, արևելյան մի երգ։ Ասես խոր սրտից եկած մի ողբ։

— Բայաթի է երգում,— ասաց Պերոնյանը։

— Ի՞նչ...

— Բայաթի, պարսկական...

Ամենքը լուռ լսեցին։

— Քո խոսքը ընդհատվեց,— ասաց Հայկ Շուշակը դիմելով Սուլթանյանին։

— Ասացի, ինչ ուզում էի ասել։

— Հարցը նրանում է,— միջամտեց Կարան,— այդ միությունը, որի մասին խոսում ես, ինչպե՞ս պիտի ստեղծել։ Հայությունը կազմված է այլազան տարրերից... Վերցնենք, օրինակ՝ մի պոլսեցի և նրան դնենք դարաբաղցու մոտ... լեզուն իսկ...

— Մի կանարյակ և մի բազե...

— Լավ ասացիր...

Սիծաղեցին։

— Այդ լուրջ առարկություն չի... Այդ տարբերությունները բոլոր ժողովուրդների մոտ էլ կան, սիկիլիացին և վենետիկցին...

— Բնական է։ Դա նույնիսկ կազմում է մի ժողովրդի հարստությունը... Տարբեր տիպարներ, տարբեր բարբառներ... Սասունցի Դավիթը երգված է բոլոր գավառներում, բոլոր բարբառներով, տեղական բարեմասնություններով...

— Սասունցի Դավիթը սակայն երգված չէ պոլսահայերենով...

— Այդ չէ։ Պատկերացնում ես պոլսահայերենը և Սասունցի Դավիթը...

— Այդ մարդիկ դարերով ապրել են Պոլսում, Բյուզանդիոնի ժամանակ նույնիսկ տիրել են այդ քաղաքին և, սակայն, հայկական ոճով մի հատ եկեղեցի չեն կառուցել...

— Այդ շատ հատկանշական է...

— Պոլիսը գաղութ է եղած։

— Լվովն էլ գաղութ էր, չէ՞...

— Այդ չէ,— ասաց Սուլթանյանը,— այդ չէ։ Թողնենք Պոլիսը... Մեր ազգային դյուցազներգությունը գավառներում երգել են տարբեր բարբառներով։ Կարևորը այդ է։ Պոեմի հերոսները ժողովրդի սրտում բարձրացրել են զորեղ և տիրական նույն ձայնը, ապրելու, պայքարելու, լավագույն և արդար մի աշխարհ ստեղծելու ձայնը։ Ոգին եղել է ամեն տեղ նույնը։

— Ես նույնիսկ կարծում եմ, որ հայկական հոգեկան աշխարհագրությունը կարելի է սահմանել Սասունցի Դավթով։ Որտեղ նրան երգել են՝ Հայաստան է, որտեղ չեն երգել՝ գաղութ է։

— Եթե ուզում ես...

— Ժողովուրդը կազմվում է տարբեր հոգեկան հոսանքներից՝ տարբեր միթոսներ, տարբեր աստվածություններ։ Եթե մեր հողերը պեղենք, Հայաստանը կլցվի հեռվից, շատ հեռվից եկած ուրվականներով։

— Լեռան մարդը, դաշտի մարդը...

— Թրակիան, Ուրարտուն...

Հարևան սենյակում այլևս չէին երգում։
Լուռ խմում էին։

— Հիմնական տիպարները մնացել են,— շարունակեց Սուլթանյանը։— Եթե ուզենանք կարող ենք մտավոր կերպով բնորոշել և բնութագրել դրանք։ Նախ՝ Թրակիայի հայը. նրանք անցել են Փոքր Ասիայի վրայով ամեն ինչ տակնուվրա անող մրրիկի նման։ Բարձրահասակ, ուժեղ, ճկուն։ Ամեհի կռվողներ, անողոք նվաճողներ։ Նրանց աստվածները ուրախ, բարդ տեսիլքներով հարբած, գինով և արյունով սնված աստվածներ էին։ Նետ արձակող, քար տաշող, ժայռերը իրենց տեղից շարժող, պարանի վրա պարող, խորհրդավոր պաշտամունքներով ոգևորվող, թեթևաշարժ և արագավազ մարդիկ էին։ Նրանք պաշտում էին հերոսներին, կրակը, արևը, լեռները։ Եվ նրանք նման էին կրակին, նման էին լեռներին։

— Նրանց հետքերը կարելի է մինչև այսօր տեսնել Տեկորում, Բագարանում։ Իսկապես որ նրանք ժայռերը տեղից շարժել են... Կիկլոպյան աշխատանք...— ավելացրեց Պերոնյանը։— Երբ նայում ես, երբ նայում ես գլխապտույտ ես զգում...

— Այո։ Կան և մյուսները... անվանենք նրանց՝ պայմանական անունով ուրարտյան տիպար։ Սրանք իրենց բնույթով գրագիր են, հաշվապահ, վաճառական, ճանապարհորդ և երբեմն էլ՝ գեղարվեստագետ, գրող։ Այդ տարրը զբաղվել է ապրանքների փոխանակությամբ, ձգտել է դեպի նորը, ընդօրինակել է օտարներին, պահել և զարդարել է մեհյանները, եկեղեցիները։

— Լավ դիվանագետներ...

— Խաղաղասեր։ Հարստություն, բարեգործություն։ Զուրկ թոիչքից, զուրկ զոհաբերությունից, անհերոս։ Առանց համարձակության։ Աստվածությունից վախեցող, ծնկաչոք աղոթողներ։ Ստրկամիտ և խորամանկ։ Ապագա խալիֆների ցեղը...

— Դժբախտությունը նրանում է, որ երբ երկիրը դարձել է վտանգներով լցված, նրանք փախել են, տարածվել ամեն տեղ...

— Եվ օտարները նրանցով են դատել մեր ժողովրդին...

— Այո, գնա, հասկացրու այդ օտարականներին, որ նրանք կազմում են հայության չնչին մասը, որ բուն մեր ժողովուրդը միշտ էլ մնացել է իր հողի վրա, իր լեռների մեջ, աշխատել է, պայքարել, կառուցել...

Հարևան սենյակում նորից երգում էին։ Պար էին երգում...

Սեղանի շուրջը նստածները մատներով կամաց խփում էին սեղա-

նին, իսկ լայնուս և բարձրահասակ մի մարդ՝ չերքեզկայի ծայրերը գոտու մեջ հավաքած, պարում էր։

Տամ լի տի բրլ
Բրլ լի տի տամ
Տի բրլ լի տամ... Տամ-տա-բրտամ...

Ասում էին, խփում սեղանին, պարում։
Պարողը տարիքը առած մորուքավոր մի մարդ էր...
Մի վայրկյան ամենքը նայեցին այն կողմը։
— Կովկասը,— ժպտալով ասաց Կարան։

— Հա, ի՞նչ էինք ասում...
— Խալիֆիները...
— Այ,— մի վայրկյան մտածելուց հետո ասաց Սուլթանյանը,— թողնենք օտարականները... Մեզ համար իսկ հասել է ժամանակը տարբերելու, զանազանելու, ընտրելու։ Պետք է անողոք սահման գծել մեր և նրանց միջև, ուղղակի մտքի դանակով կտրել և նետել այդ խավարը...
— Հեշտ է ասել...
— Հեշտ չէ։ Այն, ինչ ասում եմ, ուղղված է, բնականաբար, այն ընտրանիին, որը պետք է իր վրա վերցնի բոլոր պատասխանատվությունները։ Նայենք մեր անցյալին և քաջություն ունենանք մեզ հաշիվ տալու։
— Մեր պատմությունը գոց գիրք է...
— Բայց եթե մենք չհասկանանք, ո՞վ պիտի հասկանա։ Անցյալը, անտարակույս, խորհուրդների մի շարք է... Մեր քրիստոնյա պատմիչները ամեն ինչ աղավաղել են և նույնիսկ խարդախել՝ իրենց բիբլիական աշխարհայացքը առաջ քաշելու համար...
— Դա եղել է ոճիր, մի, մի, մի...
Եվ Կարան կծու և շաչող բառերով խարազանեց կղերականներին։
— Այդ թողնենք մեկ կողմ,— շարունակեց Սուլթանյանը, համբերությամբ Կարային լսելուց հետո,— այդ չէ կարևորը այժմ... Երբ մենք նայում ենք մեր անցյալին, մեզ համար մի բան բացահայտ է՝ երեսուն և ավելի դարերի ընթացքում հայ ազգը գերմարդկային ճիգեր է թափել մի մեծ մշակույթ ստեղծելու համար, բայց ամեն անգամ կիսատ է մնացել և մենք մեր բուն նպատակին չենք հասել... Ասորիներ, հոովմայեցիներ, բյուզանդացիներ, թամեռլաններ, չինդիզխաներ, պարսիկներ, արաբներ, թուրքեր, եկել քանդել են այն, ինչ մենք սկսել էինք շինել, կողոպտել են մեզ, տարել են մեր լավագույնը և սեփականացրել մեր ժողովրդի ստեղծագործությունները...

— Օտար գիտնականների քաղաքական ստրկամտությունը հասել է այն աստիճանի,— ավելացրեց Հայկ Շուշանը,— որ Թուրքիայում, այսինքն՝ Հայկական գավառներում պեղումներ կատարելիս վախենում են անգամ քարտեզի վրա արձանագրել Հայաստան անունը...

Մի մեծ աղմուկ բարձրացավ։ Ներկաներից ամեն մեկը անբարեխղճության փաստեր էր առաջ բերում և զայրանում։

— Քրիստոնեական առաջին դարերի հայ ճարտարապետությունը կարելի է համարել դասականության երկրորդ վերածնունդը...

— Խոսում են Թուրքական արվեստի մասին... ծիծաղելի է...

— Այդ չէ։ Ես ուզում եմ ասել...

— ...Ծիծաղելի է...

— Լեոնարդո դա Վինչիի ճամփորդությունը դեպի Հայաստան և նրա հետևանքները...

— Դա յուրահատուկ թշնամություն է...

— ...Տոսկանայում քրիստոնեությունը մտցրել է Ս. Մինիատոն...

— Լռություն։ Մի վայրկյան լռություն...

— Եղբայր, տեսնենք Սուլթանյանը ինչ է ուզում ասել...

— Նախ խմենք... Խմենք այս բաժակը...

— Չէ, ուղղակի ծիծաղելի է...

Հարևան սենյակի հաճախորդները այլևս չէին պարում, չէին երգում։ Տարիքը առած մորուքավոր մարդը՝ սեղանի ծայրին նստած, աչքերը արցունքով լցված, ինչ-որ բան էր պատմում փսփսալով։

Ամենքը տխրած լսում էին։

Մարդը՝ ձեռքերը լայն բացած՝ գլուխը աջ ու ձախ շարժելով խոսում էր։

Երբ նա մի վայրկյան ընդհատում էր խոսքը, ամենքը օգտվում էին այդ դադարից և խմում։

Հետո նորից խոսում էր։ Նորից խմում էին։

— Երբ ամեն ինչ քանդվում է,— ասաց Պերոնյանը,— օտարները տանդ վերջին քարերն էլ տանում են...

— Թուրքերը մեր գավառներում մնացած հինավուրց եկեղեցիների հոյակապ հիշատակարանները ախոռի են վերածում, որպեսզի հայությունից ոչ մի հետք չմնա,— ավելացրեց Հայկ Շուշանը։

— Վաղը կտեսնենք, Թուրքիային էլ կհամարեն մեծ և ազատարար ժողովուրդ...

— Աշխարհի բաները այդպես են... Ամերիկացի պատվելիները,

որոնք իրենց կապիտալիզմի առաջնորդներն են, պիտի գովաբանեն արյունարբու գազաններին...

— Սրանք հին ցավեր են, որոնց մասին ավելի լավ է չխոսել,— ասաց Սուլթանյանը։— Պերոնյանը իրավունք ունի։ Երբ ազգերը խեղճանում են և պատմական կարևորությունից զրկվում, նրանց արհամարհում են և կողոպտում։ Երբ մի օր նորից ոտքի կանգնենք, մեր բարեկամների թիվը անմիջապես կբազմանա։ Նախ, մտածենք մեր մասին, հետո կտեսնենք...

— Քիչ առաջ, Սուլթանյան, դու խոսում էիր մեծ մշակույթ ստեղծելու մեր պատմական ճիգի մասին... Խոսքդ ընդհատվեց,— ասաց Կարան։

— Հա, ուզում էի ասել...— շարունակեց Սուլթանյանը,— այդ... Մշակույթը ոգի է... Մշակույթը հարստություն, քաղաքակրթություն, ընկերային բարենորոգված կազմ կամ պետական զորություն չէ միայն, այլև ոգեկանություն, կյանքը լուսավորող և հարստացնող ճրագ... Արդ, եթե լավ ուսումնասիրենք մեր պատմությունը, կտեսնենք, որ սկզբից, առասպելական օրերից, մենք վազել ենք այդ ճրագի, այդ լույսի հետևից։ Արան...

— Արքան այդ լույս, արքան արև.
Որ սուրն պարզեց և մթնաթև
Խավարի դեմ կռիվ հանեց.
Շամիրամա սերը մերժեց...

Կարան իր ոտանավորի այդ տողերը արտասանելիս նայեց Սուլթանյանի աչքերի մեջ։

— Հա, էդպես,— գլխի շարժումով Կարային քաջալերեց Սուլթանյանը։— Նշանակալից է, որ մեր պատմությունը սկսում է այդ ոսկի առասպելով։ Կարծես պատմությունը մեզ ասում է՝ վերցրեք այդ լույսը և քայլեցեք... Եվ մենք քայլել ենք դժվարին ճանապարհներով և ամեն անգամ, որ այդ լույսը մարել է՝ մենք դեգերել ենք խավարի մեջ, մեր հասակից վայր ենք իջել, հրաժարվել ենք մեր մեծությունից... Արայի և Շամիրամի լեգենդը երկու սկզբունքների պայքար է։ Մի կողմից Արան՝ հովազի ուժեղ, ճկուն մարմնով, քաջ, լուսավոր մտքով, ամբողջական և զորեղ արևային արքան՝ անմար ճառագայթներով հյուսած կամքը, խորհրդանշաններ ստեղծող հանդուգն տեսլապաշտը, արյունը և տառապանքը երջանկության վերածող և տիեզերքի իմաստը լույսով դրսևորող քրմապետը, և, մյուս կողմից, Շամիրամը՝ ասորա-բաբելական

անապատային ջերմը, կանացիությունը, հիստերիան, լիբիդոն, աղավնին և օձը, ոսկին և ոճիրը, լուսնային պաշտամունքի տաճարը...

— Մոռանում ես, որ հաղթողը եղավ Արան,— նկատեց Շուշանը։

— Այդպես էլ պիտի լիներ։ Ողբերգության օրենքով հերոսը պիտի զոհվի, պսակվի մահով, որպեսզի վերածնվի։ Արևը մայր է մտնում նորից ծագելու համար...

— Մի քիչ ռոմանտիկ է,— նկատեց Պերոնյանը։

— Գուցե մեզ համար, բայց ո՛չ մեր ժողովրդի համար,— պատասխանեց Սուլթանյանը։— Մեր ժողովուրդը արևային այդ սկզբունքից երբեք չի հեռացել։ Երբ մեզ պարտադրել են քրիստոնեությունը, մենք այդ կրոնը կերպարանափոխել ենք արայականի... Մեր ժողովրդի համար Հիսուսը Արև է։ Հիսուսը հարություն առած Արան է։ Լույս, կրակ։ Մեր գյուղացին իր օջախում անմար կրակ է վառում, երդվում է արևի անունով, պաշտում է լույսը՝ զոհաբերության միջոցով վերակոչում է Արայի մահը՝ արևի մայր մտնելը, և աղոթում է դեմքը արևածագին դարձրած...

— Այդ ճիշտ է,— համաձայնվեց Պերոնյանը,— մեր ժողովուրդը ասում է՝ իմ արև, արևդ վկա, օջախդ չմարի...

— Ասում է նաև,— նկատեց Կարան,— մարդ-աստված...

Մարդը պարտ է դառնալ լույս, ճառագայթ... աստվածանալ։ Երևի մեր նախնիքները ունեցել են հոգեկան միջոցներ այդ մեծության հասնելու համար... այդ միջոցները մենք կորցրել ենք։

Լռեցին։

Հարևան սենյակում նորից երգում էին։ Մելամաղձոտ, ողբի նման զանգատվող արևելյան մի մեղեդի։

Մորուքավոր մարդը, գլուխը ձեռքերի մեջ բռնած, լսում էր։ Երեսը կարմրել էր, աչքերը ուռել էին։

Ամենքն էլ խմած էին։

Հերյանը (մինչ այդ ոչ ոք չէր լսում) ականջ դրեց երգին, բաժակը լցրեց, խմեց և սաստիկ տխրեց։

Հիշեց Զվարթին։

— Ի՞նչ է,— ասաց նա իր ընկերների աչքերի մեջ պիշպիշ նայելով,— ի՞նչ է... խմենք...

Միծաղեցին։

— Ի՞նչ կա,— կմկմաց նա շփոթված,— վատ բա՞ն ասացի...

— Չէ։ Հիշեցի, որ քո անունն էլ Արա է...— ասաց Պերոնյանը։

Հերյոնը սաստիկ կարմրեց։

— Դու էլ բան ասացիր...

— Այդ բոլորը շատ լավ, շատ գեղեցիկ,— ասաց Կարան,— բայց անմիջական կյանքը, նրա պահանջները, պայմանները...

— Սպասում էի այդ առարկության,— պատասխանեց Սուլթանյանը։— Առարկայական պայմանները, պատմության օրենքները... Դրանք կան, անկասկած գոյություն ունեն և, սակայն, թող զարմանալի չթվա եթե ասեմ, որ հաշվապահների և տիրացուների ցեղը չի հասկանում այդ ճշմարտությունը։

— Ես, տիրացո՞ւ,— զայրացավ Կարան։

— Չէ, չէ, խոսքը քո մասին չէ,— հանգստացրեց նրան Սուլթանյանը։— Ասում եմ առհասարակ... Ախր, հենց վերցնենք մեր պատմությունը, եթե նյութական ազդակը լիներ միակ գերիշխանը, մենք վաղուց պարիսիկ, արաբ կամ թուրք դարձած կլինեինք, մինչդեռ, մեր պատմությունը կազմված է ողբերգական արկածների անհավատալի հաջորդություններից, հանուն գերագույն հիմարության...

— Չափազանց հոռետեսություն...— առարկեց Պերոնյանը։

— Անցել են այդ ժամանակները, երբ կարող էինք մեկուսանալ մեր լեռներում և ապրել մեր ավանդական կյանքով... Աշխարհը շաղկապված է և ամեն մի ժողովուրդ պարտ է բերել իր ուրույն արժեքները,— ասաց Շուշանը։

— Շատ ճիշտ,— համաձայնվեց Սուլթանյանը։— Հենց հարցը դրանում է, ի՞նչ արժեքներով մենք կարող ենք մասնակցել ընդհանուր կյանքին... Այսօր մարդկությունը անոթի է նյութով։ Նա վազում է նյութական բարիքների հետևից և այդ բարիքները ձեռք բերելու համար քանդում է, այրում, ոմբակոծում ամեն ինչ...

— Քանդեցին և մեր տունը, զոհեցին և մեզ,— ասաց Հերյանը։

— Այո։ Վաղը մեքենային պիտի հակադրեն մեքենան, գործարանին՝ գործարան։ Պիտի մրցեն նյութական արժեքներ արտադրելու մարզի մեջ, պիտի երդվեն նյութի անունից, պիտի աստվածացնեն երկաթը, ցեմենտը, պողպատի բաղադրությունները, առարկան։ Մենք՝ փոքրիկ ժողովուրդներս այդ մրցումին նույնպես կմասնակցենք, փրկելով զուտ մարդկային արժեքները։ Երկաթ և ստեղծագործական զորություն, ցեմենտ և հոգեկան վերելք, պողպատ և մտքի խորություն և հոգեկան կառուցողություն։ Մենք կարող ենք հակադրել ծխոտ, մութ, աղմկալից գործարանին՝ ընդունելով հանդերձ նրա անհրաժեշտությունը, մարդկային արժանապատվությամբ տոգորված միտքը։

— Դա, բանաստեղծություն է,— մոմնալով նկատեց Պերոնյանը։

— Թող լինի բանաստեղծություն,— պատասխանեց Սուլթանյանը,— թող լինի բանաստեղծություն։ Բանաստեղծությունը այնքան իրական է, ինչքան սերը և մահը... համենայն դեպս, կարևոր է կյանքի համար ինչքան երկաթը և ցեմենտը։

Հարևան սենյակում կռվում էին։

— Ախր, ես այդպես չասացի, ես ասացի...

— Ո՞նց թե էդպես չասացի, դու ասացիր... Չէ, էդպես էլ բան... Գաս, իմ սեղանիս նստես, իմ գինին խմես...

— Ախր, ես ասացի...

— Ո՞նց թե...

Եվ մորուքավոր մարդը, զայրացած աչ ու ձախ տատանվելով, իր եզան աչքերը դուրս գցած խփում էր կրծքին և գոռում։

Այդ տևեց մի քանի վայրկյան։ Հետո ամենքը նորից նստեցին և շարունակեցին խմել։

Պերոնյանը ոտքի էր կանգնել մյուս սենյակում տեղի ունեցող տեսարանը դիտելու համար։ Հանկարծ նկատեց ներս մտնող մեկին և կանչեց նրան։

Վիդը կարճ, ճերմակող մազերով, կարճատես մի մարդ էր։

— Տո՛, Մարտիկ, արի՛ այստեղ,— ասաց Պերոնյանը։

Մարդը ներս մտավ, ամենքի ձեռքը սեղմեց և նստեց։ Տեղական հայ թերթի խմբագիրն էր։ Կարճատես աչքերով նայեց ամենքի երեսին և լռեց։

— Ի՞նչ է, քե՞ֆ եք անում,— հարցրեց նա քիչ հետո։

— Չէ, էնպես խոսում էինք...

Նորից լռեց։

— Մի բան չե՞ս ուզում խմել։

Գլխով մերժումի նշան արեց։

— Հը, բարեկամ,— կատակեց Պերոնյանը,— գործերը վատ են երևում...

Խմբագիրը չպատասխանեց։ Մխեց։

— Ի՞նչ է, Մելանի գինի՞ էիք խմում,— հարցրեց նա մեքենաբար։

— Կախեթու...

— Հա, Կախեթու... Իմացա՞ր...

— Ի՞նչ...

— Այնտեղ նորից տաքացել են...

— Ո՞րտեղ...

— Ո՞րտեղ... մեր պատվական երկրում...

— Լավ, լավ, հասկացանք. ուզում ես վախեցնել... Սուտ սուտ բաներ մի՛ հնարիր...

Եվ Պերոնյանը թերահավատությամբ նայեց նրա երեսին։

— Չէ, քո արև, ճիշտ եմ ասում... նոր հեռագիրներ կան...

Ամենքը իրենց գլուխը երկարեցին դեպի նրան։

— Ընդհանուր զորակոչ է հայտարարված,— շարունակեց խմբագիրը չեզոք ձայնով։— Պատերազմական դրություն է, զենքերի հանձնում և այլն...

— Պատերա՞զմ...

— Թուրքական որոշ տարրերի ապստամբություն։ Նախ սկսվել է Բեյլիկ-Վեդիում... Արաքսի մյուս ափի թուրքերը միացած Շարուրի և Նախիջևանի թուրքերին, հարձակվել են մեր զորքերի վրա և առաջանում են դեպի Զանգեզուր։

— Թուրքերը այդ վաղուց էին պատրաստում...

— Շտապում են։ Ուզում են խաղաղության համաժողովը կատարված փաստի առաջ դնել։

— Ա՛յ քեզ դրություն...

— Պետք է անմիջապես վերադառնանք,— հուզված ձայնով բացականչեց Հերյանը։

— Այդ մասին պետք է հարցնել այստեղի մեր պատգամավորության։ Թերթերը շուտով լույս կտեսնեն, իրողությունը հայտնի կլինի, և երևի շատերը կմեկնեն...

Ճաշարանի բոլոր հաճախորդները եկել խռնվել էին խմբագրի շուրջը։ Աղմկում էին, մեկնաբանում, հուզվում։

Հայհոյում էին պետություններին։

Հերյանը և նրա բարեկամները որոշեցին անմիջապես գնալ Հայկական պատգամավորություն, մանրամասն տեղեկություններ ստանալու համար։

Փողոցում հայերը մեկ մեկի ձեռքից խլում էին նոր լույս տեսած թերթերը։ Խոր անձկություն էր դրոշմված անցնող մարդկանց դեմքերի վրա։ Ամեն տեղ խմբեր էին կազմվել։ Խոսում էին, վիճում, հուզվում։

Ու ձայները խորանում էին և սարսռում։

Հերյանը և նրա ընկերները շտապ քայլում էին, առանց խոսելու։ Հիմա նավը ի՞նչ պիտի լինի, մտածում էր Հերյանը։ Նավը այն-

տեղ վագոնների վրա սպասում էր. իսկ մյուս կողմից էլ խոսք էր տվել Զվարթին երկիր վերադառնալ... Չէ, պետք էր մեկնել երկիր։

Պատգամավորության դռան առաջ խուռն բազմություն էր հավաքված։ Մեծ մասամբ երիտասարդներ՝ պատրաստ զինվոր արձանագրվելու։

Դռները փակել էին և ոչ ոքի ներս չէին թողնում։

Ամեն մի վայրկյան նոր մարդիկ էին գալիս։ Դիմացի մայթի վրա վրացիներ, ռուսներ, չերքեզներ հետաքրքրված նայում էին այդ տեսարանին։

Դոնապանի հետ երկար վիճելուց հետո, Պերոնյանը իբրև պետության պաշտոնյա կարողացավ ընկերների հետ միասին ներս անցնել։

Նրբանցքներում բազմաթիվ մարդիկ էին սպասում։ Խոսում էին ցածր ձայնով, փսփսալով, կարծես ներսը մեռել էր պառկած։ Երբեմն, արագ քայլերով պաշտոնյաներ էին անցնում՝ լուրջ, մտազբաղ։ Հարցերին պատասխանում էին ուսերի անորոշ շարժումներով։

Պատգամավորությունը խորհրդակցում էր ֆրանսիացի և անգլիացի սպաների հետ։

— Ահա Առաքելը,— բացականչեց Պերոնյանը և մոտեցավ անցնող քարտուղարներից մեկին։

— Հայրենակիցներ,— ասաց քարտուղարը,— նրանք, ովքեր ուզում են երկիր մեկնել, կարող են։ Թեպետ այդ մասին մեր հեռագրական հարցերին Երևանը դեռ պատասխան չի տվել։

— Դաշնակիցները ի՞նչ են անում,— հարցրեց Պերոնյանը։

Քարտուղարը ձեռքերը վեր բարձրացրեց և տխուր ժպտաց։

— Պետք չէ մեծ հույսեր կապել։ Այդ մարդիկ գաղափար չունեն այս երկրի և այս ժողովուրդների մասին։

Ամեն ոք մնաց լուռ։

— Ինչպէ՞... հիմա ասացեք, ի՞նչ եք որոշել,— վճռական շեշտով հարցրեց Հերյանը իր ընկերներին։— Ես որոշել եմ անմիջապես մեկնել։

— Ես ևս,— պատասխանեց Պերոնյանը։

— Նաև ես,— ավելացրեց Սուլթանյանը։

Մյուսները մեկ մեկի աչքերին նայեցին և ոչինչ չասացին։

— Նախ տեսնենք Երևանը ի՞նչ է պատասխանում,— ասաց Հայկ Շուշանը դուրս գնալու ժամանակ։— Նախ տեսնենք...

Դրսում բաժանվեցին։

— Ուրեմն երկու ժամից կհանդիպենք կայարանում,— առաջարկեց Պերոնյանը։

Այդ երկու ժամերը Հերյանին թվացին անվերջանալի։

Շտապ գնաց պանդոկ, վճարեց, պայուսակը վերցրեց և, աչքի առաջ ունենալով երկար ժամանակը, որոշեց քայլել մինչև կայարան։

Գալավինսկի պրոսպեկտից բարձրացավ վեր, թեքվեց աջ, մի քանի վայրկյան կանգ առավ Քուռի կամրջի վրա, դիտեց գետը։

Պղտոր էր և հանգիստ։

Ափերի մոտ ձկնորսների նավակներ էին կանգնած։ Մեծ մասամբ պարապ։ Միայն մեկի մեջ մի մարդ էր նստած, ինչպես երևում էր, ուռկանը նետել էր և հանգիստ սպասում էր։ Հերյանը միշտ էլ սիրել էր ձկնորսներին և հովիվներին։ Նախանձեց այդ ձկնորսին։

Մեծ հավատավորները ձկնորսներ և հովիվներ են եղել։

Ջուր, ամպ, աստղ։

Խաղաղություն։

Կամուրջը անցավ։ Քայլեց։ Մտավ Միխայլովսկի փողոց։ Երկար, լայն մի փողոց։

Զարմանալի չէ՞ր, որ մարդիկ հանգիստ քայլում էին, երբ այնտեղ... այնտեղ, Երևանի փողոցներում ցուրտ էր, անոթություն, վտանգ։

Նավը։ Ջվարթը։

Քայլերը արագացրեց։ Գրեթե վազում էր։

Մի հարյուր քայլ վազելուց հետո կանգ առավ։ Նայեց ժամացույցին։ Դեռ մեկ ժամ կար։ Նավը։ Ջվարթը։

Մի խանութի առաջ հրաշալի պտուղներ էին դարսված։ Հրաշալի էին մանավանդ խնձորները։ Մեծ, սառը, կարմիր, փայլփլուն։

Որոշեց գնալ։ Մտավ ներս, գինը հարցրեց։

— Ֆունտը ինչքա՞ն արժե։

Պտղավաճառը երկայնահասակ մարդ էր, հիվանդոտ, ճպռուն աչքերով։

— Ֆունտը երկու միլիոն,— պատասխանեց խանութպանը։

— Երկու միլիո՞ն,— զարմացավ Հերյանը։

— Այսօրվա օրս փողը ի՞նչ արժեք ունի,— պատասխանեց պտղավաճառը։— Նայիր պտուղին, և փողին...

Սեղանի վրայից ճմլված, կեղտոտ մի դրամանիշ վերցրեց և ծիծաղեց։ Եվ երբ ծիծաղեց, նրա աչքերը նմանվեցին ճմլված այդ թղթին։

Հերյանը պայուսակը բարձրացրեց և առանց ոչինչ ասելու դուրս նետվեց։ Խանութպանը նրա հետևից դուրս գալով մայթի վրա կանգնեց և բազուկները վեր վար շարժելով ասաց՝

— Տո, էսենց էլ բան կուլի...

Ահա փոքրիկ, չնչին տնակներ։ Նեղ, աղտոտ փողոցներ։ Աջ, հետո

ձախ։ Թիֆլիսից խաշի և քացախի հոտ էր գալիս։ Նաև ձուկի, նաև խոտորի։

Կուլի-կուլի-կուլի...

Նավը։ Զվարթը։

Կայարանի առաջ Պերոնյանը արդեն կանգնած էր։ Ժպտում էր։

— Ուշացար...

— Ո՞նց թե...

— Արդեն կայարան գալը ավելորդ էր։

— Չե՞նք մեկնում։

— Չենք մեկնում։ Նորից գնացի պատգամավորություն, տեսա Երևանից ստացված հեռագիրները։ Մարդկանց կարիք չունեն, ավելորդ բերաններ չեն ուզում։ Չենք են ուզում։ Հա, մի լավ լուր... Դե, ուրախացիր, ինչպես ես եմ ուրախանում...

— Ասա որ ուրախանամ...

— Վրաց նախարարին հանդիպելիս խոսեցի քո նավի մասին... քարտուղարն էլ միջամտեց։ Ամեն բան կարգադրված է և ավելորդ է այստեղ սպասել... Ես քո տեղը լինեի անմիջապես կմեկնեի Բաթում...

— Իսկ եթե իրենց խոստումը մոռանա՞ն...

— Ես այստեղ եմ, կմիջամտեմ։

Նստեցին կայարանի բուֆետում։

— Մի բան խմենք...

— Խմենք...

— Իսկ ես կարծում էի, որ վաղը երկրում կլինենք...

— Այդպես է։ Պատրաստվում ես մեկնել հյուսիս, մեկնում ես հարավ...

— Օդին թունդ է...

— Մի բան կեր։

Նավը։ Զվարթը։

— Մի ժամից կմտնես Բաթումի գնացքը։

— Իսկ եթե Երևանը վտանգի մե՞ջ է...

— Ճակատները Երևանից հեռու են։ Վստահ եմ, մերոնք, չնայած դժվարություններին, թշնամիների հաշիվը կմաքրեն։

— Կենացդ...

— Հաջողություն։

Ամբողջ Կովկասը ներկա էր բուֆետում։ Թաթարներ, վրացիներ, հայեր, լազեր, աջարացիներ, չերքեզներ, ռուսներ։ Մի սեղանի շուրջ էլ երկիր մեկնող հայ երիտասարդների մի խումբ էր նստած։

— Տեսնո՞ւմ ես այս ժողովուրդներին,— ասաց Պերոնյանը։— Մեկը մյուսին է նայում գազանի աչքերով։ Մարդ չի հասկանում ինչու...

— Խմիր։

— Կենա՛ցդ։ Կտեսնվենք Երևանում, քո նավի հետ միասին։

— Կուլի, կուլի, կուլի,— ասաց Հերյանը։

— Դա ի՞նչ է։

— Այնպես... Կենացդ...

Զանգակները ղողանջեցին գիշերվա մեջ։ Հաստ բեղերով մի մարդ որոտալի ձայնով ուղևորներին հրավիրեց գնացք։ Բազմությունը, հանկարծ անհանգստացած, վազվզեց։

Զվարթը։

Բաթումի գնացքը սուլեց և դղրդալով մեկնեց։

3

Բա՛ց արեք քարտեզը, դրեք ձեր մատը Հայաստանի բարձրավանդակի վրա։

Ցո՛ւրտ։ Զյո՛ւն։ Լռությո՛ւն։

Կուրծքը աղաղակներով պատառոտված, կտուցը վառ, աչքերը կույր քամի։ Զյունամրրիկների խենթացած ոտքերի տակ ծեծված դաշտերը։ Թափառող մենակյաց լեռներ։ Սառած ծառերով ծածկված երերող բլուրներ։ Մրախառն բարձրություններ, ճերմակ տափաստաններ։ Սառուցե ձայներով մղկտող խորխորատներ։

Բա՛ց արեք քարտեզը, դրեք ձեր մատը Հայաստանի բարձրավանդակի վրա։

Հայոց աշխարհ՝ մենակությունների, լռությունների աշխարհ։

Լեռների լանջերում թաղված, վեց ամսով մեռած գյուղեր։ Ժայռերի մեջ փորված բնակարաններ։ Բլուրների կատարին թառած վանքեր, ուր ուրվականները քշոցներ են շարժում և անլսելի աղոթքների բոցեր։

Ամբողջ մարմնով դող եկող փոքր քաղաքներ։

Նայեցեք քարտեզին, ամեն ինչ պեղվում է։

Տանիքները գնալով վայր են իջնում, տափականում։

Օջախների փոքրիկ կրակների առաջ նստած պառավ մայրերը ոսկրոտ

բոունցքները խփում են իրենց կրծքին և չորացած շրթներով աղոթում։ Սուրբ Սարգիս, սուրբ Կարապետ, սուրբ Անանիա, սուրբ...

Գիշեր է։ Ամեն կողմից զենքերի ձայներ են լսվում։

Այդ ձայները գալիս են մոտակա դաշտերից, բլուրներից և լեռների լանջերից։ Գալիս են, մի քանի անգամ արձագանքում, մեծանում, խառնվում քամուն և մրրկի ձայներին։

— Սուրբ Սարգիս և սուրբ Կարապետ...

Եվ մինչ մամերը դողդողացող ձեռքերով շտկում են կրակը և աղոթելով փչում բոցերի վրա, առավոտյան կես մութի մեջ, գյուղերի բնակիչները արթնանում են։ Հարդ շալակած շինականները մտնում են ախոռը և խավարի հետ խոսակցում։ Կովերը որոճալով լսում են և գլուխը մի կողմ դարձնելով՝ մեկ աչքով ուրախանում։ Շները փռնչում են և ապա հաչում քամու դեմ։ Ականջները վեր տնկած վազում են դուրս, քերում ձյունը և պոչը հետույքին կպցրած վախենալով վերադառնում ներս։

Թնդանոթների ձայները խառնվել են քամու ոռնոցին։

Շինականները մտահոգ բարձրանում են տանիքների վրա և, ձեռքը ճակտին դրած, խուզարկում են տարածությունը։ Ձյուն, քամի։ Գնդացիրները ճարճատում են։

— Թվանքի ձեն ա...

— Թվանք չի, քե մատաղ, թոփ ա...

Վարը, ձորերը եզերող վայրերում երկար թափորներ են երևում։

Վտանգի ենթարկված գյուղերը պարպվում են։ Մարդիկ, կանայք, կովեր, էշեր բարձր ձյունում մխրճվելով՝ գլուխները դեմ տված քամուն հեռանում են։

Ամեն կողմից վեր բարձրացող կրակ, գնդակների տարափ, պայթող ռումբերի ծայրին փոշու վերածվող գյուղեր։

Կարսի ամբողջ գավառը աղմկում է քամիների բերանը ընկած հրսկայական թիթեղե պարապ արկղի նման։ Սարիղամիշի անտառները այրվում են։ Օլթիում թուրքերը փախչում են։

Ձյունը խառնվել է արյունին։

Իսկ լեռների գագաթների վրայից ճամփորդող երկնքի ձայները ոչինչ չեն լսում։ Քամիները կուլ են տալիս թնդանոթների ոռնոցները. ձյունը ուտում է կրակը. ժայռերը կամաց զնգում են և վիհերի ներսում կուտակված լռությունները անհանգստանում են և բարկանում։

Հայեր...

Բա՜ց արեք քարտեզը...

Երևանում տների դռները փակ են։ Այնքան ցուրտ է... Ոչ ոք չի

համարձակվում դուրս գնալ։ Փողոցների անկյուններում վառված խարույկները վաղուց մարել են. մութիրը քար է դարձել։

Եկեղեցիների զանգակները ղողանջում են ցուրտ պարապի մեջ։ Երկինքը կախվել է ծանր և անշարժ։

Քիչ ու շատ պատսպարված տեղերում գաղթականները այնքան կպած են մեկ մեկի, որ թվում են բազմաբազուկ մի մարմին։ Երբ ջերմը բռնում է մեկին՝ ամբողջ մարդկային այդ կույտը սարսռալով երերում է, ասես մեջքի վրա պառկած, ոտքերը վեր տնկած, դողդողալով մեռնող հրեշ լինի։

Բայց ահա, երկինքը կամաց-կամաց վայր է առնում պատուհանների վարագույրները։ Քամին տրեխները խփում է դռներին։ Մարդիկ հորանջում են և աչքերը տնկում պարապին։ Կովերը չեն որոճում, զարմացած նայում են։ Այծերը պառկում են կովերին կպած։ Նոր ծու ածող հավերը քաշվում են անկյունը առանց բորոզանելու իրենց ուրախությունը։

Այդ այն ժամն է, երբ օրհասականները կուլ են տալիս իրենց վերջին հնչյունը, երբ հղի կանայք իրենց փորը վեր են ցցում և աղաղակը խեղդում, մինչև պառավները չորացած շրթունքներով փչում են ինքնաեռի ածուխի վրա, և զորանոցների փողերը հնչում են արթնացումի երգը։

Քաղաքի վարի մասում, գունավոր հախճապակիներով ծածկված պարսկական մզկիթը հրավառված է։ Ոչ մի մուեզին չի համարձակվում հայտարարել ալլահի ներկայությունը։ Ավելի հեռուն, սուրբ Խաչի հինավուրց եկեղեցին թեքվում է դեպի վարը տարածվող դաշտը, որի վրայից վազում է աղմկալից Զանգուն, և մտահոգ նայում է ճերմակ տարածության։ Երկինքը կուլ է տվել բոլոր լեռները։

Տանիքների վրայից ձյուն է թափվում։ Վանականները ճմռում են աչքերը և դողացող ձեռքով վառում նավթե լամպարները։

Սոված են։ Աղոթում են։

Զորանոցներում կտրուկ հրամաններ են հնչում։

Մի բորոզան պատռում է օդը, խփում վերջին ձայնանիշի վրա և կտրուկ լռում։ Հրացանների կոթերը բախում են գետնին։ Ոտնաքայլերը աղմուկով դոփում են— մեկ, երկու, մեկ, երկու— շրջում, մեկնում։

Երրորդ գունդը մեկնում է ճակատ։

Մեծ դարբասի առաջ՝ որտեղից զինվորները պիտի դուրս գնան, մեծ մասամբ տարիքավոր կանայք հուզումից և ցրտից սարսռալով ուզում են վերջին անգամ տեսնել իրենց զավակներին։ Մտահոգ և սրված աչ-

քերով խուզարկում են շարքերը։ Երբ գտնում են իրենց հարազատներին, վազում են նրանց հետևից։ Մաշված, կծկված, ծիծաղելի։

Գնդի առաջից գնում է ձի հեծած մի երիտասարդ սպա։ Նրա հետևից քայլում է հաստ գնդապետը, թուրը ձեռքին, փորը դուրս տնկած, ոտքերը աշխույժ։ Անդադար ուղղում է գոտին, որ վատ է կապված։

Թմբուկները հնչում են։ Նվագախումբը պատրաստվում է նվագելու։ Երբ հասնում են հրապարակի մոտերը, ուր հրամանատարությունը և նախարարները պիտի գան նրանց ողջունելու, փայլփլուն մետաղե գործիքները հանկարծ պայթում են և քաղաքը լցնում հնչող և ոռնացող աղմուկով։

Ծառերի վրայի ագռավները վախեցած վեր են թռչում և երկնքում սև դրոշ պարզում։

Զինվորները կանգ են առնում։

Հրապարակը պարապ է։

Մայրերը, խմբերով կանգնած, իրենց շալերը փաթաթում են գլխին, մրսում են։ Տառապագին նայվածքներով պեղում են փայտ կտրած իրենց զավակների աչքերը։ Զավակների աչքերը պատասխանում են դառն և քաջալերիչ ժպիտով։

Հաստ գնդապետը անհանգիստ վեր վար է քայլում և վերջապես նրան հաջողվում է գոտին կարգի բերել։

Գալիս են, գալիս են...

Սպաները վազում և կանգ են առնում շարքերի առաջ։ Հրամաններ։ Թմբուկներ, բորոտաններ։

Գալիս են պառլամենտի շենքի կողմից։

Հրամաններ։

Միջահասակ մի պարոն, քնոտ աչքերով և ակնոցավոր, վերարկուի օձիքը բարձրացրած, ձեռքերը գրպանների մեջ թաքցրած առաջնորդում է բարձրաստիճան սպաների խումբը, որը քայլում է քիչ երերալով, կոշիկների խթանները զնգզնգացնելով։

Սպայակույտի անդամներից ոմանք սեղմված են մոխրագույն վերարկուների մեջ։ Պսպղացող կոճակներ, լայն և ոսկեզօծված ուսադիրներ։ Ուրիշներ հագած են չերքեզկաներ, յափունջի, փափախ։ Կռացած արծաթե սուր։ Ոմանք էլ՝ բարձր կոշիկներ, կարճ վերարկու, կամավորական բարձր մորթե գլխարկ։

Նախարարը մտնում է հրապարակ։ Նվագախումբը հնչում է հանդիսավոր մի քայլերգ։ Հաստ գնդապետը կոլոր և արագաշարժ մոտենում է նրան, ոտքը ոտքին խփում, զեկուցում։ Նախարարը լսում է և մտածում...

Գլխարկը հանում է և ճաղատ գլուխը հանձնում ցրտին։ Առաջանում է։ Բարձր ձայնով ողջունում է գնդին և ձեռքը արագ-արագ քսում սառած ճաղատին։

Զինվորները լայն բաց են անում բերանները և քամի կուլ տալու ձևով պատասխանում...

Կանգնած մայրերը աչքերը կես փակում են և սարսռում։

Սպայակույտի անդամները անցնում են շարքերի առաջից և խիստ աչքերով ամեն զինվորին վերից վար զննում, քննում։

Ապա նախարարը վերադառնում է հրապարակի մեջտեղը, գլխարկը ձեռքին խաղացնելով հայրենաշունչ ճառ ասում։ Մայրերը ավելի են հուզվում, հառաչում են և ձեռքերը սեղմում կրծքի վրա։

Գաղթական երեխաները դուրս են վազում, դողդողալով նայում, բոբիկ ոտքերը տաքացնելու համար ցատկոտում, բայց ցրտին չդիմանալով անհետանում։

Ճառերը վերջանում են։

Թմբուկները աղմկում են, նվագախումբը հնչում է, դրոշակները վեր են ցցվում։ Հրամաններ։ Գունդը մեկնում է դեպի կայարան։ Մայրերը, կապտած շրթունքները պինդ սեղմած, մեջքերը ծռած և քայլերը շփոթված վազում են գնդի հետևից, փափուշները շրմփացնելով և ախ ու վախ քաշելով։

Դատարկված հրապարակում ագռավները մնում են մենակ։

Քամին փշրում է իր մետաղե թևերը։

Մորզեի գործիքները տարածությունից տարածություն լուրերի կաթ են կարում։

...Քարքարոտի շրջանում ճակատամարտը տևեց ամբողջ գիշերը։ Երեսուն մեռած, հարյուր քսան վիրավոր։ Գյուղը մեր ձեռքին է։ Վերիշանի կողմում նոր հարձակումներ են սկսվել...

...Այս երեկո, ժամը յոթ քսան հինգին գրավեցինք Բաշկեռ, Բեգկեռ, Մկետսետ։ Թուրքերը սպառնում են. օգնություն ուղարկել։ Ռումբերի սաստիկ պակաս։ Ստոպ։ Դեղորայքի և բժիշկների անհրաժեշտություն։ Ստոպ։ Յուրտ 39 աստիճան։ Գրավեցինք երեք թնդանոթ, տասը գնդացիր, 64 հրացան...

...Զանգիբասար։ Գյուղերը մաքրեցին առանց կորստի։ Ստոպ։ Մարդիկ առանց կոշիկի են և մանավանդ առանց ծխախոտի։ Ստոպ։ Ուղարկեցեք դրամ և փամփուշտ։ Ստոպ։ Բարոյականը բարձր, ցուրտը

ահավոր։ Գուլպայի պակաս, կարելի է պարտյանկա։ Սպասում են հարձակումի...

Մորզեի մեքենան անդադար աշխատում է։
Զինվորականները թեյ են խմում և արձանագրում։
Անգլիացիների խոստացած զգեստները չեն հասել...

Քաղաքում խանութները բացվում են։

Քնջութի ձեթը տակառների մեջ քար է կտրել։ Ոչխարի մսի պահածոն չի պակվում։ Ջրի խողովակները պայթել են։ Առաստաղից կախված վոբլա ձկները փայտացել են։ Վառարանների ծխնելուզները ծուխը ետ են ուղարկում, անկարելի է շնչել։ Դպրոցները փակված են։ Վառելիք չկա։ Երեխաների ձեռքերը ուռել են։ Լաց են լինում և կովում։

Երիտասարդ մի մարկիզ, մեծ պետության ներկայացուցիչ, առատ մուշտակների մեջ փաթաթված, սպորտի հաստ կոշիկներ հագին, դահուկները ուսին դանդաղ քայլով բարձրանում է Աստաֆյան փողոցով։ Դահուկները հագնում է և սահում վար, մինչև մզկիթը, ապա նորից բարձրանում վեր։

Վարդագույն թշեր ունի և կապույտ աչքեր։

Ամենքին ժպտում է։

Ամենքը պատասխանում են ժպիտով և մտածում՝ Եվրոպան զվարճանում է, երբ...

Թոքախտավոր ջութակահարը, որ ապրում է մարկիզին մարմնամարզության վայր ծառայող փողոցում, նայում է նրան և հիանում։

Ահա իսկական մի մարկիզ։

Երազում է։

Մատները արագ-արագ շփում է կրծքին և ջութակը պատից վայր առնում։ Ուզում է նվագել մի ռոնդո, ուզում է նվագել մի մենուետ...

Մարկիզ, մենուետ, շպար, ուներանս։ Իսկ կոլոֆան չկա։ Ճիպոտի մազերը կտրվում են, լարերի վրա կրճտում, սահում։ Ճիպոտը չի խածնում լարերին։

Խածնում է ցուրտը։ Ջութակահարը հազում է, ջութակը մի կողմ գցում և մատները շփում բաճկոնին։ Վատոյի, Շարդենի մարկիզուհիները։ Ռոնդոն, մենուետը։

Մտնում է անկողին, վերմակը գլխին քաշում և անիծում Եվրոպային։

Ինչո՞ւ են հայերը անիծում Եվրոպային։ Հինգ արկղ խիներին է ստացվել և մի լիտր յուղ։

Սևանա լճի ափի տնակները թաղվել են ձյունի և սառույցի մեջ։

Երիտասարդ ծովային սպա Թումանյանը նավթե լամպարի մոտ, ձեռքերը տաքացնում է և մտածում։ Դրսում ցուրտը այրում է կրակի նման։ Աշխատանքները դադարել են։ Նավը, գրեթե ավարտված, դիակ է կտրել. երբ մուրճը խփում ես, հեծում է և ճայթում։

Ենթադրենք Հյուսիսային Բևեռում ես— մտածում է Թումանյանը։ Պետք է սպասել գարնան։

Սպասում է։

Անկողին։ Մի քանի գրքեր։ Մի քիչ պահածո։

Մենակություն։

Ամեն անգամ, որ քամին վայելով անցնում է տանիքի վրայից և գերանները սկսում են շարժվել, նրա միտքը գնում թափառում է Հյուսիսային ծովում։ Գեղեցիկ պատերազմական նավը, որի վրա ծառայել է, սրված քթով ճեղքում է անհանգիստ կոհակները, թեթև պարում և սարսռող մետաղե մարմնով նետվում առաջ։

Ինքը, երկրորդ աշտարակի վրա կանգնած նայում է մեկը մյուսի վրա գրոհ տվող ալիքներին և մտածում սիրուն և շքեղ այն աղջկա մասին, որին այս գիշեր հանդիպելու է պարահանդեսում։ Կրոնշտադտի բարձր հասարակությունը պարահանդես է սարքել ի պատիվ տորմիղի սպաներին։

Ժամը յոթին կհասներ նավահանգիստ։

Նոր և փայլփլուն համազգեստը արդուկված պատրաստ է։ Քիչ հետո հերթապահությունը կվերջանա, կվազի խցիկը և աբաղ-արաղ, ինչպես բոլոր սպաները՝ կլվացվի, կածիլվի, կսանրվի, կհագնվի։

Եվ ահա լույսերով և ծաղիկներով լցված դահլիճը։

Երաժշտություն, շլացուցիչ կանայք, Պետերբուրգից եկած բարձրաստիճան հյուրեր, պսպղացող համազգեստներ, արծաթե խթանների զրնգոց, ծանր և ոսկեզօծ էքսելբանդներ, ադմիրալներ, հարբեցուցիչ մթնոլորտ։

Առաջին պարը սկսվել է։ Իրենց նավի երիտասարդ սպաներից մեկը ղեկավարում է պարերը։

— Invitez vos dames!— հնչում է նրա ատենտորյան ձայնը այնքան աղմուկի մեջ։

Թումանյանը շտապ անցնում է շարքերից, ժպտալով կանգ առնում Սոնյա Դաշկովայի առաջ, ոտքը ոտքին խփում, հրավիրում պարի։

— Իսկ ես կարծում էի ուշացաք,— ասում էր Սոնյա Դաշկովան՝ թևը նրա ուսի վրա դնելով։

— Նովային մարդը միշտ հավատարիմ է խոստմանին,— անմիջապես պատասխանում է Թումանյանը և նրան իր թևերի մեջ առնելով՝ թեթև, արագ, ճկուն նետվում է պարասրահի մեջտեղը։

Շուրջը՝ անիրական, երազային մի փեթակ։

Երաժշտության թովիչ և հմայիչ ձայներ, արբեցուցիչ բուրումներ, մետաքսների շխշխոց, լույսերի առատություն, կանանց թրթռացող և զմայլելի դեկոլտեներ։

— Դուք շատ գեղեցիկ աչքեր ունեք,— վերջապես համարձակվում է ասել։ Ասում է և գույնը գցում։

Սոնյան պինդ սեղմում է նրա ձեռքը և ոչինչ չի պատասխանում։

Նրա կապույտ աչքերի մեջ արծաթե լույսեր են բռնկվում։ Նրա մարմինը՝ թեթև և տաք, հանձնվում է սպայի թևերին, և նրանք, երիտասարդ, արթնացող սիրով գինովցած, անհոգ և բախտավոր պտույտ են գալիս անիրական մի աշխարհում։

Երբ պարը վերջանում է, նա կրունկը խփում է կրունկին և գլխի խոնարհումով շնորհակալություն հայտնում, ապա թևը Սոնյային առաջարկելով տանում է բուֆետ։

Շամպայն։ Իկրա։ Անանաս։ Սանդվիչներ։

Գորովալի նայվածքներ, ջութակի նման երգող ձայն և աննշան խոսքեր, որոնց տակ քաղցր զգացումի խարույկ է թաքնված։

Եվ հանկարծ, երբ նրանք ձեռքը ձեռքի մեջ սեղմած ուզում են վերադառնալ պարելու... երաժշտությունը ընդհատվում է, բազմությունը իրար անցնում, վազում դուրս... կանանցից շատերը ուշաթափվում են... հնչում են չոր և կտրուկ հրամաններ։

— Պարոնայք սպաները թող անմիջապես վերադառնան իրենց նավերի վրա...

Քաղաքում ապստամբություն էր։

Նավաստիների վրա չէր կարելի վստահել։ Արդեն գնդացիրների ձայներ էին լսվում։ Տեղ-տեղ ոռնում էր թնդանոթը։

Ինչպես կարելի էր մոռանալ չարագուշակ այդ ժամը։ Այդ վայրկյանին նրա կյանքը փոխվեց, խորտակվեց, այլանդակվեց։

Հիշում է, ատրճանակը ձեռքին նրանք խմբով դուրս նետվեցին, վազեցին դեպի նավը։ Ուշ էր։ Ապստամբները կարմիր դրոշակ էին պարզել գլխավոր կայմի վրա։ Հերթապահ սպաներին գնդակահարել էին։ Սպառնում էին քաղաքը ռմբակոծել, եթե որևէ դիմադրություն ցույց տրվեր։

Շվարած, խենթացած, նրանք քայլեցին նեղլիկ փողոցներով... Աջ ու ձախ վազեցին առանց հասկանալու, թե ինչ պետք էր անել։

Շատ չանցած, նրանց շրջապատեցին մի խումբ զինված նավաստիներ և հրամայեցին հետևել։ Սպաները մերժեցին։ Երկու կողմից էլ սկսեցին կրակել։

Մի նավապետ՝ կուրծքը շքանշաններով և Վլադիմիրի լայն ժապավենով ծածկված՝ ամբողջ մարմնով գետին փռվեց, դեմքը ցեխոտ ջրերի մեջ ծածկելով։ Հրացանի կոթի մի հարված վայր գցեց նրա բարեկամ Միշա Միտկինին, որը լավ ջութակ էր նվագում, բանաստեղծություններ գրում և որի գրպանները միշտ լցված էին պրալինով։ Մի ուրիշը, դահակի հարվածը ստամոքսին կուլ եկավ և «մայր» աղաղակելով գլորվեց։

Թումանյանը կրակելով ետ էր քաշվում։

Ինչքան ժամանակ տևեց չի հիշում։ Հիշում է, մտավ կես խավար մի փողոց, կպավ պատին, սպասեց։

Ձախ բազուկի վերի մասը մղկտաց։ Նա վիրավորված էր։ Արյուն էր կորցնում։ Կամաց-կամաց հեռացավ, մտավ մի ուրիշ փողոց և այնտեղ մարդ չտեսնելով վազեց, հասավ մի տան առաջ, ուր ապրում էր մի ծանոթ ընտանիք։ Զանգը տվեց, դուռը չբացեցին։ Նորից ու նորից զանգահարեց։ Վերջապես, վերի պատուհանից մեկը գլուխը դուրս հանեց, նայեց, և դուռը բաց արեցին։

Նրա գեղեցիկ համազգեստը ամբողջովին ծածկված էր արյունով։

Վերջին պարահանդեսը։

Սոնյա Դաշկովան։ Ծովանույշի աչքեր ուներ, վառվռուն շրթներ և բառերը արտասանելու այնքան միամիտ, այնքան մանկական ձև... էլ նրան երբեք չտեսավ։

Տարիները սահեցին երգի նման։

Անկողին։ Մի քանի գրքեր։ Մի քիչ պահածո։

Քամի։ Ցուրտ։ Մենակություն։

Կողքի սենյակում պահակներ են ապրում։

Կոշտ, ուժեղ, նախնական մարդիկ։ Հրացանը ուսին, բաշլիկը գլխին փաթաթած, գոտին փամփուշտներով լցված, նրանք մեկնում են առավոտ շատ շուտ և վերադառնում երեկոյան, բեղերը սառած, հոգնած, կատակելով և հայհոյելով։ Երբ նրանք ազատ են՝ օրը անցկացնում են քնելով, երգելով և պարելով։

Երեկոյան, մեծ կրակ են վառում և շուրջը նստած զրուցում։ Հաճախ, մոտակա խրճիթից մի ծերունի է գալիս։ Դողդողացող մարմնով, կծկը-

ված, ծռված, շփոթված մորուքով, չափազանց երկար ձեռքերով մի վանեցի է։ Անդադար հառաչում է և անդադար խոսում։ Սպասում է, որ Վանը ազատագրեն։ Ուզում է մեռնել այնտեղ։ Նրա համար Վասպուրականից ավելի գեղեցիկ երկիր չկա աշխարհում։ Եվ երբ խոսում է Վասպուրականի մասին, նրա ձայնը մեղմանում է, փոքրիկ աչքերը փայլփլում են և ձեռքերը ավելի են երկարում։

Երբ նա գալիս է, նրանք ձայնում են Թումանյանին.

— Համեցեք, Սեմյոն բիձան եկել է...

Թումանյանը սիրում է լսել բիձայի պատմությունները։

Նոր, անծանոթ աշխարհ է նրա համար։ Նա անգիր սովորել է ծովի հետ կապ ունեցող բոլոր երկրների պատմությունները։ Մինչև Խաղաղականի կղզիները, Չինաստանը, Ճապոնը։ Չգիտե սակայն Կովկասի սահմաններից այն կողմ գտնվող Հայաստանը։ Լսել է աղոտ և սրտաճմլիկ ընդհանուր պատմություններ։ Բուն կյանքի մասին գաղափար չունի։

Գալիս նստում է անկյունում և լսում։

Մերունու բոլոր ասածները չի հասկանում։ Նա անծանոթ շատ բառեր է գործածում և հուզումի վայրկյաններին թոթովվում է, խոսքերը ուռում։

— Բիձա ջան, ասածդ չհասկացանք,— բացագանչում են ամեն կողմից։

Մերունին բարկանում է։ Գինի են տալիս։ Կրկնում է։

Այս գիշեր նորից նստել է կրակի առաջ։ Գլուխը այծի է նմանվում։ Երկար ձեռքերը տվել է բոցերին, ոտքը դցել ոտքի վրա և մտածում է։

Դրսում քամին բարկացկոտ վայում է։

— Բիձա ջան, նորից մոքերդ գնացին հեռացան,— ասում է տղաներից մեկը։

— Մտածում էի... Կարող է պատահել լավ օրեր տեսնեք, բայց անուշ օրերը, որ մենք տեսանք, դուք չեք տեսնի...

— Ասում ես, էլի, ասում ես... տեսնենք ի՞նչ անուշ օրեր են դրանք...

— Գե, հայտնի է... Վանում ամեն ինչ երկնքից թափվող մանանա էր...

— Ախր, թողեք մարդը պատմի, ինչի՞ եք միջամտում։

Երբ հակաճառում են, բիձան տաքանում է, բարձանում և սկսում պատմել։

Մորուքը քերում է, խորամանկ ժպտալով։

— Օրինակի համար,— սկսում է նա,— հազար տարի էլ ապրեք, ձեզանից ո՞վ կարող է Վանի ուխտագնացություն տեսնել...

Հոնքերը վեր քաշելով հաղթական չորս կողմ է նայում և սպասում պատասխանի։

— Էդ մեկը լավ էր, քո արև...

— Բիձան առանց գինու չի կարող խոսել...

— Թե որ առանց գինու չի կարող խոսել, մենք էլ բաժակը կլցնենք... ահա էդպես և կանենք իրեն...

— Անուշ լինի, բիձա ջան...

Ներսինին հասկանում է, որ ջարժել է ամենքի հետաքրքրությունը։

Գինու բաժակը վերցնում է, մի քանի կում խմում, մտածում, հազում, կարծես պատրաստվում է երգելու։

Ամենքը լարված ուշադրությունով սպասում են։

Վերջապես, աչքերը տնկում է մի կետի վրա։ Պատմում է։

— Աղվոր ժամանակներ էին... Վասպուրականի հայ Առաքելական եկեղեցվո գլխին կանգնած էր առաքյալի դեմքով, աննման այն մարդը, որ հետո եկավ էջմիածնի սուրբ գահի վրա բազմեց Խրիմյան անունով...

— Հայրիկը...

— Հայրիկ... Իսկական սայլած, փառավոր, ուժեղ, անվախ։ Կարմիր, արյունարբու սուլթանն անգամ չկարողացավ անոր հախից գա... և հետո, երբ եկավ բազմեց Լուսավորչի գահի վրա... գլուխ ցարի առաջ չծռեց։ Գիտեք, երբ ուզեցին հայ եկեղեցվո իրավունքներ կապտել, ողջ ժողովուրդ ոտքի հանեց և ամեն տեղ զինված գիմադրություն պատրաստեց...

— Դե հայտնի է... Խրիմյանը...

— Էդ չէի ուզում ասել...

Մի կում բաժակից խմում է։

— Եթե չեմ սխալվում, Քրիստոսի այլակերպության տոնի օրեր էին... Դե, մեր երկրում եկեղեցվո տոներ ուրիշ ին, հանդիսավոր, մարդու սրտի խոսող, վերացնող... Տոնին սպասում ին, տոնի համար պատրաստվում, տոնով հրճվում... Մարդկանց սրտի վրա կարծես լույս ի ընկնում...

— Իսկական քրիստոնյաներ են, բիձա ջան...

— Հա, քրիստոնյա և ազգասեր... Եկեղեցի և ազգ միացած ին, ոնց որ բոլոր հայերի համար... Ուրեմն, այլակերպության այդ տոնի օր... մեկ էլ լուր տարածվեց, որ Խրիմյան անձամբ հանդիսավոր պատարագ ի անելու Վարագա վանքում։ Դե, մեծ հուզում առաջ իկավ

ժողովրդի մեջ... Մի աներևակայելի բան. ամենքին մի տեսակ ջերմ բռնեց... Ջոխնված հայրենասիրական շունչ անցավ քաղաքի և գյուղերի վրով։ Ամեն ինչ մոռացան և ամեն մարդ ոգևորվեց։ Այդպիսի գեպք ամեն օր չի պատահում և, բնական ի, ամեն մարդ ուզեց ներկա գտնվել հանդիսավոր այդ արարողության։

— Դու էլ գնացի՞ր, բիձա ջան։

— Հապա ո՞նց... Ո՞վ ասես չգնաց։ Կին, տղամարդ, մանչ, աղջիկ, շինական, քաղաքացի։ Վան քաղաք և ամբողջ Վասպուրական էդպես բան չէին տեսել։ Ամեն կողմից բազմություն խուժեց դեպի վանք։ Խումբերով, թափորներով, ոտքով, ձիով, կառքով... օղլուշաղներ իրենց լավագույն զգեստներ հագած, վերից վար զարդարված, ճակատնին և կրծքերնին ոսկի կախած, շիշխացող կապաներով, գունավոր շալերով... Աղջիկներ՝ մի-մի ծաղկած ծառ, խնձորի թուշերով, համեստ ժպիտ երեսնին, մանչերի հետ կատակելով...

— Դու էլ նրա՞նց հետ, բիձա...

Ծերուկը մորուքը քերում է, ծիծաղում։

— Ես էլ հեծել ի Մկոռ անունով իմ ձին... Ցորդա ձի, որ հետո բավական լավ գնով ծախեցի մի քուրդ փաշի... Հա, ուրեմն, բազմություն գնում իր խումբ խումբ, հայրենասիրական երգեր երգելով, Ուրբաթ-Առու հրաշալի ծաղիկներով ծածկված դաշտով։ Կարծես հարսանիք իր։ Ծերեր գավազանների վրա հենվելով, գյուղի կանայք պաշարով ձեռնաբերված, երեխաներ աղմկելով, գնում ին հա՛, գնում... Կես ճանապարհին կանգ ին առնում Դզրիկ աղբյուրի մոտ, հրաշալի ջրից խմում... ասում ին հոգիների պայծառություն և ոտքերի հազար մղոն քայլելու ուժ ի տալիս... Ջուր ի, ջուր, նման աշխարհում չկա... Համով, անուշ, զով...

— Գինուց էլ լա՞վ...

— Ի՞նչ գինի, ի՞նչ բան... Դե, ճամփան երկար ի, ժողովուրդ քիչ կանգ ի առնում աղբյուրի մոտ, ուտում, խմում։ Աղբյուր խշշալով, վշշալով թափվում ի վար. ջրի տակ շարված օղու կամ գինու շշեր, վարունգ, պողկ... Խոտի վրա փռված սփռոցներ, իսկ սփռոցների վրա աստծո բարիք. ուտելիքներ, մեզներ, դոլմաներ։ Ուտում ին, խմում և պարում։ Եվ ինչ օդ, ինչ ծաղիկներ, արբեցուցիչ ինչ բուրում, թռչունների ի՞նչ դայլայլ... Բառ չկա նկարագրելու համար։ Աղջիկներ ջեյրանի նման թեթև վազում ին, խաղ անում, խաղ ասում, տղաների հետ աչքով-ունքով անում, իրենց ծիծաղ խառնում թռչունների երգերին, կատակում և հետո ուրախ, երջանիկ՝ ժամ անցնում... Եվ ինչ տեսարան... Վանա լիճ, Աղթամար և դաշտեր, և լեռներ... Հիսուս Քրիստոս...

Սիմոն բիձան խաչակնքում է և տխրած՝ չի կարողանում շարունակել։

— Դարդ մի՛ անի, բիձա,— ասում է պահակներից մեկը,— շուտով Աղթամարը ետ կվերցնենք...։

Ասում է և կամաց ծերունու բաժակը լցնում։

— Մի կում խմիր...

— Երբ մարդ մտածում ի,— շարունակում է ծերունին մի կում խմելուց հետո,— ուղղակի... ի՞նչ ասեմ... Լեռան վրայից վար նայեիր՝ ճանապարհները լցված ին ահագին բազմությունով։ Մրջյունի շարքով ին ու գալիս... Ամբողջ գավառի բնակչություն լցվել ի էյնտեղ։ Տեղ-տեղ կանգ ին առնում, ձի խաղացնում, շրջպար դառնում, խմբերգում։ Երբ հասնում ին վեր՝ ուրիշ թամաշա։ Վանք փեթակ ի դարձել։ Այնքան մարդ, այնքան մարդ, որ ասեղ նետելու տեղ չի մնացել։ Վանքի ներսում, խուցերում, բակում, աղբյուրների մոտ, ծառերի տակ, պատերի վրա ամեն տեղ բազմություն։ Աղմուկ, երգ, դավուլ-զուռնա։ Բայց երբ վանքի զանգակներ հնչեցին և լուր տվին, որ պատարագ կսկսվի, խոր լռություն պատեց։ Կին, մարդ, օղլուշաղ խռնվեցին եկեղեցու մոտ։ Բնական ի, էդքան մարդ եկեղեցում չի տեղավորվի։ Զոքեցին դրսում, և սկսվեց օրվա աննման պատարագ...

— Պատկերացնում եմ, բիձա...

— Ով սեփական աչքով չի տեսել, չի կարող գաղափար կազմել։ Պետք ի տեսնել Խրիմյան եկեղեցական փառավոր զգեստներով, եպիսկոպոսական բարձր խույրը գլխին, գավազան ձեռքին, աչքեր վառ, դեմք ներշնչված, գունատ, վերացած... Մինչ շարականներ հնչում ին քաղցր և տխուր, պատարագչի ձայն բարձրանում ի առաքյալի ձայնի նման. բամբ, խոր, հուզված, հավատքով աննկուն և սքանչացած... էլ չեմ ասում արարողության մասնակցողների շապիկների գունավոր շքեղություն, հազարավոր մոմերի փայլ, ոսկիների և արծաթների պսպղանք, խնկի բույր, խշշոցների զրնգոց փեթակ... Ամեն ինչ փայլում ի, կայծկըլտում, երգում։

Լռում է։ Ամենքը լռում են։

— Իսկ հետո, բիձա ջան, հետո ի՞նչ արիք...

— Հետո,— ժպտալով ասում է ծերունին,— ինչպես միշտ, կերան, խմեցին, պարեցին, երգեցին... երեք օր, երեք գիշեր...

— Դե, որ էդպես է, մենք էլ մի բան ուտենք, մի քիչ էլ խմենք...

Կրակի վրա նոր փայտեր են դնում։

Լավաշ, պանիր, օղի են բերում։

Քամին գլուխը խփում է տանիքին, գլոր դալիս, հառաչում, գանգատվում։

— Ես որ խոխա էի,— ասում է տղաներից մեկը,— Վաղարշապատում Խրիմյանին տեսա...

— Վանեցի էր,— ասում է բիձան։

— Վանեցի՞... Իսկ ես կարծում էի ղարաբաղցի է...

Բիձան չի պատասխանում։

Ամենքն էլ գիտեն՝ Խրիմյան կաթողիկոսը հիմա պառկած է այնտեղ, Էջմիածնի բակում, մի կտոր մարմարի տակ, ձեռքերը կրծքին, ոչքերը փուլ եկած, մարմինը որդերից կերված։

Բիձայի դեմքը լցվել է կնճիռներով և շուքերով։ Կարծես հազար տարեկան է, կարծես հարյուր հազար տարեկան է։

— Առաքել, շիշը էս կողմը բեր...

Ամենքն էլ գիտեն Վարագը պաս-պարապ է. թուրքերը վանքը քանդել են։ Եվ Վանը, և բոլոր գյուղերը, և բոլոր հնադար և գեղեցիկ եկեղեցիները քանդել են, փոշու վերածել։ Եվ այնտեղ, Հայաստանի պատմական գավառներում հիմա ձյուն է և սաստիկ քամի, և պարապություն է, անապատ, մենակություն։

Օդին լավ ընկեր է։ Ցրտին, բուք բորանին օդին պատվական ընկեր է։

— Առաքել, քե մատաղ, Սայաթ-Նովայից մի տուն երգիր...

Եվ Առաքելը, հրացանը երկու ծնկներին տեղված, ձեռքերը գըրպանում, շրթները տխրած, երգում է Սայաթ-Նովայից և մտքով... գնում Վարագ։

Գիշեր է։

Երևանի կենտրոնական հրապարակի մեծ ժամացույցը ուշադիրով շարժվում է, ամբողջ մարմնով սարսռում և զանգահարում։

Խփում է տասներկու անգամ։

Ժամը տասն է։

Քամին թափահարում է ծառերը և թափված ձյունը տանում հավաքում փակ տների պատուհանների տակ։ Քիչ հետո մի տղա՝ պատուհանների տակից ձյունը վերցնելով տանում կուտակում է դարպասների առաջ։

Քանաքեռի կողմից հեծելազորի մի գունդ է իջնում կայարան գնալու համար։ Ձյունը շտապող ձեռքերով ձիերի ոտքերի տակ փափուկ կտավեղեններ է սփռում։ Ձիերը խրխնջում են։

Երբ հեծելազունդը հասնում է կենտրոնական փողոց, սպաներից

մեկը ենթասպային ինչ-որ բան է ասում։ Ենթասպան նայում է ետ, սուլում և ձեռքը վեր բարձրացնում։ Փողոցը և դիշերը հանկարծակիի եկած լցվում են երգի ձայներով։

Զյունը բախվում է արթնացած շուքերին և նրանց հետ դիմբվելով հեռանում։

Պատուհանների ետև լույսեր են վառվում և հետաքրքրված դեմքեր իրենց քթերը ճզմում են ապակիների դեմ։

Մի տան դուռը կամաց բացվում է։ Մտահոգ դեմքով մի երիտասարդ դուրս է գալիս, աջ ու ձախ նայում, ապա, հանգստացած նորից ներս է մտնում, բարձրանում կարճ սանդուղքներից, բաց անում մի դուռ և իր վրա տնկված հարցաքննող նայվածքներին պատասխանում է ձեռքի մերժողական շարժումով։

— Ընկերնե՛ր, ժողովը շարունակվում է...

Մի մեծ սեղան։ Մի ինքնաեռ։ Բաժակներ, պնակներ, անուշեղեններ, կարկանդակ։ Ամեն ինչ ընտանեկան պարզ հավաքույթի տպավորություն թողնելու համար։

Միջահասակ, արված կարճ մորուքը ծնոտին կպած, այտերը հոգնած, ոնգներից վայր թշնող երկու խոր գծերով ու ծանր աչքերով մի մարդ նախագահում է։

Կենտրոնից եկած ընկեր է։

Շուրջը երիտասարդ տղաներ և աղջիկներ։

Աղջիկները՝ առնական դեմքով, կտրուկ շարժուձևերով։ Տղաները՝ համեստ, լուրջ և մտատանջ։

Սեղանի անկյունում նստած է թուխ դեմքով մեկը. երկայնահասակ, բաղուկները նիհար և տարածուն, մազերը խճողված, ջղային, անհամբեր, դյուրաճառ։ Նրա մոտը՝ երկու ձեռքերը սեղանի վրա դրած, աչքերը արթուն և քիչ տխուր Զվարթը։

— Ուրեմն, անցնենք երկրորդ հարցին, պրոպագանդան զորքերի մեջ։ Առ այժմ, ամենակարևոր խնդիրը դա է... Իշխանությունը հենվում է բանակի վրա և գնալով խրվում է ավանտյուրաների մեջ... Կամավորական այդ մտայնությունը սնվում է պատերազմով...

Զվարթը ձեռքերը սեղանի վրայից ետ է քաշում և ջղային շարժումով ուսերը սեղմում։

— Ճիշտ չէ,— մտածում է նա։— Թշնամիներն են աշխատում խառնակել երկիրը։ Ջենք են մտցնում, դրամ են բաժանում։ Չէ, այդ ճիշտ չէ։

Զարմացած աչքերը հառում է հարևանի աչքերին և հանդիպում է սև և խիստ մի նայվածքի։ Ձեռքերը շփում է, անհանգստանում։

Սպասում է։

Նախագահը, որ նկատել է Զվարթի անհանգստությունը, խոսում է իր բառերը նրան ուղղելով։ Բացատրում է, տրամաբանում է։

— Պետք է վերջ դնել աշխատավոր մասսաների չարչարանքին։ Թշվառությունը ահավոր է մանավանդ գյուղում, մարդկանց թալանում են, ամեն բանից զրկում և վերցնում ճակատ ուղարկում... Կապիտալիստական պետությունների համար զոհեր են պատրաստում... հարուստների լակեյները... Սին պատրանքներ են ստեղծում... Այսպես կոչված դաշնակից պետությունների վրա հույսեր են դնում և դա՝ այդքան զոհերից հետո։ Կապիտալիստական պետությունները բորենիներ են, պատրաստ հայ ժողովուրդը հազար անգամ ծախելու... Պարզ է. միայն միջազգային պրոլետարիատը կարող է մեզ փրկություն, ազատություն և խաղաղություն բերել...

Զվարթը, սիրաշահված, որ իրեն այդքան կարևորություն են տալիս, լսում է հոնքերը վեր առած, ուշադիր, շնչառությունը զսպված։

Տարակույս չկա, ինչ-որ բան պեղվում է ներսում։ «Պետք է սովորել, հասկանալ պատմական և հասարակական երևույթները գիտական սառը մեթոդով»,— մտածում է նա։

Գիտական, մանավանդ գիտական։ Ոչ թե ղգացումով, այլ՝ գիտական աշխարհայացքով։

Աշխարհայացքով։

Զվարթը կամաց-կամաց փոխվում է։ Ամեն ինչ նրա մեջ շրջվում է, տարբեր ձևեր ստանում, տարբեր նշանակություն։

Կինը հավիտենական ուսանողուհի է։ Գիտությունը ազդում է նրա վրա տարերքի նման, բացում և ճեղքում է նրա մարմինը։

Գիտական աշխարհայացքով...

Մոտը նստած թուխ երիտասարդը, որ այժմ ապրում է Հերյանի նախկին սենյակում, նախ անզգալաբար, ապա, ավելի և ավելի տիրում է նրա մտքի վրա։ Մարքսյան տեսությունը, օղակ-օղակ շաղկապված, հրամայական տրամաբանությամբ լուսավորում է նրա միտքը։

Ամեն ինչ դյուրին կերպով գտնում է իր բացատրությունը, ամեն ինչ պարզվում է, կորցնում է իր գաղտնիքը...

Գիտական աշխարհայացքով...

— Կարևորը,— շարունակում է նախագահը,— կարևորը այն է... հասկանալ զինվորի հոգեբանությունը, անհրաժեշտ խոսքեր գտնել նրա հետ զրուցելու համար. նրա գյուղի մասին, նրա անմիջական շահերի, նրա կովի, նրա ոչխարների, նրա արտի մասին... Սպաների հետ խոսելիս չմոռանալ, որ նրանք արհամարհանքով են նայում բոլոր այն խմբապետներին, որոնք առանց կանոնավոր զինվորական կրթության բարձր դիրքերի են հասել։ Նշել այդ. պնդել այդ կետի վրա, բացատրել, որ խմբապետները իրենց արկածախնդրությամբ շարիք են ամբողջ ժողովրդի համար։

Զվարթը կախվում է նրա շրթներից։

— Իսկական մարքսիստը, ընկերներ, պետք է իմանա դուրս ցցել երևույթների տնտեսական ազդակները։ Տնտեսականը այն երկաթգիծն է, որի վրայով վազում է կյանքի գնացքը։ Պրոպագանդիստը այն պետք է իմանա և ամեն մի երևույթ դնի իր գծերի վրա։

Այդ ճիշտ է, մտածում է Զվարթը, այդ տրամաբանական է։

— Միջազգային ամբողջ պրոլետարիատի համատեղ ուժերով միայն կարելի է ձեռք բերել վերջնական հաղթանակը։ Համաշխարհային հեղափոխության տարածումը Արևելքում...

Ահ, այո, հեղափոխությունը ամեն տեղ. սահմանների ջնջում, արդարություն, սեր։ Զվարթի սիրտը ուժգին բաբախում է։

— Եվ երբ համաշխարհային հեղափոխությունը գա, վստահ ենք անպայման կգա, այն ժամանակ ի՞նչ կարևորություն ունեն սահմանային հարցերը։ Սահմանները կանհետանան և հողերը կպատկանեն ամբողջ աշխատավորներին։ Լինենք տրամաբանական...

Այո տրամաբանական։ Մանավանդ տրամաբանական։

— Լինենք տրամաբանական... հիմարություն է, ոճիր է կռվել, առանց դրան էլ արյունաքամ այս ժողովուրդը թնդանոթի միս է դարձել... Հնդկաստանը այս րոպեիս այրվում է, Ֆրանսիայում զորքերը ապստամբել են, Իտալիայում կոմունիստական ռեժիմի խնդիրը օրերի հարց է, Գերմանիան հեղափոխության մեջ է, Չինաստանի մեր ընկերները բանակներ են կազմել, Թուրքիան ուզի-չուզի կենթարկվի ընդհանուր այդ շարժումին իր փրկության համար...

Եվ Զվարթի աչքերի առաջ աշխարհը բոցերի մեջ այրվում է։ Ամեն տեղ ապստամբություն, զինված ամբոխներ, հաղթական քայլերգեր, կարմիր դրոշակներ։

— Իսկ մե՞նք, ընկերներ, մենք ի՞նչ ենք անում... Պատրաստվենք

տապալելու հայ բուրժուազիային, կապիտալիզմի լակեյներին... Կարմիր բանակը կազմ և պատրաստ սպասում է մեզ օգնության գալու համար...

Ներկաների աչքերը բոցավառվում են, երանց արտերում կրակ է վառվում։ Դեմքերը լրջանում են, բռունցքները սեղմվում։

Հեռուն, աշխարհը վեր է ցցվում ապոկալիպսյան տեսարաններ պարզելով։

— Հիմա անցնենք գործնական հարցերին...

Ժողովը վերջանում է շատ ուշ։

Զվարթը թեպետ հոգնած է, բայց իրեն զգում է բախտավոր։ Բախտավոր է, որ կարող է մասնակցել այդպիսի կարևոր և մեծդի շարժման։ Աչքերը խարտյել են, ճակատի վրա փոքրիկ մի գիծ է գոյացել։

— Սիո՞ւմ եք, ընկերուհի...

Ամենքը ծիծաղում են։ Զվարթը առաջին ծիծաղողը վերցնում և վառում է։ Քի սրում, ծուխը գլխին է տալիս. շարունակում է ծխել, իբր թե վաղուց է վարժ, անկաշկանդ ծխի գալոշիկը փստացնելով։

— Պետք է մազերս կտրեմ,— մտածում է։— Բոլոր աղջիկների մազերը կտրված են։

— Ուրեմն, վաղը որոշված վայրում...

— Անպատման։

Դուրս են գալիս զույգ-զույգ։

Լուսակյաց և մենակյաց փողոցներում ձյունափոշին վայելով ման է գալիս։

Քաղաքը ոռնում է վիրավորված գազանի նման։

Քայլում են գժվարությամբ։ Ասատֆյան փողոցը նկնզեցու գրան կամարի տակ ձյունակուտ է ժամ գալիս։ Ձյունը ծածկել է մարդկային մարմինների մի կուտակում։ Մեկը մյուսին փաթաթված, կծկված գալարված այդ մարմինները կուտակված միասին զողում են։ Երբ վաղը առավոտ արթնանան՝ նրանցից շատերը իրենց թևերի մեջ դիակներ պիտի գտնեն։

Ո՞ւր են լեռները։

— Ո՞ւր է Մասիսը, Արագածը, Գեղամա շղթան։

Ոչինչ չի երևում։ Աշխարհը ձյունափոշի է և քամի։

Զվարթը, որ գլուխը քամու դեմ տված վազել էր, կուրացած կանգ է առնում։ Թուխ երիտասարդը շտապում է նրա հետևից, մոտենում և թևերը տարածում՝ նրան քամու դեմ պաշտպանելու համար։ Ձյունը նրանց շուրջը պտույտ է գալիս, վայրկենապես նրանց ծածկում է և մտրակում։

Դիմացի տան մի պատուհանը լուսավորված է։

Մեկը նստած է հեռագրակայն գործիքի առաջ։ Տիկ-տակ, տիկ-տակ, տիկ-տիկ-տիկ-տիկ, տիկ-տիկ։ Մխախոտը վարի շրթունքին կպցրած՝ մարդը ակնոցները անդադար ուղղում է և գրում։

— ... Շուշվա կիրճում թուրքերի հետ կռիվը շարունակվում է։ Անտանելի ցուրտ։ Ենթասպա Շարանյան տասը մարդկանց հետ անհետացավ։ Տրամադրությունը բարձր։ Սպասում ենք պաշարի...

— Տիկ-տիկ, տիկ-տիկ...

— Օլթի։ Ենիկարապետի սառնամանիք։ Մարդիկ առանց կոշիկի։ Թշնամին նեղ մղված, կարեկոր կորուստներով՝։ Զինապարքի հրամայական անհրաժեշտություն։

Մի դարպասի միջից կնոջ լացի խուլ ձայն է լսվում։

— Լացի ձայն է լսվում,— ասում է Զվարթը։

— Սպասիր։

Երիտասարդը ներս է մտնում։

— Գնանք... Ի՞նչ անել,— ասում է նա դուրս գալով։ Երկու զավակների դիակի առաջ չոքած լաց է լինում...

Զվարթի թևից բռնում քաշում է։

— Ահա քեզ կապիտալիստական ռեժիմը։

5

— Եղբայր, համբերությունն էլ սահման ունի, չէ՞... Ի՞նչ է, ծիծաղո՞ւմ են մեր վրա, տխմարի տե՞ղ են դնում... Իշու քուռակներ... մեզ թողել են այս չոր, ամայի անապատում... թե մի քանի ժամից ետ կգանք... Դեռ գալու են... Մարդ աստծու, այդպիսի անկազմակերպություն, այդպիսի անիշխանություն իսկի կարելի՞ է պատկերացնել... Շիրակի բոլոր հավերը նայում են մեզ վրա և հոհոում... Սպասեք, ես

նրանց ցույց կտամ... Ավելի վտանգավոր անասունների հետ եմ գործ ունեցել...

Հերյանը զայրացած կանգնել է։

Ոտքի կրունկը վեր է բարձրացնում, ծխամորճը շղային շարժումով թափ տալիս, ապա վեր ցցում, օդում թափահարում և աչքերը կատաղությամբ լցված շարունակում.

— Ահա երկու ամիս է ճանապարհ ենք ընկել. ուղղակի դժոխք։ Վրաստանում ասես էլ ինչեր չտեսանք... անհավատալի բաներ... Երբ, վերջապես, սահմանը անցանք՝ ուրախացանք։ Տուն հասանք, թե հիմա ամեն բան կկարգադրվի... կարգադրվեց, ընկանք լուսնոտների ձեռքը... բա՞ն եմ ասում՝ կովի աչքերով նայում են քեզ, քթի տակից մմռալով համաձայնվում, հետո առանց խաբար տալու գնում, կորչում... Եկել ենք հասել Գյումրու մոտերը, գոնե քաշեին տանեին մինչև քաղաք... չէ, թողին գնացին... Ես նրանց հերը, ես նրանց...

Ձայնը գլխին գցած հայհոյում է։

— Ասում են դժվար է, բարձր է, մաշինը ուժ չունի քաշելու...

Հերյանին պատասխանողը մի գյուղացի է, որի տարիքը անկարելի է որոշել, այնքան, որ նրա դեմքի գծերը և կնճիռները շփոթված են։ Նայվածքը կարճ է, բառերը սակավ։ Երբ ստիպված է բան ասել, ամեն երկու բառից հետո կանգ է առնում, գլուխը մի կողմ ծռում, ձեռքերը միացնում փորի վրա և աչքերը բացխփում։

— Էս զահրմար մաշինը երակներում արյուն չունի...

— Դե, որ արյուն չունի,— պատասխանում է Հերյանը,— կարող էին մյուս վագոնները թողնել։ Ի՞նչ կա որ այդ վագոններում... զիրթ զիբիլ...

— Չէ, վրան փեչատ է խփված...

— Մեծ բան... Փեչատը խփում են գողերի համար, իսկ գողերը հենց էստեղ են, ներսը... Իրենց հետ խոսես, իրենք զաղափարական են, առաջադեմ... որովհետև աշխարհ են տեսել, Երևանից Թիֆլիս են գնում և Թիֆլիսից Երևան... Դա անվանում են աշխարհ տեսնել... Ինձ հարցնես, անխիղճ մարդիկ են... Եվ ես՝ հիմարս ինչ ունեի չունեի տալիս էի նրանց... էլ ծխախոտ ասես, օղի ասես... Եվ ահա՝ առ քեզ...

Վհատվում է, բարկանում, ուսերը թոթվում։

— Բա՛, բա՛, բա՛, բա՛...

Չի իմանում ինչ անի։ Ծխամորճը լցնում է, վառում, առաջ և ետ գնում, ապա ձեռքերը ծալում է կրծքի վրա և հուսահատ նայում։

Մի երկու հարյուր քայլ հեռուն, մերկացած լեռների և այրված ժայռերի ուրվին տարածված դաշտավայրում ցցվել է նավը։

Երկու ապրանքատարների վրա բազմած, նրա վարի մասը շրջապատված է ամեն տեսակ փայտեղեններով, գերաններով, տախտակներով։ Կապված, բանտարկված ծովային տարօրինակ էակի է նմանում։ Կայմը ցուցամատի պես վեր տնկված, ծխնելույզը պարապ և շվարած։

Որբացած, կարեհույզ, ծիծաղելի։

Հերյանը երկար ժամանակ նայում է նավին, ծխում և զսպում իր հառաչը։

— Հիմա ի՞նչ ենք անելու,— դիմում է վստահ շեշտով, հանգիստ կանգնած գյուղացուն։

Գյուղացին ձեռքով ցույց է տալիս շեղակի իջնող արևին։

— Ջարմանալի է,— ասում է նա,— Երևանը չեկավ...

— Իսկապես,— հանկարծակիի եկած համաձայնվում է Հերյանը,— Երևանի գնացքը վաղուց պետք է անցներ...

Մեկ մեկի աչքերի մեջ են նայում։

— Մտածում եմ,— աչքերը բացխփելով ասում է շինականը,— մտածում եմ, որ պոեզդը...

Ձեռքերը միացնում է փորի վրա, գլուխը բարձրացնում դեպի երկինք և այդպես մնում։

— Դե, ասա էլի, ի՞նչ ես մտածում...

— Ես ի՞նչ իմանամ, սխալվում եմ... Մտածում եմ Երևանը ոնց որ պիտի չգա...

— Չպիտի՞ դա... Ուրիշ անգամ պատահե՞լ է...

— Չէ։

— Այսօր ինչի՞ չպիտի գա...

— Ես ի՞նչ իմանամ... Հազար ու մի բան են ասում... Երեկ գիշեր գեղում ջահելները խոսում էին, որ իբր թե գործերը Գյումրում լավ չեն գնում... Ես ի՞նչ իմանամ...

Հերյանը ուշադիր կերպով նայում է նրան։ Զգում է, որ ծածկամիտ շինականը շատ բան գիտի, բայց վախենում է ասել։ Եվ, հանկարծ, սկսում է մտածել երկաթուղային ծառայողների և բանվորների տարօրինակ վարմունքի մասին. նրանց քմծիծաղները, կառավարության հանդեպ նրանց կծու և թշնամական քննադատությունները, ապա նրանց այդպես թողնել գնալը...

— Ադա,— ասում է նա գյուղացու աչքերի մեջ շեշտակի նայելով,— ադա, դու բաներ ես իմանում և չես ուզում ասել... Ախր, ինձանից ծածկելու ի՞նչ կա... Ես խոմ թշնամի չեմ, բարեկամ մարդիկ

ենք... Ես մտահոգվում եմ, ոչ ինձ համար, այլ այն խեղճ արարածի համար...

Մատով ցույց է տալիս նավը։

— Ժողովրդի ապրանք է, ես էլ պարզ ծառա եմ... Մտածիր, երկու տարի է արյուն-քրտինք եմ թափում...

Հուզվում է։ Ուզում է իմանալ, անպատճառ իմանալ։ Զգում է ինչ-որ դեպքեր են տեղի ունենում։ Նորից դիմում է գյուղացուն։— Հասկացիր, եղբայր... Այս անմեղ անասունը եկել ընկել է այս չոլերը, սպասում է, տառապում... Ժողովրդի սեփականություն է, խալխի համար... Եթե մի բան է պատահել, քե մատաղ, ինձանից մի ծածկիր... Հայ ենք, չէ՞, ամենքս էլ հայ քրիստոնյա ենք, չէ՞...

— Ի՞նչ իմանամ,— պատասխանում է գյուղացին,— ի՞նչ իմանամ... Ասում են կարմիրները պիտի գան... Դե... շինականը հոգնել է, սպանվել է, արտերի համար ցանքս չկա... Դե, իհարկե, եթե գան, շատ լավ է, շատ և շատ լավ... շինականը ուրախ կլինի...

Հերյանը մնում է ապշած։

— Ի՞նչ իմանամ, էդպես են ասում,— շարունակում է մարդը։

Հերյանը այլևս նրան չի լսում։

Անորոշ նայվածքը ման է ածում շուրջը։ Հսկա լռություն է և հսկա պարապություն։ Թեթև գարնանային քամի։ Քարերի տակից թարմ խոտեր են բուսնում։ Նայում է լեռներին, նայում է նավին և, հանկարծ, ամեն ինչ թվում է անիրական։ Իրեն զգում է սոսկալի կերպով մենակ, անպաշտպան։

Նայում է գյուղացուն. փակ, համառ մի էակ։

Նավը, դաշտը, լեռները, գյուղացին։ Ի՞նչ է այդ, երա՞զ է։

— Աղա ջան,— ասում է մարդը երկար լռելուց հետո,— ոնց որ պոեզդը էլ չի գա, իզուր սպասում... Հացս էլ վերջացել է...

— Ի՞նչ է, գնո՞ւմ ես։ Ո՞ւր ես գնում,— հարցրեց Հերյանը երազից արթնացող մարդու ձայնով։

— Ի՞նչ իմանամ... գեղ...

— Լավ, իսկ ե՞ս... Այստեղ մենակ ի՞նչ անեմ. ես էլ պաշար չունեմ...

— Ուրեմն, գեղ գնանք։

— Իսկ նա՞վը։

— Նավը չի կարա գալ։ Թող մնա, քիչ սպասի. խում չի փախչի... Աստված նրան պահապան։

— Ինչքա՞ն ժամանակ պետք է գյուղ հասնելու համար։

— Գյումրուց հեռու չէ... որ բան ման պատահի, շուտ կիմանանք։ Մաշինիստն էլ էնտեղում է, տեսնենք ինչի՞ չի եկել...

— Լավ,— ասում է Հերյանը վճռական ձայնով,— ինչ ուզում է թող լինի, պրկա եմ։ Սպասիր; գնամ նավի կաբինը կողպեմ։

Բավական երկար ժամանակ քայլում են երկաթգծի ուղղությամբ, ապա սկսում են մոլորել բլուրները։

Հերյանը զարմանքով դիտում է գյուղացուն։ Նա ծույլ, դանդաղ, ծանր մարդ չէ այլևս։ Քայլել սկսելու վայրկյանից նա բոլորովին փոխվել է։ Արագաշարժ, թեթև, ճկուն։ Բլուրները մոլորում է այծի նման։ Ցատկելով, քամու նման սահելով, աշխույժ։

— Շինականները բոլորն այ այդպես են,— մտածում է Հերյանը, հազիվ նրա հետևից հասնելով,— մարդ չի իմանում ո՛ւմ հետ գործ ունի։ Ամեն ինչ ծածկում են՝ շարժումները, մտքերը, բառերը։ Չեն խոսում, հարցերին չեն պատասխանում, նայում եմ աչքերիդ սառած աչքերով, մինչ՝ ամեն բան գիտեն, ամեն բան հասկանում են...

Երբ հասան բարձր բլրան կատարին, կանգ առան։ Այլևս ճանապարհի ամենադժվար մասը անցել էին, մնացածը զառիվար էր։

— Մի քիչ հանգստանանք...— ասաց գյուղացին,— դեռ երկար ճանապարհ կա... Մենք սովոր ենք, նոր մարդու համար քիչ դժվար է...

— Լավ,— պատասխանեց Հերյանը։— Բավական է, որ չուշանանք... մութը ընկնելուց առաջ տեղ կհասնե՞նք։

— Կհասնենք, աստծու կամքով կհասնենք։

Հերյանը դիտեց տեսարանը։

Մեկը մյուսին հրող, մեկը մյուսի վրա գլորվող բարձրությունների մի շարք։ Կարծես երկնքի ծայրից անկանոն վայր թափված բրոնզե բաղադրություններ լինեին, որոնք ժամանակի ընթացքում քարացել էին։ Այդ տեսարանը տարածվում էր առանց վերջանալու։

Տեղ-տեղ ցցվում էին արածայր ժայռեր և կուտակումներ, որոնք բնական ամրոցների տեսք ունեին։ Արդյո՞ք ժամանակին այստեղից չեն անցել հսկաներ և ժամանցի համար ամեն ինչ ցրել, հրմշտկել, աջ ու ձախ նետել և մեկնել։

Մերկ քարեր, խոր ստվերներ, բռնկվող լույսեր։

Մեծդի, կլանիչ, մարդկային չափից վեր։

Թեթև էր օդը։ Գայծառ։ Կարծես մթնոլորտը ղողանջում էր։

— Այն կողմերը բնակչություն չկա,— ասաց Հերյանը երկար դիտելուց հետո։

— Ո՞նց թե։ Գյուղերը բլուրների հետևում են, քամիների պատճառով...

— Իսկ Գյումրին ո՞ր կողմն է։

— Էն բարձունքների հետևում... արևի կողմը, էնտեղ որտեղ ժայռերը վերջանում են...

— Այո։

— Քիչ աջ մեր գյուղն է, Շուշնավանը... Մեր գյուղից մի ժամ հեռու... քաղաքն է...

— Դեռ որքան պիտի քայլենք։

— Կես ճանապարհը անցել ենք։ Հիմա հեշտ է... իջնելու ենք։

Նորից ճանապարհ ընկան։ Քայլեցին առանց խոսելու։

Ձառիթափի վրա կուտակված ճերմակ տներ երևացին։

Շների հաչոց։

Մայր մտնող արևը հորիզոնը բոցավառել էր։ Հրկիզված լույսերով ծանրացած լռությունը օրոր էր գալիս բլուրների կատարին։

Պետք է նորից բարձրանային։

Մի գյուղացի՝ կովի վզից կապած թոկը ամբողջ ուժով քաշելով՝ գոռում էր։ Կովը սև էր, միայն մի եղջյուր ուներ և համառ ճակատ։ Քիչ ավելի վերը, մի մարդ և մի կին, մի-մի ճիպոտ շարժելով ոչխարներ էին քշում։ Կինը՝ սևլուկ և չոր, ձախ ձեռքով ծանր զամբյուղ էր կրում. մարդը՝ ուսի վրա բեռնված մի կապոց։ Ոչխարները ամեն վայրկյան կանգ էին առնում, մեկ մեկի քսվում, իրենց շրթունքները հողերին քսում։ Փոշի և բուրդ։

— Բարի երեկո,— ասաց Հերյանը, ուրախ, որ վերջապես մարդկանց էր հանդիպում։

— Հազար բարով,— պատասխանեցին կինն ու մարդը և հետաքրքրված նայեցին Հերյանին։

Բավականին դժվար զառիվեր էր։

Հաստ հոնքերով, լեցուն և եփված երեսով մեկը՝ երկու եղներով լծված ճռռացող սայլ էր քշում, երկար ճիպոտը խաղացնելով։ Եղները չէին ուզում բարձրանալ. մարդը աջ ու ձախ էր վազում, եղներին խրփում, զայրանում։

Հերյանի ընկերը սկսեց նրան հարցուփորձ անել։ Չէ, քաղաքում չի եղել, բայց ճանապարհին քաղաքից ծանոթների է հանդիպել։ Լավ բաներ չեն պատմում։ Ասում են շարժում կա։ Չի հասկացվում։ Ասում են բանվորները և զինվորները ապստամբել են, կարմիր դրոշակ բարձրացրել, զալմաղալ սարքել։ Ասում են կառավարությունը փախել է... Ո՞վ գիտե, ճիշտ է, թե սուտ... Շատ բան են պատմում։

Հորիզոնի երկու ծայրերում ման եկող լույսերը հանկարծ մարեցին։

Լուրեր հաղորդող գյուղացին վազեց սայլի հետևից։ Սայլը անտանելի կերպով ճռռում էր։

Հերյանի սրտի վրա մեծ հուսահատություն իջավ։

Հանկարծ, ամեն կողմից շներ դուրս պրծան և սկսեցին հաչել։ Հերյանի ընկերը գոռաց, փորձեց նրանց սիրաշահել, փաղաքշել, բայց ոչինչ չօգնեց։ Շները սպառնում էին։ Ստիպված քար նետեցին։

Ավելի վերը, մի աղբյուրի մոտ, ջերմ շրթունքներով և սառը ատամներով հաստատարմին աղջիկներ էին կանգնած։ Կարմիր թուշեր ունեին և մեծ աչքեր։ Մոտից անցնելու ժամանակ լռեցին և աչքի տակով նայեցին Հերյանին։ Հերյանը բարևեց։ Նրանք պատասխանեցին վախկոտ ձայնով և ծիծաղը զսպելով։ Ջորացած խոտի, թառամած ծաղկի և զամբուռի հոտ էր գալիս նրանցից։ Մի աղջիկ, կովի առաջ պպզած, արագաշարժ, թավշյա մատներով կաթ էր կթում։ Կովը ետևի ոտքով աքացի էր տալիս, աղջիկը շարունակում էր կթել։ Հերյանը նայեց և մեծ ցանկություն զգաց մի բաժակ կաթ խմելու։ Սոված էր։

Եվ ահա գյուղի առաջին տները։ Շինականների մի խումբ էր կանգնած։ Ջիբուխ էին ծխում և զրուցում։ Մեծ փափախներ, ծանրաբեռնված հոնքեր, երկայն բեղեր, փայլփլուն փոքրիկ աչքեր և կոճղի նման ծռված ձեռքեր։

Մեծ մասամբ ծերեր էին։

Կանգ առան, բարևեցին։

— Բարի... հազար բարով...

Նայեցին ուշադրությամբ և կասկածանքով։

Հերյանի ընկերը բացատրեց իրենց ներկայության պատճառը։ Խառնաշփոթ մի բացատրություն։ Ստանցիա նավ է եկել, իսկական մի նավ։ Գնում է Երևան։ Պոեզի մաշինիստը մեկնել է, ասել է կգա և մինչև հիմա չի եկել։

Գյուղացիները լսում էին, մեկը մյուսի աչքերի մեջ նայում և լռում։

Վերջապես, նրանցից մեկը անհարմար լռությանը վերջ տալու համար նայվածքը ման ածեց երկնքի վրա և ասաց՝

— Աշխարհ է, ամեն ինչ կարող է պատահել...

Այդ ասաց մտահոգված, իմաստուն շեշտով, ապա նայեց մյուսներին, որոնք աչքերը վար գետին նայեցին։

— Ո՞վ է իմանում, ի՞նչ է անցնում այդ գյուղացիների գլխով,— մտածեց Հերյանը։

— Ասացեք, ի սեր աստծու, ի՞նչ կա, ի՞նչ չկա քաղաքում,— հարցրեց նա։

Գյուղացիները իրենց ուսերը թոթվեցին։

— Ո՞վ կարա ինչ ասի...

Ոչինչ չէին իմանում։

Ծուած, կտկտված մի ծերունի, չիբուխ սեղմած բռունցքը վեր տընկեց, սրածայր ծնոտը ուղղեց Հերյանին և ասաց՝

— Երբ տանտերը տունը թողնում մնկնում է, ամեն ինչ քարուքանդ է լինում։ Ջահելները հանգիստ չեն. էս ենք ուզում, էն ենք ուզում... էն ա, առին նստեցին...

Դողացող ձեռքով չիբուխը բերնին հասցրեց և բարկացած շըրթունքներով ծծեց։

Մի ուրիշը, շատ հաստ բեղերով մեկը, ասաց՝

— Ջահելությունը եռացող ջրի նման է, մռաածել չգիտի... Յորդա ձիու նման վազում է, վազում...

Հառաչեց։

— Իսկ տուժողը ո՞վ է,— բացականչեց մի երրորդը,— տուժողը գյուղացին է...

— Ըղորդ է...

Հերյանի ուղեկիցը, որը իբրև կայարանի սլաքավար իրեն համարում էր պետական պաշտոնյա, գիտուն և տեղյակ մարդ, երկու ձեռքերը լայն բացեց, մատները չռեց, սրան նրան նայեց, ուզեց մի բան ասել և ոչինչ չասաց։

— Ի՞նչ է, Մարտիրոս, բա՞ն էիր ուզում ասել,— հարցրեց ծերերից մեկը։

Մարտիրոսը նորից ձեռքերը բացեց, աչքերը պլշեց և ոտաստիկ հուզվեց։

— Ախր, պետք է հասկանալ,— վերջապես ասաց նա,— պետք է հասկանալ... Երբ պոեզդը գծի վրա գնում է, ոչ ոչ ձախ չի նայում, գնում է և վաս սալամ... Եվ մեկ էլ, պետք է հասկանալ, ռուսը կա, չէ՞, ռուսը...

— Դե, էգ մեկը ճիշտ է,— համաձայնվեց մեկը,— պետք է ընդունել... ռուսը, հենց գործը պրանում է, ռուսը...

Մարտիրոսը քաջալերվեց։

— Ախր պետք է հասկանալ։ Ռուս կա, ըզորդ է, ամա ռուսը էլ հին ռուսը չի և թագավորն էլ էն թագավորը չի... Դե, մենք ամեն բանից մի քիչ խաբար ունենք... Ջինովնիկ մարդը, դե, գիտեք... Հիմա գրությունը էդպես է. նոր թագավորի անունը Լենին է և էս Լենինը ուզում է ամեն տեղ արդարություն լինի։ Անպատճառ ուզում է։ Ասում են կանչել է վեզիր մեզիրին և ասել, որ աշխարհի վրա էլ հարուստ չի

ուզում, ասել է, ոսկի-մոսկի, հող, ապրանք տանեն բաժանեն աղքատներին...

Գյուղացիները լսում էին աչքերը լայն բացած։

— Լենինը ասել է՝ թող գնդակահարեն բոլոր հարուստներին, որ խեղճերին մինչև էսօր շահագործել են... ասել է էս հրամանս թող գնան կարդան Ռուսաստանի և մյուս երկրների բոլոր տեղերում... Մեր հայերից մեկը, որ ասում են զոկ է, չոքել է առաջը, ճակատը նրա ոտքին կպցրել և ասել է՝ Մեծ Լենին, խնդիր ունեմ, հրաման տուր, որ խոսեմ։ Խոսա, զավակս, խոսա, բարի ձենով ասել է Լենինը։— Էնտեղ, մեր երկրում, ասել է նա, մեր հայ շինականները չարչարվում են... մնացել են առանց ալյուրի, առանց ապրանքի, առանց աշնչի...— Երբ թագավորը էդ լսել է, շատ բարկացել է, հրաման է տվել՝ ինչ հարկավոր է բաժանել հայ ժողովրդին...

Մի վայրկյան լռեց և հազթական նայվածք սփռեց ամենքի վրա։

— Եվ լեփ-լեցուն վագոններ եկել հասել են Բաքու և էնտեղից էլ եկել հասել են մեր սահմանը, բայց մեր կառավարությունը չի ուզում ներս թողնի...

Գյուղացիների աչքերը անհագ փայլփլում էին։

— Այ քեզ բան... Ինչո՞ւ չեն ուզում ներս թողնել...

— Ի՞նչ իմանամ։ Ախր, պարզ չարություն է...

— Երևի դրա համար էլ զինվորները ապստամբել են...

— Իհարկե, դրա համար։ Զինվորականները ժողովրդի հետ են։

Մտածեցին, ծխեցին։

— Թողնենք ալյուրը,— ասաց շիլ աչքերով մեկը,— ալյուրը անշուշտ, ամա հարցը դա չի, հարցը նրանում է, որ արյուն է թափվում... էլ ջահել չմնաց, գնում են վերադառնում... Որբ շատ կա և օղլուշաղը մնացել է անհարակ։

— Ժողովրդին չեն մտածում,— պնդեց Մարտիրոսը,— աշխատավորին չեն մտածում։

Հերյանը լսում էր առանց մասնակցելու վիճաբանության։ Մտածում էր, որ ավելի խոհեմ է չհակառաջարել։ Միևնույն է, ինքը ոչինչ չէր կարող փոխել։ Պետք էր սպասել։ Վագը քաղաքում ամեն ինչ կպարզվեր։

Լսում էր, մտահոգվում, չարչարվում։

Քիչ հետո եկեղեցու զանգակը սկսեց հնչել։ Գյուղացիները չիբուխները մարեցին, ոտքի ելան։

Զով, մայրամուտի վերջին լուսերին խառնված մթություն էր իջնում։ Աքաղաղները երգում էին։ Տավարը զնգզնգալով և մայիլով վերադառնում էր գյուղ։

Ապա՝ ծանր խաղաղություն։

— Տեսնենք վաղը ի՞նչ կլինի,— ասաց Հերյանը սլաքավարին։— Առավոտ ստանցիա գնալու ես, չէ՞...

— Հա, գնալու եմ լուսը չբացված։

— Ես ուզում եմ քաղաք գնալ։ Աչքդ նավի վրա կպահես։

— Անպայման։ Անհոգ կաց։

— Լավ, շնորհակալ եմ։ Պարտքի տակ չեմ մնա... Իսկ գիշերը ո՞րտեղ ենք քնելու...

— Մտածել եմ,— պատասխանեց Մարտիրոսը։— Հեշտ է... Երբ ժամը վերջանա, տերտերից խորհուրդ կհարցնենք։ Կինը մեռած է և տեղ ունի։ Գյուղ եկողները նրա մոտ են գիշերում։

Ահավասիկ գյուղի քահանան, տեր Պողոսը։ Փոքրահասակ մարդ. քիթը քիչ տափակած, աչքերը մեծ և պարապ։ Մորուքը նրա հասակի համար չափազանց երկար էր, և այդ պատճառով էլ գյուղի չահելները նրան անվանում են տեր Մորուք։ Խոսելու ժամանակ նա այդ մորուքը անդադար շոյում է, իսկ երբ հուզվում է, կրծոտում է նաև առատ բեղերը։ Բարի մարդ է, ոչխարի և հովվական շան տարօրինակ մի խառնուրդ։ Մազոտ և դանդաղ։

— Աչքիս վրա, գլխիս վրա, քահանայի տունը ամենքի տունն է,— ասաց նա Մարտիրոսին լսելուց հետո։— Միայն թե ներողամիտ կլինեք, շինական մարդ ենք, քաղաքի հարմարություններ չունենք, ինչ ունենք-չունենք հալալ սրտով ձեր տրամադրության տակն է... Դե, գնանք։

— Ես գնամ, հետո կգամ,— ասաց սլաքավարը և մեկնեց։

Քահանայի տունը եկեղեցու մոտ էր։ Պարզ գյուղական մի խրճիթ։ Առաջը մի քանի ծառեր։ Ներս մտնելու համար պետք էր գլուխ ծռելով մի քանի աստիճաններ վայր իջնել։ Մեծ սենյակը կես լուսավորված էր անկյունում դրված փոքրիկ նավթի լամպարով։ Խորքի դուռը բացվում էր գոմի վրա։ Հարդ, թրիք և մգլոտություն։

— Համեցեք...

Հերյանը գրավեց սենյակի միակ աթոռը։ Տեր Պողոսը կոշիկները հանեց և ծալապատիկ նստեց անկյունում։ Դուռը բացվեց և մի աղջիկ՝ ծանր սև մազերով, երկար հոնքերով, բորիկ ոտքերը գետնին շրմփացնելով, ամաչկոտ աչքերը վար կախած ներս եկավ տաք ջրով լցված ամանը ձեռքին։ Հերյանի առաջ չոքեց և ուզում էր նրա կոշիկները հանել։

— Չէ, քույրիկ ջան,— բողոքեց Հերյանը,— շատ և շատ շնորհակալ եմ, հիմա չէ, հետո կարող է... մի քիչ ջուր, խնդրում եմ...

Աղջիկը մնաց անորոշ, մինչև ականջները կարմրեց։

— Ճամփորդի ոտքերը լվանալը պապենական սովորություն է,— ասաց քահանան։— Լավ, Հայկանուշ, եթե պարոնը չի ուզում, նրան հանգիստ թող... Գնա խոհանոց և աստծու չմերժածը բեր տեսնենք....

Աղջիկը շտապ անհետացավ։

— Հանգուցյալ եղբորս աղջիկն է,— բացատրեց տեր Պողոսը։— Որբ է մնացել. հերը ընկավ ավստրիական ֆրոնտում, մերն էլ չդիմացավ այդ ցավին, մեռավ։ Պատերազմը ինչքան ասես տներ քանդեց...

Տերոդորմյան հանեց և ձեռքում խաղացրեց։

Ուտելու ժամանակ սենյակը կամաց-կամաց լցվեց այցելուներով։ Բարևում էին, բարի ախորժակ ցանկանում և գնում շարքով նստում պատի երկայնքին։ Հազիվ նստում էին, գոտու միջից դուրս էին հանում չիբուխները, փոքրիկ տոպրակի ծխախոտը ափի մեջ ճզմում և բթամատը անդադար շարժելով ծխում։

Հայկանուշը պնակները վերցրեց։ Քահանան խաչակնքեց, քթի տակ մի աղոթք մոմոաց, հառաչեց։

— Էդպես բաներ,— ասաց նա,— էդպես բաներ... Հո՛, հո՛, հո՛... էդպես բաներ...

Մեջքը տվեց պատին, մորուքը շոյեց և լռեց։

Ամենքը լուռ սպասում էին։

— Էս մեր պատվական հյուրը,— ասաց նա, Հերյանին մատնանշելով,— ծովային գործերով է զբաղվում։ Բաթումի ծովից մի նավ է տանում Սևան։

Ներկաների նայվածքները կուտակվեցին Հերյանի դեմքի վրա։

— Էնտեղի սրբերին սիրելի գործ է,— ասաց ներկաներից մեկը։

— Նայած,— պատասխանեց քահանան հեղինակավոր շեշտով,— նայած... Նավը, ինչպես պատմում է, թխթխկացող, փշտփշտացող մաշին ունի... գրքերից հայտնի է, սուրբերը աղմուկ չեն սիրում, աղմուկը սատանի համար է... Բարեպաշտ, սուրբ մարդիկ քաշվում են կղզի, աշխարհի դալմաղալից փախչելու համար... Աշխարհում էնքան աղմուկ, էնքան աղմուկ կա, որ աստված մարդկանց ձենը չի կարող լսել...

— Էդ մեկը ճիշտ է,— համաձայնվեցին հյուրերը։

Տեր Պողոսը գրպանից թուղթ և ծխախոտ հանեց, մի գլանակ ոլորեց և լռեց։

— Էսօրվա օրը մարդը մարդ չի, իմ արև...— ասաց անշարժ դեմ-

քով, շրթների ծայրին խոր գծեր սեղմած մի ծերունի։— Աստված էլ իր փեշակը դժվար է տանում։

— Ղալմաղալ երկրում, ղալմաղալ երկնքում. ո՞վ կարա ինչ լսել,— ավելացրեց մի ուրիշը։

Նստեցին։

Մոտի ախոռում տավարը սմբակները գետինն էր խփում։

— Էդպես բաներ... էդպես բաներ...

Տեր Պողոսը կուչ եկավ և մատները ման ածեց մորուքի երկայնքին։ Մատները բարձրացան մինչև ծնոտը, այնտեղ հաստ ու գեր միջատների նման մի վայրկյան կանգ առան, անհանգստացան և երբ պատրաստվում էին վայր իջնել, հանկարծ, շփոթվեցին... Դուռը ազմուկով բացվեց և Մարտիրոսը մի անծանոթ զինվորականի հետ ներս մտավ։

Բարևեցին, նստեցին։ Ամենքը ուշադրությամբ նայեցին զինվորականին։

Նա բարձրահասակ մի տղա էր. լայն ուսերով, լեցուն դեմքով, առողջ, կայտառ։ Կապտավուն սուր աչքեր ուներ և շեկ, խնամքով սանրված մազեր։

— Բարով, հազար բարով,— ասաց քահանան,— էդ մեր երիտասարդին առաջին անգամն եմ տեսնում...

Մարտիրոսը հարցաքննող աչքերով նայեց զինվորականին, հետո շվարած աչքերը այս ու այն կողմ դարձրեց և քաջություն առնելով, ասաց՝

— Ընկերը նոր է... Եկել է քաղաքից... Կոմիտեն նրան ուղարկել է պաշտոնով... այսինքն, վասն որո... ժողովրդի հարցերի մասին խոսելու... առհասարակ...

Զինվորականը ժպտաց։

Քահանան վատ նայողացումով լցվեց։ Ինքն էլ վախից և անորոշությունից մի ժպիտ ձևացրեց դեմքի վրա։

Հազաց։

Բոլոր ներկաները նույնպես հազացին։

Ամենքը մնացին սառած։

— Երկրացիներ,— լուրջ և բամբ ձայնով հայտարարեց նորեկը,— Ռազմա-հեղափոխական կոմիտեն, որը կազմվել է Ալիքանդրապոլում, ինձ ուղարկել է ձեր գյուղը, աշխատավոր գյուղացիներին ողջունելու և դեպքերի մասին նրանց տեղեկություններ տալու համար։

Խոր, մեռելային լռության մեջ լսում էին։

Զինվորականը շարունակեց՝

— Ռազմա-հեղափոխական կոմիտեն ներկայացնում է աշխատա-

վոր մասսաների կամքը... Ինչպես գիտեք, մեր ժողովուրդը հոգնել է անդադար տևող պատերազմներից, տիրող աղքատությունից, անոթությունից և որոշել է վերջ տալ անտանելի դրությանը։ ...Մայիսի մեկը եղավ վճռական օր... պրոլետարիատը ամեն տեղ ապստամբեց... Հենց այս րոպեիս, երբ խոսում եմ ձեզ հետ, երկրի տարբեր վայրերում՝ Ղարսում, Ղարաքիլիսայում, Սարիղամիշում, Նոր Բայազետում և ուրիշ վայրերում—կազմվել են նույնանման կոմիտեներ... Կոմիտեն ինձ ուղարկել է ձեզ մոտ, որպեսզի դուք էլ միանաք բանվորների և գյուղացիների շարժմանը և վերջ տաք այն խայտառակ դրությանը, որի անմեղ զոհերն եք...

Խոսում էր։ Տեղ-տեղ տաքանում, տեղ-տեղ կանգ առնում, որպեսզի ժամանակ տա մտածելու։ Նայում էր դեմքերին, տեսնելու համար, թե ինչ տպավորություն են թողնում իր ասածները։ Լսողների համար այդ ամենը նոր էր։

Երբ երիտասարդը վերջացրեց, բոլոր ներկաները նայեցին տեր Պողոսին։ Տեր Պողոսը կուչ եկավ, գլուխը թաղեց ուսերի մեջ, երկու ձեռքերով բռնեց մորուքի ծայրերը և, հանցանք գործած շնիկի նման, աչքերը հառեց Հերյանի վրա։

Հերյանը լցնում էր իր ծխամորճը, առանց աչ ոքի նայելու։

— Հիմա դե հանգամանքը էնպես է, որ,— ասաց Մարտիրոսը կմկմալով,— հանգամանքը նա է, որ ընկերը ասաց իր ասելիքը... Պարզ է, որ գրանք էդպես առած պետական գործեր են և շատ բարձր և շատ կարևոր...

Շփոթվեց։

— Լավ կլիներ,— ասաց զինվորականը նրա խոսքը կտրելով,— որ բոլորը արտահայտվեին...

Որ այդ ասաց, ամենքը թաքուն նայեցին։

— Դե, որ պետք է խոսել, խոսեք,— դիմեց շինականներից մեկը մյուսներին։

— Վարդան բիձա, դու ասա՛,— առաջարկեց մի ուրիշը։

Կնճիռներով լցված շրթունքները սեղմելով, Վարդան բիձան մտածեց, ապա խոր մի գաղափար արտահայտելու ձևով ասաց՝

— Եթե հարցը պետական հարց է, բարձր, ինչպես Մարտիրոսն է ասում, էն ժամանակ խոսքը պատկանում է մեր տերտերին։ Մենք ի՞նչ կարող ենք... Տերտերը ավետարան գիտի և էդ բաներից հասկանում է...

— Էդ մեկը ճիշտ է...

— Ըղորդ է, տերտերը գիտի...

Տերտերը վախեցած չորս կողմ նայեց և տասը մատներով մորուքը շոյեց։

— Տերտերը էստեղ գործ չունի,— բացականչեց պատգամավորը նեղացած ձայնով,— ձայնը պատկանում է աշխատավորներին, ժողովրդին...

— Աղասի,— դիմեց սլաքավարը անկյունում նստած մեկին,— Աղասի, դու ի՞նչ ես ասում...

— Ի՞նչ կարամ ասել, ախպեր ջան։ Ես ասում եմ, որ առանց եկեղեցու մենք ի՞նչ կարանք ասել։ Եթե էստեղ տերտեր ենք պահում, մի բանի համար ենք պահում, չէ՞... Թող ինքը ասի ինչ պետք է ասել, և մենք համաձայն ենք...

— Լավ ասացիր, Աղասի...

Գլխի շարժումով համաձայնության նշաններ արեցին։

Տերտերը աչքերը չլզեց և ամբողջ մարմնով երեր եկավ։

— Ես ծառա մարդ եմ,— ասաց նա վերջապես համարձակությունն առնելով։— Ամեն բան խալխից կախում ունի և մեր եկեղեցին ժողովրդի եկեղեցի է... Իհարկե, կան մեր մեծերը... որոշում առնելուց առաջ տեսնենք ինչ է ասում մեր սրբազան առաջնորդը... Ախր, վարդապետներ կան, էջմիածնա աթոռ կա... էդպես չի կարելի...

— Մենք մեկ մեկի չենք հասկանում,— նրա խոսքը կտրեց զինվորականը բարկացած շեշտով։— Ի՞նչ առաջնորդ, ի՞նչ բան... Ես եկել եմ Ռազմա-հեղափոխական կոմիտեի հրամանով որոշ դիրեկտիվներ հաղորդելու համար... Տեսնում եմ, այստեղ ավելորդ է այդ մասին վիճաբանելը... էգուց ընդհանուր միտինգ կանենք, պահանջում եմ, որ գյուղի աշխատավոր զանգվածը հավաքենք...

— Միտինգը ո՞րն է...

— Ժողով, հրապարակային ժողով...

— Հա, դե եթե ժողով է, թող ժողով լինի...

— Հարցը նրանում է,— ասաց Մարտիրոսը հաշտարար ներկայանալով,— որ պետք է հարցին նայել շահի տեսակետից։ Նախ և առաջ ջինականի շահը...

Կանգ առավ և ավելի հանաքով՝

— Եթե լավ մտածենք, կտեսնենք տեր օրհնած Ռուսաստանը ուզում է մեզ օգնի, ժողովրդի շահերը պաշտպանի, հողը գյուղացուն տա, իսկ ժողովուրդը չի կարողանում օգտվել էդ օգնությունից... Իսկ ինչի՞ համար ժողովուրդը չի կարողանում... հարցը դրանում է...

Գյուղացիները զարմացած նայեցին։

— Ընկեր Մարտիրոսի ասածը ճիշտ է,— միջամտեց զինվորակա-

նը,— եղբայրական կարմիր Ռուսաստանը պատրաստ է ամեն բանով օգնելու աշխատավոր հայ ժողովրդին... Հիմա դուք պետք է որոշեք...

Գյուղացիների աչքերը փայլփլեցին։

Ամենքը սկսեցին միասին խոսել։

***

Չնայած մեծ հոգնությանն, Հերյանը չկարողացավ լավ քնել։ Սիրտը կծկվում էր, միտքը շարշարվում։ Ինչպիսի անսպասելի դեպքեր...

Մոտը պառկած քահանան նույնպես չէր կարողանում քնել. անկողնի մեջ թավալ էր գալիս, մի վայրկյան խոմփում, ապա արթնանում, ախ քաշում։

— Տեր աստված,— ասում էր նա,— տեր աստված...

— Ի՞նչ է, տեր հայր, չե՞ս քնում...

— Քունս փախել է,— հառաչում էր քահանան։— Բայց ինձ մի նայիր, դու քնիր, բալա ջան, դու քնիր...

Ախոռում կովը անդադար շարժվում էր, գլուխը զարնում պատին։

Սենյակում օդ չկար։

Լույսը հազիվ բացվեց, Հերյանը անկողնից վեր թռավ, արագ հագնվեց և քահանայից հրաժեշտ առնելով մեկնեց։

— Աստված քեզ հետ,— ասաց քահանան։— Տեսնենք մեր գլխին ինչ օյին է գալու...

Դրսի զովը նրան ցնցեց։ Երեսը տվեց նոր արթնացող լույսերին և քայլեց։ Հորիզոնի վրա բոցավառ սնդիկ էր ման գալիս։ Բլուրների կատարները ճարճատում էին քամուց ծեծված խարույկների նման։ Մանր ու լայն խաղաղությունը գրկել ու նվաճել էր ամբողջ տեսարանը։ Գյուղը քնած էր։ Ճանապարհը մխրճվում էր չոր և մռայլ սարի կողերի մեջ։

Հերյանը առաջացավ լայն քայլերով, թևերը ճոճելով, աշխույժ։ Սիրեց այդ զովը, այդ առավոտը, այդ նոր և վիթխարի տեսարանը։

Նեղ կածանով վեր բարձրանալիս, խուլ քամու մի ալիք կպավ նրա երեսին և նա ցնցված կանգ առավ, թոքերի ամբողջ ուժով օդը ներս քաշեց։ Խոնավ և աղի օդը գրգռեց նրա լայն բացված ռունգները։ Նորից շնչեց։

Ծովի հոտ էր։

Ուսերը տրորեց, գլուխը թափահարեց, քայլեց։

Մտքի առաջից շարան-շարան ծանոթ պատկերներ անցան։ Աչքերը հառեց նրանց վրա և շտապեց։

Ծովը։

Հիշեց գիշերվա անստահմանության մեջ վեցերորդակով դիտված աստղերի հմայքը։ Ցրտից դողված այտերը ապտակող կոհակների զորեղ շունչը. արև և աղ։ Կայմերի սարսռումը, կատաղի հողմերից հրմշտկված նավի հանկարծակի տատանվելը, բարձր ալիքների փշրվելը առաջակայմի ոտքի մոտ, զատվող փայտերի ճարճատյունը, երբ ջրի մակերեսից վեր բարձրացած պտուտակը շրջում է պարապում, և նավը, քիթը վար կախած, մխրճվում էր անդունդ։ Այդ վայրկյաններին, նա, կամրջակի վրա կանգնած, գլխարկը մինչև հոնքերը խորթած և ձեռքերը գրպաններում, գիտում էր այդ տեսարանը և լայն բացված ոտքերի վրա երերում։

Չէ, ծովի հետ մտերմացած մարդը գժվար է համակերպում ցամաքի կյանքին։ Իրեն զգում է մշտնջենական տարագիր։ Մարմնի և հոգեկան ուժերի մեծ մասը մնում է թմրած, անգործածելի, անբավարարված։ Չէր հասկանում մարդկանց։ Այդ կռիվները, փոքրիկ շահերի շուրջը դարձող հսկայական այդ աղետները, այդ թափված արյունը և այդ ամեն ինչ լափող կրակը։

Չի հասկանում մարդկանց։

Ցամաք իջած օրից ի վեր նրա արածը ուրիշ բան չէր եղել, եթե ոչ վազել ծովի հետևից։ Ինչպես էլ լինի, որտեղ էլ լինի գտնել ծովը։ Նավարկել։ Միանալ ջրերի մենակության, չափվել տարերքի խոլության հետ, մոռանալ մարդկանց, նրանց ցնորքը, նրանց ունայնությունը, նրանց փոքրությունը։

Օդ, աղ։ Բաց տարածություններ։

Ահա այդ էր, որ նրան մղում էր քայլելու ամայի և անհյուրընկալ այս վայրերում. այդ էր, որ նրան բերել գցել էր այդպիսի տարօրինակ, խենթ ու ծիծաղելի ձեռնարկի մեջ։ Եվ բոլոր պատճառաբանությունները, որ նա հնարում էր, բոլոր ճառերը, որ ասում էր ինքն իրեն, միայն մի նպատակի համար էր՝ հասնել ծովին։

Չէր հասկանում ցամաքը։ Կարծր հողեր, քրտինք, արյուն, հուլզեր։ Ցամաքը նա միշտ էլ տեսել էր ծովից, իբրև հեռավոր փոփոգ, մարմնական գրգիռ, մերաժ։ Նա ճանաչում էր նրան կարճ կանգնումների ժամերին,— աղմկալի կապելաններով լցված արվարձաններ, բեռնակիր բանվորներով վիտացող քարափներ, լուսավորված սրճարաններ, դյուրին արկածներ, մեքենայական երաժշտություններ, ծիծաղ, օղի, կռիվ, հեշտ կանայք։ Անցողակի հանդիպումներ, ամուսնամերձներ, պատահական անկողիններ։ Կարևորը իր նավն էր և իր ծովը։ Մեկնելու պատրաստությունները, մարդկանց կարգապահությունը, ժամանակին տեղ

հասնելու և ածուխ ու նավթ խնայելու մտահոգությունը, քամիների, փոթորիկների միջից անվնաս անցնելու փափագը։

Քաղաքները և նրանց բաղմությունները մնում էին հեռվում։ Նրանք կորչում էին հորիզոնի եզև, մտնում անորոշ հիշողությունների շարքի մեջ, քողարկվում, մարում։ Տներ, փողոցներ, ծառուղիներ, քարափներ, լամպարների շարքեր, ինքնաշարժների վազք, բենզինի հոտ, ոստիկաններ, պոռնիկներ։ Այդ շենքերի կուտակումներից և աղմկալի զուգահեռությունից մարդ հեռանում էր առանց զղջալու։ Ընդհակառակը, սիրելի էր այն ժամը, երբ կամրջակի վրա կանգնած՝ հրաման էր տալիս պարանները թուլացնելու մասին։ Կարմիր մատանի հագած ծխնելույզը քուլա-քուլա ծուխ էր արձակում։ Սուլոցը՝ շոգի անձրևելով, բամբ ձայնով ոռնում էր։ Պտուտակը մետաղե շերեփով խառնում էր ջուրը, և նավը մեծ կենդանու նման սկսում էր տեղից շարժվել։ Նա իր մարմինը ողորկ և բարձր քսում էր պաշտպանության գերաններին, որոնք գանգատվելով ճռնչում էին, պարանները ընկնում էին ջուրը։ Նավը սուր քթով ծովը ակոսելով հեռանում էր առանց ետ նայելու։ Վերջին փարոսը վեր էր ցցում մենակության առաջին դրոշակը և բացը սկսում էր շարժել իր հսկայական բազուկները...

Իսկ հիմա ո՞ւր էր ինքը և ի՞նչ էր այս աշխարհը, որի վրայից ահա քայլում էր։

Արևը լքել էր հորիզոնը։

Գարնանային թեթև օդը՝ նա ևս տարագիր, թևերը բաց արած պլլվում էր երկրին, նրան հրավիրում էր գիրկը, շոյում, ոստոստալով անցնում բլուրից բլուր։ Երկիրը չէր պատասխանում նրա հրավերին։ Ջոր, կոշտ, անզգա՝ նա մնում էր անտարբեր, չեզոք և մռայլ...

Երկիրը քար էր։

Հերյանը քայլում էր ոտքերը շարշարելով, միտքը հեռուն, սիրտը ծանր։

Նա մտավ քաղաքի կողմնակի մի դատարկ փողոցից։

Ցածր, տանիքները տափակած տներ։ Փոշի։ Փակված դռներ, կուրացած պատուհաններ։ Ոչ մի բաց խանութ։ Մի՞թե այդքան կանուխ էր։ Չէ, կանուխ չէր։ Արևը երկնքի մեջտեղն էր։

Ուրե՞մն։

Փողոցում երկու երեխաներ էին խաղում։ Հերյանը որոշեց նրանցից իմանալ կայարանի ճանապարհը, բայց նրանց մոտ չհասած՝ մի պառավ կնոջ գլուխը դուրս եկավ կեռ։ բացված դռնից և բարկացած շեշտով նեբս կանչեց նրանց։

— Ի՞նչ է,— գոռաց կինը,— ուզում եք գուլլի տա՞կ մնալ...

Երեխաները ներս վազեցին և դուռը աղմուկով փակվեց։ Փողոցը աննավթ լամպերի նման մարեց։

Հերյանը ոչինչ չհասկացավ։ Քայլեց։

Այ քեզ բան... Սիրտը լցվեց վատ նախազգացումներով։ Չգիտեր, ո՞ր կողմը գնար։ Հանկարծ, կանգ առավ։ Պատուհանի հետևից դուրս նայող կնոջ գլուխ տեսավ։ Մոտեցավ, թմբկեց ապակու վրա։ Կինը վարագույրը վայր իջեցրեց և վախեցած անհետացավ։ Այդ վայրկյանին հեռվից հրացանի տրաքոցներ լսվեցին։

Հերյանը ականջ դրեց և մնաց անորոշ։

Մարդ չկար։ Կարծես քաղաքը դատարկված էր։

Տխրեց։ Քայլեց։

Սա ի՞նչ բան էր, ի՞նչ բան...

Հասավ փողոցի ծայրը, թեքվեց աջ, շարունակեց քայլել։ Ահավասիկ մի հրապարակ։ Զինվորների խմբեր։ Զինված քաղաքացիներ. մեծ մասամբ բանվորներ։ Կարմիր դրոշակներ։

Ամեն կողմից խուզարկիչ աչքերով նայեցին նրան։ Ուշադրություն չդարձրեց։ Անցավ։ Հաղիվ անցավ, հետևից մի ձայն լսեց, որ ասում էր՝

— Հե՛յ, քաղաքացի, ո՞ւր եք գնում...

Կանգ առավ։ Երկու զինվորներ մոտեցան։

— Կայարանն եմ փնտրում,— պատասխանեց Հերյանը,— նոր եմ եկել...

— Քաղաքում նոր եք և չեք իմանում որտե՞ղ է կայարանը...

— Երկնքից է ընկել,— հեգնելով ասաց թուխ և մազոտ մեկը։

— Խուզարկեք,— հրամայեց մի ուրիշը։

Խուզարկեցին։ Բարեբախտաբար, ատրճանակը թողել էր նավի վրա։

— Զենք չունի...

Հերյանը բացատրեց։ Վագոնները մնացել էին այնտեղ, դաշտում, և ինքը եկել էր մեքենավարի հետևից։

— Իսկ ինչո՞ւ համար եք ուզում կայարան գնալ,— կասկածելով հարցրեցին նրան։

— Դե, ասացի էլի. ուզում եմ իմանալ մաշինիստը գա՞լու է, թե ոչ...

Մի երիտասարդ սպա մոտեցավ, աչքերը մխրճեց նրա աչքերի մեջ, պրպտեց։ Հերյանը՝ քիչ շփոթված, նորից բացատրություններ տվեց։

— Կայարան գնալը միանգամայն ավելորդ է,— ասաց սպան վերից վար նրան չափելուց հետո։— Բանվորները հիմա շատ ավելի կարևոր գործով են զբաղված և չեմ կարծում ժամանակ ունենան... Ձեր

նավի մասին մտածելու։ Եթե կայարան գնաք, ձեզ ներս չեն թողնի առանց պրոպուսկի։

Կասկած հարուցողը նրա կարտուզն էր։ «Ինչ ուզում են մտածեն, կարտուզս չեմ հանի», որոշեց Հերյանը։ Քայլեց այն ճանապարհով, որ նրան ցույց տվեցին։ Հեռվից մեկը գալիս էր։ Հերյանը անտարբեր ձ!աացավ։

Ամեն տեղ, մանավանդ փողոցների անկյուններում, խումբ-խումբ զինվորներ էին կանգնած։ Ամեն տեղ կարմիր դրոշակներ էին կախված։ Հերյանը քայլում էր մտածկոտ, հետաքրքրությամբ աջ ու ձախ նայելով։ Մի քանի անգամ նրան կանգնեցրին և նորից հարցուփորձ արեցին։ Նա բացատրեց, որ գնում է կայարան, Ռազմա-հեղափոխական կոմիտեի դատաբը, կարևոր տեղեկություններ ստանալու համար։ Այդ բացատրությունը բավարար համարելով նրան թողնում էին, որ անցնի։

Կայարանի փոքրիկ շենքի առաջ ահագին բազմություն էր խռնված։ Բանվորներ, գյուղացիներ, զինվորականներ։

Կանգ առավ, նայեց։

Անշարժ և ուշադիր այդ ամբոխը նայում էր կայարանի դռան։ Երևի կարևոր բանի էին սպասում։ Ինքն էլ ոտքի մատների վրա բարձրացավ և գլուխների վրայից նայեց նույն ուղղությամբ։ Չէր ուզում հարցեր տալ։ Կարող էին կասկածել։

Հանկարծ ամբոխը շարժվեց։ Կողմնակի մի փողոցից երգի, աղմուկի, կեցցեների ձայներ թնդացին։

— Սրանք ովքե՞ր են,— հարցրեց նա մոտը կանգնած բանվորից, որը գլխարկը թափահարելով ուրախ կանչեր էր արձակում։

— Մեզ նոր միացող զինվորներ են,— պատասխանեց բանվորը և շարունակեց գոռալ։

— Վե՛րջ դաշնակներին... Կեցցե՛ կոմունիզմը...

— Հուռռա՜, հուռռա՜...

Ցուցարարները՝ կարմիր դրոշակներ և հակակառավարական լոզունգներ կրող երկար կտավի կտորներ բռնած՝ մտան հրապարակ։

Ամբոխը ճեղքվեց, թույլ տվեց, որ նրանք անցնեն։ Աննկարագրելի խանդավառության ալիք բարձրացավ։ Նոր եկողներին շրջապատում էին, ողջունում, համբուրում։ Հեղափոխական երգեր էին երգում, կեցցեներ գոռում, աղմկում, փրփրում։

— Կեցցե՛ բանվորա-գյուղացիական իշխանությունը...

Երբ ոգևորության առաջին ալիքը անցավ, երիտասարդները մեկին բարձրացրին իրենց ուսերի վրա։ Երեսը կարմրած, մազերը շփոթված, նա բազուկն էր վեր կարկառեց և լռություն պահանջեց։

— Լռություն, լռություն,— գոռացին ամեն կողմից։

Երիտասարդը խոսեց տարած հաղթանակների մասին։ Աղրբեջանը արդեն կարմիր էր։ Վրաստանը պատրաստվում էր տապալելու մենշևիկների զազրելի լուծը։ Այդ ավազակների և մարդասպանների մահը մոտեցել է։ Երևանի կառավարությունը փորձում է դեռ դիմանալ, բայց նրանց վերջին ժամն էլ հնչել է. գրեթե ամբողջ բանակը անցել է աշխատավոր ժողովրդի կողմը... Հայաստանի սովետականացման հարցը ժամերի հարց է... Զրահավորված գնացքը, որ այժմ կայարանում կանգնած է, պատրաստ է ոչնչացնելու կապիտալիզմի վերջին լակեյներին... Ամբողջ երկաթուղագիծը հեղափոխականների ձեռքում է... Հեռագրով վերջնագիր է տրված Երևանի կառավարության, եթե իշխանությունը մեզ չհանձնեն, այն ժամանակ, ընկերներ..

Անկարելի եղավ լսել վերջին բառերը։ Ահագին հուռռաները ծածկեցին հոետորի ձայնը, որը բռունցքները թափահարելով, աչքերը դուրս գցած աշխատում էր տիրապետել ամբոխի վրա։

Սկսեցին երգել Ինտերնացիոնալը։

— Դեպի զորանոց, ընկերներ... Դեպի կազակի պոստը... Կեցցե՛ Կարմիր բանակը...

Դրոշակները վեր բարձրացան։

Երգող երիտասարդ տղաները և աղջիկները շարժվեցին առաջ։ Բազմությունը հոսեց նրանց հետևից։

Հերյանը նայում էր հուզված և շվարած։ Գույնը սփրթնել էր, ձեռքերը դողում էին։ Ի՞նչ պիտի աներ հիմա։ Աջ և ձախ քայլեց, նայեց դեմքերին, ականջ դրեց խոսակցություններին և վերհիշեց նավը։

Նավը։

Հրապարակի ծայրում մի խումբ մարդիկ էին կանգնած։ Բնազդաբար զգաց նրանց հոգեկան վիճակը։ Մոտեցավ կանգնեց նրանց կողքին։ Նայեց նրանց աչքերի մեջ...

Հերյանը ուզեց մի բան ասել, շրթունքները դողացին և ոչինչ չկարողացավ ասել։

Այդ վայրկյանին, հրապարակի բազմությունը իրար անցավ։

Ահագին աղմուկ բարձրացավ։ Շատերը շտապ մտնում էին կայարանից ներս, ուրիշները դուրս էին գալիս և իրենց շուրջը հավաքված խմբերի հետ զայրացած խոսում։

Ի՞նչ էր պատահել։

Հանկարծ կայարանի դուռը լայն բացվեց և բարձր, լայնուս, ծանրաքայլ մի մարդ դուրս եկավ։ Ամբոխը շարժվեց նրա կողմը։ Հերյանը

ինքն էլ մոտեցավ։ Մարդը բարձրացավ ներսից բերված մի աթոռի վրա, ձեռքը վեր առավ, լռություն պահանջեց։

Հրապարակը սառեց անշարժ և ուշադիր։

— Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր,— ասաց մարդը,— պետք է պատրաստվել վերջին վճռական պայքարի համար... Քիչ առաջ հեռախոսով կապվեցինք Երևանի կառավարության հետ... Եվրոպայի և Ամերիկայի կապիտալիստներին ծախված այդ սրիկաները...

— Կորչի՛, կորչի՛...

— Ընկերներ, լսե՛ք, լսե՛ք...

Ամբոխը ալիք-ալիք շարժվեց։ Սկսեցին մեկ-մեկի հրմշտկել։ Ամեն մարդ ուզում էր առաջ անցնել ճառախոսին ավելի լավ լսելու համար։ Շատերը մագլցեցին պատուհանների և լամբարների վրա։

Ճառախոսը նորից ձեռքը թափահարեց լռություն պահանջելով։

— Ուշադրություն, ուշադրություն...

— Դուք պետք է իմանաք, շարունակեց մարդը,— որ Կարսի, Ղարաքիլիսայի բանակայինները մեզ հետ են... Հայ աշխատավոր մասսաները պահանջում են երկրի իշխանությունը... Դաշնակները դիկտատուրա են հռչակել... մաուզերիստները քայլում են մեր վրա...

— Կորչեն, կորչեն,— աղաղակեց ամբոխը։

— Ընկերներ, մեր զրահապատ գնացքը նրանց կընդունի ոնց որ հարկ է, հենց կես ճանապարհին...

— Կեցցե՛ զրահապատը, կեցցե՛...

— Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր, դա կլինի վերջին, վճռական կռիվը... Զինվեցեք և ցույց տվեք, որ պրոլետարիատի կամքը անխորտակելի է... Կեցցե՛ Հայկական Սովետական Հանրապետությունը... կեցցե՛ կոմունիզմը...

Ահագին ձայների դղրդյունը ցնցեց օդը։

Մի խումբ երիտասարդներ սկսեցին երգել.

Դա է վերջին կռիվը և պայքարը մեր մեծ...

— Զենք, զենք,— բացականչեցին ամեն կողմից։— Պետք է զինվել, պետք է զինվել...

Ժողովուրդը ռազմաշունչ երգեր երգելով, առաջացավ դեպի քաղաքի կենտրոնը։ Հերյանը չկարողացավ զսպել հետաքրքրությունը և գնաց նրանց հետևից։

Դռների և լուսամուտների առաջ ազգաբնակչությունը կանգնած նայում էր հուզումով և ոգևորությամբ։

Ողջունում էին փողոցում կանգնած զինվորներին։

— Կեցցե՛ Կարմիր բանակը...

Զինվորները ժպտում էին։

Երբեմն նայարանից վազելով երիտասարդներ էին գալիս և նոր ստացված տեղեկություններ հաղորդում։ Լուրերը անմիջապես բերնից բերան էին անցնում նոր ոգևորություն պատճառելով։

— Ընկերներ, Կարսի հեծելազորը միացել է բոլշևիկներին... Ամբոցները մեր ձեռքում են...

— Կեցցե՛ն, կեցցե՛ն...

Կարմիր դրոշակը ցցվում էր վեր։ Ոգևորությունը հասնում էր գագաթնակետին։

Ժամը հինգի մոտերը Աբուլյանի կողմից թնդանոթի ձայն լսվեց։

Մեկը մյուսի հետևից որոտացող հարվածները ցնցեցին քաղաքը։ Ցուցարարները մտահոգված կանգ առան և լայն բացված աչքերով նայեցին դեպի հեռուն։

— Մերոնք են,— ասաց Հերյանի մոտ կանգնած մեկը,— խփում են, հա...

Քիչ չանցած, թնդանոթների ձայները բազմապատկվեցին։ Տրաքտրաքեցին նաև գնդացիրները։

— Չէ, դա ուրիշ բան է,— ասաց մի ուրիշը։

Բազմությունը անհանգստացած այս ու այն կողմ շարժվեց։ Ձայները իջան, սկսեցին շշուկներով խոսել։

Հրաձգության ձայները ավելի և ավելի մոտեցան։

Զրահավորված գնացքը, ահագին աղմուկով, կրակելով ու սրընթաց, կայարանից անցավ և մեկնեց հակառակ ուղղությամբ։

Ամենքը նայեցին բերանը բաց։

Ռումբի մի դղրդոց ցնցեց քաղաքը։ Պայթեցնում էին կամուրջները։

Սկսել էր մթնել։ Հրաձգությունը շարունակվում էր։

Լուսաբացի մոտ փողեր հնչեցին։

Պատերի վրա հայտարարություններ կպցրին։ Ժողովրդական ապրստամբությունը ճնշված էր։ Հերյանը կարդաց և վազեց կայարան։ Ամբողջ երկրում պատերազմական դրություն էր հռչակված։ Պետք էր սակայն ամեն կերպով հասնել նավին։

— Պետք է սպասել,— ասացին նրան կայարանում։— Բանվորներից շատերը փախել են... կամուրջները քանդված են...

Բողոքեց, զայրացավ։ Եվ երբ պատրաստվում էր ոտքով ճանապարհ ընկնել, իմացավ, որ զինվորական հատուկ մի գնացք մեկնելու է ճիշտ այն կողմերը, ուր սպասում էր նավը։ Վազեց պաշար գնելու... վերադարձավ այն վայրկյանին, երբ գնացքը շարժվում էր։

Երբ հեռվից նավը տեսավ, սիրտը սկսեց ուժգին բաբախել։ Չլինի խեղճ արարածը վնասված է, չլինի՞ վիրավորված է...

Բարեբախտաբար, գնացքը արագ չէր վազում։ Ցատկեց վայր։ Մի վայրկյան շշկլվեց, ապա ոտքի կանգնելով՝ գլխարկը հանեց, մեկնող զինվորներին ողջերթ մաղթեց և վազեց դեպի նավը։

«Ատլանտիսը» կանգնած էր իր տեղում։ Անշարժ, ուրվականացած, անիրական և որբ։ Հանկարծակի ցցված տեսիլքի նման լուռ, մենակ, մեծդի։ Մեկը մյուսին գամված տախտակների կույտի միջից նա քիթը վեր էր ցցել համառ և գոռոզ, մինչ կայմը սլանում էր վեր անթելի կայանի նման՝ կարծես խորացած այս երկնքի խորհրդավոր ալիքները որսալու համար։

Հերյանը նայեց հափշտակված աչքերով։

Զինվորական գնացքի վերջին աղմուկը կորավ հեռվում։

Ամեն ինչ թաղվեց խոր լռության մեջ։

Մնաց մենակ։ Ինքը և նավը։ Ինքը, նավը և այն քանդվածությունը, որն անվանում էին ստանցիա։ Կես փլած ողորմելի մի շենք, փշրված մի պատուհան, ծռված մի տանիք, որի ծակերից երկինք էր թափվում։

Ամեն տեղից առուտ, անսահման երկինք էր թափվում։

Լավ, հիմա ի՞նչ անել...

Դաշտի վրա փոքրիկ դեղին քամի էր խաղում։ Հողերին կպչելով պտույտ էր գալիս. մի վայրկյան կանգ առնում, ապա թույլ շունչը ժողովելով վազում էր, և գրոհ տալիս չնչին, նիհար, թոքախտավոր բույսերի վրա։ Բույսերը ամբողջ մարմնով սարսռում էին, թեքվում մի կողմ և ճամփա տալիս գարնան այդ գինովության։

Լավ. հիմա ի՞նչ անել...

Աչքերը լողացին այդ խաղաղության մեջ։ Ամեն ինչ ծանրացավ և սպասեց։ Երկիրը, լեռները, երկինքը, նավը, ինքը։ Կարծես անհայտ մի զորություն պատրաստվում էր աշխարհ իջնել։ Պատրաստվո՞ւմ... Ո՞վ գիտե, գուցե նրա մեծդի ոտքերը արդեն քայլում էին հորիզոնի ետևը ընկած երկրներում... գուցեև... նա հանկարծ պիտի ցցվի հեռուն, ցատկի լեռների վրայից և մտնի դաշտ։ Եվ երբ նա գա, դաշտերը պիտի սարսռեն, երկինքը պիտի գոռա և աղմկի... լեռները պիտի ցնցվեն։

Լավ...

Թփերի միջից մի խայտիտ դուրս թռավ, արագ սուրաց դեպի կայմը, նստեց նրա կատարին, թևերը թափ տվեց և, գլուխը դեսուդեն ծռելով, նայեց։

Հերյանը ժպտաց։ Ուրախացավ։

Զարմանալի էր, որ սլաքավարն այնտեղ չէր։

Պառկելու տրամադրություն չուներ։ Թափառեց, սուլեց, քիչ հաց կերավ, երկարեց մարմինը գետնի վրա և երբ պատրաստվում էր աչքերը հանձնել երկնքին... զարմացած՝ գլուխը վեր բարձրացրեց։ Հեռվից, պոչը շարժելով և փորը ելեր ածելով մոտենում էր հաստ մոխրագույն նախրապահ մի շուն։

Հերյանը նստեց։

Շունը իջնում էր փլած շենքի հողակույտի վրայից, լեզուն դուրս գցած, գլուխը վար՝ գետինը հոտոտելով։ Կենդանին, առանց վարանելու մոտեցավ Հերյանի ոտքերին, կանգնեց, պոչը շարժեց, ուրախ-ուրախ կաղկանձեց, գլուխը դրեց գետնի վրա, աչքերը բարեկամական հառեց նրան և այդպես մնաց։

Հովվի շուն էր։ Հաստագլուխ, շինականի փափախին նմանող այն մազոտ շներից մեկը՝ կես գայլ, կես ոչխար, որոնցով լեցուն են գյուղերը և արոտավայրերը։

Ո՞րտեղից էր գալիս այդ շունը։ Հերյանը ձեռքը դրեց ճակատին, ամեն կողմ նայեց և մարդ չտեսավ։ Ոտքի կանգնեց, քայլեց։ Շունը հետևեց նրան։— Նստեց։ Շունը գետին փռվեց և, աչքերը կես փակած, հավատարիմ աչքերով լրտեսեց նրա ամեն մի շարժումը։

— Լավ,— մտածեց Հերյանը — բարեկամ հոգի է, եկել է բաժանելու իմ մենակությունը։— Մի կտոր հաց նետեց շանը։ Շոյեց նրան։

— Անունդ ի՞նչ է, լեզու չունես որ ասես,— դիմեց կենդանուն։— Արի մի նոր անուն... Գտա... Ռիմ, Ռիմ...

Շունը կարծես հասկացավ, պոչը ուրախ-ուրախ շարժեց և համաձայնվեց։

Այդպես, ժամերով մնացին միասին։ Կամաց-կամաց երեկոն նվաճեց դաշտանկարը։ Նավի կայմի գլխից բուների շողոքորթ կախվեց, ծխնելույզի մետաղե մասերը հրդեհվեցին, պղինձները կայծկլտացին և, մինչ լեռները աստիճանաբար սավառնում էին երկնքի անկյունում, պատանի մի լուսին դուրս ցցեց ոսկեզօծված արծաթե սկավառակը և կաթնագույն քողերով ծածկեց դաշտը։

Հերյանը փայտերի վրայից մագլցեց խուցը մտնելու համար։ Ռիմը, վարը կանգնած, սկսեց անհանգստանալ։ Աչ ու ձախ վազեց, գետինը քերեց և պաղատելով նայեց Հերյանին։ Հերյանը նորից վայր իջավ և գնեց շանը վեր բարձրանալ։

— Այստեղ կարող ես պառկել,— ասաց կամաչակը ցույց տալով։

Ռիմը պառկեց, մի քանի վայրկյան մնաց անշարժ, ապա վեր թռավ տեղից և սկսեց ոռնալ լուսնի դեմ։

Նավը շարունակում էր նավարկել անապատում։

Գնացքի երկաթե կմախքները ծանր զնգում էին լուության տակ փակված ամայի տարածություններում։ Շոգեմեքենան՝ պատահական վառելանյութով լցված, քիմիական գործարանի ծխնելույզի նման կրակի և ծխի առատ և թունավոր քուլաներ էր դուրս փսխում, բոլորովին աննպատակ կերպով սուլում, խորխորատների վրայից նետած կամուրջները շարշարելով կոխկրտում, շունչը կտրած փորձում վազել ու մեկ էլ՝ փրփշտում, շոգիները հառաչանքների ձևով դուրս թափում և ուժասպառ կանգ առնում։ Հերյանը կատաղած խածնում էր ծխամորճի ծայրը, վհատած նայվածքը տարածում շրջապատող ամայության վրա, ձեռքերը գրպանները խոթում, սպասում։ Ռիմը տեղից վեր էր թռնում, ուշադիր աչքերով աջ ու ձախ նայում, հաշում մարմինը շարշարող միջատների կամ այն ուրվականների դեմ, որոնք ոտքի էին կանգնում իր երևակայության մեջ։

— Սատանի պոչ... հազար կրակ... նորից շունչը մեռավ,— մռմռում էր Հերյանը շոգեմեքենային նայելով։

Ավելորդ էր իջնել և մարդկանց հետ վեճի բռնվել։ Շոգեմեքենան կանգ էր առնում, որովհետև վառելիք չկար, ջուր չկար, կամ որովհետև հանդիպող մարդատարը ուշացել էր և պետք էր սպասել որ գա, անցնի։

Վերջին դեպքերից հետո ամեն ինչ կսզմալուծվել էր։ Երկաթուղին անցել էր զինվորականների ձեռքը և ծառայում էր գլխավորաբար պատերազմական կարիքների համար։

Վագոններից վառոդի, դեղորայքի, արյունի հոտ էր գալիս։ Ռիմը փոշտակում էր, երբ զինվորական գնացքներ էին անցնում։ Պատուհանների հետևից նայում էին սփրթնած, դեղնած, հիվանդություններից կերված դեմքեր։ Նրանք ներս ընկած, ջերմոտ աչքերով զարմացած նայում էին և չորացած շրթները սեղմելով ժպտում։ Ներսը լցված էր ամեն տեղ պառկած վիրավորներով. ցեխով և արյունով ծածկված, հառաչող, մղկտող, իրենց կես փակած աչքերը արդեն ուրիշ աշխարհի վրա հառած զինվորներով։

Երբեմն այդ գնացքները կանգ էին առնում։ Զինվորներից մի քանիսը վայր էին իջնում և բահը ձեռին՝ երկաթուղագծից մի քանի քայլ հեռուն փոս էին փորում։ Ուրիշ զինվորներ իջեցնում էին դիակները և շարքով շարում, որպեսզի այդ ճեղքերը՝ ծռված բերաններ, փլված դեմքեր, բորիկ և սևացած ոտքեր՝ մի անգամ ևս հաղորդվեն պարապ երկնքի և ամայի ու մռայլ դաշտի հետ։

Բահերը կոփում էին կարծր հողերը և մղկտալով զրնգում։ Եվ երկար ժամանակ հետո, երբ ամեն ինչ վերջանում էր, այդ ձայները չէին ուզում լքել վայրը, մնում էին կպած մարդկանց և իրերին, ինչպես կպած մնում է յոդոֆորմի հոտը։

Ռիմը պոչը սեղմում էր, ականջները վեր բարձրացնում և խուլ հաչոցներով գանգատվում։

Հայտնի չէր, երբ կհասնեին Երևան։

Ոչինչ հայտնի չէր։

Անվերջանալի տարածություն, անվերջանալի լռություն։

Դանդաղ և անորոշ շարժումներով մարդիկ, որոնք մեքենաբար գնում գալիս էին, հառաչում, հայհոյում ու նայում՝ այդ տարածությունով և այդ լռությունով լցված աչքերով։

Ճամփորդության ամենանշանակալից դեպքը եղավ Ալեքսանդրապոլում երեք օր մնալը։ Կարծես քաղաքը կրկես էր եկել. Բազմությունը լցվում էր նավի շուրջը և հետաքրքրված նայում։ Ռիմը, որին ստիպված եղան շղթայել, երկու օր անդադար հաչելուց հետո, վերջապես, հանգըստացավ և լռեց։ Մեքենավարը և նրա օգնականները բոֆետից չէին հեռանում և սրան նրան նավի մասին երևակայական պատմություններ պատմելով անվերջ հյուրասիրվում էին։ Հերյանը՝ մտազբաղ և հանգիսավոր հետաքրքրվողներին բացատրություններ էր տալիս։ Դուրս եկավ, որ ոմանք իրենց կյանքում ոչ նավ էին տեսել և ոչ էլ ծով։

— Ո՞նց թե, նավ չե՞ք տեսել,— զարմանում էր Հերյանը և մանրամասնությունների մեջ մտնում։

Այդ բազմությունը գալիս էր հեռավոր թաղերից և նույնիսկ շրջակա գյուղերից։ Գալիս կանգնում էին և ժամերով բերանը բաց նայում։ Հետո, ամեն ինչ, ըստ կովկասահայերի սովորության, վերջանում էր երգով և պարով։

Մեկնելու օրը ամենքը խմած էին։

Քաղաքի լոթիները, կառքով փողոցներում պտտելուց հետո, գինու շշեր իրենց ձեռքին՝ համախմբվել էին կայարանում։ Եկել էին նաև տղա և աղջիկ սկաուտները, դպրոցական աշակերտները և շատ քաղաքացիներ։

Չտեսնված մի բազմություն։ Կեցցեներ, հուռռաներ։

Հերյանը այնքան հուզված էր, որ քիչ մնաց ճառ ասեր։ Ճառ չասաց, այլ կարտուզը քաշեց մինչև հոնքերը և քարացած աչ ու ձախ նայեց։ Չէր ուզում հուզումը ցույց տալ։

Վերջապես մեկնեցին։ Առաջացան կրիայի քայլերով։ Անդադար

կանգ էին առնում։ Կանգ էին առնում պարապ կայարանների առաջ, որոնց ծառայողները փախել էին։ Իջնում էին, մեկ-մեկի երեսին նայում, նայում երկնքին, նայում հեռուներին և մնում անորոշ։ Չգիտեին ինչ անել. մեկնե՞լ, մնա՞լ։ Եթե մեկնեին՝ կարող էին հանդիպել հակառակ կողմից եկող գնացքներին. եթե մնային--ինչքա՛ս ժամանակ պետք էր սպասել։

Որոշում էին սպասել։

Հերյանը նախընտրում էր սպասել, նավը չվտանգելու համար։

Երբեմն բարկանում էր։

— Երբ կանգ եք առնում, եղբայր սիրելի, չի՞ կարելի այդ զահրումարը մի քիչ կամաց կանգնեցնել։... տորմոզը սեղմեք... Հազար անգամ ասել եմ... Վագոնները մեկ մեկի եք խփում, փայտերը ճարճատում են, նավը երերում է... Ի՞նչ է, անպատճառ ուզում եք գլխիս օլին սարքել, նավը վա՞յր գցել...

— Ինչ հնարավոր է անում ենք... Դաս առնելու կարիք չունենք... տասնութ տարի է պոեզդ եմ քշում և բան չի պատահել...

Վիճաբանում էին, գոռում, կանչում, աշխարհը անիծում։

Սպասում էին, ձանձրանում, օդի խմում, մասալ պատմում։

Երբեմն ամայի այդ տեղերից շինականներ էին անցնում։ Ցուպը ձեռքին, տոպրակը ուսին, երեսները հողի գույն։ Գնում էին երկաթուղագծի ուղղությամբ, դանդաղ և մտածկոտ քայլերով։ Իրենց դեմ անակնկալ կերպով ցցվող նավի սառաջ կանգ էին առնում, ձեռքերը ծալում կրծքի դեմ տված ցուպի ծայրին և ապշած նայում։

— Հը, ապեր, ո՞ւր էդպես,— հարցնում էր Հերյանը ուրախ։

Գյուղացին աչքերը բացխփելով նայում էր նրան և ձեռքերը բաց անում։

— Չենք իմանում ուր ենք գնում... Մեր զավակն ենք փնտրում... Ի՞նչ ասեմ, սալդատ տարին... խաբար չկա... Ասում են կարող է հիվանդանոցում լինի, մեր գեղացի Մաթոսի տղան էնտեղ է. Գյումրի... գնում ենք Գյումրի...

— Վատ ժամանակներ են, ապեր, վատ ժամանակներ...

— Հա էլի, ընկել ենք կրակի մեջ...

— Գյուղում գործերը ինչպե՞ս են...

— Ի՞նչ ես ուզում... վատ է...

Ապա, նման հողերին, փոշուն, տավարին նրանք հեռանում էին մեջքը ծռած, ոտքերը քարշ տալով և ընկնում անապատի դատարկության և երկնքի հսկայության նետած ուղկանի մեջ։

...Երեկոյան դեմ, մինչ դաշտի վրա սառը և փոքրիկ քամի էր ման գալիս, մարդիկ մացառով կրակ էին վառել։ Ջորացած բույսերը արագ ճարճատում էին և քամին ուրախ ձեռքերով հնձում էր վեր բարձրացող բոցերը։ Ամենքը բոլորվել էին կրակի շուրջը։ Լուռ, մտածկոտ սպասում էին։ Մեկ էլ, Ռիմը, որ հանգիստ պառկած էր, վեր թռավ, անհանգստացավ և սկսեց հաչել։ Նայեցին։ Հեռվից երկու ստվերներ էին առաջանում։

— Ինչպես երևում է, այդ շինականները ուշացել են,— ասաց մեքենավար Սերգոն։— Մինչև գյուղը հասնեն...

— Առջևից քայլողը երեխա է և մյուսի ձեռքը նրա ուսին է... Երևի կույր է,— ասաց նրա օգնականը լավ նայելուց հետո։

— Այս կողմն են գալիս, երևի կրակը տեսել են,— նկատեց Հերյանը։

Քիչ հետո ստվերները մոտեցան։ Ռիմը վազեց, փորձեց հարձակվել եկվորների վրա, բայց գոռացին և ետ կանչեցին նրան։

— Ադա, չասե՞ս աշուղ է,— բացականչեց Սերգոն։— Կրծքին սազ ունի կախած... Համեցե՛ք, համեցե՛ք, բարով հազար բարի...

— Աստծո բարին ամենքին,— ողջունեց կույրը կրակից քիչ հեռու կանգնելով։

— Էդ ո՞ր սարերից, ո՞ր չոլերից...

— Գեղից։ Շուտ ենք դուրս եկել,— ասաց երեխան,— ամա ճանապարհից շեղվեցինք...

— Աշակերտս նոր է,— բացատրեց կույրը։— Էս կողմերը լավ չի ճանաչում և իզուր էսքան քայլեցինք... Ասում եմ իզուր,— ավելացրեց ժպտալով։— Բայց աշխարհում իզուր բան չկա. վերից նայող աչքերը մեզ տանում են այնտեղ, ուր պետք է... հիմա ուրախ ենք, որ հանդիպել ենք ձեզ նման ազնիվ մարդկանց։ Ողջ մնաք, բարի ժողովուրդ...

Երկու մեռած աչքեր քամիներից կեղևի նման չորացած և արևից թանագունած դեմքի վրա։ Կանգ առած և անորոշության մատնված մի երիտասարդություն, շեկ բեղեր և ոլոր մորուք։ Նուրբ, գրեթե կանացի բերան։ Կարճահասակ, նիհար։ Մաշված գյուղացու շուխա, ոտքին տրեխներ, գլխին առատ մի փափախ, որի բրդե ծայրերը ընկնում էին մինչև հոնքերը։

Աշակերտը միամիտ սև աչքերով տասը-տասներկու տարեկան մի տղա էր։ Նույնպես շուխա և փափախ հագին։ Փափախը չափազանց մեծ էր և սրածայր, փլած մի եկեղեցու գմբեթի նման։ Կլոր, բիծերով ծած-

կրված դեմքը ծանր այդ փափախի տակ գրեթե կորչում էր. երևում էին լավ գծված շրթները և փայլփլող աչքերը։

Երկուսն էլ պպզած արեցին կրակի առաջ և իրենց ձեռքերը տաքացրին։

— Է՜, աչուղ ախպեր, ձեզ համար էլ ժամանակները նպաստավոր չեն,— ասաց Սերգոն, ոտքերը երկարելով գետնի վրա։

— Ճիշտ է,— պատասխանեց կույրը,— մենք եռգող, խաղ ասող մարդ ենք, իսկ երգը խաղաղություն է սիրում և ուրախ ժամանակներ... Երգը բույսի նման է, ծնվում է հողերի լռությունից։

Խոսելու ժամանակ դեմքը վեր էր բարձրացնում և ձայնը ուժեղացնում, կարծես զրուցում էր երկնքի հետ։ Ու նրա ասածները վերջնական, համոզման շեշտ ունեին, այն շեշտը, որ գալիս էր ներշնչումից և խոր հավատից։

— Էն գյուղում, որտեղից գալիս եք, իսկի երգելու առիթ չեղա՞վ,— հարցրեց Հերյանը։

— Ո՞նց թե... առանց երգելու ոնց կարելի է... Երգեցինք... ուր գնում ենք, երգում ենք։ Ծառայում ենք ժողովրդին, նաև մեր սրբություններին... Ճիշտ է, աշխարհը տակնուվրա է... ամեն տեղ շատ ցավ կա, շատ լաց... Մարդ չի հասկանում պատճառը. էդքան ցավ, էդքան թշվառություն...

Գլուխը կախեց և լռեց։

— Երևի էդպես է գրված ճակատագրի գրքում,— ասաց կես լուրջ, կես կատակով բանվորներից մեկը։

— Էդպես է գրված և ուրիշ տեսակ էլ է գրված,— կտրուկ և անմիջապես պատասխանեց աչուղը։— Գրվածը գրված է, ամա մարդ պիտի կարենա ընտրել։ Գրքերը լեցուն են բառերով, լավ բառերով և վատ բառերով, բայց երեխան, որ լավ կարդալ չգիտի, շփոթվում է, միտքը մնում է առանց լույսի։ Հարցը նրանում է, որ մարդիկ լավ կարդալ չգիտեն...

— Բան ասացիր,— հեգնեց բանվորը։

— Նրա ասածի մեջ շատ ճշմարտություն կա,— միջամտեց Հերյանը, աչուղին քաջալերելու համար։— Ամեն մարդ կարդացած գրքով է երդում, և կարծում է, որ ճշմարտությունը հենց էնտեղ է որ կա։ Եվ որովհետև մարդիկ զանազան գրքեր են կարդում՝ մեկ մեկի չեն հասկանում, վիճում են, կռվում, պատերազմում...

— Էն, ինչ հրամանքդ ասաց, շատ ճիշտ է. մարդիկ գիրը զանազանել չգիտեն։ Մեր վարպետները միշտ ասել են, ճշմարիտ գիրքը էն գիրքն է, որի ասածը կարելի է երգել, նրա համար, որ էդ գրքերի բառերը սբր-

տից են գալիս և կրակի նման դաղում են... Ուրեմն, ճշմարիտ երգ է և բոց, իսկ մնացածը ճշմարիտ չի...

— Հասկացանք, աշուղ ջան, հասկացանք,— կատակեց Սերգոն,— դրանով ուզում ես արդարացնել փեշակդ... Դուրս է գալիս, որ առանց երգի աշխարհել չի կարող պատվել...

Ամենքը ծիծաղեցին։

— Մենք մեզ պաշտպանելու պատճառ չունենք,— պատասխանեց կույրը։— Ազատ կամքով ընդունել ենք մեր դժվարին փեշակը, խալխին և աստծուն ծառայելու համար։ Երբ մեր տոպրակում մի կտոր չոր հաց կա, մենք երջանիկ ենք և եռդում ենք, մեզանից չի, այլ վերևից է... Չէ, մենք մեզ պաշտպանելու պատճառ չունենք...

— Մի՛ նեղանա,— հանգստացրեց նրան Հերյանը։— Կատակի համար էր ասում։

— Մենք չենք նեղանում, իսկ հրամանքդ լավ մարդ է երևում... ո՞վ է ձեր հրամանքը...

— Իսկի չես կարող պատկերացնել,— ասաց Սերգոն։— Ծովի մարդ է, նավ քշող... Վագոնների վրա մի նավ բարձած տանում է... Սևանա լճի վրա ման ածելու...

— Հալա-հալա,— բոցականչեց կույրը։— Էդպես բան չէի իմացել... Համա չեմ զարմանում, կյանքը նաղլ է և ամեն ինչ կարող է պատահի... Ցավում եմ, որ աստված ինձ աչքեր չի տվել...

— Իսկ ծովը գիտե՞ս,— հարցրեց Հերյանը։

— Աշուղ մարդը ամեն ինչ գիտի։ Ճիշտ է, կոպերիս վրայից ծովի քամի չի անցել, ամա երգերում լսել եմ, և կարող եմ ասել՝ երգերով տեսել եմ...

— Դե, մեր երկրում ծով չկա,— ասաց բանվորներից մեկը,— միայն լեռներ, բարձրություններ և երկինք...

Երեկոն դանդաղելով թափվում էր դաշտի վրա։

Արագածի կողմից եկող ամպերը ծածկում էին հորիզոնի մի մասը, վարագուրում մայր մտնող արևի թողած լուսավորությունը և արագացնում մութը։ Դաշտը արագ կերպով լայնանում էր, խորանում և, կրակի մոտ նստած մարդկանց շուրջը գիծ քաշելով՝ նրանց կուտակում իր անհունության եզերքում։

— Այդ մեկը դժբախտաբար, ճիշտ է,— հառաչելով համաձայնվեց Հերյանը։— Չեմ հասկանում ինչո՞ւ համար մերոնք ծովից խույս են տվել... Եկել են մինչև ծովեզրյա բարձրությունները և այնտեղ կանգ առել։ Ուղղակի զարմանալի է...

— Տեսնենք մեր աշուղը դրան ի՞նչ կասի...

— Հրամանքդ կատակ է անում,— պատասխանեց աշուղը ժպիտը շրթներին։— Մենք ոնց իմանանք ինչ էին մտածում մեր թագավորները և մեծամեծները... Մեր երկիրը սուրբ է, իսկ ծովը սուրբ չի... սուրբ հոգին էնտեղ բնակություն չի կարող ճարել... Լա՞վ եմ ասում...

— Ասա, ասա...

— Կներեք...

— Ներված ես, ասա...

— Հարցը նրանում է, որ ծովը քամի է, փոթորիկ է, խորություն է և, մանավանդ, մշտական փոփոխություն... Շարժուն անհանգիստ տեղում չի կարելի սրբատեղի շինել և էդ ասածով էլ աստծո կամոք չի... Ասեմ՝ հասկացեք... Էստեղ էս մեր սուրբ երկրում,— նա այդ ասաց ձեռքերը չորս կողմ տարածելով — ամեն մի բուռ հողում մի լույս է ճառագայթում... եթե մարդ կարողանա փորել դաշտերը և փորել լեռները՝ տակից դուրս կգան լույսերով լցված տարածություններ... Եվ եթե մարդ ձեռքը կպցնի էդ հողերին, քարերին, սարերին և բլրանց կողերին՝ ձեռքի վրայից բոցեր կվազեն, որ չեն էրի այլ կմտնեն մարմնի ներսը և սրտից եկող երգի նման կտրորեն... Մենք գիտենք. մենք քայլել ենք մեր երկրի բոլոր վայրերում... թեպետ մեր կուրության պատճառով չենք տեսել, բայց մեր ականջներով լսել ենք բոլոր ձենները, հայոց աշխարհի բոլոր տեղերից... Ուզում եմ ասել, որ ծովի ձենները հակառակ են Ավետարանին, նրանք լեցուն են բարկությունով... էնքան անհանգիստ են, որ մարդկանց հառաչանքները չեն լսում և հենց էդ պատճառով էլ մեր լուսահոգի պապերը, որ սուրբ և իմաստուն մարդիկ էին, հասել են բարձրություններին, բայց դեպի ծով չեն իջել...

Հերյանը հետաքրքրությունով լսում էր այդ ինքնատիպ բացատրությունները։ Մյուսների համար ճառը խրթին էր և անհասկանալի։

— Դա էլ տեսակետ է,— ասաց Սերգոն։— Ախպեր, այսօր Կարլ Մարքսի և տնտեսականի մասին են խոսում, իսկ մեր աշուղը հոգու և կրակի մասին է ճառում...

— Ով ինչ կարող է, այն է ասում,— ժպտալով պատասխանեց աշուղը։

— Վարպետ,— ասաց աշակերտը աշուղի փեշից քաշելով,— գիշեր է, ո՞նց պիտի շարունակենք ճանապարհը...

— Ի՞նչ է,— բողոքեց Հերյանը։— Ուշ ժամին ո՞ւր պիտի գնաք։ Ամենամոտ գյուղը առնվազն երեսուն վերստ հեռու է և դաշտը լեցուն է բորենիներով և ուրիշ գազաններով։

— Եթե էդպես է, գիշերը կմնանք այստեղ,— որոշեց կույրը,—

մանավանդ որ, օդում խոնավություն է ման գալիս... եղանակը կարող է փոխվել։

Ամենքը հոտոտեցին օդը և զննեցին երկինքը։

— Չեմ կարծում, որ այս գիշեր եղանակը փոխվի.— ասաց Հերյանը։— Ճիշտ է, ամպեր կան, բայց հյուսիսային քամին նրանց քշում տանում է։ Եթե քամին մեղմանա, վաղը անպատճառ անձրև կիջնի։

— Էդ վատ կլինի... վաղը պիտի մեկնենք,— նկատեց մեքենավարը։

— Ի՞նչ է, վախենում ես մաշինը հալվի՞...

— Չէ, էնպես էլի...

Ծիծաղեցին։

— Հիմա ժամանակն է մի քիչ բան ուտելու,— ասաց մեքենավարը։— Վարպետ աշուղի հետ մեր համեստ հացը կբաժանենք, եթե սիրտը կամի, մի բան էլ մեզ համար կերգի։

— Աչքիս վրա, խալխի ծառան եմ,— համեստ շեշտով համաձայնվեց աշուղը։

Քիչ հետո, երբ կրակի լույսով ամենքը ուտում էին, երկնքի ծայրին, լեռների հետևից խուլ որոտի ձայներ լսվեցին։

— Երկնքի ոգիները արթնացել են,— բարձր մտածեց աշուղը,— վախենում եմ էս կողմերը գան։

— Չեմ կարծում,— հանգստացրեց նրան Հերյանը,— համենայն դեպս հեռու են, մինչև մեզ հասնեն, բավական ժամանակ է պետք...

— Էդպես է էլի, մեր անուշ երկրի գլխին միշտ էլ մի բան է ման գալիս...

— Համեցեք... էս կտորը վարպետին...

Լուռ կերան։

Հացը ծամեցին մտածկոտ բերաններով։ Լությունը, դաշտը, գիշերը կուտակվեցին նրանց աչքերի մեջ, կպան հացին, որ ուտում էին, մտան նրանց սրտերից ներս։

Գինի ածեցին։

— Ստեփան,— դիմեց մեքենավարը իր օգնականին,— մի լավ կենաց ասա։

Ստեփանը գինու բաժակը բարձրացրեց և ասաց՝

— Խմենք նրանց կենացը, ովքեր իրենց գաղափարի երիտասարդ նժույգի վրա՝ համառ քշում են, իրենց կուրծքը քամուն ու մրրիկին տալով, և երբ հարկ է այդ գաղափարի համար զոհվել, նրանք իրենց հոգին քաջաբար վեր են նետում, ինչպես ուրախության և ոգևորության ժամանակ մարդ գլխարկը...

— Մաշալլա՜, լավ ասացիր...

— Ձեր կենացը, ողջ մնաք...

Հեռուն մի լույս մանեկավ, մարեց, և քիչ սպասելուց հետո, աղաղակեց։

Սերգոն ասաց՝

— Էս էլ խմենք էն մարդու կենացը, որ գիշեր ցերեկ քայլում է, սար ու ձոր անցնում, հեռավոր ճամփաներ կտրում, փնտրելով իր սրտի հրաշավոր գյուլը և, երբ վերջապես գտնում է՝ չի քաղում՝ ծաղկի կոթին մղկտանք չպատճառելու համար...

— Օրհնյալ լինես — բացականչեց կույրը,— մեծ բան ասացիր...

Մի քանի աստղեր ներս մտան երկինք։ Մենակյաց մի լույս անհանգստացավ և ամբողջ մարմնով սարսռեց։ Խարույկի բոցերը մի վայրկյան ցիրուցան եղան և նորից միացան։

Կույրը գլուխը վեր բարձրացրեց, պարապ աչքերով նայեց երկնքին։

— Քամին մոտենում է...

— Դեռ հեռու է,— ասաց Հերյանը։

— Գինի ածեք...

— Ես էլ ուզում եմ մի բան ասեմ,— նորից ասաց Հերյանը։

— Ասա, նավապետ, ասա...

— Տղերք ջան, այս էլ խմենք այն մարդու կենացը, որի սրտում աշխարհը ծաղկել է խիտ և հրաշալի պարտեզի նման և երբ թեթև քամին նրան տրորում է՝ պարտեզը խշխշալով օրորվում է, խարշափում և գեղեցիկ երգի վերածվում... Խմենք մեր պատվական հյուրի, վարպետ աշուղի կենացը...

Բաժակները մեկ-մեկի զարկեցին։

— Շնորհակալ եմ,— պատասխանեց աշուղը, սազը վերցնելով։— Էդպիսի կենացին երգով չուղարկեմ...

Բայց հազիվ սազը զնգզնգացրել էր, երկինքը որոտաց, մի մեծ քամի խարույկի կրակները ցրեց և գիշերը բարկացած հսկայի նման թավալ եկավ դաշտի վրա։

Աշուղը մնաց բերանը բաց։

Մենակյաց բույսը թափահարեց տերևները, ծռվեց և, գլուխը բոցերին իջեցնելով վառվեց։

Գիշերը բնակվեց հանկարծ արթնացած ստվերներով և որոտներով։

Անձրևի մեծ կաթիլներ վայր ընկան։

— Այդպես է, էլի,— հառաչեց Ստեփանը։— Հայ երգը ժամանակ չի գտնում հնչելու։

Ամենքը փախան մի տեղ պատսպարվելու։

Երբ հաջորդ օրը ճանապարհ ընկան, հեղեղային անձրևը դեռ մըրճահարում էր երկինքը։

Սաստիկ քամի էր, մրրիկ։

Ապրանքատար գնացքը առաջանում էր դանդաղ, անդադար սուլելով փակված և բարկացած երկնքի դեմ։ Ճանապարհը ծռելու ժամանակ նավը ցնցվում էր և նրան շրջապատող գերանները և տախտակները ճարճատում էին։ Հազար աղբյուրներից թափվող այդ ջուրը ծեծում էր նրա կամրջակը, սելավի նման ներս խուժում, տեղ-տեղ լճակներ կազմում, որ քամին քիչ հետո շառաչելով ավլում էր, ալիքի պես վեր բարձրանում, մտրակում, կոփում, վեր ժայթքեցնում։

Հերյանը՝ մտահոգ և ցնցված ինչպես մեծ փոթորիկների օրերին, կանգնել էր հրամանատարական կամրջակի վրա, աչքերը հառել այդ հսկայական տեսարանին և մնացել հափշտակված։

Նավը նավարկում էր մրրիկներով ծեծված իսկական ծովում։

Այդ պատրանքը ուժեղանում էր մանավանդ այն պատճառով, որ շրջակա տեսարանը բոլորովին փակված էր։ Երկու քայլ այն կողմ ոչինչ չէր երևում։

Երբեմն հակառակ կողմ փչող քամու ալիքը նրա ականջների մոտ հնչեցնում էր շոգեմեքենայի հուսահատ և զիլ սուլոցը։ Քամու մղկտոցին խառնված այդ ձայնը Հերյանի գլխում կրկնապատկվում, մեծանում, խորանում էր։ Եվ այդ վայրկյաններին նա իրեն տեսնում էր փոթորկած ծովի վրա։ Լսում էր մեծ նավերի իրար պատասխանող բամբ ռոնոցները։ Նախազգում էր վտանգը։

Ո՞ւր է ղեկավարը, ո՞ւր են օգնական նավապետները, ո՞ւր են նավաստիները... Շտապ կամրջակից վայր էր սահում, գլուխը քամուն և անձրևին դեմ տված մագլցում սանդուղների վրայից, զննում թոկերը, նայում թե պատուհանները լավ փակված են, ապա՝ մինչև ոսկորները թրջված, կուրացած նորից բարձրանում էր վեր և հուզված դիտում։

Ուրիշ մի աշխարհ էր։

Անապատը, ամայությունը և լռությունը անհետացել էին։ Երկինքը առատ ձեռքերով դուրս էր թափում իր թաքնված ձայները։ Ջրերը տրորում էին հողերի կմախքները, թմբկում, աղմկում և վեր թռչելով՝ երկրի խորդուբորդությունները և բլրակները ալիքների նման աջ ու ձախ նետում։

Մի տեղ ջուրը բարձրացել էր մինչև երկաթուղագծերի մակերեսը։ Շուրջը ամեն ինչ լճացել էր։

Հերյանը, երբ այդ տեսավ, սառած կանգ առավ։

Սի մեծ վախ կաշկանդեց նրա բոլոր շարժումները, նրա ձայնը, նրա միտքը։

Իսկական ջրհեղեղ էր։

Ի՞նչ պիտի լիներ, եթե ջրերը ավելի և ավելի բարձրանային և կրկնվեր այն, ինչ պատմության մեջ տեղի էր ունեցել մի քանի անգամ։

Եվ նրա երևակայության մեջ հեղեղը սաստկացավ, աշխարհը ծովի վերածվեց, նավը կամաց-կամաց վեր սահեց, լողաց ջրերի վրա, և ինքը և Ռիմը մնացին մենակ՝ մեծ և պարապ երկնքի առաջ։

Սիրտը սեղմվեց, գլուխը պտույտ եկավ։

Ձեռքը դրավ հոնքերի վրա և սրված, ջերմոտ նայվածքը պտույտ ածեց չորս կողմը։

Ոչինչ չէր երևում։ Ամեն ինչ խառնվել էր, բղավող և գոռացող քաոսի վերածվել։ Ուզեց գոռալ, կանչել, սակայն ձայնը չհպատակվեց իրեն։

Բնազդաբար նետվեց ղեկի անիվի վրա և, նրան երկու ձեռքերով ուժեղ սեղմած, սպասեց։

Այլևս բացահայտ էր, նավարկում էին անիրականում...

Վերջ երկրորդ մասի

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

1

Նավապետ Հերյանը մտավ մայրաքաղաք, ցեխով և փոշիով ծածկված, կարտուզը յուղոտված, կոշիկները մաշված, դեմքը ներշնչված, աչքերը վառ։

— Վերջապե՞ս,— բացականչեց նա,— վերջապես եկանք, հասանք տեղ։

Ծարավ աչքերով նայեց շուրջը։ Նույն կենտրոնական փողոցը, նույն մարդիկ՝ դանդաղաքայլ, մտազբաղ, մտահոգությունների և հույսերի մեջ կորած։

Ծանոթների չհանդիպեց։ Ման եկավ, առանց որ նկատեն իր ներկայությունը։ Նրան ոչ ոք չտեսավ, ոչ ոք չնշմարեց։

Ինչ փորձություններից էր անցել, ինչ դժվարություններ էր հաղթահարել։

Այդ մասին ոչ ոք ոչինչ չգիտեր։

Ձեռքերը խոթեց գրպանները, կուրծքը դուրս ցցեց և քայլեց քիչ երերալով, գոհ, մեծ և դժվարին աշխատությունից հետո հանգստացող մարդու ձևով։

Սպասում էր, որ մեկը մոտենա, ուրախություն հայտնի, հարցուփորձ անի։— «Ահ, կապիտան, վերջապես եկաք... լսեցինք, լսեցինք...»։ Մինչ, մարդիկ անցնում էին առանց նրան նայելու, առանց նրա ներկայությունը նշմարելու։

— Լավ։ Բող այդպես լինի...

Քաղաքը իսկի չէր փոխվել։

Շոգ էր։ Առատ արևը լույսի լավաներ էր վայր թափում։ Ամեն ինչ ծածկված էր յուղոտ և ծանր փոշիով։ Միջատներ։ Խիտ կանաչով ծանրացած պարտեզները հաստ շուքեր գրկած մրափում էին։ Մրափում էին՝ դրժ-

բակոտ տավարի նման մայթերի վրա երկարած գաղթականները։ Արևը եփում էր այդ աղքատությունը հասունացող պտուղի պես։

Շատ շոգ էր։

Հերյանը ճակատից վայր ընկնող քրտինքի կաթիլները սրբեց և շարունակեց նայել։ Բարձր կաղամախի վրայից թռչունի ծլվլոց լսվեց։ Կանգնեց և գլուխը վեր բարձրացրած նայեց։ Թռչունին չտեսավ։

Փողոցը գնալով դատարկվում էր։ Կեսօրից հետո ազգաբնակչությունը հանգստանում էր։ Արևի դեմ պաշտպանվելու համար պատուհանների փեղկերը ծածկում էին։ Քաղաքացիները՝ կես բացված դռան կամ կես բացված պատուհանի հետևից պառկած, քնում էին մինչև երեկո։ Երեկոյան փոքրիկ քամին, որին անվանում էին Լուսավորչի քամի, էջմիածնի կողմից վազելով գալիս էր և այրվող մատներով բռնած հովահար շարժում։

Օդը լցված էր բթամատի մեծությամբ ճանճերով և ասեղի պես ծակող միջատներով։

— Ջմռոանամ խինին ընդունել,— ասաց Հերյանը ինքն իրեն։

Մալարիան ցնցում էր մրրիկով թափահարվող ճյուղի նման։

— Տո, տես, մի նոր խանութ։— Կանգնեց ցուցափեղկի առաջ և ուրախացած նայեց։ Սպիտակեղեններ, շապիկներ, կոճակներ։ Ածելիներ, սանր, փողկապ։ Նայեց ներս։ Շատ հաստ և լեցուն մի մարդ՝ երեսը կարմրած, բերանը կես բաց, աթոռի վրա նստած քնում էր։

— Լավ է, խանութը բացվել է,— մտածեց Հերյանը։— Մի օր կգամ, ավելի ճիշտ, մի օր կգանք և գնումներ կանենք։

Այդ որ մտածեց, մարմնի վրայից սարսուռ անցավ։ Տեղից չկարողացավ շարժվել։ Տխրեց և մտահոգվեց։ Վաղուց է Ջվարթից լուր չուներ։

Ա՛հ, իզուր է այդ մասին մտածել։

Ուսերը թոթափեց և քայլեց։ Քայլեց և բարկացավ։ Բարկացավ իրեն դեմ և կանանց դեմ։

— Ջմռոանամ մի քիչ խինին ընդունել։

Մոտեցավ փողոցի անկյունի աղբյուրին, երեսը դրեց վազող սառը ջրի տակ և անհագ շրթներով խմեց։

Ինքն իրեն հետ խոսեց։

Կանանց մասին մտածելու ժամանակ չէր։ Դաշենկան էնպես, Ջվարթը էսպես։ Սատանան տանի, կարևորը նավն էր։ Դժվարին աշխատանքը դեռ նոր պիտի սկսվեր։ Պետք էր միջոցներ գտնել նավը վեր տանելու։ Բոլոր միջոցները ուսումնասիրել էր, ամեն ինչ ծրագրել էր։ Պա-

տերազմի պատճառով մեքենայի միջոցներ չկային։ Նախ՝ բանակը։ Լավ... Մնում էին եզները, իսկ եզներին պիտի փնտրել։ Անշուշտ, մարդ երբեմն էլ մտածում է սեփական երջանկության մասին... Չէ, նախ պետք էր փնտրել եզներին։

Հեռվից զինվորական թմբուկների ձայներ լսվեցին։ Նորից զինվորներ։

Ազգաբնակչությունը հանգստանում է, իսկ երկիրը դեռ պատերազմի մեջ է։

— Ջմոռանամ մի քիչ խինին ընդունել։

Պետք էր սպասել մինչև ժամը վեցը։ Ժամը վեցին կգնա Զվարթի բնակարանը, այցելություն կտա և ամեն ինչ կպարզի։ Ո՞վ է իմանում, գուցե սխալ ենթադրություններ է անում, գուցե հիվանդ էր, գուցե...

— Պապիրոս, պապիրոս...

Խուժան տղաները վաճառականությամբ են զբաղվում։ Դա առաջադիմություն է։

Անտանելի շոգ էր։ Կրակ և փոշի։ Ավելի վեր գնալու ուժ չուներ, իսկ ժամանակը պետք էր մի կերպ սպանել։ Թեքվեց, մտավ կողմնակի փողոցներից մեկը։ Ցած, պարսկական ոճով շինված կավե տներ։

Լռություն և արև։

Հավեր։ Թափառական շներ։ Ցնցոտիների մեջ փաթաթված գաղթականներ։

Հարյուր քայլ այն կողմ քաղաքը կանգ էր առնում։ Քարեր, ճաղատ գետին։ Մի լճակ։ Լպրծուն ջուր, փտած տերևներ, մամոռոտ, լորձունքոտ փայտի կտորներ, կանաչ ցեխ։ Դիմացի ափի աղքատիկ խոտի միջից մի հիմար գորտ փորձում էր երգել, աչքերը ուռեցնում էր, բերանը լայն բաց անում, ապա, միտքը փոխում, աչքերը և ձայնը կուլ տալիս և լռում։

Հերյանը կանգնեց և զարմանքով նայեց շուրջը։ Ինչո՞ւ էր եկել այս տեղերը։

Ի՞նչ կապ կար նրա և տխուր, հուսահատ այդ տեսարանի միջև։

Նա իրեն զգաց, ինչպես պատահում է բոլոր մարդկանց հետ, ժամանակավոր հյուր այս աշխարհում։ Միտքը, սիրտը, ամբողջ էությունը ետ քաշվեց և անջատված դիտեց։ Այս լերկ բլուրները, այս հրաշալի այգիները, պղպջակներով ծածկված այս մեռած ջուրը, այս գորտը, այս արևը թվացին ժամանակավոր, անիրական, ինչ-որ հանկարծակի բացված վարագույրի հետևից ցցված տեսարան, որը շուտով պիտի փոխվեր, անցներ, մտներ ուրիշ՝ անիրական իրականություններով բաղադրված մի աշխարհ։

Պատերազմ, արշավանք, ապստամբություն, հիվանդություններ։

Նա մտել էր թշնամիներով շրջապատված մի շրջան։ Վարագույրը բացվել էր՝ ստվերներով և քաոսով լցված մի բեմադրության վրա։

Եվ չնայած դրան, քաղաքացիները կեսօրից հետո հանգստանում էին։ Մարդիկ և կանայք՝ տակի շորերով, ստամոքսը լցված, կես մերկ, ուժասպառ պառկում էին շուքերի տակ և մրափում։ Չէին կարողանում ապրել, ինչպես գորտը չէր կարողանում երգել։ Կուլ էին տալիս իրենց աչքերը, իրենց ձայները և պատսպարվում սպասող մահվան աներևույթ կամարների տակ։

Այդպես, երկար ժամանակ, նա կորավ ինքն իր մեջ։

Մի ժամ հետո, մեծ պողոտայի զառիվերի վրա կանգնած, մեկ ոտքը առաջ գցած, մեկ ձեռքը մեջքին և մյուսով կարտուզը թափահարելով՝ նա ճառում էր զարմացած և թերահավատ աչքերով մարդկանց խմբի առաջ։

Ձայնը հնչում էր բարձր և աչքերը փայլփլում էին։

Նա խոսում էր ինքն իրեն վստահություն ներշնչելու համար, առանց մեծ ուշադրություն դարձնելու ունկնդիրների վրա։

— Այո, պետք է ընդունել,— ասում էր նա։ Ձեռնարկել էր դժվարին գործի։ Հանդիպել էր անասելի արգելքների, վատ սպասարկության, պաշտոնյաների անխղճության, ընդհանուր անկազմակերպության, բայց, դե, ի՞նչ արած, կյանքը կյանք է, չէ՞, պետք է ամեն ինչ հաղթահարել, չվհատել, լինել ուժեղ և առնական։

Նա այդ ասում էր ձեռքը օդում թափահարելով, հուզված, ձայնը լեցուն, որովհետև, իրականության մեջ նրա սիրտը անհանգիստ էր և միտքը վհատ։ Զվարթին այցելելու ժամը մոտենում էր, և վատ նախազգացումը պեղում էր նրա ներսը։

— Մանավանդ չվհատվել... Ամեն ինչ մանրամասն հաշվի առնել, նախօրոք ուսումնասիրել, նախատեսել բոլոր հնարավորությունները և բոլոր դժվարությունները... Այդ ոչ միայն մասնավոր ձեռնարկի, այլև ընդհանուր պետական կազմակերպության համար։ Պատմությունը մեր առաջ դրել է խնդիրներ, որ պետք է լուծենք պատվավոր կերպով։ Մենք պատասխանատու ենք մարդկության առաջ...

— Այդ էլ նոր բան,— առարկեց ճերմակող մազերով մի ոլոր մարդ,— այդ էլ նոր բան... Մինչև հիմա մեզ ասում էին, որ մարդկությունն է պատասխանատու մեր առաջ...

— Դա ջոկ հարց է,— կտրեց նրա խոսքը Հերյանը,— դա նայած ինչ անկյունից ես նայում և առհասարակ... Ծղբայր, ճշմարտությունը

այն է, որ դրանք պառավ կնոջ խոսքեր են և մեր ճակատագիրը որոշողը մենք ենք և ոչ թե մարդկությունը... Եվ ի՞նչ է մարդկություն ասվածը՝ վերացական գաղափար, չգո, երևակայական... Ասում ենք մարդկություն, ինչպես ասում ենք օդ, ջուր, հող, այնպես, ընդհանրապես... Խոսենք Ջանգու գետի մասին, խոսենք Ալաշկերտի հովտի մասին, Մշո դավառի մասին. դրանք դրական, իրական բաներ են... Մարդկություն, երկրագունդ, համաստեղություն՝ օդ, օդ, օդ...

Հանկարծ կանգ առավ.

— Ժամը քանի՞սն է...

— Չորս և կեսը...

— Էդ հարցերի մասին ուրիշ անգամ ավելի մանրամասն կխոսենք, հիմա պետք է վայր իջնեմ, կարևոր գործի համար...

— Մենք էլ այն կողմն ենք գնում...

Շարունակում էին խոսել, բայց Հերյանը նրանց չէր լսում։ Ուշքը և միտքը ուրիշ տեղ էին։ Երեսի գույնը քիչ նետել էր, խոսակիցների վրա նայում էր հեռավոր, բացակա աչքերով, կարծես նրանց երբեք չէր տեսել։

Երբ հասան Նազարյանց փողոցի անկյունը, նա մազերը կարգի բերեց, կարտուզը դրեց գլխին, և ասաց՝

— Դրանք կարևոր հարցեր են, պարոններ, դրանք շատ կարևոր հարցեր են... Կխոսենք... Ցը՜։

Բարձր և անտեղի կերպով ծիծաղեց։ Ուսերը ջղային կերպով վեր ու վար շարժեց և նորից ծիծաղեց։

— Պարոններ, ցը՜։

Կանգ առավ իր նախկին բնակարանի առաջ։ Մնաց անորոշ։ Փողոցի վրա նայող պատուհանի փեղկերը փակ էին։ Դրսի դուռը կես բաց էր։

Դուռը կամաց թրխկացրեց։ Ոչ մի պատասխան։

Հստակ կերպով լսում էր սրտի բաբախումը։

Սպասեց, ականջ դրեց. ներսից ոչ մի ձայն չէր լսվում։ Գուցե տանը չէի՞ն։ Նորից, այս անգամ ավելի ուժեղ թրխկացրեց։ Վարի շրթունքները դողացին։

— Ո՞վ է, հարցրեց ներսից մի ձայն։

— Ես եմ,— պատասխանեց Հերյանը։

— Ո՞վ...

Հազաց և ներս մտավ։

— Մայրիկ ջան, դո՞ւք եք... Սա ի՞նչ բան է. հին բարեկամներին չե՞ք ճանաչում... Նավապետ Հերյանն եմ, նավապետ Հերյանը,— գոռաց նա...

— Հա-ա... Դո՞ւք եք, պարոն Հերյան... Մի բոպե խնդրում եմ... մի բան հագնեմ...

Սպասեց բակում։

Ներսից փսփսացող ձայներ էին գալիս։ Այս ու այն կողմ էին վազում, շտկում, պատուհանների փեղկերը բաց անում։

Սպասումի այդ վայրկյանները նրան թվացին անտանելի կերպով երկար։ Ինչքան սպասում էր, այնքան ինքնավստահությունը չքանում էր։ Կարծես պիտի ներկայանար քննության, որի համար լավ պատրաստված չէր։

Վերջապես, դուռը բացվեց և նա տեսավ Զվարթի մոր ժպտուն և անակնկալի եկած դեմքը։ Նրանք բարևեցին մեկ մեկի չափազանցված ձայնով և չափազանցված ձևերով՝ ծածկելու համար իրենց ներքին շփոթությունը։

Մոտակա խոհանոցից եփվող ճաշի ուժգին հոտ էր գալիս։ Ոտաբոբիկ կանգնած կլոր աչքերով երկու երեխաներ զարմացած նայում էին նրան, ինչպես մի մարդու, որին առաջին անգամ են տեսնում։

Ներս մտնելիս նա նկատեց, որ կողքի սենյակը տանող դուռը շտապ փակվեց։ Նա հասկացավ։ Հեռացողը Զվարթն էր և գույնը նետեց։ Տիկինը Հերյանի աչքերին չհանդիպելու համար սկսեց արագ-արագ սեղանը կարգի բերել, աթոռները շարել, պնակները առանց նպատակի մեկ տեղից մյուսը տեղափոխել...

— Ներեցեք, պարոն Հերյան,— ասաց նա, ձայնին բնական և մտերիմ շեշտ տալով,— այս մեր տանը միշտ ամեն ինչ տակնուվրա է... Շոգը եկավ, և անպիտան ճանճերից ազատվելու համար ստիպված ենք պատուհանների փեղկերը փակ պահել... Լավ, լավ, լավ, վերջապես վերադարձաք, պարոն Հերյան... Հավատացեք, միշտ էլ ձեր մասին հարցնում էի, միշտ էլ հետաքրքրվում... Աթոռը... Համեցե՛ք, նստե՛ք, պարոն Հերյան... Նստեք, տեսնենք ի՞նչ կա. ինչ չկա... Շատ ուրախ եմ, որ նորից Երևանում եք... Երբեմն մտածում էի, մտածում էի, ի՞նչ եղավ այդ մարդը... Ուզում էի նույնիսկ գնալ պարոն Պերոնյանի մոտ, բայց պարոն Պերոնյանը, գիտեք չէ, մի օր էստեղ է, իսկ մյուս օրը ո՞վ է իմանում որտեղ... Լավ, լավ, լավ, ուրեմն էստեղ եք, մեր Երևանում... Շատ ուրախ եմ, հավատացեք, շա՜տ...

— Խոսում է խոսելու համար,— մտածեց Հերյանը,— ուզում է շփոթությունը ծածկել։

Նստեց, թևերը ծալեց կրծքի վրա, համբերությամբ լռեց։

— Ես էլ շատ ուրախ եմ, որ վերադարձել եմ և նորից ձեզ գտել, տիկին ջան,— ասաց նա հանգիստ ձայնով։— Ասել էի կվերադառնամ,

և, տեսնո՞ւմ եք, վերադարձա։ Խոսքի մարդ եմ, երբ մի բան ասում եմ...

Վերջին բառերի վրա առանձին շեշտ դրեց և ձայնը բարձրացրեց։

— Գիտեմ, գիտեմ,— պատասխանեց տիկինը գլուխը թափահարելով։— Այ տղերք,— գոռաց երեխաների վրա,— մի տեսեք սամովարը եռում է, թե չէ... Դե, ի՞նչ եք ուզում որ ասեմ,— շարունակեց նա գոգնոցի ծայրով ճակատը սրբելով,— դե, ի՞նչ եք ուզում որ ասեմ. ձեր մեկնելուց ի վեր էնքան բաներ տեսանք, էնքան բաներ... Գիտե՞ք, քիչ էր մնացել, որ Զվարթիս բանտարկեին...

— Բանտարկեի՞ն... Օրիորդ Զվարթին բանտարկեի՞ն... Եվ ինչո՞ւ...

Հերյանը ցնցվեց և մտահոգված նայեց։

— Ես ի՞նչ իմանամ... մեր կառավարությունը անտանելի է դարձել... չափից դուրս... Ձեր մեկնելուց հետո սենյակը վարձով էինք տվել մի երիտասարդ տղի, նորնախիջևանցի, մի լավ, շատ զարգացած, շատ մաքուր և գաղափարական երիտասարդ... Զվարթի հետ ընկերություն էր անում, օգնում էր նրա քննությունները պատրաստելու և, առհասարակ, էնպեսի տղա էր, էնպեսի տղա, որին ոչինչ չի կարելի ասել... Ապստամբությունից հետո նրան մեղադրեցին... որ բոլշևիկ է, պրոպագանդ է անում... Եկան էստեղ, խուզարկեցին և առան տարին... Եվ կարծես դա հերիք չէր, ուզում էին Զվարթին էլ տանեն... Իբր թե նա մասնակցել է գաղտնի ժողովների... Շատ վատ ժամեր անցկացրինք, պարոն Հերյան, շատ վատ ժամեր...

— Դեռ բանտո՞ւմ է։

— Այո, պատկերացրեք... խեղճ պարոն Սերոբվյանը դեռ բանտում է...

Լռեցին։

Տիկինը՝ մտազբաղ, աթոռի վրա երերաց։

— Ձեր ամուսինը ո՞նց է,— հարցրեց Հերյանը։

— Շնորհակալ եմ, ծերանում է... Մի կտոր այգի ունենք, գնացել է այնտեղ, տեսնելու, թե ինչ կարելի է անել...

— Իսկ... մյուսնե՞րը...

Հարցրեց և սաստիկ կարմրեց։

Ձեռքը դրեց մազերին և արագ-արագ շոյեց։ Նրա ծանր շնչառությունը լսելի եղավ ամբողջ սենյակում։

Գիտեր, որ Զվարթը տանն է, մյուս սենյակում։ Ինչո՞ւ չէր գալիս։ Ծածկվում էր, ուրեմն խիղճը հանգիստ չէր։

— Մյուսները... էսպես էնպես... Ահ... ներեք, գնամ սամովարը...

Կինը դուրս վազեց։

Հերյանը երկու ձեռքերով ծածկեց երեսը և տանջվեց։

— Պետք չէր գայի,— մտածեց,— պետք չէր գայի...— Վեր թռավ տեղից և ուզեց փախչել, բայց այդ վայրկյանին տիկինը նորից ներս մտավ և, տեսնելով, որ Հերյանը ուզում է մեկնել, բողոքեց.

— Այդ չէ, այդ չէ, պարոն Հերյան... էդպես, առանց մի բան խմելու չեք կարող մեկնել... Սամովարը եռալու վրա է և շուտով միասին մի բաժակ թեյ կխմենք... Նստեք, խնդրում եմ, նստեք...

Հերյանը մնաց անորոշության մատնված։

— Շնորհակալ եմ, տիկին ջան, շնորհակալ եմ,— ասաց Հերյանը կմկմալով։— Ուշ է և էնքան գործ կա... Դիտեք, նավը...

— Հա, նավը, բա ինչպե՞ս չէ, նավը,— բացականչեց տիկինը, վաղուց մոռացված մի բան հիշելու շեշտով։— Երեխաները էդ մասին խոսում էին... Երբ իմացանք, էնքան ուրախացանք, էնքան ուրախացանք... Հասաք ձեր նպատակին, երազը իրականացավ։

Այդ վայրկյանին հարևան սենյակի դուռը լայն բացվեց և Զվարթը ներս մտավ։

Մայրը, այդ անսպասելի ելույթից զարմացած, աչքերը լայն բացած նայեց և ձեռքի գդալը վայր ընկավ։

— Աղջի,— ասաց նա շփոթված ձայնով,— դու տա՞նն ես եղել, իսկ ես չէի իմանում... Կարծում էի դուրս ես գնացել...

Կեղծիք էր։

— Ձայներ էի լսում,— սառը պատասխանեց Զվարթը,— բայց չէի պատկերացնում, որ նավապետն է... Դե, դե, ասացեք ինչպե՞ս եք, պարոն Հերյան...

Մոտեցավ Նրան և ձեռքը սեղմեց։

Հերյանը ժպտաց մեղավոր ժպիտով և օրիորդի ձեռքը պինդ սեղմեց, ապա չիմացավ ինչ անել իր ձեռքերի հետ, դրեց գրպանը, դուրս հանեց, նորից դրեց գրպանը։

Նստեց, ծնկները սեղմեց և շիտակ նայեց Զվարթի աչքերի մեջ.

Առաջին տպավորությունից նա հասկացավ, որ Զվարթը տարօրինակ կերպով փոխվել էր։ Մեծացել էր, հասունացել։ Կորցրել էր դեմքի միամիտ, երեխայական արտահայտությունը և թարմությունը։ Երկար, գեղեցիկ մազերը կտրել էր։ Ճակատի վրա թեթև գիծ էր գոյացել, նայվածքը խստացել էր։ Այո, այլևս այն աչքերը չէին, այլ խորացած, ուշադիր, ծակող և ֆոսֆորե բիբերով աչքեր էին։ Տարբեր մի Զվարթ էր, բայց, տեր աստված, դեռ ինչքան գեղեցիկ, ինչքան գեղեցիկ, ինչքան գեղեցիկ...

Նստել էր, պարզ, լուրջ, առանց կանացի կեղծիքի։ Լուսավորված։

Հերյանը զգաց, որ Զվարթը դիտում է իրեն, ինչպես դիտում են մեկին, որի մասին երկար պատմություններ են լսել։

Անմիջապես սկսեց քաղաքականության մասին խոսել։

— Ինչպես նկատած կլինեք,— ասաց նա վստահ, համոզիչ և վրճռական շեշտով,— ձեր մեկնելուց հետո այստեղ ամեն ինչ հիմնովին փոխվեց։ Հայ աշխատավոր մասսաները գտնվում են անտանելի դրության մեջ և այս վիճակը երկար չի կարող տևել...

Հերյանը զարմացած նայեց նրան. ի՞նչ է, ուզում էր քննել իր քաղաքական համոզումները։ Մայրը այդ զարմանքը հասկացավ և թևերը ուժասպառ բարձրացրեց։

— Ահ, պարոն Հերյան,— բացականչեց նա,— էս ջահելները խոսելու ուրիշ բան չունեն։ Առավոտից մինչև երեկո էդ է, քաղաքականություն ու քաղաքականություն... Անվերջ վիճաբանություններ, կռիվներ, արյունի պղտորում...

— Մայրիկ, այլևս երեխաներ չենք,— պատասխանեց Զվարթը,— և ժամանակն է, որ մեր արածին գիտակցենք։ Կյանքը պրոբլեմներ է դնում, պետք է լուծել... մենք ամենքս պատասխանատու ենք...

— Ան-շո՞ւշտ,— ասաց Հերյանը բառերը քիչ երկարացնելով,— ժամանակները վատ են, և մենք ամենքս նավարկում ենք, այդպես ասած, փոթորկված ծովերում...

Զվարթը, երբ լսեց վաղուց իրեն ծանոթ «փոթորկված ծովերում» բացատրությունը, ուզեց ժպտալ, բայց չժպտաց, այլ ընդհակառակը, ավելի լրջացավ...

— Ուզում եմ ասել, ժամանակները խառն են,— ուղղեց Հերյանը,— բայց էնքան էլ հեշտ չէ կյանքի պրոբլեմները լուծել, ինչպես շատերը մտածում են։ Հարցը նրանում է, որ իրականությունը մի բան է և վերացական տեսությունները ուրիշ բան...

— Այո,— ասաց Զվարթը նրա խոսքը կտրելով և տաքացած շեշտով,— այո, բայց այդ չի նշանակում, որ պետք չէ ունենալ որոշ աշխարհայացք։ Գիտական տվյալների, պատմական փաստերի, անհերքելի թվերի և ճշմարտությունների վրա հիմնված մի աշխարհայացք։ Ընդունեցեք, որ առանց դրան չի կարելի լուսավորել մարդկանց, մղել նրանց պայքարի, ստեղծել և կազմակերպել մի կատարյալ ընկերություն։ Տիրող դասակարգը ամեն բան անում է տգիտությունը խորացնելու համար, որպեսզի կարողանա անպատիժ կերպով շահագործել աշխատավոր մասսաներին... Մենք պետք չէ թողնենք, որ այդպես շարունակվի...

— Այդ ամենը կարող է և ճիշտ լինել,— պատասխանեց Հերյանը,— եթե մենք ապրեինք բնականոն ժամանակներում... Ընկերային հարցերի

մասին կարելի է խոսել հանգիստ ժամանակներում, երբ այդ ընկերությունը դրված է հաստատուն հիմքերի վրա, երբ ազգային կյանք կա, երբ պետությունը անկաշկանդ է և արտաքին մտահոգություններից ազատ... Մինչդեռ իրականության մեջ, մենք լողում ենք մթությունների լցված քաոսում։ Մեր ֆիզիկական գոյությունը վտանգված է... Մենք անդադրում պատերազմի մեջ ենք... Այս պայմաններում ծիծաղելի է խոսել գիտական տվյալների մասին... Հավատացեք, ծիծաղելի է և վտանգավոր...

Հերյանը վերագտել էր ինքնավստահությունը։

Նա նայում էր Զվարթի աչքերի մեջ լուրջ և լայն այն նայվածքով, որը տեսնում է ավելի, քան առարկան... ընդգրկում է հեռուն, թափանցում մտքի և սրտի խորքը։

— Ծիծաղելի է և վտանգավոր...— կրկնեց նա մեքենաբար։

Կրկնեց և այդ վայրկյանին հստակ կերպով նորից տեսավ Զվարթին։ Ահ, այն նույն Զվարթը չէր, որի դիմագծերը նա պահել էր հուզումով, պայծառացած իր երևակայության մեջ։ Ո՞ւր էր քնքուշ և թավշյա նրա նայվածքը, ո՞ւր էր նրա շրթունքների շուրջը ընկնող անմեղ ժպիտը, բոցավառ այտերը և այն զմայլելի, թրթռացող ձայնը, որ ապրել էր նրա հետ քաղցր արձագանքի նման։ Նրա առաջ նստած էր մի հեռավոր հիշատակ, մի ուրիշը, որ նմանվում էր նրան, բայց նա չէր։ Նա ընդունել էր շարժուձևեր, որ իրենը չէին, նա խոր համոզումով կրկնում էր իրեն անծանոթ գաղափարներ, որ ոչինչ չէին ասում իրեն՝ Հերյանի հոգուն, և, ահռեսարակ, իրեն թվում էր, որ նրա ամբողջ կեցվածքը՝ քիչ թափթփված, քիչ առնականացած, պարզ արտաքին հագուստ էր, որի տակ թաքնված էր թույլ և անմեղ մի արարած։

Այդ տեսավ և սիրտը սեղմվեց։ Խղճաց իրեն, խղճաց նրան։ Բողոքի մի ուժեղ ալիք խեղդեց կոկորդը։

— Դա մարդասպանություն է,— կրկնեց նա։

Զվարթը զարմանքով նայեց նրան, և կանացի բնազդով անմիջապես հասկացավ նրա հոգեկան ապրումները։ Թողեց որ խոսի։

— Չեմ կարող համաձայնվել և ոչ մի վայրկյան այն մարդկանց հետ,— շարունակեց Հերյանը,— որոնք հանդգնում են այդպիսի պատասխանատվություններ տակ քնկնել .. Սոսկալի պատասխանատվություններ... Ընդունում եմ, որ մեր ազգային ճակատագիրը գտնվում է միայակ և անպատասխանատու մարդկանց ձեռքում... Մեզ պակասում են խորիմաստ և հանճարեղ պետական գործիչներ... որոնք գերի չլինեն ստորադասության զգացումի ձեռքում... ընդունակ լինեն ստեղծագործ թռիչքի... իսկ ինչ են Երևանի նախարարները... ողորմելի վարժապետներ...

Զվարթը լսում էր աչքերը վայր առած, գրեթե անտարբեր։

Երբ Հերյանը վերջացրեց, նա մի ծխախոտ վառեց, ոտքը ոտքի վրա գցեց և սառը ու հանգիստ ձայնով ասաց՝

— Դուք ձեր համոզումները ունեք, պարոն Հերյան... Ավելորդ է վիճել։ Իմ համոզումները բոլորովին տարբեր են և ես ձեզ պես չեմ մտածում... Ցավում եմ ասել՝ մենք իրար չենք հասկանում...

Այդ խոսքերը դանակի հարվածի նման խայթեցին Հերյանի սիրտը։

— Փաստերն առկա են,— ասաց նա ձեռքերը ծնկների վրա դնելով։

Խոր և անհարմար լռությունը լցրեց սենյակը։

Քաղաքականություն խոսելու պատրվակի տակ ամեն ինչ ասված էր։ Կասկած չկա, մտածեց Հերյանը, սիրում է ուրիշին...

Մայրը եռացող ինքնաեռը երկու ձեռքերով բռնած ներս մտավ, դրեց սեղանի վրա և, ստեղծված դրությունը ըմբռնելով, ուզեց սառը կոտրել։

— Ես էդ վիճաբանությունները,— ասաց նա,— իսկի չեմ սիրում... Հավատացեք, էլ հոգնեցի... Ես բոլորովին համաձայն եմ պարոն Հերյանի հետ. էդ բոլոր նորությունները գլուխս չեն մտնում և իսկի լավ բան չեմ տեսնում... Որ ասում եմ, Զվարթս նեղանում է։ Իմ կարծիքով ջահել մի աղջիկ էդ բաներով պետք չէ զբաղվի... Ի՞նչ ասեմ, չեմ սիրում...

Հերյանը նայեց ժամացույցին և ոտքի ելավ։

— Ինձ կներեք,— ասաց նա քիչ դողացող ձայնով,— ինձ կներեք... Կարևոր ժամադրություն ունեմ և անպայման պետք է գնամ։ Մի ուրիշ անգամ կգամ և ձեր հյուրասիրությունը կվայելեմ...

— Արդեն ամեն ինչ պատրաստ է,— բողոքեց մայրը։

— Չէ, չէ, տիկին ջան, անպայման պետք է գնամ...

— Դե որ էդպես է, պարոն Հերյան, չեմ ուզում պնդել, բայց նորից եկեք... Մեր դուռը ձեր առաջ միշտ բաց է... Օտարական խոմ չեք... Ամուսինս միշտ ձեր մասին է խոսում, միշտ նավն է հարցնում...

— Շատ շնորհակալ եմ, անպայման կգամ... Ի՞նչ խոսք այդ մասին...

— Ուրեմն, մենք դեռևս առիթ կունենանք ձեզ հետ այդ հարցերի մասին խոսելու,— ասաց Զվարթը ձեռքը երկարելով։

Դուրս եկավ արագ քայլերով, առանց ոչ ոքի նայելու։

Կրծքի տակ, սիրտը վիրավորված գառնուկի նման թպրտում էր, գլուխը պտույտ էր գալիս։ Եթե կարողանար պիտի բղավեր, կանչեր, խենթի նման վազեր...

Հազիվ մի քանի քայլ էր արել, հանկարծ իր նախկին սենյակի պատուհանը լայն բացվեց։ Զվարթը գլուխը դուրս հանեց և՝

— Պարոն Հերյան, պարոն Հերյան,— կանչեց իր հին անուշ ձայնով։

Հերյանը կանգ առավ։

— Դուք ինձ վրա բարկացած չե՞ք, այնպես չէ՞... Հավատացեք, ես չէի ուզում ձեզ վիրավորել... Գիտեք, կյանքը... գաղափարները փոխվում են...

Նրա աչքերը փայլեցին, և նա նորից ժպտաց նախկին քնքուշ ժպիտով։

— Չէ,— պատասխանեց Հերյանը,— չեմ վիրավորված... Անշուշտ, կյանքը... Չէ, չէ... Չեմ վիրավորված...

Չկարողացավ շարունակել։

Մեկնեց, գլուխը վար կախած, ձեռքերը մեջքի վրա ծալած, դեղնուն քայլերով։

2

Ահա մի քանի ժամե ի վեր Հերյանը նստած էր կողմնակի փողոցի դուքանի ետևի սենյակում։

Սեղանի վրա շարված էին բողկ, պանիր, թարխուն, ուտեստեղեններ և գինի։ Ցած կամարներից կախված լամպարի աղոտ լուսավորության տակ. նրա և նրա առաջ նստած երկու երաժիշտների դեմքերը հազիվ նշմարելի էին։

Պատի վերևում բացված ցածր պատուհանը նայում էր մի ինչ-որ բակի վրա, որտեղից աստղերով լցված գիշերը զովություն էր ներս սփռում և՝ չորացած խոտի, տավարի և հավաբնի հոտեր։

Երաժիշտներից մեկը՝ հաստ, բեղավոր, լնցուն, ծնկների վրա փոքրիկ երեխի նման օրորում էր իր թառը. մյուսը՝ նիհար, դեղնած, չոր՝ մատների ջերմագին շարժումով խփում էր դափը և երգելու ժամանակ գլուխը թաքցնում նրա հետևում։

Երաժիշտները նստած էին սեղանից քիչ հեռու, որպեսզի ցույց տան, որ եկած էին վճարովի ծառայելու։ Ով ցավ ունի, քեֆ է անում։ Քեֆը միայն ուրախություն չէ։ Եթե կովկասահայը առանձնանում է գինետան անկյունում և երաժիշտներ հրավիրում իր խմած գինու պեղող երազանքը հինավուրց բանաստեղծների տաղերով զորացնելու համար, այդ նշանակում է, որ նա մեծ վիշտ ունի, որ միտքը կորած է մութ լաբիրինթոսում, որ սիրտը հուսահատ է։

Երաժիշտները այդ գիտեն։ Արվեստագետի բնազդով նրանք անմիջապես հասկանում են հաճախորդի սիրտը։ Որորող ցավի բնույթը և ըստ այնմ էլ երգում և նվագում։ Իսկ ցավերի ձայնաշարը մեծ է և

անվերջանալի։ Կան մարդիկ, որոնք տանջվում են կյանքի անհաջողությունից, ուրիշները՝ կրած վիրավորանքից կամ անհասկանալի մելամաղձությունից։ Ամենից զգայուն ցավը սիրո ցավն է։ Սիրով տխրած մարդը խորունկ հոր է. ամեն մի ձայն նրա մեջ արձագանք է գտնում, լայնանում, մղկտալով շարժվում։ Մի բառ, մի պատկեր՝ և հոգին շշնջում է քամուց տրորված բարդու նման. մարմինը լռում է և թափվում ու ջերմում, սիրտը թպրտում է՝ թևը վիրավորված բազեի պես։

Ջվարթի տնից մեկնելուց հետո Հերյանը երկար ժամանակ թափառել էր, ապա տխրած, վհատված եկել նստել էր այդ գինետան մեջ։

Նստել էին, գրեթե չէին խոսում։

Խմում էին։

— Կենացդ... Շեն կենաս...

— Թող գինի բերեն,— պատվիրում էր Հերյանը։

Գինի էին բերում, բաժակները լցնում, խմում։

Ապա, ինչպես մեռելը թաղելուց առաջ, ամենքը բոլորվում են նրա շուրջը, աչքերը վար, շրթները կողպված, ձեռքերը ծնկների վրա փռված, մինչև որ մի կին ուսերը տրորելով սկսում է բարձրաձայն ողբ երգել և մյուսները լաց են լինում առանց արցունքի, այդպես... թառը սկսում է զնգզնգալ։

Ճակատը գունատված, աչքերը խոր ընկած, Հերյանը խմում էր կում-կում, առանց շտապելու, խոր մի վերք լվացող սփոփեցուցիչ հեղուկի նման։

— Վարպետ ջան, մի բան ասա, ասա լսենք...

Թառ նվագողի ձեռքը դողդողում էր լարերի վրա, մի քանի լալագին նիշերի մոտ կանգ առնում, պրպտում մեղեդիների աշխարհը և կամաց-կամաց ձևավորվում հիմնական երգը։ Դափը պատասխանում էր և քայլում նրա հետևից։ Հնչյունների այդ ամբոխը ոտաբոբիկ մտնում էր ծաղիկներով կարպետված մի դաշտ, նրա զգայուն ոտքերը շոյում էին թարմ խոտերը, զգուշանալով պտույտ գալիս ծաղկած թփերի շուրջը։ ապա դանդաղում, սարսռում, դալկանում և, մեկ էլ. հանկարծ արթնանալով վազում, կարծես որսալու համար կապույտ քամիների մեղմ ալիքները և ամեն կողմից բարձրացող թռչունների դայլայլը։

Գլուխը դափի հետևում թաքցնելով երգիչը երգում էր։

Ամեն սիրտ ծարավ է, ամեն հոգի անոթի։
Աղջի, կուժդ առ, գնա՛. ամեն սիրտ ծարավ է։
Ընկել եմ մի անգունդ, խավար է։
Աղջի, եկ, տուր պուչդ հոգուս անոթի...

— Ուրեմն, էդպես,— ասում էր Հերյանը ինքն իրեն,— ուրեմն էդպես... Իսկ ես՝ հիմարս կարծում էի, որ ճանաչում եմ կանանց... Ինչ էր առաջ և ինչ է դարձել հիմա... Ահ, չպետք է մեկնեի... Հիմա հեշտ է ասել, չպետք է մեկնեի, իսկ նա՞վը, իսկ Սևա՞նը...

Աղջի, եկ տուր պաչդ հոգուս անոթի...

Հաստ մարդու թևերի մեջ թառը շարունակում էր օրորվել։ Հնչում էր, կլկլում, զրնգում։ Նրա լայն ճարպոտ երեսը կարմրել էր, ուռած աչքերը վայր էր առել թառի լարերի վրա և, մոռացության մատնված, մեկնել էր ուրիշ աշխարհ։ Վիզը լցված էր, փորը ուռած, կարծես նրա հագած չերքեզկան ահա պայթելու էր...

— Զարմանալի է,— մտածում էր Հերյանը,— այդքան մսերով մարդ և այդպես ղգայուն, գրեթե կանացի ձեռքեր...

Գնակից մի կարմիր բողկ վերցրեց, աղամանում երկաթ թաթախեց, ծայրը կծեց, գցեց։ Լեզվի վրայից աղը սրբեց։ Սիրտը կծկծում էր։

Հաստ կամարներից կախված աղոտ լամպարի շուրջը թանձր ստվերներ էին ման գալիս։ Ամեն ինչ ծանրանում էր, ճնշում։ Մրոտած ցածր կամարները, ստվերները, հաստափոր երաժիշտը, և անգամ իր մարմինը գնալով ծանրանում էին և սեղմում ուսերը։

Ամեն ինչ թմրում էր նրա մեջ, պառկում քարի տակ, թաղվում։

Հառաչեց։

— Ասացեք թող գինի բերեն։

Խմեցին։

Թառ նվագողը երկու մատներով բռնած բաժակը բարձրացրեց վեր։

— Կյանքում,— ասաց նա,— էս կա, էն էլ կա։ Լավ է որտեղ մենք չկանք. . Համա աստված ամեն բանին ջուղաբ ունի... Ձեր կենացը...

Խմեց մինչև տակը, շրթունքները սրբեց և մի բան կերավ։

— Վարպետ ջան, անունդ ի՞նչ է,— հարցրեց Հերյանը։

Թառ նվագողը աչքերը սայլ քաշող եզան նման վայր առավ և պատասխանեց՝

— Առաքել...

— Բռավո, Առաքել,— ասաց Հերյանը և հուսահատ ձեռքը ման ածեց օդում։

Առաքելը քաջալերվեց, թառի վրա խոտերի միջից դուրս վազող թարմ քամու նմանող մի մեղեդի նվագեց։ Մեղեդին կամաց-կամաց դանդաղեց, բարձր լարի վրա կախված թպրտաց, տխրեց և սկսեց հեծկլտալ։

Հերյանը աչքերը փակեց, լսեց։

Արևելյան այդ նուրբ մեղեդին այրող հեղուկի նման խուժեց նրա ներսը, և այնտեղ ամեն ինչ իրար խառնվեց։

Աշխարհում այդքան մենակ, այդքան անպաշտպան, այդքան կորած իրեն երբեք չէր զգացել։ Կարծես ընկել էր ամայի լեռան բարձրությունների վրա, որտեղից հեռանալու ոչ մի հնար չկար։

Հուսահատություն, մենակություն...

Իսկ թառը, որ հասկանում էր նրա սրտում կատարվող դրաման, խոսում էր։

Թառը ասում էր՝

— Այն, ինչ դու անվանում ես մենակություն՝ ինքը կյանքն է։ Մենք մենակ չենք, մենք մենակություն ենք։ Իսկ մենակությունը ամբողջություն է։ Ինչքան նա լերկացած լինի արտաքին աշխարհից, այնքան կատարյալ է։

— Բա՛ց քո սրտի դուռը վշտի առաջ և նրան ընդունիր խոնարհաբար, ինչպես վայել է կորովի մարդկանց։ Վիշտը, որ թափվում է քո երեսի վրա, ձեռքերի վրա, ինչպես անցնող ամպերի միջից լույսը, նախանշանն է մեծ դեպքերի, որոնք պատրաստվում են քո ներսում։ Այդ նշանակում է, որ կյանքը քեզ չի մոռացել... Վիշտը, չարչարանքը և մահը բուն կյանքի էությունն են, նրա գոյության և նրա գոյանալու ամենակատարյալ զենքերը։ Ինչքան հիմար են մարդիկ, որ ուզում են այդ մոռանալ։

Եվ թառը, մի վայրկյան կլկլալով հառաչեց, կանգ առավ ուրիշ ժի բամբ լարի վրա, մտածեց և նորից խոսեց։

Թառը ասում էր՝

— Վա՛յ այն մարդուն, որ վախենում է դժվարություններից։ Միայն դժվարության բովից անցնելով կարելի է հասնել ներքին հարստության, ներքին անկախության։

Սերը դժվարին է։

Որովհետև սերը էության էությունն է։ Սերը վերջին և կատարյալ մենակությունն է. նա ոչ տալ է և ոչ միություն, այլ՝ վշտերով ցանված դաշտ է, որի միջից մարդ անցնում է ինքն իրեն հետ հանդիպելու համար։

Ջահել սրտերը սպասել չգիտեն։ Նրանք խենթանում են ուրիշի սիրո համար և կորցնում են թե իրենց, թե ուրիշին։ Սրտերը այրվում են, իսկ հոգիները պատրաստ չեն։

Սերը դժվարին է։

Սերը ոչ տալ է և ոչ առնել. սերը ամբողջովին լինել է։ Նա մահ է և կյանք է և այնքան մեծ, որ մեր մարմինը նրան չի հասանում։ Նրան

հասնում է մեր հոգին, երբ պատրաստ է։ Իսկ քանի՞ հոգիներ կան, որ պատրաստ են։

Սերը գոյանալու համար պետք ունի երկու մենակությունների, որոնք մեկը մյուսին ամբողջացնում, սահմանում են, մեկը մյուսի առաջ խոնարհում։ Եթե այդ մյուս մենակությունը, որին դու անհամբեր սպասում էիր, քեզ ընդառաջ չի գալիս՝ թող լինի այդպես։ Ականջ դիր. լսիր լռության մեջ քեզ այցելող անհայտին և թող քո մարմնի հետ նա լինի մարմին և քո հոգու հետ՝ հոգի։

Հետո թառը երգը փոխեց։

— Բռավո, Առաքել,— ասաց Հերյանը հազիվ լսելի ձայնով և նորից փակեց աչքերը։ Նրա մտքի առաջով պատկերների շարան անցավ։ Դուքանի ծանր կամարները կամաց-կամաց լայնացան, բարձրացան, ճեղքվեցին ամպերի նման դիզված հեռավորությունների վրա և Հայաստան աշխարհը՝ լեռնոտ, մերկ, ամեհի՝ ցցվեց ծանր գիշերվա մեջ և խորխորատների ձայներով մռնչաց։

Դափը սարսռալով հնչեց և երգիչը ողբաց։

Միր-Մահմուդը քառասուն աղջիկ առավ տարավ,
Աշխարհ լցվեց լաց ու կոծով...

Ահավասիկ Միր-Մահմուդը, աֆղանների կենդանաբարո էմիրը։ Փոքրահասակ, ծռված ուսերով, մոնղոլական շեղակի աչքերով, դեղնած դեմքով, հազվագյուտ մազերը վայր տնկված մորուքով։ Նա կանգնել է ոսկեներով հյուսված վրանի առաջ, կեռ սուրը ձեռքին, աչքերը կրակ, ձայնը խեղդված։ Ուզում է, որ հայերը ոսկի, արծաթ, խալի, հյուսվածեղեններ, մետաքս և թավիշ, փղոսկր և նախշուն էբենոս և մեծ քանակությամբ դրամ ուղարկեն իրեն, ուզում է նաև, որ հայերը ուղարկեն քառասուն ամենագեղեցիկ կույս աղջիկներ...

Եվ քառասուն ամենագեղեցիկ աղջիկները, ամաչկոտ և վշտահար, մերկացած կանգնել են, նշանման իրենց աչքերը գետնին հառած դողում են և սպասում, որ նրա շնացած և տարփոտ աչքերը ընտրությունը կատարեն։

Միր-Մահմուդ քառասուն աղջիկ առավ տարավ,
Աշխարհ լցվեց լաց ու կոծով...

— Ահա,— ասաց թառը,— դու քո անձնական, անցողիկ վիշտը ցցել ես քո հոգու առաջ և կարծում ես, որ աշխարհը սկսվում է և

վերջանում է քեզանով։ Իսկ աչք գցիր անցյալի վրա, աչք գցիր ներկայի վրա և կրակը քեզ կբոլորի։

Հերյանը բաժակը լցրեց, առանց ոչինչ ասելու խմեց և աչքերը լայն բացած նայեց։

— Ինչ ժամանակներ էին, ինչ ժամանակներ,— հառաչեց նա։

— Մեր աշխարհում էդպես է,— ասաց երաժիշտը։— Մարդիկ մոռանում են, իսկ երգը չի մոռանում։

— Ասում ես, ուստա, մարդիկ մոռանում են, իսկ երգը չի մոռանում,— հանկարծ ցնցված բացականչեց Հերյանը։— Ի՞նչ խոսք, լավ է, որ երգը չի մոռանում և առանց երգի մեր պատմությունը պատմություն չի... Բայց, չեմ հասկանում, ինչո՞ւ երգը միայն վերքերն ։ հիշում, լաց ու կոծը, տանջանքը...

Երաժիշտները զարմացած նայեցին նրան։

Հերյանի աչքերը փայլեցին։

— Ինչո՞ւ հիշել միայն վիշտը,— շարունակեց նա...— Հենց վերցրենք Միր-Մահմուդի ժամանակները... Ես այդ մասին կարդացել եմ, գիտեմ... վատ ժամանակներ էին, աշխարհը տակնուվրա էր... Աֆղան էմիրը բազմահազար ձիավոր գնդերով ստեպներից փոթորկի նման դուրս էր նետվել, մտել էր Պարսկաստան, Շահին գահից վայր նետել, սարսափ տարածել... Կովկասի ցեղերը՝ լազգի, չերքեզ, ընգուշ՝ օգտվելով անիշխանական դրությունից, ահագին խմբերով և մինչև ատամները զինված արշավել հասել էին մինչև Սևանա լիճը... և անպատիժ ասպատակում էին, քանգում, այրում, կողոպտում...

— Բա, տխուր չի, ի՞նչ է,— ասաց թառ նվագողը։

— Սպասիր,— շարունակեց Հերյանը ավելի ոգևորված,— սպասիր... Ահա այդ օրերին, Ուտեացոց Հովհաննես իշխանը՝ մի կտրիճ հայ, իր դղյակից դուրս եկավ, ձայնը բարձրացրեց, հայ քաջերին մարտի կանչեց, գնդեր կազմեց և ընկավ թշնամու վրա, թուրը զարկավ, արյուն թափեց, կոտորեց և նրանց փախցրեց մինչև իրենց լեռնային աուլները... Ուտեացոց Հովհաննես իշխանը... շանթ ու կրակ... զորավոր ձեռքերով, բոցակեզ աչքերով, հաղթանդամ մարմնով, անվախ, քաջարի մի մարդ... քամու նման արագ, կայծակի նման անողոք, քաջերի քաջը... Ահա, ձեր երգը այդ մասին ոչինչ չի ասում...

— Ասում է, քաջերի մասին հայ երգը խոսում է,— պատասխանեց երգիչը։— Սասունցի Դավթի շարքը կա, ազատագրության երգերը կան, Վարդանանց երգերը և ուրիշ շատ, բայց դրա համար տրամադրություն պետք է...

— Վիշտ ունեցող մարդը վշտոտ երգ է սիրում կամ պար է սիրում,— ավելացրեց թառ նվագողը։

— Խմենք,— առաջարկեց Հերյանը։

— Ձեր կենացը...

— Աստված մեծ է... ողորմի...

Խմեցին և նորից լռեցին։

— Եկել ենք և պիտի գնանք,— փիլիսոփայեց Հերյանը։— Հարցը նրանում է, որ եկել ենք և ընկել թշնամու առաջ... ամեն կողմից վտանգ, կրակ, մահ...

— Ի՞նչ արած, պետք է տանել...

— Սխալ քրիստոնեություն է,— բողոքեց Հերյանը,— պետք չէ ամեն բան ստրկաբար տանել...

— Ստրկաբար չասացի,— առարկեց երաժիշտը, մեղմ շեշտով,— ընդհակառակը, պետք է տանել իմաստությունով և երգով։ Մարդը որ երգում է, ազատ է...

— Լավ ասացիր, ուստա։ Մարդը որ երգում է, ազատ է... Միայն թե, ամեն մարդ երգել չի իմանում...

— Երգել չիմանալը ամոթ չի, ամոթ է երգը չհասկանալը,— պատասխանեց դափ զարնողը։

— Լավ ասացիր...

Եվ նորից բաժակները թրխկացրին և խմեցին։

Ինչքան գիշերը առաջացավ, այնքան գինու շշերի թիվը շատացավ սեղանի վրա։

Հերյանի աչքերի առաջ ամեն բան սքողվել էր։ Գինին ու երգը թթվածնի նման խածել էին նրա մարմինը, բթացրել նրա վիշտը և մոռացության մշուշներ տարածել նրա շուրջը։

Նա այլևս լավ չէր գիտակցում, թե ինչ է անցնում շուրջը։ Հիշում էր միայն, ինչ-որ մարդիկ ներս մտան, նստեցին սեղանի շուրջը, խմեցին, աղմկեցին ու պարեցին։

Ինքն էլ պարեց։

Առավոտվա դեմ, երբ վերի պատուհանից աստղերը հեռացան և ցուրտ լույսը ներս թափանցեց, երբ աքլորները սկսեցին կանչել և երաժիշտները «Առավոտ լուսո» նվագեցին, նա խմեց վերջին բաժակը, վճարեց և դուրս եկավ փողոց երերող քայլերով, առաջացավ և նոր լույսը ողջունեց ոնգները լայնացած և համառ ճակատը վեր տնկած։

Գնաց դատարկ փողոցներով, վիզը բաց, կարտուզը ձեռքում բռնած, առանց նպատակի, թարմ և զով օդում երեսը լվանալով։

Երբ հասավ Կոնդի բարձրության վրա, լուսաբացը իր բոլոր կրակները դուրս հանեց, ողողեց նրա աչքերը, հափշտակեց նրան։

Հեռուն, Արարատի ձյունածածկ գագաթից ճառագայթների հեղեղ էր թափվում։ Վարի լայնատարած դաշտը կաթնագույն մշուշից կամաց-կամաց ազատվելով արթնանում էր և անձայն հնչում կանաչ նվագի նման։ Մոտակա պարտեզներում թռչունները երգում էին։ Օդը հարբած էր։

Աշխարհը վերածնվում էր հզոր և գեղեցիկ կյանքով։

Հերյանը, որին ամբողջ գիշերը խմած Հայաստանի ուժեղ գինին չէր կարողացել հարբեցնել, իրեն զգաց գինով և երջանիկ։ Եվ նրա շրթունքների վրա ուրախ պարի մի անորոշ մեղեդի ման եկավ։

Ինչ հարուստ և հզոր և գեղեցիկ էր այս երկիրը։

Նստեց մի քարի վրա և հանձնվեց ամեն կողմից խուժող լույսերին և երգերին։

3

Տորմիդի սպա Թումանյանը նոր կոշիկներ էր գնել։

Մի մեծ օր էր...

Առավոտից ի վեր հրավառ արևը բոցկլտող ասեղների տարափ էր թափում լճի վրա։ Ամեն ինչ տոնական բնույթ էր առել։ Տեղ-տեղ դրոշակներ էին կախվել։ Գերանները ներկել էին, ծովափ իջնող սանդուղների վրա խալի փռել և քարափը ավլել։

Երեք գյուղացի ձկնորսներ, նավաստիի նոր զգեստներ հագած, շփոթված կանգնել էին մի կողմ։ Նրանք նմանվում էին հանկարծ ծերացած երեխաների, որոնք առաջին անգամ իրենց կյանքում երկար տաբատ էին հագել։ Վախենում էին ոչ էլ շարժում անել, որպեսզի իրենց գլխին տնկված նավազի գլխարկը, որի վրա ոսկե տառերով «Աշոտ Երկաթ» էր գրված, հանկարծ վայր չընկնի։

Օրվա բուն հերոսը երկարատև և դժվարին աշխատանքների արդյունքը, սպասում էր վարը, լճափի կամրջակին կապված։ Մաքուր, պլսպրղուն։ Իրականում «Աշոտ Երկաթ» ռազմանավը մեծ մի նավակ էր մութ մոխրագույն ներկված, կողերը չափազանց ուռած՝ շատ միս ուտող կնոջ զիստերի նման, քիթը վեր, երեսը տափակ։ Շարժման ժամանակ այդ հղի կովի ստամոքսի վրա զետեղված փոքրիկ մեքենան բզզում էր հազարավոր մժեղների ձայնով, և նավը թրթռում մայրիայից տառապող հիվանդի նման։

Քթի վրա և վերջամասում զետեղված երկու նոր և բարակ թնդանոթները նրան տալիս էին ինչ-որ ազնվություն և պատերազմական տեսք։

Ափից վեր տանող փայտե սանդուղների վրա մի քանի ոստիկաններ կանգնած սպասում էին և, մերթ ընդ մերթ, անձկալի նայվածքներ նետում ճամփու այն կողմը, որտեղից բարձր իշխանությունը պիտի ժամաներ։ Մի քանի ռուս մուժիկներ և բազմաթիվ հայ շինականներ՝ լռակյաց և զուսպ, իրենց մորուքները շոյում էին, հետաքրքրված աչքերով նայում իրենց շուրջը և վեր վար ման գալով նույնպես սպասում։ Մի խումբ երեխաներ մի քիչ վախեցած պպուզիկ նստել էին և ծամածռություններ էին անում։

Իբրև երաժշտություն՝ մի քանի փողեր և մի թմբուկ։ Փողերը արևի տակ ուժով փայլփլում էին, իսկ մարդիկ, որոնք պիտի նվագեին, քայլում էին և սպասում։

Տորմիղի սպա Թումանյանի հայրը, Ավակիմ Մարտիրոսովիչը, անպայման ուզեցել էր այդ այնքան կարևոր հանդեսին ներկա գտնվել և, հարդով լցված սայլի ծայրին գիշեր և ցերեկ երերալով, եկել հասել էր Երևանից։ Փոքրահասակ, չոր, սառած. Բեսարաբիայի նախկին այդ դատավորը լուրջ և հանդիսավոր տեսք ուներ։ Տոնի պատճառով, նա հարմար էր դատել բաց դեղին գույնով և իր ձեռքերի համար չափազանց մեծ մի զույգ ձեռնոց հագնել և սև փողկապ։ Իր զավակի մոտ կանգնած նայում էր հիացումով և մելամաղձությամբ։ Ահավոր մի անցյալից հետո ահավասիկ լուսավոր մի ապագա, մտածում էր նա։ Ցավում էր, որ հեղափոխության շրջանում տիֆից մեռած իր կինը չպիտի կարողանար այդպիսի մի հանդիսավոր ժամին տեսնել այնքան պաշտած զավակին։ Զավակ, որ գրեթե կրոն էր նրա համար։ Երբ տղան գալիս էր արձակուրդով, նա դողում էր նրա ամեն մի քայլի վրա։ Նրա համազգեստը բենզինով մաքրելիս, հազար անգամ համբուրում էր այն, շոյում, շտկում ամեն մի կոճակը։ Երբ մեկնում էր, օրը երեք անգամ եկեղեցի էր գնում և անդադար աղոթում։ Մեռավ գնաց։ Եվ ահավասիկ ինքը մեն մենակ կանգնած զավակի մոտ, ոտքերը զինվորական ձևով միացրած, երեսը արևից այրված և աչքերը հուզումից թրջված։

— Քաղաքում ասացին, որ նախարարաց խորհրդի նախագահը անձամբ պիտի գա,— փսփսացող ձայնով ասաց հայրը։

— Լավ,— պատասխանեց զավակը և նորից լռեց։

— Նաև ասացին, որ,— ավելացրեց հայրը,— արտասահմանի բոլոր հայ թերթերին հաղորդել են ուրախալի լուրը...

— Լավ,— պատասխանեց տղան և նորից լռեց։

Թումանյանը գիտեր, որ այդ վայրկյանին հայրը մտածում էր իր մոր մասին։ Ինքն էլ մտածում էր նրա մասին։ Կյանքի բոլոր կարևոր ժամերին, դժվարին թե ուրախալի, նա մտքով գնում միանում էր իր

մորը։ Քիչ լեցուն, շարժուն, արագախոս մի կին էր, ամբողջովին ջիղ և հուզում։ Հորդառատ սեր միացած լալկան անձկության։ Երբ մտածում է նրա մասին, տաք և քնքուշ մի զգացում լցնում է սիրտը և այրում։ Եվ սակայն, երբ նա ողջ էր, ինքը ամեն կերպով աշխատում էր պաշտպանվել մայրական երբեմն կաշկանդիչ և երբեմն էլ բռնակալ այդ սիրուց։ Իսկ սոհա, ինչ չպիտի տար նրան նորից ունենալու համար...

Իշխանությունը ուշանում էր։

Սպան նայեց իր կոշիկներին։ Դրանք ծածկվել են թանձր փոշիով։

— Աժան ապրանք,— ասաց նա։

— Ի՞նչ...

— Ոչինչ, կարևոր չէ։

Մոտեցավ նավաստիներին, ուղղեց նրանց օձիքները, նորից կրկնեց նախապես տված հրամանները։ Ոտքը ոտքին, կուրծքը դուրս, երեսը ուղղել դեպի իշխանությունը և շրջել նրանց առաջանալու ընթացքին։ Ողջույնին պատասխանել միաձայն։

— Հասկացա՞ք։

Նավաստիները ձգվեցին և իրենը աչքերը պլզեցին։ Թումանյանը հուսահատ վերադարձավ իր տեղը։

Իշխանությունը ուշացել էր մի ժամով։

Արևը ընկնում էր շեղակի և ուժեղ։ Ամենքի ոտքերը կապար էին դարձել։

— Ուշացան,— ասաց հայրը։

Երիտասարդ ծովային սպան հանեց ժամացույցը, նայեց և նորից դրեց գրպանը։ Ապա աչքերը վար առած երկար նայեց կոշիկներին։ Կոշիկների վրա ավելի ճարպ կար, քան ներկ և այդ պատճառով ամբողջովին ծածկվել էին փոշով։ Ուզեց թաշկինակի ծայրով փոշին մաքրել, բայց բնածին ամոթխածության պատճառով համարձակություն չունեցավ... Մտածեց, երկար ժամանակ տատանվեց, ապա թաշկինակը հանեց, մի ոտքը վեր բարձրացրեց և մաքրեց։ Երբ պատրաստվում էր նույնը անել մյուս կոշիկի հետ, ինքնաշարժների ձայներ լսվեցին, մարդիկ անհանգստացան և ոստիկաններից մեկը դեպի իրեն վազելով հայտնեց՝

— Պարոն սպա, գալիս են, գալիս են...

Թումանյանի մի կոշիկը մնաց մաքրված, իսկ մյուսը՝ փոշոտ։

Ափի մոտ երկարող ճանապարհից ինքնաշարժները մոտենում էին։ Փոշու ամպեր։ Այդ ամպերի մեջ կորած գյուղացիները դխարկները հանած բարևում էին։ Երեխաները դես ու դեն էին վազում։ Ոստի-

կանները ձգված կանգնել էին և երեք նավաստիները բոլորովին շփոթված սառել էին և սարսափած աչքերը դուրս գցել։

— Կա՛-արգի,— գոռաց Թումանյանը, երբ առաջին ինքնաշարժը կանգ առավ։

Գյուլաց և սաստիկ կարմրեց։

— Փո-ղերը,— ավելացրեց նա և հանդիսավոր կերպով գնաց ընդառաջ։

Փողերը վեր տնկված՝ խոփած ձայներ հանեցին և թմբուկը արագ-արագ խփեց։ Զինվորականները արձանացան։ Ժողովուրդը ծափահարեց։ Բարձրաստիճան սպաներով շրջապատված երկու մարդ իջան սանդուղներից վայր։

Թումանյանը մոտեցավ նախարարներին և սաստիկ ձգված զեկուցեց.

— Պատիվ ունեմ զեկուցելու, պարոն նախարար, որ նավը կազմ և պատրաստ է, զինված երկու թնդանոթներով և մի գնդացրով...

Սովորած դասի նման արագ-արագ արտասանեց ասելիքը։

Նախարարը նրան լսեց ժպտալով, գլխարկը ձեռքին, ականջը վար կախած։ Պինդ սեղմեց Թումանյանի ձեռքը։ Նշմարեց հոր դեղին ձեռնոցները և մոտեցավ նրան։ Թումանյանը պարտք համարեց ներկայացնել իր հորը, թեպետ նախարարը վաղուց նրա հետ ծանոթ էր։

— Հայրս,— ասաց նա,— Բեսարաբիայի շրջանային դատարանի անդամ, Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանի կավալեր, Կալեժսկի ասեսոր, Ավակիմ Մարտիրոսովիչ Թումանով...

— Ուրախ եմ,— ասաց նախարարը և Ավակիմ Մարտիրոսովիչի քիչ դողացող ձեռքը սեղմեց։

Ավակիմ Մարտիրոսովիչը չափազանց հուզված էր, նա աչքերը անդադար բացխփում էր և ուժ անում արցունքները զսպելու։

Հետո եկողները խմբով կանգնեցին նավի առաջ, զննեցին, հարցուփորձ արեցին, մանրամասն տեղեկություններ ուզեցին, ժպտացին, փսփսացին և երեք նավաստիներին վերից վար դիտելուց հետո, այլևս ամեն ինչի տեղյակ՝ նայեցին լճին, նայեցին երկնքին։

Զինվորականներից ամենից աշխույժը Երևանի պարետն էր։ Այդ նախկին դերասանը, զվարճացած՝ նրա ականջին կատակներ էր փսփրսում, բարձր ծիծաղում, անդադար շարժվում։ Նա Թումանյանին հարցեր էր տալիս, նրա հոր ուսին խփելով շնորհավորում նրան, ապա, թատերական չերքեզկայի մեջ սեղմված՝ կովկասյան ավանդական զորապետի դիրք առնելով նայում և սպասում։

Երբ բարձրաստիճան զինվորականները, որոնք վիճում էին՝ ձեռ-

քերը դեպի լճի հակառակ կողմի ժայռերի վրա տնկած լռեցին, ակնոցավոր նախարարը գրպանից թղթի մի կտոր հանեց, նայեց և ճառ ասաց...

Լճի ամայացած այդ լռության մեջ ճառը հնչեց հանդիսավոր և հուզիչ։ «Աշոտ Երկաթ» անունը առագաստի նման լցվեց անցյալի փառքերով... Բառերը մեծացան և բառերի հետևից Հայաստանը ցցվեց արյունոտված, վիրավորված... իր դարավոր գոյությունը վճռական պաշտպանելու համար։

Թումանյանին հռչակեց օրինակելի հայ։ Նա եկել էր հեռվից և կարողությունները ի սպաս դրել հայրենիքին։ Կառավարությունը նրան բարձրացնում է հրամանատարի աստիճանի։

Այդ որ լսեց՝ Ավակիմ Մարտիրոսովիչի վարի շրթունքը դողաց և աչքերը լցվեցին։ Ինքը Թումանյանը ավելի ձգվեց և քարացած մնաց։

Նախարարը նայվածքը տարածեց դիմացի ժայռերի վրա, որոնց ետև գտնվում էր կոմունիստական Ադրբեջանը... ձայնը ավելի բարձրացնելով, հայտնեց, որ թշնամիները կարող էին անցնել միայն հայ ժողովրդի դիակների վրայով և որ հայերը իրենց անկախությունը պաշտպանելու համար պատրաստ էին կռվելու մինչև վերջին մարդը։ Վեց դարե ի վեր անկախության սպասող հայ ազգը չպիտի ուրանար միլիոնավոր զո՞հերի հիշատակը և պիտի կռվեր ինչպես կռվել էին հերոսները, Աշոտ Երկաթները։ Կեցցե՞ Աշոտ Երկաթը...

Նախօրոք կարգադրված էր, որ երբ նախարարը իր ճառը վերջացներ, երեք նավաստիներ և ոստիկաններ հուռա, հուռա, հուռա պիտի գոռային և փողերը նորից պիտի հնչեին։ Իսկ դուրս եկավ մի հիմար բան։ Թումանյանը ձեռքով և աչքերով նշաններ տվեց նավաստիներին, սակայն նրանք վախեցած նայեցին նրան. բերանները լայն բացեցին և ոչ մի ձայն չհանեցին...

Երևանի պարետը վազեց նրանց կողմը։

— Ի՞նչ է,— ասաց նա,-- ձեններդ կտրվե՞լ է...

Նավաստիները նայեցին նրան սարսափած և նրանց կլոր գլխարկների տակից քրտինքի մեծ կաթիլներ վազեցին։

Բարեբախտաբար փողերը հնչեցին և թմբուկը չափազանց ոգևորվելով վայր թափվող կարկուտի նման դրմփաց։ Մարդիկ և կանայք վազեցին դեպի ափը։ Աղմուկ և փոշի բարձրացավ։ «Աշոտ Երկաթ» նավի վրա եռագույն դրոշակ բարձրացրին և բոլոր զինվորականները բարևի կանգնեցին։

Իշխանությունը ուզեց նորից դիտել նավը։ Թումանյանը բացատրու-

թյուններ արեց և զինվորականներին նշեց նավի ռազմական կարելիությունները։

— Վրան նայես, թվում է չնչին բան,— ասաց մի զորավար,— սակայն, անհրաժեշտ վայրկյաններին եթե լավ օգտագործվի, կարող է մեծ դեր կատարել։

— Կարող եք վստահ լինել,— ասաց Թումանյանը, համեստ շեշտով,— մենք մեր պարտքը լիովին կկատարենք։

— Այդ մասին կասկած չունեմ, հրամանատար,— պատասխանեց զորավարը և հարցուփորձ արեց նրա անցյալ ծառայության մասին։

Թումանյանը երբեք այդքան իրեն երջանիկ չէր զգացել։

Ոստիկաններից մեկը ներկաներին առաջնորդեց դեպի փոքրիկ և ճերմակ մի խրճիթ, ուր համեստ սեղան էր բացված։

— Վերջապես,— բացականչեց պարետը։

Այդ պարոնները սոված էին։ Հազիվ ներս մտան, հարձակվեցին օղու և խորտիկների վրա։ Տրամադրությունները բարձրացան։ Օդին խմում էին ոտքի վրա, բաժակի պարունակությունը մեկ կումով կուլ տալով, աչքերը կես փակելով և պատառաքաղը ման ածելով ծխված ձկնեղենների վրա։

Թումանյանը ամենքին առաջարկեց նստել։

— Խնդրում եմ, խնդրում եմ, համեցեք, նստեք...

Նրա աչքերը փայլփլում էին։ Այդ զինվորականները, որոնք իրեն նման գալիս էին ռուսական բանակի շարքերից, հիշեցնում էին հին և լավ օրերը։ Մեղք որ ծովային սպաներ չէին։ Ծովային սպան ուրիշ էր և սովոր էր բանակի վրա նայել քիչ բարձրից։ Բայց, ոչինչ, ներկա պայմաններում դա էլ լավ էր։

Նստեցին։ Սկսեցին ամենքը միասին խոսել։

Երևանի պարետը աներևակայելի և ծիծաղաշարժ պատմություններ էր պատմում և հավատացնում... որ աստված վկա, պատմածը սուտ չէ, այլ իրականություն։

Խորոված ը կերան ուրախ տրամադրությամբ։ Գինու բաժակները լցրին և ըստ սովորության ճառեր արտասանեցին և կենացներ խմեցին։

Թումանյանի հայրը, որ կծկված նստել էր սեղանի անկյունում, ոտքի կանգնեց, թուքը մի քանի անգամ կուլ տվեց և խոսք ուզեց։

— Պաժալստա, պաժալստա,— համաձայնվեցին ամեն կողմից։

Նա դողդողացող ձայնով խոսեց այն հայերի մասին, որոնք Բեսարաբիայում և արտասահմանի ուրիշ վայրերում կարոտով սպասում

էին երկիր վերադառնալու ժամին... իրենց կարողությունները հայրենիքին ի սպաս դնելու համար... Նա ցավում էր, որ միայն մի զավակ ուներ։ Եթե տասը որդի ունենար, ամենքին էլ կհանձներ այդ մեր դրժբախտ և մեծ, այդ մեր անուշ...

Արցունքները խեղդեցին նրա կոկորդը, և նա չկարողացավ շարունակել։

Նախարարը գովեց նրա հայրենասիրությունը և լավատես գուշակումներ կատարեց Հայաստանի ապագայի մասին։ Ըստ Վիլսոնյան ծրագրի Հայաստանը ծով անգամ պիտի ունենա...

Թումանյանը այդ լսելով տակնուվրա եղավ։ Աչքերը վառվեցին և նա բացականչեց՝ «Ծով, ծով, ծով»...

Խմեցին ապագա ծովի համար։

Երբ պտուղը կերան վերջացրին, նախարարը ժամացույցը հանեց նայեց և ոտքի ելավ։ Ամենքը իրենց ժամացույցները հանեցին, նայեցին և ոտքի ելան։

Մեկնեցին։

Երբ հայր և զավակ մնացին մենակ, հայրը մոտեցավ Թումանյանին և, հուզումով լցված ձայնով ասաց՝

— Միշա, Միշա, թող քեզ համբուրեմ...

Գրկախառնվեցին։

Հայրը արցունքները սրբեց և շտապ մեկնեց։

Երեք նավաստիները, որոնք նույնպես խորոված էին կերել և առատ գինի խմել, թև թևի տված, ժապավենով զարդարված կլոր գլխարկները քթի վրա, երերալով և դանդաղելով լճի ափին վեր վար էին քայլում և գոռալով երգում։

Մի քանի օր հետո, երբ քաղաքական դրությունը հանկարծ լրջացել էր, «Աշոտ Երկաթը» սկսեց խուզարկություններ կատարել։ Երևանից հասել էր գաղտնի և ստիպողական մի հեռագիր, որի մեջ ասվում էր՝ թաթարներից կազմված մի բանակ, օգտվելով Հայաստանի մյուս սահմանների վրա տեղի ունեցող դեպքերից, մտել է Դիլիջանի կողմերը, Սևանա լճից ոչ շատ հեռու մի վայր, և այնտեղից սպառնում է ամբողջ Հայաստանին։ Թումանյանին հրամայված էր հսկել այդ զորքի շարժումների վրա։

«Աշոտ Երկաթը» անդադրում շարժման մեջ էր։ Ապակու կպած հեռ-

կայական միջատի նման նա աղմուկով վազում էր, դրոփում, փոշում և քիթը ջրի հայելին կտրելով շտապում լճի մեկ կողմից մյուսը։ Նավային սպա Թումանյանը հեռադիտակը ուղղում էր դեպի դիմացի ժայռերը և ուշադրությամբ դիտում։ Թնդանոթներին և գնդացիրներին սպասարկելու համար նրան տվել էին մի քանի զինվորներ։ Նավաստիները զբաղվում էին մեքենայով և ուրիշ գործերով։

Հրամանատարը գոհ էր իր մարդկանցից։

Թնդանոթաձիգ զինվորները կարգապահ, խելացի և վճռական տղաներ էին։ Երեք նավաստիները, որոնք այնքան անպաշտպան և հուզիչ էին իրենց պատահական համազգեստների մեջ, գործի ժամանակ պարզ, համեստ, քաջ մարդիկ էին։ Կատակասեր և նուրբ, ինչպես լինում են երբեմն գյուղացիները։ Անձնվեր և խորապես հայրենասեր։

Սուրենը, Սարգիսը, Մարգարը։

Մարգարը մոխրագույն աչքերով նիհար, աստերի ոսկորները դուրս ցցված, դրանով հանդերձ պնդակազմ, քիչ ջղային, քիչ մելամաղձոտ և քիչ էլ երազուն երիտասարդ էր։ Քթի տակից միշտ մի երգ էր մմռռում և հանգստի ժամանակ աչքերը հառում էր Նոր Բայազետի կողմը և այդպես անշարժ մնում։

Իր ընկերների կատակի առարկան էր։

— Հը, Մարգար, հարսդ քեզ է սպասում... Տո, մի հեռագիր չուղարկե՞ս...

Մարգարը բողոքում էր և մինչև ականջները կարմրում։

— Էշի քուռակներ... Սուտ է... Իմ արև...

Սուրենը և Սարգիսը առողջ գյուղացիներ էին, ցած և համառ ճակատներով, սուր և խելացի աչքերով։

Բանակից ուղարկված զինվորները այդ երեքի վրա նայում էին քիչ բարձրից։ Իրենք մալ զված, պատրաստված և ճակատամարտերի մասնակցած իսկական զինվորներ էին, իսկ մյուսները...

— Ադա, ի՞նչ է, կարծում եք կովելը կորկոտ ուտե՞լ է...

— Կորկոտ չէ, հարիսա է... Մեծ-մեծ մի փրթեք, հալա թող կռիվը ցա, տեսնենք...

Ամենքն էլ սիրում էին իրենց հրամանատարին, չնայած նրա պահանջկոտության և չափազանց խստության։

Մանկական աչքերով և դպրոցականի տեսքով այդ սպան, երբ հարցը գալիս էր գործի, միանգամայն այլափոխվում էր։ Նա դառնում էր կտրուկ, սառը, մանրակրկիտ։ Ուզում էր, որ նավի վրա ամեն ինչ փայլփլի, ամեն ինչ տեղը դրվի, ամեն մի անկյունը մաքուր մնա։ Առար-

կություն չէր ընդունում։ Տված հրամանները պիտի կատարվեին անմիջապես և ամենալավ կերպով։

— Ձեր ամեն մի շարժման համար պատասխանատուն ես եմ, ուստի խոսք չեմ ուզում, գործ, գործ...

Գիտեին, որ այդ խոսակցության տակ ծածկված էր բարի, վեհանձն մի սիրտ։ Տպավորում էր նրանց նաև այն հանգամանքը, որ Թումանյանը տեղացի չէր, երկրի սովորություններին և հոգեբանության ծանոթ չէր։ Օտար աշխարհում կորած մարդու տեսք ուներ։ Հայերենը արտասանում էր ռուսական շեշտով, բառերը որոնելով և շատ անգամ շփոթվելով։

— Ախպեր,— ասում էին նրանք,— մարդը ռուսական պատերազմական մեծ նավերի վրա աֆիցեր է եղել, կռիվների է մասնակցել, գիտի ինչ է ասում...

— Ճիշտ է...

Եվ նրանցից ամեն մեկը աշխատում էր հրամանատարին գոհացում տալ...

Թումանյանը նրանց բացատրում էր իրենց կատարած դերի կարևորությունը։ Մտնում էր ռազմագիտական մանրամասնությունների մեջ, քարտեզը ձեռքին ցույց էր տալիս թշնամու հնարավոր դիրքերը և այն, ինչ որ իրենք կարող էին անել երկիրը պաշտպանելու համար։ Ուզում էր, որ իմանան, սովորեն, գիտակցեն։

— Եթե կռվի ժամանակ սպանվեցի... դուք պիտի իմանաք... ինչ պետք է անել առանց ինձ...

Լսում էին ուշադրությամբ և համակրանքով։

Նավը անդադար թափառում էր։

Շրջակա գյուղերի շինականները իջնում էին ափ, ձեռքը տանում իրենց ճակատի վրա, երկար նայում։

Ասես, պզտիկ մի բան է, համա տես ինչ դալմաղալ է անում...

Երբեմն անցնում էին կղզու մոտից, որը լցված էր բանտարկյալներով։ Այդ մարդիկ ման էին գալիս ափի վրա, պառկում էին արևի տակ, անվերջ վիճում, իսկ երբ նավը անցնում էր, գլուխները վեր էին տնկում և քմծիծաղով նայում։

Մի օր մեքենայի հետ ինչ-որ մի բան պատահեց և նավը ստիպվեց կանգ առնել կղզու ափից ոչ հեռու։ Կոմունիստ բանտարկյալները իջան մինչև ջուրը և սկսեցին խոսել նավաստիների և զինվորների հետ։

— Ընկեր գյուղացիներ,— գոռաց մեկը,— ինչո՞ւ եք ծառայում ձեզ հարստահարողներին... Եթե կարծում եք, որ ձեր դրեդնոուտը կկարողանա հաղթական կարմիր բանակը կանգնեցնել, մեծապես սխալվում

եք. ճանճը փղի դեմ ի՞նչ կարող է անել... Ջուրը գցեցեք ձեր էդ աֆիցերին և միացեք մեզ... միևնույն է, մերոնք այսօր-վաղը կգան...

— Դուք ծառայում եք սով և պատերազմ բերող իմպերիալիստներին,— գոռաց մի ուրիշը,— կորչե՛ն դաշնակները և կեցցե՛ պրոլետարիատը...

Կողին լցվեց աղաղակներով։

Թումանյանը սաստիկ զայրացավ։

— Հեռացեք ափից,— բղավեց նա։— Եթե այդպես շարունակեք, կհրամայեմ կրակել... Հեռացեք...

— Կրակում ես, կրակիր,— պատասխանեցին բանտարկյալները։— Ձենք վախենում... Ցուսիմա... շուտով կտեսնես...

Ձինվորները և նավազները մնացին լուռ։

Երբ նավը ափից հեռացավ, Թումանյանը չկարողացավ լռել։ Հեռադիտակը աչքերից վար դրեց և վառված նայվածքը ման ածեց մարդկանց վրա և ասաց՝

— Մի՛ հավատաք... Ես ձեզ ճիշտ եմ ասում, մի՛ հավատաք... Դե, գործի. . Ղեկը աջ...

Եվ նավը արագ հեռացավ։

Լիճ, լեռներ, ամայություն, լռություն։

Ելենովկայի ափին բարձրահասակ, մորուքավոր մի մալական և մի հայ շինական, որոնք կանգնած էին նոր շինված կամրջակի առաջ, աչքերը կես փակած հետաքրքրությամբ նայում են նավին և խոսում։

Մալականը իր ահագին, մազոտ ձեռքը երկարում էր մինչև շինականի աչքերը, բոլոր մատները լայն բաց անում և հայերենը մենտորական շեշտով արտասանելով, իբր թե խոսում էր մի աշակերտի հետ, և ասում էր՝

— Ի՞նչ ես տեսնում. մի ձեռք և մատներ... Դրա մասին խոմ կասկած չկա. տեսնում ես մի ձեռք և տեսնում մատներ...

Հայ շինականը իր փոքրիկ աչքերը լայն բաց արած ուշադրությամբ նայում էր նրա կոշտ կապած մատներին, հետո նրա երեսին, մտածում էր և համաձայնվում։

— Հա էլի... ի՞նչ ասել, ձեռք է...

— Լավ —շարո նակում է համբերությամբ մուժիկը,— լավ... Ինչպես էդ ձեռքը ձեռք է, հնպես էլ իմ ասածը ըղորդ է... Հասկանո՞ւմ ես։

Հայը աչքերը բացի-փում է։

— Հասկանո՞ւմ ես .. Ասենք դու շինական ես... Իբրև շինական, ի՞նչ է քեզ հարկավոր ապրելու համար... Քեզ հարկավոր է մի կտոր

հող, քեզ հարկավոր են լծկան եզներ, քեզ հարկավոր է կով՝ ընտանիքին կաթ տալու համար և քեզ հարկավոր է հանգստություն՝ աշխատելու համար... Ջես ուզում կռիվ, դալմաղալ, ուզում ես խաղաղություն, լավ հարևանություն... Եվ ուզում ես ազատ պահել քո հավատը, քո եկեղեցին, մարդ առանց հավատի չի կարող ապրել...

— Ճիշտ է առանց հավատի և եկեղեցու կյանք չկա...

— Լավ, ուրեմն հասկանում ես։ Հիմա ուրիշ մի բան... Սրանից առաջ Ռուսաստանին հրամայում էր ցարը, Նիկոլայը... և դրա համար էլ արդարություն չկար։ Ամեն բան կախում ուներ ոստիկաններից և Սինոդից։ Հայերին հալածում էին, ուզում էին նրանց եկեղեցիները գրավել... հալածում էին մալականներին Սինոդի պատճառով։ Մեր ձեռքից խլեցին մեր հողերը, մեր տները և մեզ քշեցին այս կողմերը և մեր եղբայրներից շատերն էլ գնացին Ամերիկա, Ալյասկա, Կանադա, Սիբիր... Այդ ամենը պատահեց մեր հավատի համար... Ի՞նչ է, դա արդարությո՛ւն էր, չէ... Աստված տեսավ, վերևից նայեց և պատժեց։ Կրակի ավելը ուղարկեց երկիր և մաքրեց։ Ցարին և Սինոդին ոչնչացրեց, ոստիկաններին կոտորեց... Հիմա ամեն մարդ կարող է հավատալ այն հավատին, որ ուզում է և հողերն էլ պատկանում են ոչ թե հարուստին, պամեշչիկին, այլ՝ շինականին, որ նրանց վրա աշխատում է... Ինչ ասում եմ, ճիշտ է, ճիշտ է... ինչպես օրվա լույսով տեսնում ես իմ ձեռքը և մատները...

— Դե, որ ասում ես, Ֆոմա, երևի մի բան իմանում ես... աշխարհը փոխվել է...

— Լավ,— շարունակում է մուժիկը,— հիմա մի ուրիշ հարց... Նայիր էս ձեռիս. ձե՞ռք է, թե ձեռք չի...

Հայը կուտակում է հոնքերը։ Իր քթի տակ տնկված ռուսի ձեռքը սկսում է կասկած արթնացնել... Ո՞ւր է ուզում հասնել...

— Դե, ասենք ձեռք է,— պատասխանում է շինականը թերահավատությամբ։

Ռուսը աչքերը պլզում է։

— Ո՞նց թե... ասենք,— բողոքում է նա։— Տնաշեն, էս ձեռք է, թե ձե՞ռք չի... Հալա լավ նայիր...

Հայը մեղավոր ծիծաղում է։

— Հա էլի, ձեռք է ..

— Խարաշո... Քանի օր է նայում եմ, նայում եմ ջրի վրա բզբզող էդ ճանճին, որ նավ են ասում և ինքս ինձ հարց եմ տալիս. ո՞վ է էդ աֆիցերը, որ էդ նավը սարքել և հիմա էլ քշում է... Էդ ջահել աֆիցերը առաջներում ծառայում էր ռուսական ռազմանավի վրա... Պոդպատե

լեռան նման մեծ նավեր, ուր հազարավոր մատրոսներ էին ծառայում, հազարավոր թնդանոթներ ունեին, ռումբեր և մեքենաներ ունեին... էդ կղզու նման ածդահաներ էին, որ երկաթ և կրակ էին փոխում, քաղաքներ քանդում, ուրիշ նավեր խորտակում... Հիմա, էդ տղան էդ ամենը թողել է, մեխերով մի քանի տախտակ կպցրել և նրա վրա կանգնել... Մտածում եմ և սիրտս ուղղակի ցավում է... Չեմ ասում, լավ տղա է, եկել է հայրենիքին ծառայելու, ժողովրդին օգնելու... Չեմ ասում... համա ասում եմ, գիժ է, սխալվում է... ի՞նչ կարող է անել մեծ ուժերի դեմ...

Հայ շինականը ոչինչ չի պատասխանում. ռուսը մորուքը շոյում է և սրված աչքերը հառում նրա աչքերին։

— Թողնենք աֆիցերը և նրա տախտակները և գանք էս Արմենիային... Եթե լավ նայենք, դրությունը նույնն է... Ի՞նչ կարող է անել էս փոքրիկ, պատերազմից չարչարված, աղքատացած, թշնամիներով շրջապատված Արմենիան առանց Բասեյայի, մանավանդ որ զենք չունի, պաշար չունի... Առաջ, երբ թուրքը Մոսկովի անունը լսում էր՝ դողում էր և... ամեն մարդ ապրում էր հանգիստ, զբաղվում էր գործով, ալիշվերիշ էր անում, պանիր էր շինում, բազար էր բերում, կտավեղեն էր անում, տուն էր բերում... Հիմա տես, անվերջ պատերազմ, անարխիա... Հարց եմ տալիս, ինչի՞ դեմ կենալ ռուս զորքերին... ուզում են գալ երկիրը պաշտպանել, հաց բերել, պաշար բերել...

Նայում է հայ շինականի աչքերի մեջ։

Հայ շինականը աչքերը վար է առնում և չի ուզում ասել այն, ինչ մտածում է։

— Ի՞նչ անել... մեծեր կան, մեզանից շատ գիտեն և, առհասարակ, աշխարհի բաները էնպես են...

Մուժիկը ձեռքերը նոթում է կաֆտանի գրպանները և, անբավական, լռում։ Աչ ոտքի ծայրը արագ-արագ խփում է գետնին։

— Ճիշտ է,— ասում է նա վերջապես — աշխարհի բաները էսպես են և ղորդը ղորդ է, ինչպես իմ անունս Ֆոմա Կարելին է և քո անունդ Սմրատ է...

— Կապրենք կտեսնենք, Ֆոմա ջան.. Աստված մեծ է և ամեն ինչ կկարգավորվի... Ախր, ի՞նչ ես ուզում.. մենք, շինական մարդիկս ինչ անենք. բեռը առել ենք մեր ուսերի վրա և նստել...

— Խալիֆը հիմա էդպես չի մտածում,— բողոքում է ռուսը— Տե՛ս, Ռուսաստանում ինչ է կատարվում, ժողովուրդը անում է ինչ ուզում է. հրամայում է...

Վեզուն թրխկացնում է։

Հետո խոսում են կովերի, ոչխարների, արոտատեղիների մասին։ Գիշերները նավը կանգնում էր կամրջակի մոտ։

Մալականները հավաքվում էին հարուստներից մեկի տունը։ Դրոները և պատուհանների փեղկերը պինդ փակում էին։ Ներսից լսվում էին մեղմ երգի ձայներ, ապա ամեն ինչ մտնում էր ծանր և խորհրդավոր լռության մեջ։

Լճի երեսին քամին աստղեր էր ման ածում։ Փոքրիկ ալիքները նրանց քշում տանում էին կղզու ափը և ծփալով խփում քարերին։

Մալականները նորից երգում էին և աղոթում։ Ինչպե՞ս էին աղոթում, դա մեծ գաղտնիք էր։ Հազար ու մի բան էին պատմում այդ մասին։ Ասում էին, որ կատարում են մութ և տարօրինակ արարողություններ, մինչև լուսաբաց։

Նավի վրա հրացանը ծնկներին կուչ եկած Մարգարը, որ հերթապահ էր, նայում էր լճին, աստղերին, ժայռերին և կամաց օրորվում։ Աչքերը փակվում էին. ուժ էր անում չքնելու։ Երբեմն մոտեցող քայլերի ձայներ էին լսվում։ Գլուխը թափահարում էր, հրացանը սեղմում։

— Ո՞վ է...

Քամին ձայնը առնում տանում էր։ Ոչ ոք չէր գալիս։

Ու ծանրացած նրա աչքերի տակ աստղերը մերկանում էին, երկինքը բազուկները լայն բաց էր անում, ժայռերի մեծացած ստվերները ընկնում էին նրա գիրկը և ամեն ինչ պարում, եղբայրանում էր.

Մարգարի ուժասպառ գլուխը վայր էր ընկնում կրծքի վրա։

4

Այն օրը մայրաքաղաք ժամանողները, մանավանդ նրանք, ովքեր գալիս էին Քանաքեռի կողմից, զարմացած կանգ էին առնում մի չտեսնված տեսարանի առաջ։ Բոլոր տներից քաղաքացիները շտապ դուրս էին նետվում, իրենց բաճկոնի երկրորդ թևը արագ-արագ հագնելով կամ փողկապի ծայրերը քաշելով վազում էին... Կենտրոնական փողոցից իջնում էին դեպի քաղաքի վարի մասը։

Խառն բազմություն՝ մարդիկ, կանայք, երեխաներ։

Քաղաք նոր հասնողները, մեծ մասամբ շինականներ, մի վայրկյան մնում էին քարացած. տեր աստված, արդյոք երկրաշա՞րժ էր, հեղափոխությո՞ւն էր, թե թշնամիները արշավել էին... Նախ նրանք մտածում էին ետ փախչել, ապա, չկարողանալով զսպել հետաքրքրությունը, իրենք էլ՝ հոսանքից տարված, գլխարկը երկու ձեռքով վար քաշած, բազուկները ճոճելով գլխիկոր գնում էին մյուսների հետևից։

Գնալով բազմությունը շատանում էր։ Կողմնակի փողոցներից նոր-նոր մարդիկ էին գալիս։ Էլ ո՞վ ասես չկար։ Կանայք՝ ուսերից ընկնող շալը մեկ ձեռքով վեր էին քաշում և մյուս ձեռքով պահում լացող երեխաներին։ Ջուստերը չմփացնող պատանիներ։ Անսպասելի կենդանություն առած զառամյալ ծերունիներ։ Դպրոցական աղջիկներ, աղջիկներ, պաշտոնյաներ և զինվորականներ։

Շատերը վազում էին առանց իմանալու, թե ո՞ւր են գնում։

Փորձում էին հարցուփորձ անել։ Իզուր սակայն։ Վազողները ժամանակ չունեին պատասխանելու։ Ձեռքերով ինչ-որ անորոշ նշաններ էին անում կամ խուլ մռնչում։ Ամենից բարյացակամները իրենց գլուխը շրջում էին, «նավ» գոռում և անհետանում։

Նա՞վ...

— Նա՞վ,— ինքը իրեն հարց էր տալիս շշկլված նորեկը։— Երևանում նա՞վ։ Խալխը գժվել է։

Այդ առեղծվածից բոլորովին ցնցված և հետաքրքրությունից կատաղած նա այլևս կորցնում էր մտային հավասարակշռությունը, արմունկները դուրս հանում, վազողներին հրմշտկում, հրում և աշխատում առաջ անցնել։

Հեռվից, կայարան տանող մենակյաց և փոշոտ ճանապարհին դեռ չհասած, նա լսում էր խուլ և մռնչող աղաղակներ։ Ավելի մոտենալով նա տեսնում էր ճամփու երկու կողմերում խռնված մեծ ամբոխը, որը անհանգիստ ալիքի նման առաջ ու ետ էր շարժվում, հուզվում, գրգռվում, հարյուրավոր ձեռքերով օդը թափահարում, ինչպես այդ պատահում է ձիարձակարանում, վազքի վերջին վայրկյաններին։

Աչքերը սրած նայում էր։ Ճամփի մոտ տնկված բարձր կաղամախիների շարքերը ծածկում էին տեսարանը և նրա անձկությունը սաստկանում էր։ Վազում էր նոր թափով և քանի մոտենում էր, այնքան նրա զարմանքը ավելանում էր։ Նրա ճակատից քրտինքի մեծ կաթիլներ էին վազում և աչքերը լայնանում էին։ Նա տեսնում էր վեր կարկառված մի կայմ, մի ծխնելույզ, ապա նավի քիթը։

Իսկական նավի քիթը...

Այդ վայրկյանին նրան բռնում էր վարանոտության նման մի բան. մարմինը դոգի մեջ էր ընկնում և նա, ղոչ ոչխարի նման գլխի հարվածներ տալով, աշխատում էր բազմության միջից ճամփա բացել և հասնել առաջին շարքերին։ Բազմությունը նրան հրում էր ետ, իսկ նա համառ, կրկնապատկում էր ուժերը, և ծեծվելով, ճզմվելով, գզմկելով

վերջապես հասնում էր մի տեղ, որտեղից ոտքի մատների վրա ցցվելով կարող էր ամեն ինչ տեսնել։

Նայում էր և մնում ապշած։ Երկար շարքով տասնյակ եզներ՝ լծված գերաններով սարքված մի կառուցվածքի, որի վրա ցցված էր մեծ և խոկական մի նավ, ահագին ճիգ էին անում առաջ գնալու համար, վախեցած ամբոխի աղաղակներից և իրենց մեջքի վրա ընկնող հարվածներից։

— Հը, մոռ, մոռ,— գոռում էին ամեն կողմից։ Եզները լարում էին իրենց ամբողջ ուժերը, քաշում, բայց առաջանալու տեղ ետևի ոտքերի վրա վայր էին ընկնում, ծանր գլուխները ծռում, արյունով լցված աչքերը շլցում և այդպես նույն կետի վրա մնում։

Ծովային նավապետի գլխարկով մի մարդ, բարձր կոշիկներ հագած և կապույտ ռուսական շապիկ, ոտից մինչև գլուխ փոշիով ծածկված, ձայնը խզված և աչքերը մտահոգ, աջ ու ձախ էր վազում, սրան նրան հրամաններ գոռում, կառուցվածքի տակ գերաններ դնել տալիս, ամբողջ մարմնով գետնի վրա փռվում, նայում, ապա վեր ցատկում, եզները քաշող գյուղացիներին ինչ-որ պատվերներ տալիս, վերադառնում. նորից փռվում գետնի վրա և ձեռքերով նշաններ անում։

Բազմությունը գնալով մեծանում էր։

Մի քանի ոստիկաններ աշխատում էին կարգապահություն հաստատել։ Անհուսալի գործ։ Ճանապարհի եզրին հաստատված շարքերը անդադար խորտակվում էին, բազմությունը թափվում էր ճանապարհի վրա, մտնում եզների կանգնած տեղը, նավի առաջ պատ կազմում, վախեցնում կենդանիներին, խանգարելով նավի փոխադրության աշխատանքները։

— Ախր, չի կարելի... ախր, չի կարելի...

Ոստիկանները հրացանով հրում էին, սպառնում։ Ոչինչ չէր օգնում։ Հազիվ առաջին շարքերը ետ էին մղվում, հետևից ուրիշ եկողները նրանց քշում էին առաջ։ Մարդկանց գրեթե հիվանդագին հետաքրքրությունը այնքան մեծ էր, որ կարգ պահպանելը դառնում էր անկարելի։

— Խփեցի, քո արև, խփեցի... Հալա-հալա-հալա...

Ո՞ւմ ես ասում...

Մարդկային մարմինների այդ կոհակները մեկը մյուսի հետևից թափվում էին, մեկը մյուսին սեղմում, ճզմում։

Սկզբում Հերյանը գոհ էր, որ նավը այդքան հետաքրքրություն է շարժում։ Նեղվում էր, բայց ոչինչ չէր ասում։ Սակայն, երբ աշխատանքը միանգամայն անկարելի դարձավ այդ խառնաշփոթության պատճառով, նա կանգնեց ճանապարհի մեջտեղ, թևերը խաչաձևեց կրծքի վրա և

հանդիմանությունով և տխրությամբ լցված աչքերը ման ածեց չորս կողմը։

Այդ կեցվածքը ոչ մի ազդեցություն չունեցավ։

Մի քանի վայրկյան հետո նորից կանգնեց և այդ անգամ նայեց բարկացած աչքերով։

— Նու, էդպես չի կարելի,— մռմռաց նա։

Բարձրացավ նավի տակը զետեղված կառուցվածքի վրա, ձեռքերով լայն շարժումներ արեց լռություն խնդրելով, ինչպես անում են ճառել ուզող քաղաքական գործիչները, և խզված ձայնով գոռաց.

— Խնդրվում է պատվական ժողովրդից մեր դժվարին և պատասխանատու գործը չխանգարել...

Ուզում էր դեռ մի քանի խոսք ավելացնել, բայց կեցցեներով և հուռռաներով լցված այնպիսի մի աղմուկ բարձրացավ, որ նա չկարողացավ շարունակել։ Փոշիով ծածկած նրա բերնի ծայրերից ժպիտը և գոհունակության երկու գծեր վայր ընկան և նա շտապ իջնելով գյուղացիներին պատվիրեց եզներին քշել։

Եզներին քշել չկարողացան։

Ջրի թամաշայից ուրախացած ամբոխը խանգարում էր եզներին։ Ավելին, գտնվեցին մարդիկ, որոնք պարտք համարեցին գործին խառնվել, խորհուրդներ տալ, վիճաբանել... Գերանները լավ չէին դրված։ Առաջին եզներին պետք էր ետ տանել, ետևի եզներին բերել առաջ։ Ինչո՞ւ նավի տակ անիվներ չէին դնում, ինչո՞ւ էդպես, ինչո՞ւ էնպես... Մինչ քաղաքավարության համար լսում էին մեկին, ամբոխի միջից ուրիշներ՝ ձեռքերը բարձրացրած պնդում էին ճիշտ հակառակը։ Գոռում էին, վիճում, մեկ մեկի վիրավորում և կովի բռնվում։

Այդ դադարի ժամանակ քրտինքից և փոշուց ճերմակած եզները իրենց ոտքերը լայն չռում էին, աղմուկով միզում և թավշյա աչքերը մոտակա կանաչ մարգագետնի վրա հառած մնում անշարժ։ Գյուղացիները ձեռքերը ծալում էին երկար ցուպերի ծայրին և նույնպես սպասում։ Ոստիկանները, քրտինքի մեջ կորած, ուժասպառ, դեսուդեն էին նայում և լռում։

Հերյանը՝ զզված, հուսահատված, ձայնը գլխին էր տալիս և բողոքում։

— Չէ, չի կարելի, էդպես չի կարելի... Մենք ուղղակի կուլտուրայից զուրկ ժողովուրդ ենք... առաջադիմություն ասված բանը չենք սիրում... Ամո՛թ է... Ասում եմ, ամո՛թ է...

Չորս ժամից ավելի աշխատեցին, բայց նավը հինգ քայլ չէր առաջացել։

Հինգ քայլ, հինգ քայլ... Մինչև Սևան հասնելու, զառիվերները բարձրանալու համար ինչքա՞ն ժամանակ էր հարկավոր, ուրեմն... Հինգ քայլ...

— Տղերք ջան, ձեզ մատաղ,— աղաչում էր Հերյանը, հուսահատությունով և կատաղությունով լցված ձայնով,— ձեր հոգուն մատաղ, հազիվ հինգ քայլ ենք արել, հինգ քայլ...

Գյուղացիները ցուպերը վեր էին բարձրացնում։

— Հո՛, հո՛, հե՛, հո՛... Մոռա...

Եզները խորհրդավոր և անուշ երազից հանկարծ արթնացած՝ գլուխը վար էին առնում, ետևի ոտքերի վրա պինդ կոթնում և ամբողջ ուժով քաշում...

Նավի տակի տախտակները խուլ ճարճատում էին։ Կայմի վերի ծայրը կամաց երերում էր։ Ահագին այդ ծանրությունը թվում էր... թե պիտի շարժի։

— Քաշիր, քաշիր...

Հերյանը գետինը փռված նայում էր ճզմվող գերաններին, աջ ձեռքը բարձրացնում, նշաններ անում։ Մտրակները վզզում էին օդում, գյուղացիները գոռում էին, աջ ու ձախ վազվզում, և նավը, հսկա և անտարբեր, քիչ ցնցվում էր և մնում այնտեղ, որտեղ էր։

Այդպես շարունակվեց մինչև երեկո։

Ամենքը ուժասպառ էին։ Եզները և մարդիկ։ Սակայն, նայեցին, զննեցին, չափեցին և ուրախացան։ Նավը ավելի էր առաջացել, քան կարելի էր ենթադրել։

Ձայնը կտրված, քրտինքի մեջ կորած և հոգնած, Հերյանը, վերջին կարգադրությունները անելով, նորից ամեն ինչ դիտեց, նորից չափեց և վճռական կերպով հայտարարեց, որ այլևս կասկած չկար, նավը պիտի կարողանար տեղ հասնել։

— Ի՞նչ ասաց,— հարցրին բազմության հետևում կանգնողները։

— Ասաց, որ գործը լավ է գնում և նավը պիտի տեղ հասնի...

— Աստված տա, աստված տա...

Բազմությունը դեռ երկար ժամանակ մնաց նավի առաջ։

Երեկոն, մթնշաղը և խաղաղությունը ստվերներ փռեցին նավի շուրջը։ Նավը վեր ցցվեց հեքիաթային մի աշխարհից վայր իջած երազանքի նման։

Նավի շուրջը եզները պառկեցին և գյուղացիները կրակ վառեցին

կերակուր եփելու համար։ Խարույկի անհանգիստ բոցերը կրկնապատկեցին այդ տեսիլքը։

Նավը մեծացավ, ծածկվեց խորհուրդներով և դրոշմվեց երևակայությունների մեջ անկարելի հրաշք բնորոշող եղելության նման։

Առօրյա կյանքի մտահոգությունները մի քանի օրով անհետացան։ Մոռացվեցին անգամ անողորմ պատերազմը, սովը և անասելի թշվառությունները։

Ամենքը զբաղվեցին նավի ճակատագրով։

Եվ որովհետև ով ասում էր նավ, հասկանում էր Հերյանը, նա դարձավ օրվա կենտրոնական այն անձնավորությունը, որի մասին ամենքը խոսում էին։

Այս ժողովուրդը հոգնած՝ տարիներով տևող տառապանքներից, անմիտ և աննպատակ չարչարանքներից, ծարավ էր լույսի, ծարավ էր հույսի։ Նրա ջղագրգռված երևակայության մեջ ամեն ինչ մեծանում, կրկնապատկվում, երազի և միթոսի կերպարանք էր ստանում։ Ծովի անաչառ ալիքների դեմ անհավասար պայքար մղող մարդու նման նա կառչում էր ամենաչնչին գերանի կտորին և փրկության նոր ճրագով լուսավորում։

Հերյանը դարձել էր օրվա հերոսը։

Հերյանը խորհրդանշան էր դրական կառուցողականության, հանդգնության, հարատևության։ Այդ հատկությունները մոտ էին ժողովրդի սրտին և բնորոշել էին նրա պատմական գոյությունը։

Նավի մասին խոսում էին ամբողջ երկրում։

Արկածախնդրության այդ լուրը տարածվել էր մի վայրից մյուսը, հարստանալով, բարդանալով, նորանոր իմաստներ հագնելով, ինչպես այդ պատահում է դյուցազնական երգերի հավաքական ստեղծագործության ժամանակ։ Ամեն գավառ մի բան էր ավելացրել, ամեն գյուղ մի տող, մի մանրամասնություն, մի զարդ։

Լեռնային վայրերում լուրը փարթամացել էր և կրոնական լեգենդի բնույթ ստացել։

Պատմում էին...

— Ասում են, Երևան քաղաք է հասել մի մարդ, ուժեղ, հաղթանդամ և սուրբ հոգուց ներշնչված... Ասում են տեսիլք է ունեցել. սուրբ Կարապետը եկել կանգնել է նրա տեղաշորի մոտ և ասել. «Վեր կաց, որդի, սիրելի, գնա դեպի էն մեծ ծովը, որ կա արևի ծեգի կողմում։ Որ հասնես էդ ծովի ափը, էնտեղ կա մի մեծ նավ. վերցրու էդ նավը և

դաշտերի, ձորերի, գետերի և լեռների միջով հասցրու Հայոց աշխարհի էն լիճը, որ լեռան վրա է... որտեղ ապրել են սուրբեր և ճգնավորներ... որտեղ և ճգնել է մեր Լուսավորիչը»... էսենց։

— Հետո երկինքը որոտացել է և սուրբ Կարապետը ասել՝ «էդ նավը թող լող տա սրբազան լճի վրա ամեն ուղղությամբ... և մարդիկ տեսնեն աստվածային ոգու ներկայությունը, նրա հաստատ կամքը հայ ժողովրդին օգնելու... որ էնքան արին է թափել Հիսուսի համար»... էսենց...

— Էդ ձենը և էդ որոտը լսելուց մարդը փովել է գետնին, երկրպագել, և ամբողջ սրտով աղոթել, հետո վեր կացել գնացել արևի ծեգի կողմի ծովը, նավը գտել ոնց որ սուրբ ոգին ասել էր, և դաշտերի, ձորերի, գետերի և լեռների միջով բերել է Հայաստան... հիմի հասել է Երևան... Բա, հրաշք չի, ի՞նչ է, քե մատաղ, ի՞նչ է...

Իսկ ավաններում և քաղաքներում ասում էին՝

— Կապիտան Հերյանը՝ ահա իսկական մի մարդ։ Մեծ մի մարդ։ Հազվագյուտ մարդկանցից մեկը։ Հղանում է մի գաղափար և առանց տատանումի լեռ և անապատ հաղթահարելով իրագործում է այն։ Հանդուգն, տոկուն, հերոսական, համեստ։ Դե, մենք հայերս, առհասարակ էդպես ենք...

Թեպետ ոչ ոք ծանոթ չէր նրա կենսագրությանը, այնուամենայնիվ, հազար ու մի զրույցներ էին շրջում նրա անցյալի մասին։

Պատմում էին նրա հերոսությունները, նրա անհավատալի արկածները։

— Դե, այդ մասին,— ավելացնում էին նրանք վստահ շեշտով,— թե՛ ռուսական և թե՛ զագրանիչնի թերթերը գրեցին և ամեն մարդու հայտնի է...

Կամ, ավելի հեռուները գնալով խորհրդավոր ձայնով պատմում էին, թե նա հեռավոր ծովերում թափառելու ժամանակ, մի նոր, մի զարմանալի, մի շատ հարուստ կղզի էր գտել և, բնականաբար, անմիջապես մտածել էր այնտեղ զետեղել գաղթականներին, մանավանդ վանեցիներին, բայց էդ-էդ-էդ խորամանկ և անհագ Ալբիոնը միջամտել էր՝ Հայաստանը դրոշակ չունի ասելով, և ձեռքից կղզին խլել էր... խլել էր միայն թղթի վրա, որովհետև Հերյանը, այդպիսի անարդարության դեմ զայրացած, կղզու իսկական տեղը չէր ասել... Հիմա դրոշակ ունենք, իսկ Հերյանը գաղտնի ծրագիրներ ունի կղզու մասին...

— Ադա,— առարկում էին շատերը,— չափազանցություն չկա...

— Ք՝ ա՛ռև, քեզ բան եմ ասում...

Իբրև զգայուն արարածներ, կանայք խոսում էին նրա աչքերի գույնի, նրա տեսքի մասին սիրահարված շեշտով, երգեցիկ թրթռացող ձայնով, և տղամարդիկ, թեպետ ներքնապես նախանձով լցված, չէին համարձակվում հակաճառել։

Բանը հասավ այնտեղ, որ նոր վարդապետության ծարավ երիտասարդ մտավորականները սկսեցին նրա շուրջը ընկերափիլիսոփայական տեսություններ ստեղծել։ Զգիտես որտեղից, հրապարակ նետվեց հերյանականություն բառը, իբրև հոմանիշ կյանքի նոր ուղու և նոր ոճի։

Նրա դեմ առաջիկեցին մի քանի տարոնցիներ։ Ըստ նրանց, Հերյանը եթե նույնիսկ ծնված չէր Տարոնում, անկասկած, իր բնութագրական գծերով, կեցվածքով և մտայնությունով տարոնական էր, ինչպես տարոնական էին... անցյալի և ներկայի բոլոր հայ ներկայացուցչական դեմքերը։

Այդ լսելով ղարաբաղցիները զայրացան։ Դա պատմական խեղաթյուրում էր։ Ամենքին հայտնի էր, որ Ղարաբաղը եղել էր այն վայրը, որտեղից դուրս էին եկել ականավոր հայ դեմքեր։ Մոռանում էին գրաֆ Լորիս-Մելիքովը, գեներալ Լազարևը, գեներալ Շելկովնիկովը, գեներալ Տեր-Ղուկասովը... և մոռանում էին մանավանդ, որ հարյուր ուրիշների շարքում Զրադաշտը ծնվել է Ղարաբաղում և պատճառ չկար նրան հայ չհամարելու։

Բայց տեղացիները անդրդվելի կողմնակից էին հերյանականության։ Նրանք ասում էին՝

— Որոշել, վճռել, իրագործել, լինել հերյանական։ Թեզիս՝ գաղափարի հրամայականը, հակաթեզիս՝ իրականության դժվարությունները, համադրաթեզիս, հաղթահարում, հերյանականություն։

Այդ վիճաբանությունները շարունակվում էին մինչև ուշ գիշերը բուլվարում, հրապարակներում, տներում։

Մարքսիստները լսում էին, ծիծաղում։

Ինքը, օրվա հերոսը, այդ իրադարձություններին անտեղյակ էր։

Կլանված իր աշխատանքներով, իր մտահոգություններով, առավոտ կանուխ, քաղաքի վերի մասից նա իջնում էր վար, մտազբաղ, հոնքերը կիտած, ճակատը ծանր, գլուխը վար առած և քայլերը վստահ։ Շտապում էր և մտմտում։

Նրան բարևում էին հարգանքով։

Նավը և ինքը դարձել էին ընդհանուր մտազբաղումների առարկա։ Շատ շատ, լուսաբացի մոտ, արդեն մարդիկ էին հավաքվում աշխատանքները դիտելու համար։ Մոտակա գյուղերից շուկա եկած չինականները, խուժանի տղաները, բանվորները, արհեստավորները, գործի սկսելուց առաջ նախ վազում էին նավը տեսնելու։

Նրանք, որ չէին կարողանում գնալ և իրենց աչքով տեսնել, անցնող գնացողին հարցուփորձ էին անում։

— Ներողություն, բարեկամ, էն բանը ինչքա՞ն է առաջացել...

— Վատ չի, մի քսան արշին։

— Ինչքա՞ն,— հարց էին տալիս տան ներսում գտնվողները։

— Ասում են քսան արշին... էրեկվանից ավելի...

Կանայք այդ լսում էին և ավելի եռանդով փչում ինքնաեռի կրակի վրա։ Տղամարդիկ մատիտը ձեռքին հաշիվ էին անում և մտահոգվում։ Լավ կլիներ, եթե եղների թիվը ավելացնեին։ Ասենք եթե օրը հարյուր արշին առաջ քշի...

— Փառանձեմ, ի՞նչ ես կարծում, մեյդանից մինչև ռուսաց դպրոցը բանի՞ արշին է...

— Ես ի՞նչ իմանամ, չեմ չափել...

Նավի մասին, ինչպես ամեն բանի մասին Հայաստանում երգ էին կապել։ Ամենքը գիտեին այդ երգը, մինչև իսկ հեռավոր վայրերում։

Եկե՛ք, տեսե՛ք ինչ մազալու բան է եկել,
Շոգեկառքից մի իսկական նավ է իջել,
Երևանի փողոցներում ման է գալիս,
Խալխը նայում, զարմանում է, ծափ է տալիս...

Երեկոները, երբ Արարատի կողմից զով քամի էր փչում, և շոգից ու մժեղներից հոգնած բազմությունը կենտրոնական փողոցի երկայնքին քայլում, գլխավոր խոսակցությունների առարկան միշտ նավն էր։

Ընդհանրապես լավատես էին և ոգևորված։ Սակայն, ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է ավելացնել, որ քննադատություններ էլ չէին պակասում։

Խուլ, ծածկված։

Կային այնպիսիներ, որոնք նավի մասին լսելուց իրենց ուսերը վեր էին առնում, քթի տակ մռմռում, փսփսում, բերանը քմծիծաղով ծռում։

Այդ քննադատների մեծ մասը ինժեներներ էին, թավշյա ժապավենի վրա ոսկեզօծ մուրճ և բահ կրող կարտուզներով, կամ ցելյուլոիդե օձիքներով և ճռճռացող կոշիկներով հին մարդիկ։ Նրանք ծխախոտից դեղնած երկու մատներով քաշում ու ոլորում էին իրենց ճերմակած բեղերը, կրծոտում էին վարի շրթունքը, աչքերը կես խփում ու լեղի խոսքեր ասում։

Ինչո՞ւ համար կառավարությունը, այդպիսի գործի ընթացք տալուց առաջ, չէր դիմել իրենց, չէր հարցրել իրենց կարծիքը։

— Գիտական և տեխնիկական միջոցները թողած՝ դուլգարի և տավարին են դիմել և... եթե այդ տգետները կարծում են, որ նավը երբևէ Սևան կհասնի, չարաչար սխալվում են։ Սևա՞ն... Ախ, պաժալստա, թողեք որ ծիծաղեմ...

Խոսում էին թունավոր ծիծաղով, մեջքի վրա բռնած գավազանը անհանգիստ ճոճելով։

Շատերը նրանց հետ անմիջապես համաձայնվում էին։ Առանց պատճառի։ Հաճախ, հայը հայի հաջողությունից տառապում է։

Այդ ժամերին Հերյանը բոլորովին հոգնած, սպառած պառկում էր իր զինվորական մահճակալի վրա, պատուհանը լայն բաց արած, դեմքը քրտինքով ծածկված, գլուխը երազներով և հաշիվներով լցված, ճակատը մժեղներից կերված։

Երբ նրան հաջողվում էր քնել, սաստիկ խռմփում էր։ Երբեմն էլ զառանցում էր և բարձր աղաղակում։ Երիտասարդ սպայի շիկավարս գեղեցիկ կինը, որի տանը նա սենյակ էր վարձել, վախենում էր, կպչում ամուսնուն։

— Ահ, պարոն Հերյան,— ասում էր նա առավոտները թեյի ժամանակ,— էս գիշեր դուք ինձ նորից վախեցրիք...

— Ես ձեզ վախեցրի՞...

— Բա... Գիշերը խոսում եք, խենթի նման գոռում, անհասկանալի բաներ ասում, կարծես թշնամիների հետ կռվում եք... Ի՞նչ իմանամ...

Նա այդ ասում էր քաղցր, երեխայական ժպիտը երեսին։ Գլուխը մի քիչ ծռում էր, աչքերը փայլփլում էին և անուշանում։ Քնքուշ և սարսռուն էակ էր, որը մեղմ հանգստություն էր տարածում շուրջը։

— Իմ արև, տիկին Վարդուհի, դուք ձեր երևակայության զոհն եք...

Հերյանը սիրում էր նրա հետ կատակել։

— Ե՞ս... զառանցե՞լ... Դուք պարզապես գիշերը երազ եք տեսնում և կարծում... Եվ գիտե՞ք... պատմությունը լուրջ հանգամանք է ստանում... Մտածում եմ, արդյոք լավ չէ՞ր լինի... մասնագետի կարիք չկա՞...

— Սուտ բաներ... Ինչպե՞ս կարող եմ երազել, եթե... քնած չեմ... երազելու համար պետք է քնել...

— Ո՞վ ասաց, որ պետք է քնել... Հարցը հենց դրանումն է... կան կլինիկական դեպքեր... հիվանդը բոլորովին արթուն վիճակում սկսում է զարմանազան բաներ տեսնել... Նավի վրա, օրինակ, մի նավազ ունեի...

Եվ Հերյանը շատ լուրջ կերպով սկսում էր հնարովի վախեցուցիչ պատմություններ պատմել։

Տիկին Վարդուհու աչքերը լայնանում էին։ Սկսում էր հավատալ Հերյանի ասածներին և կասկածել իր առողջության վրա։ Այդ վայրկյաններին, ամուսինը միջամտում էր, կնոջ վարսերը շոյում, հանգստացնում։

— Չես տեսնում, որ կատակում է... Սպասիր, բալիկս, մենք նրան մի լավ կպատժենք...

Հեծյալ հարյուրյակի գլխապետ Բաբկեն Միրանյանը սևլուկ, գանգրագեղ, տաք, քիչ դանդաղ, բայց պարզ, բնազդային, ոգևորվող մի երիտասարդ էր։ Սիրում էր կնոջը, երաժշտությունը, լավ ուտելը և իր հարյուրյակը։ Սիրում էր նաև Նապոլեոնին, որի մասին խոսում էր առանձին հաճույքով և երկար։ Սենյակի պատերը լցված էին հռչակավոր կայսեր պատկերներով, «Բոնապարտը Եգիպտոսում», «Կոնսուլը սենատի առաջ», «Կայսեր թագադրության արարողությունը Նոտրդամում», «Նապոլեոնը ստորագրում է իր հրաժարականը Ֆոնտենբլոյում» և շատ ուրիշներ։ Իբրև բացառություն, կախված էր նաև Բեթհովենի կավե դիմակը։

Միրանյանը հպարտ էր իր համազգեստով, իր դինվորական մարտական տեսքով, իր կեռ, արծաթե բարակ թելերով նուրբ հյուսվածքներ կրող Դաղստանի թրով և իր կեցվածքի այն ինքնուրույն ոճով, որը գերազանցապես կովկասյան էր։

Վայելուչ, ճկուն, կտրիճ։

Նա գալիս էր նավթահորերի նախկին սեփականատեր հարուստ ընտանիքից։ Նուրբ դաստիարակություն էր ստացել, լեզուներ սովորել։ Սիրում և հասկանում էր դասական երաժշտությունը։ Պաշտում էր ընտիր ցեղի ձիերին։ Գլուխը ածիլում էր լազի նման։ Նրա պարելը ամենքի հիացմունքի առարկան էր։

Հերյանը սիրում էր նրան։ Թեև միշտ չէ որ համաձայնվում էր նրա հետ, նրա պատմվածքներից շատերը համարում էր վառ երևակայության արդյունք։ Սակայն, իբրև ավելի տարիքավոր, նրա հանդեպ հայրական ձևեր էր ընդունում, կծու, ներողամիտ և բարյացակամ։

Երբ տրամադրությունը բարձր էր, և ուզում էր ցրվել՝ սկսում էր Միրանյանին զրգռել։

— Ախր, սիրելի Միրանյան,— ասում էր նա, բազկաթոռի մեջ խորասուզվելով և ցուցամատը վեր բարձրացնելով,— հավատո՞ւմ եք, որ ձեր Նապոլեոնը այնքան էլ կատարյալ էր... Տեսեք, ինչպես է նրան ներկայացնում Տոլստոյը «Պատերազմ և խաղաղություն» վեպում...

— Տոլստոյը, չնայած որ մեծ գրագետ է, Նապոլեոնին չի հասկացել կամ չի ուզեցել հասկանալ,— անվրդով պատասխանում էր երիտասարդ սպան։

— Ինչեր եք ասում, սիրելի բարեկամ, ինչեր եք ասում... Պատմությունը պատմություն է, մարդը եկավ Կուտուզովից ծեծ կերավ, փախավ...

Միրանյանը անմիջապես տաքանում էր. և, վառված աչքերը Հերյանի վրա հառելով, նախ հայտարարում էր, որ ծովի մարդիկ զինվորական գործերից բան չեն հասկանում, ապա վազում էր սենյակը, սպայակույտի մի մեծ քարտեզ բերում, փռում սեղանի վրա, մատով գծեր քաշում և խոսում... ռազմագիտություն, հարձակում, պաշտպանություն, մանևր և... չէր ուզում ընդունել իր հերոսի պարտությունը։

— Դա խեղաթյուրում է, առնվազն չափազանցում,— առարկում էր զվարճացած Հերյանը։

Բայց Միրանյանը նույնպես գիտեր Հերյանի թույլ կողմը և մեկ-մեկ խաղում էր նրա հոգու հետ, իր իսկ հորինած հնարովի պատմություններով։

— Պատկերացրեք,— ասում էր նա,— պատկերացրեք, եթե Մոսկվայի այդ հրդեհը չլիներ, եթե Նապոլեոնը հաջողեր... Արևելքի, և մասնավորապես Հայաստանի, ճակատագիրը կլիներ տարբեր... Տուժողը եղանք մենք...

— Հայաստա՞նը,— հարց էր տալիս Հերյանը զարմացած և հետաքրքրված,— ա՛յ քեզ նորություն, էդ չէի իմացել...

— Բա... Կայսրը իշել էր Արևելք մեծ ծրագիրներով։ Նա ուզում էր այս երկրները վերակազմել, նոր կյանքի կոչել, ազատագրել։ Նրա բանակում բավականին թվով հայ սպաներ կային. դրանք Վենետիկը գրավելուց հետո այնտեղի հայ վանքը ազատեցին, և շատերը պնդում են, որ մարշալ Մյուրադը Միհրան Մուրադյան անունով մի ղարաբաղցի էր... Ուստի հայերի մասին տեղեկություն ուներ... և եթե ռուսներին հաղթեր, անպատճառ կիշներ Կովկաս և կիրագործեր այն, ինչ Մեծ Կատերինան խոստացել էր և չէր իրագործել։ Պատկերացնում եք... Եթե Հայաստանը այն ժամանակ անկախություն ստանար, այժմ մեծ պետություն էր...

Հերյանը մնում էր սառած։

— Ա՛յ, տղա,— ասում էր Հերյանը հուզվելով,— այդ ամենը ճի՞շտ է, թե ինչպես... Զարմանալի է, այդ մասին իսկի չէի իմացել... ինչպե՞ս ասացիք...

Միրանյանը ձեռքերը դնում էր մեջքի վրա, անկյունից անկյուն երթևեկում և դասախոսում։ Նկարագրում էր ճակատամարտեր, կռիվներ,

հաղթություններ։ Հեռվից լսում էր փողերի և թմբուկների ձայներ։ Մեծ բանակը պատռտված և փառավոր դրոշակներով անցնում էր Կովկասյան լեռներից, մտնում Հայաստանի սահմաններից ներս, քայլում Արարատյան դաշտում, առաջանում դեպի Վան, Մուշ...

Կեսգիշերին Հերյանը հանկարծ վեր էր թռնում...

— Տո, ուշ է, վաղը առավոտ ժամը հինգին պիտի վեր կենամ...

— Ես էլ շուտ վեր պիտի կենամ, մարզանքներ ունեմ...

— Ուրեմն, գիշեր բարի...

Եվ հորանջելով բաժանվում էին։

Առավոտ շատ շուտ նավի տեղափոխության աշխատանքները վերսկսվում էին։

Գյուղացիները իրենց երկար ճիպոտներով հարվածում էին եզներին և գոռում, կանչում։ Առավոտյան զովը անհետանում էր լեռների ետև և նրա տեղը բռնում էին կիզիչ արևը, այրող ու խեղդող տոթը, փոշին։

Մարդիկ և եզները ահագին ճիգ էին անում, և «Ալբատրոսը» ծանրածանր, ահագին, անվրդով՝ տեղից մի քիչ վեր էր ցատկում և գերանները ճզմելով մի քանի սանտիմետր առաջանում։

Նավը այլևս դրսից եկած, ապշեցուցիչ օտարական չէր։

Նա մասնակցում էր քաղաքի ամենօրյա կյանքին։ Նա դարձել էր դաշտանկարի անբաժանելի մի մասը։ Մոտակա կաղամախիների հետ միասին, նրա կայմը լուսավորվում էր լեռների ներկայությունից և գունավորվում ծառերի թրթռացող կանաչներով։

Թռչունները խաբվում էին, նստում էին նրա կատարին, երգում։

Սակայն պետք էր շտապել։ Ամառը հավիտենական չէր, աշունը մոտենում էր և գյուղացիները արդեն անհամբեր աչքերը հառում էին դաշտերի վրա, մտաղբաղ նայում և գյուղ վերադառնալու մասին խոսում։

Պատահել էր նաև մի դժբախտ դեպք։ Մի երկու օր առաջ, անասուններից մեկը վայր էր ընկել և այդպես մնացել։ Նրան ոտքի հանելու բոլոր հնարքները մնացել էին ապարդյուն։ Մեծ, ուռած, դժբախտ, նա պառկել էր կողքի վրա և մեկ սրունքը թրթռացրել։ Սարսափի մատնված գյուղացիները թրջած լաթեր էին դրել նրա գլխին, պնդացած և մեծացած փորը մասաժի ենթարկել, բայց ոչինչ չէր օգնել։ Անասունը, բերանը լորձունքով ծածկված, աչքերը ապակիացած, ականջները պինդ սեղմած սատկել էր։

Գյուղացիները տակնուվրա էին եղել։ Սկսել էին բողոքել, հայհոյել, փափախները գայրույթով գետինը գցել և նավ ու նավապետ ջա-

հանանամը ղրկելով պահանջել էին, որ վնասները անմիջապես վճարեն, իրենց վարձքը տան և թողնեն, որ տուն գնան։

Գույնը նետած, պերճախոս Հերյանը ժամերով վիճել էր նրանց հետ և փորձել նրանց համոզել, որ աշխատանքները դեռ միաժամանակ շարունակեն։

Աշխատանքները շարունակել էին, բայց ոչ առաջվա թափով։ Գյուղացիների ուշքը միտքը ուրիշ տեղ էր։

Չնայած դրան, կայարանի բավականին երկար փողոցը անցել էին և մոտեցել քաղաքին։

— Հարցը նրանում է,— ասել էր Հերյանը մտահոգ աչքերով զառիվերին նայելով,— որ հիմա պետք է բարձրանալ... Կբարձրանանք, կբարձրանանք,— ավելացրել էր նա վստահ և միանգամայն համոզված շեշտով։

Այդ կարծիքին չէին ծեր ինժեներները։

5

Արարատյան դաշտում քամի բարձրացավ։ Նա եկավ Գեղամա լեռների ղեթայի հետևից, ուժգին և անսպասելի։ Մտավ դաշտ, գոռաց, աղմկեց, լայն և խենթացած բազուկները ջաղացի նման պտույտ ածեց, զրնգացող կուրծքը զարկեց ժայռերին, ոտքերը խփեց հողերին, հառաչեց։

Այդ տևեց ամբողջ գիշերը։

Առավոտյան դեմ քամին մեկնեց, և լեռները լվացված պայծառացան։

Ամառվա հուրը մարվեց... Սկսվեց աշունը։

Ով չի տեսել Արարատյան դաշտի աշունը, ոչինչ չի տեսել։

Նա գալիս է դանդաղ, խոհուն և կարմիր քայլերով։ Լեռների կատարից իջած թեթև ղովը իջնում է ամառվա թողած ճերմակ հրդեհների վրա, մաղում է օդը, ալքիմիկոսի իր աշխատանոցում թանկագին և զարմանալի մետաղների բաղադրություններ ձուլում, հողերի վրա լույսեր ման ածում. ծառերի մեջ մոմեր վառում և հորինում է դեղին և մեծդի այնպիսի նվագներ, որոնց մասին կարելի չէ պատմել, որովհետև նրանք գալիս են կյանքի և մահվան սահմաններից հեռու անհայտ վայրերից։

Երկրագնդի ուրիշ վայրերում աշունը օրհասական ամառվա վերջին և անուժ ցնցումն է, հուսալքված մեկնում և հեկեկող տերևաթափ։ Հա-

յաստանում, ընդհանրապես, նա ընդհանուր և լուսավոր այլափոխության երկար արարողություն է։

Ով չի տեսել Արարատյան դաշտը աշնանը, չի կարող երևակայել ինչպիսի խոր հոգեկանության, ինչպիսի վերացման, ինչպիսի ներուժ խաղաղության կարող է հրավիրել բնությունը։

Ձյունագագաթ լեռները գրկող ոսկյա վարսերով, սարսռուն, համատարած անդորրություն։ Դեղին բոցերով այրվող կաղամախիների շարքեր։ Ծանրացած մրգաստաններ, պսպղուն պարտեզներ, պղինձների հետ հալված հորիզոն և խորացած, ճառագայթող, հստակ երկինք։

Ամեն ինչ խորասուզվում է, մտածում, բոցկլտում։

Այս տարի աշունը հասած ողկույզի նման ծանրացած էր մտահոգություններով։

Լեռան կողերին ապրող մարդիկ, որոնք զուսպ, դանդաղ, իշխանանման մարդիկ են, ժայռերի կատարին կանգնած նայում էին վար դեպի դաշտը և մտածում։

— Տնաշեններ... Աշունը եկել է, ամեն կողմ ման է գալիս, իսկ վարի մարդիկը նոր են լծվել աշխատանքի... Քիչ բան չէ, բաղերը քաղել, հողերը վարել, ցանել... Հարցը նրանում է, որ թշնամին հանգիստ չի թողնում...

— Ամեն կողմ կռիվ է...

Նրանք մեծացած աչքերով նայում էին լեռներին, նայում էին դաշտին, նայում էին աշնանը։

Ոչխարները մայում էին։ Շները վազում էին մացառների հետ խաղացող քամու հետևից և խաբված հաչում։

Դաշտում սկսել էին աշխատել։

Շտապ-շտապ վարուցանք էին անում։ Եզների ոտքերը մխրճվում էին թարմ բացված ակոսների մեջ։ Արորը սեղմելով շինականները գոռում կանչում էին։

— Հռռա, հռ, հռռա...

Հայաստանի հողը կարծր էր, բայց բարի։

— Հռռա...

Արորը մխրճվում էր, զրնգում, տնքում, հերկում։ Եզների ոտքերը շփոթվում էին և ճիգը կրկնապատկում։ Ծերերը, որոնք փոխարինում էին ճակատ մեկնած երիտասարդներին, անհամբեր էին, համառ։

— Հռռա... շուտ, ձեզ մատաղ, շուտ...

Շտապում էին նաև բաղերում։

Բաղերը լցվել էին կանանց ձայներով։ Ամեն անգամ, որ հոհոում էին, ճյուղերի վրայից դող էր անցնում։ Իսկ ճյուղերը ծանրաբեռնված էին մեծ, հյութեղ, արևի բյուրեղե արյուն ամբարած ողկույզներով։

Խաղողը Հայաստանի երգն էր։

Անուշ, փարթամ, հարբեցուցիչ։ Սարսռուն աղջիկների կրծքերի նման։ Հմայիչ լուսնի լույսի տակ փայլփլող բուի աչքերի նման։

Ուրիշ տարիներ այգիները դղրդում էին նվագի և երգի ձայներով։ Դհոլ-զուռնայի բարձր գոռոցը հնչում էր մինչև լուսաբաց։ Մարդիկ և կանայք պար էին բռնում։ Բացված կարասներից գինի էին խմում շերեփով և ինքը, լեռների հետևից եկած Դիոնիսիոսը, սրտերիր հույզ էր քաղում և ծառերի թեթև խարշափով ծիծաղում։

Այս տարի զամբյուղները գլխին դրած կանայք շտապում էին։ Խաղողների կույտերը բարձրանում էին, իսկ ճզդան կոխող մարդիկ չկային։ Սայլեր չկային, եզներ չկային։

Այդ պատճառով էլ Հերյանի գյուղացիները տակնուվրա էին եղել։

— Քո արև, չենք կարա,— պնդում էր նրանցից մեկը հուզված ձայնով, երեսը կարմրած, աչքերը դուրս ընկած։— Ասում ենք չենք կարա, չենք կարա... Եա-եա-եա-եա... Ախպեր, մեր ի՞նչ գործն է եկել ընկել ենք... Հողերը մնացել են երեսի վրա... Գեղից մարդ է եկել, եզներին ուզում են տանել...

Ուրիշ երկու գյուղացիներ սուր կանգնած գլուխը վար սպասում էին։

Կարտուզը գլխի կատարին, Հերյանը համբերությամբ լսում էր և աշխատում հանգիստ ձևանալ։

— Այդպես է,— պատասխանում էր նա մեղմ ձայնով,— հասկանում եմ... Բայց մարդու նման խոսենք, տրամաբանենք... կտեսնենք, որ բանը այդպես ասած...

— Էստեղ բան ման չկա,— կտրում էր նրա խոսքը համառ շինականը,— մենք չենք կարա...

— Սպասիր, է, սպասիր... Ասում եմ, եթե էս զահրումարը մինչև էս տեղ հասցրիք, կարող եք քիչ էլ վեր տանել և էնտեղ...

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ,— անհամբերանում էր մյուսը փափախը գլխից քաշելով և օդում շարժելով։— Ես քեզ ասում եմ հայ քրիստոնյայի նման... Գեղից ջահելներին տարել են, կինամարդ և լակոտ է մնացել և... և...

Բերանը փրփրում էր և հուզումից չէր կարողանում շարունակել։

Հերյանը հուսալքվել էր։

— Հիմա ես ի՞նչ անեմ... կրակ տամ այրե՞մ...

— Երկաթ է, չի այրվի...

Լռած սպասում էին։ Հառաչում էին։

Հանկարծ խեղճացած և վհատ Հերյանը նայում էր սրա նրա երեսին և քիչ էր մնում լաց լիներ։

— Դուք ասացեք, ձեզ մատաղ, դուք ասացեք... դա էլ խի՞ղճ է, մարդկությո՞ւն է։ Ախր, վերը աստված կա, չէ՞... Էնքան աշխատանքից, էսքան չարչարանքից հեռացողնել, հեռանալ... Մարդ եք, չէ՞... սիրտ ունեք, չէ՞...

Գյուղացիները ճակատը վար կախած լռում էին... աշունը եկել կոխել է աշխարհը և հողը կանչում է, բաղը կանչում է...

Մոտակա կաղամախիները ոսկե տերևներով կամաց խարշափում էին։

Աշունը դեմքերի վրա գունաթափվում էր։

— Ուրեմն ի՞նչ անենք...

— Եթե մենք չենք կարա՝ ուրիշներ կան... Ասենք հենց Մարգարա գեղում վարուցանքը վերջանալու մոտ է... Գնալ խոսելու է... ո՞վ է իմանում...

— Մարգարա...

Հերյանի աչքերը սկսել էին արթնանալ։

— Ինչպե՞ս չէ,— պնդում էին գյուղացիները ուրախացած,— տավար շատ... Եթե գնաս խոսես, բան հասկացնես...

Այլևս ավելորդ էր վիճաբանությունը շարունակել։

— Պետք է գնալ, ահագին ժամանակ կորցնել...

— Դե ի՞նչ արած...

Հերյանը մնացել էր անորոշ։ Նայում էր ծառերին, նայում էր երկընքին և տխրում...

— Մի հարց էլ...

— Հարցրու...

— Ասենք մի ամսից երբ ձեր աշխատանքները ավարտվեն, խոսք կտա՞ք... կվերադառնա՞ք։

— Ինչի՞ խոսք չտանք... Եթե ողջ լինենք...

— Եթե այդպես է...

Երկարել էր իր ձեռքը։

— Ավել պակասը կներես։ Ասծով... աշխարհ է, ամեն ինչ պատահում է... Դժվար է, վատ ժամանակներ են...

Գյուղացիների մեկնելուց հետո Հերյանը թևերը ծալել էր կրծքի վրա և խորասուզվել մտածումների մեջ։

Ահավասիկ նորից մենակ էին մնացել ինքը և նավը։

Քաղաքի փողոցի ծայրին։ Շվարած, հուսահատված։

Ռիմը, որ ամեն բան հասկանում էր, պոչը շարժելով գլուխը քսում էր նրա ոտքերին։ Ապա վազում էր վայր ընկնող տերևների հետևից. խաղում նրանց հետ և նորից վերադառնում։

Իսկ Հերյանը փայտացած կանգնել էր։

— Ա՛յ քեզ երկիր,— մտածում էր նա,— այ քեզ երկիր... Հիմա պետք է գնալ, աղաչել գյուղացիներին, որ եզներ տան... Պետք է տքնել, մաքառել ամենաչնչին բաների համար... Այ քեզ Հայաստան...

Սակայն ո՞վ պիտի հսկի նավի վրա, ո՞վ պիտի պաշտպանի նրան խուժանի տղաներից, անսիրտ այդ վանդալներից։

Ամբողջ օրը նավի շուրջը ման էր եկել և հուզվել։

— Ձեր անունը ի՞նչ է,— հարցրեց Հերյանը։

Զարմացած և քիչ էլ վախեցած երեք տղաները մի քանի քայլ ետ քաշվեցին, մեկ մեկի երեսին նայեցին և ոչինչ չպատասխանեցին։

Հերյանը ծիծաղեց.

— Ի՞նչ է, չե՞ք ուզում ասել...

— Իմ անունը Մարտին է,— ասաց երկայնահասակ, նիհար, դեղնած երեսով տղաներից մեկը։— Սրա անունը Աշոտ է, նրա անունը՝ Շահեն,— ավելացրեց նա ցույց տալով ընկերներին։

Հերյանը ուշադրությամբ նայեց նրանց և ժպտաց։

— Դուք ինձ ճանաչո՞ւմ եք։

— Ճանաչում ենք,— պատասխանեց նույն տղան,— նավի մարդն եք... ձեզ ամենքը ճանաչում են...

— Չէ, նավից առաջ, նավից առաջ... Հիշո՞ւմ եք, մի գիշեր դուք հարձակվեցիք իմ վրա...

Տղաները, բոլորովին վախեցած, աջ ու ձախ նայեցին և պատրաստվում էին փախչել, բայց Հերյանը նրանց հանգստացրեց։

— Սպասեք, դրա համար չեմ եկել...

Տղաները դողացող ձայնով սկսեցին ասել։

— Աստված վկա, մենք չէինք, Հայկազ ասված տղան էր, նա մեզ ստիպեց... Աստված վկա...

— Ոչինչ, ոչինչ,— ասաց Հերյանը բարեկամական շեշտով,— ես եկել եմ ձեզ մոտ շատ կարևոր գործով... գիտեմ, դուք քաջ, պատվավոր

տղաներ եք, ձեր խոսքին տեր, տղամարդ, իսկական հայեր... Հայկազն ո՞ւր է...

— Ձենք իմանում։ Առաջ փողոցում ծխախոտ էր վաճառում, հիմա գնացել է Ռուսաստան...

— Ասում են, գնացել է կոմունիստների մոտ,— ավելացրեց Աշոտ կոչվող, սպլուկ, ցնցոտիներով ծածկված, ոտաբոբիկ, դողդողացող տղան։

— Լավ, ահա բանը ինչումն է...

Բացատրեց նպատակը։

Պիտի գնար գյուղերը։ Նավը պիտի մնար փողոցում և կարող էր վտանգների ենթարկվել։ Անշուշտ գիտակից մարդիկ չպիտի ուզեին վնաս հասցնել, բայց փողոցի տղաները, խուժան լակոտները ամեն ինչ վշտում, կոտրում են, առանց հասկանալու, թե ինչ են անում։ Եվ ահա ուզում է նավի հսկողությունը հանձնել այդ տղաներին։

Շոյեց նրանց ինքնասիրությունը, խոսեց նավի կարևորության մասին երկրի շինարարության գործում, խոսեց այն մեծ գերի մասին, որ իրենք կարող էին խաղալ։ Ինքը ամեն բանով պիտի օգներ նրանց, հացի փող տար, հագուստ ճարեր և վաղը, երբ նավը տեղ հասներ՝ պիտի գործ տար և մարդ դարձներ նրանց։

— Այդպես թափառելով, մուրալով, գողություն անելով, պատերի տակ քնելով չի կարելի... Սա լավ առիթ է մարդավայել կյանք սկսելու... Ես ձեզ համար հայր կլինեմ, և դուք էլ անպաշտպան որբ չեք լինի, այլ պարտաճանաչ, ազնիվ տղաներ...

Լսում էին զարմացած և թերահավատ։

Իրենց գլուխը վար կախած, աչքերը պլզած, լուռ։

Մինչ Հերյանը խոսում էր, ուրիշ խուժան տղաներ էլ բոլորվել էին նրա շուրջը։ Մարտինը բարկացած նայեց նրանց, և նրանք անմիջապես հեռացան։

— Ո՞վ է ձեր պարագլուխը,— հարցրեց Հերյանը։

— Մարտինը,— պատասխանեցին նրանք միաձայն։

— Այդ լավ է։ Ուրեմն, Մարտին ջան, հիմա հասկացար հարցը ինչումն է... պետք է որոշում կայացնել։ Ազնիվ կերպով՝ կամ հա կամ չէ...

— Ուրախությամբ, աղա ջան...

— Աղա մաղա չկա... պարզապես պարոն Հերյան...

— Արխային եղեք,— ասաց Մարտինը վստահ շեշտով.— Մենք ամեն ինչ կանենք...

— Երդվո՞ւմ եք։

— Երդվում ենք,— պատասխանեցին ամենքը միասին բղավելով և ուրախ։

— Այսօր հաց կերե՞լ եք։

— Չենք կերել։

— Դե, գնանք, մի բան ուտենք միասին։

Այդ նույն գիշեր, ժամը երկուսի մոտերը, Հերյանը կամաց ելել էր անկողնից, հագնվել և դուրս եկել փողոց։ Ուշքը միտքը նավի մոտ էր, ուզում էր սեփական աչքերով տեսնել, թե նոր բարեկամները ինչպես են հսկում «Ալբատրոսի» վրա։

Տղաների հետ պայմանավորվելուց հետո նա վերադարձել էր տուն և ամեն ինչ պատմել Միրանյանին։ Միրանյանը ծիծաղել էր նրա վրա։

— Միամիտ մարդ եք եղել... ես չեմ իմացել,— բացականչել էր նա։— Ձեր հոժար կամքով նավը հանձնել եք գայլերին։ Տո, մարդասպան, գաղափար ունե՞ք, թե ինչ են խուժան տղաները, խսկ նրանց խոսքին կարելի՞ է հավատալ։ Իմացեք, եղած չեղածը կքանդեն, կտանեն և ձեր նավից միայն հիշատակ կմնա...

Հազար ու մի օրինակներ էր բերել և ինչպես միշտ տաք վիճաբանություն էր տեղի ունեցել։

Հերյանը այդքան հոռետես չէր։ Եթե մարդ—պնդում էր նա— հավատով և սիրով մոտենա ամենասարսափելի ավազակին անգամ, կարող է նրա մեջ արթնացնել այն հոգեկան լույսը, որից ոչ մի էություն զրկված չէ։

— Ոտթած քրիստոնեություն...

— Օրինակներ կան, չէ՞... Նեապոլը գրավելու ժամանակ Գարիբալդին քաղաքի կարգ ու կանոնի պաշտպանությունը հանձնել էր տեղացի ավազակներին և արդյունքը եղել էր կատարյալ...

Հետո, բնականաբար, որբերից անցել էին Նապոլեոնին։ Հերյանը հոգնած մտել էր սենյակը և անհանգստացել։

— Գուցե Միրանյանը իրավունք ունի...

Հիմա, ահա գնում էր կասկածանքները փարատելու համար։

Ինչպես միշտ, ամայի քաղաքը լցված էր հրացանաձգության ձայներով։ Փողոցներում ոչ ոք չկար։

Տները փակ էին, խոնարհ, միայնացած։ Նրանք նման էին ժամանակավոր հանգստության հանձնված նավերի, որոնք նախազգում են հորիզոնի ետև կուտակվող անխուսափելի վտանգները։

Վայր իջած երկինքը, որ անհամար աստղերով կայծկլտում էր, ավելի էր շեշտում անվերջանալի ծովացման այդ զգացումը։

Ծովացում, որ գնում անցնում է իրերի շրջագծերը, իրականությունը դիպվածականի վերածում, մեծ շնչով լվանում ներկած և երգեհոնի հիմնական ձայների նման բարձրանում և թևերի վրա է առնում կյանքի անսահմանացած էականը։

Հերյանը քայլում էր այդ տարօրինակ անիրականության մեջ։

Նա լավ չէր ըմբռնում թե ինչ է։ Քայլում էր, ինչպես կույրը քայլում է իր մեռած բիբերի վրա ծանրացած անսահմանության մեջ։ Գիտեր միայն — և այդ արդյունքն էր նախկին փորձառությունների — որ այստեղ, ահա այդ միջավայրում կյանքի չափը տարբեր էր, ուրիշ։

Ուրիշ էր հոգեկան երկրաչափականը։

Եթե նայես բնական, ֆիզիկական աչքերով, քո առաջ կցվի սարսափով ուռած մի տեսարան։ Անասելի թշվառություն, ընդհանուր փլուզում, վտանգ, պայքար, անմարդկային պայմաններ։ Իսկ եթե քաշվես ետ և ներքին նայվածքով ընդգրկես այն ամբողջականը, որի մեջ միացած են փողոցը և աստղերը, տները և երկինքը, մարդկային թշվառությունը և լեռների վեհությունը և այն լուռ ձայները, որոնք անբաժանելի միություն են կազմում քո մեջ և ամեն բանի մեջ, իրականությունը կայլափոխվի, և դու կքայլես վերացած և անսահմանացած։

Նա գնում էր և նրա ոտնաքայլերը խուլ հնչում էին քարերի վրա։ Իսկ նրան թվում էր, որ իր քայլերը գալիս են հեռվից, որ նրանց ձայնը գուրս է գալիս խոր և անմատչելի վայրերից, որ սահմանները ջնջվել են և իր անձը և իր մտածումները անբաժանելի մասն են մի անչափության, որ նույնպես լցված է շարժումներով, դեպքերով, իրողություններով։

Ի՞նչ էր այդ...

Ճիգ էր անում այդ զգացումը հաղթահարելու։

Սկսել էր քթի տակ երգել։— «Ախ, յաբլոչկա, կուդա կա-ա-տիշսեա»[1]... Ուզում էր այդ անսահմանությունից ազատվել։

Քիչ ցուրտ էր։ Օձիքը վեր էր բարձրացրել և քայլում էր բաղուկները ճոճելով։

— Ախ, յաբլոչկա...

---

[1] «Ախ, խնձոր ջան, ո՞ւր ես գլորվում» — այն տարիներին շատ տարածված ռուսական երգ։

— Չէ, ի՞նչ էր այդ...

Կարծես բարձրանում էր անտեսանելի սանդուղներից։ Քայլում էր առանց քայլելու։ Երգում էր և նրա ձայնը չէր լսվում։

Փողոցը թեքվելիս, նա հանկարծ կանգնեց։ Դիմացի անկյունից կրակում էին։ Բնազդաբար կպավ պատին և նայեց։ Կրակողը մի ոստիկան էր։

— Տո, ի՞նչ ես կրակում,— գոռաց նա և մոտեցավ ոստիկանին։

— Էնպես, էլի,— պատասխանեց ոստիկանը, բաշլղի երկար ծայրը ուսին քաշելով։

— Ջասե՞ս վախեցել ես...

— Ոնց չվախենամ... քաղաքը ժուլիկ-մուլիկով լցվել է և ո՞վ է իմանում... Սեփական ոտից ձեն լսելուց կրակում ենք, մյուս պահակներին իմաց տալու համար...

Հերյանը ծիծաղեց և ոստիկանին ծխախոտ առաջարկեց։

Բարձրահասակ, պնդակազմ, երկաթե ձեռքերով մի տղա էր։

— Էխ, էխ,— շարունակեց պահակը ծխախոտը վառելով,— գիշերվա մթով ամեն տեսակ մարդիկ քաղաք են մտնում, զենք են բերում...

— Մարդկանց վրա ե՞ք կրակում...

— Կրակում ենք օդում...

Հրացանաձգությունը հեռավոր փողոցներում շարունակվում էր։ Գնդակների ձայները վզզում էին և կորչում տարածության մեջ։ Անտարակույս հրացաններ էին, ոչ թե ատրճանակներ։ Հայաստանի բնակիչները այնքան սովոր էին զենքերին, որ անգամ երեխաները ձայնից կարող էին որոշել զենքի տեսակը, կպնել կամ չկպնելը...

Հերյանը քայլում էր և ինքն էլ, այլևս վարժ, զվարճանալով որոշում էր կրակող զենքերի տեսակը։ Ժամանակին, նավերի սուլոցից նա կարողանում էր որոշել նավի և ընկերության անունը։

Ինչ տարօրինակ բան էր կյանքը։

Երեկ՝ նավերի սուլոցը, այսօր՝ հրացանների ձայները։ Երեկ՝ ծովը, քամիները և փոթորիկները, այսօր՝ գիշերը, ոտքի տակ ընկած տերևի նման տափակած փողոցները, առանցքից դուրս նետված և դեռ շրջող այս իրականությունը, աստղերով լցված այս երկինքը և անմիտ ու ողբերգական այդ զառանցանքը...

Ախ, յաբլոչկա, կուդա կա-ատիշսեա...

Չէ, պետք չէր մտածել։

Կենտրոնական փողոցի մոտերը հասնելիս նա կանգ առավ։

Վարը, վառված կրակի պատճառով ցցվում էր նավի ստվերը։ Խարույկի շուրջը ուրիշ ստվերներ։

Արագ մտավ խաչաձևվող մի փողոցի անկյունը, պատի ետև թաքնվեց և նայեց։ Կրակի շուրջը գաղթականներ էին լցվել։ Կանայք, երեխաներ, ծերեր։ Ոմանք պառկած քնել էին, ուրիշներ՝ ծնկների վրա փոքրիկ երեխաներ սեղմած, իրենց գլուխը կրծքի վրա կախած նստած, օրորվում էին։

Կարծես տավարը արածելու գնացած խաշնարածներ լինեին։ Մեկը մյուսի դեմ սեղմված, անշարժ նստել էին։

Ինչ տարօրինակ տեսարան էր այդ և ինչ տարօրինակ քաղաք էր այդ։

Փողոց։ Նավ։ Գաղթականներ։ Հրացանաձգություն։

Արտաքոց մի երևակայությունից դուրս ցցված մի կտոր անկարելիություն։

Ահավասիկ Մարտինը և Աշոտը։ Նրանք անդադար շրջում էին նավի շուրջը, հսկում։ Ոչ ոքի չէին թողնում, որ նավին մոտենա։ Ինչպես երևում էր, նրանք ուրիշ տղաների էլ լծել էին գործի։ Մարտինը անդադար դեսուդեն էր նայում, սրան-նրան ինչ-որ հրամաններ տալիս, ապա գալիս նստում էր մի ծերունու մոտ, որը գլուխը քերելով խոսում էր։ Երևի պատմություններ էր պատմում։

Հերյանը նայեց և ուրախացավ։ Խեղճ և ազնիվ տղաներ։ Իրենց խոսքի տեր։ Լավ պայմաններում նրանք կլինեն հրաշալի մարդիկ։

Նայեց աստղերին և զայրացավ երկնքի դեմ։

Նախ, որոշեց մոտենալ տղաներին, հայտնել գոհունակությունը, փայփայել նրանց, բայց, քիչ մտածելուց հետո, միտքը փոխեց։ Պետք չէր թողնել այն տպավորությունը, որ կասկածում է նրանց վրա։ Այդ կարող էր նրանց արժանապատվությունը վիրավորել։

Պատերին քսվելով հեռացավ։ Նորից կանգ առավ և նայեց։

Նավը Երևանի փողոցում։ Այն նավը, որի շուրջը՝ ջերմոտ և անհամբեր քայլերով պտույտ էր եկել Բաթումում, որի հետ դժվարին ճամփաներ էր անցել, սար, ձոր, անապատ, և որի կենսագրությունը այլևս անրաժանելի կերպով կապված էր իր սեփական կենսագրության հետ։

Նավը ինքն էր և ինքը նավն էր։

Ահ, երա՞զ էր, թե իրականություն... Ձեռքերը քսեց թևերին, կրծքին, ճակատին։ Չէ, երազ չէր։ Եվ ո՞վ կարող էր ասել, Հայաստանում ուր է վերջանում երազը և ուր սկսվում իրականությունը։ Կյանքը արտա-

ցոլվում է մի հսկա հայելու փշրված կտորների մեջ։ Կյանքը երգում է հազարավոր կոկորդներից դուրս եկած ձայներով, դառնում է մրրիկ, փոթորիկ, զարնվում է անտարբեր ժայռերին, քայլում է դաշտերում և անապատներում, ապա հանկարծ լռելով գնում թաքնվում է երկու լեռների մեջ, պապանձված սպասում, նորից որոտալով դուրս նետվում, երկրի գլխին աղմկելու համար։

Հանգիստ քայլերով վերադարձավ տուն։

Լցվեց տարօրինակ մի զգացումով։ Թվում էր, որ ինքը չի քայլում փողոցներում, այլ փողոցները սահում են իր ոտքերի տակ։ Կարծես ձգողության օրենքը հիմնովին շրջվել էր։ Նրա մտքի մեջ երեկը և այսօրը խառնվել էին, ծածկվել շղարշներով, հեռացել։

Գլուխը վեր բարձրացրեց և աչքերը ման ածեց աստղերի ժխորում։ Ե՛վ երկինք, և՛ աստղեր, և՛ փողոց նրա զգացողության մեջ խառնվել, միացել էին։ Մի վայրկյան նա կարծեց, որ քայլում է երկնքում։ Ահա անցնում է մի խումբ կապույտ աստղերի մոտից, ահա մտնում է լույսերով ծաղկազարդված մի դաշտ, անզգալի քայլերով անցնում է դյութիչ երկրաչափություններից, սահում է վեր, ընկնում է շրջանցող մոլորակների մի անտառ...

— Երևի հոգնած եմ, չղազրգռված,— մտածեց նա։

Մի ծխախոտ վառեց։

— Պետք է գնալ գյուղեր՝ եզներ ճարելու համար։ Պետք է անպայման գնալ և անպայման ճարել...

Եվ աստղերը վերադարձան երկինք, և ինքը մնաց մենակ։ Ինքը և այս մութը։ Փողոցի ծայրին հիվանդ աչքի նման մի աղոտ լամպար էր ծխում։

6

Կոկոշենց գյուղում Հերյանին ընդունեցին սառը, թերահավատ ժպիտներով, դառն մռմռանքներով։

— Ո՞նց ասացիր, նա՞վ... հալլա՜, հալլա՜, հալլա՜...

Գյուղի մեծը, Սարուխան աղան, որի մասին ասել էին՝ հարուստ է, բազմաթիվ տավարի տեր, հեղինակավոր մարդ, նրան դիմավորեց իր տան առաջ, հաղթանդամ մարմնով մուտքը ծածկելով և ուսերին գցած երկար վերարկուն անհանգիստ վեր քաշելով։

Հաստ հոնքերով ծածկված իր փոքրիկ աչքերը հառեց նրա վրա, ոտքից մինչև գլուխ զննեց, կարծես մի միջատ լիներ առաջը կանգնած և՝

— Հը՛, ասա տեսնեմ...

Ընդունելության կոպիտ այդ ձևը Հերյանին սաստիկ վիրավորեց։ Կարտուզը ուղղեց, գլուխը վեր բարձրացրեց և համարձակ նայեց։

— Եկել եմ կառավարության կողմից,— ասաց նա վճռական ձայնով։

— Ի՞նչ,— մռնչաց մյուսը, հոնքերը դեռ ավելի կուտակելով,— կառավարության կողմի՞ց... ո՞ր կառավարության կողմից...

— Ո՞նց թե, ո՞ր... մեր, Երևանի...

— Երևանի՞,— մլավեց մյուսը և ձեռքերը դրեց մեջքին։— Պրիկազը հալա հանիր ցույց տուր...

Հերյանը մի վայրկյան շվարեց, բայց անմիջապես վերագտավ իր պաղարյունությունը։

— Էստեղ պրիկազի հարց չկա... Մի քանի եզների կարիք ունենք, շատ կարևոր աշխատանքի համար...

— Եզ-ների՞...

Մարդը ետ քաշվեց, բերանը ծռեց և աչքերը կոպերից դուրս պրծան։

— Գնա՛,— գոռաց նա ամբողջ ուժով,— քո կառավարության ասա, որ նրանց...

Հայհոյեց։

— Ոչ թե եզ, հավ իսկ չեմ տա...

Շրջվեց, մտավ տուն և դուռը աղմուկով ծածկեց։

Հերյանը մնաց բերանը բաց։ Ուզեց ներս մտնել, մարդու հետ կռվել, բայց միտքը փոխեց և հեռացավ։

Քայլեց, չորս կողմ նայեց, մարդ չտեսավ։ Եվ երբ մարդ տեսավ մեղավոր ժպիտով հարձուփորձ արեց։ Ոչ ոք ոչինչ չկարողացավ ասել։ Գյուղացիները հազացին, հառաչեցին, գետին թքեցին և շրթունքները պինդ սեղմած մեկնեցին։

— Էսենց գործի համար,— ասաց մի զառամյալ ծերունի գլուխը անդադար երերցնելով,— գնացեք Պլոկանց գյուղը... տավար շատ ունեն և առհասարակ...

Ոսկրոտ մատները օդում շարժելով ցույց տվեց ճանապարհը։

Այն օրը, Հերյանը այցելեց երեք գյուղ, առանց ոչ մի արդյունքի։ Խոսք չէր կարողանում հասկացնել։ Շվարած, աղքատ այդ գյուղացիները նայեցին էին կարծր այն ժայռերին, պինդ և գեղնած այն հողերին, որոնցով շրջապատված էին...

Լուռ, անհաղորդ, անհույզ։

Հերյանը տաքացած և հուզված բացատրում էր իր այցելության նպատակը, աշխատելով նրանց շահագրգռել։ Լսում էին համբերությամբ և անտարբեր։

— Ախր, ի՞նչ խոսք, իրավունք ունես... Համա, եղները ճարել հեշտ բան չի...

Իրենց գլուխը կախում էին և լռում։

Նավ բառը չէին հասկանում։ Նա՞վ, Երևանո՞ւմ, ի՞նչ նավ... Իրենց նայվածքները կուլ էին տալիս և ապակիացած աչքերով նայում։ Կասկածում էին։ Երևի, մտածում էին, առավ-փախավի մեկն է, որ քաղաքից եկել է և ուզում է իրենց խաբել։

— Նավ. չէ, չէ, զուռնա...

Իրենց քիթը աղմուկով վեր էին քաշում և ժպիտը զսպում։

Կտրված թևով մեկը, որ իբր զինվոր կռվել էր ավստրիական ճակատի վրա, աչքերը կես փակած, երկար նայեց Հերյանին և փիլիսոփայեց։

— Աշխարհում,— ասաց նա,— ամեն մարդ մի մասալ ունի... Մեկը էսպես է ասում, մի ուրիշը՝ էնպես... Մեկ էլ տեսնես մեկը դաշաղ է դառնում, իսկ մյուսը վանք է մտնում, ճգնավոր է դառնում... Մազալու բան է... աշխարհ է, ամեն բան պատահում է...

Այդ թերահավատությունը այն աստիճանի հասավ, որ քիչ էր մնացել գող-ավազակի տեղ անցներ Հերյանը։

— Էդ բաները...— ասաց բանիմաց մեկը, բեղի ծայրը ոլորելով և սրված նայվածքը Հերյանի աչքերի մեջ սուզելով,— էդ բաները քաղաք տեղում ավելի հեշտ է, քան գյուղերում... ինձ լավ լսիր, դժվար է... քեշմազ...

Եվ թուրքերեն ինչ-որ բաներ ավելացրեց, որ նա չհասկացավ։

Հերյանը վհատված քայլեց։ Ու հանդիպեց, խոսեց։ Կարտուզը ձեռքում թափահարելով, ձայնը խզված, աչքերը վառված նա բացատրեց, ճառեց, երդվեց։

Ոչ մի արդյունք։

Կարծես այդ բավական չէր, վերջին գյուղում մի շատ անախորժ բան էլ պատահեց։

Հոգնած, հուսահատված, երբ ջղայնացած նա անցնում էր գյուղի ծայրի խրճիթների մոտից, ձայներ բարձրացան։

— Սպասիր, սպասիր,— գոռացին։

Հերյանը կանգ առավ, նայեց։

Թմբի հետևից մի կնոջ գլուխ դուրս ցցվեց, ապա՝ սաստիկ ուռած

մի հղի փոր։ Կարճ ոտքերով, կլոր, դեղնած մի էակ՝ ամեն մի ձեռքում մի երեխա քարշ տալով, շնչասպառ վազեց դեպի նրան, առաջը կտրեց և մազերը երեսին թափված բղավեց՝

— Շո՛ւն, մարդս տո՛ւր... Ասում եմ քեզ, մարդս ետ տո՛ւր...

Եվ բարձրաձայն սկսեց հեկեկալ։

Երեխաները պառկեցին փոշու մեջ և սկսեցին լալ։

Շրջակա կտուրների վրա բազմություն հավաքվեց։ Մի քանի կանայք վազեցին և բոլորվեցին կնոջ շուրջը։

Հերյանը, անակնկալի եկած, շվարած, ուզեց կնոջ հանգստացնել։

— Քույրիկ ջան,— սկսեց նա։

— Քուրդ էլ, հերդ էլ, մերդ էլ,— աղաղակեց կինը կատաղած ձայնով։— Մարդս տարիք, տունս քանդեցիք, երեխեքս սոված թողիք... Վա՛յ, վո՛ւյ...

Վայրի թռչունի նման կանչեց։ Շուրջը կանգնած կանայք միացան նրան և վայեցին։ Վայեցին նաև նրանք, որ կանգնած էին կտուրների վրա։

Հերյանը գունաթափվեց և մնաց պապանձված։

— Եղբայր, ի՞նչ է, չեմ հասկանում,— կմկմաց նա և ճակատի քրտինքը սրբեց։

— Մարդը զապասնոյ է և տարել են,— բացատրեց շինականներից մեկը։— Տարել են և խեղճը մնացել է սոված... Երեխով է...

— Հասկացա,— պատասխանեց Հերյանը հուզված ձայնով,— բայց ես ի՞նչ մեղք ունեմ...

— Դե, կառավարության մարդ ես, դրա համար էլ եկել է քեզանից է պահանջում...

Հերյանը փորձեց բացատրություններ տալ։ Շուրջի բազմությունը գնալով շատանում էր։ Կանայք ձայնը գլխին գցած գոռալով, աղմկելով, վայելով բողոքում էին։ Սեղմում էին նրան և ամեն կողմից բոլորում։ Հերյանը փորձեց ճամփա բանալ։ Անկարելի էր. նրան դեռ ավելի սեղմեցին և առաջը կտրեցին։

— Պետք է տաս, պետք է մարդս տաս,— գոռում էր կինը փորը դուրս տնկած, աչքերը վառված։

Փորձեց խոսել։ Ինքը ոչ մի առնչություն չուներ պատերազմական գործերի հետ։ Եկել էր եզների գործով։ Հասկանում էր կնոջ դրությունը և համակրում էր նրան, բայց իշխանություն չուներ, զինվորական ծառայությունից ոչ ոքի ազատել չէր կարող։

Քանի բացատրում էր, այնքան ավելի էին գայրանում։ Եթե ինքը ասել էր, որ կառավարության մարդն է, ուրեմն ամեն բան կարող էր։

Կարող էր և չէր ուզում։ Իսկ եթե չէր ուզում, ժողովուրդը կարող էր դատաստան տեսնել։ Հերյանը հասկացավ, որ սպառնանքը լուրջ էր։ Կարող էին նրան ծեծել, քարկոծել, վրան բաց թողնել գյուղի շները։

— Սպասեք, սպասեք,— գոռաց նա հրամայական ձայնով։— Պիտի հասկանալ, որ էստեղից ոչինչ չեմ կարող անել... Պետք է գնամ շտաբ և վահանի նախարարության միջոցով... Նախ անունը, ազգանունը... հետո էնտեղ կտեսնենք...

ԲաՀկոնի գրպանից թուղթ և մատիտ հանեց և սկսեց գրել։

— Դե, որ էդպես է,— մոտեցավ մի ուրիշ կին,— իմ Բաղդասարի անունն էլ գրիր...

Գրեց։

— Դե որ էդպես է, քե մատաղ, իմ Միրիջանիս անունն էլ զապիսատ արա...

Արեց։

Մարդիկ և կանայք շարքով մոտեցան և անունները գրել տվեցին։ Ուրիշներ էլ, փափուշները գետնին քսելով, խրճիթներից դուրս վազեցին և հարազատներին արձանագրեցին։

— Աչքերիդ մատաղ, չմոռանաս Զավարենց Մկոն, երկար բոյով տղա է, ասում են Ղարսի մոտերն է...

Վերջն էլ—մինչ շարունակում էր արձանագրել—բարձրահասակ, չոր, իրանը փայտացած և փոս ընկած աչքերը վարագուրված պառավ մի կին, դունատված, պատռված մի չուխա և մի փափախ երկու ձեռքերի վրա փռած, ուրվականի նման առաջացավ, բազմությունը ճեղքեց, մոտեցավ Հերյանին։ Չուխան և փափախը կարկառեց նրան, աչքերի ճերմակները ոլոր ածեց և գետինը ընկած պնակի նման փշրվեց։

— Տարին... մեռավ... էս մնաց...

Մազերը քանդեց, գալարվեց և անատամ բերանը լայն բացած վայեց։

Արևը մայր մտնելու մոտ էր, երբ Հերյանը շինականների ձեռքից ազատվեց և քայլեց Արարատյան դաշտի արևելյան ուղղությամբ։

Ահա քանի օր է քայլում էր։

Հոգնած էր և հիվանդ։ Ամբողջ մարմինը մղկտում էր, ուժերը սկսել էին նրան լքել, կոպերի և շրթունքների վրա փոշի էր նստել, քունքերը այրվում էին։

— Պետք է փորձել, նորից փորձել,— կրկնում էր ինքն իրեն։— Նավը այդպես չի կարելի թողնել։ Պետք էր ամեն գնով եզներ ճարել...

Աչքերը սփռում էր աշնան վրա ուժ առնելու համար։

Աշունը։

Շեկ և հսկա մի այլվածություն։ Ոսկեջրած հողերի անդորր խորություն։ Բոց և ջերմ։

Չէ, պետք էր մի կերպ այս դրությունից դուրս գալ...

Մտածում էր այցելած գյուղերի մասին։ Թրիք, փոշի, քրտինք։ Կարծես հսկա ոտքերով մեկը քայլել էր աշխարհի վրայից և ամեն ինչ ճզմել։ Տները մխրճվել էին հողերի տակ, սրտերը փակվել էին, գիտակցությունը վարագուրվել։ Կարծրացած, սառած դեմքեր։ Տավարի մրընչոցի նման արտասանված խոսքեր։ Ընդերկրյա հոսանքների նման հանկարծակի եռացող և դղրդացող հուզումներ։

Հրմա, այդ ամենը ծանրացել էր նրա ոսկորների վրա, նրա ուսերի վրա, նրա սրտի վրա։ Շրթները չորացել էին, գլխում ձայներ էին վզզում։

Ահ, ինչ որ էլ լինի, նորից պիտի փորձել...

Եվ ահա աշունը։

Լայնատարած դաշտում սփռված դեղին աշունը։ Լռած, երաժշտացած մի հույզ։

Մարդ չկար։ Երբեմն լսվում էին թռռալով վեր բարձրացող թռչունների կանչերը։ Ամեն ինչ սահում էր վեր։ Ահա բարձրանում էին կաղամախիները և ժանգոտած տերևներով խշխշում երկնքի դեմ։ Նրանց կատարների ծայրերի շուրջը թևերը լայն բացած, օդին խարսխած արագիլներ էին սավառնում, այնքան կամաց, որ կարծես չէին շարժվում։ Իսկ արագիլներից ավելի վեր՝ լեռները, կապտավուն և արծաթե կուտակումներ, որոնց գլուխների վրա ամպերը լույս հագած թափառում էին երկնքի անորոշում։

Հերյանը նայում էր, չորացած շրթները թրջում և քայլում։

Հայաստանը հող էր հոտում, թառամած տերև և ժայռ։ Ահա մի թագավորիկ և ահա մի խայտիտ սուր թևերով, դանակի նման կտրում էին օդը և անհետանում։ Ահա կոճղոտ և մելամաղձոտ տանձենու վրա ծտերի աղմկալից ժողով։ Պատրաստվում էին ճամփորդության՝ եռանկյունի երամով իրենց անհամբեր, ծարաված աչքերը դեպի հեռուներն ուղղած։ Եվ Հերյանի աչքերը նույնպես ծարավում էին, և բարձրացած իր մտքի լեռների վրա բաց էին անում հեռավոր վայրերի գունավոր և անվերջանալի քարտեզները։

Մի մոդես։

Քարի վրա անշարժացած հստակ և չոր մի մարմին. գլուխը մի կողմ ծռած, թաթերը ծաղիկների նման բացված, վիթի աչքերը ուղղած

դեպի խոր մի երազանք։ Այդ աչքերի վրայից բոց վազեց և կենդանու կոնակը կայծկլտաց։ Հերյանը գլուխը վեր բարձրացրեց և տեսավ վերջալույսը։

Հեռվից մի եկեղեցու զանգակ զողանջեց։

Հայաստանը այրվում էր ամեն կողմից խուժող լույսերի մեջ։

Ինքը մրսում էր։

Մարմնի ներսը բարկացած մի քամի էր մտել և նրան կամաց թափահարում էր։ Թափահարում էր նաև դյութիչ և անիրական այդ աշխարհը։ Լեռների գծերը շարժվում էին, ամպերը դողում էին... Երերում էր ալիք-ալիք հրդեհվող ամբողջ դաշտանկարը։

Հերյանը երբեմն կանգ էր առնում թարմանալու համար։ Նայվածքը տարածում էր չորս կողմ և մնում զարմացած։ «Ի՞նչ է այդ աշխարհը,— հարց էր տալիս ինքն իրեն,— ո՞րտեղից նա եկավ ինձ և ո՞րտեղից ես եկա նրան...»։

Չէր հասկանում։ Քայլում էր։

Ա՜հ, տարակույս չկար, հիվանդ էր։ Գլուխը գրնգում էր, ճակատը այրվում։ Բուռն թափով մտածումների և պատկերների շարաններ խուժում, արշավում էին նրա ուղեղի ներսը և նրան չարչարում։

Ամբողջ նրա կյանքը՝ քամու մատներով արագ թերթված գրքի նման անցնում էր մտքի առաջից։ Հիշատակների վարագույրների հետևից անցած դեպքերը դուրս էին ցցվում, կենդանանում, մարմին առնում և այդպես նոր իրականության վերածված նորից կյանքով զգեստավորված քայլում էին նրա մոտը։ Իր մանկությունը, պատանեկությունը, սերերը, ծովը, արկածները և այն հոգեկան վճռական վայրկյանները, որ դեպքեր են պատրաստում և այդ դեպքերը, որոնցից հետո ժամերը ծաղկում. և մեծանում են հուզումներով։

Այդ ամենը շրջապատեց նրան, խմբով քայլեց նրա մոտից։ Քիչ անցած, նա իրեն զգաց բազմացած։ Մի և շատ։ Անցյալ և հավասարապես ներկա։ Իրական և հավասարապես անիրական։

Շրջապատվեց ուրվականներով։ Ծով, մարդիկ, քամիներ, անձրև, փոթորիկ, արև և աստղ, լուսին և խավար եկան, նրա հետ միասին ոտք ոտքի շտապեցին։

Ինչքա՞ն տևեց այդ, ինքն էլ չգիտեր։ Գուցե մի կարճ վայրկյան, գուցեև շատ երկար ժամեր։ Գիտեր միայն, որ այդ ներկայությունները հստակ են, կենդանի, իրական։ Ինքը և նրանք։ Բազմացած այդ մթությունը։ Իր մարմինը և այդ մարմինները, իր աչքերը և այդ աչքերը, իր մտածումը և այդ մտածումները։

— Ջերմ ունեմ,— ասաց նա ինքն իրեն։

Ասաց և ուզեց հավասարակշռության մի կետ գտնել։

Այդ վայրկյանին տեսավ Արարատը։ Նայվածքով պլլվեց նրան։ Մեծդի, վեհ, կայուն, ինչպես կյանքի տևական և հրամայական մի պատվեր։ Լայն և տարածուն նրա փեշերի վրայից կապույտ լույսեր էին մագլցում, միանում ավելի վերը վառված խարույկներին, և կրակները խառնելով սլանում առաջ դեպի բարձրահասակ և ճերմակ գագաթի երկնքին խառնվող լույսերը։

Նայեց և մնաց հափշտակված։

Նրա ճակատին հանգիստ և սփոփիչ մի լույս նստեց։ Սիրտը բաբախեց և աչքերը լայնացան։

— Թագավոր,— փսփսացին նրա ջերմոտ շրթունքները։— Իմպերատոր...

Արարատը մոտեցավ, նվաճեց ամբողջ տեսարանը և լայնատարած մի անդորրություն սփռեց ամեն ինչի վրա։ Հերյանը այլևս ուրիշ բան չտեսավ։ Նա գնում էր առանց քայլերը զգալու, կարծես մտել էր ձգողության օրենքից դատարկված մի աշխարհ։ Խոր, լուսավոր, մեծդի։ Անհետացել էին քիչ առաջ նրան շրջապատող ներկայությունները։ Նա բազմություն չէր, մենակություն էլ չէր։ Ջնջվել էին սահմանները, ջնջվել էր մարմինը, ջնջվել էր իր ես։

Ամեն ինչ միացել էր, վերացել, աննյութացել։

Այդ տևեց երկար ժամանակ։ Հետո երկրագունդը շրջվեց և կամաց-կամաց պտույտ եկավ մութի մեջ։ Լեռները ետ քաշվեցին։ Հորիզոնի վրա մի քանի ուշացած լույսեր մաքառեցին քամու դեմ և մեկը մյուսի հետևից մարեցին։

Մթի և լռության կատարին պլպլալով կախվեց առաջին աստղը։

Հերյանը արագացրեց քայլերը։ Բարեբախտաբար, Սելաձոր գյուղը շատ հեռու չէր։ Հարդի ուժգին հոտ էր գալիս և շների հաչոց էր լսվում։

— Մի վերստ ևս,— հաշվեց Հերյանը։

Այլևս ուժ չուներ։ Հայաստանը և ջերմը խածել, տրորել էին նրա մարմինը։ Սաստիկ ծալ ավ էր։ Շրթները չորացել էին և աչքերը այրվում էին։

Սելաձոր գյուղը լցված էր թանձր ստվերներով։ Եկեղեցու բամբ զողանջը ողջունում էր նրանց գալուստը։ Մի կով բառաչում էր։ Կարծես բարձր ձայնով հորանջում էր։ Մի աքլոր՝ երկինք մտած աստղերի թափորից խաբված երգում էր։

Հերյանը մտավ գյուղը և նայեց չորս կողմը։ Բաց մի դռան կատարին, որ երևի խանութ էր, նավթե մի լամպար էր վառված։ Լամ-

պարը ծխում էր և ապակին սևացած էր։ Նրա տակը կանգնած երկու գյուղացիներ խոսում էին։ Հերյանը ուշադրությամբ նայեց. մեկը ամբողջովին փափախ էր և բեղ, մյուսը ստվեր էր՝ սև և երկար։

— Բարի երեկո,— ասաց Հերյանը մոտենալով նրանց։

Ստվերը շրջվեց և դարձավ քիթ, կարճ կզակ և փոքրիկ ծիծաղող աչքեր։

— Բարի եկաք,— ասաց նա։ Նրա քիթը ավելի մեծացավ և նրա աչքերը ավելի ծիծաղեցին։

— Ձեք ասի... Կարապետ բիձայի տունը ո՞րտեղ է...

— Կարապետ բիձա՞... Ո՞ր Կարապէտ բիձան, գեղում Կարապետներ շատ...

Եվ քիթը նայեց փափախին և փափախը նայեց քթին։

— Սասանենց Կարապետը գո՞ւցե... — ասաց ստվերը, միշտ ծիծաղող աչքերը Հերյանի վրա հառելով։— Ինչպե՞ս մարդ է, ծե՞ր է, երիտասա՞րդ է... Մի աչքը քոռ խոմ չի՞...

— Հասակավոր մարդ է,— պատասխանեց Հերյանը, զարմանքով նրա աչքերին նայելով։— Ես, ճիշտն ասած, նրան իսկի չեմ էլ տեսել։ Ինձ հայտնի է, որ նա հող ունի, բաղ ունի և բավականին թվով եղներ... Հաճախ Երևան է գնում գալիս... Ավելի շուտ ծանոթն է իմ ծանոթներիս... նրանք են հանձնարարել...

— Դա, Մկչենց Կարապետ աղան է, որ կա... Ավոյի հայրը, հասատատ...

— Հա, էլի,— համաձայնվեց մյուսը։— Գեղի ամենամեծ բաղը նրանն է... տավար էլ ինչքան ուզես...

— Ինձ թվում է գտանք,— ասաց Հերյանը։— Ո՞րտեղ է ապրում...

— Գնանք։

Ստվերը և փափախը գնացին Հերյանի հետ։

Գյուղի փողոցում փոքրիկ քամի էր ման գալիս։ Ջորացած խոտի, քացախի և փոշու հոտ էր տարածում։ Շները դեռ հաչում էին։ Հերյանը նորից սկսել էր դողալ։

— Ձեր հրամանքը քաղաքից է գալի՞ս,— հարցրեց բարձրահասակ ստվերը։

Քաղաք բառը ղա-ղա-ղա-ղա-ի վերածվեց և արձագանքվեց Հերյանի գլխում։

— Քաղաքում եմ ապրում (ղա-ղա-ղա-ղա), բայց հիմա գալիս եմ գյուղերից... գործով,— պատասխանեց Հերյանը։

— Գործո՞վ,— զարմացավ ստվերը։

— Գործո՞վ,— զարմացավ փափախը։

Քիչ քայլելուց հետո փափախը ցուցամատը երկարեց և ասաց՝

— Ասում են թշնամին գալիս է...

Հերյանը ոչինչ չպատասխանեց։ Ստվերը ծիծաղող աչքերը մոտեցրեց Հերյանի աչքերին և նրա նայվածքը կայծկլտաց։

— Ասում են թշնամին գալիս է...

Երկուսը միասին հոհոացին։

Հերյանը ջղայնացավ։

— Իմ գործը չի,— պատասխանեց նա բարկացած։— Մերոնք խոմ ոչխար չե՞ն, հինգ տարի է կովում են և նորից կկռվեն...

— Ճիշտ է...

— Հայը որ կռվում է, կռվում է...

Ճանապարհի ծայրին մի գամփռ դուրս եկավ, վազեց դեպի նրանց և սկսեց կատաղած հաչել։

Քիթը և փափախը անհանգստացած և այս ու այն կողմ վազելով աղմկեցին։ Քարեր նետեցին և վերջիվերջո շունը փախցրին։

Փափախավորի բեղերը անհանգիստ շարժվեցին և նա սկսեց բարձրաձայն ծիծաղել։

— Ադա, ինչ ես ծիծաղում,— ասաց մյուսը տխուր ձայնով և իր աչքերը նորից տնկեց Հերյանի վրա։ Հերյանը նկատեց, որ նա շատ մեծ, վեր կարկառած ականջներ ուներ, վարի շրթունքն էլ ճեղքված էր։

— Էս պատմությունը շատ երկար տևեց,— ասաց նա վճռական շեշտով։— Կարապետ աղին ճանաչո՞ւմ եք, թե չեք ճանաչում...

— Ճանաչում ենք, էս ա, հասանք...

Մինչդեռ հասած չէին։

— Այսօր ինձ ամեն բան տարօրինակ է թվում,— մտածեց Հերյանը։ Դողը գնալով սաստկացավ։ Մութ էր, փոշի, լռություն։

Մի պարտեզի առաջ ստվերը հանկարծ բարձրացավ, երկարեց։ Հերյանը գլուխը բարձրացրեց, նայեց և մնաց ապշած։

Գլուխը պտույտ եկավ։

— Էս ա, հասանք,— լսեց նա։

Կարապետ աղան բարի, լավ ուտող, լավ խմող, շաբաթը մի անգամ ածիլվող աստվածավախ (առավոտները մի երես աստվածաշունչ էր կարդում) մարդ էր։ Գեր, ծանրաշարժ։ Գործի մեջ՝ գլուխը պինդ, սակայն առատաձեռն։ Իր հարաբերությունների մեջ՝ լայնախոհ և նույնիսկ թույլ։ Գյուղացիները նրան հարգում էին և խոսքը լսում։ Հերյանին տեսնելով ուրախացավ։ Լսել էր։ Ինչպե՞ս չէր լսել։ Տեսել էր նավը։ Իսկ երբ իմացավ, որ նրան ուղարկողը կառավարչական մի պաշտոնյա էր,

որի հետ զանազան գործեր ուներ, հուզվեց, հոնքերը վեր բարձրացրեց և նրան ընդունեց գրկաբաց։

Կինը, աղջիկը և զավակը հյուրին բարևեցին։

— Պարոնը հիվանդ է,— ասացին։

Գետինը անկողին փռեցին, թեյ պատրաստեցին և պնդեցին, որ Հերյանը պառկի։ Հերյանը հնազանդվեց, մտավ անկողին և ատամները կրճտացնելով դողդողաց։ Ջերմ ուներ։ Չնայած դրան նա ուզեց գործի մասին խոսել, բայց Կարապետ աղան մատը շրթներին տանելով գլխով մերժողական շարժումներ արեց։

— Հալա հանգստացիր, հետո կտեսնենք...

— Հարցը նրանում է,— պնդում էր Հերյանը,— որ ժամանակ չկա, վաղը անպատճառ քաղաք պետք է վերադառնամ... նավը մնացել է անտեր...

— Նավից ավելի կարևոր է առողջությունը... Պառկիր, հեր օրհնած, պառկիր...

— Ահ, Կարապետ աղա, եթե իմանաս, ինչ դժվար դրության մեջ եմ ընկել... Միտքս էնտեղ է և...

Սաստիկ դողը թույլ չտվեց, որ նա խոսքը շարունակի։

Այդ վայրկյանին հարևան սենյակի դուռը բացվեց և խորոված ի ուժեղ հոտ խուժեց ներս։ Կարապետ աղայի աչքերը փայլեցին։

— Էս ա,— ասաց նա աշխուժացած և ձեռքերը մեկը մյուսին քսելով։— Նախ մի կտոր բան ուտենք, իսկ հետո կմտածենք...

Հերյանը կտրուկ կերպով մերժեց ուտել։

— Լավ,— համաձայնվեց տանտերը,— ես գնամ մի բան ուտեմ, վերջը կխոսենք եղների մասին։

Հերյանը զարմացած նայեց նրան։

— Բա՞, կարծում էիր չգիտե՞մ... Քաղաքում պատմեցին... Մեր տղին ուղարկեմ, թող հարևանները գան, խոսենք, խորհուրդ անենք, տեսնենք ինչ կարելի է անել... Ընդհանուր գործ է... երեսի վրա չի կարելի թողնել...

Հերյանը մնաց մենակ։ Կուչ եկավ անկողնի մեջ և սարսռաց։ Գնալով ջերմը սաստկանում էր։ Ոսկորները ցավում էին, գլուխը այրվում, ատամները կրճտում։ Մարմինը հավաքած պառկել էր, ինչպես մանուկը մոր արգանդում, և ուժ էր գործադրում զսպելու... հաղթահարելու իր մարմնի մեջ մտած թշնամին, այդ բոցավառ զորությունը։ Քողարկվել էր նաև նրա գիտակցությունը։ Միտքը անհանգիստ բոցի նման այս ու այն կողմ էր վազում, ցատկրտում պատառ-պատառ ներկայացող տեսարանների վրա, շփոթվում, այրվում, մթնում։ Ականջների մեջ ձայներ էին դղրդում։

Մեկը կանչեց նրան։ Վերմակի տակից գլուխը դուրս հանեց և կարմրած աչքերով նայեց։

— Օղի եմ բերել,— ասաց Կարապետ աղան, լեցուն մի բաժակ կարկառելով,— ասում են ջերմի դեմ դարման է...

Հերյանը փակեց աչքերը և օղին կուլ տվեց։ Մի ուրիշ բաժակ էլ, հետո մի ուրիշն էլ։ Վերմակը քաշեց գլխին։ Երակների միջից թեթև տաքություն վազեց։

— Էս ա, գրաֆինկան թողնում եմ մոտդ,— լսեց նա։— Նորից խմիր, լավ է...

Օղին իսկապես լավ էր աղդում։ Քիչ հետո ձեռքը երկարեց, գետինը շոշափեց, գրաֆինկան գտավ և տարավ բերնին։ Այդ կրկնեց մի քանի անգամ և շիշը ամբողջովին դատարկվեց։ Ծածկվեց։ Տաք, գրեթե կիզիչ մի հոսանք բարձրացավ նրա մեջ և արևադարձային մի գիշեր գրկեց նրան։ Կոպերը ծանրացան և միտքը հալածելով բզկտվեց։ Տակ-տակ-տակ,— զարնում էին քունքերը։ Ոտքերի ծայրերը և ծնկները մղկտում էին։ Տակ-տակ-տակ... Այո, «Ալբատրոսի» մեքենան աշխատում էր կանոնավոր կերպով, առանց որևէ խոփանքի։ «Ափին շատ մի՛ մոտենար,— ասում էր ղեկավար նավաստիին,— մի քիչ աջ թեքվիր... Ասել եմ ուրիշ անգամ, այդ կողմերը ժայռեր կան... լիճ է, հե-հե»... Իսկ լճի շուրջը կանգնել են Աստաֆյան փողոցի տները։ Զարմանալի չէ՞։ Աստաֆյան փողոցի տները և երկու գյուղացիները՝ փափախը և ստվերը։ Ստվերը ամբողջովին քիթ է և նրա աչքերը ծիծաղում են։ Աչքերը ծիծաղում են, իսկ ձայնը այնքան տխուր է, այնքան տխուր... Եվ տխուր են Աստաֆյան փողոցի տները և տխուր է երկինքը և տխուր է աշխարհը, որի վրայից թեպետ ջրհեղեղը սկսել է անհետանալ, սակայն ամեն կողմից դեռ շարունակվում են սելերը, ջրվեժները, մինչդեռ ահա երկնքի մի ծայրը բացվել է և մի ձայն հստակ, հնչուն, քաղցր՝ խոսում է, պատգամներ տալիս։

Գլուխը հնչում էր ցորենի զտիչ մեքենայի նման։ Ջերմը և ուժեղ օղին բաղադրվում էին, մարմինը և ուղեղը խածնում, կրակ ման ածում, մշուշ սփռում, գիտակցությունը պատռտում և ամեն մի պատառի ծայրին անկարելի մի տեսարան կարկառում։

Այդ տևեց բավականին երկար ժամանակ։

Ջերմի սաստիկ այդ տագնապի միջոցին, նրան թվաց, որ սենյակում մարդիկ կային։ Կամաց խոսակցող ձայներ լսեց։ Նախ, ուշադրություն չդարձրեց, ապա աչքերը պոկեց հալածող տեսարաններից և ականջները սրեց։

— Հասկացանք, Կարապետ աղա, հասկացանք,— լսեց նա։— Ախր

չես ասում... աշխատանքները չեն վերջացել. ձմեռը մոտենում է, իսկ խոտը ներս չի բերված...

— Ես ասում եմ, շատ գործ չի, մի քանի օրվա հարց է,— պնդում էր Կարապետ աղան։

— Ասենք տավարը տվեցինք,— ասում էր մի ուրիշը,— իսկ հետո՞, ո՞վ կերաշխավորի... եթե մի բան պատահեց... Աշխարհը ընկել է փուչ մարդկանց ձեռքը, ժամանակներն էլ խառն են...

Ձայները խառնվեցին նրա գլխի մեջ։ Ո՞ւր էին խոսում, ովքե՞ր էին խոսում։ Ուզեց աչքերը բաց անել, բայց կապարով ծանրացած կոպերը չհնազանդվեցին։ Լսում էր, բայց միտքը չէր կարողանում կենտրոնացնել։ Միտքը հեռանում էր, մտնում թանձր ամպերի մեջ, սավառնում անորոշ վայրերում։ Չէր քնում, բայց արթուն չէր։ Զգում էր միայն, որ ոտքերը գնալով ծանրանում էին և քունքերը շարունակում էին ուժով խփել։

— Տարան... ետ չտվեցին,— նորից լսեց նա։— Ասես թշնամու մալ լիներ... Ախր, շինական մարդուն պլոկելով բան դուրս չի գա...

— Այստեղ ուրիշ հանգամանքներ կան... Մարդը վարձք է վճարելու... պիտի վճարի եզների համար...

— Ախր, ասում ես պիտի վճարի, իսկ եթե չվճարեց...

— Հա էլի, հարցը հենց դրանում է...

Ձայները շարունակում էին վզզալ։ Հաստ, բամբ, խոպոտ ձայներ։ Կոկորդում կանգ առնող, կուլ ընկնող ձայներ։ Գլուխը վեր բարձրացնող, սուր, հիվանդ աքլորի նման կանչող ձայներ։ Տանտերը ասում էր հա, հա, հա, մյուսները ասում էին չէ, չէ, չէ։ Ապա բոլոր ձայները միանում էին — գուլու, գուլու, գլուչե, գլուչե, գլուչե — գետի ջրերի նման թափվում էին... ժայռերի կատարից և քարերի վրայից ցատկելով, վշշալով թափվում էին խոր, խոր մի անդունդ, որ ամեն ինչ կուլ էր տալիս լակելով, լակլակելով... Այդ սև, լայն, ահավոր բացվածքը քաշում էր Հերյանին, ուզում էր նրան ևս ներս առնել, իսկ գլուխը և ամբողջ իրանը ետ էր գցում, ոտքերը պինդ սեղմում էր անդնդի եզերքին և ուժ էր գործադրում հավասարակշռությունը պահելու, վայր չընկնելու համար։ Այդ պատճառով էլ նրա մարմնի ամբողջ անդամները լարվել էին, ջղերը սրվել և արյունը եռ էր գալիս։ Եվ թվում էր նրան, որ ահա նորից երկնքի ծայրը բացվել է, մի տեսիլք է ցցվել և խոսում է...

— Ասում են, շատ բան են ասում,— լսեց նա,— ինչպես չէ՞... Իբր գիշերը ձեն է լսել... սուրբ Կարապետը խոսել է, հրաման տվել, գնա ծովի ափը, նավը վերցրու, տար Սևան...

— Հա՛, լսել է...

— Գյուղերում խոսում են... Շատերը հավատում են... Եթե նավը տեղ հասնի, Հայաստանի գործերը լավ... խաղաղություն...

— Ախր, ասում եմ ձեզ, հավատավոր մարդ է,— պնդում էր Կարապետ աղան,— գործն էլ սուրբ գործ է...

Այդ վայրկյանին, Հերյանի ուղեղի միջից — զընգ — մի հոսանք անցավ, ինչ-որ մի ուժ արթնացավ, դեղին լույսի նման վառվեց, ցնցեց նրան, և նա, առանց իրեն լավ հաշիվ տալու, թե ինչ է անում, վերմակը կլխի վրայից գցեց և անկողնի վրա նստեց։

Սենյակի անկյունում բարձր և նեղ սեղանի վրա, կոլոր ապակիով նավթե մի լամպար էր դրված։ Նրա տակը, ծալապատիկ նստել էին մի քանի գյուղացիներ։ Մորուքներ, հոնքեր, առատ բեղեր։ Այդ մորուքների և բեղերի վրա հաստ շուքեր էին ընկած, իսկ շուքերի վրա ծխի ամպեր էին ման գալիս։ Հերյանի նայվածքի առաջ բոլոր այդ գծերը և ձևերը փշրվեցին, անկյուններ կազմեցին, խառնվեցին։ Նա զգաց միայն իր վրա նայող աչքերի մի խումբ։ Ծակող, հետաքրքրված, վախեցած աչքեր։

Նրա դեմքը նիհարել էր, դեղնել, երկարել։ Մազերը խառնվել էին և փունջ-փունջ կպել քրտնած ճակատին։ Ջորացած շրթները սեղմվել էին, աչքերի շուրջը խոր փոսեր էին ընկել և բիբերը էլեկտրականացած կայծկլտում էին ֆոսֆորե, անբնական լույսով։

Մի վայրկյան նա նայեց աչքերին և աչքերը նայեցին իրեն։

— Ըղորդ է,— ասաց Հերյանը այնպիսի մի ձայնով, որ կարծես իրենը չէր,— ըղորդ է։ Տեսա, խոսեց, լսեցի։

Գյուղացիների վրայից մի սարսուռ անցավ։ Ամենքի աչքերը լայնացան։

— Ըղորդ է,— կրկնեց նա այնպիսի շեշտով, որ կարծես ուրվական է խոսում։— Երկնքի ծայրը բացվեց, լույսերով ողողվեց... խոսեց, լսեցի...

Ուզեց շարունակել և չկարողացավ։ Սաստիկ դողը թափահարեց նրա ամբողջ մարմինը, և ատամները կրճտացին։

— Պառկիր, պառկիր,— անհանգստացավ Կարապետ աղան։— Ախր, չի կարելի... Պառկիր, կտեսնես, այս քրիստոնյա ժողովուրդը մի բան կանի... Սկլեձոր գեղը տակը չի մնա...

Մոտեցավ, վերմակը քաշեց Հերյանի վրա։ Եվ հուզված, խորհրդավոր աչքերով նայեց գյուղացիներին։

Գյուղացիների մորուքները և ձեռքերը ալեկոծվեցին։

— Բա... քար խոմ չենք...

— Դե, պարզ է...

— Սուրբ գործը, ինչպես ասում են, սուրբ գործ է...

— Դե, Կարապետ աղա, դու գործը սկսիր, մենք կանենք ինչ կարող ենք։

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ,— ասաց Կարապետ աղան։— Ասում եմ աստծո գործ է... Հիմա թողնենք, թող հիվանդը հանգստանա, վաղը նորից կխոսենք...

Ամենքը ոտքի կանգնեցին։ Մի քանի րոպե հառաչը զսպելով դեռ փսփսացին և ոտքերի մատների վրա քայլելով մեկ ուսը առաջ հակված դուրս գնացին։

Երկու օր հետո Հերյանն ու Կարապետ աղան երկար վիճելով, պաղատելով ու վճարումների համար ստորագրություններ և երաշխավորություններ տալով գործը մի կերպ գլուխ բերեցին։

Հերյանը եզների հետևից ընկած քայլեց դեպի մայրաքաղաք։

7

Նավի տեղափոխության աշխատանքները վերսկսվել էին նոր թափով և եռանդով։ Սելաձոր գյուղի անսպասելի հաջողությունը Հերյանին լցրել էր վստահությունով։ Քիչ բան չէր եզներ ճարելը։ Ջերմի մյուս օրը, երբ Կարապետ աղան նրան պատմել էր տեղի ունեցած դեպքի մասին, Հերյանը զարմացած և զվարճացած խոստովանել էր, որ ոչինչ չէր հիշում։

Ու նրա աչքերի մեջ մոլեռանդ մի լույս էր թառել։

Գնալով մեծացել էր նաև նրա ժողովրդականությունը։ Այդպիսի ժամանակներում գյուղից եզներ բերել, և նավը անդադար դժվարացող զառիվերով բարձրացնելը իսկական հրաշք էր համարվում։

Եվ հրաշք չէ՞ր նաև փողոցի տղաների այդ հլու հավատարմությունը։ Հաճույք էր տեսնել, թե նրանք ինչպիսի գուրգուրանքով պաշտպանում էին նավը։ Նրանք Հերյանի հրամանները կատարում էին, մտահոգված երեսներով աջ ու ձախ վազելով։

Անշուշտ ոչ ոք չէր մտածում այն դժվարությունների մասին, որ Հերյանը ստիպված էր հաղթահարել։ Նրա անձնական փողերը գրեթե ամբողջովին ծախսվել էին։ Պետք էր ապրել, եզները կերակրել, գյուղացիներին գոհացում տալ, տղաների մասին հոգալ։ Նրա մի քանի արժեքավոր իրերը վաղուց վաճառվել էին։ Իշխանությունը փող չուներ և պետական գրասենյակներից մի բան ստանալը դարձել էր տանջանք։ Ոմանք նրան խորհուրդ էին տվել դիմել արտասահմանից այցելության եկած անձնավորություններին։

— Արդյոք կարելի չէ՞ր, որ դրսի հայությունը օգներ այդ անհրաժեշտ և շինարարական գործին...

Խնամքով հագնված և նախարարության ձգտող այդ պարոնները ձեռքը դրել էին նրա ուսի վրա, գովել նրա գործը և խոստացել մի բան անել, երբ օվկիանոսը անցնեին...

Երբ օվկիանոսը անցնեին... Բայց գործը չէր սպասում... Աշունը անհանգստանում էր։ Լեռների ետևից դղրդացող քամիներ էին դուրս գալիս, վազում քաղաք, կուրացնող փոշիները ամպերով ծածկում փողոցները և անկարելի դարձնում որևէ աշխատանք։ Կամ, մեկ էլ երկինքը սևանում էր, գոռում, կանչում և հազարավոր դույլերը շրջելով աներևակայելի մի ջրհեղեղ թափում վար։ Ցարագուշակ դեպքերը հաջորդաբար գրոհ էին տալիս Հայաստանի վրա։ Բոլոր սահմաններին վտանգ էր սպառնում։ Երկնքի մոտությունով ծանրացած և կիզիչ արևով լվացված այս բարձրավանդակի վրա ապրող ժողովուրդը իրեն զգում էր պաշարված բերդի մեջ։ Բերդ, որի պաշարը վերջացել էր, վենքերը սպառել էին և տարիներով շարունակվող պատերազմներից հոգնած կուվողները ջղագրգռված սպասում էին եվրոպական բանակների օգնությանը, որը հեռավոր, անիրական երազ էր։

Ներսը, հայերի մի մասը պայքարում էր մյուս մասի դեմ։

Ցնցոտիներով և վերքերով ծածկված հարյուր հազարավոր գաղթականները վեր էին բարձրացնում զայրույթով գալարուն իրենց ոսկրոտ բազուկները, ծռում շարշարված շրթունքները և իրենց անները, իրենց երկիրը ետ պահանջում։ Այդքան բեռների տակ ճղմված, հոգնած, հուսահատված տեղացիները իրենց աչքերը հառում էին դեպի արևմուտք և սպասում խոստացված փրկության, որը չէր գալիս...

Չէ, պետք է շտապել։ Կուսակցությունները վիճաբանում էին։

— Չի կարելի, իմ արև, չի կարելի... համարյա առաջ չենք գնում, շարժվում ենք կրիայից էլ դանդաղ... Ախր, Մարտին, ասացի, պետք է հսկել առաջին շարքի եզների վրա, չեն քաշում ինչպես հարկն է... ամբողջ ծանրությունը ընկնում է ետևի լծակների վրա... Պաժալստա, մի բան արա... Կենդանիներին որ չստիպես, առաջ չեն գնա... Հալա տես, է. Անպետքները խորամանկություն են անում... չորս արշին հազիվ ենք առաջացել...

— Ես չափել եմ հինգ արշինից քիչ պակաս...

— Հինգ արշինից քիչ պակաս... Հեր օրհնած, առավոտից արյուն քրտինք ենք թափում... և հինգ արշինից քիչ պակաս... էշի գլուխին հալիվ հասնենք լիճ... Հասկացիր, մեզ համար ամեն մի վայրկյանը

թանկ է, աշունը մեր գլխին հազար օյին կարող է խաղալ, գյուղացիները սկսել են քթի տակով մռմռալ... Ի՞նչ իմանամ, մեկ էլ տեսար գեպքերը բարդացան...

— Էդ մեկը ճիշտ է...

— Բա...

Եվ մտահոգված նայում են մեկ մեկի աչքերի մեջ։

Մարտինը հագել էր Հերյանի հին բաճկոնը, որը չափազանց լայն էր և որի մեջ նա ամբողջապես կորել էր։ Ոտնաման չուներ։ Կարճ տաբատի ծայրերը պատռված էին և գլխի շապկան ծիծաղի առարկա էր, այնքան որ փոքր էր։ Այգում կախված խրտվիլակի էր նման, սակայն այդ չգիտեր։ Հպարտ էր բաճկոնով և իրեն լավ հագնված մարդու ձևեր էր տալիս։ Ձեռքերը խոթում էր լայն թևերի մեջ, մեկ ոտքը առաջ գցում և կուրծքը ուռեցնում։

— Ի՞նչ ասացիր...

— Դրությունը լավ չէ։

— Այսինքն...

— Գիշերով զորքեր անցան... ո՞ւր էին գնում, չիմացա... Նոր փախստականներ են գալիս... գործերը լավ չեն երևում...

— Դատարկ բաներ ես պատմում... Դա մեր գործը չէ... Մեր գործը ուրիշ է... մինչև վաղը առավոտ ամեն բան պատրաստել...

— Պատրաստ կլինի։

— Էդպես։ Գիշեր բարի։

Դա զարմանալի է։

Սև թշվառություն է։

Հայաստանի դռներին ամեն կողմից երկաթե մուրճերով թակում են։ Երկրի գլխից ծանր և չարագուշակ ամպեր են անցնում։ Երևանի փողոցները լցվել են աղբով, ջերմով, մահով, բայց արի տես... հենց որ շաբաթ երեկո է լինում, ունևորների տների պատուհանները լուսավորվում են, երկար սեղաններ բացվում, թառ ու դավալ ածում, գինի խմում, հաց ուտում, պարում, քեֆ անում։

Կովկասի հայությունը ձի քշող, գինի խմող, պար եկող ժողովուրդ է։ Կռվող, տոկուն, դարդը երգի վերածող և ցավը պարի վերածող ժողովուրդ է։

Այդ գիշեր երկար պնդումներից հետո նա ընդունել էր բարեկամ մարդկանց հրավերը։ Եկել էր տուն, լվացվում էր։ Սապոնած փոքրիկ խոզանակով քերում էր մարմինը՝ փողոցի, ճանապարհների և մարդկանց կեղտը

սրբելու համար։ Լավ տրամադրված էր։ Ջուրը նրան երջանկություն էր տալիս։ Քթի տակ երգ էր մռմռում։

Ժամանակին նավի վրա բաղնիք ուներ։ Առավոտները, հենց որ անկողնից վեր էր թռնում, տասը վայրկյան մարմնամարզություն էր անում, մկանունքները տրորում, ծովի աղերը ներս շնչում, ապա գնում կանգնում մտրակող ջրի հեղեղի տակ։ Կյանքը մտնում էր նրա մեջ շառաչող ալիքի նման։

Հիմա ժամանակ չուներ մարմնի մասին մտածելու։ Երբեմն անկողին էր մտնում առանց հանվելու, առանց լվացվելու, առանց ուտելու։

Այդ գիշեր, բացառաբար, փոքրիկ սենյակը լցվել էր ջրով, ոտք դնելու չոր տեղ չկար։ Ոտքի մատների վրա մեկ կողմից մյուսն էր ցատկում և հագնվում։ Ուրախ էր, ձայնը գլխին գցած երգում էր։ Մարմինը լցվել էր անդիմադրելի ուժերով, ճկունացել, վառվել։

— Լավ էր, երբեմն մաքուր հագնված մարդիկ, շքեղ սեղան և կանայք տեսնել։

Կանայք...

Ջորտ եվո դերի[1], մաքուր թաշկինակ չկար։ Օձիքի կոճակը ներս չէր մտնում, փողկապը թրջվել էր և արդեն ժամը ինն էր։

— Հանգուցյալ Պյոտր Բաղդասարովիչ Տանձիբարովը, որին մենք մտերմաբար Պետյա էինք անվանում, և որը Մոսկվայի Մեծեվոյ ինստիտուտը ավարտելուց հետո Երևանյան նահանգի հողային բաժանումների վերահսկիչ էր նշանակված... հանգուցյալ Պյոտր Բաղդասարովիչը...

Սեղանը բացված էր երկար դահլիճում։ Կարմիր տախտակահատակը՝ շուրջը սև գծերով փայլփլում էր հայելու նման, և նավթ ու պարաֆին էր հոտում։ Պատերի մոտ բազմաթիվ վիեննական աթոռներ էին շարված։ Պատերի վրա կախված էին մի քանի թառամած լուսանկարներ՝ Վենետիկի մի ջրանցքը, խալիներ և պարսկական մի թուր։ Սեղանը լցված էր պնակներով, գինու շշերով, ուտեստեղեններով։

— ...Սովորություն ուներ, չնայած շատ խոսել չէր սիրում, իր մտերիմ բարեկամներին ասելու...

— Ահ, կապիտան ջան, չեք կարող պատկերացնել ինչքան ուրախ ենք, որ մեր հրավերը չեք մերժել և եկել եք... Լավ, լավ, լավ, տեսնում եմ, Առաքել Իվանիչը ձեզ զբաղեցնում է... Ախ, դուք մեր Առաքել Իվանիչին լավ ժամանակներին չտեսաք, ի՜նչ տուն, ի՜նչ հյուրասիրու-

---

[1] Պատանան տանի։

թյուն... Դե, ի՞նչ ասած, աշխարհը փոխվել է, հանգամանքները ուրիշ են... Ոչինչ, կգա ժամանակը, էլի լավ օրեր կտեսնենք... Նստեք, խնդրում եմ, ինչո՞ւ եք ոտքի, նստեք... Կնոջս ճանաչում եք, չէ՞... Սոնինկա, կապիտան Հերյանն է, մեր, այդպես ասած, օրվա հերոսը...

— Շատ և շատ ուրախ եմ, պարոն Հերյան, Սերյոժան լավ ասաց՝ օրվա հերոսը... էլ քաղաքում ուրիշ խոսակցություն չկա. նավը, նավը, նավը... Ծանոթացեք... օրիորդ Բուդաղյան... Պատկերացրեք, մի քանի ամիս էր մնացել, բարձրագույն կուրսերը ավարտելու, բայց դեպքերը նրան ստիպեցին թողնել Պետերբուրգը... Լսեք ինչեր է պատմում... Ինձ ներեք... նոր հյուրեր եկան...

— Այդպես, դուք ևս հանդիսատես եք եղել հեղափոխության պատմական օրերին...

— Այո։

— Ուժեղ տպավորություններ...

— Շատ։ Ամենքս այնքան ոգևորվեցինք, այնքան ուրախ... Հրաշալի օրեր էին, միանգամայն անմոռանալի... Ծնվում էր տարիներով երազած նոր Ռուսաստանը, ժողովուրդը գտավ իր իսկական դեմքը, իր իդեալը...

— Ռուսաստանը տարերք է, ինձ համար անհասկանալի հանելուկ։

— Այդ չափազանցություն է։

— Ամբողջ պատմությունը մեջտեղն է...

— Պատմությունը ցույց տվեց ռուս ժողովրդի մեծահոգությունը, նրա մարդասիրությունը, նրա վեհանձնությունը... Իսկ գրականությո՞ւնը։ Դոստոևսկին, Պուշկինը...

— Դոստոևսկին, անշուշտ, հանճարեղ է, բայց ինձ համար բոլորովին օտար։ Նա թափառում է հոգեկան անդունդների շուրջը, հիվանդոտ ուրվականի նման տանջվում է գոյություն ունեցող հարցերով։

— Իսկ հապա Պուշկի՞նը...

— Պուշկինը այո։ Նա այն է, որին ռուս ժողովուրդը բնազդաբար ձգտում է՝ չափ, ներդաշնակություն, պայծառություն։ Հենց դրա համար է, որ Դոստոևսկին իր հռչակավոր ճառում Պուշկինին ցույց էր տալիս իբրև այն հեռավոր ճրագը, որին ռուս ոգին պետք է հասնի...

— Ահա, ինչ եք ասում, պարոն Հերյան...

— Ներեցեք, Առաքել Իվանիչ, օրիորդի հետ վեճի բռնվեցի...

— Հասկանալի է. ջահելները սիրում են վիճել, տաքանալ... Մեր Բուդաղյանի աղջիկն է... Հայրը բժիշկ էր և աննման մարդ... հանգիստ, բարի, հին տեսակի մարդ էր։ Կլուբում պրեֆերանս խաղալիս

մեկ էլ գույնը գցեց, ճեփ-ճերմակ դարձավ և հոգին ավանդեց։ Շատ, շատ ցավեցինք... մեծ, փառավոր թաղում տեղի ունեցավ... Նրա զավակներից մեկը սպա է, Սաշան, քրոջ հետ կանգնած խոսում է, իսկ մյուսը... մի բան չի... Ամենից շնորհալին աղջիկն է. նա էլ գեպքերի պատճառով կուրսերը չկարողացավ ավարտել... Լավ են. տուն-տեղ ունեն, մի երկու բաղ...

— Առաքել Իվանիչ, մի բան էիք պատմում, եկան խանգարեցին...

— Ի՞նչ բան... բոլորովին մոռացա... Հա-հա, խոսում էի Պյոտր Բաղդասարովիչ Տանձիբարովի մասին... Պետք է ընդունել, որ շատ պատվավոր, շատ հարգված և բարձր շրջաններում լավ դիրք ունեցող մարդ էր... Հաճախում էր Աֆիցերսկի կլուբը, որտեղ գալիս էին բոլոր բարձրաստիճան չինովնիկները և մեզանից... ես, ինժեներ Հարամովը, բժիշկ Ասլանյանը, Խան Բիժինսկին և էդպես, մի քանի վաճառականներ, պաստավշչիկ, մաստավշչիկ, վտարոյ գիլդի կուպեցներ... Լավ օրեր էին։ Մեղք, դուք չտեսաք... Հա, ի՞նչ էի ասում...

— Խնդրում եմ, խնդրում... պարոն Հերյան, Առաքել Իվանիչ, համեցեք, օղի խմենք, մինչև սեղանը բոլորովին պատրաստ լինի...

— Ծանոթացեք. պարուչիկ Ալեքսանդր Բուդաղյան... Սա մեր կապիտանն է, գիտեք չէ՞...

— Ինչպե՞ս չէ...

— Գործե՞ր... ի՞նչ գործեր եք ուզում... Ճանապարհները փակվել են, ապրանք ասես չենք տեսնում. Պարսկաստանից մի քանի կտորմտոր բան ենք ստանում... Ախր, դրան վաճառականություն չի կարելի ասել... Չէ, էդպես որ գնա... սոսկալի է...

— Մի հատ էլ։ Թույլ տվեք ձեր բաժակը լցնել։ Ծովի մարդ եք, իսկ ծովի մարդիկ...

— Ես... սիրելի կապիտան, սովորություն եմ արել երեք բաժակ... Ավելին՝ նի՛-նի՛... Երեք բաժակ կեսօրին, երեք երեկոյան...

— Առաքել Իվանիչ, ձեր Տանձիբարովի պատմությունը չվերջացրիք...

— Համարյա վերջացրի... Ուրիշ անգամ կշարունակեմ... Ձեր կենացը... խորհուրդ եմ տալիս սրանից վերցնել... Բալրկ է, շատ լավ ձուկ է... վերջին ժամանակներս ուղղակի առանց կապչոնի ձուկի ենք մնացել, իկրա չի ճարվում, շամայկայի հոտը անգամ չկա... Ընդունեք, սա անտանելի դրություն է... Ասում եմ, եթե Եվրոպան մի բան պիտի անի... այդպես շարունակել չի կարելի...

— Կապիտան Հերյանը ինչ ուզում է մտածի, առանց Ռուսաստանի փրկություն չկա մեզ...

— Դուք որտեղի՞ց գիտեք, թե ինչ եմ մտածում, պարուչիկ Բուդաղյան։

— Քույրս քիչ առաջ պատմում էր։

— Հա՞...

— Մենք՝ ռուսական բանակի նախկին սպաներս, դրանում համոզված ենք, եթե սպիտակ Ռուսաստանը մեզ օգնության չգա... կորած ենք...

— Եվրոպան կա, չէ՞...

— Ահ, Առաքել Իվանիչ, Եվրոպայի անունը ավելի լավ է չտալ... Եվրոպական պետությունները պարզապես սոված գայլեր են, չեն իմանում ինչպես բաժանեն զոհի մսերը և... մեկ մեկի դեմ են դավում... Թուրքերին մեզ դեմ զինողները հենց դրանք են, և մենք տեղեկություններ ունենք... նայեք, անգլիացիները ինչեր են անում Կովկասում... Չէ, մեզ կարող է հասկանալ միայն Ռուսաստանը...

— Ախր, ո՞ր Ռուսաստանը...

— Կարևոր չի։ Եթե այնտեղ ժամանակավոր խառնաշփոթություն է տիրում, այդ խոմ չի նշանակում... Վաղը, հսկան կվերականգնի, ուժերը կգտնի և վճռական խոսք կասի...

— Սաշա ջան, խնդրում եմ, գոնե այս գիշեր քաղաքականությունից չխոսենք... էսօր իմ տոնն է... ուզում եմ, որ հյուրերը լավ քեֆ անեն, ջան ասեն և ջան լսեն...

— Սերյոժան իրավունք ունի. թողնենք ցավոտ հարցերը...

— Սելյոդկան քիչ աղի է... Աշխարհում ամեն բան գիտություն է, արվեստ... Ես ձեզ մի գաղտնիք ասեմ. ո՞վ է իմանում, մի օր պետք կգա... Սելյոդկան պետք է լվանալ եռացրած ջրով, փշերը հանել և մի ամբողջ օր թողնել կաթի մեջ... Էն ժամանակ, ուրիշ բան դուրս կգա... բերանումդ հալչում է... Դե, խմենք։ Ձուկը, ինչպես ասում են, սիրում է լող տալ օղու մեջ...

— Ռեելի կիլկիներն էլ շատ լավ էին...

— Ասոբի[1] բան էր... Բայց ձկների թագավորը շամայկան է, իսկական, ոչ Դոնի շամայկան...

— Մանավանդ թարմ շամայկան խորոված...

— Իհարկե, ճաշակի հարց է։ Ես սիրում եմ ծխած, կտրում ես՝

---

[1] Ասոբի — առանձնահատուկ (ռուսերեն)։

յուղը թափվում է... Չէ, չէ, պաժալստա, էլ չեմ կարող... երեքի տեղը չորս խմեցի... Ածեք մեր նավապետի համար...

— ...Խնդրում ենք նստեք, մի բան ուտենք... Առաքել Իվանիչ, համեցեք, ահա այս աթոռի վրա... Սաշա, դու անցիր դիմացի կողմը և խնդրում եմ զբաղվիր օրիորդներով... Դուք, կապիտան, նստեք մեր սիրուն, մեր վարդի նման վառված օրիորդի մոտ, որի հետ, խնդրում եմ, Պուշկինի և Ռուսաստանի մասին կռիվ չանեք, այլ, ինչպես փորձառու կավալեր ուտացրեք, խմացրեք... Ախր, աշխարհ է. էսօր կա, վաղը չկա... Վայելենք...

— Սերյոժա, դու էս կողմը արի տիկնոջ մոտը...

— Դուք նստեք... իմ մասին մի՛ մտածեք...

— Ուզում ենք, ուզում ենք...

Լավ էր։

Հերյանը վաղուց էր այդպիսի ջերմ ընկերության մտերմությունը չէր վայելել։ Օղին էլ լավ էր, աղած ձուկն էլ լավ էր։ Ամեն ինչ լավ էր։

Միայն թե դա կարող է տևել մինչև լուսաբաց։ Վաղը շատ գործ կար։ Նու, թող այս լինի բացառություն։ Ուղղակի այստեղից կգնա գործի, ինչպես հին ժամանակները, երբ մինչև լուսաբացը քեֆ անելը սովորական բան էր։

— Խնդրում եմ, շշերը մի մոռանաք... բողոքում են...

— Ո՞վ է բողոքում...

— Շշերը, շշերը...

Հանկարծ Հերյանը հիշեց, որ պետք էր ծառայեր օրիորդին։

— Ներեցեք, օրիորդ, ի՞նչ եք հրամայում... կարմի՞ր, թե՞ ճերմակ...

— Ճերմակ...

— Լավ եք ընտրում, ես էլ ճերմակ եմ խմում... Հայաստանի ճերմակ գինին ամենալավ գինին է... Գիտեք չէ՞, ինչպես են պատրաստում...

— Խաղողից...

— Այո, իբրև հիմք վերցնում են խաղողը, հետո նրա հետ խառնում են թել-թել հավաքած Հայաստանի արևի ճառագայթներից, ժայռերից պոկած մի քիչ գույն և հողերի սրտից առած բավականին մեծ քանակությամբ ջերմություն... Այդ ամենը խառնում են, կարասներում եփ տալիս... երկու տարի պահում... որպեսզի տարվա չորս եղանակ-

ները նրանում բաղադրվեն... և գարնան կրակը շրթների կպչելիս բոց լինի և սեր... լցնեմ...

— Լցրեք... Բանաստեղծ եք...

— Ե՞ս... չարքաշ մարդ եմ, ճանապարհից շեղված մի նավաստի...

Շիշը երկարացրեց և բաժակը լցրեց։ Լցնելիս դեմքը մոտեցավ օրիորդի կրծքին։ Թեթև մի բուրում տվեց գլխին։

Շիշը վար դրեց և մնաց անշարժ։

Կնոջ բույր...

Դաշենկան էլ այդ անուշահոտությունից գործ էր ածում։ Դաշենկան և ուրիշ կանայք, որոնց մասին լավ չէր հիշում, բայց որոնք ներկա էին իր մարմնի ծալքերի մեջ, իբրև համ և բույր։

Տաք և անուշ մի հոսանք անցավ նրա սրտի վրայից։ Մնաց սառած։ Վախեցավ նայել օրիորդի կողմը։

Կնոջ բույր...

...Դաշենկա, ես քեզ համար կբերեմ թռչուններով զարդարված արևելյան մետաքսներ և իսպանական շքեղ մի շալ՝ տոթ և վառ վարդերով ծաղկած...

Գինու բաժակը վերցրեց, մի կում խմեց, մի կում էլ խմեց։ Գինին քիչ պահեց բերնի մեջ, հաճույքով համտեսեց, գրեթե կերավ։

Լցվեց ջերմ սարսուռով։

Դաշենկայի իսպանական շալը լայն բացվեց, փոխվեց Սեվիլյան պարտեզի։ Արծաթե լուսինը ծարավ շրթունքները երկարած խմում էր մետաղե շողերով տերևների տենդը և փարթամ ճյուղերի տակ թառած գիշերվա անհանգիստ կրակը։ Մի կիթառ ողբում էր։ Դաշենկան մերկ այդ լուսնի նման հասած ցորեն էր և ոսկի...

Իսկ վաղը՝ եզներ, շինականներ, խուժան, թրիք...

Բաժակը դատարկեց մինչև տակը։

— Ստեփան Մարկոսովիչ, Ստեփան Մարկոսովիչ... Պահանջում ենք, պահանջում ենք... Կեցցե՛ մեր թամադան...

Անակնկալի եկած նայեց և ինքն էլ սկսեց աղաղակել։

— Ուզում ենք, ուզում ենք, Ստեփան Մարկոսովիչ...

Ո՞վ էր այդ Ստեփան Մարկոսովիչը, զաղափար չուներ։ Սեղանի գլխին նստել էր շատ հաստ, ահագին փորը տնկած, առատ և կարմիր երեսով, կախված վզով, չինացու աչքերով և նեղ ճակատով մի մարդ։ Լեցուն, փոքրիկ ձեռքերը վեր բարձրացրած նա բողոքում էր և ինչ-որ բաներ ասում, որ Հերյանը չէր լսում։

Ոչինչ չէր լսում, ոչինչ չէր հասկանում։

— Ստեփան Մարկոսովիչը, Ստեփան Մարկոսովիչը,— շարունակեց գոռալ նա, այս անգամ ավելի ուժեղ ձայնով։

Ամենքը զարմանքով նայեցին նրա կողմը։

— Թամադան արդեն ընտրվել է,— ասաց օրիորդը։

Սիծաղեց։

Հերյանը նկատեց սեղանակիցների զարմացած նայվածքները և կարմրեց։ Ետ ընկավ աթոռի մեջքի վրա, ոտքը ոտքի վրա դրեց և կամաց երեր եկավ։ Հանկարծ այրված էլեկտրական լամպերի նման տրխրությունը մի կտոր խավար դրեց նրա սրտի վրա։ Սխախոտ վառեց և ծուխը հառաչանքի նման ներս քաշեց։

— Պահանջում եմ բաժակները լցնել,— ասաց Թամադան։

Շիշը վերցրեց։ Բայց օրիորդի բաժակը դեռ լեցուն էր։ Լցրեց իր բաժակը և խմեց։ Նորից լցրեց։ Գլուխը շրջեց օրիորդի կողմը, որպեսզի մի բան ասի, նայեց և ոչինչ չկարողացավ ասել։

Օրիորդը հոնքերը վեր բարձրացրեց։

— Ուզում էիք բա՞ն ասել...

— Իսկի չեք խմում...

— Լավ. մի կում խմեմ...

Ժպտաց։

Ժպիտը գեղեցիկ չէր։ Շրթները տձևացան, աչքերը փոքրացան։ Գեղեցիկ էր, երբ լուրջ էր։ Լայն ճակատ ուներ, ոլոր դեմք և խելացի ու կայծկլտուն աչքեր։ Կարճ կտրված մազերը սազում էին նրան, երբ, մանավանդ, գլխի կտրուկ շարժումով դրանք ետ էր գցում։ Հմայիչ էր, երբ լսում էր։ Աչքերը մտածում էին, ճակատը քիչ վայր էր իջնում, շրթները ներդաշնականում էին։ Այդ վայրկյաններին, նա միայն կին չէր, այլ նաև ոգի, մտածում, կենտրոնացած ուշադրություն։

Այնուամենայնիվ, նա կին էր։ Կանացիություն։ Կրծքերը, ուսերը, գիստերի թեթև շարժումը, սրունքների հմայքը, և ընդհանուր այն խնամվածությունը, որ նուրբ ճաշակ է վկայում և փափուկ զգայնություն։ Կին էր մանավանդ, երբ խոսում էր ռուսերեն. ձայնը թրթռում էր, տեղ-տեղ երգում։

— Եթե դուք մի կում խմեք, ես կխմեմ ամբողջ բաժակը...

— Դե, դուք տղամարդ եք և ծովի մարդ... ես ձեզ չեմ կարող հասնել...

— Նայած... հասնելը գինու հարց չի...

— Շատ խոր էր. չհասկացա...

— Եվ շատ լավ արիք, որ չհասկացաք։ Խոսքերը ստեղծված են մտքերը թաքցնելու համար... ով միայն խոսք է հասկանում՝ ոչինչ չի հասկանում... Խմենք։

— Ահ, կապիտան, հիմա էլ փիլիսոփա եք դարձել...

— Ե՞ս, փիլիսոփա՞... Արդեն ասացի. ես շարքաշ մարդ եմ, ճանապարհից շեղված մի նավաստի։

Թամադան ճառում էր։ Ուրիշներ էլ ոտքի էին կանգնում և ճառում։ Թամադան ստիպում էր տանտիկնոջը՝ հրապարակավ համբուրել ամուսնուն։ Համբուրում էր. ծափահարում էին։

...Ինքը, ի՞նչ գործ ուներ այստեղ...

— Ե՞ս, փիլիսոփա՞... Ահ, թողեք որ ծիծաղեմ... Գործ, շարժում, իրականություն, դեպքեր, անակնկալներ, արկածներ... Մի կտոր խորոված ես... Չէ՞... Ուրեմն, սպասում եք ճուտով փլավին։ Դե, մի քիչ էլ պատմեք Պետերբուրգի մասին...

...Սկզբի վայրկյաններում ամեն ինչ նոր էր, տարբեր։ Մեծ սեղանի մաքուր սփոցը, արծաթեղենները, լույսերը, ճաշերը... Հիմա տեսնում է ծամող բերաններ, հաստ, յուղոտված շրթունքներ, կարմրած երեսներ։ Առաքել Իվանիչը և նրա Տանձիբարովը, կաթում պահած սելոդկան, «լոմբրնի» սեղանը...

Բոլոր այդ դեմքերը ծխած շամայկայի էին նմանում։ Ոսկեզօծված մարմիններ և մեռած աչքեր։ Եվ հիմար այդ օձիքը, որ սեղմում էր նրա կոկորդը, և վաղուց չհագած այդ կոշիկները, որ սեղմում էին նրա ոտքերը և, առհասարակ, ամբողջ այս բազմությունը, որ սեղմում էր նրա սիրտը և կաշկանդում նրա ազատությունը։

— Հասկանում եմ, ձեզ հետաքրքրողը կուրսերն էին, դասախոսությունները, գիտությունը...

...Ինչո՞ւ օրիորդի եղբայրը աչքերը տնկել էր Հերյանի վրա և լրտեսում նրա ամեն մի շարժումը...

— Խնդրում եմ բաժակները լցնել... այդպես չի կարելի... Եվ ցավով պետք է ասեմ, որ մեր նավապետը, ուրիշներին օրինակ ծառայելու փոխարեն գործադուլ է հռչակել...

— Շտրաֆ, շտրաֆ...

— Ժողովուրդը պահանջում է, ուրեմն, կապիտանը պետք է շտրաֆը խմի...

Հերյանը խմեց։ Բաժակը լցրեց և նորից խմեց։ Նորից լցրեց, ոտքի կանգնեց, նայվածքը պտույտ ածեց չորս կողմը, խմեց և հոհոաց։

— Մենք, ծովի մարդիկս,— ասաց նա,— այդպիսի ճստի-պստի բաժակները անվերջ կարող ենք պարպել...

— Խնդրում ենք նրան տալ մի դազան,— բացականչեց բեղերը և հոնքերը վեր թռած փոքրիկ մի անձնավորություն։

— Ղազանում, պարոն, ձեզի նման լոբիներ են եփում,— մռմռաց Հերյանը և անմիջապես նստեց։

Անհարմար լռություն տիրեց։ Ամենքը նայեցին թամադայի երեսին։

— Այս աննշան միջադեպը չեղյալ եմ համարում... Պառլամենտական երկրներում առհասարակ սովորություն է...

Հերյանը չէր լսում, թե ինչ են ասում։

Փոքրիկ անձնավորությունը ոխակալ աչքերով շարունակում էր նայել նրան...

— Երևի ինժեներ է կամ պառլամենտի անդամ,— մտածեց Հերյանը։

...Տեր աստված, ինչքան գեղեցիկ են Կոստա Բրավայի ափերը, երբ ամառը, լուսաբացի դեմ մարդ ծովից մոտենում է Բարսելոնային... այդ ժամերին Բարսելոնան ջրի խոտ, ոստրե և սերկևիլ է բուրում...

— Օրիորդ, դուք երբևիցե եղե՞լ եք Բարսելոնայում...

— Ոչ, դժբախտաբար, Բարսելոնայում երբեք չեմ եղել։ Առհասարակ Ռուսաստանից դուրս չեմ եկել... Իսկ դուք երևի ամեն տեղ եղել եք, այնպես չէ՞...

...Արի, դիր գլուխդ սրտիս մոտ, քեզ տանեմ աշխարհի ամենագեղեցիկ վայրերը... Առավոտ, հազիվ լույսը բացված, մենք միասին կկանգնենք նավի կամրջակի վրա և կընդունենք մեզ մոտեցող երկրագնդի շքեղությունները... Այդ վայրկյաններին, քո խելացի աչքերը կլայնանան փայլփլելով և քո ճակատը կլուսավորվի ծաղիկների մեջ թաղված բլուրներից վայր սահող արշալույսի ճառագայթներով։ Մենք կմոտենանք վեր մագլցող Բարսելոնային, որից ջրի խոտ, ոստրե և սերկևիլ է բուրում, և մինչդեռ ծաղկազարդ ռամբլաները կուրվագծվեն հեռուն, քո սարսռուն և երջանիկ թևերը կփաթաթես իմ վզի շուրջը և թուլացած շրթունքներով կորոնես իմ շրթունքները...

— Այո, բավականին ճամփորդել եմ... գործի բերումով... Ինչպե՞ս... Նայած թե ինչ ենք սպասում մեր այցելած վայրերից... Այդ կախում ունի մարդից. կարող եք ամբողջ աշխարհը ման գալ և ոչինչ չտեսնել... Վերջ ի վերջո, աշխարհը մեզ տալիս է այն՝ ինչ մենք տալիս

ենք աշխարհին... Չե՞ք հասկանում... Այնքան պարզ է։ Ձեզ մի բան ասեմ. դա փիլիսոփայություն չէ, այլ ճշմարտություն... Նու, դա ջոկ հարց է և այդ մասին կարելի է երկար վիճել, իմանալու համար, թե ուր է վերջանում փիլիսոփայությունը և ուր է սկսվում ճշմարտությունը... Գիտեմ, համաձայն չեք։ Ես միայն այս եմ ասում. մինչ փիլիսոփայությունը տեսություններ է ստեղծում, սիստեմներ է կառուցում, կյանքը հոսում է, փոխվում և բոլորովին տարբեր հարցերի լուծումը պահանջում... Նույնիսկ դրական գիտությունը, նույնիսկ մաթեմատիկան զերծ չեն այդ թերություններից... Հենց Նյուտոնի տեսությունները. անհերքելի օրենքներ են, դպրոցներում ծամված ճշմարտություններ են, և, սակայն, այսօր գտնում են, որ Հերմեսի ինչ-ինչ շարժումները այդ օրենքներով բացատրել չի կարելի...

— Խնդրում եմ, ուշադրություն...

— ...Եթե բնության թեկուզ մի երևույթը բացատրել չես կարող, ուրեմն պետք է նորից փնտրել, նորից այդպես ասած...

— Պաժալստա, ուշադրություն եմ խնդրում...

— Բայց իմ ասելիքը դա չէ։ Մենք խոսում էինք աշխարհի տարբեր վայրերի մասին։

— Սիրելի ժողովուրդ, այստեղ մի թանկագին հյուր ունենք, որ կարելի է ասել, եզակի է շատ բաներով... Նա մեկն է այն իսկական մարդկանցից, որոնց առաջ ոչ ծովն է կարողանում արգելք կանգնել և ոչ լեռ... Դուք, անշուշտ, հասկացաք, իմ խոսքը սիրելի կապիտան Հերյանի մասին է...

Հերյանը գլուխը վեր բարձրացրեց և աչքերը հանդիպեցին քմծիծաղով լցված դազան առաջարկող փոքրիկ անձնավորության աչքերին։ Չար, նախանձոտ, անհրապույր աչքեր։ Նա աջ ու ձախ շրջեց, իր հարևանների ականջին ինչ-որ բաներ ասաց և ամենքը միասին ծիծաղեցին։

— Մենք ամեն օր վկա ենք նրա համառության, նրա չարչարանքներին... Ուղղակի զարմանալի բան է տեսնել, թե ինչպես այդ մարդը, եկել ընկել է այս չոլերը, մեր ժայռերով և լեռներով շրջապատված երկիրը և անպատճառ ուզում է նավարկել... Եղները առաջ գցած, առավոտից մինչև ուշ երեկո, հը հա հը, առանց վհատելու, առանց աննպաստ եղանակներից ազդվելու նպատակը հետապնդում է համառ կերպով...

— Ավելորդ ռոմանտիզմ է,— բացականչեց փոքրիկ անձնավորությունը։

— Ինչքան էլ գովելի լինեն կապիտանի ջանքերը,— ավելացրեց

պարուշիկ Բուդաղյանը ջղայնացած ձայնով,— ես կարծում եմ, որ այդքան եռանդ ավելի լավ կլիներ գործածել թնդանոթներ տանելու վրա, քան թե մի անորոշ սամավար...

Հերյանը գույնը գցեց։

— Խնդրում եմ լռություն,— միջամտեց Թամադան խիստ ձայնով,— էդպես չի կարելի... էդպես չի կարելի...

— Նկատողությունները ներելի են,— գոռաց մազերը շատ կարճ կտրած տղու դեմքով մի աղջիկ, սուր, անբնական շեշտով,— դա դեմոկրատիայի սրբազան իրավունքն է... Ժողովրդի ձենը պիտի լսել ամեն բանից առաջ...

Թամադայի դեմքը բոլորովին կարմրեց, վիզը վայր կախվեց, և աչքերը փայլփլեցին։

— Պահանջում եմ սուս մնալ... կարգապահություն, կարգապահություն...

Մի ահագին գոռում-գոչում բարձրացավ։

— Չէ, ախր, ինչո՞ւ լռենք... դա պարզապես աշխատավոր ժողովրդի շահագործում է, մասսաները խաբելու մի անբարոյական միջոց... Դա մի կոմեդիա է, որ ներկա ռեժիմը հնարել է իր սնանկությունը ծածկելու համար...

Սեղանի հակառակ ծայրում զայրանում էր մի ուրիշ ձայն։

— Տնաշեններ, այստեղ, ձեր քթի տակ, բարձրագույն ուսում ստացած ինժեներներ են նստած... տեխնիչեսկի պատրաստությունով և պրակտիկայով... գոնե կանչեք, հալա նրանցից մի խորհուրդ հարցրեք և հետո գործի ձեռնարկեք... Ախր չի կարելի էդպիսի կուստարնի միջոցներով ամեն բանին մոտենալ... դա ուղղակի ասիականություն է...

Ուրիշները բողոքում էին։

— Սա խայտառակություն է...

— Ամոթ է, այդպես չի կարելի... մարդը հոգի է տալիս...

— Մեծ բան, հոգի է տալիս... ո՞վ հոգի չի տալիս...

— Սաշան լավ ասաց՝ սամավար...

Այդ վայրկյանին, սփոռոցը քաշվեց, փշրվող պնակները զրնգալով վայր թափվեցին և բոլոր ձայները լռեցին։

Հերյանը հանձնվեց փողոցում մոլեգնող քամուն և քայլեց։ Դեռ լավ չէր կարողանում իրեն հաշիվ տալ պատահածի մասին։ Ճակատը այրվում էր, ջղերը անհանգիստ էին։

Կանգնեց և երեսը տվեց քամուն։

Նորից քայլեց սրունքները երերուն, ինչպես սովոր էր քայլել, երբ նավը սաստիկ տատանվում էր։

Մու-մու-մու, ոռնում էր քամին։ Այդ ձայնը մտավ նրա սրտի մեջ և այնտեղ դանդատվեց։ Փաստը այդ էր. սեղանի սփռոցը քաշել էր և ամեն ինչ վայր թափել... Եվ ոչինչ չէր հիշում։ Հիշում էր միայն մռտը նստած օրիորդի սարսափած աչքերը։

Մու-մու-մու։

Երկնքի աստղերը դարձել էին անհուն։ Մութ էր։ Քամի էր։ Աշուն էր։

— Դուք, աղջուն, գիշատիչ, բորենու հոգիներ,— գոռացել էր Հերյանը կատաղության վայրկյանին։ Պարուշիկ Բուդաղյանը ատրճանակը դուրս էր հանել։ Օրիորդը վազել էր և եղբոր ձեռքը բռնել։ Մի կին ուշաթափվել էր։ Եվ մինչ ամենքը գոռում կանչում էին, սազանդարը ներս էր մտել և սկսել նվագել։

Հիմար տեսարան...

Նորից կանգնեց, բազուկները բացեց և քամու հետ գրկախառնվեց։ Քամին գուրգուրալով շոյեց նրա երեսը, կուրծքը, թևերը։ Նա կոկորդը խեղդող կոճակը բաց արեց և օձիքի ծայրերը աղավնու թևերի նման վզի շուրջը խաղացին։

Ահա Երևանի քազքենի դասակարգը։ Կաթում պահած սելոդկաների միջավայրը։ Արյունը գլուխը խփեց և սաստիկ բարկությունը ցնցեց նրա ամբողջ մարմինը։ Սուկինի սինի[1], մոմռաց զայրույթով։ Բոլոր այդ դեմքերը փլավից յուղոտված շրթունքներով, անմիտ աչքերով, լող-լող մսերով...

Մու-մու-մու...

Մեղք, իսկական կռիվ տեղի չունեցավ։ Այն լավ կռիվներից մեկը, որոնք պատահում են նավամատույցներում անգլիացի կամ ֆրանսիացի նավաստիների... ոչ թե մեղրամոմե շինված Տանձիբարովների հետ...

...Գեղեցիկ էին օրիորդի աչքերը։ Խոր, թավշյա, խելացի... Եվ ասել թե... ուզում էր նրա հետ գնալ Բարսելոնա... Սատանան տանի, ուզում էր գնալ Բարսելոնա...

Իսկ դուրս եկավ խայտառակություն և Տանձիբարով... ոչ մի տեղ չգնացին։

Այդ վայրկյանին նկատեց, որ Տանձիբարովի ստվերը քայլում էր իր կողքով։ Մեծ ոտքեր, կարճ, քառակուսի մարմին, երկար բազուկներ և կրծքի վրա կախված հաստ, ոսկե ժամացույցի շղթա։ Երես չուներ,

---

[1] Շան որդիներ։

այլ՝ ոսկե շրջանակներով ակնոցներ, որի գլխին կանգնած էր մի շատ մեծ կարտուզ, մեժեվոյ ինժենների նշաններով։

Եվ Հերյանը զգաց, որ այդպիսի ոտքեր և այդպիսի գլխարկ ունեցողը պետք է լինի նեղմիտ իմաստակության հրեշ, օրինապահություն և գրասենյակային թղթեր լափող բորենի, փորապնդությունից և թվաբանական միջին տեղերից տառապող մկամարդ։

Մի մեծ զայրույթ թափահարեց նրա ամբողջ մարմինը և շրթները գունատվեցին։

— Ես քեզ ատում եմ,— գոռաց նա ամբողջ ուժով,— ես քեզ ատում եմ, Տանձիբարով...

Ստվերը անհետացավ։

Ա՛յ քեզ բան...

Ա՛յ քեզ բան։ Բաբկեն Միրանյանի պատուհանները լուսավորված էին։ Կանգնեց։ Ականջ դրեց։ Չէ, քեֆ չկար։ Զայն չէր լսվում։ Վարագույրները արգելում էին ներսը տեսնել։ Նայեց ժամացույցին. առավոտվա ժամը երեքի մոտերն էր։ Այդ ժամին նրանք քնած են լինում։ Ուրեմն, ի՞նչ էր պատճառը, որ նրանց լույսը վառված էր։ Չլինի՞, որ մեկն ու մեկը հիվանդ է. որ մի բան է պատահել...

Անորոշության մատնված սպասեց։

Մոտի փողոցից անցնող զորքերի ոտնաքայլեր լսվեցին։ Զինվորները մեկնում են, մտածեց, չլինի՞ որ...

Պատուհանի ապակու վրա կամաց թրխկացրեց։ Ոչ ոք չպատասխանեց։ Սպասեց և նորից թրխկացրեց, այս անգամ ավելի ուժով։ Վարագույրի ետև մի շուք շարժվեց, մոտեցավ, վարագույրը մի կողմ քաշեց, քիթը կպցրեց ապակուն։ Դրսի մթության պատճառով ոչինչ չտեսավ։

— Ո՞վ է...

Միրանյանի ձայնն էր։

— Ես եմ, Հերյանը...

Քիչ հետո փողոցի դուռը բացվեց։

— Լույսեր տեսա, մտածեցի չլինի մի բան է պատահել... ի՞նչ է, մարդ ու կին մեն-մենակ քե՞ֆ եք անում...

— Չէ,— պատասխանեց Միրանյանը, աշխատելով ձայնին անտարբերության շեշտ տալ,— չէ, այնպես նստել էինք... Մտեք ներս։

Երբ տիկին Վարդուհին թախտի վրայից վեր կացավ բարևելու համար, Հերյանը նկատեց, որ նրա աչքերը սաստիկ կարմրած էին, գույնը

սփրթնած էր և ուսերը ուժասպառ վայր էին ընկնում։ Սակայն, զարմանալի էր, որ նա հագնվել էր շքեղ, Բաքվից բերված մութ կապույտ թավշյա այն զգեստը, որը նրան այնքան լավ էր սազում...

— Իմ արև,— բացականչեց Հերյանը,— իմ արև, նմանվում եք գահը նոր կորցրած թագուհու...

Տիկինը շվարած նայեց, ձեռքերը տարավ երեսին և սկսեց հեկեկալ։

— Ի՞նչ է պատահել,— շփոթված հարցրեց Հերյանը։

— Ախր, ոչինչ,— պատասխանեց Միրանյանը մեղավոր ձայնով,— ուղղակի ավելորդ տեղն է մաշվում... Քնել չուզեց և ամբողջ ժամանակ լաց է լինում... Ժամը ութին մեկնում ենք ճակատ...

— Ճակա՞տ... Ի՞նչ է, պատերա՞զմ է...

— Այնպես եք զարմանում, կարծես մինչև հիմա տեղի ունեցող դեպքերը պատերազմ չէին... պատերազմը երբեք չի դադարել... Պարզապես կռիվները շարունակվում են... Այս անգամ դրությունը ավելի լուրջ է երևում... Թուրքերը քայլում են Կարսի վրա։ Ասում են մեր ընդհանուր հրամանատար Նազարբեկյանը շատ մտահոգ է...

Հերյանը նստեց և աչքերը վար կախեց։

Լռեցին։

Միրանյանը գնաց մյուս սենյակը և վերադարձավ մի շիշ կոնյակ ձեռքին։ Բաժակները դրեց սեղանի վրա, լցրեց։

— Ի՞նչ է, քեֆի՞ց եք գալիս...

— Չէ... հյուր էի գնացել,— պատասխանեց Հերյանը։

— Վարյա ջան, դու էլ մի բաժակ խմիր... խնդրում եմ, մի՛ հուզվիր, ժպտա, դուշկա, ժպտա...

Տիկինը արցունքները սրբեց, ժպտաց և բաժակը վերցրեց։

— Այ, էդպես,— ուրախացավ հեծելազորի սպան։— Ախր, կրակի մեջ ապրողը կրակից չի վախենում... Հինգ տարի է հանգիստ չունենք։ Ավստրիական ճակատը, Բաքվի կռիվները, Սարըղամիշը... Չորս վերքեր ունեմ, մարմինս սովորած է... Դե, ողջ լինենք...

Հերյանը խմեց և չուզենալով նրանց մտերմությունը խանգարել, վեր կացավ... Միրանյանը բողոքեց։

— Նստեք մի քիչ զրուցենք,— ասաց նա,— մեկ էլ ո՞վ է իմանում, երբ կհանդիպենք...

Գլուխը շուռ տվեց և նայեց հեռուն։

— Վարյա ջան, ուզում ես... ֆոնոգրաֆը դիր, մի բան նվագիր... մի թեթև բան... ցիգանական։

— Հիմա չէ, հետո...

— Լավ, ոնց ուզում ես... Մինչև հիմա նվագում էինք,— ասաց նա բաժակները լցնելով։— Խմեն ք... Լսում էինք... երաժշտությունը, սիրում եմ ամենից ավել...

— Երաժշտությո՞ւնը,— հարցրեց տիկինը, տխուր և նախանձոտ ձայնով։

— Երաժշտությունը և Վարյաս... Եթե խառն ժամանակներ չլինեին, երևի կգնայի Պետերբուրգի երաժշտանոցը ջութակի դասերը շարունակելու.. Բավականին ընդունակություն էի ցույց տալիս...

Վեր կացավ, նստեց կնոջ մոտ և նրա ձեռքերը առավ ափերի մեջ։

— Տարօրինակ բախտ վիճակվեց մեր սերնդին, հիմար բախտ... Որովհետև Ֆրանսիան և Գերմանիան առկախ հարցեր ունեին՝ էլզասլորեն, տնտեսական գերակշռություն և էլ չգիտեմ ինչ և մեր գլխին կրակ թափվեց... Աշխարհը քանդվեց, կազմալուծվեց, վայրենացավ... Երբ մարդ մտածում է ինչքան ամեն բանից հեռացել ենք, երբ մարդ մտածում է... Այս գիշեր, Վարյայի հետ լսում էինք... Բախի երկու ջութակների կոնցերտը, Բեթհովենի կվինտետները, Բրամսի չորրորդը և ուրիշ բաներ... Ի՜նչ լավ էր, ինչ լավ... Ես, մանավանդ, սիրում եմ Բախին. նրա զսպված կրակը, նրա պայծառ գծերով ճարտարապետված հոգեկանությունը, նրա սառը ջերմությունը, նրա... Ինչպե՞ս բացատրել... նրա լուսավոր կեցվածքը կյանքի առաջ... Ախ, Վարյա ջան, նորից նվագիր երկու ջութակների կոնցերտոն, թող պարոն Հերյանը լսի...

Նա գլուխը դրեց երկու ձեռքերի մեջ և այդպես մնաց մինչև նվագի վերջանալը։ Երբ գլուխը բարձրացրեց (Հերյանը երբեք նրան այդ վիճակում չէր տեսել) նրա աչքերը այրվում էին, դեմքը սփրթնած էր և թափանցիկ։

— Ահա, հիմա դուք առացեք,— բացականչեց նա հուզված ձայնով,— ահա մի կողմից այս պայծառ և խորհրդավոր ջութակների դիալոգը, մահի և սիրո այս բախտավոր խոսակցությունը և մյուս կողմից՝ արյունարբու թուրքը... Բախը և թուրքը... Չէ, բնությունը անողոք է...

Հերյանը, որ սովոր էր Միրանյանին հակաճառելու, այս անգամ էլ չկարողացավ իրեն զսպել։ Մեջքը ետ գցեց բազկաթոռի վրա և ասաց.

— Ճիշտն ասած, եթե վերցնենք մեր ապարանցուն, նա էլ Բախի երաժշտությունից բան չի կարող հասկանալ...

— Հարցը դրանում չէ, հարցը դրանում չէ,— բողոքեց Միրանյանը։— Երևի նույն Գերմանիայում էլ կան շատ գյուղացիներ, որոնք Բախից ոչինչ չեն հասկանում... Ես այդ մասին շատ անգամ մտածել եմ...

Մոտեցավ սեղանին։ Բաժակները նորից լցրեց։ Եվ խմեց։

— Իսկ թուրքը... այստեղ, դեմ դիմաց կանգնած երկու իրարա-

մերժ, հակոտնյա աշխարհներ են... Սոսկալին այն է, կապիտան Հերյան, որ թուրքը հոգեկան անցյալ չունի, նա լցված է գազանային բնազդներով և նախնական ախորժակներով...

— Անկասկած իրավունք ունես,— պատասխանեց Հերյանը տրխրած ձայնով։— Փաստերը համառ են, բայց ժողովուրդը միշտ մնում է ժողովուրդ, ինչ ազգի էլ պատկանի, հանցավորը ղեկավարներն են...

— Ես սպա եմ. պատերազմը պատերազմ է... Կռվել, դա՝ երբեմն պարտադրություն է... Սակայն, անպատիվ բան է մորթել անպաշտպան կանանց և երեխաներին, անպատիվ բան է քանդել քանդելու համար... ղեկավարներն են թե ժողովուրդը, ես այդ չգիտեմ, սակայն այսօր թուրքը անպատիվ զինվորական է։ Քաջ, առկուն, անվախ, բայց անպատիվ։ Նա ավելի մարդասպան է, քան մարտիկ։ Եվ իբրև մարդասպան, նա չի կարողանում տանել այն ամենը, ինչ կապ ունի հոգու և մտքի հետ։ Այսօրվա թուրքը գերազանցապես հակամշակութային է։ Այդ պայմաններում, ի՞նչ առնչություն թուրքերի և Բախի միջև...

Լռեց։ Ման եկավ անկյունից անկյուն։

— Ես այդ բոլորը ասում եմ,— շարունակեց նա, կանգ առնելով Հերյանի առաջ,— որովհետև ուզում եմ ինձ պարզ հաշիվ տալ, թե ինչո՞ւ համար եմ ահա մեկնում և վտանգում իմ երիտասարդ կյանքը... Կարող եմ սպանվել, ուզում եմ իմանալ ինչո՞ւ համար պիտի սպանվեմ։ Պիտի կռվեմ և սպանեմ ուրիշներին. ուզում եմ իմանալ ի՞նչ եմ պաշտպանում և հանուն ինչի՞ պիտի սպանեմ ուրիշներին... Երկիր, ժողովուրդ, անկախություն պիտի ասեք։ Դրանք ընդհանուր խոսքեր են։ Եթե այս երկիրը, այս ժողովուրդը, այս անկախությունը բարձր և ստեղծագործ ոգու մարմնացումը չեն, եթե դրանք պահապանը չեն դարերով պատրաստված և խորապես ներկա մի կոչումի, այն ժամանակ ես հիմար եմ, որ ուզում եմ նահատակվել ոչնչի համար... Ես գնում եմ՝ թող այս տարօրինակ չթվա՝ պաշտպանելու համար բախյան հոգին բարբարոսներից և մշակույթի թշնամիներից...

— Ինչ բաներ ես ասում, Բաբկեն ջան,— ասաց տիկինը՝ զարմացած աչքերը ամուսնու վրա հառելով։

— Չգիտեմ,— ասաց Միրանյանը մի վայրկյան մտածելուց հետո,— չգիտեմ, գուցե ասածներս իսկապես տարօրինակ են, գուցե ծիծաղելի են և միամիտ... Տես, Վարյա ջան, մենք ապրել ենք երկար տարիներ հայությունից դուրս։ Հայ ենք եղել, անշուշտ, բայց ավելի ծնունդով, քան մտքով և հոգիով... Ռուսական կրթություն, ռուսական դաստիարակություն, ռուսական կյանք... Մեր աչքերը սևեռած էին Պետերբուրգի վրա... Տոներին եկեղեցի էինք գնում, ավելի բակը, քան ներսը,

թեթև ազգասիրություն էինք անում Տաճկաստանից եկած գաղթականների համար, փող էինք տալիս, որպեսզի փողոցներում մուրացկանություն չանեն և մեր արժանապատվությունը չվիրավորեն, հայ գրականության մասին մեր հայրերից անորոշ բաներ էինք լսում և Հայաստան բառը այնպես պատմական հեռավոր մի թռչուն էր, անհայտ վայրերում բույն դրած և ցավով և երազով շրջապատված... Հայրս իր ազատ ժամերին սիրում էր թղթատել հայության վերաբերվող զանազան գրքեր. «Եղբայրական օգնություն հայերին», Անիի գունատած լուսանկարների ժողովածու, Եզովի, Պատկանյանի, Ադոնցի գրքերը... Առհասարակ, նկատե՞լ եք, մեր վաճառականները, որոնց պատճառով օտարականները այնքան աննպաստ կարծիք են կազմել մեր անմեղ ժողովրդի մասին, սիրում են՝ իրենց մակերեսային հայրենասիրությունը շոյելու համար, հայության վերաբերյալ գրքեր հավաքել... չեն կարդում սակայն և եթե կարդում են, չեն հասկանում... Բայց էդ չէր իմ ասածը. ուզում եմ ասել, որ երբ մարդ գրքերը բաց էր անում, ուղղակի հուսահատվում էր։ Քանդված եկեղեցիներ, վայր թափված քարեր և զարդաքանդակներ, խորտակված գմբեթներ, անապատներ, և անապատներում՝ մի քանի գյուղացիներ և վարդապետներ... Մի տեսակ ընդհանուր փլուզում, որ մեզ վիրավորում էր և չէր ոգևորում...

— Ճիշտ է,— համաձայնվեց Հերյանը,— ես էլ այդ տպավորությունը շատ անգամ ունեցել եմ...

— Փողոցներում՝ պատռտված, կեղտոտ, աներես գաղթական մուրացկաններ, գրքերում՝ վայր թափված քարեր, թերթերում՝ անվերջանալի սարսափների նկարագրություններ... Մեզ՝ ազատ ապրած, կովի վարժված, հպարտ և գոռոզ ժողովրդիս համար — այդ ամենը վիրավորական էր, նվաստացուցիչ... Մեր սիրտը ողբում էր և մեր միտքը ընկճվում։ Չէինք կարողանում այդ իրականության հետ հաշտվել և չէինք կարողանում այդ իրականությունը հասկանալ։ Եվ ահա մեկ էլ, ամեն ինչ փոխվեց, երբ դեպքերը շանթի արագությամբ խուժեցին մեր վրա, ամբողջ մեր կյանքը տակնուվրա արեցին, արժեքները շրջեցին, մեզ գցեցին փոթորիկների բերանը... Իսկ մտածե՞լ եք, ինչպիսի հեղաշրջում տեղի ունեցավ... Կայուն, հաստատ, վերջնական ձև ստացած մի դարից, հանկարծ արաբական հեքիաթի հերոսի նման թռչող կարպետի վրա ընկանք և սուրացինք մի ուրիշ դար... Երբեք չպիտի մոռանամ էն օրը, Վարյա ջան, հիշում ես, չէ՞... երբ առաջին անգամ մտանք Հայաստան...

Աչքերը փակեց, մի վայրկյան լռեց, ապա շարունակեց.

— Երբեք չտեսած մի նոր երկիր... Հազիվ նայեցիր և կարծես սրտիդ մեջ մի լույս վառվեց... Ամեն ինչ թվաց այնքան մտերիմ, այնքան խաղաղ, այնքան քաշող... Անկարելի է բացատրել... ուղղակի խոսքեր չեմ գտնում... Հորս գրադարանում տեսած լուսանկարները հանկարծ կենդանություն ստացան, պսակվեցին արևով, ապրեցին ուրիշ կյանքով, մտան պայծառություններով և թաքնված իմաստներով լցված մի մթնոլորտ, և ես հասկացա... Ասում եմ հասկացա, բայց պետք էր գործ ածել մի ուրիշ բառ, նու, ասենք զգացի, ապրեցի, վերագտա իմ մեջ այն, ինչ չէի նշմարած... Եղա տարբեր, ուրիշ... Եվ այն, ինչ առաջ թվում էր այնքան հեռու, այնքան բարձր և այնքան անորոշ, միանգամից պարզվեց և այս հողերի, այս լեռների, այս շենքերի հետ լեցուն, ամբողջական կյանք ստացավ... Ահա, էականը հենց դրանում է... Երբ ասում եմ Բախ, թող այդ ձեզ զարմանալի չթվա... ես իմ երաժշտական կրթությունը նրա օրինակով եմ զարգացրել և հոգեկան բարձրությունները նրանով կարող եմ չափել... Էջմիածնում եղե՞լ եք, կապիտան...

— Եղել եմ, ինչպե՞ս չէ...

— Լավ։ Վերցրեք Հռիփսիմեի հոյակապ տաճարը, օրինակի համար, կանգնեցեք և լավ դիտեցեք այն, և կտեսնեք, որ նրա պարզ, հրստակ, ներդաշնակ գծերը, նրա բարդ պայծառությունը, նրա զսպված և տիրապետված թռիչքը, ճիշտ և ճիշտ բախյան կառուցվածք է... Նույն հոգու վերածված մարմինը, նույն կրակ թավալող արյունը, նույն ռիթմը... Երբ Գյոթեն ասում է, որ ճարտարապետությունը սառած երաժշտություն է, օրինակը հենց այստեղ է... Ես էդ զգում եմ խորապես, հոգով և մարմնով, ամբողջ էությամբ և, ահա, ասում եմ՝ էստեղ Հռիփսիմեն է և էնտեղ գազանը. Բախը և գազանը... կռիվը նրանց միջև է...

Միրանյանը այնքան սրտանց էր խոսում, այնքան հուզված, որ ոչ ոք չէր ուզում նրա խոսքը կտրել։ Հերյանը նրան երբեք այդքան լուրջ, այդքան խորացած չէր տեսել։

— Ուրեմն, ասում եմ, կռիվը նրանց միջև է,— շարունակեց նա։— Ինձ համար հարցը դրված է այսպես՝ կամ կհաղթի տասնյակ դարերի զոհաբերություններով պաշտպանված հոգեկան այս հարստությունը, կամ կհաղթի խավարը...

Հերյանը նրան լսում էր զարմանքով։ Ինչ տարօրինակ արարած է մարդը, մտածում էր նա։ Ամիսներով կողք կողքի ապրում ես, բարեկամություն մշակում, միասին ուտում, խմում, խոսում, վիճում, իսկ դուրս է գալիս, որ մարդը, որին կարծում էիր, թե ճանաչում ես, բոլորովին ուրիշ է։ Այդ Միրանյանը ճառում էր Նապոլեոնի մասին, հայելու առաջ ժամերով շոկում էր համազգեստը և էպոլետները, պաժարսկի

կատլետների մասին նուրբ մանրամասնություններ պատմում, սիրում էր ձին և կնոջը և, առհասարակ, շվարած, արհամարհանքով լցված հարուստ երիտասարդի տպավորություն էր թողնում, մինչդեռ... Բախ, Հռիփսիմե...

* * *

Պատուհանների վրա կաթնագույն մառախուղի նման մի լույս թառեց։ Սենյակում ներկա գտնվողների դեմքերը գունաթափվեցին։ Առավոտվա այդ առաջին լույսը, դրսից կանչող ճերմակ թրթռոցի նման կամաց-կամաց ներս խուժեց և ամեն ինչ սկսեց արթնանալ։ Ինչ-որ բան անհետացավ, խորտակվեց մութի հետ, և ծնվեց ուրիշ տարբեր մի իրականություն։

Միրանյանը ճրագը մարեց, բազուկները վեր կարկառեց և հորանջեց։ Վարյան ոտքերը հավաքած, կուչ էր եկել թախտի վրա։ Շքեղ զգեստի և անորոշ լույսի պատճառով նմանվում էր թառամած հսկա ծաղկի։ Նա ծանրացած կոպերը վեր բարձրացրեց, նայեց մշուշոտ նայվածքով և հանկարծ ուշքի գալով տեղից վեր ցատկեց։

— Գնամ փոխվեմ,— ասաց նա։— Բաբիկս ուզեց, որ էս գիշեր անպայման այս զգեստը հագնեմ... Սիրում է... անպայման ուզեց...

— Ես էլ,— ասաց Հերյանը,— գնամ այս օձիքս, այս հիմար կոշիկները փոխեմ... Կվերադառնամ և ողջերթ կմաղթենք...

— Կապիտան ջան, սպասեք, դեռ ժամանակ կա,— խնդրեց Միրանյանը։— Վարյա, բալիկս, դու գնա փոխվիր, իսկ մենք մի բաժակ էլ կխմենք... այդպես չի՞, կապիտան, մի բաժակ էլ կխմենք...

Հերյանը ուզեց պնդել, բայց սպան աչքով արեց նրան, հասկացրեց, որ ուզում է բան ասել։ Երբ տիկինը մեկնեց, նա Հերյանին ցած ձայնով ասաց.

— Գնում եմ... կռվի ժամանակ ամեն բան կարող է պատահի...

— Ի՞նչ կարող է պատահել... Առաջին անգամ խո՞մ չի՞...

— Անշուշտ... Բայց կռիվը կռիվ է... գնդակը խելք չունի... Ճիշտը ասած, այս անգամ տարօրինակ նախազգացումներ ունեմ... Վերջապես կյանք է... մարդ չի իմանում... եթե ինձ բան պատահի, խնդրում եմ, Վարյային մենակ չթողնես... Քույրը Թիֆլիսում է... լավ կանի գնա նրա մոտը... Կասեք իրեն, որ դա իմ կամքն է... թող գնա քրոջ մոտը...

— Կասեմ, վստահ եղեք... Եվ առհասարակ մինչև ձեր վերադարձը կարող եք հանգիստ լինել... Նու, ավելորդ է այդ մասին խոսել իսկ...

— Գալիս է. խմենք...

Երբ տիկինը վերադարձավ, նրանք լցված բաժակները բարձրացրին և Հերյանը, իր ձայնին շինծու ոգևորության շեշտ տալով, բացականչեց.

— ...պաժալստա, այդ շներին մի լավ դաս տվեք... այնպես, ինչպես հարկն է...

— Ես էլ ցանկանում եմ, որ նավը տեղ հասնի... Հաջողություն...

Գլուխները ետ գցեցին և բաժակները պարպեցին։

Մի ժամ հետո Հերյանը վերադարձավ ողջերթ մաղթելու համար Միրանյանը, տաք վերարկուն հագած, բաշլիկը վզին փաթաթած որդեն նստած էր ձիու վրա և պատրաստվում էր մեկնելու։ Նա Հերյանին տեսնելով ուրախացավ, ձիու սանձերը քաշեց, կռացավ և նրա ձեռքը պինդ սեղմեց։

— Նու, հիմա, պաշլի[1]...

— Բաբիկ, Բաբիկ,— կանչեց կինը հետևից վազելով։

Նա կռացավ, կնոջ գլուխը սեղմեց իր ձեռքերի մեջ, համբուրեց և ձին մտրակեց։

— Ըս Բոգոմ[2],— պոռաց Հերյանը։

Ձիու սմբակների ձայները անհետացան։

Փողոցը հանկարծ դատարկվեց։

Տիկինը հեկեկալով ներս մտավ։

8

Այն օրը անակնկալների օր էր...

Միրանյանի մեկնումից հետո, նավի մոտ հասնելիս Հերյանը տղաներից իմացավ, որ Բաթումից եկած մի ռուս իրեն էր փնտրում։

— Մի ռուս մա՞րդ... — ասել էր նա զարմացած։

— Հա, պայուսակը թողեց այնտեղ, նավի վրա և ասաց... Բայց չհասկացանք ինչ ասաց... ռուսերեն էր խոսում...

— Ո՞վ կարող է լինել...

Ծրը պայծառ էր և ցուրտ։

Հերյանը հոգնած էր և քիչ էլ ընկճված։ Գիշերվա անքնությունը, պատահած դեպքը, Միրանյանի մեկնումը ազդել էին նրա ջղերի վրա և տրամադրությունը փոխել։ Իսկ անելիք հազար գործեր կային։

— Գյուղացիները փող են ուզում և շատ գանգատվում են,— ասաց Մարտիրոսը։

— Փո՞ղ են ուզում... երկու օր առաջ տվել եմ...

---

[1] Գնացինք։

[2] Աստուծով։

— Ասում են քիչ է, այսպես շարունակել չեն կարալ... Կարապետ աղան լուր է ուղարկել, որ պահանջեն... հակառակ դեպքում ասում են...

— Լավ։ Գնամ տեսնեմ ինչ կարող եմ անել...

Կարգադրություններ արեց, խորհուրդներ տվեց և ուղղվեց ֆինանսների նախարարություն։ Ջանազան սանդուղներ բարձրացավ։ Ջանազան դռներից ներս մտավ։ Ջանազան մարդիկ տեսավ։ Խոսեց, վիճեց, բողոքեց, բարկացավ, կծու պատասխաններ ստացավ, կծու պատասխաններ տվեց և վերադարձավ ձեռքերը պարապ։ Երեկ գիշերվա անախորժ դեպքի մասին գրասենյակում արդեն տեղյակ էին։

— Հը, նավապետ, գիշերը ի՞նչ է պատահել, ամեն տեղ խոսում են...

Իսկ փող... ոչ իսկ չնչին մի միլիոն։

Հերյանը մտածկոտ, գլուխը վայր գցած քայլում էր։ Հեռվից տեսավ, որ նավի աշխատանքները կանգ էին առել և շինականներն ու խուժանի տղաների բազմությունը բոլորվել էին մի անձնավորության շուրջ, որը խոսում էր ձեռքերը այս ու այն կողմ նետելով։

Բարձր ծիծաղում էին, աղմկում, ուռա կանչում։

Հերյանը արագ մոտեցավ և մնաց ապշած։ Բազմությունը զվարճացնողն էր Ֆեոդոր Պանտելեևիչը։ Հարբած էր երևում։ Թուլացած աչքերը ոլոր էին գալիս, բառերի կեսը ուտում էր, կեսը դուրս թքնում, բազուկները վեր կարկառած թափահարում և խռպոտ ձայնով պոռնում և հայհոյում։ Ողորմելի տեսք ուներ։ Գլխարկը ծակված էր, վերարկուն սևից կանաչի էր փոխվել, վզին օձիք չուներ։ Իսկական թափառաշրջիկի էր նմանվում։

— Գիտե՞ք ում հետ եք,— գոռում էր նա,— նավի իսկական տերն եմ... Ուզեմ՝ նավը կմնա այստեղ, չուզեմ՝ նավը կտանեմ... Այդպես չէ՞, նե տա՞կ լի...

— Տակ-տակ-տակ,— ծիծաղելով համաձայնվում էին շուրջը կանգնողները։

— Ասեմ նաև որ այստեղ Բասեյան է,— բացականչում էր նա ձեռքով ցույց տալով ռուսաց եկեղեցու գմբեթը։— Ահա՝ Բասեյան...

Գլխարկը հանում էր, երեք մատերը միացրած խաչակնքում, մեջքը մինչև գետին ծռած երկրպագում, նորից խաչ հանում, նորից երկրպագում։

— Երբ ցարը,— ասում էր նա հուզված ձայնով,— երբ Նիկոլայ Երկրորդը, բոլոր ռուսների ցարը և բոլոր հայերի ցարը նորից վերադառնա, այն ժամանակ...

— Ցար չկա, ցար չկա,— բողոքում էին շուրջը կեցողները։

Ֆեոդոր Պանտելեևիչը շփոթված կանգ էր առնում, աչքերը պլզած նայում։

— Այո, սպանեցին... այո...

Եվ հանկարծ սկսում էր լաց լինել։

— Ի՞նչ եք հիմար, հիմար կանգնել,— ստենտորյան ձայնով գոռաց Հերյանը, հեռվից այդ ամենը լսելուց հետո։

Բազմությունը ցրվեց, Ֆեոդոր Պանտելեևիչը հենց որ նրան տեսավ, ամբողջ մարմնով դողաց, ձեռքերը վեր կարկառեց, վազեց դեպի նրան, գրկախառնվեց և ուզեց համբուրվել։

— Սիրելի իմ կապիտան, ախ, սիրելի իմ կապիտան...

Հերյանի ձեռքերը սեղմեց, շոյեց։

— Դարագոյ մոյ կապիտան[1]... Ախ, կապիտան, ախ, կապիտան...

— Դուք աշխատանքները շարունակեք, գալիս եմ,— պատվիրեց Հերյանը և ռուսի թևից քաշելով ուղղվեց անկյունի սրճարանը։

Սուրճ ապսպրեց։ Նստեցին։

Խուժան տղաները հետաքրքրված եկել կանգնել էին սրճարանի առաջ։ Հերյանը նրանց հանդիմանեց։

— Թամաշա է, ի՞նչ է... հեռացեք...

Վերջապես մնացին մենակ։

— Ի՞նչ է պատահել, Ֆեոդոր Պանտելեևիչ,— հարցրեց նա լուրջ և հանգիստ ձայնով։— Ինչո՞ւ եք եկել Հայաստան... Եկել եք և իսկույն հարբել...

— Գիտե՞ք ինչ,— պատասխանեց ռուսը,— գնացի մեր քահանայի մոտ... նստած խմում էր... նա իր ցավերը պատմեց, ես իմ ցավերը պատմեցի... Նու... խմեցինք, այնպես, սրտի որդը սպանելու համար... Վատ է, սիրելի կապիտան, շատ վատ է...

Ասաց և խխունջի նման քաշվեց իր մեջ։

Հերյանը ուշադրությամբ զննեց նրան։ Մի քանի ամսվա մեջ մարդը ծերացել էր, ճերմակել, փոքրացել։ Երևում էր, որ կյանքի փոթորիկը նրան վերցրել էր իր ատամների մեջ և խածնելով թափահարել։

— Սա այն մարդկանցից է — մտածեց Հերյանը — որոնք ճակատագրի հարվածների տակ տապալվում են, ստորանում և իրենց ստորությունից հաճույք զգում... Կա մարդ, երբ ընկնում է, իջնում է մինչև անդունդը...

Ֆեոդոր Պանտելեևիչը ձայնը քարշ տալով և սուրճը աղմուկով

---

[1] Իմ թանկագին կապիտան։

խմելով պատմեց... Ամեն ինչ ձեռքից առել էին։ Դուրս էին գցել բնակարանից և գրասենյակից։ Կահկարասիներից մի պարզ աթոռն իսկ չէր կարողացել ազատել։ Բողոքել էր, բղավել, աղմկել։ Նրան բանտարկել էին։ Մի քանի ամիս բանտում պահելուց հետո նրան լավ ծեծել էին և ազատ արձակել։ Փողոցներում թափառել էր կես սոված, պատառոտված, ոջիլների և աղտի մեջ կորած։ Բարի մարդիկ փորձել էին նրան օգնել, փող էին տվել... խմել փչացրել էր։ Եվ կարծես այդ ամենը բավ չէր... լուր էր ստացել, որ զավակը Ռուսաստանում սպանվել է։ Իսկ ի՞նչ էր պատահել կնոջ հետ, ոչ ոք ոչինչ չէր իմանում։

— Ահա այդպես... Ես ամենքին ասում էի, որ Հայաստան նավ եմ ուղարկել... որ Սևանա լճում նավային մեծ ընկերություն է հիմնվում... Ձեզանից նամակ էի սպասում... Ախ, կապիտան, դուք ինձ մոռացաք... Ամենքը ինձ մոռացել են, ամենքը...

Աչքերը լցվեցին։

— Ահավոր ժամանակներ, ահավոր մարդիկ... Եվ գիտեք,— ավելացրեց նա, սարսափած աչքերը Հերյանի վրա հառելով,— գալիս են...

— Ովքե՞ր են գալիս...

— Նրանք, բոլշևիկները...

— Նու, այդ... Ֆեոդոր Պանտելեևիչ, այդ...

Հերյանը ձեռքը շարժեց անորոշի մեջ։

— Ես ձեզ ասում եմ՝ գալիս են,— կրկնեց ռուսը համոզված շեշտով։— Ես հաստատ գիտեմ, գալիս են...

Նայեցին իրար լայնացած աչքերով։

— Լավ, էդ թողնենք,— ասաց Հերյանը քիչ լռելուց հետո,— հիմա ասացեք, ի՞նչ եք ուզում անել...

Ռուսը ուսերը վեր բարձրացրեց։

— Ոչինչ,— պատասխանեց նա,— ոչինչ... եկել եմ... Ո՞ւր գնամ... եկել եմ... Հայաստան գալու համար կես ճանապարհը քայլել եմ ոտքով... ապրանքատար վագոնների մեջ ծածկվել եմ, վռնդվել եմ, նորից մտել... սոված, ծարավ... Ես ժամանակին ձեզ օգնեցի, կապիտան, հիմա էլ դուք կօգնեք ինձ... Այնպես չէ՞...

Նա վեհերոտ աչքերը հառեց Հերյանի վրա։

— Իհարկե,— համաձայնվեց Հերյանը,— ձեզ համար կանեմ, ինչ կարող եմ...

Ֆեոդոր Պանտելեևիչը հուզվեց և պինդ սեղմեց նրա ձեռքը։

— Ասեմ որ,— ավելացրեց Հերյանը,— այստեղ կյանքը շատ ուրախ չի... Տեսնում եք ծով թշվառություն, անասելի դժվարություններ... Պա-

տերազմը ամեն ինչ քանդել է... Եթե ձեզ պատմեմ ինչեր են պատահել ինձ հետ, չեք հավատա...

— Նի-չեվո[1],— բացականչեց այլևս հանգստացած ռուսը,— նիչեվո... Ամեն ինչ միասին կտանենք, կապիտան, ամեն ինչ միասին... Կարևորը մենակ չլինելն է...

— Սենյակի հարցը,— շարունակեց Հերյանը,— անիծյալ հարց է. շատ դժվար է... Չե՞ք կարող ձեր քահանայի տանը գիշերել...

— Գնամ հարցնեմ...

Այդ օրը Աստաֆյան փողոցի ազգաբնակչության թիվը մեկ մարդով ավելացավ։

Ռուս քահանայի տանը տեղ չկար։ Ֆեոդոր Պանտելեևիչը Մարտինի և Ռիմ շան հետ գիշերեց նավի վրա։ Նրանք մեկ մեկի լեզուն չէին հասկանում, խոսում էին բացականչություններով, հաչոցով և առատ շարժուձևերով։

Նավային ընկերության նախկին կառավարիչը օրվա մեծ մասը քնում էր, իսկ մնացած մասը խմում էր և ճառում։ Երբեմն պարտք էր համարում խառնվել աշխատանքներին, մանավանդ երբ Հերյանը բացակա էր։ Զեռքի հաստ գավազանը վեր էր բարձրացնում, գոռալով դեսուդեն էր վազում, բոլորովին անտեղի կերպով հարձակվում էր եզների վրա, գյուղացիների գլխին բղավում էր, աչքերը ոլորում, փրփրում, ապա, տեսնելով որ իր ասածների վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում՝ բոլորովին կատաղում էր, գետինը թքնում, քթի տակ մռմռալով հեռանում... և սրա նրա կոճակից բռնելով խոսում Հերյանի դեմ։

Սրանք նրանք՝ նախանձոտ և խորամանկ հայեր նրան տանում էին մոտակա սրճարանը, օղի խմեցնում և բերնից խոսք քաշում։ Ֆեոդոր Պանտելեևիչը մի բաժակ ավելի խմելու համար բոլորովին հնարովի բաներ էր պատմում և, այնքան տարվում էր իր պատմածով, որ ի վերջո ինքն էլ սկսում էր հավատալ...

Ձայնը խորանում էր և շեշտը անկեղծանում։

— Կապիտան Հերյա՞նը... Վատ տղա չի, բայց իբրև կապիտան... Նավը ես տվեցի նրան, խղճացի և առհասարակ այդ մասին լավ է չխոսել, որովհետև եթե ուզեմ պատմել...

Ոլորած ձեռքը տանում էր սրա նրա ականջին և փսփսում։

— Մեկ հատ էլ ածիր, մեկ հատ էլ ածիր...

---

[1] Ոչինչ։

Ուրախ էին, որ Հերյանի դեմ է խոսում։ Ինչո՞ւ։ Իրենք էլ չգիտեին ինչու։

Հայը նախանձոտ է։

— Ռուսը ասում է... Ռուսը, որ նրան տարիներով ճանաչել է, պատմում է, որ... Տե՛ս, իմացա՞ր, ռուսը երեկ փա՛տերը ձեռքին... ցույց էր տալիս, որ այդ Հերյանը...

Եվ քաղաքի բոլոր անկյուններում, նրա ասածները ավելի չափազանցված կրկնվում էին։ Երբեմն այդ բամբասանքները Հերյանի ականջին էին հասնում։ Նա ձեռքը դնում էր նախկին կառավարչի ուսին, քիչ սեղմում, և հանգիստ ու խիստ ձայնով նրան հանդիմանում։ Կառավարիչը սաստիկ հուզվում էր, բողոքում, երդվում, արտասվում։ Նա այդ բաները չէր ասել, հայերը զրպարտում էին, աստված վկա, հայերը զրպարտում էին...

Մի քանի օր թրջված հավ էր դառնում։ Կուչ եկած, խոնարհ, հավատարիմ՝ ավելի շուք, քան մարդ։

Հետո, ամեն ինչ մոռանում էր և օղու ծարավը նրան դեսուդեն էր գցում, ուրիշ մարդիկ ճարում և երևակայական պատմություններ պատմում։

Հաճախ գիշերը նրան հալածում էր։

...Հրացանների անդադրում տրաքոցները, մայթերի վրա փռված գաղթականների խուլ հառաչանքները, ոռնող շները...

Նստում էր անկողնի վրա և սասանած նայում։

Մարտինը՝ ձեռքերը գլխի տակ դրած, ոտքերը լայն բացած պինդ քնած էր։ Ռիմը աչքերը կես բաց էր անում և պոչը շարժում։ Եվ շարժվում էր փողոցի մութը, լցվում էր ստվերներով և ուրվականներով։ Ֆեոդոր Պանտելեևիչը գույնը գցած, շրթները կապտած, վերարկուն ուսերին էր քաշում, գավազանը վերցնում և նավից դուրս գնում։

Աստաֆյան փողոցը վերից վար չափչփում էր՝ ինքն իրեն հետ բարձրաձայն խոսելով։

Ո՞վ է իմանում՝ ի՞նչ էր անցնում նրա գլխով։

Նա տիրացուի բաս ձայնով հին սլավոներեն նախադասություններ էր արտասանում, և՝ Հո-օսպոդի-պամիլույ, Հո-օսպոդի պամիլույ[1] ասելով ձեռքի գավազանով աջ ու ձախ էր հարվածում, իրեն հալածող ոգիները վախեցնելու համար։

Փողոցում պառկած գաղթականները հենց որ այդ օտար ձայնը լսում էին՝ սկսում էին անհանգիստ շարժվել։

---

[1] Տեր ողորմյա, տեր ողորմյա։

Մայրերը իրենց տեղից վեր էին թռնում և վախեցած նայում։ Երեխաները արթնանում էին և սկսում լալ։ Ֆեոդոր Պանտելեևիչը, այդ լացը լսելով, ավելի էր ոգևորվում և, իր բասը ավելի խորացնելով, ձայնը բարձրացնում էր և դեսուդեն գնալով գավազանը շարժում էր օդում, երկնքի դեմ կռիվ մղում։

Նրա ոլորվող աչքերը և փրփրած բերանը տեսնելով՝ գաղթական կանայք սկսում էին ճչալ։ Տղամարդիկ և երեխաները վեր էին ցատկում ու խմբով վազում դեպի ռուսը։

Նա փախչում էր։

Փողոցը լցվում էր աղաղակներով։ Ոստիկանները սուլում էին։ Ամեն կողմից հրացանաձգության կրկնապատկված ձայներ էին լսվում։

Բավական ժամանակ հետապնդելուց հետո, երբ, վերջապես, նրան բռնում էին և պատրաստվում ծեծել, ոստիկանները միջամտում էին, նրան ամբոխի ձեռքից ազատում և, թևերից բռնած, տանում նավ։

— Հարբած է, չե՞ք տեսնում...

Նա հաճախ չէր թողնում, որ Մարտինը քնի։

Անկողնի վրա նստում էր, մեկ մատով ճակատի վրա ընկած մազերը անդադար ոլորում և արագ-արագ խոսում։ Մարտինը նրան չէր հասկանում, իսկ ռուսը ուզում էր, որ անպայման նա լսի։

— Պանիմա՞ես,— հարցնում էր։

— Պանիմաես[1],— պատասխանում էր Մարտինը կես քնոտ ձայնով։

Խոսում էր, խոսում։ Անշարժ աչքերը վեր տնկած, միշտ նույն, միապաղաղ ձայնով։ Մարտինը մտքի մեջ հայհոյում էր նրան, գլուխը հակառակ կողմ դարձնում և քնում։ Հազիվ քնում էր, մյուսը սկսում էր նրա թևից քաշել։

— Պանիմա՞ես...

— Հա էլի, հա, պանիմաես,— նեղացած ձայնով մռմռում էր Մարտինը, կուչ գալիս և թեթև խռմփում։

Ռիմը, որ եկվորի հոտը շատ չէր սիրում, այլևս սովորել էր նրա տարօրինակությունները։ Ոլոր եկած, հանգիստ քնում էր։

Լուսաբացին, երբ արթնանում էին, ռուսը դեռ շարունակում էր խոսել։ Մարտինը նայում էր նրա երեսին և սկսում էր հռհռալ։ Ռուսը բարկանում էր և բարկությունը շեշտելու համար սկսում էր հագնվել։

Արագ-արագ հագնվում էր, ձեռքը բերանը տանում, թրջում և քսում զգեստին։ Գրպանից մի սանրի կտոր էր հանում, մազերը սանրում։

---

[1] Հասկանում եմ։

Պատառոտած կոշիկները մաքրում էր տաբատի ետևը քսելով։ Գլխարկը հագնում էր։

Երբ բոլորովին հագնված պատրաստ էր, նորից պառկում և քնում էր։

Դրսում եզները լծում էին։

— Տո, Բաղդասար, գերանը լավ դիր...

— Ադա, Առաքել, աջի եզներին քիչ առաջ քշիր...

— Քշե՞նք...

— Քշեք...

— Հոո, հոո-ո...

Փողոցը լցվում էր աղմուկով և... նավը և Ֆեոդոր Պանտելեևիչը մի քայլ վեր էին բարձրանում։

9

Նավը հասել էր Քանաքեռ։

...Ինչպիսի՜ օրեր, ինչպիսի՜ նոյեմբեր...

Ցեխ, քամի, անձրև, սով։

Ցեխը՝ լպրծուն, տեղ-տեղ սոսինձի նման թանձր, թանաքի նման սև, թակարդի նման դավաճան, խոր, ժայթքուն, կլանիչ։ Եզների կճղակները մղկտում էին, մարդկանց կոշիկները լաց լինում։

Քամին կատաղած թափահարում էր օրացույցի այդ էջը։ Անձրևը նավի երկաթների վրա ծանր մատներով թմբուկ էր զարնում։ Հերյանը և նրա մարդիկ՝ տոպրակի անկյունը իրենց գլխին անցկացրած, նմանվում էին խենթացած վեղարավոր վարդապետների։ Վազում էին, աջ ու ձախ նետվում, գոռում, կանչում, ապա, չդիմանալով վայր թափվող հեղեղներին, պատսպարվում էին պատերի տակ և թրջված ու դողալով սպասում։

Հազիվ անձրևը մեղմանում էր, նրանք վերսկսում էին աշխատանքը։ Պետք էր շուտ անել։ Շուտ, շուտ, շուտ։ Ամեն մի բոպեն թանկ էր, ամեն մի բոպեն...

...Ի՜նչ օրեր էին, ի՜նչ օրեր...

— Ադա Մարտին, ադա Մարկոս, ադա Հովնան, ադա, քաշեք է, քաշեք...

Իսկ տների ցած դռներից գունատված և մտածկոտ մարդիկ էին դուրս գալիս, այլայլած աչքերով դեսուդեն նայում, քիթը աղմուկով վեր

քաշում, և փոքրիկ տոպրակը մեկ ձեռքում, զորակոչի թուղթը մյուս ձեռքում՝ շփոթված քայլերով շտապում էին զորանոց։

Քաղաքի օրաթերթերը՝ նպարավաճառի դեղին թղթի վրա տպված, լցված էին հայրենասիրական կոչերով և հուսահատական լուրերով։ Մայրաքաղաքը վզզում էր թագուհին կորցրած փեթակի նման։

...Դեպի զենք, հայրենակիցներ, դեպի զենք...

Մինչ Կարապետ աղան սպառնական նամակ էր գրել և պահանջում էր, որ անմիջապես ետ ուղարկեն եղները։ Հերյանը, Մարտինը, Ֆեոդոր Պանտելեևիչը ատրճանակը ձեռին գիշեր-ցերեկ հսկում էին եղների վրա...

— Ի՞նչ, եղները ե՞տ տանել... Հեռացիր, կկրակենք, քո արև, կկրակենք...

Պատերի վրա ջրով խառնված ալյուրով՝ հրամաններ և կոչեր էին կպցրել։ Քաղաքացիները կարդում էին և առանց մեկնաբանելու անցնում էին աչքերը իրենց կոշիկների ծայրերին հառած։

Պատահել էր նաև մի սոսկալի դեպք՝ գաղթականները եղներից մեկը գողացել էին, քաղաքից դուրս տարել մորթել և կերել։

Պառլամենտում ճառեր էին արտասանում։ Ռիմը բոլորովին ցնխոտած, պոչը կպցրել էր հետույքին և թշվառացել։ Ֆեոդոր Պանտելեևիչին այլևս ոչ ոք օղի չէր առաջարկում։ Դեմքի աջ մասը՝ ծնոտից մինչև աչք ջղագրգռված շարժ էր գալիս, և նա ոչինչ բանի համար լաց էր լինում։

Ամեն կողմից չարուխ հագած զորքեր էին իջնում և երգելով մեկնում դեպի անհայտ ուղղություններ։ Նավի մոտից անցնելիս ծիծաղում էին։

— Ադա Մարտին, ադա Մարկոս...

...Դեպի զենք, հայրենակիցներ, դեպի զենք...

Հայաստանը մնացել էր մեն-մենակ։ Ինքը, իր լեռները, իր ժայռերը, իր կտոր երկինքը։ Ինքը և իր անապատը։

— Ախր, ի՞նչ են ուզում մեզանից...

Պատին կպցրած կոչերը և հայտարարությունները անձրևից հետո վայր էին թափվում։ Թուղթը ալյուր էր հոտում։ Գաղթականները նետվում էին նրանց վրա, բերանը լցնում, ծամում։

Երկու օրը մի անգամ մի խումբ գյուղացիների հետ Կարապետ աղան քաղաք էր գալիս և եղները ետ պահանջում։ Նա մի չախմախի թվանք բռնած, երեսը կարմրած, աչքերը դուրս ընկած, ձայնը գցած բղավում էր և ուզում, կարծես պայթելու էր...

— Եղներից մեկին մորթել կերել եք...

— Իբր թե սուրբ եք տեսել և խեղճ շինականներին խաբել...

— Սրան տես... իրեն Սև ծովի ադմիրալ է կարծում...

Հերյանը մնում էր անդրդվելի։

— Եղները ետ կտանք, երբ Քանաքեռ հասնենք... հրաման ունեմ... Այ մարդիկ, չե՞ք հասկանում, հայ քրիստոնյաներ, չե՞ք հասկանում... Եղները ետ կտամ, երբ Քանաքեռ հասնենք...

Փողոցը զնգում էր վայր թափվող պնակների նման։

Նրանք աշխատում էին օրը քսան ժամ։

Քանաքեռի զառիվերի վրա քիչ էր մնացել, որ նավը ետ սահեր։ Գերսաններին ետև կուտակված մեծ քարերը փրկեցին։ Այլևս նավը քաշում էին և քարերն էլ հետևից։ Նավը ուզում էր ետ փախչել։

Ելի ցեխ, քամի, անձրև։

Ամենքն էլ աղբը ընկած միջատների էին նմանվում։ Հերյանի դեմքը ծածկվել էր ցեխով, կարծես սևամորթ լիներ։ Աչքերի ճերմակները ոլորվում էին, շրթները դուրս թափվում։

— Կկրակենք, քո արև, կկրակենք...

Հայաստանի բոլոր անկյուններում մի արտակարգ իրարանցում էր տիրում։ Թնդանոթները ոռնում էին, գնդացիրները իրենց ատամները մեկը մյուսին խփում։ Ռումբերը պայթում էին, սարերը հուռա կանչում։

— Ախր, ի՞նչ են ուզում մեզանից, ի՞նչ...

— Ո՞նց թե ինչ են ուզում։ Հարցը շատ պարզ է։ Թուրքերը ուզում են հայեր չլինեն...

...Դեպի զենք, հայրենակիցներ, դեպի զենք...

Իսկ նավը ուզում էր ետ փախչել։

Եղների աչքերը դուրս էին թափվում. թուլացած ոտքերը ծռվում, ոլորվում։

Զառիվերի վրա, ճանապարհը թեքվելիս, պատահեց այնպես, որ նավը քիթը տվեց ժայռին, հետույքը վտանգավոր կերպով վեր հանեց և էլ տեղից չուզեց շարժվել։

Ճանապարհը բոլորովին փակվեց։

— Դա ի՞նչ անկարգություն է... էյ, դուք... Չե՞ք տեսնում, որ հրետանին և գումարտակը չեն կարող անցնել... Չէ, ախր, էդ զահրումարը ի՞նչ է բերել նետել եք էստեղ... Ասում եմ ձեզ, զորքը պիտի անցնի, կորցնելու ժամանակ չունենք...

Ձայնը որոտում էր բարկացած և կտրուկ։

— Պատիվ ունեմ ներկայանալու, պարոն գնդապետ... Հեռավոր ճամփորդությունների նավապետ Հերյան...

— Ի՞նչ է, նավապե՞տ, զավե՞շտ եք խաղում... Ճանապարհը փակել եք, զորքը չի կարողանում անցնել...

— Զավե՞շտ... ինչպե՞ս թե զավեշտ... Ես այստեղ եմ նախարարների խորհրդի հրամանով...

Հրետանու ձիերը՝ գեր, պնդակազմ, փայլփլուն, սմբակները գետին էին խփում և գլուխները թափահարելով խրխնջում։

Գնդապետը այս ու այն կողմ էր նայում անհամբերությամբ։ Զինվորները անշարժ նայում էին իրենց հրամանատարին և սպասում։

— Նու, լավ, հիմա ի՞նչ անենք... զորքը անպատճառ պիտի անցնի...

— Ցավում եմ, պարոն գնդապետ, եզները հալումաշ են եղել, չեն ուզում քաշել...

— Ջտո զա սվոլոչ, չտո զա սվոլոչ[1]... Կապիտան Եզբեկյան, կապիտան Եզբեկյան...

Կապիտանը ձին քշեց և բարևելով կանգ առավ գնդապետի առաջ։

Խոսեցին, մեկ մեկի աչքի մեջ մտահոգված նայեցին և միասին հայհոյեցին։ Մեծ, տաք, եռաստիճան հայհոյանքներ։ Իսկ հրետանու ձիերը՝ գեր, պնդակազմ, փայլփլուն, շարունակում էին խրխնջալ։

— Այ քեզ դրություն. վարը սպասում են պարադի...

Հերյանը անհագ աչքերով նայում էր ձիերին։

— Ուրիշ միջոց չկա,— ասաց կապիտան Եզբեկյանը վերջապես,— պետք է ձիերից մի քանիսը լծել և էդ, զատը քաշել մի կողմ։

Հերյանը տակնուվրա եղավ։

— Ես էլ էդ էի ուզում առաջարկել,— բացականչեց նա հուզված ձայնով։— Հավատացեք, մի բոպեի հարց է...

— ...Ահ, տեր աստված, ահ, տեր աստված...

Հրամաններ հնչեցին։ Զինվորները իջան։ Ձիերը լծեցին։

Քսան ձի։

— Կամաց, պաժալստա, կամաց... Ադա Մարտին, գերանը աջ կողմը... Մարտին, գերանը ձախ կողմը...

Կես ժամ չանցած նավը բարձրացավ վեր։

— Էս երկաթեղենը էստեղ ճանապարհի վրա չի կարելի թողնել,— ասաց գնդապետը։— Պետք է բոլորովին մի կողմ քաշել... Պատերազմական պայմաններում ճանապարհները պետք է միանգամայն աղատ լինեն...

[1] Ի՞նչ խաժամուժ է, ի՞նչ խաժամուժ է։

Քաշեցին մի կողմ։ Գրեցին քաղաքին նայող բարձրության կատարին։

Դղրդալով մեկնեցին։

Իսկ քիչ հետո մի ծիավոր հրաման բերեց՝ «Անմիջապես դադարեցնել նավի վերաբերյալ բոլոր աշխատանքները, Սևան տանող նեղ ճանապարհը զինվորական պահանջների համար բաց պահելու անհրաժեշտության պատճառով»։

Կնիք, թվական, ստորագրություն։

Եվ ահա, նավը եկել կանգնել էր Քանաքեռի մի ժայռի վրա։

Նավը նայում էր քաղաքին և քաղաքը նայում էր նավին։ Քիթը վեր տնկած, կայմը սլացիկ... Նա ցցվել էր բարձրության վրա և սառած սպասում էր։

Եթե դիտենք կենտրոնական փողոցների կողմից, նավը նմանվում էր թևերը ծալած և վիզը երկարած մի թռչունի, որը պատրաստվում է ճախրելով վայր նետվել քաղաքի կտուրների վրա։ Կոնդի բլրան կողմից նավը ներկայանում էր իբրև ճերմակ մի արջ, որը հետնամասը շարժելով առաջանում է անհայտ մի թշնամու վրա հարձակվելու համար։ Վարի շուկայից՝ փայտերի վրա ցցված անթել հեռագրի մի կայանի էր նմանվում։ Ավելի հեռվից, մանավանդ, երբ բլրան ստորոտը ծածկվում էր մառախուղով, նավը հիշեցնում էր երազային այն նավերից մեկը, որոնց մասին խոսված է հեքիաթներում և որոնք նավարկում են ալիքների գագաթների վրա...

Իսկ հորդառատ անձրևների ժամանակ նավը նոյան տապան էր։

Այլևս, քաղաքի որ կողմից էլ գլուխդ վեր բարձրացներիր նավը աչկդում էր քո առաջ, միրճվում աչքերիդ մեջ, տիրում մտքիդ վրա, երևակայությունդ սրելով տարբեր ձևեր ստանում, մեծանում, լայնանում, ուրվականանում։

Քաղաք հասնող մարդիկ, եթե կայարանի կողմից էին գալիս, հենց որ նավը տեսնում էին՝ կանգ էին առնում, աչքերը ճմռում, թարթիչները վեր վար անում և բերանը բաց մնում սառած։ Իսկ Քանաքեռի հետևից եկող մարդիկ շվարում էին, անորոշության մատնվում և ուզում եռ դառնալ. չլինի՞ թե Երևան գնալու փոխարեն գնացել են Սևան։

Գյուղացիները այն անվանում էին «Երկաթե հաղը»։ Նախանձոտ քաղաքացիները՝ «Հերյանի զատը»։ Երեխաները՝ «Հրեշեն նավը»։

Այլևս նավի տեղափոխության գործը շարունակելու ոչ մի հույս չէր մնացել։ Գյուղացիները իրենց եզների հետ միասին մեկնել էին,

Հերյանին և նրա սուրբ Կարապետին հայհոյելով։ Դեպքերը մեկը մյուսին էին հաջորդում շանթի արագությամբ։

Հայաստանի գլխին կրակ էր թափվում։

Ծահմանները ճեղքվել էին։ Թշնամին խորանում էր դեպի երկրի սիրտը։ Ներսում թշվառությունը ջլատում էր ժողովրդին։

Պառլամենտի և կառավարության նիստերը շարունակվում էին գիշեր և ցերեկ։ Ճառեր էին արտասանում, որոշումներ էին կայացնում, որոնց գործադրելը անհնարին էր։

...Դեպի զենք, հայրենակիցներ...

Նավը դարձել էր պարզ բնակության վայր։ Հերյանը, Ֆեոդոր Պանտելեևիչը, Մարտինը և Ռիմը մեկը մյուսի մոտ սեղմված ապրում էին այնտեղ։ Նավից կաղամբի, լվացված շորերի, ծխի և նավթի հոտ էր գալիս։

Անգործության մատնված լինելով, Մարտինը օրերով կորչում էր և վերադառնում գրպանները սև ստեպղինով լցված։ Ռուսի հետ միասին ուտում էին, կապտած շրթներով նստում, դուրաչկի խաղում։

Սկզբի օրերին, Հերյանի հրամանով աշխատում էին նավը մաքուր պահել։ Երկու օրը մի անգամ կամուրջը լվանում էին, երկաթները սրբում, պղնձե մասերը փայլփլեցնում։ Սակայն, որքան օրերը անցնում էին և ցրտերը սաստկանում, այնքան անփութությունը ավելանում էր։ Ոչ ոք չէր ուզում գյուղի աղբյուրից ջուր բերել։ Մարտինը խորհրդավոր կերպով ճարած իր գետնախնձորները մաքրում էր և կճեպները թափում գետին։ Ֆեոդոր Պանտելեևիչը, որ փորձում էր առանց մսի բորշչ եփել, ամանը դնում էր հնացած մի պրիմուսի վրա և պառկում քնում։ Պրիմուսը ծխում էր և ամեն ինչ սևանում։ Անգամ Ռիմը պետքերի համար այլևս դուրս չէր ուզում գնալ և երբ բարկանում էին և նրան դուրս գցում, նա վերադառնում էր բերելով անպետք ոսկորներ, որոնց հետ ժամեր խաղալուց հետո պահում էր դրանք կաբինի անկյունները։ Եվ կարծես այդ չէր բավի, երբեմն էլ Մարտինը և ռուսը իրենց շորերը և գուլպաները լվանում էին և դրսի կամրջակից կախում։

Հերյանը, հուսահատ, այլևս ուժ չուներ բողոքելու։

Սկզբում նա գրեթե ամեն օր իջնում էր քաղաք, հուսալով, որ ընդհանուր դրությունը կբարելավվի։

Պետական գրասենյակներում, գլուխը կորցրած մարդիկ նրան ընդունում էին մոնչյուններով և թշնամական նայվածքներով։ Փողոցներից անցնելիս նրան ոտքից գլուխ չափում էին և ծիծաղում։

— Հը-ը, Ա-ադմիրալ, էդ ձեր զատը ի՞նչ եղավ...

Կամ՝

— Բարեկամ, Քանաքեռի ծովում ձկները ի՞նչ են ասում...

Այդ մարդիկ, որոնց գլխի վրա ահագին վտանգ էր կախվել, և որոնց թշվառությունը ճզմել էր արջի թաթով, պատրաստ էին իրենց կյանքի անհաջողությունը նրան վերագրելու։ Կարծես բոլոր դժվարությունների պատճառը Հերյանն էր։

Սկսել էին նրա մասին շինծու և անպատվաբեր պատմություններ պատմել։ Խեղճ գյուղացիների եզը ուտողը հենց ինքն էր։ Կառավարությունից ահագին փող էր ստացել և ուղարկել Բաթումում պահած իր «դուշենկային»։ Մի քանի պոլսեցիներ, մանավանդ կասկածելի, «հրաշքով» թուրքերի ձեռքից ազատված պոլսեցի լրագրողներ, որոնք տարիներ առաջ իբր թե նրան տեսել էին Պերայի Շիտակի վրա, «անբարոյական մարդու մը տպավորությունը առած էին անկե»...

Եվ հազար ու մի ուրիշ զրպարտություններ։

Կարծես, խեղճ այդ մարդկությունը թթենու ծառի նման թափահարող մրրիկների պատճառը ինքը, Հերյանը լիներ։

Նավը մխրճվել էր բոլորի աչքերի մեջ և հանգիստ չէր տալիս նրանց։ Որ կողմից էլ նայեիր՝ նա այնտեղ էր. լուռ, անողոք վկա։ Մեր անհաջողությունների անողոք վկա։

— Ախր, դա ինչի՞ է եկել մեր գլխի վրա կանգնել...

Թշնամի ինժեներները ուրախ էին։

Նավը հանդիսանում է ճակատագրական մի սիմվոլ։ Սնանկություն, անճարակություն...

— Մի խոսքով՝ Ալ-բատրոս...

— Որի վրա հալա նայեք գուլպաներ են չորացնում...

Հոհոում էին։

Մարտինը և Ֆեոդոր Պանտելեևիչը ամեն օր նավ էին վերադառնում նորանոր պատմություններով։ Այս ասացին, այն ասացին։ Նաև լրտեսում էին Հերյանի ամեն մի քայլը, այն աստիճան, որ նա այլևս չէր գնում Միրանյանի կնոջ այցելելու, որովհետև իր և տիկնոջ մասին էլ սկսել էին ինչ-որ բաներ պատմել։

Քաղաք չէր իջնում, չէր ածիլվում, չէր քնում։

Մնացել էր մենակ։

Ինքը և իր ուժեղ հեռադիտակը, միակ առարկան, որ կարողացել էր փրկել։ Ժամանակին, Տուլոնում գնած մի Զայս, որով հատակ կերպով կարողանում էր տեսնել մինչև Արագածի լանջերը, Էջմիածինը, Հայկական Պարը, Արարատը։

Իսկ քաղաքը, նրա տափակ տանիքներով տները, փողոցները, բակերը և մարդիկ բաց գիրք էին, այնքան պարզ, որ երբեմն անգամ վախենում էր նայել։ Տեսնում էր ավելին, քան մարդ տեսնում է մոտից պարզ աչքերով։ Ցեխով, աղբով, մարդկանցով լցված տների բակերը և ցեխով, աղբով, գաղթականներով լցված փողոցները։

Լուսաբացին, մինչ լեռ ու դաշտ արթնանում էին շքեղ հրավառությունների մեջ, փողոցներից անցնում էր մեռել հավաքող առաջին սայլը։ Ամեն մի քայլափոխին կանգ էր առնում և մերկացած դիակները նետում ներս։

Քանաքեռի կողմից, Զանգուի կամուրջի կողմից, Կոնդի կողմից սկսում էին քաղաք իջնել մթերք բերող գյուղացիները։ Նույն այդ բոպեին տների դռները բացվում էին, զամբյուղը ձեռքին մարդիկ էին դուրս գալիս և սայլերի հետևից շտապում շուկա։ Նրանց հետևից գալիս էին գաղթականները, դեղնած, կապտած, ցնցոտիների մեջ դողդղալով։

Շուկան լցվում էր ահագին բազմությունով։

Գյուղացիները գետնի վրա էին թափում ստեպղինի, ցորենի, լոբու, ոսպի և չորացած պտուղների քանակություններ և, ցուպերը կատաղի կերպով աջ ու ձախ շարժելով, իրենց ապրանքը պաշտպանում էին սոված երեխաների և սոված կանանց հարձակումներից։ Հաճախորդները մոտենում էին, ապրանքները զննում և լայն շարժուձևեր անելով սակարկում։ Ոմանք փող էին տալիս, ուրիշներ էլ դուրս էին հանում հին շորեր՝ տաբատ, շապիկ, գլխարկ, որ գյուղացիները շոշափում էին, զննում և փոխանակում ուտելիքների հետ։

Այդ ժամերին շուկան՝ դժբախտ քաղաքի դժբախտ ստամոքսը, նմանվում էր խենթանոցի։ Մարդիկ դեսուդեն էին վազում, կռվի բռնվում, աղաղակում, վիճաբանում։

Մինչ այդ, հեռադիտակը շրջում էր և տների դեպի բակ ելնող պատշգամբները լցվում էին աշխատող կանանցով։ Անկողինները դուրս էին հանում, կրակ վառում, կարպետները թափ տալիս։ Խճողված մազերով տղամարդիկ իրենց տաբատը վեր քաշելով մոտենում էին ջրով լցված դույլերին և փռշտկալով լվացվում։

Սուրբ Խաչի եկեղեցու զանգակները ղողանջում էին։

Պաշտոնյաները և դպրոցական տղաները շտապ քայլերով մեկնում էին դպրոց կամ գրասենյակ։ Շուկա գնացողները զամբյուղները ճոճելով վերադառնում էին տուն։ Գաղթականները գայլի աչքերով նայում էին նրանց զամբյուղներին և ձեռքը երկարած վազում էին նրանց հետևից։

Շուկայի հրապարակում տեղ-տեղ կրակ էին վառում և ճղի-պզի տապակում։ Ոչխարի աղիքների հարբեցուցիչ և կասկածելի այդ հոտը նվաճում էր ամբողջ հրապարակը և սոված որբերի գլխում ահավոր ոճիրներ գործելու ցանկություններ արթնացնում։

Քիչ վերը, պառլամենտի դիմաց, հեռադիտակը զինվորներ էր տեսնում։ Զորահանգես էր։ Նվագախումբը հնչում էր կատաղի։ Հրամաններ, ճառեր։

Զինվորները մեկնում էին։

Քաղաքը հորանջում էր։

Ժամը երկուսի մոտերը ամեն մարդ գնում էր տուն։ Ուտում էին։ Քնում էին։ Թեյ էին խմում։ Դուրս էին գալիս կենտրոնական փողոց և, վեր վար, վար վեր ման էին գալիս։ Նայում էին նավին և ծիծաղելով խոսում։ Ժամը յոթին վերադառնում էին տուն։ Արևը իջնում էր, մութը առաջանում։

Տների ներսը լույսեր էին վառվում։ Դռները և պատուհանների փեղկերը փակվում էին։

Երևանը հանկարծ տափականում էր։

Ամեն կողմից սկսում էին կրակել։ Գաղթականները պառկում էին մայթերի վրա և գրկախառնվում խավարի հետ։

...Եվ հեռադիտակի ծայրը Հերյանի առաջ ցցում էր մեծդի մի տեսարան։ Լեռների միայնացած բյուրեղե գագաթները։ Լայնատարած, խաղաղ և խոր մտածումի մեջ թաղված Արարատյան դաշտը։

Կարծես գերմարդկային բառերով գրված խորհրդավոր մի գիրք լիներ։ Բառեր, և բառերի հետևում թաքնված լույսեր։ Նախադասություններ, և նախադասությունների հետևում անձայն, կլանիչ երգեր։

Առերես պարզ, հստակ, դյուրամատչելի, սակայն, ինչքան բարդ և ինչքան առեղծվածային։

Սկսել էր հասկանալ լեռներին։

Ինչպես նավը գարձել էր ժայռի մի մաս, այդպես էլ ինքը և իր մենությունը սկսել էին դառնալ հողերի մի մաս։ Անշուշտ, ծովը տարբեր էր։ Ծովը անհանդիստ էր և փոփոխվող ճանապարհ էր, բաց, լայն, արկածներով լցված։ Օբորվող հորիզոններ, անակնկալներ, զգայնության նորանոր գրգիռներ մատուցող շքեղություններով լցված։ Ծովը, մեծդի սեռականություն էր, մարմնի անհագ ծարավ։

Այստեղ ամեն ինչ տարբեր էր։

Աչքերդ լայնանում էին և սիրտդ մտածում էր։ Սիրտդ և միտքդ և

մարմինդ միանում էին, վերանում։ Ինչ-որ քեզ հետ էր և ինչ-որ քեզանից ավելի էր։ Եվ դու էլ քեզանից ավելի էիր։

Հերյանը չգիտեր ինչպես բացատրի այդ ամենը։ Գիտեր, որ գնալով ինչ-որ բան մեռնում էր իր մեջ, և գիտեր, որ գնալով ինչ մի բան ծնվում էր իր մեջ։

Երբեմն ժամերով կամրջակի վրա մնում էր անշարժ։

Ահա մութը և մութի հետևում լեռները։ Եվ լեռների հետևում ժայռերի վրա, սարերի ստորոտին հայերը կովում էին։ Ե՛վ ցուրտ էր, և՛ բուք էր, և՛ սով։

10

Ամբողջ երկիրը ծածկված էր ձյունով։

Գիշերվա կատաղի մրրիկը առավոտյան մոտերը քիչ մեղմացել էր։ Քամին, խեղդված ձայնով գանգատվելով, դեռ շարունակում էր փչել։

Կարծրացած ձյունը ճռճռում էր ձիերի սմբակների տակ։

Հարյուրապետ Միրանյանը նայեց հեռուն ուրվագծվող բարձրություններին և անմիջապես հասկացավ, որ նորից փոթորիկ է սկսվելու։ Երկինքը մութ կապարե գույն էր ստացել և ծանրացած իջել վայր։

Գունդը առաջանում էր առանց շտապելու։ Ձիերը հոգնած էին և դեռ բավական ճանապարհ կար գնալու։

Բլուրների հետևից մերթ ընդ մերթ հրացանաձգության ձայներ էին լսվում։ Քամին ձայները երկարացնում էր և ցրում։ Երբեմն մի թնդանոթ էր ոռնում։ Երևի առաջացած զորքերն էին կրակում, թշնամու ուշադրությունը իրենց վրա կենտրոնացնելով ազգաբնակությանը փախչելու հնարավորություն տալու համար։

Սահմանագլխի բոլոր ճանապարհները լցված էին խուճապի ենթարկված ամբոխներով։ Ո՞ւր էին շտապում այդ մարդիկ, իրենք էլ լավ չգիտեին։ Հազիվ աշնանացանը վերջացրած, ձմեռվա պաշարը պատրաստած, ահա ստիպված էին տուն, տեղ, դաշտ և գյուղ լքել թշնամու ոհմակներին... և հեռանալ։

Գնում էին մեծ խմբերով։

Սայլ ունեցողները վերցրել էին այն ամենը, ինչ կարող էին փրկել. սեղաններ, աթոռներ, տոպրակներ և վերջին վայրկյաններին շփոթությամբ վերցրած անպետք իրեղեններ։ Այդ իրեղենների կատարին, փալասի կտորի մեջ փաթաթված դողացող երեխաներ էին նստած կամ ծծկված, չորացած, մարած աչքերով պառավներ, որոնց մտրակում էր

քամին, վտանգավոր կերպով երերալով ոտքերը ջարդված սեղանների հետ։

Ծանր այդ սայլերը խոր ձյունի միջով դժվարությամբ քաշող և ամեն մի վայրկյան կանգ առնող նիհար եզների կողքով քայլում էին մյուսները։ Այդ տղամարդիկ և կանայք իրենց ուսերի վրա կրում էին ծանր մի տոպրակ կամ կապոց, որը հաճախ վայր էին դնում, սառած մատների վրա շնչում, նորից տնքալով բարձրացնում և ձյունի մեջ մխրճվելով, դեգևելով, շարունակում քայլել։

Երբեմն անկարելի էր ճանապարհը շարունակել։ Ցուրտը և բուքը ծեծում էին նրանց և ետ հրում։ Եզ, տավար, սայլ, մարդիկ մեկը մյուսին էին սեղմվում, և շատերը, բազուկները ծալելով իրենց աչքերի վրա, սարսռալով սպասում։ Շատ անգամ, եզների բեռը թեթևացնելու համար իրեղենների մեկ մասը գցում էին։ Գցում էին նաև տոպրակները և կապոցները, նրանց փոխարեն երեխաներ կամ քայլել չկարողացող պառավներ շալակելու համար։

Ճամփաների եզերքին լքած իրեղենների մոտ քիչ չէին նաև երկարած դիակներ։ Երբեմն ձիերը կանգ էին առնում ձյունի միջից դուրս ցցված մի գլխի կամ փայտացած մի բազկի առաջ։

Այդ բազմությունը քայլում էր առաջացող հեծելազորքի գնդի հետևից լուռումունջ, առանց տրտունջի, առանց բողոքի, ընդունելով վիճակված ճակատագիրը։

— Դե ի՞նչ արած... — պատասխանում էին նրանք զինվորների համակրական արտահայտություններին։

Սկզբում ժողովրդի կրած այդ չարչարանքները սաստիկ հուզում էին Միրանյանին և նրա զինվորներին։ Նրանք հարցուփորձ էին անում, մխիթարում, քաջալերում և երբեմն էլ ձիերից իջնելով նրանց օգնություն էին հասնում։ Օրեր, օրեր նույն տեսարանները մեքենական ճշգրտությամբ կրկնվել էին։ Այլևս դրանք դարձել էին դաշտանկարի և տարերքի անբաժանելի մի մաս։ Մարդկանց աչքերը սովորել էին, նրանց խիղճը չեզոքացել...

Ցուրտը և բուքը, խիստ և ավեր դաշտանկարը, անտարբեր լեռների վեհությունը, անդադրում կռիվները, փախստականների ողբերգական թափորը և երկրի չորս կողմերից անցնող մահի մոտությունը անցել էին մարդկային մտքի և դատողության սահմանները և այլևս ոչ մի վերլուծումի չէին ենթարկվում։

Կյանքի ձևերը փշրվել էին, չափսերը ռետինի նման ձգվել։

Բաբկեն Միրանյանը այդ զգում էր խորապես։ Եվ ընդունելով հանդերձ պարտադրված իրականության անմիտ մեծ խաղը, նա, ինչպես

բոլոր կայտառ մարդիկ, աշխատում էր իր ներքին տեսողությունը կահավորել այնպիսի պատկերներով, որոնց հմայքը անսահման ուժի աղբյուր էր։ Այդ էր երևի պատճառը, որ նրա ընկերները համակրական ժպիտով խոսում էին նրա տարօրինակությունների մասին։

Ամենքն էլ սիրում էին նրան։ Գիտեին, որ լավ կյանքի սովոր, քիչ քմահաճ և նուրբ ճաշակով այդ տղան խորքով ազնիվ էր, վեհանձն և անհրաժեշտության դեպքում պատրաստ կյանքը վտանգելու մյուսներից առաջ։

Ճակատը բաց, խոսքը տաք և սիրտը պարզ։

Ոչինչ բանի համար զայրանում էր, վառվում հարդի նման և քիչ հետո ամեն ինչ մոռանում էր և ամենքին ժպտում։ Չէր կարողանում տանել բարոյական տգեղությունները, փոքրոգությունները։ Վիրավորվում էր, չարչարվում, և այնքան տխրում, կարծես հիմա լաց կլինի։

Զինվորների հետ պահանջկոտ էր և արդար։ Իսկական ընկեր էր, պատրաստ նրանց հետ բաժանելու բոլոր դժվարությունները։ Առաջին օրինակը տվողը, կռվի ժամանակ առաջ գնացողը նա էր։ Աղա մարդ, լայն հոգի և քիչ խև։

Քիչ խև, քիչ տարօրինակ։ Այդ, այո՛։

Մեկ էլ, առանց պատճառի, գիշերը տեղից վեր էր թռնում, երկու երեք մարդ վերցնում, ձիերը թամբել տալիս և քառատրոփ ընկնում սար ու չոլ։ Ո՞ւր էր գնում, և ինչո՞ւ, ոչ ոք չգիտեր։ Ձիերը մի քանի ժամ հոգնեցնելուց հետո վերադառնում էր, մարդկանց ուղարկում քնելու, իսկ ինքը սենյակի մի անկյունից մյուս անկյունը քայլում և սուլում։ Առավոտյան ընկերները հարցուփորձ էին անում։ Պատասխանում էր ծիծաղով՝

— Էնպես, էլի, գնացի...

Պատահում էր, որ գունդը շարժվելու ժամանակ նա չկար։ Ոմանք մտահոգվում էին, ոմանք զայրանում։ Բայց միշտ էլ, մի քանի վերստ հեռանալուց հետո նա գալիս հասնում էր՝ իր սիրած արաբական ձին սաստիկ մտրակելով։

— Ո՞ւր մնացիր, Բաբկեն։

— Էնպես, էլի, մնացի...

Շրեր էին լինում, երբ նա անդադար խոսում էր։ Բացատրում էր հայկական լեռների խորհուրդը կամ ռուս մարդու հոգեբանությունը և կամ տալիս էր ստեպների փիլիսոփայությունը։ Նոր-նոր տեսություններ էր ստեղծում, երևույթների թաքնված իմաստները պարզաբանում՝ անսպասելի մանրամասնությունների մեջ մտնելով։ Սիրում էր Տյուտչևի և Վահան Տերյանի բանաստեղծությունները և, թեպետ ձայն չուներ,

նրգում էր Սկառլատիի և Բենեդետտո Մարչելլոյի մեղեդիները։ Երբեմն էլ, ժամերով մնում էր լուռ, առանց բառ արտասանելու։ Ձեռքերը գրպանները խոթած, անշարժ նայում հեռուն։ Այդ տևում էր մինչև երեկո։ Իսկ երեկոյան զինվորներին հավաքում էր և շուրջպար կազմակերպում։ Ինքն էլ պարում էր, ոգևորված, ուրախ, վայրի կենդանու նման ճկուն։

Իսկ կնոջ մասին երբեք ոչ ոքի հետ ոչինչ չէր խոսում։ Երբ նրանից նամակ էր ստանում, ձի էր հեծնում և հեռանում։ Ամայի մի վայրում նամակը բաց էր անում և կարդում։ Մի քանի անգամ կարդում էր սկզբից մինչև վերջ, հետո՝ որոշ տողեր, ապա նորից՝ սկզբից մինչև վերջը։ Նամակը կտոր-կտոր էր անում, ձին մտրակում և կտորները հանձնում քամուն։ Վերադարձին նրա շարժումները մնում էին ամփոփված, ձայնը մեղմացած, աչքերը երազուն։

Կովի օրերին սակավախոս էր, պաղարյուն և կենտրոնացած։ Շրթները սեղմված, աչքերը վառ, լուռ։ Հրամանները կտրուկ էին, խիստ։ Այդ ժամերին մանկանման Բաբկենը բոլորովին այլափոխվում էր։ Մարդիկ զգում էին նրա վճռական կամքը և կուլր կերպով ենթարկվում նրան...

Չէր կարողանում տանել այն, երբ ոչ խսկական զինվորականներ խառնվում էին բանակի գործերին։ Հոնքերը կուտակում էր և շրթները ծռմռում։ Զինվորությունը նրա համար բարձր կոչում էր, իր դրական և խիստ օրենքներով, կարգապահությունով, համազգեստով, մտայնությունով։ Չէր թույլատրում ոչ մի շեղում, չէր հանդուրժում ոչ մի բացառություն։

Ամեն առավոտ զննում էր մարդկանց կեցվածքը, նրանց զգեստը, խիստ նայվածքը հառելով ամենաչնչին կոճակի վրա և սրա նրա գոտին թափահարելով.

— Այդպես էլ գոտի՞ կապել... Տես, չորս մատներս մեջն են մրտնում... Իսկական կավալերիստի գոտին պետք է սեղմվի մինչև ոսկորները, մինչև ոս-կոր-նե-րը...

— Հանդարտ, ուղղություն...

Ու մարդիկ կատարյալ ձևով քարանում էին։

Գոռալուց, հանդիմանելուց, պատվերներ տալուց հետո զինվորների հետ կատակ էր անում և տղայական շեշտով ծիծաղաշարժ պատմություններ պատմում։

Բաբկենի տարօրինակությունները...

Ահա ամսից ավելի էր, որ դուրս էին եկել Երևանից։

Մի ամիս միայն... և ինչքան եղելություններ։

Մասնակցել էին Ղարաուրգանի և Սարիղամիշի կռիվներին և բավականին զոհեր տվել։ Կռվել էին անտանելի պայմաններում։ Ցուրտ, բուք, ձյունամրրիկ։ Պակասում էր ռազմամթերքը։ Պարենը ժամանակին տեղ չէր հասնում։ Փոխադրական միջոցները թերի էին։

Թշնամին սեղմում էր ամեն կողմից։ Թուրքերը այլևս հաստատ իմանալով, որ եվրոպական պետությունները չեն միջամտելու, իրենց լավագույն ուժերը համախմբել էին հայկական դիմադրությունը կասեցնելու համար։

Հայաստանի զինակիցներն էին՝ սովը, ցուրտը, թշվառությունը։

Թշնամին օգտագործում էր նաև ճակատի այս կողմում գտնվող իրեն բարեկամ տարրերին... Կռիվների ամենատաք վայրկյաններին, չսպասված տեղերից, թիկունքի տարբեր վայրերից հանկարծ սկսվում էր կրակ տեղալ... Թշնամիները հարձակվում էին սակավաթիվ հայերի վրա և նրանց շուրջը օղակ կազմում։ Հայերը շատ անգամ ստիպված ետ էին քաշվում, թողնելով վիրավորվածներին։

Խեղճ պարուչիկ Կադինյանը... Բաբկենը նրան չէր կարողանում մոռանալ։ Փոքրահասակ, նիհար, դպրոցական տղի դեմքով, աշխույժ և շատ խելացի երիտասարդ էր։ Միամիտ, հուզական, ռոմանտիկ։ Մխախոտի ոսկե մի տուփ ուներ, որի մեջ պահում էր սիրած աղջկա լուսանկարը։ Ժամերով նամակներ էր գրում նրան, և երբ պատասխան էր ստանում, աչքերը փայլփլում էին և ուրախությունը չէր կարողանում ծածկել։ Ձայնը գցած երգում էր, ցատկում, պարում։ Կամ նստում էր աթոռի վրա, ձեռքերը սեղմում երկու ծնկերի մեջ... և երգեցիկ ու մելամաղձոտ ձայնով ոտանավորներ արտասանում։ Կապտավուն, արտահայտիչ աչքերը բոցավառվում էին, նիհար դեմքը սփրթնում էր և միամտացած երեխի նմանվում։ Խեղճ Կադինյանը... Նրա սրտում ջութակի ձայնի նման ջերմ և հուզիչ մի զգացում էր տառապում։ Սիրում էր կյանքը և մահի վերաբերյալ շատ լուրջ և խոր հարցեր պրպտել։ Բայց ինչպես այդ պատահում է միամիտ մարդկանց հետ, այդ հարցերի մասին նրա խորհրդածությունները չէին համապատասխանում ոչ իր դեմքին և ոչ էլ նրա ձայնին։ Բառերը կարծես ավելի մեծ էին, քան իր հոգեկան հասակը։

Միրանյանը լսում էր նրան ուշադրությամբ և ժպտալով։

— Չէ, չես հասկանում,— նեղանում էր մյուսը, երբ նշմարում էր Միրանյանի ժպիտը,— ինչ քեզ ասում եմ՝ թերթերում կարդացված բաներ չեն, իմ մտածումներն են...

Խոսում էր սիրո և մահի մասին։ Չէր հավատում մահին։ Մահը սեր էր, ասում էր, և սերը՝ մահ։ Պարզապես կյանքի տարբեր ձևեր են։

— Հասկանո՞ւմ ես, Բաբկեն ջան, ես էդ մասին մտածել եմ...

Եվ ահա, Ղարաուրգանի մոտերը, ճիշտ այն վայրկյանին, երբ ամբողջ առավոտ տևող կռիվներից հետո թվում էր, որ թուրքերին ետ էին մղել, հեռվից տեսնվեց, թե ինչպես թշնամուն հետապնդող Կադինյանը կծկվեց թամբի վրա, երերաց, վայր ընկավ և... փրոփվեց ձիու առաջ։ Միրանյանը անմիջապես երկու ձիավորներ ուղարկեց նրան օգնության։ Ձիավորները հասան... Բայց թշնամին ամեն կողմից ահավոր կրակ թափեց և գունդը ստիպվեց նահանջել։ Ուղարկված ձիավորները սպանվեցին։ Կադինյանը մնաց գետնի վրա։

Թուրքերը, անշուշտ, նրան էլ դաշունահարեցին, կողոպտելով ծխախոտի ոսկե տուփը, սիրած աղջկա լուսանկարի հետ միասին...

— Հասկանո՞ւմ ես, Բաբկեն ջան, ես մտածել եմ...

Հիմա քանի օրեր են անցել, քանի ուրիշ դեպքեր են տեղի ունեցել, բայց Միրանյանի միտքը միշտ ապրում է նրա հետ։ Պարուչիկ Կադինյանը ավելի կենդանի է, քան երբեք։ Երբեմն թվում է, որ ահա նա գալիս է ձին վազեցնելով։ Բերնից վզնոցը վայր է քաշում, ժպտում և հանկարծ լրջացած խոսում։

Ի՞նչ է ասում։ Չի լսում։ Որովհետև Միրանյանի ականջները փաթաթված են, քամին սաստիկ փչում է և ձյունի ամպեր բարձրացնում։

— Ի՞նչ ես ասում,— հարցնում է Միրանյանը, ականջի փաթաթոցը քիչ վար քաշելով։

— Մի բան էի մտածում,— գոռում էր Կադինյանը,— բայց...

Ձեռքով ցույց է տալիս անտանելի քամին։ Անկարելի է խոսել։

Եվ միասին գնում են։ Կողք կողքի։ Ձյունափոշին մտրակում է նրանց երեսները, նստում է նրանց հոնքերի, թարթիչների վրա. ծածկում է նրանց ուսերը, մորթե գլխարկները։ Ծածկում է ամբողջ դաշտավայրը։

Ոչինչ չի երևում։

Ձիերը գլուխները թափահարելով հազում են։

Միրանյանը նայում է ետ։ Մեկը մյուսին սեղմված հեծելազորքի մարդկանց առաջ թանձր շղարշներ են կախված։ Չնայած մոտության, հազիվ թե կարողանում է նշմարել գունդը։ Ձյունը ավլում է մարդկանց և կենդանիների դեմքերը։ Ավլում և ոռնում։

Սուլում, բարկանում, կատաղում։

Եվ Միրանյանին թվում է, որ իր հետևից գալիս են լոկ քամին և

ձյունը, որոնց դաժան խաղը ստվերներ է ուրվագծում։ Ձյունը դառնում է մարդ և մարդը դառնում է տարերք։ Եվ կողքին, ուր կարծում էր տեսնել Կադինյանի մանուկ երեսը՝ քայլում է պարապը։ Կադինյանը, ավաղ, ձյան մեջ սառած մնացել է հեռուն կորցրած մի կտոր հայրենիքի հետ միասին։ Երևի, ամեն անգամ, որ քամին փչում է և ձյունը վեր բարձրանում, նրա գլուխը դուրս է ցցվում և նրա հավիտենական աչքերը տեսնում են այս աշխարհը այնպես, ինչպես կա իրականում։ Նրա նայվածքը պոկվում է սառած բիբերից, բարձրանում է վեր և քամու հետ միասին սավառնում հարավից հյուսիս և հյուսիսից հարավ։

Վարը, այս աշխարհում, բորենիները ծիծաղում են ուրախ քեֆից հետո հրճվող մարդկանց նման։ Լեռներից վայր իջած գայլերը կռվում են դիակների շուրջը և դեմքը ձյունին տալով խմբով ոռնում։

Իսկ մարդիկ շարունակում են կոտորել մեկը մյուսին։

— Ես մտածում եմ...

— Դե, ասա, պարուչիկ Կադինյան, ասա ի՞նչ ես մտածում...

Մեռելի մտածումը այնքան մեծ է, որ ոչ մի մարդկային բառ չի կարող արտահայտել։ Մեծ է այնքան, որքան աշխարհը, որքան բովանդակ տիեզերքը. որքան բոլոր արևները, որքան միլիոնավոր աստղերը, որքան անվերջանալի տարածությունը, որքան անհունը։

Միրանյանը այդ մտածում է և վախենում, որ այդ մտածում է։ Որովհետև ինքը մեռել չէ, ինքը կենդանի մարդ է... Հարյուրապետ Միրանյանը, Հայաստանի հանրապետության հեծելազորի այսինչ գնդի հրամանատարը, որ տարօրինակ բախտով, չնայած այդքան վտանգների, մնացել է ողջ։

Մնացել է ողջ։ Իսկ ողջ մարդու միտքը, սիրտը և մարմինը պահանջում է սահմանված իրերի և սահմանված երևույթների ներկայությունը։ Այժմ նրա միակ երազն է, որ պատերազմը վերջանա, վերադառնա տուն, ունենա մարդավայել բնակարան, դաշնամուր (Վարյան կարող է ընկերակցել իր ջութակին), ընտրյալ գրքերով լցված պահարան, մի քանի դույլ լավ գինի, մի մեծ շուն... Վարյան, որ նուրբ դաստիարակություն ստացած աղջիկ է, սովոր տարրական հարմարությունների, սովոր տաքի, լավ կերակուրների, շքեղ ու վայելուչ զգեստների և թանկագին անուշահոտությունների... որքան տառապեց այդ վերջին ժամանակները... Ցավ է մտածել։ Վարյան տառապեց։

Եվ բուքի միջից Վարյայի քնքուշ գլուխը դուրս է գալիս և սեղմվում նրա կրծքին։ Սիրտը կծկվում է և սիրո մի մեծ ալիք գալիս բախվում է նրան, երակները ջերմությամբ լցնելով։ Միտքը գնում նստում է այն

թախտի ծայրին, ուր վերջին գիշերը նրանք երաժշտություն էին լսում։ Նրա թափանցիկ, երկար և խնամված մատներով ձեռքը ափերի միջ սեղմած նայում է նրա աչքերի մեջ։

— Վարյա, ինչ գեղեցիկ ես այդ զգեստով...

— Պարոն հարյուրապետ, պարոն հարյուրապետ,— լսեց նա հեռուից։

— Ի՞նչ է...

Արթնացավ և ձին կանգնեցրեց։

— Տղաները ասում են, որ ճանապարհից շեղվել ենք... Ջլինի թե ընկնենք թշնամու թակարդը։

Գունդը կանգ առավ։

— Հարցը նրանում է, որ ձյունամրրիկի պատճառով ոչինչ չի երևում։ Սպասեք...

Վերարկուի գրպանից քարտեզը հանեց և, քամու դեմ մաքառելով, աշխատեց մի բան տեսնել։

— Աջ կողմից,— ասաց նա,— մի գյուղ պետք է անցնենինք... Հա, էլի, ճանապարհը գյուղի միջից է անցնում...

Քամին քարտեզը քաշքշեց և տրորեց։ Փչեց ու ապտակեց մտահոգված երեսները. խոսեցին. քամին խոսքերը կլլեց։

— Իսկ ձեր ասած գեղը իսկի չտեսանք...

— Ի՞նչ...

— Գե-եղը չտե-եսանք։

Փոթորիկը գնալով սաստկանում էր։

— Լավ,— գոռաց Միրանյանը,— աբոզը ի՞նչ եղավ... Աբոզը... մինչև հիմա հասած պիտի լիներ...

— Աբոզը չտեսանք... երևի, շեղվել ենք...

— Մի երկու մարդ ետ ուղարկենք, թող տեսնեն աբոզը ո՞ւր է մնացել...

Փոխ-վարատար Աբեսյանը ձին մտրակեց և մարդկանց հրամաններ տվեց։ Երկու մարդ մեկնեցին։

Այդպես կանգնել մնալը կարելի չէր։ Ձիերը պոչերը սեղմած և գլուխները վար առած, մինչև մարմնի կեսը մխրճվել էին ձյունի մեջ, դողում էին։ Անկարելի էր առաջանալ. ձյունափոշու ամպերը ահագին արագությամբ գրոհ էին տալիս մարդկանց և անասունների վրա և նրանց ետ մղում։ Կարելի չէր որոշել քամու ուղղությունը. նա փչում էր բոլոր կողմերից։ Երկինք ու երկիր միացել էին և բովանդակ աշխարհը ճերմակ քաոսի վերածել։

Փոխ-վարատար Աբեսյանը լայնուս և կայտառ մի դարբաղցի

տղա է։ Վայր ընկնող բեղերը սառած և հոնքերը ձյունով ծածկված, նա զինվորների հետ խորհրդակցելուց հետո վիրադարձավ և հայտնեց, որ տղաներից մեկը՝ Այվազը, էս կողմերից է, երկիրը լավ ճանաչում է, և կարծում է, որ, եթե աջ թեքվենք և բլուրը մագլցենք, անպայման կհասնենք սրամբացոց գյուղը, որտեղից այլևս ճանապարհը պարզ է...

— Դե որ էդպես է, թող առաջ ընկնի, մեզ ճանապարհ ցույց տա...

Եվ հարյուրյակը աշխատեց անկանոն շարքերով առաջանալ դեպի բլուրը։

Միրանյանի դեմքը փաթաթված էր մինչև աչքերը, հաղիվ կարողանում էր շնչել։ Ձին դժվարանում էր առաջանալ. ոտքերը ծալվում էին, ամեն վայրկյան կանգ էր առնում և մխրճվում բարձրացող ձյունաթմբերի մեջ։ Երբեմն էլ վայր էր ընկնում երկու ծնկների վրա, Միրանյանին գլորելով ձյունի մեջ։ Միրանյանը սանձերը ձեռքին ոլորած ամբողջ ուժով քաշում էր, թավալ գալիս, հաջողում ոտքի կանգնել, ձին մտրակել և նորից հեծնել։

Բայց ո՞ւր է բլուրը, որի մասին խոսել էր Այվազը։ Ոչինչ չէր երևվում։ Հազիվ նշմարվում էին մարդիկ։

Հետևից եկող երկու դաշտային թնդանոթներն էլ չէին առաջանում։ Անիվները քարացել էին և հրաժարվում էին շարժվել։ Զինվորները ահագին ճիգ էին անում առաջ մղելու համար։

Միրանյանը սարսափով մտածում էր. թե ինչ պիտի լինի, եթե պարենավորման կառքերը չհասնեն։ Զինվորները սոված էին, դեղորայք չկար։ Պատսպարվելու տեղ էլ չկար. գոնե ժայռի մի կտոր լիներ, մի փոս, մի գետ...

Հայաստանը կատաղի ձեռքերով ամեն ինչ խառնել էր, գլորել վար, ծածկել մորիկի կապտած շրթներից դուրս թափվող տարերքի տակ։

Բայց ո՞ւր էր բլուրը։ Բլուր չէր երևում։

— Փոխ-վարաստար Արեսյան, փոխ-վարաստար Արեսյան...

Քամին քաղում էր նրա ձայնը և կուլ տալիս։

— Փոխ-վարա...

Դեմքի վրա մտրակ էր սուլում։ Աչքերը փակում էր, մեջքը ծալում։ Այդ նույն վայրկյանին հետևից վայելով մորիկի մի կտոր էր գալիս, փետուրի նման նրան բարձրացնում և նետում ձյունի վրա։ Ձեռքը բնազդաբար տանում էր աչքերին և այդպես մնում։ Հետևից եկող զինվորները օգնության էին հասնում և նրան ոտքի հանում։

Կանգնում էր և ծիծաղում։

— Դա, քամի չի, դա... էրում է, էրում...

Տղաները ո՞ւր են...

— Ցրված գնում են... թնդանոթները մնացել են վարը...

— Ասացեք թող ամենքը կանգնեն...

— Լսում եմ, գլխապետ։

Եվ Միրանյանը նորից հեծնում էր իր ձին։

Ասել էր, որ կանգնեն, ինչո՞ւ չէին կանգնել։ Ժամացույցը հանեց նայեց. ժամը երեկոյան չորսն էր։ Շուտով պիտի մթներ։ Պիտի մթներ, իսկ չգիտեին ո՛ւր են գնում։ Պետք էր անպայման ամենքին համախմբել, որոշել...

Ձին մտրակեց։ Գոռաց։ Ձեռքերով նշաններ արեց։ Քամին թափահարում էր ձեռքերը, պատառոտում ու ցրում նրա հրամանները։

Ահա, վերջապես, կանգնեցին։

— Հաշվել մարդկանց...

— Մեկ, երկու, երեք, չորս...

Քսան հոգի պակասում էր։

— Ընտրեցեք հինգ հոգի, թող գնան մյուսների հետևից...

Գնացին։

Քիչ հետո երկու հոգի վերադարձան վեց զինվորների հետ։ Դեռ պակասում էր տասնչորս մարդ։

Իսկ մյուսները ո՞ւր մնացին։ Ահա ինչքան ժամանակ է անցել, մյուսները չկան։

— Հավաքել փողհարներին...

Փողերը մլավեցին։ Քամին մեկ ումպով ձայները կերավ և ետ փրսխեց երկար մի ոռնոց։

— Եկան, եկան...

Տասը մարդ ևս վերադարձավ։ Չորս հոգի չկա։

— Հիմա ի՞նչ անենք...

— Պետք է սպասել, ուրիշ ելք չկա... Ո՞ւր է Այվազը, որ խոսում է բլրան մասին...

Այվազին չեն գտել...

Այն, ինչ հեռվից թվում էր բլուր, ձյունամպ էր։ Ուրեմն, նրա ետևը գտնվող ենթադրյալ գյուղն էլ ամպ էր։

Ձիերին համախմբեցին։ Մեկը մյուսին կպան և սարսռալով կանգնեցին։ Համախմբվեցին նաև մարդիկ։ Ցատկոտեցին, բազուկները կրծքին խփեցին, դողացին։ Ձիերի և մարդկանց բերաններից ահագին շոգի էր դուրս գալիս։

— Այվազը գալիս է...

Այվազը և մի ուրիշը։ Հեռվից ուրախության նշաններ էին անում։

Ամենքը վազեցին նրանց կողմը։ Թե ձիերը, թե մարդիկ ամբողջովին ձյունով ծածկված էին. կարծես ուրվականներ լինեին։

— Ի՞նչ է ասում...

— Ասում է լավ խաբար է բերել...

— Պարոն գլխապետ, շատ-շատ ասենք, էստեղից մի վերստ հեռու... Ախր, ես գիտեի, որ ճանապարհի էն կողմը պիտի... համա, էս անիծյալ եղանակը... ի՞նչ ճանապարհ, ի՞նչ բան... Մանուկը ասում էր՝ Այվազ, երազ ես տեսնում... ախպեր, սա իմ երկի՞րն է, ես գիտեմ, չէ՞... Եվ ի՞նչ եք ուզում որ տեսնեմ... Ձյունի մեջ սառած պառկած չորս դիակ... Մանուկին ասացի՝ «Եթե էստեղ մեռած մարդիկ են պառկել, էստեղ ճանապարհ կա, որտեղից էդ մարդիկ անցնում էին... Եվ երբ մոտեցա դիակներին, ադա, ո՞ւմ ես ուզում տեսնեմ... Շշմանց Համայակ վարպետին... քարտաշ... Մեր հարևան Ակուլենց գեղից... Նայեցի մյուսներին, լակոտ լկուտ... երևի ընտանիքը... Մանուկ, ասացի, փրկված ենք, քո արև, փրկված ենք... Սրանք փախչում էին Գյումրի և Գյումրի գնալու համար պետք է անցնեն մեր գեղից... Պարոն գլխապետ, ճանապարհը գտել ենք... Երկու հոգի թող էնտեղ... տեղը չկորցնենք...

Ձիերը հեծան։

— Քառյակ շա-արքով... ամենքը միասին...

Քամին դեռ շարունակում էր ուժով փչել, թեպետ թափը որոշ չափով կոտրվել էր։ Սահում էր ձյունի վրայից, առանց ամպեր կազմելու։ Բերված լուրը մարդկանց նոր աշխուժություն էր տվել։ Ձիերն անգամ այդ ընդհանուր տրամադրությունից տարված կարծես վերակենդանացել էին։ Նրանք, ավելի քան մարդիկ, բնածին բնազդով նախազգում էին մարդաբնակ վայրերի մոտությունը։ Տաքը, կերը, ախոռի անուշ հոտը։ Քայլում էին պոչերը շարժելով և խրխնջալով։

Միրանյանի արաբական ձին նույնիսկ ջղայնացել էր։ Գլուխը անդադար վայր էր քաշում, ուզում սանձերից ազատվել, վազել։ Այդ ջղայնությունը վարակել էր նաև Միրանյանին։ Անցկացրած ծանր և անորոշ այդ ժամանակամիջոցից հետո նրա ուսերից մի մեծ բեռ էր վայր ընկել և մարմինը ձգել և թեթևացել։ Սիրտը արթնացել էր։ Պիտի ուզեր տարօրինակ մի բան անել. ինքն էլ չգիտեր ինչ։

— Երբ այդ կռիվները վերջանան,— մտածում էր նա,— անպայման կանցնեմ սավառնորդային բաժինը։ Լավ է թռչել։ Սուրալ ամպերի միջից և, վերևից, թռչունի սուր աչքերով դիտել դանդաղ անցնող վարի աշխարհագրությունները։

Լինել դաշտերից, բլուրներից, լեռներից բարձր։

Լինել այս աշխարհի հետ և, միևնույն ժամանակ, լինել այս աշխարհից դուրս։ Չէ, անպայմանն, անպայմանը պետք է անցնել սավառնորդային բաժինը։

Եվ նրա ներքին աչքերը սավառնում էին երկինքներում։ Պրոպելլերը բզզում էր հսկայական բզեզի նման։ Սավառնակը՝ մարմնի հետ մարմին, հետևում էր նրա բոլոր շարժումներին։ Ահա, թևը դանակի նման կտրում էր ամպը, թեքվում մի կողմ, պոչը վար առնում և պտուտակի մղանակից արձակված նետի արագությամբ բարձրանում էր վեր և մաղլցում երկինք։ Կարծես երկու լայն բացված հսկայական բազուկներ են, որ պատրաստվում են գրկախառնվել անհունի հետ։

Վարից, ծանր գլուխները վեր ցցած նայում են Մասիսները և Արագածը։ Նայում են՝ սեղմ շարքով առաջացող Գեղամա լեռները և դաշտերը, այգիները, անապատը։ Նայում է Սևանի կապույտ աչքը։ Այլևս հասկացվում է, որ ամբողջ Հայկական բարձրավանդակը ուզում է բարձրանալ վեր։ Ուզում է և չի կարողանում, և այդ պատճառով էլ երերում է, խառնաշփոթվում, խորդուբորդանում, քարե հազար բազուկները վեր կարկառում։

Ինքը և իր սավառնակը՝ տեղից շարժվելու անկարող այս աշխարհի սուրհանդակներն են։ Նրա վեր թռչող աղմկալից սիրտը։ Նրա սուրացող աղաղակը։

— Ահ, այո, աղաղակը։ Որովհետև, պարոնայք բարձրագույն հոգիներ և պարոնայք հրեշտակներ, ես եկել եմ ձեզ ասելու, որ այնտեղ, ներքևի աշխարհում լավ չէ։ Չե՞ք լսում լեռների և ժայռերի թմբուկների վրա բախվող մրրիկների ձայնը, անդունդների պատերին զարնվող խռլտուն վայրոցները և ձյունների միջից բարձրացող փողերի պատռտված ձայները...

Չէ, այնտեղ լավ չէ։

Կռիվ, արյուն, ցեխ, ոջիլ։

Եվ պրոպելլերը խենթանում էր։ Սավառնակը սուրում էր նետի նման, խուզարկում երկնքի բոլոր անկյունները, ճեղքում ծանր ամպերը, ընկնում ֆրենից ավելի արագ վազող հոսանքների մեջ, պարապությունների վիհերում խորտակվում, ալիքների կատաղի խաղացող նավի նման տատանվում և, նորից քիթը վեր տնկելով, պտույտ գալով բարձրանում վեր։

Իսկ բարձրությունների բարձրության մեջ երկինքը կուրանում էր ճերմակ ձյունի նման։

Դառնում էր շրջված մի աչք, անվերջանալի մի բիր։

Անվերջանալի, կլանող մի պարապություն։

Այդ տեսարանի առաջ Միրանյանի գլուխը պտույտ էր գալիս։ Սիրտը սեղմվում էր և մեծ մի տխրություն խուժում էր նրա վրա։ Ձին մրտրակում էր և անմիջապես վերադառնում դեպի իրականություն։

— Հե՞, լաեք, էդ երանելի ճանապարհը ո՞ւր մնաց...

— Էդ ա, գլխապետ, երբ հասնենք էն մեծ ձյունակույտի մոտերը... տեսնո՞ւմ եք, էնտեղ, սպիտակ կետը... Հա, ճիշտ էնտեղ... Արդեն տղաները երևում են... Ուրեմն, էնտեղ...

Գունդը վերագտել էր ինքնավստահությունը։

— Է, քամին էլ քավականին մեղմացել է... Դե, առհասարակ էդպես է, երեկոյան քամիների սանձերը քաշվում են...

— Սրան տես, բան ասաց... ի՞նչ պատճառ կա... երեկոյան սանձերը քաշելու...

— Ո՞վ կարա ասի... ասում են, մութից վախենում են...

— Խմբը...

Իսկապես քամին քիչ մեղմացել էր, բայց օդը դեռ պարզ չէր։ Երկինքը ծանր էր, գորշ։ Լուսավորությունը գալիս էր ձյունի սպիտակությունից, որը շարշարում էր մարդկանց աչքերը։

Հեռվում բարձրություններ էին ուրվագծվում։ Անորոշ, կարծես թաքնվել էին երկնքի հետևում։

Անհանգիստ մի խաղաղություն էր տիրում։ Լսվում էին միայն ձյունի մեջ մխրճվող ձիերի սմբակների ձայները։ Խոշտ, խոշտ, խոշտ։

Միրանյանը ձին կանգնեցրեց և նայեց զինվորներին։ Թողեց որ անցնեն։ Ուժեղ, կորովալի, խիզախ երիտասարդներ։

— Ի՞նչ հրաշալի ժողովուրդ է մեր ժողովուրդը,— մտածեց նա,— այդպիսի մարդկանց հետ անգամ դժոխք կարելի է գնալ։

Ձին արագ քշեց և անցավ գնդի գլուխը։ Շարքերը սեղմվեցին։ Ձեռքը վեր բարձրացրեց և նշան արեց երգելու։ Եվ լսվեց առաջին հիսնյակի, սկզբում անորոշ, բայց հետո ավելի և ավելի ամուր հնչող խմբերգը։

Յար ունեի բոյով չինար, տեսքով աննման,
Սիրուհիների թագուհին էր սիրով անսահման...

Ետևի երկրորդ հիսնյակը պատասխանեց։

Յար ունեի բոյով գահան, ոգուզի նման,
Ման էր գալիս և զոում էր մի էշի նման...

Ձիերի սմբակների տակ տրորվող ձյունի ձայնը խոշտ, խոշտ, խոշտ ընկերանում էր նրանց երգին...

Միրանյանը միացավ խմբին։ Ինչ լավ էր, որ ամենքը միասին երգում էին։ Աշխարհի ետ ընկած այս վայրում, ծածկված այս երկնքի տակ, անհայտ այս առաջացումի ժամերին։

Արդյոք ամբողջ մեր այս կյանքը անհայտ առաջացում չէ՞։

Հիշում էր (երգը արթնացնում է հիշողությունները)։ Հիշում էր ավստրիական ճակատում անցկացրած ամիսները։ Այնտեղ ևս համատարած ձյուն է և անվերջանալի տարածություններ, բայց այդ ձյունը և այդ տարածությունները իրեն համար պատահական էին, գրեթե անիրական։ Ինքը այնտեղ օտար էր։ Իր հոժար կամքով չէր գնացել, այլ պարտադրվել էր գնալու Ռուսաստանի խորքերը, հեռավոր վայրեր, որոնց հետ ոչ մի բանով կապված չէր։ Ակամա պետք է մասնակցեր հսկայական չափսեր առած մեքենական մի գործողության, որի հետ ոչ մի ներքին կապ չուներ։ Անդադրում դղրդոցով անցնում էին զորքերի անվերջանալի շարքերը, հրետանիները, հեծելազորքերը։ Այդ օտար վայրերից վառոդի, կաղամբի հոտ էր գալիս։ Թնդանոթները ոռնում էին, ռումբերը պայթում, գնդացիրները տրաքտրաքում, մարդիկ խուլ ճիչեր արձակելով վայր էին ընկնում, իսկ թշնամին երբեք չէր երևում։ Մեծ և անանուն մի դրամա էր, որի նպատակը իրեն համար մնում էր անհայտ։ Ինքը, անշուշտ, այնտեղ էր, մասնակցում էր կռիվներին, վտանգում էր իր կյանքը, անում էր իր լավագույնը, որովհետև պատվի, արժանապատվության հարց էր, սակայն սրտի խորքը, իր անհատականության գաղտնի կենտրոնը բացակայում էր։

Այն օրերին նա այդ լավ չէր հասկանում։ Հիմա հասկանում էր։

Հիմա մթագնած և անորոշ այս վայրում, այս թավալ եկող մի կտոր երկնքի և երկրի ծոցում, ուր նա երբեք չէր եղել, ուր հնչում էր միամիտ այս երգը, ուր առաջանում էր զոհվելու պատրաստ, հինավուրց պատմության խորքերից նորից դուրս եկած ռազմիկների այս լեգեոնը, ամեն ինչ թվում էր բնական, անհրաժեշտ, տրամաբանական։ Զարմանալի չէ՞ր։ Ահավասիկ բոլորովին անծանոթ վայրեր և, սակայն, ինքը ճանաչում էր նրանց։ Տեսել էր։ Ապրել էր նրանց հետ։ Ինքը ևս նորից վերադարձել էր պատմության ինչ-որ խորքերից։

...Մի յար ունեի կրծքերը նուռ, աչքերը հուր...

Խոշտ, խոշտ-խոշտ-խոշտ...

Այո, այդ զգում էր խորապես, վերադարձել էր։ Անցյալ կյանքում երկար ճամփորդելուց հետո վերագտել էր այն, ինչ նրան պատկանում էր, այն, որին ինքը պատկանում էր։ Իսկ անցյալ կյանքերը. ո՞վ կարող էր բաց անել խավարի ծալքերը...

— Հասանք, գլխապետ, հասանք... Ո՞վ կարա ասի... Շշմանց Հմայակ վարպետը...

Շշմանց Հմայակ վարպետի դիակը կես մխրճված էր ձյունի մեջ։

Փայտացած ձեռքերը գալարված, դեղին մորուքը դուրս ընկած, դեմքը սևացած և աչքերը ոլոր եկած նա պառկել էր կողքի վրա, կարծես սպասում էր, որ մեկը գա, օգնի վեր կենալու համար։

Չորս քայլ ետ մի կին և երեք երեխաներ մեկը մյուսին փաթաթված, երեսի վրա երկարել էին և կապտել։

— Սրանք զարկված են,— ասաց տղաներից մեկը, մի երեխի դիակը կողմ հրելով։

Մոտի ձյունը կարմրած էր և դիակի կոկորդի վրա արյուն էր չորացել։

— Գոնե ձյունով ծածկենք...

— Հա, ծածկենք...

Միրանյանը քարտեղը գրպանից հանեց ճանապարհը ճշտելու համար, բայց ժամանակ չունեցավ։ Ճիշտ այդ վայրկյանին, աջ կողմի բարձրություններից հրացանաձգության ձայներ լսվեցին։

Միրանյանը հեռադիտակը աչքերին ուշադրությամբ նայեց և ոչինչ չտեսավ։

— Դուք էլ լսեցիք, չէ՞,— հարցրեց մյուսներին։

— Էնպես թվաց... կրակում էին...

Ձիերից վայր իջնողները նորից ձի նստեցին։ Հրացանները հանեցին և փոքրիկ խմբեր կազմելով ցրվեցին։

— Նորից կրակում են...

Այս անգամ հրացանաձգության ձայները գալիս էին թե՛ աջից և թե՛ ձախից։

— Աղա, ծուղակը ընկած չլինե՞նք...

— Պետք է երկու ուղղությունով էլ հետախույզներ ուղարկենք... տեսնենք ինչ է...

Փոխ-վարատարը մարդիկ ընտրեց և ուղարկեց։

Քամին, որ թվում էր մեղմացել է, հանկարծ ամբողջ ուժով փչեց, ահագին ձյունափոշի բարձրացնելով։ Հմայակ վարպետի մորուքը վեր բարձրացավ և ճերմակեց։

— Շանորդին նորից կատաղեց...

Միրանյանը չուզեց ժամանակ կորցնել։ Անցավ երկրորդ հեծյակի գլուխը և որոշեց բռնել բլրան կողը։ Մյուսները տասնյակների բաժանվելով ցրվեցին գանազան ուղղություններով և պատրաստ կանգնեցին։ Երկու թնդանոթները մեկնեցին հետևակների հետ և կանգ առան ձյունաթմբերի հետևում։

Բուքը սաստկացավ։ Ոչինչ չէր երևում։ Պետք էր սպասել հետախույզների տեղեկություններին։ Ո՞ւր մնացին... Սոսկալի էր... Նրանք չգիտեին ո՞ւր են գտնվում և ո՞ր կողմից էր կրակը գալիս։ Կրակում էին իրենց վրա, տարակույս չկար։ Գնդակները շվվալով անցնում էին գլուխների վրայից։ Քիչ անցած, պայթեց նաև թնդանոթային առաջին ռումբը։

— Պա-ատրա՛ստ,— հրամայեց Միրանյանը։

Ձին մտրակեց, շարքերի առաջից անցավ և նորից հրամայեց՝

— Հինգ հարյուր քայլի վրա նշան առ, կրա՛կ, կրկին կրակ, անդադար կրա՛կ...

Ետևի երկու թնդանոթները ևս սկսեցին ռռնալ։

Հետախույզներից երկու հոգի վիրադարձան և հայտնեցին, որ բլրան հետևում տեսել էին մի քանի հազար թուրքեր, և բավական թվով հրետանի։ Հեծելազորք չէին նկատել։

Անհավասար այդ ուժերով ճակատամարտ ընդունելը անմտություն էր։ Միրանյանը որոշեց կրակը շարունակելով հնարավորություն տալ հարյուրյակին, որ ետ քաշվի և ավելի հարմար դիրքեր բռնի։ Իրենք բաց դաշտի մեջ էին... Թուրքերը բարձունքներից իջնելով կարող էին պաշարել...

Արդեն վիրավորվածներ կային։

Կային նաև սպանվածներ։ Մի ռումբ պայթել էր աջ թևի տասնյակի շարքերում և մի քանի հոգի սպանել։

Միրանյանը ետևի շարքերին հրաման տվեց կամաց-կամաց նահանջել, առանց որ թշնամին այդ նկատի։ Ինքը քսան մարդկանցով մնաց առաջին դիրքերի վրա և կրակը սաստկացրեց։ Բարեբախտաբար, քամին էլ գնալով սաստկանում էր և ձյունափոշին ծածկում էր տեսողությունը։

Կես ժամ հետո երբ տեսավ, որ մյուսները բավականին հեռացել են և թշնամու կրակն էլ թուլացել է, հրամայեց իր մարդկանց կրակելով կամաց-կամաց ետ քաշվել։

Պետք էր թշնամուն քաշել դաշտը և ավելի նպաստավոր դիրքերից հակահարձակում պատրաստել։

Ձիերին մտրակեցին և քառատրոփ հեռացան։ Թշնամու թնդանոթները լռել էին։ Լսվում էր միայն քամու աղաղակը։

— Լավ պրծանք,— մտածեց Միրանյանը,— գնացել ընկել էինք թշնամու ծոցը։

Փոխ-վարպետարը, մտահոգված, մոտեցավ նրան։

— Մյուս երկու հետախույզները, որոնց գրկել էի ահա այն կողմը,— ասաց նա, մատով ցույց տալով նահանջի ուղղությամբ,— չվերադարձան... Զարմանալի է...

Ասաց և բնազդաբար գլուխը վար գցեց։ Հենց նրա ցույց տված կողմից գնդակներ վզզացին։

— Պա-ատրա՛ստ,— պոռաց Միրանյանը և ատրճանակը դուրս հանեց։

Թշնամին վերսկսել էր կրակել ավելի սաստկությամբ։ Դիմացից երևացին բազմաթիվ ձիավորներ։ Կասկած չկա, շրջապատված էին։ Այնտեղ... նահանջող տղաները կռվի մեջ էին։

— Տղերք ջան,— բղավեց Միրանյանը,— պետք է ճեղքել անցնել... ուրիշ միջոց չկա...

Մարդիկ անմիջապես ցրվեցին և կրակելով նետվեցին առաջացող ձիավորների վրա։

Միրանյանի առաջից գնացող մի զինվոր՝ հազթանդամ Միհրանը, որին, աբտակարգ ուժի պատճառով տղաները եզ էին անվանում, ձիու սանձերը հանկարծ բաց թողեց, երկու ձեռքերը տարավ ստամոքսին, խուլ մի ճիչ արձակեց և մի քանի տասնյակ քայլ երերալով գնալուց հետո ծանր տոպրակի նման վայր ընկավ, անշարժացավ ձյունի վրա։

Միրանյանի գլխի մեջ ամեն ինչ խառնվեց։

Մինչ իր ձին, որի վրա տարօրինակ մի ուժ էր եկել, վազում էր նետի նման սուրալով, ինքը անդադար կրակում էր։ Նրա գլխավոր նպատակն էր հասնել տղաներին, համախմբել նրանց և միացած ուժերով գրոհ տալ թշնամու վրա։

Բայց ո՞ւր էին տղաները։

Մրրիկը, քամիների վայոցը, ռումբերի դղրդացող պայթյունը, մարդկանց երեսները, ամեն ինչ, ամեն ինչ խառնվել էր, ճերմակ քաոսի վերածվել և ինքը ուրիշ բան չէր լսում, եթե ոչ՝ տիկ, տիկ, տիկ, տիկ, մի ձայն, որը ժամացույցի նման բանում էր կրծքի տակ։

Մարմինը և գիտակցությունը հանկարծ դատարկվել էին և ամբողջովին լցվել տիրական այդ ձայնով։

Ամեն ինչ քնել էր, ամեն ինչ ճերմակել, թեթևացել։

Երբեմն, կրծքի վարի կողմում, մի ցավ էր արթնանում, ծակում, խանձում, սեղմել տալիս նրա ատամները, այրում շրթները, ապա անհետանում, մոռացվում և նորից՝ տիկ, տիկ, տիկ, տիկ, նվագի չափա-

հարի նման ճոճվում։ Եվ այդ ճոճվում էր նվագի չափահարի նման, նրա ջութակի ուսուցիչ Կարլ Էրնեստովիչ Մյուլլերի շեկ և ոլոր դեմքը դուրս էր ցցվում, երկար ու բարակ մատը վեր բարձրացնում և՝ այն, ցվայ, տրայ, այն, ցվայ տրայ չափ էր տալիս...

Եվ աշխարհը, որ թեթևություն էր և սպիտակ ձյունի լույս, լցվում էր հրաշալի մի նվագով։ Ջութակի ձայնը՝ հստակ և թրթռուն, կոհակ-կոհակ տարածվում էր, անտեսանելի թևեր առնում, սուրում անծայր տարածություններում և ընդգրկելով երկինքը, աստղերը, հնչում էր հրաշալի լացի նման, տխրում էր և գանգատվում և լուսավոր հոսանքներին հանձնվելով հեռանում...

Եվ, տեր աստված, նվագողը ինքն էր։ Այդ ձայները դուրս էին գալիս նրա մատների տակից, նրա սրտից, նրա մարմնի ամեն մի մասից։ Ամբողջ նրա էությունը նվագ էր։

Եվ ամեն անգամ, որ քամին խփում էր երեսին, ծարավ և այրող նրա շրթունքների վրա ձյուն սփռում, նա երջանիկ զովություն էր զգում և փորձում էր այդ ձյունը ծծել։

Ձյունը և նվագը։

Արդեն մութ էր, երբ տղաները թշնամուն ետ մղելուց հետո Միրանյանին գտան ձյունի մեջ փռված... Խաչաձևված բազուկների վրա կրելով, նրան տարան իրենց հետ։

— Մենք ենք, գլխապետ, մենք ենք...

Մի վայրկյան աչքերը բացեց, ճանաչեց իր զինվորներին և ժպտաց։ Հետո շրթները ծուվեցին և նա ուշաթափվեց։

11

«...Ամենքը դեպի ճակատ, ամեն ինչ ճակատի համար...»։

Գորշ, հղի երկինք։

Ետ քաշված լեռների կատարին արևը գունաթափված մի սկավառակ էր կախել։ Վարը, դաշտի վրայից ճերմակ մառախուղ էր սողում։

Նավից պարզ երևում էին հեռուն, պատշգամբների վրա տեղի ունեցող զգացական տեսարանները։ Հազիվ հագնված կանայք, մազերը ուսերի վրա թափված, ներս ու դուրս էին անում փափուչները գետնին քսելով, և փորը դուրս տնկելով ծանր ինքնաեռներ էին տանում։ Շփոթվելով, գինովի նման դանդաչելով այս այն կողմ էին վազվզում, կապոցներ պատրաստում, ապա, վերջին վայրկյաններին փաթաթվում մարդկանց վզին, հուզվում, լաց լինում։

Տղամարդիկ դեռ շարունակում էին ճակատ մեկնել։

Քաղաքի փողոցներից քայլերգի ձայներ էին լսվում։ Հեռուն, մառախուղը պլլվում էր դաշտին, ծածկում ամպերով, որի միջից բարձր կաղամախիների կատարներ էին դուրս ցցվում և թվում էր, որ դրանք անհայտ ծովում ընկղմված հսկայական մի տորմիղի կայմերն էին։

Մարտինը, և նրանից անբաժանելի Ֆեոդոր Պանտելեևիչը ամբողջ գիշերը քաղաքում թափառելուց հետո վերադարձել էին նավ։

Երկուսն էլ դեղնած, շշկլված, նիհարած։ Ֆեոդոր Պանտելեևիչի աչքերը խորտակվել էին, բաղուկները անուժ կախվել։ Նա նմանվում էր դատարկված մի տոպրակի։ Շրթունքները անդադար շարժվում էին, ծովում աջ ու ձախ, կարծես ականջներ էին փնտրում գաղտնի բաներ փսփսալու համար։

— Ո՞ւր էիք կորել,— հարցրեց Հերյանը։

— Գնացել էինք խորհրդարան... Նիստ էր... դրությունը շատ վատ է... — պատասխանեց Մարտինը, անհանգիստ գետնին նայելով։

— Ինչո՞ւ վատ...

— Խոսում էին, էլի... շատ մտազբաղ...

— Խոսում էին... Ի՞նչ էին ասում...

— Ասում էին... Նավապետ ջան, կորանք...

Քիթը աղմուկով վեր քաշեց։

Հերյանը կռահեց, որ իսկապես մի վատ բան էր պատահել։ Բարկացավ։

— Կորանք, կորանք... Հիմար, պատմում ես, մարդավարի պատմի...

— Ասում են՝ թուրքերը քայլում են Իգդիրի վրա... գրավել են Կարակալա կամուրջը... Ութսուներեքի և ութսունչորսի կարգերը կանչված են... Ասում էին զորքերը էլ չեն ուզում կռվել... Ասում են... Հա, շմոռանամ... ձեր տանտիկինը տեսա... էն էլի, որտեղ առաջ ապրում էինք... Վազում էր հիվանդանոց... Ասաց ամուսնուն բերել են... դիրավորված է...

— Միրանյա՞նը...

— Հա, նա։

Լռեցին։

— Նու,— ասաց ռուսը,— նու, եկանք հասանք .. Գուպուի, գոսպոդի[1]...

Դեմքի աջ մասը ջղայնացած շարժվեց։

---

[1] Ասված իմ, ասված իմ։

— Աշխարհը լցվել է ցավով, չարիքով,— շարունակեց նա։— Իջել են բոլոր վատ ոգիները և տիրացել կյանքին... Հիմա ի՞նչ պիտի լինի, հիմա ի՞նչ պիտի լինի...

— Ի՞նչ կարող է լինել,— ասաց մեքենաբար Հերյանը։— Մեզ հետ կպատահի այն, ինչ պատահելու էր ուրիշներին... Ի՞նչ էիր ասում, Մարտին, թուրքերը քայլում են Իգդիրի՞ վրա...

— Ասում էին...

— Հիմար բաներ... Ես գնում եմ հիվանդանոց... Կինել մենակ է... Չէ, չէ, Իգդիր... Ես գնում եմ հիվանդանոց...

— Լավ։

— Ուրեմն էդպես... ես գնում եմ հիվանդանոց...

Դուրս գնաց, նորից ներս եկավ, գրպաններում ինչ-որ բաներ փնտրեց, կարտուզը հանեց, նորից հագավ, բաճկոնի կոճակները բաց արեց, նորից կոճկեց։

— Հիմար բաներ մի՛ ասա,— մոթմոթաց քթի տակ։

Վազեց դուրս։

Տիկին Վարդուհուն գտավ հիվանդանոցի ներքին սանդուղներից վար։ Ծյուղերը փշրված երիտասարդ ծառի էր նմանվում։ Գույնը ափրթնած, աչքերը կարմրած։

Հիվանդանոցի լայն նրբանցքներից յոդոֆորմի ուժեղ հոտ էր գալիս։ Բժիշկները և հիվանդապահուհիները մտազբաղ, վազելով անցնում էին, մեծ դռների հետևում անհայտանում, մի վայրկյան հետո դուրս էին գալիս ակնոցները ուղղելով, նորից շտապում և անհայտանում ուրիշ դռների հետևում։ Հիվանդանոցը լեփ-լեցուն էր։ Ամեն անկյունից տրնքոցի, խեղդված աղաղակի ձայներ էին լսվում։

Շալերի մեջ կծկված, վշտից սառած երեսներով բազմաթիվ կանայք և աղջիկներ սպասում էին սանդուղի վարը։

— Տիկին Վարդուհի՛,— բացականչեց Հերյանը մոտենալով։

Կինը ավելի գունատվեց։ Լայնացած աչքերով նայեց Հերյանին, թաշկինակը սեղմեց բերանին և ճիչը խեղդեց։

— Ահ, պարոն Հերյան, ահ, պարոն Հերյան,— հառաչեց նա, իրանը աջ ու ձախ ճոճելով։

— Դե, դե, ավելորդ տեղը մի՛ մաշվեք,— մխիթարեց նրան Հերյանը,— պետք չէ... Ե՞րբ բերեցին...

— Երեկ,— ասաց տիկինը արցունքները կուլ տալով,— երեկ... Ջեն թողնում մոտը գնամ...

Հերյանը թուքը կուլ տվեց և չիմացավ ինչ ասել։

— Սպասեք,— ասաց նա հանկարծ վճռական,— գնամ հարցուփորձ անեմ, տեսնեմ ի՞նչ կարող ենք անել...

Վազեց ճերմակ հագած մի մարդու հետևից։

— Ներեցեք, արդյոք բարի կլինեի՞ք։

— Ի՞նչ եք ուզում,— նեղացած շեշտով հարցրեց մարդը։

— Երեկ մի վիրավորված սպա են բերել... գլխապետ Միքանյանը...

— Գլխապետ Միրանյա՞նը,— հարցրեց մարդը կանգ առնելով,— ո՞ր մասում է...

— Հենց այդ եմ ուզում իմանալ...

— Ի՞նչ եք կարծում, այս խառնաշփոթության մեջ ես կարո՞ղ եմ ճանաչել բոլոր վիրավորվածներին... Ոչ քուն ունենք, ոչ հանգիստ... Դիմեցեք գրասենյակ...

Եվ դուռը փակեց Հերյանի երեսին։

— Մի բա՞ն եք ուզում, պարոն Հերյան։

Բամբակի և փաթաթոցների կապոցներ գրկած, ժպտալով առաջը կանգնել էր օրիորդ Բուդաղյանը, որին հռչակավոր քեֆի գիշերից ի վեր հանդիպելու առիթ չէր ունեցել։

— Ո՞ւմ եմ տեսնում,— բացականչեց Հերյանը և մինչև ականջները կարմրեց։

Օրիորդը այդ նկատեց և ավելի սիրալիր ժպտաց։ Դեմքը հոգնած էր, գունատված։ Գթության քրոջ զգեստը շատ էր սազում նրան, մի տեսակ մեղմություն և աննյութական քնքշություն տարածելով նրա անձի վրա։ Երեսի գծերն էլ այդքան տառապանքի մոտության պատճառով ավելի թափանցիկ էին դարձել, լուսավորվել։ Նույն օրիորդ Բուդաղյանն էր և սակայն կարծես ուրիշ էր։

— Չէի սպասում ձեզ այստեղ տեսնել,— կմկմալով ասաց Հերյանը և նորից կարմրեց։

— Ի՞նչ արած, պետք է մի բանով օգտակար լինել, այնպես չէ՞... Սոսկալի վիճակ է. ահագին վիրավորներ են բերում, հիվանդանոցում տեղ չկա. բոլոր անկյունները լցված են... Պակասում են բժիշկները և դեղորայքը... Իսկ դո՞ւք... հիվա՞նդ եք այստեղ...

Հերյանը բացատրեց։

— Հա, էն երիտասարդ սպան... վերը... Դուք նրան ազգակա՞ն եք...

— Չէ, բարեկամ։ Ապրում էի նրանց մոտ...

— Դե որ այդպես է, կարող եմ ասել... վիճակը լավ չէ։ Երեկ գոր-

ծողության ենթարկվեց... Մինչև բերել են, ահագին արյուն է կորցրել... Անշուշտ, բոլոր հույսերը չեն կտրված, բայց...

— Նրա կինը այստեղ է և շատ է ուզում...

— Այսօր... Գործողության երկրորդ օրը այդ միանգամայն անկարելի է.. Պետք է նրան բացատրել, որ այդպիսի մի տեսակցություն կարող է հիվանդին հուզել և շատ վատ հետևանքներ ունենալ... Պիտի հասկանա և սպասի։ Իսկ ձեր գործե՞ր... պարոն Հերյան։

Հերյանը ձեռքերը վեր բարձրացրեց և անորոշության շարժում արեց։

— Հեռվից ձեր նավը միշտ տեսնում եմ և հիշում այն գիշերը...

— Ցավում եմ, որ այդպես վերջացավ...

— Դուք մեղավոր չէիք։ Մարդիկ այնքան փոքր են... Դե, ինձ ներ թեք...

Փոքրիկ, սահուն քայլերով, շտապ-շտապ սանդուղներից վեր վազեց։ Հերյանը հիացումով նայեց նրա հետևից։

— Ինչ գեղեցիկ արարած է,— փսփսաց նա։

Տիկին Վարդուհին չէր ուզում հեռանալ հիվանդանոցից։

— Թողեք,— ասում էր նա,— թողեք մնամ այստեղ։ Եթե գնամ կգժվեմ, հասկանո՞ւմ եք. . կգժվեմ...

Պետք եղավ ամեն տեսակ պատճառաբանություններ գտնել նրան համոզելու համար։

— Ես ձեզ ասում եմ,— ստում էր Հերյանը,— ոչ մի վտանգ չկա։ Գթության քույրը ինձ շատ պարզ ասաց՝ գործողությունը լավ է անցել... հիվանդը կարիք ունի կատարյալ հանգստության։ Դուք զարգացած կին եք... պետք է հասկանաք...

Տիկինը գլուխը թափահարում էր և հեկեկանքը խեղդելով մերժում։

— Ես գիտեմ... նրա վիճակը լավ չէ... Գոնե թողնեն մոտը մնամ...

Գլուխը պատին էր կպցնում, և երեսը ճերմակ էր ինչպես պատը։

Դուրս գալու ժամանակ, քիչ էր մնացել, որ նա ուշաթափվեր։

Հիվանդանոցի մայթի երկայնքին զինվորները վայր էին դրել վիրավորների՝ ցեխոտված զգեստներով, մոմ կտրած դեմքերով, ետ ոլորված աչքերով։ Եվ դոնապանի հետ կռվում էին։

— Ախր, ասում եմ,— գոռում էր դոնապանը,— հիվանդանոցում մի վերշոկ տեղ չկա... Հասկացեք, ամեն ծակուծուկ լցված է... չի կարելի...

— Սրանք ծանր վիրավորներ են, խոմ փողոցում չպիտի՞ մնան,— գայրանում էին զինվորները։— Նաչալստվոն թուղթ է տվել... պետք է հրամանը կատարել...

— Դե, արի բան հասկացիր... Ադա, ասում եմ տեղ չկա-ա-ա... Տարեք զինվորական երկրորդ հիվանդանոցը...

— Տարինք, բա չտարի՞նք։ Չորս տեղ ենք տարել... Չեն ընդունում։

— Դե որ չեն ընդունում, ես ի՞նչ մեղավոր եմ... Տարեք ջահանանամը...

— Ռեխդ մաքուր պահիր... Նաչալստվոն թուղթ է տվել...

Կռվում էին, մեկ մեկի վիրավորում։

Իսկ պարզ շինելների տակ պառկած վիրավորների պատառոտված միսերը մղկտում էին։ Ծռված իրենց շրթունքները լզելով, նրանք աչքերը կես բաց տնքում էին և լսում հայհոյանքները...

Տիկին Վարդուհին կանգ առավ, նայեց այդ տեսարանին, գույնը բոլորովին գցեց և «Բաբկենս, Բաբկենս» հառաչելով ընկավ Հերյանի ձեռքերի մեջ։ Ջուր բերեցին։ Երեսը լվացին։ Ուշքի եկավ։

Հերյանը նրան կառք նստեցրեց տարավ տուն։

Փողոցները գրեթե պարապ էին։

Հազվադեպ անցորդները մտահոգ վազում էին, մարդ չգիտեր դեպի ուր։ Օդում ծանր և ճնշիչ լռություն էր կախված։ Մայթերի վրա փռված գաղթականներն անգամ լռել էին և, խումբ-խումբ հավաքված կուչ էին եկել, ավելի դժբախտ քան երբեք։ Չէին լսվում կոշիկ մաքրողների և ծխախոտ ծախողների սովորական աղմկալի ձայները։

Պատերի վրա, ինչպես միշտ, բազմաթիվ կոչեր էին կպցրած։

Հերյանը կանգ առավ, ուշադրությամբ կարդաց։ Չնայած կոչերի ոգևորված շեշտին, այդ ընթերցումը սիրտը լցրեց ծանր հուսահատությամբ։ Կասկած չկար, պատերը գոռում էին աղետի և կործանումի մասին։

Ի՞նչ պիտի լիներ, ի՞նչ պիտի լիներ, ի՞նչ պիտի լիներ...

Մետաղի նման սառը փաստը այն էր, որ թուրքերն արդեն Իգդիրի շրջանում էին, Երևանի դռների մոտ։ Ամեն կողմից գալիս էին, Հայաստանի շուրջը օղակ կազմելով։

Ամեն կողմից գալիս էին։

Որոշեց գնալ խորհրդարանի կողմը։ Բուլվարի ծառերը լեցուն էին ագռավներով։ Ճյուղերի վրա երերալով, նրանք նայում էին հեռուն, ապա, անհանգստացած խմբով վեր էին թռչում և երկնքի վրա կենդանի աղեղ կազմում։

Կենտրոնական փողոցի երկու անկյունների սրճարանները պարապ էին։ Ավելի վարը, մի քանի մարդիկ խմբված խոսում էին ցածր ձայ-

նով։ Նրանց դեմքերը նման էին երկնքին, գորշ և ծանր։ Հերյանը նրանց չմոտեցավ։ Քայլերը ուղղեց խորհրդարանի դուռը, որի գլխին կախված էր եռագույն դրոշակ։ Մի քանի մարդիկ իրենց աչքերը պատշգամբին՝ սպասում էին։ Պատշգամբը պարապ էր և դրոշակը տխուր։

— Բարև ձեզ, պարոն Հերյան...

Ետ նայեց։ Զվարթի հայրն էր։

Լուռ նայեցին մեկ մեկի։ Հետո նայեցին պատշգամբին, դրոշակին, երկնքին։ Մարդը խոր հառաչ քաշեց և պրպտեց Հերյանի աչքերի մեջ։

Ասաց՝

— Ի՞նչ պիտի լինի։

— ...

— Եկանք հասանք զզլբաշների օրին... և վստահություն չկա,— նորից ասաց մարդը։— Ավելի լավ է դրոշակը վար առնեն, ի՞նչ կարիք կա իզուր արյունահեղության... գալիս են... Զվարթս նամակ է գրել...

— Նա որտե՞ղ է,— հարցրեց Հերյանը անտարբեր ձայնով։

— Գործո՞վ...

— Հա, ընկերների հետ... Ասում է հույս չկա...

— Ցտեսություն։

Եվ Հերյանը արագ քայլերով մտավ խորհրդարան։

Մի քանի մարդիկ՝ վերարկուների օձիքը բարձրացրած և ձեռքերը գրպանները խոթած, խոսակցելով դուրս էին գալիս.— «Ֆրակցիայի ժողովում այդ մասին խոսվեց...»։ «Այդ որոշումը քվեարկվել էր սրանից մի ամիս առաջ գրեթե առանց վիճաբանության...»։ «Ես ասում եմ, դա միանգամայն սկզբունքային հարց է, նախ պրինցիպները»... «Այո, սկզբունքային, բայց պետք է աչքի առաջ ունենալ ստեղծված դրությունը և պառլամենտական ռեժիմի հրամայական պահանջները...»։

Այդ կցկտուր նախադասություններից Հերյանը ոչինչ չհասկացավ։

— Եթե այդպես սկզբունքային հարցերի մասին են խոսում,— մտածեց նա,— ուրեմն, դրությունը այնքան էլ հուսահատական չէ։

Քննեց նրանց դեմքերի արտահայտությունը։ Հանգիստ էին։ Մոտեցավ նրբանցքից անցնող մի երիտասարդի և հարց տվեց՝

— Արդյոք այսօր նիստ կա՞...

— Չէ, ֆրակցիայի ժողով է... Պառլամենտի նիստը տեղի կունենա երևի այս երեկո... Կառավարության անդամները զբաղված են... հույս ունենք... երեկոյան ազատ կլինեն...

— Քաղաքում հազար ու մի լուրեր են պտտվում,— ասաց Հերյանը,— ասում են թուրքերը...

— Պետք չէ բոլոր լուրերին հավատալ,— պատասխանեց երիտասարդը, նրա խոսքը կտրելով,— կարդացեք կուսակցության թերթը... Անշուշտ, ամեն կողմ կռիվ կա, այդ նորություն չէ... Մեր զորքերը կատարում են իրենց պարտականությունը... և բանակի հրամանատարները, որոնք քիչ առաջ զեկուցեցին ֆրակցիայի առաջ, հույս ունեն, որ պիտի կարողանան թշնամուն հետ մղել...

Նրբանցքի տախտակահատակը եզան արյունի գույն կարմիր էր ներկված և փայլփլում էր։ Այդ փայլը Հերյանի վրա ազդեց հանգստացուցիչ կերպով։ Չէ, աշխարհը դեռ ոտքի էր, դեռ քարուքանդ եղած չէր։

Դրսում կանգնած մարդկանց թիվը ավելացել էր։ Սպասում էին։ Ի՞նչ էին սպասում, իրենք էլ չգիտեին։ Լուռ, ճնշված, սառած նայվածքները հառած պարսպին։ Դրանցից մի քանիսը մոտեցան Հերյանին։

— Ի՞նչ խաբար... ի՞նչ են ասում...

— Ոչինչ։ Մի առանձին բան չասացին։ Զորքերը կռվում են... Հրամանատարությունը հույս ունի...

— Ծածկում են, չեն ասում,— վրդովված ձայնով ասաց փոքրահասակ, վազվզող աչքերով մի երիտասարդ,— խաբում են, պարզապես խաբում են...

— Ճիշտ է, էլի,— համաձայնվեց մի ուրիշը։— Ամեն կողմից փախչողներ են գալիս և սոսկալի բաներ են պատմում... Ախր, ինչո՞ւ ռուսների առաջարկները չեն ընդունում և ժողովրդի չարչարանքներին վերջ չեն տալիս...

— Ժողովուրդը անվերջ կռիվներից հոգնած է,— ավելացրեց առաջին երիտասարդը։— Լուր կա, որ զինվորները չեն ուզում կռվել... Դդ մարդիկ չեն հասկանում, որ աշխարհը փոխվել է, որ հեղափոխությունը եկել... մրրիկի նման ամեն ինչ փշրում տանում է...

Հերյանը ուշադրությամբ նայեց երիտասարդի աչքերի մեջ։

— Ժողովուրդը հասկանում է,— շարունակեց երիտասարդը,— ժողովուրդը հասկանում է, որ փրկության միակ ճանապարհը Ռուսաստանն է... ռուս ժողովուրդը մեզ օգնության ձեռք է երկարում...

Ուրիշ երիտասարդներ մոտեցան խմբին։

— Ի՞նչ է,— ասաց նա,— ուզում եք, որ ժողովուրդը բոլորովին փչանա՞...

— Մենք կռվում ենք մեր անկախության համար,— պատասխանեց Հերյանը,— ավելի լավ է պատվով մեռնել, ոչնչանալ, քան կորցնել այդ անկախությունը։

— Դա բուրժուական տեսակետ է,— ետևի շարքից առաջ գալով

առարկեց նիհար, սրված մորուքով ակնոցավոր մեկը։— Մեռնել անկախության համար՝ գեղեցիկ գաղափար է, բայց անկախություն ունենալ մեռնելու համար՝ հիմար գաղափար է...

— Չհասկացա...

— Շատ պարզ է։ Բավական չէ անկախություն ունենալ, պետք է այդ անկախությունը կարողանալ պահել։ Մերոնք այդ շատ լավ են հասկանում և այդ պատճառով էլ հույսերը դրել են դաշնակից պետությունների վրա և մանավանդ Ամերիկայի հոգատարության վրա... Իսկ ես համոզված եմ, որ Վիլսոնի խոստումները օդային խոստումներ են, Հայաստանում նավթ չկա... ո՞նց Ամերիկան մեզանով հետաքրքրվի... Ամերիկացիները նախ և առաջ վաճառականներ են... մնացածը դատարկ խոսք է...

— Իսկ Ռուսաստանը կարծո՞ւմ եք նրանից տարբեր է... Լենինը քանիցս հայտարարել է, որ Հայաստանի անկախությանը չի ուզում ձեռք տալ... Նրա ներկայացուցիչ Լեգրանը, որ այստեղ է, անդադար կրկնում է, որ մեր ազգային իրավունքները պիտի պաշտպանեն։

— Եթե այդպես է, ինչո՞ւ... ինչո՞ւ ստորագրեցին Բրեստ-Լիտովսկի դաշնագրությունը,— հարցրեց Հերյանը։

— Հեղափոխություն է... այսօր, սահմանների հարցը ոչ մի կարևորություն չունի, համաշխարհային հեղափոխությունը ամեն ինչ կփոխի... Թուրքիան կդառնա կոմունիստ, ինչպես և բոլոր մյուս երկիրները...

Եվ մարդը, սրածայր մորուքի ծայրը երկու մատներով տրորելով նկարագրեց ծնվող նոր աշխարհի հրաշալի մի պատկեր։ Պրոլետարիատի շահերը արտահայտող Ինտերնացիոնալը համաշխարհային գործերի ղեկը կվերցնի իր երկաթե ձեռքերի մեջ, կվերացնի դասակարգերը, կազատագրի աշխատավոր մասսաները, կհաստատի արդարություն և հավասարություն, կջնջի սահմանները, ավելորդ կդարձնի պետությունների գոյությունը, բանակների գոյությունը, ոստիկանության գոյությունը։

— Այո...

Մարդը խոսում էր այնքան համոզված շեշտով, որ Հերյանը չիմացավ ինչ պատասխանի։ Ո՞վ չէր ուզում ապրել գաղանությունից, անարդարությունից, թշվառությունից լվացված մի աշխարհում։ Հայաստանի բոլոր հորիզոնների ծայրերին հրդեհներ էին ճարճատում, բոլոր անկյուններից արյունի հոտ էր գալիս, բոլոր ճանապարհներից մահ էր առաջանում, և բնական է, հոգնած էին, պետք ունեին հավատի...

Հայերը հույսի կարոտ էին։

Հերյանը հեռացավ։ Նկատեց, որ ամեն տեղ, Բուլվարի և կենտրոնական փողոցի տարբեր անկյուններում մարդիկ համախմբված խոսում էին նույն հարցերի շուրջը։ Ամեն տեղ էլ, կոմունիստները այլևս առանց ծածկվելու, ուժեղ պրոպագանդա էին անում։ Խոստանում էին հաց, խաղաղություն, անկախություն։

Այդ նշան էր, որ դրությունը անհուսալի էր։ Փրկության ուրիշ միջոց չկար։ Ժողովուրդը աչքերը հառել էր կարմիր բանակի վրա։

Փողոցից վեր բարձրանալիս նա հանկարծ տեսավ իր նավը։ Կանգ առավ։ Ցոուկը դեմ տված անհայտին, նա թառել էր ժայռի վրա մեծ տրեխի նման, օտար, մենակ, ծիծաղելի։ Ի՞նչ կապ ուներ նա այդ ժայռերի հետ, այս փորված պարապության հետ, այդ մեկը մյուսի վրա մագլցող տափակ տանիքների հետ։

Եվ սակայն, նրա սիրտը, միտքը նավի հետ էր։ Երևի ինքն էլ, նավի նման օտար էր, մենակ, ծիծաղելի։ Ինքն էլ ընկել էր մղկտացող անհայտի մեջ, մեծ մի տրեխի նման։

Ճամփան շարունակեց մենախոսելով։

Մայթի վրա, մի ձեռք նրա տաբատի ծայրից բռնեց, բռնեց, քաշեց։ Նայեց։ Ոտքի շուրջը բոլորված էին ոսկրոտ, նիհար, վերքերով ծածկված բաղուկներ։ Ոտքը ուժով ետ քաշեց... և առաջը երեսի վրա վայր ընկավ մի էակ։

— Հաց, մի կտոր հաց,— հառաչեց նա։

— Հաց, հաց,— հառաչեցին ուրիշ ձայներ։

Կմախքացած, վերքոտած, անհետացած մարմիններ։ Թարախով նածկված աչքեր, արյունած շրթունքներ։

Հերյանը ետ քաշվեց, ձեռքը խոթեց գրպանը, ճզմված մի կտոր թուղթ հանեց, որի վրա միլիոն էր տպված, գցեց և առանց ետ նայելու արագ քայլերով հեռացավ։

Ման եկավ առանց նպատակի։ Չգիտեր ո՞ւր գնալ, չգիտեր ի՞նչ անել։ Ի՞նչ էր սպասում երկրին, ի՞նչ էր սպասում նավին, ի՞նչ էր սպասում իրեն։ Սիրտը լցված էր վատ նախազգացումներով։

Ման եկավ։ Ուզում էր հոգնել, ուզում էր, որ միտքը չաշխատի, ուզում էր, որ սիրտը լռի։ Շուրջը կյանքը կանգնել էր, խոնջյալի նման ներս քաշվել։ Տների դռները բացված էին պարապության վրա, պատուհանները կույր էին և դատարկ։

— Տե՜ր աստված, ի՞նչ պիտի լինի... եթե թուրքերը հասնեն մինչև Երևան...

Թարխանյան փողոցի անկյունում մի խումբ երեխաներ խաղում էին։ Կրկնապատկված ոգևորությամբ, աղաղակելով կռվում էին ոչինչ բանի համար։ Կենսախինդ, աննպատակ վազվզում էին, պատերին կպչում, գետինը թավալ գալիս, գոռում, կանչում։

Վտանգի ժամանակ կանայք ծաղկում են և երեխաները գերագրգռվում։

Որոշեց նորից գնալ քաղաքի կենտրոնը։ Ուզեց գնալ խորհրդարանի կողմը, իջնել մինչև շուկա։ Գուցե նոր լուրեր ստանա կամ մեկին հանդիպի։

— Ներողություն,— նրան դիմեց մեկը,— կարո՞ղ եք ասել ժամը քանիսն է...

— Ժամը երկուսին հինգ պակաս,— պատասխանեց Հերյանը ժամացույցին նայելուց հետո։

— Ժամացույցս կանգ է առել... արևն էլ փակ է։ Մարդ չի իմանում կեսօր է, թե երեկո։ Ամեն բան խառնվել է... Շնորհակալ եմ։

Մարդը աչքերը բացախփեց և նորից մտավ խանութ։

Հազիվ մի քանի քայլ էր արել, կանգ առավ։ Այդ նույն վայրկյանին, կանգ առան նաև փողոցից անցնողները։ Գլուխները դրեցին ճակատի վրա և ուշադրությամբ նայեցին վեր, երկնքի արևմտյան կողմը։

Ծառերի վրայից մեծ խմբով ագռավներ բարձրացան և աղմկելով թռան անորոշ ուղղությամբ։

Հերյանը նայվածքը սրեց և նույնպես նայեց վեր։ Կասկած չկար, սավառնակ էր։ Թեպետ միայն մեքենայի ձայնն էր լսվում, երկնքի ամբողջ տարածության վրա։

Փողոցի մարդիկ մտահոգված վազեցին գիմացի կողմը և ձեռքերը վեր կարկառած ցույց տվեցին երկնքում շարժվող կետը, որը գնալով մեծացավ և կամաց շրջելով մոտեցավ քաղաքի կենտրոնին։

Մարդիկ նորից վազեցին փողոցի այս կողմը և խմբվեցին գայլ տեսած ոչխարների նման։ Դղրդոցը սաստկացավ և նվաճեց ամբողջ երկնակամարը։ Տներից հետաքրքրվողների խմբեր դուրս եկան։ Պատուհանների առաջ կանայք և երեխաներ հավաքվեցին։

— Աերոպլան է...

Դիմացի կարմիր ներկված տան պատշգամբի վրա մի մարդ դուրս եկավ, ակնոցները ուղղեց, վեր նայեց, ապա ձեռքը ճաղատ գլխին քսեց և այդպես մնաց։ Փողոցի բազմությունը մտահոգված հայացքը ուղղեց այդ մարդու վրա, որը նույնպես նայեց վեր։ Կարծես նրա դեմքի արտահայ-

տուֆյունը։ Մարդը նորից ձեռքը քսեց ճակատին և արագ ներս մտավ։

Սավառնակը, մի բիպլան, մի քանի վայրկյան անորոշ թափառեց, ապա քիթը վայր իջեցրեց և պտույտ գալով անհետացավ տանիքների հետևում։

Բաղմությունը վազեց վար։

Հերյանը, ընդհանուր այդ շարժումից տարված, նույնպես արագացրեց քայլերը, բայց շուտով միտքը փոխեց, զսպեց անհամբերությունը, հանգիստ շարժումով գրպանից ծխամորճը դուրս հանեց, լցրեց ծխախոտով, վառեց, ծուխը մի քանի անգամ ներս քաշեց և ծխամորճը ատամների արանքում պինդ սեղմած, քայլեց առանց վազելու... դեպի խորհրդարան։

Ագռավները վերադարձել և ծառերի վրա խմբված կռկռում էին։

...Ուշ գիշեր էր, երբ նա ճանապարհ ընկավ նավ վերադառնալու համար։

Մութ էր։ Ցուրտ էր նրա սրտի վրա և գլուխը ծանր էր, ասես լցված լիներ կապարով։

Աշխատում էր շտապ քայլել, որպեսզի ջերմություն տա մարմնին, բայց ոտքերը դժվարությամբ էին շարժվում, գետինը մագնիսի նման նրան քաշում էր, բռնում։

Օդը հղի էր ձյունով։

Քայլում էր աչքերը հառած փողոցի վերը վառված արցունքոտ մի լամպարի վրա։ Այդ լույսի հետևում հիվանդանոցից հետո սկսվում էր դատարկությունը, պարտեզները սևանում էին և խավարը կպչում էր ժայռերին։ Քանաքեռի բարձունքը պետք էր բարձրանար՝ կույրի նման ոտքերը զգույշ գետինը քսելով և ձեռքերը պարապի մեջ շարժելով։

Բայց հարցը դրանում չէր։

Ահ, հարցը դրանում չէր... Մութը բռունցքներով զարկեց նրա կրծքին և գլուխը պտտվեց։

Հարցը նրանում էր, որ Կարսը ընկել էր։

Այդ սարսափելի լուրը բերել էր քաղաքի վրա աղմկող սավառնակը։ Կարսը, հսկայական այդ բերդը, ահագին պաշարներով, մեծաքանակ ռազմամթերքով, անառելի ենթադրված ամրությունով ընկել էր թուրքերի ձեռքը։

Կարսը ընկել էր։ Ուրե՞մն։ Ամեն բան վերջացել էր։ Ուրե՞մն...

Ահ, լավ էր, որ գիշեր էր, որ խավար էր, որ ցուրտ էր։ Եվ Հերյանը քիչ էր մնացել բարձրաձայն գոռա, աղաղակի, հեկեկա։ Արյունը երեսին էր խուժել... ամաչում էր։

Ավագանորդը պատմել էր դժբախտության բոլոր մանրամասնությունները։ Զինվորները խուճապի էին մատնվել։ Սպաների հրամանները մնացել էին անկատար։ Նրանցից մեկը՝ Մազմանյանը ատրճանակը հանել էր և զինվորների առաջ ինքնասպանություն գործել...

Միակ լուսավոր կետը ինքնասպան հրամանատարի դիակն էր...

Այո, լավ էր մեռնել, լավ էր...

Չեորը շտապ գրպանից դուրս հանեց։

— Նավը,— ասաց նա,— նավը պետք չէ մոռանամ... Դեռ բոլոր հույսերը կորած չեն, դեռ ո՞վ է իմանում ինչեր կարող են պատահել...

Քայլերը արագացրեց։ Վախենում էր ինքն իրենից։

Փախչում էր ինքն իրենից։

Խորհրդարանի նիստը չէր կարողանում մոռանալ։ Ներս մտնելուց առաջ թափառել էր շենքի շուրջը։ Ամբողջ օրը ոչինչ չէր կերել... Բայց սովածություն էլ չէր զգում։ Նայել էր գունաթափ երեսներով, լռակյաց և տխուր մարդկանց երթևեկին։ Մեկը մյուսի հետևից գալիս էին և գլուխը վար գցած, առանց ուրիշներին նայելու մտնում խորհրդարանից ներս և անհետանում։ Կարծես մեռել էր անփոխարինելի մեկը։ Կարծես ներսը հսկայական, ամբողջ դահլիճը լցնող մի դիակ էր պառկած։ Եվ մարդիկ անցնում էին անձայն, խուլ քայլերով, որպեսզի նրա հանգիստը չխանգարվի, որպեսզի նա հանկարծ չարթնանա և վիհը ընկած քամու նման չհառաչի։

Եվ այդ մարդիկ շարժել էին նրա գթությունը, որովհետև նրանք փոքր էին և խեղճ...

Հետո, ուրիշների հետ միասին, մտել էր ներս և բազմել ժողովրդին հատկացված նստարաններից մեկի վրա։

Նստել էր և լայնացած աչքերով նայել։

Այդ համեստ գավառական ակումբի թատերական դահլիճը՝ դեռ կանգուն բեմով, երկու օթյակներով և նախնական կարգ ու սարքով, իրերի բերումով դարձել էր ամբողջ մի ժողովրդի ապրած ողբերգության ճակատագրական վայրը։

Կարծես դահլիճի անցյալ կյանքի ստվերները դեռ շարունակում էին ապրել ներկայումս։ Կարծես ահա բեմ պիտի դուրս գային սիրողներ և անարվեստ շարժուձևերով, չափազանցված ու անբնական առոգանությունով պիտի խաղային մի վսեմ, բարդ դասական գլուխգործոց։

Այդ տպավորությունը ավելի էր զորացել, երբ նա տեսել էր շվա-

ված շարժումներով ներս մտնող պատգամավորներին, որոնց ամեն օր հանդիպում էր փողոցներում...

Երբ, նախագահը ներս մտավ, նստեց, նայեց առաջը դրված թղթերին և զանգը տվեց — ակումբին պատկանող ճերմակ մետաղե մի զանգ — դահլիճը հանկարծ լցվեց ծանր, անտեսանելի ներկայություններով։

Խորը լռության մեջ նախարարներից մեկը խոսեց.

«Պարոնայք պատգամավորներ, այսօր կեսօրից հետո լուր ստացվեց Կարսի անկման մասին... Ցավով իմացանք, որ թուրք ասկյարները քաղաք են մտել գրեթե առանց գնդակ արձակելու... Զորավար Փիրումյանը, նախարար Բաբալյանը, մոտ 1500 հայ զինվորներ և 150 հայ սպաներ գերի են ընկել և ուղարկվել Էրզրում... Կարսի մեջ թուրքերը թույլ են տվել անկարգություններ, սպանություններ և կողոպուտ։ Ըստ առաջին տեղեկությունների թուրքերը սպանել են մոտ 3500 հոգի... Ազգաբնակության մնացած մասը փախչում է դեպի Ալեքսանդրապոլ, Երևան կամ Թիֆլիս... Պարտք եմ համարում հիշել այստեղ մի սրտառուչ դեպք... քաջ գնդապետ Մազմանյանը հուսահատությունից մղված, հենց տեղնուտեղը ինքնասպան է եղել»...

Այդ վայրկյանին՝ այդ ամենքը տեսան, գնդապետ Մազմանյանի ստվերը համր քայլերով, ծակված, արյունոտված գլխով անցավ նստարանների միջից և դահլիճի խորքում կանգ առավ։

«Կառավարությունը, աչքի առաջ ունենալով ստեղծված դրությունը, որոշել է ամեն գնով ամրացնել ճակատը, բարձր պահել ժողովրդի տրամադրությունը և նոր եռանդ մտցնել զորքերի մեջ... Միևնույն ժամանակ որոշել է բանակցություն սկսել Տաճկաստանի հետ զինադադարի և խաղաղության մասին»...

Այդ վայրկյանին՝ ամենքը այդ տեսան, գլուխը հակված գնդապետ Մազմանյանը երերաց և մարմնի ամբողջ ծանրությամբ վայր ընկավ։

Բոլոր ներկաները սփրթնեցին։

— Խնդրում եմ... ուշադրություն,— ասաց նախագահը և ճերմակ մետաղե զանգը հնչեցրեց։

...Վախենում էր ինքը իրենից, փախչում էր ինքը իրենից...

12

Հեռվից, ծովային հրամանատար Թումանյանը նմանվում էր փախստականների կառքից վայր ընկած մի մեծ կապոցի։ Ոտքերին հագել էր ռուսական թաղիքե բարձր ոտնամաններ։ Ոչխարի մորթի հաստ

բաճկոնի պատճառով վերարկուն այլանդակ կերպով ուռել էր։ Վիզը և ականջները փաթաթված էին անկարելի փողապահներով։ Կարտուզը իջել էր մինչև հոնքերը և նրա ամբողջ դեմքից երևում էին միայն քթի կարմրած ծայրը և միամիտ, երեխայական աչքերը։

Շարժվելիս նմանվում էր արջի։

Երբ մի բան ասելու համար բերանը բաց էր անում, նախ ահագին շոգի էր դուրս գալիս, կարծես կապոցի մեջ փուռ էր գետեղել, ապա հնչում էր ձայնը, զրնգում ապակու նման և վայրկենապես անհետանում քսան և հինգ աստիճան ցրտից վար ցրտի մետաղե ատամների տակ։

Ելենովկան մի մետր հաստությամբ ձյունե մուշտակ էր հագել։

Սառնամանիքը հագիվ երևացող պատուհանների վրա լուության ծաղիկներ էր նկաթել։ Միակ կյանքի նշանը ծխնելույզներն էին, որոնց կատաբին սև ամպեր էին ոլորվում և մերթ ընդ մերթ պայթող ռումբերը, որոնք քնկնում էին լերկ ափի վրա։ Դրանք կարճ վայրկյանի մեջ խեղդվելով պեղում էին ձյունը և հողերը։

Շրջակա ճերմակ բարձրությունները քնկել էին լիճը, դանդաղ լողում էին։

— Նորից սկսեցին,— ասում էր Մարգարը, մտահոգ նայելով պայթող ռումբերի կողմը։

— Շանորդիք, խաղ են անում...

Թումանյանը ուշադրությամբ զննում էր կղզու ետևի ափի ժայռերը, ուր կանգնած էր կարմիր բանակը։ Ապա, կրկնակոշիկները քարշ տալով ափից քիչ հեռանում էր, հեռադիտակը ման էր ածում խրճիթների վրա, տեսնելու համար, թե... լույսի նշաններ չե՞ն անում կոմունիստ զորքերին...

— Համենայն դեպս,— հրամայում էր նա,— մեքենան ճնշման տակ պահեք։

— Լսում եմ։ Մեքենան վառ է,— պատասխանում էր զվարճացած Սուրենը։

Ապստամբած կոմունիստները կղզու վրա չէին կրակում։ Չէին կրակում նաև գյուղի վրա։ Կրակում էին միայն անմարդաբնակ ափի կողմը, իրենց ներկայությունը զգալի դարձնելու համար։

Թումանյանը այդ գիտեր։ Ինքն էլ կրակին պատասխանում էր, պարզապես ցույց տալու համար, որ պատրաստ են դիմադրելու։

Նավը խորտակելու փորձերը մնացել էին ապարդյուն։ Թումանյա-

նը ուսումնասիրել էր ամբողջ վայրը և ռազմագիտական դիրքերը օգտագործում էր շատ խելացի կերպով։

«Աշոտ Երկաթը» թաքնվում էր կղզու բարձրությունների ետև և կրակում։ Դիրքը անգադար փոխում էր։ Վազում էր աջ, պտույտ գալիս և սրընթաց նետվում մի ուրիշ տեղ։ Երբեմն, նրանց հանգիստը խանգարելու համար, կեսգիշերին, նավը հեռանում էր դիմացի տափակ ափի ուղղությամբ, պատսպարվում երկու մեծ ժայռերի միջև և ռումբերի տարափ թափում։ Երբ նրանք գլխի էին ընկնում, ինքն արդեն հեռու էր։

Կարմիրներին հայտնի էր նավի հրամանատարի անունը և նրա դեմ լցված էին ոխով։

Այդ մասին և առհասարակ դաշնակների արարքների մասին նրանք տեղեկություն էին ստանում գյուղացիներից։

Թումանյանի միակ բաբեկամուհին Անաստասիան էր, որը Եգոր Կոժուխին անունով մի ռուս գյուղացու աղջիկն էր։ Նոր ծեծված հարդի գույն մազեր ուներ և մեծ լճի գույն աչքեր, որոնց մեջ տխրությունը և ներքին անբավականությունը պսպղուն կայծեր էին ման ածում։ Միջահասակ, կոլոր ցցված կրծքերով և անհագ շրթներով, գեղեցիկ և մտատանջ աղջիկ էր։

Մի քանի տարի ապրել էր Բաքվում, կաշվի վաճառական իր հորեղբոր մոտ և հաճախել միջնակարգ դպրոցը, որը գեպքերի պատճառով չէր կարողացել ավարտել։ Չէր սիրում գյուղը։ Չէր սիրում խիստ, մոլեռանդ կրոնապաշտ հորը։

— Ես խեղդվում եմ այստեղ... Հասկանո՞ւմ ես, Միշա, ես խեղդվում եմ այստեղ...

Եգոր Կոժուխինը փոքրահասակ, պնդակազմ, երկար մորուքով, կարճ ճակատով, ձեռքերի բթամատը ետ ծռված մարդ էր։ Նրա համար բոլոր մարդիկ մեղավորներ էին, որոնք պարտավոր էին ենթարկվել աստվածաշնչական անողոք հարվածներին։ Փոքրիկ, ասեղի նման նրա աչքերը սառն էին և ձայնը՝ չոր։ Առարկություններ չէր ընդունում։ Երբ նա բարկանում էր, տան պատերը շարժ էին գալիս։ Կինը՝ նիհար և խեղճ մի արարած, վախից մտնում էր խոհանոց և, գոռան ետև կուչ եկած, ամբողջ մարմնով դողում էր։

Անաստասիան նրա միակ աղջիկն էր։ Նրան շատ էր սիրում և այդ պատճառով էլ չարչարում էր։ Երբեմն, նայում էր նրա վրա և սիրտը լցվում էր գուրգուրանքով, աչքերը ավելի էին փոքրանում և բեղերի տակ շրթները թուլանում էին։ Այդ վայրկյաններին, նա հոնքերը վայր էր առնում, երեսի վրա ժպիտ ձևացնում և աղջկան մոտենալով պատ-

բաստվում էր սիրալիր մի բան ասելու։ Բայց, բերանը դեռ չբացված, միտքը փոխում էր, մարդկային սերը թուլություն է, մտածում էր նա, մարդկային սերը գողություն է... Մենք գողանում ենք այն, ինչ պատկանում է գերագույնին։

Եվ աչքերի արտահայտությունը ամբողջապես փոխվում էր, բիբերը սառչում էին, հոնքերը կուտակվում և ձայնը խստանում։

— Ինչի՞ ես այդ ժապավենը կապել մազերիդ... Այսօր շաբաթ չէ և ոչ էլ դիմակավոր պարահանդես... Հազար անգամ ասել եմ... Այս գրքերը չեմ ուզում իմ տանը լինեն, չեմ ուզում... Ուժեղ մարդը մի գրքի մարդ է... Կարդա, այն, ինչ կարդում եմ ես, ինչ կարդում է ամեն մի իսկական հավատացյալ... Լսո՞ւմ ես...

Եվ հաստ մատները մորուքի մեջ խաղացնելով, հեռանում էր։

Անաստասիան երևի վաղուց տնից փախած կլիներ, եթե Թումանյանին չհանդիպեր։ Ափի վրա կանգնած, նա օրերով դիտել էր նիհար, մտազբաղ, երիտասարդ ծովային սպայի աշխատանքները։ Զայրացել էր, որ գյուղացիները նրա մասին հեգնանքով էին խոսում։ Սիրելի էր նրա լրջությունը, նրա համառությունը, նրա մենակությունը։ Երեխայական աչքերը և աղքատությունը։ Եվ այն, որ իր կողքով անցնելիս նա քաղաքավարի բարև էր տալիս և աչքերը վար առնում։ Եվ այն, որ նրա վերարկուն փոխել էր գույնը և կոշիկները մաշված էին և հին։ Աչքերի լույսը, ձայնի թրթռացումը։ Անաստասիան նրան զգացել էր մոտիկ, որովհետև ինքն էլ նրա նման մենակ էր այս վայրերում և դժբախտ։

Սկսել էր տանջվել, գիշերները չքնել։

Մի օր, երեկոյան, երբ հայրը տանը չէր, նա տների ետևից անցնելով գնացել կանգնել էր Թումանյանի սենյակի դռան առաջ։

— Բարի երեկո, պարոն հրամանատար,— բարևել էր նա ամաչկոտ ժպիտը երեսին։

— Բարի երեկո, օրիորդ,— պատասխանել էր Թումանյանը բոլորովին անակնկալի եկած։

Այդպես, մի քանի վայրկյան մնացել էին կանգնած։

— Ձեզ հյուր եմ եկել։ Ուզո՞ւմ եք,— ասել էր Անաստասիան։

Թումանյանը շփոթվել էր, կարմրել և նրան հրավիրել ներս։

— Ինչպես տեսնում եք, սենյակս պատերազմական վիճակում է,— կմկմացել էր նա։

— Տեսնում եմ, զինվորի սենյակ է...

Անաստասիան նստել էր անկողնի ծայրին և վառվռուն աչքերով նայել նրան։ Հետո, առանց խոսելու, սենյակը կարգի էր բերել, ուղղել անկողինը, շտկել թանաք թափած սեղանը և փախել...

— Ես ձեզ մոտ նորից կգամ...

Երկու օր հետո վերադարձել էր, մի պնակ և մի խոզանակ գոգնոցի տակ թաքցրած։

— Միխայիլ Ավակիմովիչ, չեմ կարողանում ձեզ այդպես տեսնել,— բացականչել էր նա։— Նայում եմ, ամեն օր նայում եմ և սիրտս փշուր-փշուր է լինում...

Մոտեցել էր սպային այնքան մոտ, որ շունչը խառնվել էր նրա շնչին, մազերը կպել էր նրա երեսին և ձեռքերը փաթաթվել էին նրա վզին։ Թավալ էին եկել անկողնի վրա և սկսվել էր սիրո խենթ և երջանիկ մի շրջան։

Այդ օրվանից ի վեր նավի շինությունը առաջացել էր անսպասելի արագությամբ։ Անաստասիայի աչքերը հետևել էին նրա ամեն մի քայլին, ամեն մի շարժումին և նրա սիրտը լցվել էր մեծ և կապույտ մի հույզով։

Եգոր Կոժուխինը նկատել էր սպայի և իր աղջկա մոտիկությունը։ Եվ տանը սարսափելի կռիվներ էին տեղի ունեցել։ Մոլեռանդ մալականը դիմել էր ամենախիստ միջոցների և նույնիսկ փորձել էր նրան ծեծել։

— Հա՛յր, Եգոր Մարտինիչ,— գոռացել էր Անաստասիան,— ես քեզ ասում եմ, դու ինձ հանգիստ թող... Սրտիս չես կարող հրամայել... Լսո՞ւմ ես, հա՛յր... Կգնամ, ընդմիշտ կգնամ...

Մայրը տերևի նման դողալով ընկել էր նրա ոտքերին և՝

— Խփի՛ր, ինձ խփի՛ր, բայց նրան ձեռք մի՛ տա... Մի՛ թող, որ աղջիկս գնա... մի՛ սպանիր, բատուշկա, մի՛ սպանիր...

Եգոր Մարտինիչը՝ ձեռքում բռնած գլխի մազերի խոզանակը ուժով գցել էր գետին, մտել էր սենյակը, դուռը կողպել, և երեք օր, առանց պատասխանելու անգամ իր լավագույն բարեկամների հորդորանքներին, պառկել էր անկողնի մեջ և քնել։ Երրորդ օրը դուրս էր եկել՝ մազերը և մորուքը լավ սանրված և ամենքից ներողություն էր խնդրել։

— Այդպես է աստծո կամքը,— ասել էր նա հնազանդ ձայնով,— այդպես է հրամայում ամենակալը...

Եվ այդ մասին այլևս չէր խոսել։

Երբեմն, ուշ ժամերին, մինչ դուրսը մրրիկը վայում էր և լճի ալիքները ծեծում էին ափը, Անաստասիան շալի մեջ փաթաթված, այտերը կարմրած, աչքերը վառ, գալիս էր Թումանյանի մոտ, սիրում նրան և պատմում։

— Լսիր, Միշենկա... Դու գիտես, ինձանից ամեն ինչ ծածկում են... Սակայն, մայրս կին է... գաղտնիք չի կարողանում պահել... ան-

գաղար ականջիս փսփսում է... գաղտնի տեղեկություններ են ստացվում թե՛ Սուխոյ Ֆանտանի և թե՛ Դիլիջանի կողմից... Հայերի գործերը շատ վատ են գնում... Ասում էիր եվրոպական պետությունները կօգնեն. տեսնո՞ւմ ես՝ չեն օգնում... Ախ, Միշենկա, կարմիրները պիտի գան, անպատճառ պիտի գան...

— Հիմար բաներ ես խոսում...

— Ահ, չէ, մի՛ ասա, որ հիմար բաներ են։ Մերոնք շատ հաստատ տեղեկություններ ունեն... Ասեմ քեզ պարզ... մերոնք կարմիրների հետ հարաբերության մեջ են... նշաններ են անում...

— Նշանները... ինչպե՞ս...

— Մայրս ասում է ճրագներ են վառում։ Պատուհանները լուսավորում են կամ տան անկյունում լամպեր են կախում... Տեղեկություններ են տալիս անցնող զորքերի մասին... քո նավի շարժումների մասին... Երբ լսում եմ, Միշենկա, սիրտս դող է ընկնում... Քեզ կարող են սպանել, հոգիս, քեզ կարող են սպանել...

Եվ շունչը կտրված ընկնում էր նրա գիրկը և դողալով համբուրում նրան։

Թումանյանը նրան հանգստացնում էր... և մյուս օրը միջոցներ ձեռք առնում։ Գիշերը զինվորները գնդակի հարվածով փշրում էին դուրը կախված բոլոր ճրագները։ Հրաման էին տալիս պատուհանները չլուսավորել։ Օրենքը խախտողներին սպառնում էին բանտարկել։

Մի քանի անգամ մուժիկներին հավաքել էին և նրանց բացատրել՝

— Դուք կարծում եք,— ասել էր Թումանյանը,— որ կարմիրները կգան և ձեզ ազատություն և հող կտան... Իսկ ես ասում եմ՝ եթե գան եղած չեղածը կտանեն...

Մուժիկները լսում էին և հոնքերը կուտակած լռում։

Հրետանին շարունակում էր ափը պեղել։

— Խնդրում եմ,— ասաց Սուրենը, թեյի բաժակը Թումանյանին երկարելով,— չայը տաք-տաք խմենք, հետո կտեսնենք...

— Անիրավները կատաղել են, ոումբ չեն խնայում...

— Լսեցի՞ր, Նոր Բայազետից մարդ է եկել, ասում է կառավարությունը ուզում է թուրքերի հետ զինադադար կնքել...

Այդ վայրկյանին, ջուրը աղմուկով ժայթքեց վեր և նավը ուժով ցնցվեց։

— Պատրա՛ստ,— գոռաց Թումանյանը և ցատկեց նավի վրա։

Մեքենան շարժման մեջ մտավ և նավը դղրդաց։

— Ղեկը աջ... ձախ... ամբողջ արագությամբ...

Պարզ էր։ Ուշում էին նավը խորտակել։ Ռումբերի տարափ էր թափվում։ Գյուղի բնակիչները սարսափել էին։ Կղզում գտնվողները կպչում էին վանքի սյուներին, վախեցած իրենց աչքերը հառում դեպի հեռուն։ Տեղ-տեղ, պատուհանների ապակիները զրնգալով վայր էին թափվում և վանքի հին եկեղեցու տանիքը կամաց ճեղքվում էր։

Նավը հասավ կղզու մոտերը և երկու ժայռերի միջև պատսպարվելով ապասեց։ Մի վայրկյան ամեն ինչ լռեց։

Հեռվից հրաբանների համազարկ լսվեց։ Տրաքտրաքեցին գնդացիրները։ Լիճը ընդունեց ոչդ ձայները, մեծացրեց նրանց և արձագանքելով նետեց մեկ ափից մյուսը։

— Սրևի մեր զորքի հետ կռիվ է սկսվել,— ասաց Մարգարը, թրնգանոթի մի ռումբ զետեղելով։

— Պատրա՛ստ...

Թումանյանը հեռադիտակը ուղղեց դեպի դիմացի ժայռերը և ուշադրությամբ նայեց։ Հեռվից զենքերի ձայները գնալով սաստկանում էին։

Նավից քիչ հեռու մի նոր ռումբ պայթեց։

— Կրա՛կ...

Ռումբը դուրս նետվեց և նավը ցնցվելով նետ սահեց։

— Նորից կրա՛կ... կրա՛կ... Մեքենան... ա՛ջ, ե՛տ, առա՛ջ... ամենայն արագությամբ... ստո՛պ... կրա՛կ...

Նավը անդադար տեղափոխվում էր և կրակում։

Լիճը զրնգում ու դղրդում էր։ Կարծես լեռներից հինավուրց քարեր էին իջել և աղմկելով կուլում էին։

Կղզու վարի եկեղեցում, ռումբերի պայթյուններից ցնցվող մոմերով լուսավորված պատկերների առաջ ծնկաչոք աղոթում էին մի վարդապետ և մի աբեղա։

Ամեն անգամ, որ օդը թնդում էր և թվում էր, որ ահա գմբեթը հառալանքով վայր պիտի թափվի, նրանց գունատած երեսներից սարսուռ էր անցնում, ծնոտը դողում էր և նրանց լայնացած սրտերից բոցի նման աղոթքի խոսքեր էին բարձրանում։

— Տե՛ր ողորմյա, տե՛ր ողորմյա...

Նվ տերը պատասխանում էր իր հսկայական ոտքերը գետին զարնելով, բարկացած բռունցքները կոփելով պատերին, սյուներին, գմբեթներին։ Գլուխը ետ էր գցում, բերանը լայն բաց անում, երկար մորուքը տալիս քամիներին և ամբողջ ուժով գոռում։ Նվ երբ գոռում էր, մոտակա ժայռերը զրնգում էին, ափերը շարժվում էին, և լիճը հուսահատ աղաղակներ էր արձակում։

Ձեռքերը վեր կարկառած վարդապետի և աբեղայի ճակատների վրայից քրտինքի սառը կաթիլներ էին վայր ընկնում, և նրանց ձեռքերը դողդողում էին չորացած տերևների նման։

Իսկ վանքի ներքին մի խցից, որտեղ տասներկու տարիներե ի վեր փակված էր խենթացած Ավետիս աբեղան, խուլ հոհոցի ձայն էր լսվում։ Որոշ ժամերին խուցի դուռը կամաց բացվում էր, և նա դուրս էր գալիս։ Մեծ, բոբիկ ոտքերով, պատռած վերմակի կտոր ուսերին գցած, այտերը չորացած, աչքերը վառ, երկար մորուքը և մազերը շփոթված, շրթները անդադար կրծելուց արյունած, ոսկրոտ ձեռքերի սև եղունգները երկարած, նա մտնում էր... եկեղեցի։ Դռան առաջ մի քանի վայրկյան կանգ էր առնում, ապա, ոտքի ծայրերի վրա առաջանալով՝ գալիս էր սեղանի առաջ, ամբողջ մարմնով փովում և կենդանու նման մլավում։

Վարդապետը և աբեղան սարսափած աչքերով նայում էին մեկ մեկի։

Գմբեթը դղրդում էր։ Մի խշշոց զնգալով վայր էր ընկնում։ Կախված նկարները երևրում էին։

— Տե՛ր ողորմյա, տե՛ր ողորմյա...

Այնտեղ, գյուղում, տանիքի վրա կանգնած, վզի փաթաթած շալը երկու ձեռքերով բռնած Անաստասիան անձկությամբ լցված աչքերով դիտում էր նավի ամեն մի շարժումը։

13

Հերյանը ամեն օր գնում էր հիվանդանոց։ Տիկին Վարդուհին մենակ էր և բոլորովին վհատված։ Միրանյանի առողջությունը օրեցօր վատթարանում էր։

Մահճակալներով լցված վերի հարկի սենյակներից մեկում պառկած, նա հուսահատ աչքերով նայում էր շուրջը և անդադար պահանջում, որ իրեն տուն ուղարկեն։ Սենյակում քրտինքի, առաջացած վերքերի և դեղորայքի հոտ էր գալիս, և հիվանդների անդադրում հառաչները չէին թողնում, որ նա հանգիստ քնի։ Օրիորդ Բուդաղյանի աջակցությամբ Հերյանը կարողացավ Միրանյանին տեղափոխել հարևան սենյակը, որի միակ բնակիչ հազարապետը մեռել էր...

Հերյանը և տիկին Միրանյանը հիվանդին կարողանում էին տեսնել միայն որոշ ժամերին, ընդհանրապես սրսկումներից հետո, երբ նա իրեն զգում էր քիչ ավելի հանգիստ։

Այդ վայրկյաններին, նա իր դեղնած ճակատը վեր էր տնկում, չորացած շրթները թրջում, աչքերը կես բաց անում և տնքում։

— Վարյա ջան,— ասում էր նա,— հիմա ինձ լավ եմ զգում, իսկի մի անհանգստանա...

— Գիտեմ... լավանում ես... շուտով տուն կգնանք...

Նա այդ ասում էր և արցունքները կուլ տալով կուչ գալիս։

— Հա, կգնանք տուն,— ուրախանում էր հիվանդը։— Գիտես, շատ ծարավ ունեմ երաժշտություն լսելու... Բախ, Սկարլատտի... Ինչ հիմարություն է մեկ մեկի կոտորել... Կյանքը էնքան կարճ է, էնքան կարճ... էնքան լավ բաներ կան՝ երաժշտություն, բանաստեղծություն, ծաղիկներ, Մոցարտ...

Շունչը կտրվում էր։

— Բաբկեն ջան...

Հիվանդը աչքերը փակում էր և լռում։

Երբեմն անկապակից խոսքեր էր մռմռում։ Հանկարծ բարկանում էր, հրամաններ տալիս, զառանցում։ Տիկինը ձեռքերը սեղմում էր կրծքին և վշտից օրոր գալիս։

— Չեմ հասկանում,— գանգատվում էր հիվանդը,— ասես ներսս կրակ է ման գալիս, աղիքներս այրվում են։ Անիրավները ինձ հանգիստ չեն տալիս, գալիս են ու գալիս են...

— Ովքե՞ր, Բաբկեն ջան, ովքե՞ր են գալիս...

Չէր պատասխանում։ Աչքերը հառում էր ձեղունին և լռում։ Միտքը և ուշքը խարխափում էին այն աշխարհի սահմաններից դուրս, անհաղորդելիի մաս էին դառնում։

Տիկինը այդ նախազգում էր և հարցը չէր կրկնում։ Գիտեր, որ անխուսափելին մոտենում է, բայց չէր ուզում հավատալ, ուզում էր հուսալ։ Կարելի՞ բան էր, տեր աստված, կարելի՞ բան էր... Ուժ էր գործադրում չուշաթափվելու համար։

Հերյանը սենյակից դուրս էր գնում և նրանց թողնում մենակ։ Ի՞նչ ասել, ի՞նչ անել։ Քայլում էր դրսի պատշգամբում և սպասում կնոջը։ Գիտեր, որ փրկության ոչ մի հույս չկա։ Գնդակը չէին կարողացել հանել, ներքին թունավորումը արդեն սկսել էր, և հիվանդը ապրում էր սրսկումների ուժով։

Այդ տեղեկությունները նա առնում էր օրիորդ Բուդաղյանից։ Երբեմն օրիորդը մտնում էր սենյակ, ապա շտապ դուրս գալիս և Հերյանին ուղարկում ներս։

— Տիկինը նորից գույնը գցել է, փորձեք նրան տուն տանել...

Հերյանը ներս էր վազում և հանդիպում հիվանդի մտահոգված աչքերին։ Միրանյանը լայնացած նայվածքը հառում էր նրա վրա և իր գնդի մասին տեղեկությունները ուզում։ Հերյանը հնարովի պատաս-

խաններ էր տալիս չհակաճառելու համար։ Թուրքերը ետ էին մղված բոլոր ճակատների վրա և խաղաղությունը օրերի խնդիր էր։

— Ինչ լավ, ինչ լավ,—ուրախանում էր Հիվանդը և նորից ընկնում մոռացության մեջ։

Հերյանը կնոջը նշան էր անում դուրս գնալ։ Նա մերժում էր։

— Քիչ էլ, քիչ էլ մնամ...

Հերյանը նրա թևից բռնում էր և դուրս տանում։ Հազիվ դուրս էր գալիս պատշգամբ։ Կինը թաշկինակով բերանը ծածկում էր և հեծկլլտում։ Չէր ուզում հիվանդանոցից հեռանալ։ Օրիորդ Բուդաղյանը միջամտում էր և կտրուկ կերպով հայտնում, որ այցելության ժամը վերջացած է և հիվանդին պետք է թողնել մենակ։

Օրիորդի ներկայությունը բարեբախտություն էր։ Նա միակ անձնավորությունն էր, որին լսում էր։

Ի՞նչ հրաշալի արարած էր օրիորդ Բուդաղյանը։

Հիվանդանոցը նման էր երկրին։ Մարդկային ուժերի բնականոն սահմանները անցնող գեպքերով խառնաշփոթված։ Գործողությունների սեղանները մի վայրկյան պարապ չէին մնում։ Հուղարկավորության կառքերը անդադրում շարժման մեջ էին։ Հիվանդները տառապում էին։ Դեղորայք և թմրեցուցիչներ չկային։ Բժիշկները և գթության քույրերը դեղևուն քայլերով, դունաթափ՝ անդադար վազվզում էին։ Գրսից նոր վիրավորվածներ էին բերում և չգիտեին ինչ անել...

Ինչպե՞ս էր կարողանում այդ նուրբ աղջիկը այդքան աշխատանքի տակալ։ Հաճախ սխալ են լինում առաջին տպավորությունները։ Ենջույքի գիշերը, մոտը նստած, շքեղ, հասնող պտուղի նման այդ աղջկա մեջ Հերյանը կենդանական բնազդով միայն կինն էր նախազգացել։ Նրա մեջ խոսել էր արուն՝ ռունգները լայնացած, գերագրգռված ձայնով խրխնջացող ձին։ Երազել էր նրա մարմնի, նրա շրթների մոտիկությունը, նրա ցցվող կրծքերի շոյանքը։ Մինչդեռ ահա... կյանքը դարձրել էր էջը և նույն այդ արարածը հագնվել էր հոգիով։ Նրա դեմքի վրայից անհետացել էին բարեկեցիկ տան աղջկա քմահաճ, ինքնահավան արտահայտությունը, գրականության և գիտության փշրանքների դրոշմած ինքնավստահությունը և ունայնությունը, Պետերբուրգից բերած կեղծիքի հետքերը և զարգացած մտքի բռնազբոսիկ այն ցուցադրումը, որ կանանց մոտ միշտ էլ հրապուրանքի խորամանկ մի միջոց է։

Հիմա հագնվել էր Հոգիով։

Լվացվել էր տառապանքի և արյունի մեջ։ Խորացել էր, գտել էր իր էության ուրիշ մի երեսը։

Հերյանը ուշադրությամբ դիտում էր նրա ամեն մի շարժումը։ Տեղի անտեղի, նրան կանգնեցնում էր և հարցեր տալիս։ Նրա հետ խոսելիս իր դեմքը երեխայական արտահայտություն էր ստանում և սիրտը սեղմվում էր։

Օրիորդը գլուխը վար էր կախում և ուշադրությամբ լսում։ Հարցերին կտրուկ և վճռական պատասխաններ էր տալիս։ Մի բան խոստանալուց անմիջապես կատարում էր։

— Ներողություն, օրիորդ...

— Ասացեք։

— Արդյոք մեր հիվանդին չե՞ն կարող երկրորդ գործողության ենթարկել և կապարը հանել...

— Ես ձեզ արդեն ասել եմ... դա ինձանից կախված չէ... Թեև բժիշկները չեն ուզում նրան երկրորդ գործողության ենթարկել... նշանակում է, որ դա ավելորդ է և նույնիսկ վտանգավոր...

— Չէ, գիտեք, մարդ ուզում է հուսալ... այդ խեղճ կինը...

Օրիորդը ուշադրությամբ նայում էր նրա աչքերի մեջ, կարծես ուզում էր ծածկված մի միտք կարդալ։

— Այո,— ասում էր,— իսկապես խեղճ... Բայց նայեք ինչ է կատարվում մեր շուրջը... Ամենքս էլ խեղճ ենք, ամենքս էլ...

Ժպտում էր։

— Քաջություն... Պետք է անել ինչ պարտավոր ենք անել և...

Ձեռքերը վեր էր բարձրացնում և շտապ հեռանում։

Նրա ասածները դրոշմվում էին Հերյանի մտքի մեջ, մեծանում, լուսավորվում։ Ոչ թե խոսքերի իմաստը, այլ նրանց հնչումը, ձևը, ասելու կերպը։ Դառնում էին ավելի քան խոսք, մարմնական մտերմություն, շոյանք։

Ցնցվում էր։

Լավ։ Հիմա ի՞նչ անել...

Քեազիմ Կարաբեքիր փաշան առաջարկել էր շատ ծանր պայմաններ զինադադար կնքելու համար։ Ալեքսանդրապոլի բերդի և կայարանի զինվորական գրավումը, հայկական զորքերի հեռացումը 15 վերստ՝ Արփաչայ գետի գծից և... Ալեքսանդրապոլ քաղաքի շուրջը ինը վերստ հեռավորության վրա գտնված հողամասի գրավումը...

...Որտեղից ուր։ Պերոնյանը եկել էր։

Ամեն տեղ ձյուն էր նստել։ Այդ ձյան լույսը Պերոնյանի մարմինը երկարացրել էր։ Վզի շուրջը կապ կարմիր մի փողապահ էր փաթաթել,

հագել էր բաց-շագանակագույն, շատ երկար և շատ տարօրինակ մի վերարկու և դեղին կրկնակոշիկներ։

Աչքերը ուռել էին և դուրս ընկել, քիթը կարմրել էր և բերանը անգադար շարժվում էր, կարծես մի բան էր ծամում։

— Տո, Պերոնյան, ո՞ւր էիր...

— Զինադադարի պայմանները ընդունել են։ Եղբայր, հասկանո՞ւմ ես ինչ եմ ասում. զինադադարի պայմանները ընդունել են... Ես գիտեի, որ այդպես էր վերջանալու...

— Այո, սոսկալի է։ Ադա, էդ վերարկուն ո՞րտեղից ես գնել...

— Թիֆլիսի բազարում։ Անգլիական է... Ով ինչ ունի ծախում է... Չէ, հասկանո՞ւմ ես... Հասանք այս դրության... Պետք է տեսնել ճանապարհների վրա ի՞նչ է կատարվում... ձյունը բուքին՝ փախչող փախչողի վրա... խրվում են ձյան մեջ, ցեխի մեջ, սառչում, մեռնում...

— Լավ, կրկնակոշիկները ինչո՞ւ դեղին են...

— Ես քեզ ինչ եմ ասում, իսկ դու ինչ... Դեղին են, որովհետև Ֆրանսիայում մոդա է... Արտիստ մարդ եմ, նորաձևությունները սիրում եմ... ինչ ուզում են ասեն՝ բոլշևիկներից դուրս ուրիշ փրկություն չկա...

— Ի՞նչ ես ասում...

— Ասում եմ, ուրիշ փրկություն չկա։ Ռուսների հետ այդքան տարի յոլա ենք գնացել և նորից կգնանք... Ախր, ես ասում էի... ամերիկացիները պիտի գան... Եկան, տեսանք... Կարսը ընկավ, Ալեքսանդրապոլը ընկավ... էլ ի՞նչ մնաց... Արարատի գլխին եռագույն դրոշակ պիտի ցցվեր... մինչդեռ Արարատը փափուչները ձեռքը ոտաբոբիկ փախչում է... Ահա, նայիր, այստեղ է և այստեղ չի...

— Փողերի վրա Արարա՞տ էիր տպում։

— Ի՞նչ փողեր։

— Այն փողերը... հանրապետության փողերը...

— Վաղուց թողել եմ ուրիշին... Հա, չմոռանամ, բամբակի գործերով գնացել էի Բաթում... մի ռուս կին քո մասին էր հարցնում...

— Մի ռուս կի՞ն...

— Շեկ, գեղեցիկ։ Ուզում էր Հայաստան գալ... Խելոք չես կենում... Հասկացա բանը ինչումն է... համոզեցի, որ չգա։

— Չեմ հիշում։

— Սուտ խենթ մի՛ ձևանա... երեխա չենք...

— ...

— Լա՛վ, լա՛վ, նավապետ Հերյա՛ն... ուրիշ բան խոսենք, հրաբուխի վրա ենք պարում և մարդ չունենք... առհասարակ... օրինակ, ես

դերասան մարդ եմ, իսկ ի՞նչ եմ անում, դրամ եմ տպում, բամբակ եմ ծախում... Ուղղակի չեմ հասկանում...

Հերյանը ձեռքերը վեր բարձրացրեց, ճիշտ այնպես, ինչպես օրիորդ Բուդաղյանն էր բարձրացնում և... մնաց բերանը բաց։ Պերոնյանը զարմացած նայեց նրան, գլուխը ետ գցեց և քահ-քահ ծիծաղեց։ Սառը օդում այդ ծիծաղը զրնգաց։

— Ի՞նչ ես ծիծաղում...

— Ի՞նչ կա... թող մի քիչ էլ ծիծաղենք... Հա, ի՞նչ էի ասում... Ուրեմն, այդպես, նավապետ Հերյան, ուրեմն այդպես. գործերը վատ են, շատ վատ... վերջին երկու տարում ապրեցինք կծու, հղի, թունավոր և ոգևորություններով լցված տարիներ... անիմաստ կռիվներ, անվերջանալի զոհեր... Կարծում էինք հասել ենք մեր նպատակին։ Ժողովել էինք մեր թշվառությունը, մեր գաղթականներին, մեր վերքերը, մեր մալարիան, մեր բծավոր տիֆը, մեր այրված տները, մեր խրճիթները, մեր թոնիրները, մեր երկու զույգ շոգեմեքենաները և տասը զույգ մեր պլոկված վագոնները, մեր հրաշալի բաղերը, մեր վսեմ լեռները, մեր ժայռերը, մեր մերկ ու լերկ անապատները և ասում էինք՝ դա մերն է, թող մեզ հանգիստ թողնեն և մենք ամեն ինչ կվերաշինենք...

— Բայց փոխանակ վերաշինելու արկածախնդրությամբ ենք զբաղված։

— Սպասիր, դու էլ մի՛ սկսի բոլշևիկների պես խոսել։ Ի՞նչ ենք մենք. մի քանի հարյուր հազար մարդ, իսկ նրանք միլիոններ։ Մեր երկիրը քանդված է և աղքատ, իսկ նրանց երկրները լցված են հանքերով։ Այդ պատճառով էլ ոչ ոք չի ուզում օգնել...

Այդ ասելիս Պերոնյանի փողկապը ձյունի գլխին շարժվում էր բոցի նման։ Ոտքը գետնին էր խփում և դեղին կրկնակոշիկը պսպղալով այրվում էր։ Աչքերը փայլփլում էին։

— Չեմ հասկանում... քիչ առաջ ասում էիր, որ մեծամասնականները փրկություն են առաջարկում...

— Լենինը հայտարարել է, որ մեր անկախությունը պիտի հարգեն, իսկ մնացածը կարևոր չի... Ասում են կոմունիստական կարգեր... թող լինեն կոմունիստական կարգեր... Մենք աղքատ, աշխատավոր ժողովուրդ ենք, հարուստներ չունենք, արդյունաբերություն չունենք, պրոլետարիատ չունենք... Գալիս են հողերը բաժանելու, բաղերը բաժանելու, թող բաժանեն... թող թուրքերին հեռացնեն և մեզ հանգիստ տան...

— Լավատես ես...

— Լավատե՞ս...

— Բա, ի՞նչ...

— Չե՞ս տեսնում, կրակը ընկած այրվում ենք... Մի քիչ շունչ քաշենք, հասկանո՞ւմ ես, մի քիչ շունչ... Մեր ուժերը հավաքենք, մեր աղետը ու փոշին մաքրենք, մեր վերքերը բուժենք, մեր զենքերը կարգի բերենք... Ահա երկու հազար տարի է, ահա չորս հազար տարի է... անդադար սկսում ենք, բայց երբեք չենք վերջացնում... Անդադար, անդադար...

Ուսից վայր ընկնող փողկապի ծայրը կտրուկ շարժումով ետ նետեց և լռեց։ Այդ վայրկյանին Հերյանը նկատեց նրա ձեռնոցները։ Մուշտակի կտորներից կարված, անմատ, ահագին ձեռնոցներ։

Հերյանը մնաց ապշած։

Այդ աղվեսի մորթի ձեռնոցների բաց դեղինը նման էր նրա կրկնակոշիկների գույնին, և այդ պատճառով էլ նրան այնպես թվաց, որ եթե Պերոնյանը կանգնած է երկու ոտքերի վրա, դա պարզ պատահականություն է... Հենց որ խոսքը վերջացնի, նա պիտի ընկնի չորս ոտքերի վրա և պոչը վեր տնկած կես առյուծի կամ կես արջի նման երերալով պիտի վազ տա...

Այդ պատկերը մխրճվեց նրա ուղեղի մեջ և չուզեց նրան թողնել։ Գնալով ուժեղացավ։ Պերոնյանի շարժումները, երեսի արտահայտությունը, աչքերը, հոնքերը, մսոտ և խորդուբորդ քիթը միանգամայն կերպարանափոխվեցին և հալածեցին նրա երևակայությունը։

Այդ երևի դրոշմվեց նրա նայվածքի վրա, որովհետև Պերոնյանը զարմացած նրան նայեց և...

— Տո, ի՞նչ ես աչքերդ այդպես պլզել,— հարցրեց նա։

— Ե՞ս... աչքե՞րս...

Այդ հարց ու պատասխանը տվին կես ձայնով, գրեթե գաղտնաբար։ Ասացին, մոռացան։

Պերոնյանը շարունակեց.

— ...Հազարավոր տարիներե ի վեր... մեր լեռների լանջերին կառուցած վայրի գազանների նման պաշտպանում ենք մեր գոյությունը...

Հերյանի դեմքի մորթի տակից սայսուռ անցավ։

— Վայրի գազանների նմա՞ն,— կմկմաց նա։

— Հա, էլի...

Աղմուկով շնչեց։

— Հա, էլի... Ապրեցինք կռվելով... Կռվեցինք ամեն մի քարի համար... Բուն հայ ժողովուրդը, որ պահում պաշտպանում է մեր ավանդները, մեր աստվածները, մեր ոգիները, դեռ մինչև այսօր էլ խրճիթներում նստած սպասում է... Այդ իսկական պարոնները և իշխանները — մեր գյուղացիները պարոն են և իշխան — դուրս են գալիս միայն

պայքարի համար... պայքար բնության դեմ և պայքար մարդկանց դեմ... Դերանդին շարժում են Սասունցի Դավթի թրի նման և թուրը գերանդու նման։ Մտածե՞լ ես այդ մասին, նավապետ Հերյան։ Դար դարերի հետևից գալիս անցնում է, և թշնամիները միշտ նոր են, նրանք դուրս են գալիս բոլոր անկյուններից, լեռնավայրերից, դաշտերից, ձորերից... Թամերլան, Չինգիզ խան, արաբներ, թաթարներ, թուրքեր, սելջուկներ, աֆղաններ, պարսիկներ... Գալիս ավերում են, այրում, քանդում, անցնում, իսկ հայ ժողովուրդը՝ հողի հետ հող, ժայռի հետ ժայռ, նստած սպասում է։ Նստած սպասում է հրաշալի այլափոխության այն օրին, երբ մարդկանց հոգիները կլցվեն լույսով, երբ Արարատի քաջքերը և ոգիները կփշրեն իրենց շղթաները և ուրախության ճիչ արձակելով կիջնեն դաշտ, երբ ավանդները արյուն և միս կդառնան և հայությունը կհագնի իր արևային թագը...

Հերյանը զարմացած լսում էր։

— Ասում ենք հայ ենք,— բացականչեց Պերոնյանը,— անցնող գնացողը ասում է հայ ենք, իսկ հայը ի՞նչ է... ինքներս էլ լավ չենք իմանում... Հայ լինելը բարդ և դժվարին բան է... Կարծում ենք պարզ անվանակոչություն է, վիճակ, պատահականություն, և մեր հայությունը քաշում քաշքշում ենք ցնցոտիների նման...

Ձայրացած ծիծաղեց։

— Հայ լինելը անողոք և հերոսական բան է։ Ճակատագիր է և պատգամ։ Դարերի խորքից եկած հրամայական պատգամ... Այո՛, ա՛յդ։ Մենք առաջապահներ ենք... կյանքի սկզբից պայքարող լույսի և խավարի առաջապահներ, մեծ պատասխանատվություններով բեռնավորված... Իսկ ինչ ենք անում մենք... այստեղից այնտեղից լսած դաղափարներով ուզում ենք չափել և կշռել այն, ինչ անչափելի է և անկշռելի...

— Ինչ բաներ ես ասում այսօր...

Հերյանի լայնացած աչքերը կանգնեցին նրա վրա։

— Գիտես, եկել լցվել է... Շատ եղավ, էլ շատ եղավ...

— Հասկանում եմ, բա չե՞մ հասկանում...

Այդ վայրկյանին փողոցից անցնում էին երկու մարդիկ։

Մեկը փոքրահասակ, քառակուսի, մոնղոլական փոքր աչքերով, թուխ դեմքով, և մյուսը՝ կլոր, այտերը ուռած, փորը դուրս ընկած, թևերը կարճ և հաստ վիզը կարմրած։

Պերոնյանին տեսան և կանգ առան։

— Ահավասիկ մեր լեզվաբանական կաճառը,— ներկայացրեց նրանց Պերոնյանը։

Նրանք գալիս էին շուկայից։ Մեկ ձեռքով բռնել էին ուտեստեղեն-ներով լցված զամբյուղ, մյուս ձեռքով՝ մի-մի գիրք։

Կանգնեցին, զամբյուղները վար դրեցին, սպասեցին։

— Հը, ի՞նչ խաբար,— հարցրեց Պերոնյանը։

Նրանք գլուխները վար առան, նայեցին իրենց կոշիկների ծայրերին և միասին հառաչեցին։

— Ի՞նչ ես ուզում որ լինի,— պատասխանեց կլոր մարդը,— վատ է... Այսօր միջօրյա ավուրն այնորիկ մեզ ի խավար փոխարկյալ գիշերացավ...

Նայեց մյուսին։ Մյուսը շարունակեց՝

— Գազանաբար ազգն հեթանոսաց, որք ի վաղընջավն ի խշտիս յուրյանց մոնչեին... մոնչեին... Հետո ինչպե՞ս է...

Նայեց մյուսին։ Մյուսը շարունակեց՝

— Խշտիս յուրյանց մոնչեին... Տո, ես էլ մոռացա... ինչ որ է...

Գլուխները նորից վար առան և գոհ իրենց գիտությունից, ժըպտացին։

— Դա ո՞րտեղից էր,— հարցրեց Պերոնյանը։

— Արիստակես Լաստիվերցի,— լեցուն բերանով պատասխանեցին գիտնականները։

— Էդպես, միշտ նույն պատմությունը.— ասաց Հերյանը, թեպետ գրաբարը չէր հասկացել։— Էդ Լաստիվեցին շատ լավ է ասել...

— Լաս-տի-վեր-ցի,— ուղղեցին նրանք։

Ժպտացին։

— Ինչևէ,— բացականչեց Պերոնյանը։— Հարցը նրանում է՝ այս գրությունից ոնց ենք դուրս գալու...

Գիտնականները իրենց ուսերը վեր բարձրացրին և այդպես մնացին։

— Ցը,— ասացին և զամբյուղները վերցնելով հեռացան։

Պերոնյանը հուսահատվեց։

— Բառերի և մեջբերումների տոպրակներ,— ասաց նա, նրանց հետևից նայելով։— Գիրք են կարդում և հոդված միզում... Եկան, տիրացուի նման սաղմոսեցին, հեռացան։ Այդ թողնենք... դու ի՞նչ է, նավո՞ւմ ես ապրում...

— Այո։

— Ուզում եմ գալ տեսնել։ Հա, չմոռանամ, երկու շիշ պատվական օղի եմ բերել... Մնում է մի քիչ ուտելիք ճարել...

— Դա դժբախտաբար...

— Գիտեմ։ Սպասիր... թթու դրած վարունգ կա, պահածո միս կա, լավաշ կա... Զկնեղեն չկա... Թիֆլիսից շամայկա էի բերել, բայց ճանապարհին կերան... Ահ, երբ մտածում եմ ճանապարհին տեսածներիս մասին, մազերս բիզ-բիզ են լինում... Չէ, ախր... Դե, նավապետ Հերյան, ցտեսություն... Անպայման կգամ...

Նա ահագին ոտքերը ծուռ-ծուռ դնելով շտապ հեռացավ։

Հերյանը նայեց նրա հետևից։

Չէ, քայլում էր մարդ արարածի նման...

Հերյանը որոշեց տուն վերադառնալիս մտնել հիվանդանոց։

Հալիվ սկսել էր սանդուղներից բարձրանալ, նրան կանգնեցրին և հաղորդեցին տխուր լուրը...

Միրանյանը մեռել էր։

Հաջորդ օրը նրան պատմել էին բոլոր մանրամասնությունները։

Մահվան օրը զարմանալի կերպով հանգիստ էր։ Իրեն զգում էր ուժեղ և իր ապաքինման մասին լավատես էր։ Քաղաքական դրության մասին տեղեկություններ էր ուզել... և կինը, տեսնելով որ լավ է, նրան պատմել էր ամբողջ ճշմարտությունը։ Ասել էր, որ թուրքերը գրավել էին Ալեքսանդրապոլը և շատ ծանր պայմաններ առաջարկել զինադադար կնքելու համար։

Հիվանդը այդ բոլորը լսել էր առանց հուզումի որևէ նշան ցույց տալու։

— Եթե այսպես է,— ասել էր վճռական շեշտով,— ես էստեղ չեմ ուզում մնալ։ Ես ուզում եմ անպայման դուրս գնալ, անպայման դուրս գնալ...

— Ո՞ւր, Բաբիկ ջան, ո՞ւր...

Պատասխան չէր տվել։

Երկար ժամանակ մնացել էր լուռ, ամփոփված։

— Գիտե՞ս ինչ, Վարյա ջան,— ասել էր նա վերջապես,— սիրտս կիսել է ուզում...

Կինը շտապ վազել էր տուն, կիսել պատրաստել և բերել։ Հիվանդը կերել էր մեծ հաճույքով, շտապ-շտապ լափլփելով...

— Շատ լավ էր, շատ... Հիմա ինձ բոլորովին լավ եմ զգում...

Երկարել էր անկողնի վրա և... մեռել։

Թաղման օրը ձյուն էր գալիս։ Մեծ փաթիլներով ձյուն՝ չոր, մեղմ, գրեթե տաք։

Հերյանը, Ֆեոդոր Պանտելեևիչը և Մարտինը ուժասպառ էին եղել։ Ամեն ինչ վերցրել էին իրենց վրա. պետք էր գերեզման փորել, դագաղ

սարքել, քահանա ճարել, կառքեր գտնել։ Դժվարին բաներ։ Քաղաքի դռների տակ կռիվներ էին տեղի ունենում... կյանքը դադարել էր։ Սմքված քաղաքը փաթաթվել էր ձյան մեջ և լռել։ Փողոցները դատարկ էին, խանութները փակ։

Անգամ քահանան չէր ուզում տեղից շարժվել։ Պետք եղավ խնդրել, աղաչել, բողոքել։

— Ինչի՞ հենց էսօր թաղել,— ասում էր նա մարած ձայնով,— թող մի օր էլ մնա, աստուծով վաղը ամեն ինչ կխաղաղի և կտանենք փառքով կթաղենք...

Խոսելիս ծնոտը դողում էր և ձեռքերը հանգիստ չէր կարողանում պահել։

Այդ դժվարությունների վրա եկել բարդվել էին տիկին Վարդուհու քմահաճ պահանջները։ Մահից անմիջապես հետո, հիվանդանոցում արտաքնվիկ տեսարաններ էին տեղի ունեցել։ Լացել, աղաղակել, մազերը քանդելով պոռացել էր և ի վերջո ճեպ-ճերմակ դարձած ուշաթափվել էր։ Տարել էին տուն, դրել անկողին։ Ամբողջ գիշերը անշարժ պառկել էր դեղնած, ուժասպառ, անձայն։ Առավոտ վեր էր կացել և, հանկարծ կենդանացած, զինվորական երաժշտություն էր պահանջել թաղման համար։

Զինվորական երաժշտությո՞ւն... երբ քաղաքում զինվոր չկար, երբ երկու քայլ հեռու ճակատագրական կռիվներ էին, երբ ամեն վայրկյան թշնամին կարող էր ներս խուժել։

Կրունկը խփել էր գետին, թե՝

— Դա, իմ գործը չի. ամուսինս աֆիցեր է... նրա իրավունքն է վաեննի օրկեստրով թաղվի...

Իսկ դուրսը ձյուն էր, թնդանոթները ոռնում էին, քաղաքը պաշարված էր։

Այս ընդհանուր շփոթության մեջ Թեոդոր Պանտելեևիչը միջոց էր գտել սաստիկ հարբելու։ Հազիվ էր կարողանում կանգնել ոտքի վրա։ Մարտինը նայում էր նրան և հիմար-հիմար ծիծաղում։

Մեծ դժվարություններով կարողացել էին երկու կառք ճարել, բայց երբ եկել կանգնել էին հիվանդանոցի առաջ և դագաղը տեսել, կառապանները կտրուկ մերժել էին դերեզմանատուն տանել։

— Դագաղը ծանր է... ձիերը չեն կարա տանել...

Սկսել էին վիճել, գոռալ, կռվել։

— Քսան միլոնից պակաս չենք կարա... Դե, ոնց ուզում եք. գնում ենք, գնում ենք...

Քահանան Ձեռքի արծաթե խաչը շարժելով աշխատում էր նրանց համոզել, որ ավելի քիչ պահանջեն։ Ֆեոդոր Պանտելեևիչը ձայնը գցած բղավում էր, սև շալի մեջ փաթաթված տիկինը նստել էր կառքի մեջ և լաց էր լինում։

Վերջապես... երբ ծանր դագաղը բարձրացրին կառքի մեջ դնելու համար, մեկի ոտքը սահեց, դագաղի ծայրը վայր ընկավ, խուփը բացվեց և Միրանյանի գլուխը և ուսերը դուրս ցցվեցին։ Անկարելի եղավ նրան ետ դնել և դագաղը փակել։ Ճարահատ նրան այդ վիճակի մեջ զետեղեցին կառքի մեջ...

Ֆեոդոր Պանտելեևիչը բարձրացավ մեռելի մոտ։ Մյուս կառքում նստեցին քահանան, տիկինը, Հերյանը և Մարտինը։ Տիկինը խորտակված լռում էր։ Քահանան հեռվից զենքերի ձայներ լսելիս ամբողջ մարմնով դողում էր և աչքերը փակած ինչ-որ բան փսփսում։

Քաղաքի վարի մասով անցնելիս Հերյանը և Մարտինը ստիպվեցին մի քանի անգամ ցած իջնել և դագաղը կրող կառքին օգնել... Ձիերի ոտքերը սահում էին, կառքը վտանգավոր կերպով աջ ու ձախ էր թեքվում և Ֆեոդոր Պանտելեևիչը սկսում էր աղաղակել, թե դագաղը վայր է ընկնում։ Ստիպվեցին ճանապարհի մեծ մասը քայլել, դագաղի ծայրից բռնած։

Միրանյանի դուրս ցցված դեղին երեսի վրա ձյուն էր նստում։ Նրա աչքերը կես բաց էին և քիթը տարօրինակ կերպով երկարել էր և վեր տնկվել։ Ֆեոդոր Պանտելեևիչը աչքերը հառում էր նրա վրա և խոսում։

Ձյունը շարունակում էր իջնել մեծ փաթիլներով։

Երբ գերեզման հասան, դեռ փոսը պատրաստ չէր։

Դագաղը դրեցին ցած։ Սպասեցին։

Գեռեզմանը փորողը, հաստ բեղերով մի մարդ, ոտքը խփում էր բահին և ամբողջ մարմնով վրան ծանրանում։ Բահը սահում էր կարծր գետնի վրա, և մարդը զայրանում էր։

— Հող չէ, քար է... Առավոտից աշխատում եմ, պնդացել է...

- Շուտ արա, քեզ մատաղ, մեռելը սպասում է...

— Մեռելը կարա սպասել, մարդը չի կարա սպասել... մահը էժանացել է... լսում եք չէ՞, տրաքում է ու տրաքում, կարծես երկիրը շարժ է գալիս...

Քահանան մտահոգված նայում էր վեր և թուքը կուլ տալիս։

— Շատ խորը մի գնա,— անհամբեր և վհատ ձայնով ասում էր նա,— ի՞նչ կարիք կա, բավական է ծածկի...

— Հիմա ոչինչ, բայց ամառը... Դիակ ասածը ծառի արմատի նման է, շատ հող է ուզում...

Քահանան գլուխը ճոճելով մոմոում էր։

— Ոստաքանդ եղե ես որպես զարմավենի, պտղակորույս՝ որպես ձիթենի. այլ անհիշաչար և անոխակալ, խնայեա ի մեռուցյալ ծառայս...

— Ի՞նչ ասացիր, տերտեր։

— Աղոթում եմ...

Ֆեոդոր Պանտելեևիչը նախ մի կողմ քաշված հանգիստ սպասում էր։ Մեծ ուշադրությամբ նայում էր քահանային և աչքերը պատկառանքով վար կախում։ Հետո, հանկարծ անհանգստացավ, աչքերը մտահոգվեցին, և նա շտապ քայլերով մոտեցավ քահանային, վիզը երկարեց և սկսեց փիլիսոփայել։

— Դու, բատյուշկա, ինձ ա՛յդ ասա, ահա կար մարդը և չկա մարդը... Կար և մեկ էլ՝ չկա... Չկա, բայց չի ուզում բոլորովին չլինել... Ահա գլուխը դագաղից դուրս է հանում և հողն էլ պնդացած՝ չի ուզում նրան ընդունել... բատյուշկա, մարդը կար և ահա մարդը չկա... Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ...

Քահանան աշխատում էր ժպտալ և մատը վեր բարձրացրած՝

— Բոգ, բոգ, աստված...

— Ի՞նչ բոգ... աստված ինքն իրեն համար, և մենք մեզ համար... Արի ինձ բացատրիր... ինչո՞ւ մարդը կար և հանկարծ մարդը չկա... էխ, էխ, բատյուշկա, դու էլ չես իմանում... ես էլ չեմ իմանում... Հարցը հենց դրանում է, դրանում...

Քահանան նայում էր մեղավոր աչքերով և քիթը ուժով վեր քաշում...

Դագաղը փոսը իջեցնելու ժամանակ տիկին Վարդուհին դեղևուն քայլերով կառքից իջավ, մոտեցավ գերեզմանին և ամբողջ մարմնով փռվեց գետնի վրա։ Հերյանը և Մարտինը նրան վեր բարձրացրին և թևերից բռնեցին։ Երբ քահանան սկսեց մեռելոց երգել խռպոտ և մելամաղձոտ ձայնով, նա բազուկները տարածեց և բարձր ձայնով սկսեց հեկեկալ։

— Ինձ էլ հետը թաղեք, ինձ էլ...

Ֆեոդոր Պանտելեևիչը, որ մինչ այդ ուսերը և ձեռքերը հավաքած դողդողալով կանգնել էր, գրպանից մի մեծ կարմիր թաշկինակ հանեց, մի քանի անգամ քիթը աղմուկով խնչեց, ապա ծնկի ընկնելով՝ սկսեց անբնական ձայնով վայել, կարծես նրան մորթում էին։

Քահանան, որ այդ ձայնը լսեց. շշկլված լռեց, գույնը գցեց և ձեռքի բուրվառը բարձր պահած՝ մնաց սառած։

Հերյանը և Մարտինը վազեցին ռուսի մոտ։ Ռուսը նրանց տեսնելով ավելի սաստկացրեց վայոցը։ Սկսեց մազերը քաշել և բռունցքները կատաղի կերպով կրծքին խփել։

— Չեմ կարող, չեմ կարող...

Ջենքի ձայներ լսվեցին։

Քահանան, բառերի երեք քառորդը ուտելով, արագ-արագ շարունակեց աղոթել և երերալով գերեզմանի մեկ կողմից մյուսը անցավ։

Այդ վայրկյանին, գերեզմանատան մյուս ծայրում, հսկա դղրդոցով մի ռումբ պայթեց։ Ներկաները բնազդաբար մի կողմ քաշվեցին։ Ֆեոդոր Պանտելեևիչը լռեց և բերանը բաց սարսափած նայեց։

— Մենք գնում ենք,— պոռացին կառապանները,— մենք գնում ենք...

Առանց խոսելու ամենը վազեցին և նստեցին կառքերի մեջ։ Ձիերին մտրակեցին։

Ջյունը շարունակում էր մեծ փաթիլներով վայր իջնել։

14

Ելենովկայի ամբողջ բնակչությունը դուրս էր թափվել։

Կարմիր բանակը Դիլիջանից վայր էր իջել և ահա շուտով կհասներ լիճը և կքայլեր Երևանի վրա։

Տեղական ոստիկանները հեռացել էին։ Բանակի բեկորները, մի քանի օր կռիվներ մղելուց հետո, հրաման էին ստացել ետ քաշվել։ Ենթադրվում էր, որ նրանք պիտի համախմբվեին Սուխոյ Ֆանտանի մոտ և այնտեղ դիմադրություն կազմակերպեին։

Լուսաբացի մոտ, ժողովուրդը մտել էր վանք և ազատել բանտարկված կոմունիստներին։ Նրանցից ոմանք մեկնել էին դիմավորելու համար կարմիր բանակը, իսկ մյուսները ազգաբնակությունը հավաքել էին և միտինգ կազմակերպել։ Մեկը մյուսի հետևից նրանք բարձրացել էին տափակ մի տանիքի վրա և ոգևորությամբ ճառեր արտասանել։

Տները զարդարվել էին կարմիր դրոշակներով։

Գյուղացիները ուրախ և հետաքրքրված լսել էին այդ ճառերը և հիմա, լուռ կանգնած, սպասում էին։ Նրանք տրեխները անհանգիստ քսում էին ձյունին և մտքով իրենց երեսին խաչ հանում։

Արև էր և ցուրտ։

Ափի մոտ, նավից ոչ շատ հեռու, գույները գցած և վարի շրթունքը

արյունած կանգնել էր հրամանատար Թումանյանը։ Շուրջը զինված երկու ռուսներ և մի հայ երիտասարդ։ Զինված պահապաններից մեկը Եգոր Կոժուխինն էր։

Երեկ, մինչև կեսգիշեր, նավը կրակել էր վերջին ռումբերը։ Երբ այլևս պաշտպանության ոչ մի հույս չէր մնացել, որոշել էին իջնել ափը և տեսնել, թե ինչ կարելի էր անել։ Երկար փնտրել էին և ոչ ոքի չէին գտել։ Զորքը մեկնել էր, ոստիկան չկար։

— Դե որ էդպես է,— ասել էին տղաները,— մենք էլ մեր գլխի ճարը տեսնենք...

Թումանյանը զայրացել էր։ Կենտրոնից ոչ մի հրաման չէր եկել, և նավը թողնելու իրավունք չունեին։ Գուցե զորքերը և ոստիկանները մեկնել էին Դիլիջանի ուղղությամբ, կարմիրներին դիմադրելու համար։ Մեկնել, նավը թողնել զինվորական օրենքի և պատվի դեմ էր։ Լավ էր սպասել մինչև առավոտ, լուսաբացին ամեն ինչ կպարզվեր։

— Պառկեք հանգիստ, վաղը կտեսնենք,— հրամայել էր Թումանյանը և մտել խուցը։

Մտել էր ներս և առանց հանվելու նստել էր անկողնի ծայրին։ Զարմանալի էր, որ Անաստասիան մեջտեղ չկար։ Եթե մի որևէ վտանգ կա, նա անպայման կգա, իմաց կտա։ Գուցե դեռ կգա... մոտեցել էր պատուհանին և ականջ դրել։ Չէ, ոտնաքայլերի ձայն չէր լսվում։ Ուրիշ ձայներ էլ չկային, ամեն ինչ խոր լռության տակ ճնշվել էր, տափակացել։

Քուն չուներ։ Կարծես մի ծանր ձեռք սեղմում էր նրա սիրտը։ Սկսել էր ման գալ սենյակի մեկ անկյունից մյուսը։ Նորից մոտեցել էր պատուհանին և ականջ դրել։ Ոչ ոք չէր գալիս։ Վերջ ի վերջո, այդ լավ նշան էր. այդ նշանակում էր, որ Անաստասիան հաղորդելու նորություն չուներ և մտահոգվելու ոչինչ չկար։ Վաղը, կուսումնասիրի դրությունը... եթե կենտրոնից լուր չստանա, կգնա քաղաք, ռազմամթերքի հարցի մասին տեղեկություններ ստանալու համար։

Կտեսնի հորը։

Հուզումի մի մեծ ալիք բախվեց նրա սրտին։ Երբեք հորը տեսնելու ցանկությունը այդքան ուժեղ չէր եղել։ Աչքերը լցվեցին արցունքով և շրթները դողացին։

Խեղճ հայրը և խեղճ ինքը։

Այդ վերջին տարիները, երկուսն էլ որբացած, մեն մենակ այս աշխարհի վրա ինչեր չէին տեսել, ինչե՞ր չէին ապրել։ Իրենց ոտքերի տակ ամեն ինչ քանդվել էր։ Մեկ կրակից մյուսը վազելուց հետո, մի օր էլ, երկուսը միասին լուսավորվել էին մի նոր լույսով մի նոր ու գեղեցիկ

երազով... Հեռավոր հայրենիքը... Գնալ, միանալ ժողովրդին, սիրո և միխիթարանքի ապաստան գտնել, ապրել նոր, վերածնված կյանքով, ամբողջ ուժերը ի սպաս դնել երկրի կառուցմանը։

Հեռավոր հայրենիքը...

Ինքը ոչինչ չգիտեր այդ հայրենիքի մասին։ Եվ ի՞նչ էր հայությունը։ Բեսարաբիայի մի քանի ծերեր, որոնք անդաղար կռվի մեջ էին եկեղեցական գործերի և ծխական դպրոցի պատճառով, մի քանի պառավ կանայք, որոնք ռուսերենին հայերեն խրթին բառեր էին խառնում, տեր Քերովբեի հաստ ու մազոտ ձեռքը համբուրում, դարավոր սովորությունները պահում և բարդ ու համով ճաշեր եփում։

Նրա համար հայ լինելը պատկանում էր իր անհատականության ստորգրկրյա հարկին։ Ինչ-որ աղոտ և անորոշ մի զգացում էր, որ ծնվել էր իր մարմնի հետ, առանց որ ինքը այդ ուզեր... Եվ ահա, աշխարհի բնականոն ընթացքը հանկարծ կանգ էր առել, երկրաշարժային ցնցումների ենթարկվել և ցնցել նաև անհատները։ Նրա կյանքն էլ տակնուվրա էր եղել, փոթորիկներին հանձնված ծովի նման ալեկոծվել և անսպասելի կերպով էության խորքից դուրս էր նետել այնպիսի գաղտնի կապեր և սերեր, որոնց մասին առաջ երբեք չէր մտածել։

Հիշում էր իր հոր և նրա բարեկամների ուրախությունը, երբ ստացվեց Հայաստանի անկախության լուրը։ Սեղանների վրա քարտեզներ փռած, այդ մարդիկ և կանայք ժամերով վիճում էին և երազում։ Դպրոցի սրահում, եկեղեցում, ակումբներում, անվերջանալի ժողովներ էին կայանում և բախտավոր և լուսավորված դեմքերով մարդիկ ճառեր էին արտասանում, իրենց ցուցամատը ուղղում դեպի ցանկալի հեռուն։

Երբ հայրը և ինքը որոշել էին մեկնել, ամբողջ հայությունը կայարան էր թափվել։

— Համբուրեցեք հայրենի հողը և ամեն բան ըրեք, որ մենք ալ կարողանանք շուտով գալ...

Ճանապարհին ամեն տեսակ դժվարությունների էին հանդիպել։ Ճնշվորդել էին անասունների վագոններում, կայարաններում օրերով սպասել էին աղտ և ոջիլի մեջ թավալ գալով։

— Ոչինչ, Միշա, ոչինչ,— կրկնել էր հայրը,— վերջին դժվարություններն են. ահա կհասնենք Հայաստան և կտեսնես... Անդլիացի ճանապարհորդ Լինչը նկարագրում է Արարատյան դաշտը մեծ հիացմունքով, նա ասում է...

Եվ հայրը, աչքերը կես փակած, սերտել էր օտար ճանապարհորդի գեղեցիկ նկարագրությունները։

Անշուշտ, Հայաստանը այն չէր, ինչպես երազել էին։ Մերկություն,

քանդվածություն, թշվառություն։ Բայց՝ մեծդի, խորհրդավոր, հափշտակիչ։

— Ոչինչ, Միշա, ոչինչ,— շարունակել էր կրկնել հայրը,— Հայաստանը աղքատ է, բայց, հասկանո՞ւմ ես, մերն է... Անհրաժեշտ է վերաշինել, լծվել գործի... Այո, լերկ է, աղքատ է, բայց մերն է, հասկանո՞ւմ ես...

Եվ լծվել էին գործի։

Ահա։

Ահ, կարողանար տեսնել հայրը։

— Նու, պապաշա, հիմա ի՞նչ ենք անելու... Կարմիրները գալիս են... Ավելի լավ է վերադառնալ Բեսարաբիա, մի կերպ ճանապարհ գտնել և վերադառնալ Բեսարաբիա... Պետք չէ բաժանված մնանք... պետք չէ, որ դու մնաս առանց ինձ և ես, պապաշա, մնամ առանց քեզ...

Այդ մտածում էր և վատ նախազգացումները տանջում էին սիրտը։ Քայլում էր անկյունից անկյուն։ Պատուհանի առաջ կանգ էր առնում, լռում։ Անաստասիան չկար։

Ճշմարտությունը այն էր, որ Եգոր Կոժուխինը Անաստասիային կողպել էր սենյակում։

Աղջիկը, հուսահատված, երկու բռունցքներով ծեծել էր դուռը, բողոքել, կանչել։ Վայելով գլուխը պատերին էր խփել։ Հորը անիծել էր, հայհոյել։

— Բաց արա դուռը, սատանա... Ավազակ, մարդասպան, բաց արա դուռը... Բաց արա, թե չէ... գլուխս կխփեմ պատերին, գանգս կճեղքեմ...

— Ձայնդ կտրիր, անամոթ,— մռնչալով պատասխանել էր Եգորը։

— Քեզ ասում եմ, բաց արա դուռը, դու իրավունք չունես ինձ բանտարկելու... Բաց արա, թե չէ վատ կվերջանա... Լսո՞ւմ ես, անիծյալ, լսո՞ւմ ես... Ես քեզ անիծում եմ. հայր, ես քեզ անիծում եմ...

— Լռիր։ Ուզում ես քեզ կորուստի՞ մատնել։ Ամենքը գիտեն, որ որ դու այդ հայի հետ... Ուզում ես, որ կարմիրները գան... մեզ ամենքիս ոչնչացնե՞ն... Ուզում ես ասեն, որ մենք թշնամինե՞ր ենք, հակահեղափոխականնե՞ր ենք... Լռի՛ր։ Հրամայում եմ քեզ, լռի՛ր...

— Չեմ լռի։ Եթե ինձ չազատես... երբ նրանք գան. . կբարձրանամ տանիքի վրա և կպոռամ՝ էյ, լսեք, ժողովուրդ, էյ, լսեք... Եգոր Կոժուխինը, որ ահա տեսնում եք, ստոր խաբեբա է և ավազակ... ես

Նրա աղջիկն եմ և նա հակահեղափոխական է, կուլակ և շահագործող... Մի՛ հավատաք նրան, էյ ժողովուրդ, մի՛ հավատաք նրան...

— Քեզ ասում եմ ցած խոսիր։ Գյուղը լրտեսներով լցված է... Ի՞նչ է, ուզում ես մեր ամբողջ համայնքը, ամբողջ մալականությունը քանդվի՞, ոչնչանա՞ քո պատճառով, Եգոր Կոժուխինի աղջկա պատճառով... Գյուղում բոլորը իմանում են, որ դու մեզ լրտեսում էիր... գնում մեր գաղտնիքները հաղորդում ցարական նախկին այդ աֆիցերին... Վաղը, երբ կարմիրները գան, կարող են քեզ բանտարկել, գնդակահարել...

— Թող բանտարկեն, թող գնդակահարեն... Դու ինձ բաց թող, բաց թող, թե չէ կպոռամ, որ ինձ այստեղ մորթում են... օ՜-օ՜-օ՜-օ՜...

Եվ սկսել էր գոռալ։

Մայրը վազել էր, երկու ձեռքերը դրել դռան վրա և աղաչել։

— Նու, նու, Անաստասենկա, խելքդ կորցրել ես, ի՞նչ է... Ի՞նչ է, ուզում ես մեզ խայտառակել... Նու, նու, Անաստասենկա...

— Օ՜-օ՜-օ՜... օ՜-օ՜-օ՜...

— Թող ինձ նրա մոտ, Եգոր, ես նրան կհանգստացնեմ...

Կոժուխինը կնոջը թողել էր ներս մտնի և դուռը կողպել։

Անաստասիան ընկել էր մոր ոտքերին։

— Ազատիր, մայրուշկա, Իրենա Մատվեևնա, ազատիր, գալուբուշկա, ազատիր... Եթե չգնամ... հասկանո՞ւմ ես, նրան վաղը կարող են սպանել... Ես նրան սիրում եմ, մայր, ես նրան սիրում եմ...

— Ինչո՞ւ... ոչ ոք նրան չի սպանի...

— Ես գիտեմ, ահ, ես գիտեմ... Մեր մուժիկները որոշել են նրան մատնել... Ես գիտեմ, որոշել են այստեղից նրան բաց չթողնել...

— Հանգստացիր, Անաստասենկա, հանգստացիր...

Անաստասիան թավալ էր եկել գետնի վրա, մազերը քաշել, ձեռքերը կոտրատել, աղաչել, վայել և վերջապես ոտքի էր կանգնել, դողացող ձեռքերով վայր գցել շրջազգեստը և ցույց տվել ուռած փորը։

— Հղի եմ, հասկացիր, հղի եմ նրանից...

Ու երկու կիները սկսել էին միասին վայել։

Թումանյանը սպասել էր, քայլել, մտատանջվել։

Երբեք մենակությունը այդպես չէր ճնշել նրան։ Երբեք այդքան դժբախտ չէր զգացել իրեն։ Կանգնել էր մոր լուսանկարի առաջ և հուսահատվել։ Իրեն զգացել էր անպաշտպան, լքված, օտար։

Մի վայրկյան երկարել էր անկողնի վրա թարմանալու համար։ Հենց ոք լույսը բացվեր, պիտի քայլեր դեպի Երևան։ Երևի, հայրը տեղյակ էր անցուդարձերի մասին, երևի, նա էլ չէր քնում, նա էլ քայլում

էր սենյակի մեկ անկյունից մյուսը, նա էլ խոսում էր ինքը իրեն հետ։

— Նու, Միշա, ուրեմն այդպես... Ոչինչ, Միշա, նորից կվերադառնանք Բեսարաբիա, ոչինչ...

Ժամը առավոտյան չորս ու կեսի մոտ էր։ Թումանյանը անկողնից վեր թռավ և պատրաստվեց մեկնելու։ Երեսը սառ ջրով լվաց, թարմացավ։

Դուրսը դեռ մութ էր, բայց արդեն զգացվում էր լուսաբացը։

Ցուրտ էր։ Դանակի նման խայթող ցուրտ։

Թևերը ջաղացի նման ճոճեց, որպեսզի քիչ տաքանա։ Մոր լուսանկարը դրեց աջ գրպանը, ապա հանեց, տեղափոխեց ձախ գրպանը, սրտին մոտ։ Մի քանի թղթեր, մի քանի ուրիշ լուսանկարներ էլ... Ունեցած չունեցածը՝ գուլպաներ, երկու շապիկ, մի քանի նամակներ կապեց մի թաշկինակի մեջ։ Ուրիշ բան չուներ։

Ուշադրությամբ նայեց ամեն կողմ։ Չէ, էլ ոչինչ չէր մնացել։

Սեղանի վրա մի կտոր հաց տեսավ. ուզեց ուտել, բայց միտքը փոխեց, ավելի լավ է ուտել ճանապարհին։

Պետք էր շտապել։ Պետք էր գնալ տղաներին արթնացնել և նավը հանձնել նրանց. հենց որ քաղաք հասներ կգնար զինվորական նախարարություն և պետք եղած կարգադրությունները...

Դուռը բաց արեց, և ցուրտն ու մութը կպան աչքերին։

Կանգնեց։ Ուսերը սեղմեց։ Զափազանց ցուրտ էր։ Լիճը թաղված էր ծանր խաղաղության մեջ։ Երկնքի ծայրին աղոտ լույսեր էին ման գալիս։ Ջյունը մութ-կապույտ էր։

Հեռվից աքլորի ձայն լսվեց։ Լռությունը ավելի խորացավ։

Թումանյանը ուղղվեց դեպի մոտակա ճերմակ տնակը։ Երբ մոտեցավ տան դռան, կանգնեց և նայեց ետ։ Իրեն այնպես թվաց, որ իր իսկ քայլերը դեռ շարունակում են հետևել իրեն։

Չէ, ոչինչ չէր երևում։

Խփեց։ Չպատասխանեցին։ Ավելի ուժեղ խփեց։ Դուռը բաց էր։ Ներս մտավ, կանչեց։ Մարդ չկար։ Պարզ էր։ Տղերքը գիշերը մեկնել էին։

Ինչո՞ւ չէին տեղեկացրել...

Տխրությամբ լցված աչքերը հառեց մութին։ Այդ չէր սպասում։ Միասին կռվել էին, վտանգել իրենց կյանքը, արհամարհել մահը և, հանկարծ, այդպես...

Ամբողջ մարմնով մրսեց։

Դուրս եկավ և արագ քայլեց դեպի նավի կողմը։ Իշավ ափը՝ ոչ ոք չկար։ Ափի կամրջակին կապված նավը երկարել էր ջրի վրա ստվերի

նման, բարակ թնդանոթների քթերը վեր տնկված։ Սիրտը սեղմվեց։ «Աշոտ Երկաթը» որբ էր և մենակ, երեսի վրա թողված, ինչպես ինքը։ Հայրական գուրգուրանք զգաց հանդեպ նավին։ Նրան հղացել էր, կառուցել, աշխարհ բերել։ Միասին անցկացրել էին դեպքերով և արկածներով լցված կյանքի մի կարևոր շրջան։

Գլուխը թափ տվեց։ Զգացվելու ժամանակը չէր։

Գյուղի տների առաջից անցնելով քայլեց։ Ազգաբնակությունը դեռ քնած էր, ոչ մի տեղ լույս չկար։ Մի վայրկյան կանգ առավ Անաստասիայի տան առաջ։ Պատուհանների փեղկերը փակ էին։ Շատ զարմանալի էր, որ չէր եկել։ Երևի, գնացել է Սուխոյ Ֆանտան բարեկամուհիների մոտ։ Սուխոյ Ֆանտանից անցնելիս կանգ կառնի գյուղացիների մոտ, մի բաժակ կաթ կխմի և Անաստասիայի մասին հարցուփորձ կանի։ Իսկ եթե այնտեղ էլ չէ, ուրեմն, գնացել է Երևան։ Ինչ լավ, կհանդիպեն Երևանում։

Արդեն լույսը մաքառում էր մութի հետ։ Ջյունը գնալով գունատվում էր և լճի վրա մեծ ճերմակ արատներ էին ման գալիս։ Տեղ-տեղ ճառագայթներ էին պսպղում։ Այդ լույսը ընկավ նրա սրտի վրա։ Մարմինը վայրկենապես ծաղկեց։ Ինչպես միշտ՝ այդպիսի բոպեներին, գըլխում երգեց մի հին նավային զորախմբի աշխույժ քայլերգի առաջին նախադասությունը։ Այդ երգը արթնացրեց նրա հուշերը, մտաբերեց սովոր տեսարանը։ Նավաստիները ձգված կանգնած են ռազմանավի առաջակայմի մոտ, դրոշակները ցցված են, սպաներով շրջապատված ադմիրալը սանդուղքներից բարձրանում է վեր, փողային երաժշտախումբը հնչեցնում է քայլերգը։

Ձեռքը գրպանը տարավ, գտավ հացի կտորը։ Սաստիկ քաղց զգաց։ Հանեց, խածեց, նորից դրեց գրպանը։ Ծամելով քայլեց։

Այնտեղ, ուր վերջանում էր գյուղի ճանապարհը և սկսվում էր վայրէջքը, երեք մարդ էին կանգնած։ Նայում էին նրա կողմը։ Երբ ավելի մոտեցավ, տեսավ, որ մարդկանցից մեկը Եգոր Կոժուխինն էր, Անաստասիայի հայրը։ Մյուսը կարճ, դեղին մորուքով մի մալական էր, իսկ երրորդը՝ փոքրահասակ, լայնուս, կլոր փափախով, զինված հայի էր նմանվում։

Հացը բերանում մնաց։

— Տի կուդա՞... Ո՞ւր էդպես,— հարցրեց Եգորը։

— Գնում եմ քաղաք,— պատասխանեց Թումանյանը։

— Նե, նե, նե,— ասաց Եգորը բարկացած, աչքերը նրա վրա հառելով և գլուխը թափահարելով։

— Ո՞նց թե...

— Էնպես... Մինչև հիմա որտեղ էիր, այնտեղ էլ մնացիր...

Թումանյանը բերանում մնացած հացը ծամեց, կուլ տվեց և շվարած նայեց։

— Չեմ հասկանում,— ասաց։

— Էստեղ չհասկանալու բան չկա,— միջամտեց հայը։

— Պետք է սպասեք մինչև մերոնք գան...

— Մերո՞նք...

— Այո։ Կարմիրբանակայինները... Ռազմա-հեղափոխական կոմիտեն...

— Ես նրանց սպասելու կարիք չունեմ,— բողոքեց Թումանյանը,— ես գնում եմ Երևան, գործ ունեմ...

— Հրաման չունեք գնալու...

— Հրամա՞ն...

Ուզեց ծիծաղել, ցույց տալ, որ այդպիսի բառերից չի վախենում, բայց չկարողացավ, շրթունքները ծռվեցին և մնացին սառած։ Հանկարծ հասկացավ, որ ընկել է ծուղակը։ Հետը զենք չուներ։

Մի վայրկյան անորոշ նայեց, ապա մտածեց, որ ինչ գնով էլ լինի պետք էր ազատվել սրանց ձեռքից։

— Թողեք... ժամանակ չունեմ,— պոռաց և երկու բռունցքները սեղմած, նետվեց առաջ։

Առաջը կտրեցին։

Ամբողջ ուժով նրանց հրեց։ Դեղին մորուքով ռուսը նրա օձիքից բռնեց և բռունցքի մի ուժգին հարված իջեցրեց։ Մի ուրիշը հետևից խփեց նրա գլխին։ Աչքերը կայծկլտացին, երերաց։ Վարի շրթունքից արյուն հոսեց։

Ատրճանակները ուղղեցին նրա կրծքին։

— Չաչե՞մ... Ինչո՞ւ,— փսփսաց նա, ձեռքը շրթունքին տանելով։

— Ավելի լավ է անել այն, ինչ քեզ ասում ենք... Ավելորդ է դիմադրել, միևնույն է, ազատվել չես կարող,— ասաց Եգորը առանց նրա երեսին նայելու։

— Ի՞նչ եք ուզում որ անեմ...

— Դե, առաջ ընկիր...

Հիմա կանգնել էր ափի մոտ, նավից ոչ հեռու։

Վանքից դուրս եկած կոմունիստները տենդոտ գործունեության մեջ էին։ Անդադար այս ու այն կողմ էին վազում, հրամաններ տալիս, պատրաստություններ տեսնում։

Նրանցից մի քանիսը եկել կանգնել էին Թումանյանի առաջ։

Ինքը մնացել էր թմրած։ Կարծես մի մեծ բարձրությունից վայր էր ընկել և ամբողջ մարմինը փշրվել, անզգայացել։ Պատռված շրթունքից արյունը շարունակում էր վազել. ծնոտը, կուրծքը, ձեռքերը կարմրել էին։ Ուռած, տեղ-տեղ կապտած երեսը բոլորովին ճերմակ էր։ Կենդանի էին միայն երեխայական լայն բացված աչքերը, զարմացած, կորած։

Ինքը մնացել էր թմրած։ Մի թմրություն, որ նման էր սփռված խաղաղության։ Միայն ձեռքերը կամաց դողում էին և այրվում էր շրթունքի վերքը։ Երբ այրվում էր, գիտակցությունը քիչ արթնանում էր, սիրտը սեղմվում և մղկտում։

Աչքերը հառում էր Երևան տանող ճանապարհի կողմը և սպասում։ Իրեն այնպես էր թվում, որ այդտեղից մարդիկ են գալու օգնության։ Հայրը և ուրիշները։ Անպայման կգան։

Սակայն չէին գալիս։

Քիչ առաջ միտինգի ճառախոսները, ամեն անգամ, որ դատապարտում էին դաշնակներին, իրենց ցուցամատը ուղղում էին դեպի նրան։ Ինքը ոչ ոքի չէր շահագործել, ինքը քայլել էր պատռված կոշիկներով, ապրել էր հաց ու պանիրով, մրսել էր, շարշարվել, գիշերները չէր քնել... Սիրել էր դժբախտ հայրենիքը և պաշտպանել էր նրան...

Երբեմն գիտակցությունը սրվում էր, հասկանում էր վիճակը և քիչ էր մնում, որ խենթանա։ Վանդակ ընկած կենդանու նման ուզում էր մռնչալ։

Շրթունքը ուռել էր, ծանրացել, կախվել։ Դժվարանում էր կուլ տալ թուքը։

...Հեռվից երգի ձայներ լսվեցին։

— Գալիս են, գալիս են...

Գյուղացիները խմբով առաջ վազեցին և սկսեցին կեցցե գոռալ։ Պատուհանները բացվեցին, և գլուխներ դուրս նայեցին։ Շատերը բարձրացան կտուրների վրա։

Թումանյանի ամբողջ մարմինը դողաց։ Աչքերը մթնեցին. երեսը թրջված ցեմենտի գույն ստացավ։ Չնայած դրան, բնազդաբար, նա ոտքերը միացրեց և զինվորական կեցվածքով ուղիղ կանգնեց։ Ձեռքերը վար, գլուխը շիտակ։ Նախ ձիավորների մի խումբ անցավ, ապա երկու ինքնաշարժներ։ Հետո լսվեց Ինտերնացիոնալը և ներս մտան կարմիր բանակի մատները։

Այդ ամբողջ տեսարանը անցնում էր Թումանյանի աչքերի առաջից՝ փչացած ֆիլմի նման երերուն, խառնաշփոթ, արծաթե գծերով կտրտված։

Լսում էր ձայները, աղմկում էին, գոռում, երգում։

Կարմիր բանակը վատ էր հագնված։ Ոմանք զինվորական համազգեստ էին կրում, ուրիշներ՝ բանվորական կաշվե բաճկոններ։ Շատերը հրացանները կրում էին ուսին, ուրիշները կախել էին մեջքին կամ բռնել գավազանի նման։

Աշխույժ էին։ Ծիծաղում էին, կատակում, տեղ-տեղ կանգ առնում և ծխախոտ վառում, բնակիչների հետ խոսակցում։

— Տովարիշչի, այս կողմ... Տովարիշչի, կանգ մի՛ առ...

Տովարիշչները չէին լսում։ Հավաքվում էին տների առաջ, հաց ու պաշար էին բաժանում գյուղացիներին։ Թումանյանը սկսեց հանգրստանալ և հետաքրքրությամբ նայել։ Այդքան պարզ կերպով ծիծաղող և բարի մարդիկ չէին կարող չարություն անել։ Իսկ նրա վրա չէին նայում։ Ինքն էլ սոված էր։

Առաջին խմբերը անցան և նորից նոր խմբեր եկան։

Նրանք ևս հաց ու պաշար հանեցին։ Մի տեղից գարմոշկայի ձայն լսվեց։ Սկսեցին խմբով երգել։ Գյուղի աղջիկներից շատերը միացան նրանց։ Շրջան կազմեցին և երկու հոգի մեջը ընկնելով պարեցին։ Ծանոթ երգ էր և ծանոթ պար։ Ծովային երկար ճամփորդությունների ժամանակ, տոն և կիրակի օրերին նավաստիները համախմբվում էին ետևի կամրջակի վրա և ճիշտ այդպես երգում ու պարում էին։ Հիշեց։ Նրանց մեջ կար կրակ ու բոց մի երիտասարդ, Կերչից, Մատվեյ Միկուլին անունով։ Ասես ռետինե էր շինված, ոսկոր չուներ, գնդակի նման ցատկում էր վեր...

— Ահա այնտեղ է...

Թումանյանը այդ լսեց և ուշքի եկավ։ Իր կողմն էին գալիս վերից վար զինված մի քանի մարդիկ։ Փափախավոր, դեղնած դեմքերով, փոքրիկ, փայլփլուն, ծակող աչքերով։

— Ձեր անո՞ւնը,— հարցրեց նիհար, վիզը կարճ մեկը և աչքերը մխրճեց նրա աչքերի մեջ։

— Միքայել Թումանյան...

— Նախկին ցարական սպա՞...

— Այո։

— Դո՞ւք էիք այդ նավակի հրամանատարը...

— Այդպես է։

— Նավակը շինողը հենց ինքն էր,— միջամտեց Եգորը։— Ինքը շինեց և զինեց...

— Ոչինչ, հիմա արդեն անվնաս է... վերցրեք կալանքի տակ, հետո կպարզենք։

Գյուղում պարը շարունակվում էր։

15

Պերոնյանը նավ էր եկել հանդիսավոր և տխրած։ Օդի և ուտելիք էր բերել։

— Այժմ նստենք քո երազների այս պալատում, դժբախտությունների կատարին կանգնած ուրվատեսիլ նավում և հանգիստ խմենք։

— Բարձր ոճով ես խոսում... Ի՞նչ է, Պոլսի՞ց ես եկել...

— Նկատե՞լ ես, ամեն անգամ որ գործերը վատ են գնում և այդպես ասած, այլևս ասելիք չկա, հայերը բարձր ոճով են խոսում... Այդ թողնենք. ժամը ճիշտ չորսին, ինքնաշարժը կգա ինձ տանելու։ Գիշերը մերն է, քնելու մտադրություն չունեմ. ունենայի էլ՝ աչքերս չէի կարողանա փակել...

— Գնում ես կռվի դաշտ...

— Այո։ Ֆինանսական նախարարության կողմից փող եմ տանում և այլն։

— Չեմ հասկանում, ասում էին զինադադար են կնքել։

— Վերջին վայրկյաններին թուրքերը իրենց պայմանները անընդունելի են դարձրել։ Իմացել են, որ Ազգերի Լիգան մերժել է Հայաստանը և Վրաստանը ընդունել իբրև անդամ... այդ տեսնելով թուրքերը այնպիսի պայմաններ են դրել, որ մեզ մնում է պատվով մեռնել և ուրիշ ոչինչ...

— Ազգերի Լիգան... ա՛յ քեզ մարդկություն...

— Մարդկություն չկա, կա գայլություն...

Պերոնյանը նայեց դուրս։

— Մարդկություն չկա,— կրկնեց նա։— Կա, ահա, այս թանձր, անաստղ, խավար գիշերը, որ ռետինե կոշիկները հագած մեր է գալիս աշխարհի վրա և ոտքը դնում, ճզմում, մարում այն ամենը, ինչ կարող է լույսի նմանվել... Նայիր դուրսը՝ խավար և լռություն...

— Մյուս բարեկամները ո՞ւր մնացին...

— Երևի շուտով կգան...

Շուտով եկան նաև Մարտիրոս Ուրանյանը և Ստեփան Բանդունին։ Նրանք ևս ուտելիք և գինի էին բերել։

Ֆեոդոր Պանտելեևիչը երբ շշերը տեսավ, մազերը արագ-արագ

սանրեց և հանդիսավոր երևույթ ստացավ։ Ամեն ինչ դրեցին սեղանի վրա և նստեցին։ Ոչ ոք ախորժակ չուներ։ Ճրագի մեջ նավթ չկար. մոմեր էին վառել։ Կաբինը նեղ էր և կես մութ։

— Էսենց բաներ,— հառաչեց Ուրանյանը և լռեց։

Ուրանյանը սև, կայտառ, պնդակազմ մի տղա էր։ Բժիշկ։ Ջնայած իր համալսարանական կրթության և Պետերբուրգում անցկացրած տարիներին, մնացել էր գյուղացի։ Պարզ, ազնիվ, համառ, ինչպես են Ղարաբաղի գյուղացիները։ Գաղափարակից էր ռուս սոցիալիստ-հեղափոխականներին, համակրում էր ազգերի ֆեդերացիային, ահաբեկության, Բակունինի և Միխայլովսկու փիլիսոփայության։ Մենակ եղած ժամանակ, բարձր ձայնով և ուժգին հայկական արտասանությամբ Կորոլենկո էր կարդում և աչքերը լցվում էին արցունքով։

Ստեփան Բանդունին, երկարահասակ, ակնոցավոր, վատ տնկված գերանի նման երերացող մի անձնավորություն էր։ Լավ ատամներ ուներ և կարճատես աչքեր։ Ջնայած մշակած լալկան գրականության, նա սիրում էր կյանքը և ամենայն եսասիրությամբ փնտրում էր նրա վայելքները։ Ճեմարանական էր և վրայից, ինչպես բոլոր ճեմարանականների վրայից, փարաջայի հոտ էր գալիս, և միշտ խոսում էր կղերականների դեմ։

— Տղաներ, բաժակները լցրել եք և չեք խմում...

Ֆեոդոր Պանտելեևիչը, օղու երկրորդ բաժակից հետո, անկյունում կուչ էր եկել և ուսերը դողում էին։ Երեսի գույնը անհետացել էր, աչքերը վարագուրվել։ Հերյանը սկսել էր նրա մասին մտահոգվել։ Գնալով արագ ծերանում էր։ Անդադար գանգատվում էր առողջության մասին։ Գրպանում փոքրիկ մի իկոն էր կրում։ Մենակ եղած ժամանակը նրան համբուրում էր և հետը ժամերով խոսակցում։

— ...Լցրել եք և չեք խմում...

— Ռուսին ուղարկի թող քնի. մեղք է... Նու, Ֆեոդոր Պանտելեևիչ, ուրեմն էդպես...

— Էստեղս, դոկտոր, էստեղս... Չեմ հասկանում, սեղմում է...

— Մի օր կգամ, ձեզ մի լավ կքննեմ... Հիմա պառկեք...

— Հալատո՞մ եք, պառկում եմ և... Որտեղի՞ց են գալիս, չեմ խմանում... ոգիներ, ոգիների ամբոխներ... Անիծյալ լինի...

— Դուք մենակ չեք, մենք ամենքս էլ շրջապատված ենք ոգիներով... շղթայված...

— Ինչո՞ւ չեք խմում, չեմ հասկանում...

— Ոչ ախորժակ կա, ոչ տրամադրություն։

— Ճիշտ ասացիր, բժիշկ, մենք ամենքս շրջապատված ենք ոգիներով... Չար, անողոք ոգիներով...

— Ոգիները ներսն են, մարդկանց մտքերի մեջ, ուղեղի մեջ... Չար ոգին միջակությունների ոգին է...

— Մենք պատրաստված չէինք այդքան դեպքերի տիրապետելու համար...

— Հարցը հենց դրանում է։ Պատրաստված էինք փոքրիկ, ամենօրյա կյանքի համար... Բժշկություն էինք անում, վարժապետություն, փաստաբանություն, ծածկվում էինք կուսակցական միջին տեղերի վերմակի տակ, եկեղեցական, դպրոցական հարցերին էինք խառնվում, գաղթականների համար փող էինք հանգանակում, մի քիչ զենք էինք փոխադրում, գաղտնի ժողովներ էինք գումարում... Խոսքս այդպես անվանած մտավորականության մասին է... Մինչ դեպքերը եկան ահավոր, կատաղի, տարերային...

— Եվրոպական դիվանագիտության գայլերի դեմ հանեցինք ծխական դպրոցների նախկին վարժապետներ։

— Բեռլինի համաժողովում, Դիզրայելի անվանված խորամանկ հրեայի դեմ հանեցինք միամիտ և փառասեր Խրիմյանին...

— Մեզ պետք էր մի Գարիբալդի։

— Մեծ դեպքեր՝ փոքրիկ մարդիկ...

— Սակայն մեր ժողովուրդը մնաց հոգեկան բարձրության վրա։ Նա տոկունությամբ և հերոսությամբ կրեց դեպքերի ծանրությունը։

— Խմենք մեր ժողովրդի կենացը...

— Այդ այո, խմենք...

...Նավի շուրջը սահող գիշերը խորանում էր։ Հեռվից խուլ, խափանված որոտումի ձայներ էին լսվում և արձագանքելով փշրվող ալիքի նման մեռնում քաղաքի սահմանների մոտ։

— Պերոնյան, ես ուզում եմ անպայման քեզ հետ գալ...

— Եթե ինքնաշարժում տեղ լինի... իսկ նա՞վը, նավը առանց նավապետի ո՞նց կնավարկի։

— Նավը կպել է ժայռին և կանգ առել։ Ծովերը փախել են, և մենք նավարկում ենք խավարի ալիքների վրա... Տեսնո՞ւմ ես, խոսում եմ բարձր ոճով... Չէ, անպայման ինձ էլ կտանես...

— Վաղվա ճակատամարտը ամեն ինչ կորոշի։ Կամ կոչնչանանք, կամ...

— Ինչ էլ լինի... ռուսները կգան։ Արդեն հասել են Սևան։

— Ռուսները չեն, այլ բոլշևիկներն են...

— Ի՞նչ տարբերություն կա...

— Կա, Բանդունի, կա։ Եկողները, նախ, մեծամասնական հայեր են, օգնական զորքն է միայն ռուսական, երկրորդ, ցարական Ռուսաստանի և այսօրվա Ռուսաստանի միթոսները տարբեր են։ Ցարական տիրապետության պատճառները, այդպես ասած, բնազանցական էին, բիրտ ուժ, ձուլում, բռնապետություն։ Մեծամասնականներինը տարբեր է։ Այսօր Ռուսաստանը քաոս է, որովհետև այնտեղ քանդվում է այն ամենը, ինչ հնից էր գալիս, և ստեղծվում է նորը, ճիգ է արվում այդ քաոսը կազմակերպել։

— Չեմ հասկանում, ինչի՞ է ուզում, որ մենք հետը լինենք...

— Դա էլ մի ուրիշ խնդիր է, Բանդունի։ Ռուսը չի սիրում մենակ մնալ. նա սիրում է եղբայրությունը։ Ի՞նչ է պատճառը, երևի ստեպները՝ միօրինակ, տխուր, անվերջանալի։ Փնտրում է իրենից տարբերը՝ արևը, լեռը, փարթամ կանաչությունը...

Պետք է իրերի պատմական դասավորման վրա նայել մի քիչ բարձրից, թռչունի աչքերով... Հայաստան երկիրը պետք է վերածնվի և վերաստեղծվի... Այդ վերաստեղծումի մեծ դրաման բաժանված է գործողությունների... Առաջին գործողությունը՝ արևմտահայ գավառների ահավոր ողբերգությունը։ Երկրորդ գործողություն՝ հայերի կենտրոնացումը այստեղ։ Երրորդ գործողություն՝ Հայաստանի նյութական վերաշինությունը։ Չորրորդը՝ հայության նյութական և հոգեկան վերածնունդը և նոր պատմական դարաշրջանի սկզբնավորությունը...

— Ինչ լավատես ես։ Մարտիրոս։

— Լավատեսություն չէ, համոզում է։ Գիտեմ մի բան, երբ մարմինը ենթարկվում է գործողության, պետք ունի հանգստի, ուժերը վերագտնելու համար։ Մենք պետք է վերագտնենք մեզ, վերակառուցվենք։ Այդպես չէ՞, Բանդունի։

— Չէ, այդպես չէ։ Վերակառուցվել կարելի է միայն հոգեպես, ազատ և անկաշկանդ որոնումների ճանապարհով, ոչ թե ուրիշներից պարտադրված...

— Դրանք մտավորականների բառեր են,— միջամտեց Պերոնյանը,— և իրականության չեն համապատասխանում։

— Ինչպե՞ս, դու ուրանում ես ազատության սկզբո՞ւնքը...

— Նախ պետք է մտածել ժողովրդի մասին...

— Ժողովուրդ, ժողովուրդ... Մենք ի՞նչ գիտենք ժողովրդի մասին...

— Հարց է...

— Ես գյուղացու զավակ եմ,— ասաց Ուրանյանը,— և կարող եմ ձեզ ասել, որ ժողովուրդը հանգիստ կմնա իր տեղում, ինչպես լեռը

մնում է, երբ մրրիկ է, բուք ու բորան։ Մենք ժողովուրդը լավ չենք ճանաչում. մեր և նրա աշխարհը, մեր զգալու և նրա զգալու կերպերը տարբեր են։ Ես ապրել եմ գյուղում, ես գիտեմ... Մենք կորցրել ենք հիմնական այն պարզությունը, այն խորությունը, բնության այն կապը, որով տոգորված է նա... Մենք վազում ենք ժամանակի ետևից, մինչ նա՝ հաստատուն հողի վրա կանգնած, թողնում է, որ ժամերը անցնեն իր կողքով... Անհամբեր և ջղային՝ մենք մասնակցում ենք կյանքի անցուդարձերին մտքի ծավալով, իսկ նա՝ հանգիստ և անվրդով, թողնում է, որ այդ անցուդարձերը անցնեն իր կողքով և նայում է մարդկանց և դեպքերի վրա ներքին կայունությունից, որ մեզ անծանոթ է։ Նա իրեն զգում է իրական, ինչպես իրական է դաշտը, լեռը, երկինքը և արևը, նա մնայուն է, ամբողջական, և այդ է անշուշտ պատճառը, որ նա չի կարողանում արտահայտվել, կմկմում է, պլզած աչքերով նայում։ Այդ նայվածքը և այդ չկարողանալ արտահայտվելը մեծ խելք է, որ մենք չենք ըմբռնում։ Նա եղել է, կա և կմնա...

— Եղբա՛յր,— բացականչեց Հերյանը վհատված ձայնով,— խոսում ենք ամեն տեսակ հարցերի մասին և մոռանում ենք մի հարց, մեր սահմանների հարցը... Առանց Սուրմալուի, առանց այն հողերի, որ մենք կորցրինք, ինչպե՞ս կարող ենք ապրել...

Ամենքը մտահոգված լռեցին։

— Դա, անշուշտ, կարևոր և մեծ հարց է,— ասաց Պերոնյանը,— շատ կարևոր... Սակայն, պետք է ընդունել, որ մեր դժբախտությունների մեծ մասը առաջ եկավ հենց այդ հարցի պատճառով։ Ամեն մի հայ ուզում էր, որ իր ծննդավայրը մեր երկրի սահմանների մեջ լինի։ Մեզ կաշկանդեցին, մեզ վրա բարոյական բռնություն գործադրեցին և, կարելի է ասել...

— Վարվեցին կուսակցական մտայնությունով, ոչ պետական...

— Այդ հանցանք է...

— Անպայման,— համաձայնվեց Ուրանյանը։

— Ահա որ Բակունինը մեջտեղ եկավ,— ծիծաղելով ասաց Պերոնյանը։

— Նորից հարցը փոխեցիք։ Ես սահմանների հարցի մասին էի խոսում, իսկ դուք Բակունին եք մեջտեղ բերում,— բողոքեց Հերյանը։

— Դու ի՞նչ ես մտածում, Ուրանյան։

— Ես կարծում եմ, որ առայժմ սահմանների հարցը երկրորդական է։ Ժողովուրդների նպատակը մշակույթն է, իսկ մշակույթը խորություն է և ոչ տարածություն։ Այսօր, ամենից լավ կազմակերպված, ամենից քաղաքակրթված ժողովուրդները հյուսիսային երկրների փոք-

րիկ ազգերն են։ Նորվեգիան այնքան աղքատ է, որքան Հայաստանը, բայց տեսեք... Ջոր, մեռած հողերի, քարերի կույտերի, դարավոր լռությունով սառած լեռների առաջ կանգնած այդ ժողովուրդը պարտավոր է նորանոր գյուտեր անել հողերը կյանքի բերելու համար։ Գյուտ անել, նշանակում է խելք գործադրել, հոգի մաշեցնել, ճիգ անել, հնարել, պայքարել։ Մարմնով և հոգիով կերակրել շրջապատող միջավայրը, բնության և մարդկանց կրավորականության վրա հաղթություն տանել։ Այդ մշակույթ է։

— Այդ այդպես է,— ասաց Պերոնյանը։— Պետք է սկսել ամենատարրական բաներից։ Պետք է մոռանալ անցյալը, գոնե առժամապես, և վերսկսել ամեն բան նորից՝ պարզ սրտով, պայծառ աչքերով։

— Իհարկե...

— ...Դեռ մի շիշ գինի է մնացել...

Ֆեոդոր Պանտելեևիչը, որ ամբողջ ժամանակ մնացել էր կես քնած վիճակում, հանկարծ աչքերը բացեց, զարմացած չորս կողմը նայեց, տանջող մի մտքից ցնցված ոտքի կանգնեց և պաղատող ձայնով ասաց՝

— Գասպադա[1], ես ուզում եմ գնալ...

— Ո՞ւր, այդպես, Ֆեոդոր Պանտելեևիչ...

— Ո՞ւր, չգիտեմ... Ես ոչինչ չգիտեմ, ես ոչինչ չգիտեմ... Ուզում եմ գնալ, ուզում եմ գլուխս առնել փախչել... Գասպադա, ես ունեի մի զավակ... փոքրիկ դեղին բեղեր ուներ, կապույտ աչքեր ուներ, խելացի ճակատ ուներ... Երբ փոքրիկ երեխա էր, նա փայտի կտորներով նավ էր շինում։ Գիմնազիայի չորրորդ դասարանում թվաբանության մեջ առաջինն էր և իր ընկերներին փողով դաս էր տալիս... Տեսնո՞ւմ եք ինչպիսի տղա էր իմ տղան... Եվ հիմա...

Հուսահատ ձեռքերը շարժեց և աչքերը լցվեցին արցունքով։

— Իմ զավակը... փոքրիկ դեղին բեղեր ուներ... Ես չեմ կարողանում, հասկանո՞ւմ եք, ես չեմ կարողանում... Ես գնում եմ...

Ասաց և նորից տեղը նստեց։

— Զգացվել է։ Թողեք, կհանգստանա...

— Ահա հանգիստ նստել խմում ենք, խոսում, վիճում... Մարդը վիճում է, որովհետև վախենում է մտածել...

---

[1] Պարոնայք։

— Հա, էլի...

— Ճի՞շտ է։ Երբ մարդ մի վայրկյան լռում է, կարծես մեկը դղրդացող քայլերով գալիս է... Եվ մարդ խոսում է, վիճում է... Հը՞...

— Ուղղակի մարդ խեղդվում է, ոչ պոռալ կարող է, ոչ կանչել... Գինին էլ չի ազդում, ինչքան խմում ես, այնքան արթուն ես... Երբեմն էլ մարդ թմրում է, մարմինը չեզոքանում է, ես այստեղ չեմ, ասում է... Չէ, հուսահատություն է...

— Այդ դյուրազգայնությունները թողնենք մի կողմ...

— Ի՞նչ դյուրազգայնություն. ես քեզ բան եմ ասում...

— Լինի, ինչ լինելու է... մենք ի՞նչ կարող ենք անել...

— Հեշտ է այդպես ասել... Մենք խոմ մահմեդական չե՞նք, թե ինչ գրված է՝ միևնույն է, պիտի լինի...

— Եթե անգամ գրված է՝ խառն է... Ղուրան, Ավետարան, Զրադաշտ...

— Կարլ Մարքսի «Կապիտալը», Լենինի հատորները...

— Կատակը մի կողմ, կուզենայի իմանալ կաթողիկոսը այս բոպեիս ի՞նչ է մտածում...

— Այս ժամին կաթողիկոսը քնած է և ոչինչ չի մտածում...

— Եթե կա մի հոգի, որ վշտահար ման է գալիս Հայաստանում, նա էլ մեր հարևան Աբովյանն է...

— Ման է գալիս և պատրաստում «Վերք»-ի երկրորդ հատորը...

— Նա էլ օրեր էր տեսել, հա...

— ...Կոլեժսկի ասեսոր Աբովյանը, ապրիլ ամսի երկուսի լուսաբացին տնից դուրս եկավ և էլ երբեք չվերադարձավ...

— Նրան ես Հայաստանի խավարը կուլ տվեց...

— Եղբայր, սա ինչ երկար գիշեր է...

— Եվ թող լինի երկար։ Միևնույն է, լուսաբացը խինդ ու ծիծաղ չի բերելու...

— Սոսկալի է այս անորոշությունը։ Մեզանից ամեն մեկը այլևս մի Աբովյան է, կայիր և չկաս...

— Փոխվում է գործողությունը, փոխվում են բեմադարդերը, և դու փախչում ես դեպի կուլիսները։ Դեպքերը երեսիդ վրա ուրիշ դիմակներ են դնում, և դու այն չես, ինչ կարծում էիր որ ես...

— ...էլ գինի չմնաց...

— Ժամը քանի՞սն է։

— Զորսի մոտ է, ինքնաշարժը չեկավ։

— Ես, համենայն դեպս կպատրաստվեմ։

— Սպասեք, կարծեմ ձայն է լսվում...

— Չէ, ոչինչ չի լսվում...

— Ինձ այդպես թվաց...

— Հա, նա է...

— Ֆեոդոր Պանտելեևիչ, ես կվերադառնամ միայն երեկոյան... Ձեր աչքերը նավի վրա պահեք, խնդրում եմ... Ահա քանի օր է շունը նավ չի վերադարձել, ո՞վ է իմանում, որտեղ է թափառում, եթե գա, կապեք... Եվ, առհասարակ, Ֆեոդոր Պանտելեևիչ, սատանան տանի, տրամադրությունը բարձր պահեք, բարձր...

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

1

...Քանաքեռի կողմից հնչում էր Ինտերնացիոնալը...

Ամեն կողմից մայթերի վրա թափված երիտասարդների խմբերը ուրախացած աղմկում էին և կուրծքները ուռեցնելով ուռա՜ կանչում։ Պատուհաններից դուրս թափված ազգաբնակչությունը անձկությամբ նայում էր և սպասում։

Մայրաքաղաքի կենտրոնական փողոցում, մի նախարար և մի խմբապետ՝ իրենց անքուն երեսների վրա լեղի ժպիտ կախած, անհանգիստ աչքերը այս ու այն կողմ ոլորելով սպասում էին...

Կարմիր բանակի և կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները պետք է ժամանեին...

Վերջապես, լսվեցին ձիապայտերի ձայներ։

Երևացին մարդիկ։ Հնչեցին փողերը։ Պղնձի աղմուկով Ինտերնացիոնալը հնչում էր մայրաքաղաքի վրա...

— Թող ամեն մարդ հանգիստ գործը շարունակե...

Հեղափոխական կոմիտեի անդամները, որոնք երկար ճանապարհի ընթացքում ցեխոտվել էին, ինքնաշարժերից վայր իջան, մտան Նալբանդյան փողոցի տներից մեկը, զգեստների վրայից ցեխը թափ տվեցին ձեռքով, թմրած ոտքերը խփեցին գետնին, նստեցին կլոր մի սեղանի շուրջը, ծխախոտներ վառեցին և հայտարարեցին ժողովը բացված։ Բոլորն էլ հայեր էին...

Տան առաջ հրացանը ձեռքին զինվորներ կանգնեցին։

Կաշվե բաճկոններ հագին և ատրճանակներով զինված տղաներ անհանգիստ այս ու այն կողմ վազեցին, ներս մտան և շտապ մեկնեցին, անհետացան։

Փողոցը փակվեց։

— Թող ամեն մարդ հանգիստ գործը շարունակե...

Մինչ զորքերը կարմիր դրոշակներ ցցած անցնում էին փողոցներից, ազգաբնակչությունը ողջույնի խանդավառ ուռա էր կանչում...

Ոչինչ չպատահեց։ Անգամ տատամսող մարդիկ և կանայք մոտեցան պատուհաններին, վարագույրների ծայրերը կամացուկ վեր քաշեցին, նայեցին, ականջ դրեցին և, տեսնելով որ ամեն ինչ խաղաղ էր, զգույշ կերպով կանգնեցին շեմերի առաջ, այս ու այն կողմ նայեցին, ապա, ինչ ուզում է թող լինի... ծնկների թեթև դողը զսպելով իջան փողոց։

Ման եկան։ Վեր վար։

Սկսեցին բարձրաձայն խոսել։ Միծաղեցին, ինչպես վայել է անմեղ մարդկանց, որոնք քաղաքականության հետ գործ չունեն։

— Ախպեր, հայ են չէ՞, նրանք էլ մեզ նման հայ են...

Հայ էին։

Շատերը մինչև անգամ հանդիպում էին կոմունիստ հին ծանոթների։ Ձեռքը երկարած վազում էին նրանց ողջունելու համար։ Աղմուկով ուրախանում էին...

— Առաքե՞լը... եղբոր նման ենք եղել, միասին հաց ենք կերել... պատվական տղա է...

Առաքելը կամ Մարտիրոսը այդ ողջույններին պատասխանում էին քաղաքավարի, զսպված ժպիտներով։

Խոսակցության մեջ ուրիշներ խառնում էին Մարքսի, Էնգելսի, Լենինի անունները։

— Դե, Մարքսը վաղուց ասել է...

Լսում էին և նայում։

— Թող ամեն մարդ հանգիստ գործը շարունակի...

Զմեռը։

Ծխնելույզների մեջ քամու կատուները անհանգիստ մլավում էին։ Մռնչելով ավլում էր տանիքների ձյունը։ Քաղաքային կլուբում մարդ չկար։ Խանութները վաղուց փակվել էին։ Նալբանդյան փողոցի տան մեջ կոմիտեի ժողովը շարունակվում էր։

Վերը, ժայռի վրա նավի կայմը դողում էր և պարապ ծխնելույզը երգում։

* * *

Ֆեոդոր Պանտելեևիչը...

Հենց որ իմացել էր կոմունիստների դալու լուրը, պատուհանից կախած փալասի կտորի նման ծալվել էր։ Անկյունում կուչ էր եկել և մրսել։ Սակայն, երբ հեռվից լսել էր ներս մտնող կարմիր բանակի երաժշտության ձայնը, տեղից վեր էր թռել, դուրս նետվել, գնացել նրանց դիմավորելու։ Գլխարկը խենթի նման թափահարելով՝ վազել էր նրանց կողքից և, ձայնը գցած, կեցցեներ պոռացել։

— Բրատցի, եղբայրներ, տավարիշչի... կեցցե՛, կեցցե՛...

Իջել էր մինչև քաղաք։ Մեկ մայթից մյուսը թռնելով, բռունցքները կրծքին վարնելով թավալ էր եկել կարմիր դրոշակի հետևից և խրզված ձայնով ճչացել, ոգևորվել։

— Գիտե՞ք, կապիտան, ուրեմն եկան, եկան,— ասել էր նա՝ շունչը կտրած նավ վերադառնալով։

Հերյանը նայել էր նրա աչքերի մեջ և ոչինչ չէր պատասխանել։

— Չե՞ք հասկանում, եկան, վերջապես, եկան...

— Ի՞նչ է, ուրախացե՞լ եք...

— Բա, ո՞նց չուրախանալ... Գիտե՞ք ովքեր են եկել... Կոմունիստները... Իսկական մարդիկ, իսկական զինվորներ... Հիմա էլ վերջացան պատերազմ, սով, չարչարանք։ Հիմա կարող ենք շունչ քաշել, աշխատել, մտածել նավի մասին... Իսկական մարդիկ, իսկական զինվորներ...

Գրպանից լավաշի մի երկար կտոր էր հանել, արագ-արագ կերել և, վերարկուն վրան քաշելով պառկել քնել էր։

Մարտինը և շունը երկու օրե ի վեր կորել էին։

Հերյանը կարտուզը հագավ, բաճկոնի օձիքը բարձրացրեց և կանգնեց կամրջակի վրա, քամին նրան ետ հրեց և ապտակեց երեսին։ Մութ էր։ Քաղաքում մարել էին բոլոր ճրագները։ Ոչինչ չկար։ Չէին լսվում գիշերային հրացանաձգությունները։

Գիշերը լափել էր Երևան քաղաքը։

Հանկարծ մեծ, անհասկանալի մի զորություն լափել էր Երևան քաղաքը...

Տները պառկել էին ուժասպառ, վշտոտ, դատարկված։ Հերյանը ևս իրեն զգում էր ուժասպառ, վշտոտ, դատարկված։ Ահ, լինել ծովի վրա, նավարկել...

Ռունգները բաց արեց և տարածությունով ծարավ՝ քամին ներս քաշեց։ Այն չէր։ Պակասում էր աղը։ Լեռ էր և հող։ Քար, փտած տերևներ,

ձյուն էր։ Հին, շարշարված և մաշված երկիր էր։ Թրիք, ճարպով եփված տնային օճառ, գոմ և հարդ։

Երեսը երկարեց քամուն, որ խփի։ Ինչքան նա խփում էր, այնքան սիրտը մղկտում էր։ Նրա սրտում անխոս մի վիշտ, անհասկանալի և համր՝ թպրտալով անհանգիստ ման էր գալիս։

Անկարելի էր մտածել։ Ինչպե՞ս կարելի էր մտածումով ընդգրկել անսահման ուժերի այս խաղը։ Զորությունների այս բախումը, արթնացած ալիքների վիթխարի այս վազքը։

Իրեն զգաց ծիծաղելի և մենակ։ Անուժ, լքված, որբ։

Եվ անձկությունով լցված նրա սիրտը ցանկաց նրան, որին ուղղված նամակը պահում էր գրպանում։ Երբեք այդքան ծարավ չէր եղած սիրո համար, երբեք այդքան չէր սիրած սերը։ Ու լաց եղավ որբը։ Լաց եղավ այն մանուկը, որ յուրաքանչյուր մարդ կրում է իր մեջ. այն միամիտ և անպաշտպան էակը, որ թույլ ձեռքերը երկարում է լրացուցիչ լույսին և ուզում է ամբողջանալ։

Նրա ամբողջ կյանքը ֆիլմի արագությամբ անցավ աչքերի առաջից։ Տեսավ ինքն իրեն։ Ո՞վ ուներ այս աշխարհում, ո՞ւմ հետ էր սրտով, մտքով, հոգով կապված... Ահագին շարշարանքներով փորձել էր վերագտնել իր երկիրը, իր հայրենիքը... Ի՞նչ պիտի լիներ, եթե նավից էլ զրկեին նրան...

Այդ միտքը սարսափեցրեց նրան։ Այդ չէ, այդ երբեք. ավելի լավ էր մեռնել։ Չէ, այդ չէ։ Աչքերը փայլփլեցին և բռունցքները սեղմվեցին։ Ուրիշների համար այդ համեստ նավը կարող էր նշանակություն չունենալ, բայց իրեն համար ամեն ինչ էր։ Իրեն համար կյանք էր, ներքին իմաստ։

Նավը, իր նավը...

Խոնավությունից ուսի վերքը սկսեց ցավել։ Ներս մտավ, նստեց։ Մոմը մարել էր։ Ռուսը շարունակում էր խոմփալ։ Ե՞րբ պիտի բացվեր լույսը։ Ուզում էր, որ լույսը բացվի։ Վախենում էր, որ լույսը կբացվի։ Գլուխը դրեց սեղանի ծայրին — այդպես սովոր էր անել հերթապահությունների ժամանակ — և աչքերը փակեց։

Նավի ծխնելույզը երգում էր։

— Ախ, դու անիծյալ սատանա,— բացականչեց Թեոդոր Պանտելեևիչը վերարկուն ուսերից նետելով։

Այս ու այն կողմ շարժվեց, նստեց։

— Ի՞նչ է, կապիտան, քնած չե՞ք...

Հերյանը գլուխը բարձրացրեց և հորանջեց։

— Չէ, քնած չեմ։

— Ախ, ինչ լավ է, որ քնած չեք։

— Ինչո՞ւ։

— Ուղղակի տանջանք է...

Ձեռքերը քսեց ճակատին։

— Ուղղակի տանջանք է,— կրկնեց նա։— Սատանան տանի... Ի՞նչ է, մոմը պրծե՞լ է...

— Պրծել է։

Հառաչեց և մութի մեջ խոսեց։

— Երա՞զ էր, տեսի՞լք... Մի տարօրինակ բան, բոլորովին, մի ուրիշ բան... Պատկերացրեք, իմ սեփական աչքերը հետևից ընկած ինձ հալածում էին... Ինչպե՞ս եք այդ բացատրում, ա, ինչպե՞ս... Ասում եմ ձեզ, ահա իմ այս աչքերը... կոպերի տակից դուրս եկած... Հետևիցս գալիս էին և ինձ հետապնդում...

— Նու, Ֆեոդոր Պանտելեևիչ,— մռմռաց Հերյանը նեղացած ձայնով,— դուք էլ միշտ...

Ուժ չունեցավ նախադասությունը վերջացնելու։ Աղմուկով հորանջեց։

— Պարզապես,— ավելացրեց քիչ հետո,— ձեր կերած լավաշը հում է եղել և չեք մարսել...

— Ինչ ուզում եք ասացեք, կապիտան... Չեմ հասկանում... Իմ աչքերը... Եվ ոչ թե այն աչքերը, որ ունեմ հիմա, այլ այն աչքերը, որ ունեի սրանից մի քսան տարի առաջ... հիշում եմ հայելուց... Այն տարիներին խմիչքը և կյանքը նրանց այդպես փոխած չէին, նրանց բիբերը լցված էին արևով, ռեսինը պինդ էր և նայվածքը որոշ, ուղիղ և քիչ էլ խիստ... Եվ ահա՝ նրանք էին... ինչպե՞ս նկարագրեմ այն, ինչ զգացի։ Վախեցա, կապիտան... Եվ ինչո՞ւ պետք է վախենայի իմ սեփական աչքերից, ահա, հաբեցը հենց դրանում է... Նրանք գալիս էին սահելով... երկու բիբերի կայծկլտող ասեղները իմ վրա սառած... Եվ ես փախչում էի...

— Երևի երեկ խմել եք...

— Դժբախտաբար, և ոչ մի կաթիլ...

Լռեց։ Քիչ հետո տկտկող մի ձայն լսվեց։

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Հերյանը։

— Ոչինչ։ Ցուցամատով խփում եմ իմ գանգին...

— Հը՞...

— Ցուցամատով խփում եմ իմ գանգին և ուզում եմ հասկանալ... Իմ սեփական աչքերը, կապիտան... Մտածում եմ նաև. երբ մեռնենք

և ամեն ինչ մարի այդ մոմի նման, պիտի մնան աչքերը իրենց հազարավոր նայվածքներով... Այդ նայվածքներում արձանագրված կլինեն մեր ամբողջ կյանքի պատմությունը, բոլոր եղելությունները, բոլոր զգացումները, բոլոր հուզումները, սերերը, ատելությունները... Եվ այդ նայվածքները կպատմեն շատ բաներ, որոնք ներկա էին մեր մեջ և մենք չէինք ըմբռնում... Պիտի հասկանանք և պիտի սարսափենք...

— Ը՞-ը դա՞-ա...— մոմոաց Հերյանը։

Հետո լռեցին։

— Ե՞րբ պիտի լուսանա,— մտածեց նա։

Այդ սպասումը անտանելի է։ Անտանելի է։

— Ես ասում եմ,— շարունակեց ռուսը,— ասում եմ, որ մահից հետո կյանքը գնում է ետ և ոչ թե առաջ...

— Ի՞նչ եք ասում...

— Չե՞ք հասկանում ինչ է... Աչքերը վազում են ետ... Խեցգետինի նման... ապրած տարիները միշտ վերադառնում են... մինչև անհայտության այն գիշերը, որտեղից մի անհայտ մղանակ բոլորովին իզուր կերպով մեզ նետել էր լույս աշխարհ... Հող էիր և հող պիտի դառնաս...

— Մեծ նորություն ասացիք...

— Մեծ չէ, կապիտան, բայց ճիշտ է... Առհասարակ, չգիտեմ ինչ է... ահա մտածում եմ մահի և ամեն տեսակ իմաստասիրական հարցերի մասին, իսկ իմ սիրտը շարշարվելու աստիճան պայուսնի իկրա է ուզում... Եվ ահա մարդ ասված արարածը, շուրջը խավար է ման գալիս, լցվել է ամեն տեսակ վատ նախազգացումներով, իսկ մարմինը ձգտում է նուրբ և համով բաների...

Հոհոա՞ց։

...Եթե ուժ ունենար, առյուծի նման կմռնչար...

Ի՞նչ պիտի պատահեր վաղը։

— Ֆեոդոր Պանտելեևիչ, ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է պատահել մեզ հետ...

— Ի՞նչ եք ուզում որ լինի։ Ես արդեն որոշել եմ։

— Ի՞նչ եք որոշել։

— Ես, կապիտան, ինձ հայտարարում եմ կարմիր։

— Հիմար բաներ եք ասում։

— Հիմա՞ր... իսկի էլ հիմար չէ... ինձ համարում եմ մեռած... Ահա կատակը ինչում է, մեռած եմ, չկամ... Անցել եմ, այդպես ասած, կյանքի սահմանները և մտել ուրիշ մի լինելության սահմաններից ներս...

Իսկապես, ենթադրեցեք, որ ընկել եմ անշունչ, որ մարդիկ եկել մարմինս հանձնել են մի կտոր հողին։ Դուք կարծում եք ամեն ինչ վերջացել է, իսկ դուրս է գալիս, որ չի վերջացել, ձեր աչքերը բաց եք անում և տեսնում եք, որ այդ մյուս աշխարհը զարմանալի կերպով նմանվում է ներկա աշխարհին՝ նույն մարդիկ, նույն տները, նույն փողոցները։ Ուրախանում եք։ Մահը այնքան էլ սոսկալի չէ...

...Եթե ուժ ունենար, առյուծի նման կմռնչար...

— Դե, հիմա փորձենք քնել...

— Լավ, քնենք։

Ոչ ոք չքնեց։ Լսում էին քամու սուլոցը։

2

Առավոտյան, առաջին մարդը, որին Հերյանը հանդիպեց, Մաթոսն էր՝ հիվանդանոցի դռնապանը։ Աչքերը քնով և վախով լցված, ուսերը թուլացած, վայր ընկնող տաբատը անդադար վեր քաշելով, նա հենց որ Հերյանին տեսավ, սկսեց բառերը ուտելով, թքելով, հառաչելով պատմել և գանգատվել։

Հերյանը չէր ուզում հավատալ։ Նա գիտեր, որ ծպտյալ գործակալները սուտ լուրեր էին տարածում ժողովրդի մեջ։

— Էդպես, ամբողջ գիշերը... մինչև լուսաբաց... — շարունակում էր Մաթոսը,— քաղաքում ոչ ոք աչք չի փակել... Մեկ էլ տեսար եկան, բոլորովին անսպասելի կերպով... կեսգիշերին կամ ավելի ուշ... Գալիս են, զինվորներով տունը շրջապատում, մտնում ներս և սկսում խուզարկություն...

— Ի՞նչ են փնտրում...

Մաթոսը ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք։

— Ի՞նչ իմանամ, քե մատաղ, ի՞նչ իմանամ... Խոխեքը լաց են լինում, կիները սարսափում են, մարդիկ անկողնից վեր են թռնում և գույնը գցում...

Աչքերը դուրս ընկան և բեղերի ծայրերը ծալվեցին։

— Ամենից շատ պաշար և ուտելիք են փնտրում... — շարունակեց նա ձայնը իջեցնելով,— եղած-չեղածը տանում են Ռուսաստան...

Հերյանը ապշած նայեց մյուսի երեսին։

— Ռուսաստան,— կրկնեց նա։

— Ադա, դու էլ բան ասացիր...

— Ասված վկա, էնպես են ասում...

— Սխալ ես հասկացել։ Ախր նրանք եկել են թշվառության մեջ ընկած ժողովրդին օգնության հասնելու... Մաթոս, խե՞ ես, ի՞նչ է... սխալ ես հասկացել... պաշարը Ռուսաստանից գալու է Հայաստան... և ոչ թե...

Եվ Հերյանը ջղային ծիծաղեց։

Մաթոսը շապկան հանեց, ուժով թափ տվեց և նորից գլխին դրեց։ Երեսը մոտեցրեց Հերյանի երեսին և աչքերը մեծ բացած՝

— Ինձ պատմեցին... տանում են, եղած-չեղածը տանում են... էլ ալյուր ասես, լավաշ ասես, միս, հավ, մեղր, չորթան, լուբիա... Իսկ շատերին էլ տանում են բանտ... Ասում են գնացել են Միսակ բիձայի տունը... թե՝ հանիր ինչ ունես...— «Ես ոչինչ չունեմ,— ասել է Միսակը,— ես վեց երեխի տեր մարդ եմ և կինս էլ, տեսեք, հիվանդ պառկած է»։ Զինվորները մտել են մառան...

— Դրանք այդպես կոչված ականատեսի սուտեր են, մի՛ հավատաք...— ասաց Հերյանը։

— Բա՞...

Լռեցին։ Հերյանը հեռացավ։

...Ման էր գալիս ոտքերը մի քիչ գետնին քսելով։ Եվ ոտքերի այդ քսվելը, ինքն էլ չգիտեր ինչու, իրեն հիշեցրեց նախ ալիքների մեղմ շփումը ափին, ապա խոտը կտրող գերանդիի խուլ խշշոցը... Ճրրխկ, ճրրխկ... Մարմնի վրայից սարսուռ անցավ... Այդ պատկերին հաջորդեց ուրիշ պատկեր։ Մտածեց, երբ գործիքի սուր դանակը մխրճվում է խոտերի մեջ, հարևան բույսերը երևի զգում են մոտեցող վտանգը, բայց չեն կարողանում փախչել...

Սիրտը հուսահատվեց։

Որոշեց իջնել քաղաքի կենտրոնը։

Քայլեց հանգիստ, աջ ու ձախ նայելով։ Անցորդները շտապ-շտապ անցնում էին և անհետանում փողոցների անկյուններում։ Կենտրոնական փողոցում հանդիպած քահանան մորուքը շոյելով մտավ եկեղեցի։ Նրա հետևից ներս մտան մի քանի ծերեր։

Ուրեմն, ոչինչ չէր փոխված։ Մաթոսը չափազանցում էր։

Ներքևից եկող մեկը՝ կաշվե բաճկոն, բարձր կոշիկներ, ատրճանակը մեջքին անցավ Հերյանի կողքով։ Կայծկլտող նայվածքը կանգնեցրեց Հերյանի աչքերի մեջ և պեղեց մինչև աղիքները։ Կարծես բզզող մի մեծ միջատ խայթեց նրան։

Այդ նայվածքը թունավորեց Հերյանի սիրտը։ Սառը մի հեղուկ վազեց ծնկների միջից։

— Ո՞վ կարող է լինել,— մտածեց։— Երևի ինձ շփոթեց մի ուրիշի հետ։

Այնուամենայնիվ, անտանելի ճնշվածություն զգաց։ Ինչ-որ ուժ նրան սեղմեց աքցանի մեջ։ Իրեն զգաց կաշկանդված, շղթայված, ճնշված։ Ինքը սովոր չէր կաշկանդումի, սովոր էր ազատ կյանքի։ Ընդվզեց։ Արյունը գլխին տվեց։ Ուզեց փողոցի մեջտեղը կանգնել և բղավել։ Սակայն հրաժարվեց և ձեռքերը մեջքին դրած անտարբեր շարունակեց փողոցից վայր իջնել։

Նավի առաջ կանգնած Ֆեոդոր Պանտելեևիչը սպասում էր նրան։

— Ա՛հ, կապիտան, լավ է եկաք... Չգիտեի ինչ անել... եկել ձեզ էին հարցնում...

— Ի՞նձ։ Ո՞վ։

— Իշխանության կողմից։ Նավի մասին տեղեկություններ էին ուզում, ես ինքս կարող էի նրանց բոլոր տեղեկությունները տալ... ուզում էին ձեզ անձամբ տեսնել։

Հերյանը նայեց ռուսի աչքերի մեջ։

— Գիտե՞ք ինչ, կապիտան... Ես ուզում եմ գնալ քաղաք...

— Լավ, գնացեք...

Մտավ նավ, պայուսակը լցրեց ինչ կարող էր, կաբինը բանալիով կողպեց և դուրս եկավ։

Ռուսը արդեն մեկնել էր։ Մութ էր։

Պայուսակը վերցրեց, վերջին անգամ նայեց նավին և, կուրծքը մութին տալով, հեռացավ։

3

Հերյանը նախ մտածել էր բարձրանալ Սևան, բայց քիչ քայլելուց հետո միտքը փոխել էր, կողմնակի փողոցներով իջել էր մինչև Զանգուի կամուրջը և մտել Վաղարշապատ տանող ճանապարհը։

Այդ արել էր առանց շատ երկար մտածելու, գրեթե բնազդաբար, քամու հոսանքի ուղղության հետևող թռչունի պես։ Բացի այդ, տարվա այդ եղանակին Սևանի ճանապարհը լցված էր ձյունով, քամիներով և լեռներից իջած սոված գայլերով։

Այլևս ոչ մի «ինչու» գոյություն չուներ։ Ահա մութը եկել փաթաթվել էր նրա մարմնին. ահա եկել էր նաև ծերունի ցուրտը՝ ոսկրոտ և անկյունավոր. ապա բոլոր մարդիկ մտել էին տներից ներս, պատըս-

պարվել հաստ պատերի ետև, իսկ ինքը տուն չուներ, ապաստարան չուներ, այլևս ոչինչ, այլևս ոչինչ։

Նրանք՝ Հերյանը և նավը, եկել էին ծովի կողմից երազով լցված աչքերով։ Եկել էին ծովի կողմից և ընկել քարերի, հողերի, լեռների ծոցը։ Ընկել էին վայրեր, որտեղ ձյուն, քամի և տառապանք կար։ Տավար, հող, արյուն, մարդկային մարմին, թրիք և ժայռ։

Ցուրտ էր։ Մութ էր։

Քայլում էր արագ, տաքանալու համար։ Ավելի արագ վազում էին նրա մտածումները։ Ո՞ւր էր գնում, ինքն էլ չգիտեր։

Երկինքը լցված էր կանաչ աստղերով։ Կարծր ձյունը մղկտում էր նրա ոտքերի տակ։

Բաղերի շուրջը քաշված հողաշեն պատերի ետևում հաստ ձյուն էր նստել, ամեն ինչ ծածկել։ Ձմռան որթատունկերը իրենց ջերմությունը պահող մեռելներ էին, գարնան այդ գերեզմանները պիտի բացվեին և նրանք շրթունքները արևի ստինքներին կպցրած պիտի բարձրանային վեր, հողերը թափ տային և վերապրեին նոր և գեղեցիկ կյանքով։

— Մարդ արարածը ևս,— մտածեց Հերյանը,— քանի-քանի՜ անգամներ անհետանում է ինքն իր մեջ, մրափում իր մսերի ծալքերի խորքում, ապա, մի նոր գաղափարի արևի լույսի տակ, նորից վերադառնում է կյանքին և ծաղկում գարունով։

Այո, քանի-քանի՜ կյանքերով է ապրում մարդ արարածը...

Ահա ինքը՝ գիշերվա և ձյունի մեջ կորած մի մարդ, որին տանում է ճանապարհը, որի ձեռքից բռնել են քամին և գիշերը և տանում են չի իմանում ուր։ Եվ ինքը՝ հեռավոր ճամփորդությունների նավապետ Արա Հերյանը և ոչ բոլորովին ինքը, ոչ բոլորովին Արա Հերյանը։ Ինքը, որթատունկի նման առայժմ ծածկված է գիշերով, ցրտով, աստղերով և անհայտով։

...Կարևորը այդ չէր սակայն։ Կարևորը իր միությունը և իր գիտակցությունը չկորցնելն էր։ Չկորցնել ներքին աչքերը։ Կապույտ այն բոցը, որ ետ քաշված, նայում է իրեն կրող մարմնի ամեն մի շարժումին, շրջապատող դեպքերին, աշխարհի շարժուձևերին և մնում է անփոփոխ, ինքն իրեն հավատարիմ։ Մնում է նույնը՝ կյանք — մահի և մահ — կյանքի ոլորվող շրջաններում, մինչև հավիտենություն...

Ինչ լավ արեց, որ մեկնեց քաղաքից։

Այն վայրերը, որտեղից նա անցնում էր, այնքան մոտ էին սրտին, այնքան հոգեպես մտերիմ, որ նա իրեն այլևս մենակ և լքված չէր

զգում։ Արարատյան դաշտը, Մասիսի հսկա ստվերը, էջմիածինը, բաղերը, տների մեջ քնած շինականները և լռություններով, ցրտով լցված մեծգի այս գիշերը, վերևից նայող այս աստղերը, ձյունը և ձմեռը չէին կարող իրեն դավաճանել, որովհետև ինքն էլ մի պատառ Մասիս էր և մի պատառ էջմիածին, և՛ աստղ, և՛ գիշեր, և՛ ձմեռ...

Չէ, սիրտը հանգիստ էր։ Հիմա նույնիսկ գիտեր, թե ուր պիտի գնա։ Չէ՞ որ Ուրանյանը Վաղարշապատում էր։ Նա մնացել էր այնտեղ վիրավորվածներին բուժելու համար։ Ուրանյանը, կայտառ, մաքուր, Ուրանյանը, որից լեռ էր հոտում, ժայռ և թթենի։

Այդ միտքը նրան ուրախացրեց։ Կանգ առավ, ժպտաց գիշերին, ձեռքերը տաքացնելու համար մեկը մյուսին քսեց, պայուսակը բարձրացրեց և քայլեց։ Մի գյուղի մոտից անցնելիս, շների հաչոց լսեց։ Կրակեցին օդում։ Նորից ամեն ինչ լռեց։

Այդ լռությունը, և այն ամենը, ինչ այդ լռությունը նվաճել էր, փարվեց նրան, միացավ նրա մարմնին, լցվեց նրա աչքերի մեջ, պառկեց նրա սրտի վրա, և նա քայլեց կես հափշտակված, այդքան մեծություններից գրեթե հարբած։

Գիշերը սարսռում էր քամուց հպված թմբուկի նման։

— Հարցը նրանում է,— մենախոսեց նա,— որ մենք չափազանց կապված ենք իրերին։ Մեր ձեռքերը, մեր միտքը, մեր զգացումները կաշկանդված են, շղթայված են առարկաներով։ Մենք մերը չենք, մենք մենք չենք, այլ քանակությունների մի մասը, կշռույթի, չափի մի աստիճան։

Մինչ ահա գիշերը կառուցել էր անսահման մի աշխարհ, նա քայլում էր և նրա քայլերը ընթանում էին լայն, մեծգի, անվերջանալի անհայտության մեջ։ Ոչ մի սահման, ոչ մի շղթա։

Միություն, լիություն։

— Ա՜հ, կարողանալ այդ միությունով մնալ ընդմիշտ զգեստավորված, կարողանալ հրաժարվել հանուն այդ միության...

Հիմա հասկանում է։ Հարուստ է նա, ով ամեն ինչից հրաժարվում է։ Մերկանում է իր մարմնի սահմաններից, բաց է անում իր մտքի բոլոր պատուհանները և աշխարհը ընդունում է ներսը, ինչպես մի նավակ, որը արյունի և զարկերակի է վերածվել։

Երբ հասավ Վաղարշապատի մոտերը, աստղերի բազմությունը ցրվել էր։ Երկնքի ծայրին տարածվող ագաթ և ոսկի դաշտերում արևը կրակ և լույս էր ման ածում։

Հերյանը կանգ առավ անորոշության մատնված այդ երկնքի տակ և ինքն էլ մատնվեց անորոշության։ Գյուղաքաղաքը դեռ փաթաթված էր ստվերներով։ Մարդ չկար։

Պայուսակը դրեց վար և ոտքի ծայրերը խփեց գետնին. ցրտից մարմինը փայտացել էր։ Շուտով երկնքի վրայից լայն լույսեր սահեցին և արևելքի կողմից հրավառ բոցեր բարձրացան։ Հերյանի աչքերը լայնացան. նրան ողջունելու եկան ոսկեթույզ Արարատը և ճանապարհի աջ կողմում ցցված Հռիփսիմեի եկեղեցին։

Նավապետ Հերյանը կարտուզը հանեց, բարևեց Արարատին, բարևեց Հռիփսիմեին։

Նստեց պայուսակի վրա և նայեց։

Հուզումի մի մեծ ալիք բախվեց նրա սրտին, նվաճեց նրա ամբողջ անձը։ Ամբողջ գիշեր քայլել էր։ Ոչ մի հոգնություն չէր զգում։ Աչքերը թարմ էին, և առավոտը պաղ ձեռքերով լվացել էր նրա երեսը։

— Հայոց աշխարհի Պարոնը,— փսփսաց նա Արարատին նայելով։— Ամեն ինչ սկսում է նրանով և ամեն ինչ վերջանում նրանով։ Հայոց աշխարհի մեծ Պարոնը։

Նորից կարտուզը հանեց և խոնարհվեց։

Նայեց Հռիփսիմեին և հիշեց Միրանյանի խոսքերը։ Մեղեդիացած բոց, թաքնված երգ, ներդաշնակություն, ճրագ։ Տարակույս չկար, Արարատը և Հռիփսիմեն Հայոց աշխարհի հոգեկան այն երկու բևեռներն էին, որոնց միջև ընթանում էր ամբողջ հայ ժողովրդի պատմությունը։

Հերյանը հասկացավ, որ նոր իջնող ճառագայթների մեջ հանկարծ կենդանություն ստացած այդ տեսիլքը պարզ ճարտարապետություն չէր, քարերի ներդաշնակ շարվածք և գծերի հոյակապ կառուցվածք չէր միայն... Մեծ էր և խոր, ոչ կրոնական հանգամանքի պատճառով, այլ որովհետև նրա զորությունը գալիս էր մի ուրիշ աշխարհից... Կարդացել էր, որ Տիբեթի լեռներում ապրող կրոնավորները կյանք էին ներշնչում մարդկային ձեռքերով շինված կուռքերին։ Նրանց լուսավորում էին նրբագին և անտեսանելի այն լույսով, որ ամեն ինչ այլափոխում էր, վերածնում, կենդանացնում։

Առարկաները գիտապրում էին։

— Ահա, նույն բանը և այստեղ,— մտածեց նա։— Դարերի ընթացքին հայ ժողովուրդը արտաշնչել է այդ քարերին և այդ լեռներին հոգեկան հեղեղներ, և այդ քարերը և այդ լեռները այլափոխվել են, լուսավորվել, վերստեղծվել և վերապրել նոր կյանքով։

Հիմա հասկանում էր։ Հռիփսիմեն կառուցված էր հոգիով, ոչ թե քարերով։ Հռիփսիմեն կառուցված էր հայ հոգու նրբագին շաղախով,

արևային դիզվածությունների և մտքի վերջնական պայծառությունով։ Մինչ ուրիշ միջավայրերում հայ մարդիկ, ցրված, այլանդակված, պատառ-պատառ եղած կորցրել էին իրենց իսկությունը, ծածկվել դիմակով և ցնցոտիներով։ Նա մնացել էր ոչ իբրև վկա և հիշատակ, այլ իբրև ներքին չափ, կշռույթ, առանց որի անկարելի է լինել և տևել։ Նա մնացել էր, մինչ օտար ժողովուրդներ և օտար ոգիով հայեր եկել անցել էին...

Մտածեց իր մասին, մտածեց իր նավի մասին։

Ի՞նչ էին նրանք այդքան մեծության առաջ... Եվ սակայն ինքն էլ Տիրեթի մոգերի նման արտաշնչել էր իր հավատքը, լինելու և ներքնապես կառուցվելու իր կամքը, տևելու իր ցանկությունը... ծովերից եկած երկաթե այդ էակին... Նավի միջոցով նա ուզեցել էր միանալ այն հոգեկան աշխարհին, որից այդքան տարիներ մնացել էր կտրված...

Իսկ հիմա...

Պայուսակը վերցրեց և քայլեց։

* * *

Նրան տեսնելիս Ուրանյանը բարձի վրայից գլուխը վեր բարձրացրեց, զարմացած աչքերը լայն բացեց, ուրախացավ և անկողնից վեր թռնելով, մոտեցավ նրան և... գրկախառնվեցին։

— Ի՞նչ լավ ես արել, ի՞նչ լավ ես արել, որ եկել ես... Հալա թող ինքնաեռը բերեն, տաք-տաք մի թեյ խմենք, հետո կանցնենք հրատապ հարցերին... Ադա, տեսա՞ր... Բա, որ ասում էի, չէիք ուզում հավատալ... Նստեք, նստեք...

Հերյանը նստեց և պատմեց բոլոր եղելությունների մասին։

Ինքնաեռը բերեցին, և երկուսն էլ թեյ խմեցին։

— Գիտե՞ս ինչ,— ասաց Ուրանյանը,— ամբողջ գիշերը չես քնել, պառկիր հանգստացիր, իսկ ես գնամ հիվանդներիս մոտ... Մի քանի ժամից այստեղ կլինեմ, միասին կճաշենք և մեր աշխարհի գործերի մասին կխոսենք... Ց...

Հերյանը պառկեց և անմիջապես քնեց։

— Նստեք... բժիշկ, բարի եկաք, նավապետ, բարի եկաք... Այդպիսի բաներ, այո, այդպիսի բաներ... Ինչ եմ մտածո՞ւմ... Ի՞նչ կարող եմ մտածել... Մի մոռանաք, Հայաստանյաց առաքելական եկեղեցին շատ երկար անցյալ ունի... Ամեն տեսակ եղելություններով, դեպքերով, ողբերգություններով լցված... Եթե մեր Եկեղեցու քարերը կարողանային պատմել այն ամենը, ինչ տեսել են, դա կլիներ բոցով և ար-

յունով գրված մի գիրք... Վանական այս կյանքը մենք ընդունել ենք հոժար կամքով, պատրաստ ամեն ինչ անելու մեր ժողովրդի համար, և ոչ մի բանից չենք վախենում... Եկողները հայեր են, չէ՞... Նրանցից շատերը մեր դպրոցներում են կրթվել, մեր վանքի հացով են մեծացել, մեր Արարատի շուքի տակն են հասակ առել... Քերե՛ք նրանց՝ և տակը հայրենասերներ կգտնեք... Հավատացեք, իզուր եք ծիծաղում... Մարդկային հոգեբանությունը շատ տարօրինակ է... Երբեմն հանդիպում ես մարդկանց, որոնք ամեն ինչ ուրանում են՝ աստված, կրոն, հավատ, եկեղեցի։ Ուրանում են ցավող, տանջվող սրտով, անհանգիստ, ըմբոստ մտքով, բարկացած, կատաղած... Ես նրանց նախընտրում եմ ձևով հավատացողներից, որոնք եկեղեցի են գնում, մոմ են վառում, խաչ են հանում առանց ներքին կրակի, առանց տանջանքի, պարզապես աստծո հետ բարեկամական հարաբերությունները պահելու համար...

— Նույն բանն է հայրենասիրությունը։ Ըստ իս, մեր մեծամասնականների հայրենասիրությունը չափազանց հպարտ մի հայրենասիրություն է, քչով չբավականացող, մեծ թռիչքներ պահանջող, միանգամից ամեն ինչ իրականացնել ցանկացող... Նրանք զգում են, տեսնում են, որ զուտ ազգային միջոցներով ոչ մի նպատակի չենք կարող հասնել. խեղճ, կոտորված, մենակ մնացած ժողովուրդ ենք, որ մենք պետք ունենք ուրիշներին, պետք է մեր թույլ ձեռքերը բազմապատկենք միլիոնավոր ուրիշ ձեռքերով, կազմակերպվենք, վերածնվենք, միանանք՝ ավելի վեր բարձրանանք... իսկ մյուսները սպասում էին Եվրոպայի օգնության, Ամերիկայի աջակցության, Ազգերի Լիգայի միջամտության... Հայ մեծամասնականները հասկացան, որ Եվրոպան պիտի խաբի... և խաբեց, որ Վիլսոնի խոստումները վարդագույն քամի էին և դուրս եկան քամի, որ Ազգերի Լիգա ասվածը գայլ պետությունների ձեռքին շահագործման զենք էր և դուրս եկավ այդպես։ Դիմեցին հեղափոխական ուժերին, որ ահա եկան... Մեր այս ազգը գոնե մի քսան տարի հանգստի կարիք ունի, իր տունը, իր ներքին բարոյական ուժերը, իր պայքարի միջոցները վերաշինելու համար... Հիմա եկել են, տեսնենք... Ես կարող եմ ասել, որ նրանք կլինեն հավատավոր և մոլեռանդ հայրենասերներ, կերդվեն Վարդան Մամիկոնյաններով, մեր քաջերով, մեր հերոսներով և կդողան բոլոր ազգային արժեքների վրա... Ասացիք, որ եկեղեցին վտանգվելու է... Այդ էլ նորություն չի։ Հայաստանյաց եկեղեցին երբևէ անվտանգ ապրա՞ծ է... Ես իբրև վանական այդպես եմ մտածում. Հայաստանյաց եկեղեցին հայ ժողովրդի համար է, ոչ թե հայ ժողովուրդը Հայաստանյաց եկեղեցու համար։ Եթե վաղը այս եկեղեցին այլևս հայ ժողովրդի հոգեկան կարիքներին բավարարություն չի տա-

լիս... կամքը մերն է, կընտրենք ուրիշ ճանապարհ, աստվածության ուրիշ կերպեր...

— Հնում էլ,— ասաց բժիշկը,— մեր աստվածները եղել են օժանդակ ուժեր, ծառայել, նպաստել են մեր հերոսներին, ոչ թե հակառակը... Հայը աստվածներ ստեղծող ժողովուրդ է, և ոչ աստվածանվեր...

— Դրանք բարդ հարցեր են, և ես, իհարկե, իբրև քրիստոնյա չեմ կարող ձեզ հետ համաձայնվել։ Եկեղեցու աստվածաբանական սկզբունքները...

— ...Ի՞նչ պետք է անել, ի՞նչ դիրք պետք է բռնել,— հարցրեց Հերյանը։

— Ինչ վերաբերում է ինձ, ես իմ պատմագրի աշխատանքները առաջ կտանեմ, ինչպես մինչև հիմա... Ահա տեսեք. ահագին ձեռագիրներ, երեսուն տարվա աշխատանք և դեռ անտիպ են... Ինչ հրաշալի գանձեր ունենք, որոնց մասին ոչ օտարները գաղափար ունեն և ոչ հայերը... Դժբախտություն է, որ մենք մեզ չենք ճանաչում... Շարունակենք աշխատել, կարևորը այդ է... պատմում են, որ գնդակ խաղալիս Ճեմարանի աշակերտներից մեկին հանկարծ հարց են տվել, թե ի՞նչ կաներ, եթե իմանար, որ կես ժամից վերջին դատաստանն է, նա պատասխանել է.— «Ինչ կանեի՞. կշարունակեի գնդակ խաղալ»... Հիմա մենք ենք. շարունակենք մեր գնդակը խաղալ և սպասել... Շատ ուրախ եղա, շատ... Նորից համեցեք... անպայման համեցեք...

Եվ միջահասակ, առատ հոնքերով վանականի խոնարհած աչքերը ժպտացին և մեծ, լեցուն, մազոտ ձեռքերը ծալվեցին կրծքի վրա։

Արագ քայլերով և մտազբաղ նայվածքներով ուրիշ վանականներ էին անցնում նրբանցքից։ Նրանցից մեկը Ուրանյանին ճանաչեց, կանգ առավ և պրպտեց նրա աչքերի մեջ։

Էջմիածնի շրջաբակում բնակարաններից շատերը փակ էին, ուրիշների մեջ նոր, ոչ կրոնական եկվորներ էին տեղավորվել։ Երեխաների և կանանց ձայներ էին լսվում։ Աղմուկ, ծիծաղ։

Ուրանյանը և Հերյանը հանդիպեցին այդ եկվորներից մեկին, որը ճաղատ գլխով և մոխրագույն աչքերով փոքրահասակ մի մարդ էր։

Ուրանյանը նրան ճանաչում էր։

— Որտեղից որտեղ... Դուք էլ էստեղ եք տեղավորվե՞լ... — զարմացած բացականչեց նա։

— Ի՞նչ արած, մի կերպ յոլա ենք գնում...

Բոունցքները միացրեց, տարավ բերնի մոտ և հոհոաց։

— Իբրև բնակարան էնքան էլ վատ չի... Ժամանակին մեր հա-

բուատները վանականների մասին են մտածել, նրանց համար տուն տեղ են կառուցել... Կարծելով, որ առանց աստանովչի[1] արքայություն պիտի գնան... Փառասիրություն, ուրիշ ոչինչ... Շենքերի վրա գրաբար արձանագրություններ են փորագրել տվել, հայկական թվականներ և հիշեցեք, մայրս՝ Անթառամ, հայրս՝ Աբիսողոմ...

Նորից ծիծաղեց։ Շարունակեց.

— Դե, որ շինել են, մի քիչ էլ մենք վայելենք։ Երկու սենյակ, մի խոհանոց, հոսուն ջուր. էնքան էլ վատ չէ... Հայաստանը մեծ մի տուն է, տանիքը՝ երկինք, պատերը՝ լեռներ, համա սենյակ ասես՝ չկա, և հենց դրա համար էլ, ուր որ մի օթախ է ճարվում, հազար մարդ է թափվում... Դե, իհարկե, վարդապետները շատ էլ ուրախ չեն, երեսներից թույն է կաթում, քթի տակ մռմռալով են ման գալիս, մորուքի ծայրը կրծելով են անցնում... Դրսի ճղտի-մղտի մարդիկ եկել մտել են սրբատեղի... կինոյի են վերածել... ցորենի պաշարը սպառել, չորացած պտուղների տոպրակները բաց արել... վայելում են... Իսկի շատ բան չի մնացել։ Գաղթականները մորեխի նման ամեն բան կերել մարսել են... Արի տես, որ երիտասարդ վարդապետներից շատերն էլ մեծամասնականների գալուց օգտվելով, վեղար-մեղար դեն են շպրտել, գնացել քաղաքում ազատ քաղաքացի են դարձել, աղջիկների հետ սիլի-բիլի են անում... Վանքում ծերերն են մնացել՝ և էդպես ավելի լավ է... Ինչպե՞ս ասացիք, բժիշկ... Չէ... չեմ կարծում, որ ամեն բան պետք է քանդել, ընդհակառակը... երբ դաշտի վրայից կատաղի քամի է անցնում, մնում են կանգնած այն բույսերը, որոնք իսկապես տոկուն են, որոնց արմատները ամուր կպած են հողին։ Ախր, կրոնավորը մի բան է. կրոնական զգացումը մի ուրիշ բան։ Էջմիածինը եղել է, կա և կմնա... Ամեն ինչ կդասավորվի... եթե կյանքին անհրաժեշտ է, կգտնի տեղը... Հիշում եք, չէ՞, բժիշկ, երբ ապրում էինք Խարկովում, հեռավոր հայրենիքը մշուշոտ երազի նման գանգատվում էր մեր բոլորի սրտի մեջ, մտածում էինք, տխրում... էնպես չէ՞... Կարոտ էինք, միշտ կարոտ, անբավարարված... կիրակիները գնում էինք եկեղեցի, ոչ թե տեր Հովհաննեսի պատարագը հավատացյալի սրտով լսելու, այլ լեզուն, երգը լսելու, եկեղեցական արարողությունը, հայկական վեղարը և փիլոնը տեսնելու համար... Գիտեք էլի խունկի հոտը, քշոցը, բուրվառը, սուրբ-սուրբը, և հետո բարեկամի մոտ կերած ճուտով փլավը, տերևի դոլման կամ կոլոլակը... Ուզում եմ ասել, հենց որ կիրակին գալիս էր— գործից և մտահոգություններից ազատ ժամերին — մարդ սրտով, մտքով թռչում գալիս

---

1 Կանգառի

էր այստեղ, մեր երկիրը... Շարականի նիշերի ետևից Արարատի գլուխը ցցվում, մեծանում էր, սուրբ-սուրբի ժամանակ մեր դաշտը փռվում, լուսավորվում էր... Ինչպե՞ս... Հա-հա-հա... Լավ ասացիր. ճուտի թևը կերած ժամանակ հայրենի հավնոցները կտկտալով աղմկում էին... Հա-հա-հա... Լավ ասացիք, բժիշկ, շատ լավ ասացիք...

Լրջացավ, մտածեց և ասաց.

— Կատակը մի կողմ. մի բան եմ ուզում ասել... Ի՞նչ էի ուզում ասել... Հա, հիմա որ եկել ենք, հիմա որ մեր հողերում նորից արմատ պիտի նետենք, ի սեր հայրենիքի, հին-մին բաները մի կողմ նետենք, բուրվառ-մուրվառից ազատագրվենք, պատրանքներից ազատագրվենք և, տղամարդի նման, Արարատի դեմ-հանդիման կանգնած, կյանքի պահանջներին նոր լուծումներ գտնենք... Երկիրը ինչ ասելիք ունի, թող ասի, և մենք էլ մեր ասելիքը ասենք երկրին առանց ավելորդ միջնորդների... Հասուն մարդկանց նման գործ անենք, քար տաշենք, քար դիզենք... Էնպես չի՞... Շատ ուրախ եմ, շատ... Մի օր էլ եկեք, մի կտոր հաց կուտենք, մի բաժակ գինի կխմենք...

Երեկո էր, իսկ եկեղեցու զանգակները չէին զողանջում։

Լուռ էր Գայանեն, լուռ էր Հռիփսիմեն։

Վարը տպարանը անգադար աշխատում էր։ Տպում էին Լենինի ճառերը։ Կոմսոմոլը։ Կոմունիզմի այբուբենը։ Կրոնը թույն է։ 25,000 օրինակ։

Պատշգամբից մի վարդապետ վախեցած աչքերով նայում էր և շրթունքները կրծոտում։

Մտել էին անկողին, իսկ քնել չէին կարողանում։

— Ի՞նչ է, բարեկամ, հիվանդ խոմ չե՞ս։ Աչքերդ փայլում են, բառերը աղբյուրի նման կլկլում... Ադա, չլինի՞ ջերմ ունես... եկ, զարկերակդ նայեմ...

— Ի՜նչ ջերմ, ի՜նչ բան... Պարզապես, շատ ման եկա...

— Հա, կորար գնացիր։ Մտածեցի, որ վերադարձար Երևան։

— Վաղը հավանական է, որ գնամ։ Անկարելի բան է նավը թողնել. պետք է անպայման մի բան որոշել...

— Դե, իհարկե...

— Նավը, հասկանո՞ւմ ես, չի կարելի այդպես թողնել...

— Հասկանում եմ, ինչպես չեմ հասկանում...

— Ի՞նչ է, լռեցի՞ր...

— Ուղղակի զարմանալի է...

— Զարմանալի՞...

— Հա, էլի...

— Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում...

— Տո, մի հնդկահայ կա... հանդիպե՞լ ես...

— Հնդկահա՞յ... Մի անգամ Խարկովում մեկին հանդիպեցի, գրաբար էր խոսում...

— Գրաբար չգիտեմ, բայց էս մեկը խրթին է խոսում...

— Դե որ խրթին է խոսում՝ սատանան հետը։ Հնդկահայերը քիչ խև են... Ահավոր վաճառականներ են, ասում են... գրաբարը անգլերենի հետ են խառնում և ստերլինը՝ Մաշտոցի հետ. հենց դրանցից է Պետրոս Մարկը... Նրանց տամարը լավ են բռնել Մխիթարյան վարդապետները...

— Գրաբարի պատճառով...

— Հա... Զարմանալի է, ինչպես կեղծ և շինծու լեզուն հայերին հմայում է...

— Սա տարօրինակ անձնավորություն է... Երրորդ անգամն է, որ տեսնում եմ նրան...

— Ո՞ւմ։

— Վրաս պիտի ծիծաղես, քո արև...

— Չեմ հասկանում...

— Տեսնում եմ, հետը խոսում... համոզված չեմ, իրական մարդ է... թե՞...

— Քեզ ասացի, թող զարկերակդ քննեմ...

— Գիտեմ, պիտի ասես հիվանդ եմ... զառանցանքներ և այլն...

— Ադա, մեր տղա...

— Ավելի լավ է քննենք...

— Է, որ սկսել ես պատմել՝ պատմիր։ Ո՞ւմ տեսար, ո՞րտեղ տեսար...

— Երեկոյան, վանքի բակում... Մայր տաճարի մոտ մարդ չկարկանգնել էի կաթողիկոսների գերեզմանների մոտ, նայում էի... Մեկ էլ, մի ծանոթ ձայն լսեցի... Ձայնը մեկի հետ խոսում էր. ավելի շուտ, բարկացած վիճում էր... գոռում էր. «Ջայլամից, որ չի կարողանում վազել, ավելորդ է պահանջել, որ թռչի արծիվի նման»... Հետո թե՝ «Ամեն ժողովուրդ ունի իր կենսական ոճը. կա՛մ ապրում է համաձայն այդ ոճին, կա՛մ չի ապրում բոլորովին»... Նրան պատասխանում էր մի ուրիշ ձայն. հաստ մի բաս... Ուշադրությունս լարեցի, բայց չկարողացա հասկանալ, թե ինչ էր ասում... Ղ-մ-ղ-ղ... էդքան։ Նայեցի, քամին մի մղրուք տրորեց, հետո ուժգ մի դուռ փակվեց, և ծա-

նոթ ձայնը մոտեցավ ինձ։ Տո, նայեմ, մոտեցողը Պետրոս Մարկ ասված մարդն է, որին հանդիպել էի Սևանում... Ճիշտն ասած, երբ տեսա նրա դեղնած դեմքը և սև ոլորվող աչքերը, ամբողջ մարմինս սկսեց դողալ... «Ահ, քեպտրն,— խեղդված ձայնով բացականչեց նա,— ինչ լավ է, որ ցուրտ քամի է փչում...»։ Ասաց և դեմքը տվեց քամուն, լռեց։ Իսկ ես մնացի պապանձված՝ չգիտեի ինչ ասել։— «Քամին,— ասաց նա,— աստվածաշնչում ամենակալին — միշտ էլ ներկայացնում է փոթորկի ձևով... Արիելի, գաղափարների, հրեշտակի առաջից մրրիկ է վազում... Ահա, պիտի ուզեի, քեպտրն, որ քամին ուժեղանար և փչեր այդ փոշիների վրա... Աշխարհը նոր է, իսկ մարդիկ հին... — ասաց, ձեռքերս վերցրեց իր երկու ափերի մեջ և ուժով թոթվեց։ «Ուրախ եմ, ուրախ եմ, որ ձեզ նորից տեսա, պարոն նավատար...»։

— Նավատա՞ր...

— Հենց էդպես էլ ասաց, պարոն նավատար... Տաքացած խոսեց, շատ տաքացած, ինչպես երևում է, բարկացած էր...

— Մաղալու բաներ ես ասում... Հետո ի՞նչ ասաց...

— Հարցը հենց դրանում է... Դժվար է հիշել, էնքան որ խրթին էր... Ինչ-որ հոգեկան համաստեղության մասին խոսեց, ընդունող և արտահայտող ուժերի աստիճանավորման մասին և ի՞նչ իմանամ...

— Ադա, չլինի բողոքական պատվելի՞ է...

— Չէ, եթե պատվելի լիներ, տափակ և ամենին հայտնի բաներ կասեր... Պատվելի չի, բայց ի՞նչ է, չեմ հասկանում... Հայ է. դրա մասին կասկած չկա, բայց իր հայությունն էլ մի ուրիշ հայություն է, հեռվից, դարերի ետևից եկող...

— Ուրիշ բան չասա՞ց...

— Ասաց։ Բարկացել էր։ Երևի, վարդապետների հետ կռվել էր, ինչ է... — «Չեն հասկանում,— ասաց նա ձեռքերը երկարելով վանքի կողմը,— չեն հասկանում, որ մարդկային մեծությունը ծնվում է անդընդի եզերքին. հանգիստ և ապահով կյանքը մեծ գաղափարների ծննդավայրը չի եղել և մեծ հոգեկան դեպքեր չի ստեղծել... Ապրում են աշխարհիս ամենանախանամական վայրերից մեկում, իսկ խոսում և գործում են այնպես, ինչպես խոսում են և գործում արևմտյան որևէ մգլոտած արվարձանի բնակիչները... Միշտ նույն բանն են կրկնում,— շարունակեց,— ազատագրվել... Ազատագրվել ինչի՞ց...

Համատացեք, պարոն նավատար, այդ մարդիկ նման են այգիների շուրջը կանգնած այն հողե, փիրուն պատերին, որ քամիները և անձրևները ուտում են թոնրից դուրս եկած տաք հացի նման...»։

— Հետո՞...

— Հետո, ավելի բարդացավ... լավ չեմ հիշում... Խոսեց, խոսեց առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, կարծես ես չկայի... Հետո էլ...

— Ի՞նչ...

— Մեկ էլ սկսեց գանգատվել, որ Հայաստանում կոշկի լավ կաշի չի ճարվում... Մի երկար ճառ ասաց առևտրի բացակայության և կաշվի պատրաստության տարբեր ձևերի մասին և ցույց տվեց իր ոտքերը... Երևակայիր, տրեխներ էր հագել... և հետո արագ մեկնեց. կարծես թռավ... ամեն կողմ նայեցի, չկար... Սա երրորդ անգամն է...

— Չլինի՞ մասալ ես պատմում...

— Ի՞նչ մասալ... Զայնը դեռ ականջներիս մեջ է և ասածներն էլ մոտավորապես պատմեցի, չէ՞...

— Էղպես բաներ...

— Քո կարծիքը ի՞նչ է...

— Ինչ ես ուզում որ լինի... Կարծում եմ, մեր խառն ժամանակներում դրսում ման են գալիս էղպիսի մարդիկ, որոնք իսկապես պետք է լիներին բանտում կամ հիվանդանոցում...

— Ի՞նչ է, ի՞նձ ես ակնարկում...

— Չէ... առհասարակ...

— Եթե բժիշկներին լսենք, հիվանդանոցից դուրս կարելի է թողնել միայն եզներին, գոմեշներին և զվիցերիական կովերին... Դա էլ մի տեսակ հիվանդություն է...

— Գուցե՝ Ինչ վերաբերում է ինձ, ես ավելի մանրէագետ եմ...

— Մի բարեկամ ունեի... Փարիզում քիմիագիտական դպրոց էր ավարտել և անունը Բոստանջյան էր... Ագուլիսցի էր և վատ տղա չէր... Անդադար շրթունքները տրորում էր և՝ թիվ-թիվ-թիվ՝ գնդացրի նման օդը բերնից թքնում էր... Ասում էր, Արա ջան, եթե իմանաս օդում ինչ մանրէներ կան, ուղղակի կգժվես... Եվ չնայած դրան, ագուլիսցի էր և վատ էլ տղա չէր...

— Քո պատմությունը քուն բերեց...

— Քնա՞ծ ես...

— Չէ՝ Մարդ աջ ու ձախ է դառնում... անկարելի է...

— Մտածում էի. գիտե՞ս քո հնդկահայի ասածների մեջ ուրիշ իմաստ կա...

— Քեզ բան եմ ասում, իմ մեջ լուրջ կասկած է հարուցել, մանավանդ նրա ձայնը... Առհասարակ, նկատե՞լ ես, մարդկանց ձայնները ինչքան տարբեր են և ինչքան ավելի բան են ասում, քան խոսքերը... Սովում քամիների առաջին ձայնից կարելի է հասկանալ մոտեցող փո-

թորկի բնույթը... Երբեմն, դասարկ պոռացող քամիներ են լինում, զալ-մաղալ են անում, գոռում, կանչում և շուտով անցնում... Իսկ լինում են կես ձայնով վշշացող, բարակ փչող քամիներ, որոնց ձայնը գալիս է հեռուների խորքից, երկնքի սրտից, դրանք վտանգավոր են և դավաճան... Ջրի վրա ալիք չեն բարձրացնում, այլ միայն փոքրիկ կնճիռներ են տարածում, օդը ծծում, ատամների միջից մաղում, վայր թափում... Ամեն ծովային մարդ իմանում է՝ այդ տեսակ քամիների ետևում բարկացած տարերք է թաքնված... Լավ նավապետը անմիջապես միջոցներ է ձեռք առնում և անհրաժեշտ հրամաններ տալիս...

— Հետաքրքիր է...

— Հա, էլի... Առհասարակ, մենք քիչ ուշադրություն ենք ընծայում մարդկային ձայնին։ Նայում ենք երեսի արտահայտության վրա, աչքերին, երբեմն ձեռքերի վրա, իսկ ձայնը անտեսում ենք...

— Երբեմն կանանց ձայները... հնչում են մսերիդ ծալքերում...

— Այո... Ձայները տարօրինակ կերպով մնում են հիշողության մեջ, շարունակում են հնչել... Վերցնենք հենց Մարկը, նրա ձայնը միշտ ներկա է իմ մեջ, հեռուներից, շատ հեռուներից եկող մի ձայն... Եվ ամեն ինչ կարելի է կեղծել, բայց ոչ ձայնը։

— Ձայնը փոխվում է հոգու հասակի հետ...

— Ճիշտ է։

— Ի՞նչ է, քնեցի՞ր...

— Անկարելի բան է... Դու բժիշկ ես, չես կարողանում քնել, ուր մնաց մենք։ Ասում են՝ էդիսընը երեք ժամ էր քնում...

— Թողնենք էդիսընը... Մեծ, պատմական օրեր ենք ապրում... Սրանից մի քանի տարի առաջ, երբ դեռ ուսանող էինք, համալսարանի նրբանցքներում, ածան ճաշարաններում, գաղտնի ժողովներում խոսում վիճում էինք քաղաքական հարցերի մասին, ծրագիրներ էինք մշակում, փոքրիկ ցույցերի էինք մասնակցում, բայց մեզանից և ոչ մեկը կարող էր պատկերացնել, որ գրասենյակներում և բանտերում մշակված այդ ծրագիրները կարող են իրականանալ... Էնպես. մտածում էինք, որ գուցե մի օր, մեր զավակների զավակները...

— Դուրս է գալիս, որ երբ երազները իրականանում են, մարդիկ իրենց գժբախտ են զգում...

— Մասամբ ճիշտ է։ Պատճառը այն է, որ ծրագիրները կազմվում են մտքով, գաղափարով, երազով, իսկ մարմինը իր մարդակազմական բնույթով, իր հոգեբանությունով դանդաղաշարժ է, փոփոխություններ չի սիրում, այլ սիրում է իր սովորությունները, իր ծուլությունը, իր ռեֆլեքսները... Կան մարդիկ, որոնք հավատում են արքայության, չէ՞...

լավ, եթե նրանց վերցնես և մի վայրկյանից մյուսը գցես արքայություն՝ չեմ կարծում, որ նրանք երջանիկ լինեն... Կնստեն Եդեմի պարտեզի ծայրում և անհանգիստ աչքերով կփնտրեն իրենց տնային փոքրիկ առարկաները, բազկաթոռը, որի վրա նստում էին կուշտ ճաշից հետո, տարիներով ծիսած ծխամորճը, սուրճի բաժակը, տաք փափուշները... Մարդկային մարմինը քաղքենի է և ավելի բարդ է, քան կարծում ենք։ Կան փոքրիկ ազդակներ, որոնց ազդեցությունը վճռական դեր է խաղում, օդը, հոտը, կերած կամ խմած որոշ բաները, նույնիսկ ծծած թույնը... Իսկ ահա եկել են մոլեռանդ և հավատավոր մարդիկ և կյանքի փոշին թափ են տալիս հին փալասի վրայից... Մեծ բաներ են կատարվում մեր աշխարհում, մեծ բաներ...

— Ամեն ինչ չափի հարց է... Հարցը նրանում է, որ դեպքերը ավելի առաջ են վազում, քան մարդիկ... Հա, էլի, պարզապես այդ է. մարդիկ փոքր են, իսկ դեպքերը՝ հսկայական, չեն կարողանում չափվել... Չափվել չեն կարողանում... Մեքենայի և գիտության հարցն էլ կա, նրանց չափազանց արագ զարգացումը... Կյանքը, այնպես ինչպես կազմակերպվել էր, ամեն կողմից ճեղքվածքներ է տվել, ջրերը ներս են մտնում...

— Ճիշտ է...

— Էնպես չի՞... Թե չէ ինչո՞վ բացատրել պատերազմները, կռիվները, հոսող արյունը... Մարդիկ ուզում են կռվել մահի դեմ մահով...

— Բարդ հարցեր են... Պատճառները շատ են, շատ... Խոսում են, օրինակի համար, մարդկային կազմի և հոգեբանության վրա ազդող արևային բծերի մասին... Ճշմարտությունը այն է, որ շատ քիչ բան գիտենք... Ավելի լավ է պատճառներ չփնտրենք։ Դեպքերը եկել են, ընդունենք նրանց կորովալի հանգստությամբ։

— Տարերային դեպքեր են, հորդող ջրերի կամ անտառում առաջացող կրակի նման...

— Դու քո նավը, և ես իմ հիվանդները...

— Եթե նավը պետականացրե՞լ են...

— Իսկ առաջ պետական չէ՞ր...

— Պետական էր։

— Ուրե՞մն... Վաղը, երբ որոշեն նավը տանել Սևան, ուզեն չուզեն քեզ պիտի դիմեն... Նավապետներ առայժմ չկան...

— Ախր, դու չգիտես, նավը և ես մի ամբողջ պատմություն ենք. դա հասարակ ձեռնարկ չի։ Երբեմն մտածում եմ՝ բանաստեղծ լինեի, գրեի... Ինձ համար նավը ուրիշ բան է, բժի՛շկ, ուրիշ բան... Հասկանո՞ւմ ես...

— Կռահում եմ։

— Չէ՞ որ հին ժամանակներում եղել են մարդիկ, ներքին ճրագով լուսավորված մարդիկ, որոնք ամեն բան թողած՝ հղացել են և կառուցել տաճար, եկեղեցի, հուշարձան... Չեմ ասում, որ իմ արածը այնքան էլ կարևոր է, գուցե իսկի էլ կարևոր չէ... Եղել են փահլևաններ, որոնք պարանի վրա պարելուց առաջ տարիներով մի սրբատեղից մի ուրիշն են գնացել, ծոմ եմ պահել, աղոթք արել և ես ի՞նչ իմանամ... գուցե լավ չեմ կարողանում բացատրել... Մի խոսքով, նավի հետ շատ բան է կապված, շատ բան... Չէ, ինչ էլ լինի, նավը, նավը անպայման պիտի հասցնել Սևան... Ինձ համար ուղղակի մահու-կենաց խնդիր է... Անպայման, անպայման պիտի հասցնել Սևան... Քնեցի՞ր...

...Իսկ հունվարը բազուկների մեջ սեղմած մութը, նրա հետ ամբողջ մարմնով երկարած պառկել էր մայր եկեղեցու դռան առաջ։ Մի վանական՝ սև, մազոտ, ուրվականացած, շոքել էր նույն դռան առաջ և ջերմոտ շրթունքները արագ-արագ շարժելով խոսում էր երկնքի և երկրի ստվերների հետ։

Քամին խեղդված ձայնով ոռնում էր։

4

Երևան վերադառնալուց առաջ Հերյանը մի քանի օր աննպատակ թափառեց Արարատյան դաշտում։ Այցելեց Գայանեի վանքը, խրճիթների առաջ երկար կանգ առնելով զրուցեց գյուղացիների հետ, Զվարթնոցի քարերի շուրջը քայլամոլոր ման եկավ, հուզվեց, ոգևորվեց և, վերջապես, անհամբերությամբ և մտահոգությամբ լցված՝ քայլերը արագացրեց — ինչ լինում է լինի — և ուղղվեց դեպի Երևան։

Ինքն իրեն հետ խոսելով անցավ Զանգուի կամուրջը, մտավ վեր բարձրացող փողոցը և գինու և կոնյակի «Շուստովի» գործարանի առաջ հանկարծ կանգ առավ։ Տեսավ նավը։ Հեռուն, Քանաքեռի կատարին կանգնած նավը։

Պայուսակը դրեց ցած, կանգնեց և ծարավ, հափշտակված աչքերը հառեց նավի վրա։ Ձյունին և ծառերին կպած «Ալբատրոսը» նմանվում էր դժբախտ և մեծդի արարածի, որին թշնամի տարերքը շղթայել էին։ Քիթը վեր բարձրացրած, կայմը քիչ ծռված, հետնամասը կաշկանդված՝ նա կարծես ուզում էր փախչել, աղատվել։

— Նեղվում է,— փսփսաց Հերյանը,— ուզում է փախչի, գնա...

Սիրտը բաբախեց նավի հետ և նրա ամբողջ մարմնով սարսուռ անցավ։ Բազուկները աջ ու ձախ շարժեց և կոկորդի ծայրին վշտի և

բողոքի մի ձայն խեղդվեց։ Խեղդվեց, որովհետև ճիշտ այն վայրկյանին, երբ այդ ձայնը պիտի պոռթկար, գինու գործարանի մեծ դարպասից զինված երեք մարդիկ դուրս եկան, իրենց լայնացած աչքերը ուղղեցին նրա վրա, անցան առաջ և — կտո՞, շտո՞[1] — հարցնելով մեկ մեկի, կամաց քայլեցին։

Երբ մարդիկ հեռացան, նա կանգ առավ և մնաց անորոշության մատնված։ Ո՞ւր պիտի գնար։

Տուն չուներ, բարեկամ չուներ, փող չուներ։

Պայուսակը թողեց Բուլվարի «Ուրարտու» սրճարանում և դուրս եկավ կենտրոնական փողոց, քաղաքի սիրտը։ Ոչ մի բան չէր փոխվել։ Նույն տները, նույն քանդված մայթերը, նույն գաղթականները։

Ցյուն, ցեխ։

Բազմաթիվ երիտասարդներ՝ զինված։ Ռուս զինվորներ։ Մի քանի նոր ինքնաշարժներ։ Կարմիր դրոշակներ։ Նա քայլեց անվստահ, աջ ու ձախ նայելով, աներևույթ շուքերից հետապնդված։ Չէ, ոչ ոք իր վրա առանձին ուշադրություն չէր դարձնում։ Ուրախացավ, որ ուշադրություն չէին դարձնում։ Աշխատեց հանգիստ երևալ։ Շունչը զսպեց, դեմքին սառը անտարբերության դիմակ դրեց։

Նազարյան փողոցի անկյունում պատահեց ծանոթ որբերից մեկին։

— Բարև, նավապետ ջան,— ուրախացած ողջունեց որբը։

— Բարև։ Տեսնում եմ, հարստացել ես...

Մարսիլիայի օճառի մի արկղ վզից կախած՝ տղան ծխախոտ էր ծախում։

— Մի կերպ յոլա ենք գնում...

— Լավ է քեզ տեսա,— ասաց Հերյանը,— ասա տեսնեմ, մեր էս Մարտինը ո՞ւր է կորել...

Տղան պատմեց, որ Մարտինը հիմա կարևոր մարդ էր դարձել։ Հանդիպել էր Ռուսաստանից եկած սև ոսկու գաղտնի առևտրով զբաղվող վանեցի ազգականին, որը հավատարիմ մարդու կարիք ուներ, և դարձել էր նրա օգնականը։

— Մարտինի հետ հիմա խոսել չի լինի...

Հետո տվավ ուրիշ մի լուր.

— Իսկ ձեր խև ռուսին,— ասաց նա,— բանտարկել են...

— Ինչպե՞ս, Ֆեոդոր Պանտելեևիչի՞ն...

Հերյանի ծնկները քիչ դողացին։

---

[1] Ո՞վ է, ի՞նչ է։

— Հա, էլի, ձեր բարեկամին...

Տղան հեռացավ, պապիրոս, պապիրոս պոռալով...

— Այդ վատ նշան է,— մտածեց Հերյանը։

Քայլեց շնչառությունը զսպելով։ Չգիտեր ի՞նչ անի, ո՞ւր գնա, ո՞ւր թաքնվի։ Ճիշտ այդ վայրկյանին, մոտից մեկը անցավ և գլխից մինչև ոտքը նրան չափեց։ Այլևս նրան թվաց, որ ամեն կողմից իրեն են նայում։ Որ տների պատուհանները, փողոցի լամպարները, քարերը, մայթերը լայն բացված աչքեր են... նայում են իր վրա։

— Ահ, եկաք, վերջապես, եկաք, պարոն հեռավոր ճամփորդությունների նավապետ...

Մտավ կողմնակի նեղ փողոցներից մեկը։ Մարդ չկար։ Գրպանի ջմելիով կարտուզի մաշած և թառամած ոսկեզօծ նշանները կտրեց, թելերը հանեց, սև մնացած տեղերը ուժով շփեց և նորից դրեց գլխին։ Փողկապը հանեց և դրեց գրպանը։

— Այդպիսով,— մտածեց նա,— ոչ ոք ուշադրություն չի դարձնի իմ վրա։

Ու նորից վերադարձավ կենտրոնական փողոց։

Վեր գնաց, վար իջավ։

Այո, կասկած չկար, նույն քաղաքն էր, նույն փողոցներն էին։ Նույն մարդիկ և կանայք խառնված ուրիշ նոր մարդկանց և նոր կանանց։ Իր տեսած դեմքերից ոմանք դեռ այստեղ էին, իսկ ոմանք չկային։ Կային դաղթականները։

Ոմանք կային, ոմանք չկային։

Փոխվել էր մթնոլորտը։

Զարմանալի չէ՞ր, փոխվել էին դեմքերի արտահայտությունները, քայլելու, խոսելու, նայելու ձևերը։

Կայուն, իրենց արմատներին կառչած, կանգնած էին Արարատը, Արագածը, լեռները, ժայռերը, խուժանը և ոսկի ծախող վաճառականները։

Նաև այդ։ Այլև ոչ ոք չէր ուզում քեզ ճանաչել։ Կարծես, էջմիածին մեկնելուց ի վեր միայն երեք կամ հինգ օր չէր անցել, այլ՝ տարիներ, ինքը գնացել էր Լաբրադոր, շրջել էր Խաղաղականի կղզիները, Յոկոհամա, Թումբուկտուն, ուղարկած բացիկները տեղ չէին հասել և նրան մոռացել էին։

Այդ էր. ուղարկած բացիկները տեղ չէին հասել։ Այդ էր և ուրիշ ոչինչ։

Ահա նոր եկած մի մարդ, մի հին ծանոթ։ Նկարիչ Ասկանյանը։

Նկարիչ Ասկանյանը նեղ ուսերով, մեծ գլխով, փոքրիկ մորուքով, միշտ զարմանքով բացված աչքերով և լաց եղող շրթունքներով մի մարդ էր, որին տարիներ առաջ Հերյանը հանդիպել էր Բաթումում։

Գալիս էր Պյատիգորսկից։

Նախ անցավ Հերյանի կողքով առանց բարևելու, ապա կանգ առավ, զարմացած աչքերը տնկեց նրա վրա, ձեռքը երկարելով մոտեցավ նրան և ուրախացած բարևեց։

— Ա՛յ քեզ բան, դուք էլ էստեղ եք, ա՛յ քեզ բան...

— Բա, ինչպե՞ս չէ... Բարև, բարև... և...

Հին ծանոթի այդ տաք բարևը Հերյանին տակնուվրա արեց։ Վերջապես, ծանոթ մարդու ձեռք սեղմեց։

— Բա, ինչպե՞ս չէ,— բացականչեց նա,— ինչքան ժամանակ է...

Ուզեց մատով ցույց տալ նավը, բայց միտքը անմիջապես փոխեց և ցույց չտվեց։ Նկարիչը, բնազդաբար, հասկացավ նրա հոգեկան վիճակը, աչքերը վար առավ և լռեց։

— Մարդ ուղղակի գժվում է,— ասաց նա ցածր ձայնով։

— Ինչո՞ւ,— հարցրեց Հերյանը նույնպես ցածր ձայնով։

— Ինչո՞ւ,— կրկնեց նկարիչը, չորս կողմը նայելով։— Հենց հարցը դա է, որ ոչինչ չկա։ Ներկ չկա, կտավ չկա, վրձին չկա... էս պայմաններում ի՞նչ արվեստ կարող է լինել...

Միասին հառաչեցին։

Հրաման են տվել բանակի բոլոր սպաներին հավաքվել Պառլամենտի նախկին սրահում... ինչ-որ բան պիտի հաղորդեն...

— Գուցե կարմիր բանակում ծառայության պիտի կանչեն...

— Ո՞վ է իմանում...

Գլուխը ետ նետեց և ձայնը քիչ կլկլացնելով խոսեց.

— Հա, այդ մասին կասկած չի կարող լինել, պիտի անպայման ծառայության կանչեն. կարող եք վստահ լինել... Պարզ է, չէ՞... երկու անգամ երկու՝ չորս... Հայ բանակը, ուզում է լինի կարմիր, սև, դեղին, կապույտ, միևնույն է, սպաների կարիք ունի... Ախր, այդպես հեշտ, մեկ օրից մյուսը փողոցներում սպա չի ճարվում, ինչպես նավապետ չի ճարվում... Մի մոռանաք՝ մեր բանակում սպայակույտի շատ կարող զորավարներ կան... Ոչ թե կամավոր-մամավոր, ոչ թե խմբապետ-մբապետ, այլ իսկական ռազմագետներ, տարիների փորձառությունով եփված մարդիկ...

Ասկանյանը, ձեռքերը կրծքի վրա միացրած, զարմացած, աչքերը Հերյանի վրա տնկած, լսում էր։

— Նոր կարգադրություններ... պաշար-մաշարի; ռոճիկի և ուրիշ կարևոր և կենսական հարցերի մասին... Մարդիկ պետք է ապրեն, չէ՞... Փոր ասվածը, ստամոքս ասվածը պահանջում է ամենօրյա հացը, Դարալագյազի պանիրը, տերևի դոլման, խորովածը...

Այդ խոսքերը ասելիս նա ահավոր պարապություն զգաց ստամոքսի մեջ, ամբողջ օրը ոչինչ չէր կերել, և գլուխը պտույտ եկավ։ Բերանը լցվեց, թուքը կուլ տվեց։ Ասկանյանը անմիջապես կռահեց դիմացինի վիճակը և շվար աչքերով աջ ու ձախ նայեց։

— Եվ, առհասարակ... հասկանալի է, չէ՞...

Այդ խոսքերին հաջորդեց անհարմար լռություն։

Ասկանյանը ձեռքը գրպանում պատրաստվեց մի բան ասելու։ Հերյանը հասկացավ, կարմրեց և բարձր ձայնով՝

— Նու, աստուծով... տեսնենք ինչ կլինի... Պետք է գնամ, ուշացա... Սատանան տանի, ճաշի եմ հրավիրված և ուշացա... Ցը, շատ ուրախ եղա, շատ ուրախ, շատ ուրախ...

Նկարչի ձեռքը պինդ սեղմեց, մի քանի քայլ հեռացավ, կանգ առավ և հանդիսավոր շեշտով.

— Ասքանազ Արտեմիչ...

Մյուսը ետ նայեց։

— Եթե մի որևէ բանով ձեզ կարող եմ օգտակար լինել, խնդրում եմ առանց քաշվելու...

Հեռացավ առանց պատասխանը լսելու։

Ժամերով թափառեց։

Հիմա ի՞նչ պետք էր անել։ Հույսը դրել էր Մարտինի վրա, իսկ Մարտինը մեկնել էր առանց իմաց տալու։

Հիմա ի՞նչ պետք էր անել։ Ֆեոդոր Պանտելեևիչը բանտում էր։ Ասում էր մեռել է, վերածնվել է, կարմիր է դարձել... Լավ, եթե կարմիր էր դարձել...

Եվ պատերին քսվելով, փողոցից փողոց անցնելով, նայվածքներից խուսափելով, կես մարդ, կես շուք, նավապետ Հերյանը ման եկավ և ինքն իրեն հետ խոսեց։

— Մնացի փողոցում, բառի իսկական նշանակությամբ փողոցում... Ես ասեմ, դուք հասկացեք... Ո՞վ կա, որ հասկանա, ոչ ոք չկա, ոչ ոք... Մարդ կամրջակի վրա կանգնած հանգիստ քշում է նավը, նայում է կողմնացույցին, հաշիվներ է անում, որոշում է շարժման անկյունը... Հաշիվներ է անում... իսկ... չնայած հաշիվներին, չնայած կողմնացույցին, չնայած քարտեզին՝ նավի քիթը ծռվել է և գնում է վտանգավոր ժայռերի կողմը... Ստոպ, ստոպ... Ղեկը դարձնում ես աջ՝

մառախուղ է, ղեկը դարձնում ես ձախ՝ քամի, անձրև... Նավը և քեզ պաշարել են տարերքը... Եվ դու մնացել ես մենակ և հիմար, պատառ-պատառ եղած մի մարդ, նախկին մի մարդ... Կապիտան Արա Հերյա՞ն, համեցեք բանտը... Հեռավոր ճամփորդությունների նավապետ Հերյա՞ն, դե, եկեք, ձեզ պիտի ուղարկենք շատ հեռու, էնքան հեռու... առանց որոշելու շարժման անկյունը...

Թափառեց Կոնդի կողմերում, Զանգուի ափին, պարապ փողոցներում։

Ցուրտ էր։ Դիշեր էր։ Սոված էր։

5

«Ալբատրոսի» բնակիչներից Ռիմ գամփռը միայն գալիս էր նրան այցելելու։ Միշտ նույն ժամին, կեսօրվա մոտերը։ Շունչը կտրված, լեզուն դուրս ընկած, աչքերը տխրած։ Արագ-արագ մագլցում էր Քանաքեռի զառիվերը և գալիս կանգ առնում նավի առաջ։

Սկզբում, նավը հեռվից նշմարելիս նա ամբողջ ուժով վազում էր, գլուխը վեր բարձրացնում, նայում, պոչը անհամբեր շարժում, կաղկանձում այն հույսով, որ ահա մեկը իրեն վեր կկանչի, բարեկամական շեշտով կհանդիմանի, կշոյի, կկերակրի։ Սակայն, շուտով հասկացել էր, որ նավի մեջ այլևս ոչ ոք չի բնակվում և ուշադրությունը կենտրոնացրել էր ճանապարհի վրա, որտեղից մեկնումեկը կարող էր վերադառնալ։ Օրերով սպասել էր և ոչ ոք չէր վերադարձել։ Չնայած դրան, շարունակում էր գալ...

Կանգնում էր, մտահոգ աչքերով նայում, հաչում։ Հաչում էր առանց մեծ համոզումի, մեքենաբար։ Իբրև համառ գամփռ, ուզում էր հավատալ։ Նավի չորս կողմը պտույտ էր գալիս, հոտոտում, ականջները վեր տնկած լսում. չէ, ոչ ոք չկար։ Ոչ ոք չկար, եթե չհաշվեիր կատուներին։ Փաստը այն էր, որ տիրոջ բացակայության նավը անտուն կենդանիների ապաստանի էր վերածվել։ Քանաքեռի և շրջակա վայրերի բոլոր հիվանդ, քոսոտած, որբացած շորքոտանիները պատսպարվել էին այնտեղ։ Անվերջանալի մլավոցներ։ Նավի կամուրջը և վարի մասերը լցվել էին ազբով և ցեխոտված ձյունով։ Երկաթները ժանգոտել էին, պղնձե մասերը կանաչել, ներկը սկսել էր թափվել։ Նավը բորոտել էր։ Կայմի վրա ագռավներ էին նստում և կռկռում։

Ռիմը նայում էր, հուսահատվում։

Սոված նում էր և կաղկանձում։

Քանի Մարտինը քաղաքում էր, Ռիմի կյանքը քիչ թե շատ տանելի էր։ Նրա հոտը առնում էր շատ հեռվից։ Վազելով նրան հետևում էր, կանգ առնում դռների առաջ, մինչև որ նա դուրս գա։ Միասին գնում էին շուկա և այդպես կամ այնպես օր չէր լինում, որ բերանը մի բան չբռնկներ։ Մարտինը թղթում փաթաթած ոսկորներ էր բերում, դնում առաջը, և նա բախտավոր էր։

— Ռիմ ջան,— ասում էր նա,— դժվար ժամանակներ են, բան չի ճարվում...

Վերջին ճաշը կերել էր կայարանում։

Մարտինի կյանքը փոփոխությունների էր ենթարկվել։ Հոտերը փոխվել էին։ Նոր կոշիկներ էր հագել, բաճկոնը փոխել էր, ման էր գալիս քթի տակ երգելով, ծխում էր և կոնֆետ էր ուտում։ Նրա դեմքը լուսավորվել էր, այտերը սկսել էին կարմրել, աչքերը խնդում էին։ Նոր եկած, փոքրահասակ, սև, կծու և օտար հոտով մի անձնավորության հետ, նա անդադար շարժման մեջ էր, սրա նրա ականջին փսփսալով խոսում էր, շուկայի մոտերը զանազան մարդկանց հետ հանդիպումներ ունենում և նույն շուկայի հրապարակի վրա օրը մի քանի անգամ ճզիպզի ուտում՝ Ռիմը, որ բնազդով ամեն ինչ հասկանում էր, մնացել էր զարմացած։

Մի օր էլ չափազանց երկար վերարկու հագած, գլխին մորթե գլխարկ դրած, ուրիշ երկու մարդկանց հետ միասին, նույնպես երկար վերարկուներով և մորթե գլխարկներով, նրանք նստեցին ֆայտոն և գնացին կայարան, ուր երկաթե հսկայական մի կենդանի էր ման գալիս, աղմկելով կրակ և շոգի փսխում և սաստիկ վախ ազդում։ Ռիմը վատ նախազգացումներով լցված վազել էր ֆայտոնի հետևից, շվարել և մտահոգվել։ Բայց երբ Մարտինը և նրա ընկերները նստել էին բուֆետում և սկսել ուտել, Ռիմը անմիջապես ամեն ինչ մոռացել էր, երջանկությունով լցվել։ Այնքան տաք էր այնտեղ, այնքան լավ։ Կերակուրների հարբեցուցիչ հոտը և խորովածի բուրումը աշխարհը պատել էին, նվաճել։ Մարտինը, ոսկորների վրա բավականին միս թողնելով, նետել էր Ռիմին։ Խածնում էր և կուլ տալիս, առանց ծամելու։

— Ռիմ ջան, կե՛ր, է, կե՛ր...

Ինչպիսի՜ յուղոտ պատառներ, ինչպիսի՜ փափուկ ոսկորներ...

Հետո, մեկ էլ զանգակներ էին հնչել և ամեն մարդ, շտապ-շտապ տեղից վեր թռնելով պայուսակը բռնել էր և վազել դուրս։ Մարտինը և նրա ընկերները ուրիշներին հրելով, նույնպես վազել էին դուրս և փոքրիկ սանդուղներից բարձրանալով, մտել էին մի տուն։ Ռիմը, բնականաբար, ինքն էլ ուզեցել էր այդ սանդուղներով բարձրանալ, բայց

նրան փախցրել էին։ Ինչո՞ւ։ Ռիմը, վախեցած քաշվել էր մի կողմ, ապա նոր եկող բազմության ներկայությունից օգտվելով, նորից վերադարձել էր հին տեղը և անձկությամբ փորձել Մարտինին գտնել։ Զարմանալի էր, որ Մարտինի մտած տան նման ուրիշ շատ տներ կային, սանդուղներ, դռներ, սանդուղներ, դռներ։ Ո՞ր մեկի մեջն էր Մարտինը։ Ոչ աչքերը, ոչ ականջները, ոչ ռունգները կարողացել էին գտնել նրան։ Անհանգիստ վեր ու վար էր վազել, նայել պատուհաններին, հոտոտել, բայց Մարտինին չէր կարողացել տեսնել։ Ու կարծես այդ բավական չէր, մեկ էլ մի չտեսնված բան, տները տեղից սկսել էին շարժվել և թրխկթրխկալով վազել։ Ռիմը նետվել էր առաջ, ամբողջ ուժով վազել։ Երբ հասել էր երկաթե մեծ կենդանու մոտ, վերջինը բարկացել էր, սուլել և Ռիմի գլխին այրող շոգի միզել։

Ռիմը կանգնել էր, փոշտացել։ Տները արագ փախել էին։

Ռիմը անմիջապես մտածել էր, որ Մարտինը վերադարձել էր քաղաք։ Տարակույս չկար, Մարտինը ֆայտոն էր նստել և վերադարձել քաղաք։ Կայարանից դուրս էր եկել և վազել կառքերի հետևից։ Վազել էր մեկ կառքի հետևից, մյուս կառքի հետևից, ապա մի ուրիշի հետևից... Չէ, դրանց մեջ չէր։ Բայց ո՞ւր էր։ Հա, հասկացավ... Հեռուն, ձիերը շատ արագ քշելով գնում է մի ուրիշ կառք։ Վստահ էր, այնքան վստահ, որ երբ կողմնակի փողոցից մի փոքրիկ, դեղին շուն էր դուրս եկել և հաչել, Ռիմը վազել էր նրա հետևից և սկսել նրա հետ խաղալ։ Իր փառավոր ճաշը լավ մարսելու համար ձյունի մեջ թավալ էր եկել, ցատկել, շնի ոտքերը խածել, ուրախացել։ Հետո հանկարծ, ամբողջ ուժով վազել էր քաղաք։

Այցելել էր բոլոր ծանոթ վայրերը, բոլոր փողոցները, բոլոր տները։ Մարտինը չկար։ Հա, հասկացավ, Մարտինը գնացել էր նավ։ Շտապել էր վեր։ Նավի առաջը կանգնած, տխրած, ջղայնացած, նա սպասել էր ամբողջ օրը, մրսել, սովածացել, բայց ոչ ոք չէր եկել։

Եկել էր գիշերը և բուքը։

Բուքը։

Ռիմը մտել էր նավը պահող փայտերի տակ, գլուխը ոտքերի վրա պինդ սեղմել, ոլորվել, մրսել։

Զար ու սառը քամին ճեղքերի միջից սուլելով, վայելով ներս էր խուժել և շարշարել նրա մարմինը։ Մի քանի անգամ տեղը փոխել էր, կուչ գալու ուրիշ ձևեր փորձել, բայց ոչինչ չէր օգնել. քամին, վերի կատուների հետ միասին, շարունակել էր մլավել, աղմկել, կատաղել։ Ամբողջ մարմնով դող էր եկել, ողնաշարը սկսել էր փայտանալ։ Այլևս վա-

խեցել էր տեղից շարժվել, և մեկ աչքը փակ, մյուսը բաց աշխատել էր քնել։

Բաց աչքը, թեպետ նա ևս ուժասպառ, ճիգ էր արել հսկողության տակ պահել վտանգավոր կերպով շարժվող փայտերին. չլինի ամեն ինչ ընկնի գլխին։

Փակ աչքը երազ էր տեսել։

Փակ աչքը վերադարձել էր այն գյուղը, որտեղ նա ծնվել էր։ Տաք ախոռի մեջ երկու կովերի և մի եզան հետ էր պառկում։ Այն ժամանակ անունը Ալաբաշ էր։ Դրսում փաթիլ-փաթիլ մեծ ձյուն էր գալիս։ Մինչև կեսը հողերի մեջ մխրճված գյուղի խրճիթները ծածկված էին ձյունով։ Մարդիկ և կենդանիները քնած էին։ Ամեն ինչ խորասուզված էր ծանր լռության մեջ։ Ախոռից հարդի, գարիի, թրիքի և մեզի հոտ էր գալիս. մթնոլորտը ջերմ էր և անուշ։

Ինքը պառկում էր հաստ կովի մոտ, որի անունը Մոռ էր։ Ստիպված էր ուշադիր լինել, որովհետև այդ Մոռ ասված կովը, գիշերը ամենաանուշ քնի ժամանակ, մեկ էլ ոտքը երկարում և աքացի էր տալիս։ Կամ մեկ կողմից մյուսը շրջելիս կարող էր Ռիմին ճզմել։ Իսկ առհասարակ, բարի կենդանի էր։ Գլխի վրա ճերմակ բծեր ուներ և թավշյա մեծ աչքեր։ Երբ արտից տուն էին վերադառնում և Ռիմը պարտականության հավատարիմ վազում էր նրա հետևից և հաչելով նրան հասկացնում, որ չնչին խոտերի առաջ կանգ չառնի, այլ շտապի տուն։ Մոռն, մյուս կենդանիների նման եղջյուրները վար առած, Ռիմի վրա չէր քայլում... թե՝ ի՞նչ ես զահլա տանում, այլ աչքի տակով նայում էր նրան, ժպտում և անցնում ճամփի մյուս կողմը։

Ամառը բարձրանում էին լեռ։

Կովերը, եզը, ոչխարները, նոր ծնած հորթերը, գյուղացին, նրա ընտանիքը և ճռռան սայլը։

Ինչ օդ, ինչ կյանք, ինչ ազատություն։

Ռիմը, նրա հայրը (այն ժամանակներում դեռ ողջ էր) հարևանների շները, ամենքը միասին, կարծես թևեր էին առնում։ Վազում, խաղում և թավալ էին գալիս թարմ խոտերի մեջ։ Անհամար ծաղիկների բուրումներից նրանք ստիպված էին անդադար փռշտալ։

Երբեմն տերերը ոչխարներից մեկին մորթում էին, հողը փորում, տակը կրակ վառում, ոչխարը փոսի մեջ ծածկում, եփում։ Առավոտյան դեմ ուտում խմում էին և պարում։ Իսկ Ռիմը, մյուս շների հետ, վայելում էր ոսկորները, մնացած մսի կտորները և, խենթի նման այս ու այն կողմ վազելուց հետո մեջքի վրա պառկում էր և ոտքերը արևի տաք ճառագայթներին տված թավալ էր գալիս։

Ահա տեսնում է մի ուրիշ տեսարան։ Հոտը արածելուց հետո պառկել էր արտի ծայրին։ Որպեսզի վստահ լինի, թե ամենքը իրենց տեղում են, աջ ու ձախ էր վազել, ամեն տեղ հոտոտել, խուզարկել... և առաջը երկու մայող հիմար գառնուկներ գցած եկել նստել է մյուսների մոտ։ Գլուխը վեր բռնած, ականջները ուշադիր շարունակում էր հսկել։ Քիչ հեռուն, առաջնորդող այծը՝ ճկուն, մորուքավոր, հանդիսավոր աչքերը մոտակա ժայռերի վրա, անշարժ նստել է։ Ոչխարները մեկը մյուսի քով սեղմված, թմրել են։ Գառնուկներից ոմանք, ագահ և անկուշտ, դեռ շարունակում են, գլխով ուժգին հարվածներ տալով, իրենց մոր ստինքները շարշարել։ Ամբողջ օրը արևը պայծառ կրակի տակ ամեն ինչ այրել է։ Հիմա գնացել թաքնվել է լեռան մյուս կողմը և անուշ քամի է փչում։ Երկինքը արագ մթնում է և լցվում անհամար փայլփլուն կետիկներով։ Երևի հեռավոր գյուղեր են, որոնց պատուհանների ետև ճրագներ են վառված։ Էնքան շատ ճրագներ...

Քամին ուժեղացավ, սուլեց, վայեց։ Նրա ամբողջ մարմինը դողում է։ Ճիգ է անում մոտենալ ոչխարներին և նրանց ջերմությունից օգտվել... թեպետ ոտքերը շարժվում են, բայց մոտենալ չի կարողանում։

Բայց աչքը սարսափով տեսնում է, որ հոտը, արոտատեղին, լեռները անհետացել են. սակայն տեսածը չի կարողանում հաղորդել գիտակցությանը, որը ամբողջովին կլանված է երազով։

Երազը խավարում է։ Աստղերը անհետացել են և — օ՜ սարսափ — ոչխարները, որ հանգիստ պառկած էին, կամաց-կամաց բարձրանում են վեր, հսկայական ամպի վերածվում, բաժան-բաժան լինում և սուրում փոթորիկի հետ։ Ռիմը սաստիկ անհանգստանում է, ուզում է ոտքի կանգնի, հաչի, նրանց զգուշացնի, բայց կարողանում է միայն տնքալ, թույլ մռնչումներ հանել, աջ ու ձախ շրջվել և սարսռալ, որովհետև սաստիկ ցուրտը թշնամի շան նման գրոհ է տվել և սուր ատամներով նրա մարմինն է խածնում։

Թշնամի շունը, բարձր, հաստ, արյունոտ աչքերով, մռնչալով վրան է ընկել և ուզում է հասնել նրա կոկորդին։ Ռիմը ահագին ճիգ է անում, ազատվում և, դիրք բռնելով, մռմռում։ Մյուսը շանթի արագությամբ նորից նետվում է նրա վրա և խածնում պոչը։ Անտանելի մի ցավ այրում է նրան։ Ռիմը կաղկանձելով տեղից վեր է թռչում և զարմանքով տեսնում, որ պառկած է նավի փայտերի տակ, որոնցից մեկը ընկել է պոչի վրա և վիրավորել նրան։

Շվարած նայում է։ Մեծ, անասելի մի տխրություն է լցնում նրա սիրտը։ Գլուխը դնում է երկու թաթերի վրա և անձայն լաց լինում։ Նրա

լացին պատասխանում են կատուների մլավոցները և քամու հառաչանքը։

Լուսաբացին դուրս էր եկել, կանգնել։ Անպայման մեկնումեկը կգա։ Բայց ոչ ոք չէր եկել։

Նավի մոտ կանգնելն էլ վտանգավոր էր։ Գյուղի լակոտները անտեր նավի վրա քար էին գցում զվարճանալու համար։ Քարերը զրնգալով կպչում էին երկաթներին, ներկը վար թափում։ Այդ հաղթանակը տոնում էին աղաղակներով և նորից շարունակում քար գցել։

Հուսահատված՝ Ռիմը իջել էր քաղաք, ման եկել փողոցներում, այցելել այն տների դռները, որոնց առաջ կանգ էր առնում Մարտինը, այն գինետները, ուր մտնում էր ռուսը, այն վայրերը, որտեղից անցնում էր Հերյանը, բայց մարդ չէր տեսել։

Օրերով թափառել էր։

Ամեն տեղից նրան փախցրել էին։ Ցեխոտվել էր, նիհարել և մազերը սկսել էին դեղնել։ Վիզը ծռվել էր, աչքերը լցվել էին վախով։

Բա, չէ՞։ Երկու օր առաջ, նա տեսել էր, թե ինչպես գանգուր մազերով մի շնիկի անխնա ծեծել էին, որովհետև զամբյուղից ընկած մի կտոր հաց էր բարձրացրել։ Այդ տեսնելով Ռիմը տխրած, վախեցած, վազել գնացել էր... և կանգ առել ամայի մի փողոցում։

Իսկ ուտելիք չկար։

Մի օր, խոր ցեխով լցված փողոցում մի տղա բոլորովին անարդար կերպով քար էր նետել Ռիմի վրա և վիրավորել նրա առջևի ձախ ոտքը։ Այդ ոտքը վեր բռնած, նա կաղկանձելով փախել էր։

Մի փողոցի ծայրին, որտեղ վերջանում են տները և տարածվում է աղբով լցված մի տարածություն, նա հանդիպել էր մի խումբ շների։

Օտար շներ։ Չէր իմացվում որտեղից էին դուրս եկել։

Ամեն տեսակի և ամեն ցեղի շներ։ Հազվագյուտ տեսակի քաղաքի շներ, որ առհասարակ ապրում են հարուստ տներում, շփացած և գոռոզ։ Գամփռներին նրանք չեն ուզում մոտենալ։

Ռիմին տեսնելիս նրանք կանգնեցին և, իրենց քիթը վեր բարձրացրած, նայեցին։ Ռիմը, ցավող ոտքը վեր տնկած և պոչը սեղմած, ետ քաշվեց, գլուխը վար առավ և վախեցած, աչքի տակով նայեց նրանց։ Ատամները ցույց տվեց և կամաց մռմռաց։

Շները նայեցին նրան և հետո նայեցին պարագլուխին, որը մեծ, ուժեղ, գանիական մի շուն էր, ահավոր դունչով և ահավոր թաթերով։

Գանիական շունը ոչ մի ուշադրություն չդարձրեց, այլ մտազբաղ աչքերը այս ու այն կողմ շրջելով, պոչը վար գցած, շնչառությունը

դժվարացած, պտույտ եկավ, քիչ հեռացավ, ետ եկավ։ Հայոնի էր, ինչ-որ բան նրան չարչարում էր և մատնված էր անորոշության։

Հուսահատված էր և սոված, ինչպես բոլոր մյուս շները։ Այլևս չգիտեին ուր գնալ, ինչ անել։ Այդպիսի թշվառություն տեսնված բան չէր։ Սոված ությունից ամենքն էլ կես խենթացած էին։

Դանիական շունը աջ ու ձախ վազեց, և աչքերով հրաման տվեց մեկնելու։

Ռիմը, մենակությունից վախեցած և մեծ շան անտարբերությունից քաջալերված, վազեց ոհմակի հետևից։ Փոքրահասակ, գանգուր մազերով մի շնիկ, որ սիրալիր բնավորություն ուներ և որ մեծացած էր գեր տանտիկնոջ առատ ծնկների վրա, վազեց Ռիմին քսվելով և թեթևսոլիկ տեղեկություններ տվեց ստեղծված դրության մասին։

Պատմեց, որ այդ շների տերերը քաղաքից փախել էին և նրանց թողել անպաշտպան և սոված։ Ուտելու բան չկար։ Ամեն տեղից նրանց փախցնում էին, քար նետում, ծեծում։ Առաջվա նման տներից բան չէին նետում դուրս։ Ոչ ոք չէր իմանում ինչ անել։ Ամբողջ օրը, այդպես խմբով վազում էին աջ ու ձախ, աննպատակ, առանց հույսի։ Քաղաք չէին մտնում, սաստիկ վտանգավոր էր. անցնում էին հեռավոր փողոցներով... Ահ, շատ, շատ վատ էր, շատ վատ...

Շնիկը վազում էր և անդադար խոսում։ Ռիմը, քիչ հետաքրքրված և քիչ էլ քաղաքավարության համար, լսում էր նրան և միշտ մեկ ոտքը բռնած աշխատում էր ետ չմնալ։

Օրեր թափառել էր ոհմակի հետ։

Սոված, ջղայնացած, կատաղած, նրանք ամբողջ օրը վազվզում էին և սպասում գիշերվա, որպեսզի մտնեն քաղաք և փորձեն գողություն անել։ Անցնում էին բակերից ներս, այնտեղ, աղբի կույտերում հին ոսկորներ էին ճարվում։ Բայց ի՞նչ օգուտ։ Դրանց վրա հարձակվողները միշտ էլ ուժեղներն էին։ Դանիացի շունը մոտենում էր, մոմոում, ոսկորը խլում և հանգիստ կրծում։ Մյուսները՝ շուրջը կանգնած, թուքը կուլ էին տալիս և սպասում։ Սպասում էին ինչի՞... Շատ դեպքերում կռվում էին ոչինչ բանի համար։ Մեկ մեկի վրա էին հարձակվում, փրփրում, այլանդակվում։

Իբրև գյուղի շուն Ռիմը հավասարակշռված և խոհեմ, այդ հիստերիկ տեսարանները չէր կարողանում տանել և, առհասարակ, այդ վիճակի հետ չէր ուզում հաշտվել։ Մի օր ոտքի ցավի պատճառով կուլ եկած նստել էր, երբ մյուսները հեռացան։ Լավ էր գլխի ճարը մենակ տեսնել։ Ներքին մի ձայն նրան ասում էր, որ վերջ ի վերջո դտնելու է

նավի բնակիչներից մեկնումեկին։ Չէ, այդպես չէր կարող շարունակվել։

Պատերին քսվելով վերադարձել էր քաղաք։ Ման էր եկել, հոտոտել, փնտրել։

Մի երեկո — ինչեր են պատահում շներին — կողմնակի փողոցում պառկելիս, Ռիմը տեսավ՝ զինված մարդիկ առաջը, զինված մարդիկ հետևում, իսկ մեջտեղը... մի մարդ և մի ուրիշ մարդ։ Ռիմը, որ այդ տեսավ, ամբողջ մարմնով ցնցվեց, ոտքի ցատկեց, աչքերը լայն բացեց, ականջները վեր տնկեց, կաղկանձեց։ Այն մարդկանցից մեկը Ֆեոդոր Պանտելեևիչն էր։ Ռիմը ուզեց վազել ուրախության նշաններ անելով ցատկոտել, հաչել, բայց վախեցած ետ քաշվեց։ Զինված այդ մարդիկ շատ խիստ դեմք ունեին։ Վազեց նրանց հետևից, նրանց շուրջը պտույտ եկավ, որպեսզի ուսի ուշադրությունը իրեն վրա հրավիրի, բայց իզուր. ուսը քայլում էր գլուխը վար կախած, ոտքերը հազիվ քաշքշելով, ընկճված և առանց ոչ ոքի նայելու։

Երկար քայլելուց հետո նրանք կանգ առան փոքրիկ պատուհաններով մի շենքի առաջ, ուր նույնպես զինված մարդիկ կային։ Մեծ դարպասը բացվեց։ Ռիմը փորձեց նրանց հետևից ներս մտնել։ Զինվորներից մեկը ոտքով այնպիսի մի հարված տվեց նրա փորին, որ կայծեր փայլատակեցին նրա աչքերի առաջ, և նա, ուշքը կես կորցրած, փախավ մի ուրիշ դռնից և ընկավ մի բակ։

Ընկավ բակ և ցավը անմիջապես մոռացավ։

Խոհանոցի մի այնպիսի ուժեղ, այնպիսի հարբեցուցիչ հոտ եկավ, որ քիչ էր մնացել ուշաթափվեր։ Պոչը տրորելով մոտեցավ դռան, որտեղից հոտը գալիս էր և ի՞նչ տեսնի. մի մեծ արկղ կաղամբ, ոսկորներ, յուղի և մսի կտորներ։ Շների աստված, անգամ մսի կտորներ... Կերավ, կրծեց, լափլփեց այն աստիճան, որ քիչ վատ զգաց... կորցրել էր ուտելու վարժությունը։

Բակից դուրս գալու և նորից ներս մտնելու համար պետք էր ահագին ռազմագիտություն։ Պետք է ժամերով սպասել, որ մեծ դարպասը բացվի։ Այդ պատահում էր, երբ զինված մարդիկ ներս դուրս էին անում։ Բարեբախտաբար, այդ գործողությունը կրկնվում էր օրը մի քանի անգամ։ Ռիմը, շուքի նման պատերին կառչելով, համարյա սողոսկելով առաջանում էր, փոքրիկ դռնից անցնում և, հազիվ դարպասը բացված, նետվում էր դուրս։ Իսկ մի օր պոչը տնկած վազել էր նավի ուղղությամբ։ Ճանապարհի կեսին զարմանքով տեսել էր, որ կապոցներով ծանրաբեռնված բազմաթիվ գյուղացիներ վայր էին իջնում։

Պանիր, կարագ, պահածո, միս էին տանում։ Շրջվել էր և գնացել շինականների հետևից։

Կամաց-կամաց հասել էր մինչև շուկա։

Գիտեր, որ շուկայից շներին և խուժան տղաներին քարկոծելով փախցնում են։ Ուստի, մեծ զգուշությամբ թաքնվել էր մի պառավ կնոջ զամբյուղի հետևում, առաջացել իբրև նրա հավատարիմ և խելոք շունը և հասել մինչև այն վայրը, ուր ձուկ, միս և ուրիշ հազվագյուտ և թանկարժեք բաներ էին ծախվում։ Բայց այնտեղ, հպիվ թե թաքը երկարացրել էր սեղանի տակը ընկած փոշոտ մի կտոր լյարդի վրա, մսավաճառը, հաստափոր մեկը՝ բարկացած բղավել էր, գլխին խփել և փախցրել։ Բնականաբար, նորից փորձել էր վերադառնալ։ Զգույշ կերպով մոտեցել էր սեղանի մյուս կողմից, փոքրացած, մարմինը ամբողջովին հավաքած առաջացել, դունչը երկարել և շանթի արագությամբ լյարդը վերցրել։ Մսավաճառը հաստ փորը շրջել էր և դանակը ձեռքին վազել նրա հետևից։ Ռիմը վախեցած կանգ էր առել հեռվում։ Աչքերը մեղավոր, ոունգները լայն բացած հեռվից դիտել էր և մտածել նոր ռազմագիտություն լյարդի կտորը թոցնելու համար։ Հանկարծ ականջները վեր էր տնկել, ուշադրությունը լարել, լսել էր մի ծանոթ ձայն։ Կարելի՞ բան էր... Լյարդ, միս, սովածություն՝ ամեն ինչ մոռացել էր։ Աչքերը վառվել էին և մտահոգվել։ Այդ վայրկյանին ձայնը նորից հընչել էր, և Ռիմը, ուրախությունից խենթացած, ամբողջ ուժով ցատկել և կաղկանձելով ընկել էր Հերյանի ոտքերի տակ։

— Ռիմ ջան, որտե՞ղ էիր... Ռիմ ջան...

Միասին ուրախացել էին։

Ուրիշ բազմաթիվ մարդկանց շարքում կանգնած, Հերյանը բարձր ձայնով անցնող գյուղացիների ուշադրությունը հրավիրում էր առաջը դրած ապրանքների վրա՝ մի շապիկ, մի ածելի, մի զույգ հոգաթափ...

— Էս տեսակ շապիկ,— ասում էր նա,— տասը տարի էլ փնտրեք, ոչ մի տեղում չեք ճարի... իսկական զագրանիչնի[1] կտավ և անմատչելի... Տալիս եմ երկու ֆունտ յուղի կամ երեք ֆունտ լուբիայի կամ երկու ու կես ֆունտ ոսպի փոխարեն... Համեցեք, համեցեք, ընկեր շինականներ... օգտվեք առիթից...

Գյուղացիներից ոմանք կանգ էին առնում, շապկի ծայրից բռնում, շոշափում։ Հերյանն աշխատում էր նրանց համոզել։

---

[1] Արտասահմանյան։

— Սա ուրիշ ապրանք է... գնել եմ Ֆրանսիայում, Մարսել ասված քաղաքում և երկու անգամ չեմ հագել...

— Հին է,— պատասխանում էր գյուղացին, կասկածոտ աչքերով նրան նայելով։

— Հի՞ն է... ասում ես հի՞ն է...

— Կես ֆունտ յուղ... ավելի չեմ կարա...

Ասում էին մեքենաբար և շուռ գալիս Հերյանի կողքին կանգնած ուրիշ վաճառողների կողմը։

Քաղաքի գրեթե ամբողջ բուրժուա դասակարգը այնտեղ էր։ Ոմանք եկել էին իսկապես կարիքից մղված, ուրիշներ էլ ցույց տալու համար, որ ոչինչ չունեն։ Մինչդեռ ունեին ոսկի դրամներ, գոհարեղեններ, պաշար՝ հողի տակ կամ պատերի մեջ պահված։

— Համեցեք, համեցեք, ընկեր շինականներ... իսկական զագրանիչնի ապրանք...

— Ինչ զագրանիչնի, ինչ բան... Ես ձեզ տալիս եմ Մորոզովի կտավ... անմատչելի...

— Տաք բուրդե վերմակ... տաք յորղան...

— Ով Արաբստանի իսկական ուղտի բուրդ է ուզում, թող էստեղ գա, էստեղ...

— Թախտի մինդար... Դաղստանի յափունջի...

Բարձր դասակարգի այդ վաճառականները աշխատում էին իրենց մեջ սիրալիր, սալոնային հարաբերություններ պահել։

— Սոֆյա Առաքելովնա, տեսա, կարողացաք մի պնակ մածուն առնել... շատ ուրախացա...

— Շնորհակալ եմ, Աստվածատուր Միկիչովիչ, շնորհակալ եմ... Իսկ դո՞ւք, ի՞նչ արեցիք...

— Ի՞նչ պիտի անեմ. գյուղացիները էնքան պինդ են որ... Նիշևո, քիչ ոսպ կարողացա ձեռք բերել...

Ապա նորից սկսում էին առաջարկել ապրանքներ։

— Դանակ... չանգալ-մանգալ...

— Սեղանի սփռոց... երեք արշին լայնքը, հինգ արշին երկայնքը...

— Ղազան, հրաշալի ղազան...

Ապրանքները վերցնելով իրենց ձեռքում՝ գյուղացիները նայում էին, այս ու այն կողմը դարձնում, մոտեցնում աչքերին, զննում, հաստ մատներով շփում, շոշափում և առանց ոչինչ ասելու ետ տալիս։

— Բիձա ջան, բիձա ջան,— ասում էր վաճառողը հուզված ձայնով,— ախր լավ չնայեցիր... լավ նայիր, տես ինչ հրաշալի ապրանք է... Երկու ֆունտ յուղի փոխարեն...

Հրաշալի ապրանքը փոքրիկ թատրոնական հեռադիտակ էր։

— Ասենք, խոխեքը կովը տարել են դաշտ արածելու և ուշացել են,— բացատրում էր նա։— Ուշացել են... մտահոգվել ես... ո՞վ պիտի գնա, շոլերը ընկնի նրանց փնտրելու համար... բարձրանում ես կտուր, էս զատը մոտեցնում ես աչքերիդ՝ և դաշտում արածող կովին և խոխեքին տեսնում, ասես երկու քայլ հեռու լինեն... Երկու քայլ, ոչ ավելի...

— Էնպես է,— կմկմում էր թերահավատ բիձան,— էնպես է... բայց ես շալվար եմ փնտրում...

Հաճախորդը չկորցնելու համար հեռադիտակի տերը բիձայի այդ ցանկությունը հաղորդում էր հարևանին.

— Սերյոժա, էս պատվական մարդը շալվար է փնտրում...

— Շալվար ո՞վ ունի, էստեղ շալվար են ուզում,— հաղորդում էր հարևանը մյուսներին։

— Համեցեք, համեցեք, իսկական անգլիական մահուդից կարված շալվար... էստեղ եկեք, էստեղ...

Հերյանի մոտ խելոք նստած Ռիմը գլուխը այս ու այն կողմ էր դարձնում, նայում և զվարճանում։

Բախտավոր էր։

Այն երեկո Ռիմը ծանոթացավ իրենց նոր բնակարանի հետ։

Բնակարան ասելը չափազանցություն էր, որովհետև եթե պատեր ուներ, տանիքը փլած էր, եթե պատուհաններ կային, ապակիներ չկային։ Հերյանը բարեկամ որբերի հետ պառկում էր կես փլած, կես այրված այն տներից մեկում։

Քիչ թե շատ պատսպարված սենյակներից մեկում նա կախել էր հին վերմակից շինված մի տեսակ նախնական գամակ, ճարել էր կես կոտրված մի աթոռ, մի քանի անհրաժեշտ առարկաներ և մի կերպ տեղավորվել։

— Իմ ոոբինզոնյան անկյունը,— ասում էր նա ծիծաղելով։

Կամ իրեն հանգստացնելու համար՝

— Ենթադրենք, որ մեծ մի փոթորիկ նավս խորտակել է և ես ընկել եմ անծանոթ մի կղզի։ Ուրախ եմ, որ կյանքս փրկվել է և յոլա եմ գնում... Քիթս վեր տնկած նայում եմ հեռավոր հորիզոնին և սպասում...

Ասում էր և ծիծաղում հնչուն, երեխայական ծիծաղով։

Խուժան տղաները նրան սիրում էին հենց այդ ծիծաղի համար։

— Կյանքը պետք է ընդունել այնպես, ինչպես գալիս է,— կրկնում էր նա։— Մեզ այցելող լավ և վատ օրերին պետք է դիմավորել ողջույններով և նրանց հագցնել մեր երևակայության փարթամ զգեստներով... Մարդիկ մոռանում են, որ կյանքը կարճ է, որ եկել ենք և պիտի գնանք, որ մյուս աշխարհում անհամբեր մեզ են սպասում...

Գիշերները կրակ էին վառում և շուրջը նստում։

Բոցերը լուսավորում էին այդ երեխաների շուտ թառամած, տանջված, հիվանդոտ երեսները։ Ցնցոտիներով ծածկված, ոջիլներով լցված և ոտաբոբիկ, նրանք կապտած շրթունքները սեղմում էին, ջերմոտ աչքերը հառում Հերյանի վրա և սպասում, որ մի բան պատմի։

— Դե, նավապետ ջան, սպասում ենք...

Հերյանը շուրջն էր նայում և շինծու մտահոգվում։

— Քամին էլի սկսեց փչել,— ասում էր նա հեռավոր ձայնով։

— Շատ ուժեղ է փչում... մլավում է...

Տղերքը մեկը մյուսին էին սեղմվում։ Բոլորի ուշադրությունը լարվում էր։

— Ուրեմն, օվկիանոսի վրան ենք... Հին ժամանակներում, առագաստանավերով էին ճամփորդում... Մեր նավը չորս կայմանի է. բոլոր առագաստները բացված են, ուռել են, կարծես պիտի ճայթեն... Քիթը բիզ, ամբողջ մարմնով մեկ կողմ թեքված՝ նավը արագ սուրում է... Հետևում, ղեկի մոտ կանգնածները թող ուշադիր լինեն, ամենափոքրիկ սխալը կարող է ծանր... Տեսնում եք, չէ՞, ինչ է կատարվում ծովի վրա... քամին գրոհ է տալիս, կոհակները բարձրանում են և լեռան նման, ամեն մի վայրկյան նավի առաջ անդունդներ են բացվում... քիթը վեր է տնկվում, ահագին ուժով վայր է ընկնում, ասես պիտի թաղվի ջրերի վիհում... Բռռռ, թրջվել ենք, ցուրտը խածնում է մինչև ոսկորները... Գիտեմ, հասկանում եմ, բա, չեմ հասկանո՞ւմ... քսան օր է, որ անտանելի եղանակը մեզ շարշարում է... Հոգնել եք, ուժասպառ եք... Դե, ի՞նչ արած, տղեք ջան, քաջություն... Ծովային մարդկանց ճակատագիր է. պետք է տոկալ, դիմանալ, թշնամի տարերքին հաղթել... Մի՛ մոռանաք. ամբողջ Սպանիայի աչքերը մեր վրան են... Հիշում եք, չէ՞, այն օրը, մեկնելու վերջին ժամին, ինքը փառավոր և գեղեցիկ Մեր Թագուհին եկավ մեզ այցելության... Կարծես հիմա լինի։ Փողերը հընչում էին, զորքերը շքեղ զգեստներ հագած շարքով կանգնել էին, աղնըվականությունը՝ գրանդները և հիդալգոները՝ լայն, փետուրավոր գըլխարկներով, ժապավեններով ծածկված համազգեստներով, ծանր թուրեր կախած կամաց առաջանում էին թագուհու հետևից։ Թագուհին՝ շքեղ, հանդիսավոր, հրեշտակի նման գեղեցիկ, ոսկեզարդ մետաքսե

զգեստները շիշխացնելով, մոտեցել էր մեզ և իր մեծ պայծառ աչքերով ժպտացել... Ժողովուրդը կեցցե էր գոռում, նվագախումբը հնչում էր, Սանտանդերի աղջիկները իրենց նրբագին մատները շրթներին տանելով համբույրներ էին ուղարկում մեզ...

Շունչը զսպված ամենքը լսում էին։

— Չե՞ք հիշում... կարծես երեկ էր... Եվ մենք երդվեցինք հավատարմություն Կաստիլիայի շատ գեղեցիկ մեր թագուհուն, երդվեցինք մեր նավի բացված առագաստները հանձնել հյուսիսային քամիներին և, հաղթահարելով մրրիկ և փոթորիկ, հասնել Կոլումբոսի գտած հողերի հարավային վայրերը, մեր սրի ուժով նվաճել երկրներ և վերադառնալ բեռնավորված անհամար հարստություններով և պսակված փառքով... Հիշում եք, չէ՞...

Հերյանի աչքերը վառվում էին։ Այդ ամենը նա ասում էր այնքան բնական և համոզված շեշտով, որ աղաները միաձայն պատասխանում էին՝

— Հիշում ենք, այո, հիշում ենք...

— Տղեք ջան, շատն անցել, քիչն է մնացել,— շեշտով շարունակում էր Հերյանը։— Ջենովայում տպված այս քարտեզում ամեն ինչ նշանակված է. մի քանի օր ևս, և մենք կտեսնենք ծովային առաջին թռչուններին, որ կգան, կթռչեն մեր կայմերի կատարին և մեզ կավետեն հրաշալի երկրների մոտիկությունը... կհասնենք Մեքսիկայի մոտերը կամ Կալիֆորնիա, Վառ Փուռ ասված տեղերը... Եվ երբ մոտակա բլուրներից թագավորը և մեծամեծները մեզ տեսնեն, կիջնեն վար, մեզ կբերեն թանկագին քարերով զարդարված հարուստ նվերներ, ոսկի թելերով հյուսված կտավներ, արծաթե ծանր պնակներ, անասելի գեղեցկությունով աղջիկներ և բազմաթիվ ստրուկներ... Մենք՝ զրահներով ծածկված, Տոլեդոյի սրասուր թրերով զինված, նավից կիջնենք, կբանանք Կաստիլիայի շքեղ գրոշը, թագուհու զինանշանը և կպահանջենք, որ ամբողջ այդ երկիրը հպատակվի մեզ... ընդունեն՝ լավ, չընդունեն... կնստենք արագավազ ձիերի վրա և կասպատակենք երկիրը հյուսիսից հարավ... Եվ տեղի կունենան կռիվներ... Կզարնենք աջ և կզարնենք ձախ. կգրավենք գյուղեր, քաղաքներ, թագավորություններ և կտանենք բազմաթիվ հարստություններ, որոնցով կզարդարվեն Կաստիլիայի և Արագոնի պաշտպան սրբերին նվիրված եկեղեցիների ավագ սեղանները, և կվերցնենք գեղեցկագույն աղջիկներին և էնքան ուրիշ բաներ... Եվ երբ ամբողջ այդ երկրները կնվաճենք, ձեզանից ամեն մեկին ես կնշանակեմ տարբեր գավառների կառավարիչ, և դուք հրամաններ կտաք, կարգադրություններ կանեք, կհարստանաք, և ձեր ոսկինե-

րի քանակը այնքան մեծ կլինի, որ տասը նավ չի բավի երկիր տեղափոխելու համար...

Տղաների երեսին բախտավոր ժպիտ էր նստում։

— Այո, հավատացնում եմ ձեզ, այսպես կլինի և ոչ ուրիշ տեսակ... Իսկ առայժմ պետք է դիմանալ... քամին քանի գնում սաստկանում է... Ցուրտ է...

— Փետն էլ վերջացել է...

— Ուրեմն, մի քիչ պառկենք, քնենք, հանգստանանք... վաղը նոր ուժով, նոր եռանդով կշարունակենք մեր դժվարին ճանապարհորդությունը...

Քամին մլավում էր ծակ տանիքի կատարին։ Տղաները դողդողում էին և սեղմվում մեկը մյուսին։ Կրակը մարում էր։ Հերյանը պառկում էր գամակի վրա, որ նմանվում էր թշվառ երեխայի օրորոցի, վերմակը քաշում էր և լռում։

Ոչ ոք այլևս չէր խոսում պատրանքը կենդանի պահելու համար։

Մեկը մյուսին սեղմված նրանց մարմինները ծալվում էին, և նրանց երևակայությունները ման էին գալիս հրաշալի երկրներում, ուր մշտընջենական արև էր, ուր քաղաքները սալահատակված էին ոսկե քարերով, ծառերը բեռնավորված չտեսնված հյութեղ պտուղներով, ուր կյանքը անվերջանալի երջանկություն էր, ուր կանայք այնքան գեղեցիկ էին...

Ռիմն էլ սեղմվում էր նրանց կողքին։ Երջանիկ էր։

...Օրը բացվում էր ծածկված տանիքի կատարին։ Կապոցը ձեռքին Հերյանը իջնում էր շուկա։ Տղաները ցրվում էին քաղաքի տարբեր մասերում... անկյուններում սպասում... մի բան թռցնելու համար...

Հաճախ վերադառնում էին ծեծված, վիրավորված։

Պառկում էին և տնքում։

Փլած տան մեջ քաղաքական բուռն վիճաբանություններ էին գնում... Այդ վիճաբանությունների պատճառը միշտ էլ Սիսակն էր։ Երկարահասակ, երիտասարդ չորացած ծառի նման վեր տնկված, մեջքը քիչ ծռած, աչքերը ջերմով լցված, այտերի վերի մասերը կարմրած՝ նա ընդհանրապես չէր խոսում, այլ՝ գլուխը վար գցած, աչքերը բացակա, չէր հասկացվում՝ մտածո՞ւմ է, թե երազում։ Մեկ էլ, տեղի-անտեղի, սկսում էր ծիծաղել։ Կամ մեկ էլ խոսելու ցանկություն էր բռնում նրան, փայլփլուն աչքերը դուրս էին ընկնում, ձեռքերը անհանգիստ շարժվում էին, մարմինը ձգվում էր և ձայնը այնպիսի շեշտ էր ստանում, կարծես անմար մի կրակ, այրում տանջում էր նրան։

— Հա,— սկսում էր նա, երբ տղաները, հոգնած, չոր-չարված, լռած նստում էին,— ... էլ օր երկար ճառեր լսեցի... ճիշտ բաներ էին ասում...

— Ի՞նչ էին ասում...

— Ճիշտ բաներ էին ասում,— շարունակում էր Սիսակը,— ես ուղղակի համոզվեցի... Խոսողները հայեր են, իսկական հայեր... էլ պիտի չթողնենք, որ հարուստները կեղեքեն աղքատներին, ասում են նրանք. էլ պետք չէ, որ աշխատավոր մարդիկ քրտինք թափեն և հարուստները ուտեն... Ի՞նչ է, ճիշտ չե՞ն ասում. ի՞նչ է, սո՞ւտ են ասում... ճիշտ են ասում... Աշխարհում արդարություն չկա, պետք է արդարություն հաստատել։ Զենքի ուժով։ Պիտի հարուստների թևերը կտրել...

— Ի՞նչ է, հարուստները ծի՞տ են, որ թևեր ունենան...

— Ծիտ չեն, գիշատիչ թռչուն են, որ հարձակվում են թույլերի վրա, կտուցի հարվածով նրանց աչքերը հանում, նրանց սիրտը ուտում և առհասարակ... Ես նրանց ատում եմ, ամբողջ սրտով ատում եմ... Հասկացեք, բոլշևիկները եկել են մեզ նրանց ձեռքից ազատելու համար... Ուրեմն, բարի են եկել... լավ մարդիկ են... էնպես չի՞...

— Էստեղ հարցը հարուստների մասին չէ,— առարկում էին ուրիշները,— այլ թուրքերի...

Առարկությունների առաջ Սիսակը մնում էր սառնասիրտ։

— Ես էդ մասին էլ հարցուփորձ արեցի... Տղաներից մեկի հետ խոսեցի... նա ինձ ասաց, որ մեր ուժը չի պատի թուրքերի հետ կռվելու համար... կռվեցին, ի՞նչ արեցին, հոնքը շինելու տեղ աչքն էլ հանեցին, Կարսի նման վիթխարի բերդը վրա տվեցին... Ռուս աշխատավոր ժողովրդի հետ միացած մենք պետք է աշխատենք հեղափոխությունը տարածել ամբողջ Արևելքում և մարդկանց, կանանց, խոխաներին երջանկություն տանք... — Եթե լավ մտածենք, սրանք ոսկի խոսքեր են...

— Նրանք ասացին, և դու էլ հավատացիր...

— Հավատացի, բա ոնց, հավատացի... Կարմիր հայերը խոմ աղգի թշնամիները չեն, խոմ օտարին ծախված մարդիկ չեն... ժողովրդին սիրում են... սիրտ ու խելք ունեցող մարդիկ են, ուզում են մեզ փրկել... Ուզում են էնպիսի Հայաստան շինել, էնպիսի Հայաստան, որի նմանը իսկ չեն տեսել մեր թագավորները. հին փողոցները պիտի քանդեն, նոր ճանապարհներ բաց անեն, նոր փառավոր շենքեր կառուցեն, մարմարե պալատներ, թատրոններ, պարտեզներ, դպրոցներ, աշխատանոցներ, գործարաններ... այդ փողոցներում գաղթականներ չեն պառկելու և մեզ նման ոտաբոբիկ չեն քայլելու... Ես այդ մարդկանց պիրեցի... Ի՞նչ թաքցնեմ, սիրեցի...

— Եթե մնան...

— Ո՞նց թե, եթե մնան...

— Ո՞վ է իմանում, հազար բան են ասում...

— Իսկի մի՛ հավատա... նրանց դուրս հանել հեշտ գործ չէ... Չէ, մի՛ հավատա... եթե ուզում են էդքան բաներ շինել, երկիրը շենցնել, մարդկանց երջանկություն ստեղծել, էլ ի՞նչ կարիք կա նրանց դեմ կըռվելու... Եթե ամեն մարդ հավասար կլինի, բախտավոր... ամեն մարդ իր սենյակում, պեչկայով, անկողինով...

Հուզվում էր և չոր հազը խեղդում էր նրան։

Արիսը վերքերով ծածկված գլուխը վեր էր բարձրացնում և, բառերի կեսը արագ-արագ ուտելով, հակաճառում էր նրան։

— Դու ասում ես հարուստներ չպիտի ըլին, իսկ ես ուզում եմ, որ ըլին. նրա համար, որ ես էլ մի օր հարուստ պիտի ըլիմ...

Ամենքը ծիծաղում էին։

— Պիտի ըլիմ։ Քիչ փող ճարեմ, կոշիկի ներկ գնեմ, կտեսնեք... Ոսկի առնեմ... ոսկի ծախեմ... Մարտինը տեսար, չէ՞... Ես էլ էնպես... Մուշտակով վերարկու կառնեմ, մորթե փաչախ, ճոճոացող կոշիկներ և ամեն օր հալվա կուտեմ... Իմ հարազատ աշխատանքով... Ո՞վ կարա ինչ ասել...

— Եվ կլինես բուրժուա...

— Եվ կլինեմ բուրժուա... Դոլմա կուտեմ, ժաժիկ պանիր, ճուտով փլավ... Կըլիմ հարուստ, իսկ հարուստ մարդկանց առաջ ամենքը փափախ են հանում, պատիվ են տալիս... էստի համեցեք, էստի համեցեք... պաժալստա, էս մսի կտորը վերցրեք, չոր է, վերցրեք էս կտորը, յուղալի է... էսօր դաուրմա ենք եփել, Արիս աղա, անպայման մեզ մոտ համեցեք... Եկա, եկա...

Արիսը տեղից վեր է թռնում, փորը ուռեցնում և երերալով ման գալիս։ Այլևս քունը փախցրած՝ ամենքը զվարճանում էին։

Սիսակը լռում էր և ընկնում երազանքի մեջ։

— Ադա, ըսլուշայ, զաչե՞մ տակոյ-մակոյ[1],— կատակում էր Արիսը ռուսերեն լեզուն կոտրատելով,— սուդա-մուդա տակ ռապատայ[2]...

Ահագին աղմուկ էր բարձրանում։ Որբերը հանկարծ մոռանում էին հոգնությունը, քաղցը, ցուրտը և վերադառնում էին իրենց տարիքի հատուկ անմեղության։ Քահ-քահ ծիծաղում էին, ծամածռություններ

---

[1] Ադա, լսիր, ինչո՞ւ էսպես-էնպես։

[2] Էս կողմ, էն կողմ, էսպես աշխատիր։

անում, զավեշտ խաղում։ Ծաղրում քաղաքի հայտնի անձնավորություններին։

— Ես թոփալ աղան եմ,— հայտարարում էր մեկը։

Ձեռքերը ետ էր նետում, գլուխը մի կողմ ծռում և ձախ ոտքը քարշ տալով քայլում։

— Ձղա ջան, մի քիչ ողորմություն,— դիմում էր նրան մի ուրիշը։

Թոփալ աղան կանգ էր առնում, հոնքերը վեր բարձրացնում, աչքերը չռում և բերանը ծռում։

— Դե կորեք, շան լակոտներ... Ջորտ զնաեք շտո-մշտո[1]... Եկել են մորեխի նման աշխարհը ծածկել...

Ֆիլմի նման, քաղաքի բոլոր ակտիվավոր դեմքերը վերակենդանանում էին։ Մեծ ընտանիքով ծանրաբեռնված մարդիկ, շուկայում կոպեկի համար ժամերով վիճաբանող ժլատ ծերեր, աղջիկների հետևից վազող թեթևսոլիկ երիտասարդներ, նախարարի աստիճանի բարձրացած վարժապետներ, կոտրատվող կանայք, պարտքով ծխախոտ գնող գերասաններ, քաղաքի միլիցիապետը և պարետը, Զոնգուլանց Հռիկ բաջին, որ քարը ձեռքին վազում էր իրենց հետևից և հայհոյում։ Կլուբից դուրս եկող անբախտ խաղացողներ, վանեցի վաճառականներ, հայր Հարությը, որ երբ հազում էր, փողոցը դղրդում էր, և, վերջապես (դա ամենազվարճալի մասն էր), նավապետ Հերյանը, այն օրերին, երբ նավը տանում էր վեր։

— Ադա, ես ձեզ մատաղ... մի ժամ է աշխատում ենք և մի արշին խակ չենք առաջացել... էս եղները ջան չունե՞ն, ինչ է... Ախր էդպես չի կարելի, ախր չի կարելի... Նու, դավայ, դավայ... քշիր, է, քշիր...

Ամենից շատ զվարճացողը Հերյանն էր։

Այդ վայրկյաններին ամեն ինչ մոռացվում էր, ծիծաղը և կատակը մաքրում էին տղաների երեսները և լուսավորում նրանց սրտերը։ Հետո, ուշ գիշերին, պառկում էին, ոչխարների նման մեկ մեկի սեղմվում և ձեռքերը կրծքին ծալած քնում։

Բաց տանիքից գիշերը և ցուրտը ներս էին մտնում և խուլորեն վայում։

6

Հերյանը ամեն ինչ ծախեց և մնաց թշվառության մեջ։

Միակ արժեքավոր առարկան, որ մնացել էր, ոսկի ժամացույցն էր։

---

[1] Սատանան գիտի ինչ է։

Այդ էլ թանկագին հիշատակ էր. չէր ուզում ծախել։ Արձանագրություններով ծածկված այդ ժամացույցը նրան նվիրել էին իր նավաստիները, մի մեծ փոթորկից հետո։ Անցյալի հետ իրեն կապող վերջին հիշատակն էր, որը որոշել էր պահել, անգամ եթե սոված մնար։

Սիրելի նավաստիներ, սիրելի ընկերներ... Ո՞ւր էին հիմա... Ծաիելու այլևս ոչինչ չուներ, սակայն շարունակում էր շուկա գնալ հետաքրքրության և ժամանցի համար։ Զգիտեր ինչպես անցկացնել օրերը։ Դիտում էր մարդկանց և «այս աշխարհի» բաները։ Ինչպես ամեն ինչ փոխվել էր... Երեկվա խրոխտ, գոռոզ, շփացած մարդիկ և կանայք անպաշտպան մայող գառնուկ էին դարձել։ Ամեն մարդ աշխատում էր իր անցյալը մոռացության տալ։ Շուք, ստվեր դառնալ։ Կանայք հագնում էին իրենց ամենահամեստ զգեստները. մարդիկ՝ առանց օձիքի և փողկապի, աշխատավոր մարդու արտաքին ձևեր էին ընդունում։

Իսկապես կյանքը մի մեծ զավեշտ էր, և մարդիկ՝ դժբախտ, ակամա դերասաններ։ Պետք էր տեսնել վախով լցված, այս ու այն կողմ փախչող այդ նայվածքները։ Լեղի ժպիտները, երկարած վիզերը, ներս ընկած ձայները՝ մեղմ, թույլ և երկչոտ։

— Համեցեք, ընկեր շինական, համեցեք... ահա երիտասարդ աղջիկա մետաքսե մի կապա...

Երբեմն այդ ձայները հանկարծ լռում էին։ Մարդկանց և կանանց գույնը թափվում էր, շրթները դողում և մեղավոր մի ժպիտ դրոշմվում նրանց երեսին։ Շրջապատել էին շուկան։ Ձերբակալում էին ոսկի վաճառողներին։

Հերյանը կամաց հեռանում էր։ Փողոցներում մեն գալով հեռվից նայում էր անտեր կանգնած նավին։

Սիրտը մղկտում էր։

Նա հուսահատված որոշեց նոր իշխանությունից աշխատանք խնդրել։ Ուրիշ ճար չկար։

Սիսակը մի ամբողջ գիշեր խոսել էր այն հրաշալի բաների մասին, որ կոմունիստները մտադիր էին անել։ Հավատավոր, մոլեռանդ շեշտով, աչքերը վառված, ձայնը խորացած և թրթռուն։ Այդ խոսքերը, հակառակ նրա կամքին ազդել էին վրան, խուժել նրա գիտակցության ներսը, նվաճել նրան։ Վերջ ի վերջո, ինքը կուսակցական մարդ չէր։ Պարզ հայ էր, որ եկել էր ծառայելու իր երկրին։ Ուստի, եթե կարելիություն տային իր գործը շարունակելու, ինչո՞ւ, ինքը իրեն երջանիկ չպիտի զգար։ Ինքը ուզում էր վերջացնել սկսված գործը, իսկ մնացածի մասին թող մտածեն ուրիշները։ Ոչ մի հույս չկար, որ այդ մարդիկ մեկ-

նեին։ Նրանք եկել էին ծանր, երկաթե քայլերով։ Հողերի տարածությունների վրայից, բզկտված հորիզոնների ետևից, դուրս էր եկել մի նոր աշխարհ՝ միլիոնավոր ամբոխների փոթորկած, նոր կյանքի և նոր ճակատագրի ծարավ մի աշխարհ։ Ի՞նչ կարող է հակադրել նրանց պատրոտված մարմինով, արյունած սրտով, ուժասպառ հին աշխարհը։

Չէ, իրավունք ուներ կյանքի ետին փողոցներում ծեծված, վիրավորված, բայց սրտի պայծառությունը պահած Սիսակը։ Ո՞վ է ասում, որ նրա հայտնատեսությունը, ինչպես ճգնավորների, ճնշվածների, սրբերի հայտնատեսությունը ճշմարտության ավելի մոտ չէ, քան այսպես կոչված գիտակից և բանիմաց մարդկանց՝ դեպքերի առաջ փոշու վերածվող գիտությունը։ Կենդանիները և մաքուր սրտով մարդիկ նախազգում, ընբռնում են տարերային եղելությունները։

Չէ, իրավունք ուներ Սիսակը...

Այդպես մտածելով, նա ման էր եկել ժողովրդական կոմիսարիատի շենքի շուրջը, բայց ներս մտնելու քաջություն չէր ունեցել։

Դիշերը չէր քնել։ Ժամերով մտածել, խոսել էր ինքը իր հետ։ Ամեն ինչ թվացել էր պարզ, հասկանալի, տրամաբանական և, չնայած դրան, ինչ-որ ներքին ուժ հակառակվել էր նրան։ Ի՞նչ էր այդ ուժը՝ վիրավորված ինքնասիրությո՞ւն, դեպքերին հարմարվելու վա՞խ, խղճի տանջա՞նք...

Առավոտ շուտ հենց որ աչքերը բացել էր, գտել էր պատճառը։ Զվա՞րթը։

Գնալ նրանց մոտ, այդ նշանակում էր ընդունել, որ Զվարթը իրավացի էր։ Այդ նշանակում էր հանդիպել նրան, գլուխը ծռած կանգնել նրա առաջ... Հիմար բաներ... որքան ժամանակ էր, Զվարթին չէր տեսել...

Երկար թափառել էր քաղաքում։ Մաքառել էր իր ներսում արթնացած ստվերների դեմ։ Մեծ, վճռական դեպքերը չափել անձնական փոքրիկ զգացումներով և ասել՝

— Ստորություն է։ Ո՞վ է իմանում հիմա որտե՞ղ է Զվարթը. գուցեև այստեղ չէ...

Նա կոմիսարիատում հանդիպել էր Զվարթին։

Ահա թե ինչպես։

Հերյանը մի քանի անգամ անցել էր կոմիսարիատի առաջից, նայել ներս ու դուրս անող մարդկանց, մտածել, շարշարվել, առանց վերջնական որոշում կայացնելու։ Նրա այս ընթացքը պահապանների մեջ կասկած էր արթնացրել։ Աչքի տակով նայել էին նրան և ինչ-որ բա-

ներ փսփսացել։ Հերյանը այդ նկատել էր և, կասկածները փարատելու համար վճռական քայլերով մոտեցել էր նրանց.

— Ներեցեք, ընկեր, աշխատանքի գրասենյակի մուտքը ո՞ր կողմից է...

— Բարձրացեք վեր...

Շտապ-շտապ բարձրացել էր վեր, դուռը բաց արել և ինքն իրեն գտել մի երիտասարդ մարդու կարճատես աչքերի առաջ։

— Հը, ի՞նչ կա,— հարցրել էր երիտասարդը երկար նայելուց հետո։

Հերյանը հանկարծ կորցրել էր խոսելու կարողությունը։ Ապուշ-ապուշ նայել էր և կարմրել։ Վախեցել էր նավի անունը տալ, իսկ ուրիշ ի՞նչ աշխատանք կարող էր ուզել...

— Ասացեք, ի՞նչ եք ուզում...

Բարեբախտաբար, այդ վայրկյանին երիտասարդին կանչել էին մյուս սենյակից, և Հերյանը մնացել էր մենակ։ Նախ՝ մտածել էր փախչել, չէր կարողացել, ոտքերը մեխվել էին գետնին։ Հինգ րոպե չանցած երիտասարդը վերադարձել էր։ Ներս էին եկել նաև ուրիշ մարդիկ, ինչ-որ թղթեր բռնած և այդ մարդկանց հետևից՝ մի հեռագիր ձեռքին, եկել էր Զվարթը...

Հերյանը գույնը գցել էր և ետ քաշվել։ Նրան տեսնելով, Զվարթը սիրալիր և բնական, ձեռքը երկարել էր և մոտեցել...

— Ահա, վերջապե՞ս, նավապետը,— բացականչել էր նա,— մենք քանի օր է ձեր մասին էինք խոսում...

Թևից բռնել էր և քարշ տվել հարևան սենյակը։

— Ընկեր Մավյան, ներկայացնում եմ ձեզ նավապետին, որի մասին խոսում էինք...

— Նստեք, ընկեր, նստեք,— ասել էր մյուսը բարեկամական շեշտով։— Սևանի երթևեկության հարցը մեր շինարարական պլանի մեջ է մտնում... այդ մասին որոշումներ ունենք... Մենք խոսել ենք նաև ձեր մասին...

Եվ ընկեր Մավյանը, լուրջ և գործնական մոտեցումով, հարցուփորձ էր արել նավի մասին, այն միջոցների մասին, որ անհրաժեշտ էին նավը Սևան տեղափոխելու համար, ինչպես նաև Հերյանի անձնական նյութական վիճակի մասին և այլն։

Հերյանը խոսել էր եղների մասին և ծիծաղել էին։

— Չէ, չէ,— ասել էր մարդը,— այդպիսի տնայնագործական միջոցներով երկիր չի շինվում... Մենք շուտով կստանանք ինքնաշարժեր, բեռնատարներ և տրակտորներ, դուք կարող եք ընտրությունը կատա-

ռել... Առհասարակ, այդ գործը ամբողջովին հանձնում ենք ձեզ... Ընտրեցեք մարդկանց, արեք այն կարգադրությունները, որ անհրաժեշտ են և ամեն ինչ լավ կընթանա...

Ավելացրել էր նաև, որ այդ առաջին նավով հարցը չէր սպառվելու. կարիք պիտի ունենային ուրիշ նավերի։ Պիտի շինեին կամրջակներ և նույնիսկ էլեկտրակայաններ։ Անշուշտ, քիչ համբերություն էր պետք, իշխանությունը նոր էր հաստատվել և այդ ամենը իրագործելու համար... Մի վկայական էր գրել, ռոճիկի մասին կարգադրություններ արվել և խնդրել, որ զեկուցեն...

Ընկեր Մավյանի հետ հանդիպումը եղել էր Զվարթի բացակայությամբ։ Մեկնելիս նա Զվարթին չէր տեսել։ Դրսում մնացել էր շվարած. այդքանը չէր սպասում։ Հուզումի հոսանքները խաչաձևվել էին, նրա վիշտը և ուրախությունը խառնվել էին իրար։

Նորից նավը և նորից Զվարթը։

Նավը՝ որբ, մենակ, ժանգոտած, կեղտոտված։ Ահ, «Ալբատրոսը» նորից թևեր է առնելու, նորից նավարկելու է հողերի վրայից, լեռների մոտերից։ Վերջապես պիտի լքեին բուքերով լվացված, փոթորիկներով խառնված ժայռի կատարը իրենց երազը հետապնդելու համար։

Իսկ Զվարթը... Ինչքան փոխվել էր և ինչ լավ էր, որ այդպես փոխված էր։ Պարզ, լուրջ, կարծես լուսավորված։ Անշուշտ, կորցրել էր կանացի այն քնքշությունը, վիրահարված աղավնու կոկորդը լցված այն հուզականությունը, որ նրա հմայքն էր կազմում, բայց, մյուս կողմից, ինչքան ավելի իրական էր հիմա, ինչքան ավելի պայծառ։ Մնվում էր նոր կինը, նոր հայ կինը։ Ոչ թե տառապանքներից ծալված, ողբով և արցունքներով լցված հայ մայրը, այլ ավերներից և մոխիրների միջից վերածնված, լուսավոր ճակատով, իմաստուն աչքերով, հասկացող և քաջ սրտով կինը։

Ահ, նորից նավը և նորից Զվարթը։

Հաջորդ օրն իսկ Հերյանը տեղափոխվել էր նավ։

Սիսակը և Վազգեն անունով մի ուրիշ տղա համաձայնվել էին աշխատել Հերյանի հետ։ Մյուսները, չնայած առաջարկված լավ պայմաններին, մերժել էին։ Նրանք նախընտրում էին շարունակել անկայուն և թափառական կյանքը։ Մեծ թափով սկսել էին նավը մաքրել։ Կատուներին փախցրել էին։ Տաք ջրով ամեն մի անկյունը լվացել, մետաղե մասերը փայլփլեցրել։ Պակասում էր ներկը, բայց այդ մասին գրեցին Թաքու, և հույս ունեին շուտով ստանալու։

Հերյանի առաջին մտածումներից մեկն էր բանտից գուրս բերել Ֆեոդոր Պանտելեևիչին։ Նրանց ներկայացրել էր գործի համար անհրաժեշտ, անփոխարինելի մարդ։ Վազվզել էր դրասենյակից դրասենյակ։ Խոստացել էին գործը վերաքննել, բայց բանտից չէին ազատել։ Ուտելիքներ էր տարել, ընդունել էին։

Սկսվել էր նոր կյանք։

Պայոկ[1], ոոճիկ, անգամ կաշվե բաճկոններ էին ստացել։

Ռիմը բախտավոր էր. կանգնում էր կամրջակի կատարին և հաչում քաղաքի վրա։ Երևի վախենում էր, որ նավը ձեռքից խլեն...

Հազիվ լույսը բացված՝ անցնում էին աշխատանքի։

Կայմի կատարին, եռագույնի փոխարեն հիմա ծփում էր կարմիր դրոշակը։ Դրոշակի վրա՝ երկու Մասիսները, մուրճ և մանգաղ։

Կարմիր դրոշակը...

— Շանորդին, գույնը փոխել է... — ասում էին ոմանք և Հերյանի մասին հազար ու մի բաներ էին հնարում։

Հերյանը մնում էր անտարբեր։

Նավը պետք է հասնի Սևան։

Երբեմն սակայն չէր կարողանում ծածկել զայրույթը, մանավանդ, երբ բամբասանքները գալիս էին այսպես կոչված մտավորականներից։

— Այս ժողովրդի դժբախտություններից մեկն էլ,— ասում էր նա,— կես զարգացած, քաղքենի, տափակ սրտով և տափակ խելքով մտավորականներն են... Պառավ աղջիկների նման նախանձոտ, լեղի և հիմար... Նրանց համար հայրենիքը կուսակցություն է, իսկ կուսակցությունը՝ հավնոց։ Մերտով և կուտով լցված հավնոց... Վանդակը ընկած սկյուռի նման պտույտ են գալիս նույն ածան և մաշված գաղափարների շուրջը, և այն, ինչ անվանում են գաղափար, ուրիշ բան չի, եթե ոչ եղունգները կրծելու նման վատ մի սովորություն...

Եվ շարունակում էր աշխատել։

Երկու անգամ ինքնաշարժով գնացել էր Սևան։ Քարտեզի վրա նշանակել էր այն տեղերը, ուր անհրաժեշտ աշխատանքներ պիտի կատարեին։ Գիշերները չէր քնել. փոքրիկ սեղանի առաջ նստած՝ գծագրություններ, հաշիվներ, մանրամասն ծրագիրներ էր պատրաստել։ Հազար գործ կար անելիք։ Մինչև բեռնատար ինքնաշարժների ժամանելը պետք էր Սուխոյ Ֆանտանի կողքով անցնող ճանապարհի շինարարության աշխատանքները ավարտել։ Ցեմենտի և փայտեղենի կարիք կար։ Անշուշտ, հիմա որ Կովկասյան հանրապետությունների նախկինում

---

[1] Մթերաբաժին։

փակ սահմանները փաստորեն չնչվել էին, այդ ամենը կարելի էր բերել Ադրբեջանից կամ Ռուսաստանից։ Դժբախտաբար, երթևեկությունը անկանոն էր, պակասավոր։ Եվ աննպաստ էր եղանակը։ Փետրվարը խիստ էր։ Քամի, ձյուն, ձմեռ։ Ճանապարհների որոշ մասերը սառած էին. Սևանի ափերը թաղված էին ձյունի մեջ։

— Ամսի կեսը անցավ և երկու ամսից եղանակները կմեղմանան,— ասում էր Հերյանը։— Մարտին կսկսենք պատրաստական աշխատանքները և գարնան մոտ մեր բարեկամին հառա-հուռայով կտանենք...

Այդ ասելու ժամանակ աչքերը փայլում էին և մի լայն ժպիտ լուսավորում էր նրա դեմքը։

...Ապրում էր նավի վրա վանականի նման։ Քաղաքի անցուդարձերով քիչ էր հետաքրքրվում։ Գրեթե վար չէր իջնում և եթե իջնում էր, փողոցներից անցնում էր արագ քայլերով։ Զվարթին երկու անգամ հանդիպել էր գրասենյակներում։ Նա էլ չափազանց զբաղված էր։ Թղթապանակը թևի տակ սեղմած վազում էր մեկ ժողովից մյուսը, այցելում մոտակա գյուղերը։

— Ահավոր աշխատանք կա,— գանգատվել էր նա։

Բարևել էր, ասել, անցել, նավի մասին ոչինչ չէր հարցրել. երևի, ամեն բանի մասին տեղյակ էր և հարցուփորձ անելու կարիք չուներ։

Իսկ իրենց սե՞րը...

Հերյանը փորձել էր զգացումները վերլուծել, բայց չէր կարողացել։ Ամեն ինչ վայրկենապես կանգնել էր մեկը մեկի հանդիպած նույն գծի վրա ընթացող երկու գնացքների նման։

Նաև դեպքերը։

Մեծ անցուդարձերի ժամանակ անհատական զգացումները նսեմանում են, փոթորիկները շլացնում են մեզ, և սիրտը լռում է և սպասում։

Ինքը, Զվարթը, նավը, ամենքը սպասում էին։

Հիվանդանոցի առաջից անցնելիս նա մտել էր ներս և հարցրել օրիորդ Բուդաղյանի մասին։ Մեծ այդ շենքը որոշված էր համալսարանի վերածել և հիվանդներին տեղափոխել ուրիշ տեղ։ Դռնապանը չէր կարողացել օրիորդի մասին որևէ տեղեկություն տալ։

— Ո՞վ է իմանում, գուցե քաղաքից մեկնել է,— ասել էր նա։

Հանդիպել էր նաև Բաբկեն Միրանյանի կնոջը՝ տիկին Վարդուհուն։ Լավ հագված, զուգված, ուրախ։ Հերյանի սիրտը սեղմվել էր։ Կա-

նանց հիշողությունը այդքան էլ կա՞րճ է... Տիկինը պարտ էր համարել նրան բացատրություններ տալ։ Բախտ էր ունեցել հանդիպելու մանկության ընկերոջը, որին շատ սիրում էր Բաբկենը և որը հիմա կոմիսար էր։

— Ամուսնուս իզուր տեղը զոհեցին,— ասել էր նա վրդովված ձայնով։— Հիմա իրենք էլ պատժվեցին... Ամբողջ սրտով ատում եմ նրանց, ամբողջ սրտով...

Հետո նորից վերագտնելով պաղարյունությունը, ժպտացել էր։

— Պարոն Հերյան, համեցեք մեզ մոտ... նույն տեղն ենք ապրում... անպայման եկեք...

Հերյանը ինչ-որ բան էր կմկմացել և հեռացել։

Այլևս ժամանակ էլ չուներ որևէ տեղ գնալու։ Սաստիկ զբաղված էր։

Պատահել էր մի անսպասելի բան։ Նպարավաճառի խանութում մի քիչ ուտելիք գնելիս նա նկատել էր թիթեղե արկղեր, որոնք պարունակում էին գերմանական ճերմակ ներկ. ճիշտ և ճիշտ այն ներկը, որ կարիք ուներ նավի համար։ Սակայն խանութպանը մերժել էր վաճառել, ասելով, որ իր տան դռներն է ներկելու։ Աղմուկ էր բարձրացրել։ Հերյանը հայտարարել էր, որ կառավարությունը կարիք ունի այդ ներկին, և... աչքերը ոլորելով և փայլփլեցնելով նայել էր խանութպանին։

Վճարել էր, ներկերը վերցրել վազել վիր։

Ահա երեք օր է աշխատում էին։

Դժվար աշխատանք էր։ Նախ հին ներկը քերել, մաքրել, ծակերը գոցել, կարմիր անցնել։ Նավի երկու կողմերի վրա չվաններ էին կախել, ճոլորիկներ շինել և վրան նստել։ Հերյանը մուրճով զարնում էր երկաթներին և երգում։ Վերհիշում էր ծովային բոլոր երգերը և անցած կյանքը, կտոր-կտոր հեռավոր երազի նման։

— Ծովային մարդը,— ասում էր նա տղաներին,— ամեն բան պիտի կարողանա անել։ Դժվար, բայց լավ դպրոց է, ուժեղ մարդիկ է ստեղծում... Ծովային մարդը պիտի պատրաստ լինի բոլոր անակընկալները հաղթահարելու, պիտի իմանա բոլոր արհեստները, տոկա բոլոր տանջանքներին, տոկա քաղցին, ծարավին, փոթորիկներին... Ես շատ ցավում եմ, շատ, որ Հայաստանը ծով չունի... Հայերը լավ մարդիկ են, նրանց պակասում է հորիզոնը... լայն չեն տեսնում... փակված են...

Մի քանի վայրկյան տենդով աշխատում էր և նորից խոսում։

— Հայերը, օրինակի համար, լուսավորչական են, փակ. լուսավոր-

չականությունը լեռների մեջ փակված կրոն է, ինքը իր մեջ ամփոփված, մաքուր, պայծառ, բայց սահմանափակ... Թափ չունի, խիզախել չգիտի... Եթե լավ նայես, մեր ազգային շարժումները, կուսակցությունները այդպես են եղել... Լուսավորչական... Աբեղա, քաղքենի, վարժապետ... Երևի պատճառը դա է, որ մեր ուժեղ, տաղանդավոր մարդիկ դուրս են վազել, գնացել ուրիշների համար աշխատել, դիրք և անուն շինել... Եթե մնային, կխեղդվեին...

Եվ ասում էր.

— Ապարանի գյուղացիները միտինգ են գումարել և պահանջել, որ դաշնակից պետությունները գերմանական հողերից հեռանան... Շատերը քթի տակով ծիծաղում են թե Ապարանը ուր, գերմանական գավառները ուր... Չեն հասկանում, որ այդ միտինգը կարևոր է ոչ թե գերմանացիների, այլ հայ գյուղացիների համար... Մշակույթը լայն հետաքրքրություն է... Ծանոթանում և հետաքրքրվում են լեռներից այն կողմը տարածվող աշխարհի մասին, մասնակցում են համաշխարհային կյանքին, իրենց համարում են ամբողջության անբաժանելի մի մաս...

Սիսակը սաստիկ ուրախանում էր։

— Հենց էդ է, էլի... Բոլշևիզմը էդպիսի գիտակցություն է տալիս...

— Հա, էլի...

7

Այն օրը վոբլա ձուկ էին բաժանում։

Սիսակը զամբյուղը ձեռքին գնացել էր պաշարը ստանալու։ Հերթի սպասելիս նա կարդացել էր պատի լրագիրը։ Ղրիմի կողմերում կարմիր բանակը մեծ հաղթություն էր տարել ճերմակների դեմ։ Դրանով էլ բացատրել էր գրասենյակի մարդկանց դեմքերի վրա գրված հուզումը։

Երկինքն էլ ծանր էր՝ գորշ։

Ամեն ինչ թվում էր թմրած, սմքած։ Փողոցներում գրեթե շարժում չկար։ Փոքրի առաջ երկար շարքեր էին կանգնել, ինչպես այդ տեղի էր ունենում ուրիշ օրերը։ Իջել էր շուկա քնջութի ձեթ ճարելու համար և զարմանքով տեսել էր, որ այդտեղ էլ մեծ շարժում չկար։

Կենտրոնական փողոցի այն տների առաջ, ուր կուսակցական և պետական կարևոր օրգաններն էին, զինված պահակներ էին կանգնած։ Պետական ինքնաշարժերից մտազբաղ մարդիկ էին դուրս գալիս, վա-

զելով մտնում էին այդ տներից ներս, շտապ դուրս գալիս, նորից ինքնաշարժ մտնում, մեկնում։

Տարօրինակ բան էր։

Սիսակը, զամբյուղը ուսին դրած, ձեթի պարապ շիշը ձեռքին շվարած նայել էր. ապա, ինքն էլ չգիտեր ինչու, արագացրել էր քայլերը։ Սկսել էր մտահոգվել։ Այդ մտահոգությունը ավելի էր սաստկացել, երբ քաղաքի վերի այգիների մոտ, հրացանները կրակելու պատրաստ բռնած զինվորներ էր տեսել։ Նրանց առաջից անցնելիս նրան կանգնեցրել էին և պահանջել, որ ցույց տա զամբյուղի պարունակությունը։ Ցույց էր տվել և բացատրել, որ պաշարը նավի համար էր։ Արտոնել էին, որ անցնի։

Քանաքեռի ճանապարհի վրա, մարդկանցով և իրերով լցված՝ քաղաքից մեկնող ինքնաշարժներ էր տեսել։ Հեծելազորքի մի գունդ, քառատրոփ վեր էր գնացել և դիրքեր բռնել։ Նրանց հետևից եկել էին հրետանու մասերը։

— Երևի Սուխոյ Ֆանտանի կամ Դիլիջանի կողմերը մի բան է պատահել,— մտածել էր Սիսակը։

Հետո ինքը և դժվարին զառիվերը մնացել էին մենակ։ Երկնքի ծանր ամպերը՝ վզի դանդաղ շարժումներով տրոր էին եկել, իջել վար, նվաճել ամբողջ հորիզոնը։ Զառիվերի կատարին քամին սկսել էր թափահարել նրա մարմինը. վազել էր և շունչը կտրած հասել նավ։

Հերյանը հազիվ տեսել էր պարապ շիշը, բարկացել էր։

— Եղբայր, ծով գնաս ջուր չես ճարի... Ասացի, անպայման ձեթ բերես...

Խոսքը չէր կարողացել վերջացնել։ Ճիշտ այդ վայրկյանին քաղաքի կողմից հրացանաձգության ձայներ էին լսվել։

Ռիմը ցատկել էր կամրջակի վրա և սկսել հաչել։

— Ի՞նչ է պատահել...

Սիսակը գույնը նետել էր և պատմել այն ամենը, ինչ տեսել էր քաղաքում։ Հրացանաձգության ձայները դադարել էին։

— Դե որ պատի գաղթայում կարդացել ես... ուրեմն, տոնում են ճերմակների դեմ հաղթանակը... Պարադ գուցե լինի...

Հանկարծ նավը շարժ էր եկել։ Թնդանոթի մի հարված ոռնալով պայթել էր։ Հետո նոր հարված։ Ռիմը վախեցած ներս էր վազել և անկյունում կուչ եկել։

— Կրակում են Քանաքեռից... քաղաքի վրա...

Հրացանաձգության ձայները սկսել էին սաստկանալ անկանոն։

Տրաքոցները լսվում էին քաղաքի բոլոր մասերից։ Կրակում էին այգիներից, տների տանիքներից...

Հերյանը բարձրացել էր վերի կամրջակի վրա և անձկությամբ նայել։ Պարզ երևում էր, թե ինչպես փողոցներում զինված մարդիկ էին վազվզում։ Անկյունների ետև թաքնվում էին և կրակում։ Մերթ ընդ մերթ ոռնում էր թնդանոթը։

— Իրարանցում է...

Կասկած չկար, դաշնակցականները փորձում են նորից իշխանությունը իրենց ձեռքը վերցնել...

Տեղ-տեղ եկեղեցիների զանգակները սկսել էին ղողանջել։ Քաղաքի որոշ մասերում հրդեհ էր սկսել։ Փողոցներում վազվզող մարդկանց թիվը գնալով բազմանում էր։ Ահա տեսնվում էր, թե ինչպես Սուրբ Խաչի և շուկայի մոտերը բազմությունը խումբ-խումբ առաջանում էր։ Ամեն անգամ, որ թնդանոթը գոռում էր, խմբերը ցրվում էին, մտնում կողմնակի փողոցները, սողոսկում պատերի տակ, թաքնվում։ Մի քանի րոպե հետո նորից դուրս էին գալիս, միանում, անվստահ քայլերով առաջանում, ապա՝ նորից ռումբի պայթոցը լսելով ցրվում, տների ետև պատսպարվում։

Շուկայից կայարան տանող ճանապարհի վրա գաղթականների ահռելին մի բազմություն էր վազում։ Թշվառության ահագին մի հորդա։

— Դա ի՞նչ բան է, ի՞նչ բան,— ասում էր Հերյանը ինքն իրեն։— Ինչի՞ վրա են հույս դրել... Իսկ եթե թուրքերը նորից հարձակվեն Հայաստանի վրա՞, եթե Վրաստանում զբաղված կարմիր բանակը վերադառնա՞...

Զանգակները շարունակում էին մռայլորեն ղողանջել։

Գնդացիրները ջղայնացած տրաքտրաքում էին։

Վերից նայած՝ գորշ, գրեթե ամբողջովին ծածկված երկնքի տակ քաղաքը ավելի էր տափակացել։ Մառախուղի մեջ կորած Արարատյան դաշտը չէր երևում։ Ետ էին քաշվել նաև լեռները։ Ամպերի միջից երբեմն-երբեմն նշմարվում էր Արարատի ձյունապսակ գագաթը և անմիջապես ծածկվում։ Ծանր, ճնշող մի զորություն իջել էր այդ աշխարհի վրա և ամեն ինչ սեղմել։ Ճնշիչ էր նաև զանգակների բարձրաձայն լացը։

Լավ չէր հասկացվում, թե ինչ էր պատահել։ Բուն կռվողները չէին երևում։ Գնդացիրների և համազարկերի ձայները գալիս էին հեռվից և կորչում պարապի մեջ։

Կես ժամի չափ փողոցներում ոչ մի մարդ չտեսնվեց։

Այդ կես ժամը հղի էր լռությունով և անձկությամբ։ Քաղաքը թվում էր հանկարծ դատարկված։ Ագռավների ահագին երամներ անհանգիստ թռչում էին երկնքի մեկ մասից մյուսը։

Թնդանոթները լռել էին։ Լռել էին նաև զանգակները։

Ի՞նչ էր պատահել։

Քիչ հետո Սուրբ Խաչի մոտերը հավաքված մարդիկ դուրս թափվեցին և սկսեցին վազել։

Հերյանը և Սիսակը նայում էին այդ տեսարանին, երբ մեկ էլ, իրենց մոտից գնդակներ վզզացին։

— Պառկիր,— գոռաց Հերյանը և փռվեց գետին։

Կասկած չկար, կրակում էին նավի վրա։ Մի քանի գնդակներ զրընգալով կպան նավի երկաթներին։

— Գժվել են, ի՞նչ է,— մռմռաց Հերյանը։

— Կարմիր դրոշակը վար արա, թե չէ...

Ժայռի մյուս կողմից լսվող այդ ձայնին անմիջապես միացան բազմաթիվ ուրիշ ձայներ։ Հերյանը վեր կացավ և կայմի դրոշակը վար քաշեց։

— Քեզ հետ հաշիվը հետո... — լսվեց նորից։

Հայհոյեցին, հեռացան։

— Հիմա ի՞նչ պիտի լինի,— դողացող ձայնով ասաց Սիսակը։

Երեսի գույնը գցել էր։ Ձեռքերը միացրել էր կրծքին և չոր հազը չէր կարողանում զսպել։

— Սրիկաներ, սրիկաներ,— գոռաց Հերյանը ամբողջ ուժով,— հազիվ նավը պատրաստվում էր շարժվել, նորից եկան երկիրը քարուքանդ անելու։

Հանկարծ, արյունը գլխին տվեց և սաստիկ մի բարկություն ցնցեց նրա ամբողջ մարմինը։ Կամրջակի վրայից նայեց վար և բազուկները գալարեց։

— Չե՞ս տեսնում,— գոռաց նա,— չե՞ս տեսնում, անիծյալ երկիր է, անիծյալ երկիր... Կատաղությամբ, թշվառությամբ, արյունով, մահով լցված երկիր է... Ի՞նչ է եղել, ի՞նչ է անցել դարձել այս հողերի վրա, այս քարերի, լեռների վրա... Մարդ խեղդվում է... Տասնյակ դարեր շարունակ... տասնյակ դարեր անդադրում կռիվ, ջարդ, պատերազմ, անոթություն... Ի՞նչ է այդ, եղբայր, ե՞րբ պիտի վերջանա, երբ...

Սիսակը երբեք Հերյանին այդ վիճակում չէր տեսել։

Նրա ամբողջ մարմինը դողում էր։ Երեսը ճեփ-ճերմակ էր դարձել, լայնացած աչքերը լցվել էին կրակով և բռունցքները վեր կարկառած, կարծես նա սպառնում էր քաղաքին, երկրին, երկնքին։

— Ի՞նչ է, ինչո՞ւ համար այս բոլորը,— կրկնում էր նա զայրույթով։— Ես ուզում եմ փախչել, հեռանալ այս երկրից... փախչել անմիտ ողբերգությունների այս վայրերից... Ուզում եմ, հասկանո՞ւմ ես, ուզում եմ ազատվել թշնամի զորությունների ձեռքից... թշնամի ասպվածների լարած թակարդից... էլ բավական է, էլ բավական է...

Երկար ժամանակ նա այդպես խոսեց։

Հուզված, կատաղած, խենթացած։

Իսկ քաղաքը գնալով լցվում էր աղմուկով։

Թմբուկ, երաժշտություն, հրացանի ձայներ, գոռում-գոչում։ Որոշ թաղամասերում դեռ կրակում էին։ Երևի տեղ-տեղ կռիվը շարունակվում էր։ Հարձակվում էին տների վրա, ուր կարմիրներ էին պատսպարված։ Շատերին հալածում էին արվարձանների այգիներում։

Հեռվում, կայարանի մյուս կողմից, թնդանոթի խուլ ձայներ էին լսվում։

Նույն գիշերը Հերյանը, Սիսակը և Ռիմը (Վազգենը չկար) լքեցին նավը և իջան վար։ Կողմնակի ճանապարհներով, պատերին քսվելով, ատրճանակը ձեռքին նրանք վերադարձան որբերի մոտ։

Նավի մեջ մնալը վտանգավոր էր։

Երեկոյան դեմ Քանաքեռի կողմից նորից սկսել էին կրակել։ Սիսակին ասել էին, որ Հերյանին անպայման կսպանեն, իբրև կարմիրներին ծախված մարդու։

Երևանի շուրջը խրամներ էին փորում։

Հերյանը երեք օր մնաց թաքնված։

Ցուրտ, ոջիլ, աղբ։ Որբերի հիվանդոտ, վերքոտած դեմքերի վրա սառը մի անտարբերություն էր պառկած։ Փողոցներում թափառում էին շուքի նման։ Երբ հրացանի կամ ատրճանակի ձայն էին լսում, վազում էին ձայների կողմը, այն խաբուսիկ հույսով, որ կկարողանան կողոպտել սպանվածին։ Հասնում էին միշտ էլ ուշ, ուրիշներն արդեն կողոպտել էին...

Այդ մթնոլորտը այլևս անտանելի էր Հերյանի համար։

Չորրորդ օրը, դեռ լույսը չբացված, շենքից կամաց դուրս եկավ։ Անգամ Ռիմը չլսեց նրա ոտնաձայները։

Դուրս եկավ և կանգնեց։ Ո՞ւր գնար... Նորից Էջմիածի՞ն... Վտանգավոր էր. ամենքը նրան ճանաչում էին։

Նորից Էջմիածի՞ն...

Արարատը մագնիսի նման նրան քաշեց։

Քայլեց։

Առավոտը նրան գրկեց իր բազուկների մեջ։

Զյուն էր և ցեխ։

Ահ, գնալ, գնալ... Բայց ո՞ւր գնալ, ընկեր Հայաստան, ո՞ւր։

— Ո՞ւր, ընկեր Արարատ, ո՞ւր...

Ահա, հորիզոնի արյունոտ արգանդից ծնվել էին լեռները։ Արագածը պայծառ էր։ Եղանակը պայծառ էր։ Դաշտը, այգիները՝ ամեն ինչ պայծառ էր։

Ո՞ւր գնալ, ընկեր Հայաստան, ո՞ւր։

Սիրտը ոտանավոր արտասանելու սաստիկ պահանջ զգաց։ Մի ոտանավոր, որ ներկա էր իր մեջ, որ երգում էր անբառ, որ լույսի նման ուզում էր դուրս խուժել, բայց որի բառերը անծանոթ էին։ Ծանոթ էին և անծանոթ։ Ներկա էին և հեռու։

Սիրտը ոտանավոր արտասանելու սաստիկ պահանջ զգաց և ոչինչ չարտասանեց, այլ նկատեց, որ աջ ոտքի կոշիկը ծակվել է, ջուրը և ցեխը ներս են մտնում։ Մտածեց՝ Հայաստանը ոտաբոբիկ է։ Հայաստանի կոշտ, մեծդի, ծուռ ոտքերը, Հայաստանի շարշարված, արյունոտ ոտքերը, որոնք քայլել էին դարեր շարունակ, որոնք քայլել էին անհամար դարաշրջաններ, հրդեհված գիշերներ, մթագնած ցերեկներ։

Հայաստանի ոտքերը մերկ էին, համառ և տխուր։

Եվ մտածեց, որ Հայաստանը բազմոտանի էր։ Այնքան ոտքեր ուներ, ինչքան լեռներ։ Հայաստանը բազմագլխանի էր։ Այդ գլուխները նայում էին աշխարհի չորս կողմը։ Արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ։ Եվ այդ գլուխները նմանվում էին Հնդկաստանի անկարելի այն աստվածներին, որոնց բազմաթիվ աչքերը իջել են աստղերից և որոնց գալարված տասնյակ բազուկները բուսել են խավարից։

Տեսավ։ Պարզ և կենդանի իրականության նման տեսավ հսկայական, ծանրածանր, լեռների չափ բարձր և դաշտերի եզրերը ճզմելով անցնող վիթխարի այդ հրեշին, որի թագավորված գլուխները դանդաղ շարժումով աջ ու ձախ էին շրջում, շավիղներից դուրս պրծած աչքերը ոլորվում էին բոցակիզված գնդերի նման, բազմահարյուր բազուկները ձգվում էին ամեն ուղղությամբ, մինչ վայր ընկած ստինքները պարապ էին և մարմինը, նիհար և ոսկրոտ, դողում էր քամուց ծեծված անկարելի ծառի նման։

Քայլերը արագացրեց։ Կարծես ուզում էր փախչել ինքն իրենից։ Իր սեփական աչքերից, իր մտածումներից, իր տեսիլքից։

Ո՞ւր, ընկեր Հայաստան, ո՞ւր...

Հեռվում, այնտեղ, ուր դեպի վեր առաջնորդող ճանապարհը թեքվում էր այգու պատի կողքով, մի խումբ մարդիկ էին գնում։ Շտապեց, ուզեց նրանց հասնել։

— Ի՞նչ իմանանք... էլի գնում ենք,— ասաց գյուղացին, առաջն ընկած էշին հրելով։

Մի մարդ, երկու կին և մի էշ էին։ Ասացին, որ իգդիրցիներ են։ Տուն, հող, տավար, բաղ թողել էին թուրքին և ընկել շոլերը։

Կանայք չէին խոսում։

Քայլեցին։

Էշը նայեց հեռուն, ոնգները լայն բացեց, կանգնեց և գլուխը վեր, ատամները բաց սկսեց զռալ։ Մարդը սաստիկ բարկացավ։

— Տո, ավանակ, զռալու ժամանա՞կ է...

Եվ ձեռքի փայտով խփեց էշին։

Էշը լռեց։ Կանանցից մեկը նայեց Հերյանին և տխուր ժպտաց։ Երիտասարդ աղջիկ էր։

— Սա երկիր չէ,— հառաչեց մարդը չորս կողմ նայելով,— երկիրը Իգդիրն է... արքայություն է... առատ, հողը ասես կովի ծծերի նման առատ, օդը ասես մեռած մարդին տեղից վեր կհանի...

Մարդը ոլոր մորուք ուներ և կոպեկի նման կլոր աչքեր։ Կզակը ծանր էր և ծռված։ Ոտքերը քարշ էր տալիս, կարծես շղթաներ էր կրում։

— Իգդիրը... չէի իմանում,— ասաց Հերյանը։— էդպես ուրեմն... Իգդիրը...

Նայեց աղջկան։

Աղջիկը մեծ, նշանման աչքեր ուներ և գեղեցիկ հոնքեր։ Թուխ, տաք, արև ծծած դեմք, գյուղի հացի նման չմաքրված ցորեն։ Ճկուն, թեթև, քիչ հանդիսավոր մարմին և պտուղի նման լցված շրթներ։

— Լավ, այս վատ եղանակով ո՞ւր եք գնում... — ասաց Հերյանը։

Չգիտեին ուր են գնում։ Իգդիրցիներից շատերը գնացել էին այդ կողմերը և իրենք էլ գնում են... Հայ քրիստոնյա էին և, անշուշտ, մի տեղ ապաստան կգտնեին։ Քաղաքում չէին ուզում մնալ, կովում էին։

— Էլ բանը բանից անցել է,— ասաց մարդը,— էլ ի՞նչ կարիք կա կռվելու... Չէ, ախր չեմ հասկանում, էլ ի՞նչ կարիք կռվելու...

Հերյանը նայեց աղջկա աչքերի մեջ։

— Հարցը նրանում է, ձմեռ է,— շարունակեց մարդը։— Թողինք

ամբողջ պաշարը... տավարի կերը, վառելիք փայտը, թխած լավաշը, չորացած պտուղը...

— Չորս տեսակ մուրաբա,— հառաչեց կինը։

— Չորս տեսակ մուրաբա, աղի դրած միսը, սուճուխը... էլ ինչ ասես չկար... էնպես, մառանում շարած, պատրաստ... Բա, բա, բա, բա...

Էշին հրեց, վրան բարկացած գոռաց։

Երկնքի աջ կողմից կես ծածկված հիվանդոտ մի արև էր նայում։ Շրջակա տեսարանը խիստ էր, չոր, մռայլ։

Աղջիկը այլևս չժպտաց։ Նայեց Հերյանի պատռված կոշկին։ Ամեն անգամ որ ջուրը ներս էր մտնում, կոշիկը ճռռում էր։ Հերյանը այդ նկատեց և իրեն զգաց նվաստացած։ Դրա համար էլ ձայնը բարձրացրեց ավելի քան պետք էր և համոզումից զուրկ շեշտով ավելորդ բաներ ասաց՝

— Հարցերին նայելու է փիլիսոփայական տեսակետից։ Հանգամանքները կարող են փոխվել և ամեն ինչ, ինչպես ասում են, դիալեկտիկա է... Մեր գյուղացիները պետք է հասկանան, որ փչում են աննըպաստ քամիներ... Ուստի, հարցնում եմ ձեզ՝ ի՞նչ կարիք կա անդադար գանգատվելու և, առհասարակ, ժամանա՞կն է մուրաբաների մասին մտածել, երբ... դիակները մնում են անթաղ...

Ամենքը զարմանքով նայեցին նրա երեսին։ Հերյանը նկատեց, որ աղջիկը փորձում էր ծիծաղը զսպել...

Կանգ առավ։

— Դե, բարի ճանապարհ,— ասաց նա։— Ես գնում եմ այս կողմը... Հա, եթե գնում եք էջմիածին, գնացեք Մեսրոպ սրբազանի մոտ... Մեսրոպ սրբազան Մագիստրոսի մոտ և ասացեք, որ ձեզ ուղարկել է նավապետ Հերյանը, խնդրելով, որ ձեզ ամեն տեսակ օգնություն ցույց տան...

Ասաց, ճանապարհը թեքեց և քայլեց։

— Ի՞նչ հիմար եմ,— մտածեց,— ինչ հիմար եմ... Եվ այդ ամենը կոշկի պատճառով...

Ուզեց նրանց հետևից վազել, բացատրություն տալ։

Չվազեց, այլ փորձեց երգել։ Քայլեց։

Ո՞ւր, ընկեր Հայաստան, ո՞ւր...

8

Հայաստանը լեռ էր, քար, ձյուն։

Հերյանը օրերով քայլեց լեռների կողերից, քարերի վրայից, ձյու-

նի միջից։ Մի գյուղում գոմեշի հաստ կաշի ձեռք բերեց և տրեխներ սարքեց։ Երեսը ծածկվեց անկանոն բուսած մորուքով։ Դեմքի մորթը այրվեց, թուխացավ, գլխի մազերը երկարեցին և կարտուզը երկու տեղից ծակվեց։ Մի կտոր հայելու մեջ երբ ինքն իրեն տեսավ, վախեցած ետ քաշվեց։ Ինքն իրեն չճանաչեց։

Ինքն էր և ուրիշ էր։

Նմանվում էր Սիբիրից փախած կալանավորի։ Նմանվում էր լեռների, ժայռերի միջից դուրս եկած խորհրդավոր մի ոգու։ Վրայից շորաչած խոտի և քացախած քրտինքի հոտ էր գալիս։ Ձեռքերը կոպիտ էին և ծանր, այտերը ներս էին ընկել և աչքերը փայլում էին բոսորե հրագների նման։

— Ո՞վ է դա,— հարցրեց նա, երբ իրեն տեսավ։

Ճակատից պաղ քրտինքի կաթիլներ վազեցին։

Շոշափեց մարմինը, երեսը, մորուքը։ Կասկած չկար, ինքն էր։ Այն ինքն էր, որի մասին նա լսել էր։ Այն ինքն էր, որին քարերը, լեռները, ձյունը և բուքը նվաճել էին, միացրել իրենց, կերպարանափոխել։

Այդ օրվանից նա քայլեց ինքն իր հետևից։ Ոտքերը թեթևացան և սովորեցին արագ վազել։ Վայրի այծի նման նրանք մագլցեցին ժայռերը։ Մեծ բարձրությունից ձյունի վրա սահելով՝ վայր գլորվեցին։ Ականջները սրվեցին և նա լսեց քամիներին, հասկացավ նրանց։ Ականջ ավեց ժայռերի մեջ, լեռների կողերին, անդունդներում և խորխորատներում ման եկող ձայներին և ըմբռնեց նրանց ծածկված իմաստը։

Քայլեց դեպի արևելք, ուր ժայռեր են, անապատ և մենակություն, քայլեց դեպի արևմուտք, ուր գյուղերը փորված են լեռների կողերին և ուր մրրիկները հուժկու են և վտանգավոր։ Իջավ վար, գնաց մինչև Արաքսի ափերը, վերադարձավ ետ, ճեղքեց Արարատյան դաշտը և գանդաղ ու մտածկոտ քայլերով նորից բարձրացավ դեպի լեռները։ Գյուղերում նրան ընդունում էին բարի և ներողամիտ ժպիտով, ինչպես ընդունում են սատծո մարդկանց՝ մուրացկաններին, երգասաններին, գժերին։ Ինչպես ընդունում են բուքը, որ երկու բռունցքներով խփում է դռան, ինչպես ընդունում են նախագարնանային առաջին խենթ քամին, հանկարծ բռնված արևի ճառագայթները կամ ճանապարհից շեղված շեմի առաջ մայող այծը։ Նրան նստեցնում էին սեղանի գլխին, պնակը լցնում առաջը դնում և լուռ, առանց հարցուփորձ անելու, հյուրասիրում։ Երբեմն նա մնում էր նույն գյուղում մի քանի օր։ Մասնակցում էր աշխատանքներին, սուգերին, ուրախություններին։ Տավարի համար հարդ էր կրում, մաքրում էր գոմը, ձիերի համար ջուր էր բերում և մեկ

էլ առանց ոչ ոքի ոչինչ ասելու անհետանում։

— Սուրբ մարդ էր,— ասում էին։— Երևի ձեն լսեց, գնաց...

— Հա, բոլոր ձենները լսում էր...

Սարսռենց գյուղում հարսանիք էր։

Ջմեռային պայծառ եղանակը շրջակա լեռների վրա կապույտ մերկություն էր դրել։ Երեկոն եկել էր արագ, մեղմ գույներով զգեստավորված։ Լեռան կողը, ուր բույն էր դրել գյուղը, թաղված էր շողշողուն ճառագայթների մեջ և եկեղեցու զանգակները ուրախ զողանջում էին։

Գյուղացի Հովակիմի տունը լցված էր ճրագներով և բազմությունով։ Նվագի և երգի ձայներ էին լսվում։

Հերյանը ականջ դրեց, ունգները լայն բացած շնչեց զով օդը և ամբողջ մարմնով ցնցվեց։

Մոտեցավ դռանը և հետաքրքրությամբ նայեց ներս։ Նրան տեսան և դիմավորեցին ուրախ բացականչություններով։

— Համեցեք, համեցեք ներս...

Տրեխները մաքրեց, ներս մտավ և մնաց ապշած։ Անկյունում, նոր փեսի հետ նստած հարսը այն իգդիրցի աղջիկն էր, որին հանդիպել էր ճանապարհին...

— Շատ տարիներ,— ասաց նա բամբ ձայնով,— շնորհավոր լինի...

Իրեն կարկառած օղու մեծ բաժակը խմեց մեկ ումպով։

Հարսի հայրը և մայրը մեկ մեկի նայեցին, հետո, պլզած աչքերով նայեցին Հերյանին և մեկ մեկի ականջին ինչ-որ բան փսփսացին։ Մայրը մոտեցավ հարսին, Հերյանին ցույց տվեց, խոսեց։

Նորահարսը աչքերը լայն բացեց և զարմանքով նայեց նրան։

Հերյանը այդ ամենը նկատեց, հասկացավ, որ իրեն ճանաչեցին և բարձր, գողգողացող ձայնով ծիծաղեց։

Երբեք այդքան ուրախ և տարօրինակ չէր եղել Հերյանը։

Խոսեց, ամենքին զվարճացրեց, խմեց։

— Շեն կենաս,— ասաց Հովակիմի կինը,— շեն կենաս...

— Խմի՛ր, է, խմի՛ր,— ասաց Հովակիմը նրա բաժակը նորից լցնելով։

Հերյանը խմեց և ոտքի կանգնեց։

— Թող մի չալղու նվագեն,— բացականչեց նա առաջանալով սենյակի մեջտեղը։

Եվ երբ նվագեցին, նա պարեց։ Եվ մարդը, որի մարմինը թվում էր ծանր, ինչպես ծանր են Հայաստանի քարերը, և որի գլուխը (մորուքի

և երկարած մազերի պատճառով) թվում էր հոգիով վերացած, հանկարծ թփերի վրայից սահող թեթև քամի դարձավ։ Ցատկեց և ոստոստեց հազիվ ոտքերը գետնին կպցնելով։ Պտույտ եկավ, աջ ու ձախ դարձավ, շարուխները գնդակի նման խփեց հատակին, թևերը ոլոր ածեց և ավելի մեծ թափով և ավելի ներդաշնակ կերպով պարեց և ոստոստաց։

Բոլոր հյուրերը ոտքի կանգնեցին և ծափ տալով տաշ-տաշի պոռացին։

Հարսը նրա վրայից չկարողացավ պոկել աչքերը։

— Հարսը, հարսը... թող հարսը պարի,— առաջարկեցին ոգևորված հյուրերը։

Եվ Հերյանը պարեց հարսի հետ։ Իր այրող աչքերը մխրճեց նրա աչքերի մեջ և սահելով առաջ ու ետ գնաց, ոտքերը թեթևորեն գետնին տալով՝ պտույտ եկավ նրա շուրջը, հուժկու թափով ցատկոտեց, ապա նրա հետևից ընկած, փախչող եղնիկ հետապնդելու ձևով գրոհ տվեց, գալարվեց, թռչկոտելով ոլոր եկավ։ Նա նմանում էր լեռներից իջած զորեղ մի ոգու, որ մաքառում է ձյունամրրիկի դեմ։ Հարսը, որ սաստիկ դժգունած էր, թևերը վար առած սահելով անցավ, նազ անելով մի կետի վրա սառեց և հանկարծ ավելի գունաթափվեց և երերաց։

— Հարսը իրեն լավ չի զգում,— ասացին,— հարսը իրեն լավ չի զգում...

Եվ մինչ ամեն ոք շփոթության մատնված այս ու այն կողմ էր գնում, Հերյանը շանթի արագությամբ վազեց դուրս։

Դուրսը աստղեր էին, ձյուն, գիշեր։

Ո՞ւր, ընկեր Հայաստան, ո՞ւր...

Նորից թափառեց Հայոց աշխարհի լերկ ժայռերի շուրջը և մրրիկներով ծեծված լեռնալանջերում։ Հասկացավ և միացավ ձյունին, քարերին, լեռներին։ Եվ ինքն էլ եղավ, ինչպես ձյուն, ինչպես քար, ինչպես լեռ։ Եղավ թաքնված ձայներով լցված մենակություն և ներքին կրակով այրվող լերկություն։

Այլևս ոչինչ չէր վախեցնում նրան։

Եվ մի օր, երբ հասավ հեռավոր մի գյուղ և լսեց մայրաքաղաքի և շարունակվող կռիվների մասին և այն մասին, որ կոմունիստները հիմա նորից եկել են Հայաստան, որոշեց վերադառնալ...

Մազերը կտրեց, մորուքը ածիլեց և քայլեց դեպի Երևան։

Զանգուի ափերից բարձրանալիս նա տեսավ նավը։ Կանգնած էր

միշտ նույն տեղը։ Սևացած, երկարած քիթը միշտ վեր, գաղտագողի առաջացող նախապատմական կենդանու նման։

Նավը։ Հիշեց ծովի հոտը, աղը։ Երևակայական մի ալիքի փոշիացած ջուրը կպավ երեսին և ճակատը թարմացավ և բազուկները աշխուժացան և սիրտը գնդակի նման վեր թռավ։

— Ինչ ուզում է լինի,— մտածեց,— նավը, նախ նավը... Շտապեց վեր։

Կամրջի վրա, քիչ էր մնացել սրընթաց վազող մի կառքի տակ մնար։ Մարդկանցով և իրերով լցված կառքը սուրում էր խենթի նման։ Կողմ ցատկեց։ Մեկը մյուսի հետևից վազելով անցան ուրիշ կառքեր և ուրիշ և ուրիշ... Զարմացավ։ Քայլերը ավելի արագացրեց։ Ձիերին սաստիկ մտրակելով բազմաթիվ ձիավորներ անցան։ Նրանց երեսների վրա վախ էր գրված և նրանց աչքերը նայում էին սարսափած։

Նորից կառքեր։ Լցված սայլեր։

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել,— հարցրեց նա մեկին։

— Չե՞ք տեսնում,— պատասխանեց մարդը,— փախչում են... բոլշևիկները եկել են...

Մարդը հայհոյեց։

Երբ Հերյանը մոտեցավ քաղաքի արվարձանին, հրացանաձգության ձայներ էին լսվում։ Թնդանոթի ռումբեր էին պայթում։

Փախչողները վազում էին դեպի վար։ Աղմկում էին, բղավում, աղաղակում։

Հերյանը աշխատեց գնալ հոսանքի դեմ։ Անկարելի եղավ։ Կանգնեց։

— Դեպի Արաքս, դեպի Արաքս,— բղավում էին փախչողները։

Հերյանը սուր զայրույթ զգաց այդ մարդկանց նկատմամբ և բռունցքները սպառնալով վեր կարկառեց։

Նայեց ետ։ Այլևս մարդ չէր գալիս։ Հրացանի ձայները շարունակվում էին։

Վերը, ժայռի վրա, նավը միշտ կանգնած էր։ Անշարժ երկաթե ծանրությամբ։ Համառ, վճռական։ Իսկ նավի դիմաց կանգնած էին հայոց լեռները, որոնց գաղտնի կյանքը նա այլևս ճանաչում էր, ինչպես առաջ ճանաչել էր ծովը։

Ձեռքերը գրպանները դրեց և հանգիստ քայլերով բարձրացավ քաղաք։

9

Երբ նավը հասավ Սևանա լիճը՝ մայիս էր։ Պաղ, արծաթե պսպղանքներով մայիս, որը թեթևորեն մտրակում էր մարմինները և կես հասած կեռասի երանգներով վառում օդը։ Մոտակա լեռների վրա ձյունը դեռ տեղ-տեղ պահում էր իր կայծկլտուն բույները։ Կղզին և հինավուրց եկեղեցիները վերացած՝ տիրում էին այդ բնանկարի վրա տեսիլքի նման։

Հերյանը գլխարկը հանեց, մտածկոտ նայեց քիթը քիչ վեր տնկած նավին և առաջը տարածված լճին։

— Դե, ուրեմն այդպես, եղավ...— մտածեց նա, և ամբողջ մարմնի վրայից սարսուռ անցավ։

Սատանան տանի, ամեն ինչ կատարվեց պարզ, գործնական կերպով, առանց ավելորդ աղմուկի, վեճի, կռվի։ Երբ նոր իշխանությունն անհրաժեշտ համարեց նավը տանել Սևան՝ մարդիկ եկան, մեքենաներ բերեցին, լծվեցին գործի և մի շաբաթվա ընթացքում այն հասցրին լիճ։ Կարծես երազ լիներ... Անշուշտ դեռ մնում էր ջուրը գցելու գործը։ Բայց դա համեմատաբար հեշտ էր։ Անհրաժեշտ մարդիկ կային, փայտեղենը կար, մեքենաները կային և եղանակը նպաստավոր էր։ Վաղը կլծվեն աշխատանքի։ Նավը քար ու ժայռից կազատագրվի և կգտնե իր հարազատ մորը...

Եվ կբացվի նոր, լուսավոր կյանքի առավոտ։

Հերյանին օգնող աշխատավորներից ոմանք պառկած, ոմանք քարերի վրա նստած հանգստանում էին։ Կայտառ, լուրջ, գործունյա մարդիկ։— Սրանք,— մտածեց Հերյանը — գալիք սերունդների նախատիպարներն են՝ գիտակից, զուսպ և համառ, առանց ավելորդ ձևերի, առանց բղավոցի, առանց չափազանցված հուզումների, քար տաշող, երկաթ կոփող, կյանքի բարիքներ ստեղծող հայը...

— Դե, ուրեմն, այդպես, եղավ...

Հերյանը հեռվից լսեց իր անունը։ Կնոջ ձայն էր։ Սիրտը սեղմվեց և ձեռքերը թեթևորեն դողացին։ Նայեց, Զվարթն էր։ Ոտքի կանգնեց և վազեց դեպի նրան։

— Բա դու ասացիր, որ վաղը կգաս...

— Չհամբերեցի։ Ուզեցի տեսնել, թե տեղ հասա՞նք... Տեսնում եմ հասել ենք,— ասաց Զվարթը։ Երկու ձեռքերով ծափեց և ուրախ-ուրախ ցատկոտեց։ Հերյանը, որ դիտում էր նրան, մտածեց. «Ի՞նչ լավ է եկել է...»։

— Չհամբերեցի։ Ուզեցի տեսնել թե տեղ հասա՞նք...

Զվարթը նայում էր նրան մեծ, վառվռուն, սիրով լցված աչքերով։

Շանթի նման, Հերյանի աչքերի առաջով անցան զանազան Զվարթներ, որոնց հանդիպած էր։ Փխրուն, օդային թեթև աղջիկը, որին հանդիպել էր առաջին անգամ, ապա, գիտակցության եկած, մտքով հասունացած, մրգի նման լցված աղջիկը՝ քիչ տխրած, բերդացած, մոլեռանդ... Հիմա՝ կյանքը մեծ շնչով իր մեջ առած, իր իդեալին հասած, լիություն ներշնչող, բուրումով լցված վարդի նման ծաղկած գեղեցիկ էակը, որ կանգնած է դեմը։

— Զվարթ,— ասաց Հերյանը,— ես ուզում եմ քեզ հետ գնալ այն կողմին, որտեղ մենք առաջին անգամ հանդիպեցինք իրար։

— Իսկ դու չե՞ս հոգնած...

— Ինչ հոգնածություն...

Նստեցին նավակ և կամաց-կամաց թիավարելով հասան կղզի, բարձրացան այն ժայռի վրա, որտեղից առաջին անգամ միասին դիտել էին լիճը և նորից ձեռք-ձեռքի տված նստեցին... և լռեցին։

— Տարօրինակ բան է,— խոսեց վերջապես Հերյանը։— Չնայած բոլոր արգելքներին, կյանքի շրջանը ամբողջանում է, գալիս կանգ է առնում այն կետի վրա, որտեղից նա սկսվել էր... Մեր սերը, մեր նավը և մենք երկուսով անցանք դժոխքի ծայրերով և եկանք հասանք այնտեղ, որտեղ ուզում էինք որ հասնենք...

— Այդ այդպես է,— պատասխանեց Զվարթը,— կյանքը ունի իր տրամաբանությունը, իր հոլովման ուղին, և բոլոր անբնական ճիգերը, որ ուզում են նրան շեղել, փշրվում են փխրուն կավի նման։ Արա ջան, շատ բաներ դու չէիր հասկանում, որովհետև, կորած էիր սովորությունների ծովում, քո մկանունքների նման պնդացած էին ընդհանուր, արյունի և ուղեղի մեջ մտած սխալներում... Ունեիր հրաշալի համառություն, կամք նպատակիդ հասնելու համար, հարատևություն... բայց չունեիր պարզ տեսիլք, պայծառ գիտակցություն և իսկական հայրենասիրություն...

— Գիտեմ, ինձ պակասում էիր դու... և քո նոր գաղափարները։

— Արա ջան, ես քեզ շատ եմ սիրում, շատ, շատ...

— Չես կարող պատկերացնել ինչքան բախտավոր եմ...

— Սիրելիս,— շարունակեց Զվարթը Հերյանի ձեռքը սեղմելով,— նավը լիճ հասցնելը մեծ և գեղեցիկ գործ էր, բայց դա մեր երազների վերջը չէ, այլ սկիզբը միայն... Քարուքանդ եղած այս երկիրը պետք ունի վերականգնվելու, պետք ունի մանրակրկիտ, տևական, համառ աշխատանքի...։ Մենք աղքատ ենք, թշվառ, քիչ... Պետք է քանդենք հինը, կառուցենք նորը, մեզ արժանի նորը... և մեծանանք, ցույց տանք թե ինչեր կարող ենք անել մենք՝ ազատագրված ժողովուրդը։ Դա էլ լինի մեր նպատակը ընդհանուր մարդկային մշակույթին և... մեր բարոյական վրեժը թշնամիներից, որոնք փորձեցին ոչնչացնել մեզ... Մենք կկառուցենք և կհասնենք, ահա թե ինչ հաղթակով է, որ մենք կարող ենք մեծանալ... Հասկանո՞ւմ ես, Արա, վրեժ, ոչ թե դանակով, թնդանոթով, արյունով, այլ մեծ իդեալի իրագործումով, մարդկային բարձր արժանիքների ցուցադրումով...

— Ի՞նչ հրաշալի բաներ ես ասում, Զվարթ, ի՞նչ հրաշալի...

— Վաղը, մինչ դու զբաղված կլինես նավով, ես կգնամ գյուղերը կազմակերպչական աշխատանք տանելու համար։ Պետք է վերականգնենք գյուղերի տնտեսությունը, պետք է լծվենք դասակարգության գործին։ Պետք է... ահ, Արա, սիրելիս, ամեն բան պետք է...

— Սևանը կլինի իմ և քո աշխարհը, Զվարթ,— ասաց Հերյանը,— այստեղ կապրենք, այստեղ կիրագործենք մեր իդեալը...

Մյուս օրը, ամբողջ առավոտը զբաղված էին նավը ծով իջեցնելու գործով։ Կեսօրվա մի ժամ ընդմիջումից հետո, աշխատանքը նորից շարունակվեց։ Երեկոյան, երբ արևը իջել էր հորիզոնի վրա և լիճը բոցավառվել հազար կրակներով, նավը կամաց և հանդիսավոր կերպով սահեց ջրերի վրա...

Հերյանը շտապ բարձրացավ կամրջակի վրա և սուլոցը քաշեց։ Այդ ձայնը գիլ-սուր, բարձր արձագանքից լճի չորս կողմը նոր և հրաշալի կյանքի կանչի նման։

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոստան Զարյան Ալբերտ Կոստանյան 3
Տատրագոմի հարսը 14
Արա աստված 67
Վահագն 113
Նավը լեռան վրա 126

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

КОСТАН ЗАРЯН
СОЧИНЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Ս. Գ. Սահակյան, նկարիչ՝ Ս. Գ. Սաֆյան, գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան, տեխ. խմբագիր՝ Ա. Մ. Մուսոյան, վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաբյան:

ИБ № 5168

Հանձնված է շարվածքի՝ 20.02.85։ Ստորագրված է տպագրության՝ 17.07.85։ Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 33,48 պայմ. տպ. մամ., 29,3 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ՝ 30000։ Պատվեր՝ 484։ Գինը՝ 2 ռ. 40 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան— 9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան— 9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.